



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





ԵՍՏՈՒԵՆՕՊԵՇՏՈՒԹԵԼՆ

ՄԱՐԴՈՒՍ ՀՈԳԻՈՅՆ ՄԷՋ

ԺԱԳԻԼՆ ՈՒ ՅԱՌԱՋ ԵՐԹԱԼԸ

Ի ԵՅԵՏՐՈՒԵՆՕ

ԵՒ

ԱՄԷՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՐԴՈՅ ՅԱՐՄԱՐՅՈՒԱԺ

ՀԱՆԴԵՐՉ

ՔՆԵՐՄԵՌԵՆԴ ԽՏԵՆՕՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ,

ԵՒ

ԵՂՕԹԻՔՆԵՐՈՎ,

ՆՈՐ ԵՕՐՔ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՄԵՐԻԳԱՅԻ ՏԵՏՐԱԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1858

12316-5081
70



Յ Ե Ն Կ

Գ Լ Ո Ւ Խ Ե

Յաստաղաբան գրչոյս , հանդերձ ձեզ իտեղի ծանօթութեամբ անոր
նպատակին վրայ , 11

Ես գրիլն յաղագրութեան գրեկտեան համար Եղբւր՛ հը , 16

Գ Լ Ո Ւ Խ Ի

Ենձոգ մղաւորին արձնեալք , 19

Երբեմն անխորհուրդ՝ իսկ այժմ արձնեցող մղաւորի՛ հը խոր-
հըրդածութեանը , 28

Գ Լ Ո Ւ Խ Գ

Յորդոր արձնեցած մղաւորին՝ որ անմիջապէս յարածելու սկսի
ս զապագէ , 31

Եղբւր՛ այնպիսի ձեզս հը համար , որ թեպէտ աստուածալու-
սութեան խորհորտութեանը վրայ համազուած է , բայց աս-
նոր հիփեկից սալացնելու վորչութեան մեջն է , 38

Գ Լ Ո Ւ Խ Դ

Միղաւորը ի՛մնաստուանս իս իր մղաւորարտութեանը ին
յայտնուի , 41

Իր մղչերտան վրայ խորի՛ն ճանաչումն ստացած մղաւորի՛ հը
խոստովանութեանը , 49

ԳԼՈՒԽ Ե

Մեղաւորին լնին ըստագոճութիւնները պարագիւրին , 52

Ստորոշոյ առնելը ըստ սանայն ըստագոճութիւնները ճշտի
 յգող աւ իրճտանէն արանըսող մեղաւորին իւր իրճտագոճ-
 ծոսութիւնը , 61

ԳԼՈՒԽ Զ

Մեղաւորին քաղաքարարութեան ճշտութիւնը արտաւած , 64

Իր քաղաքարարութեան ճշտոյն աւելն ըստնաւած մեղաւորին
 իրճտագոճութիւնը , 71

ԳԼՈՒԽ Է

Քաղաքարարութեան արտ իրճտ մեղաւորին անգնական վե-
 ճալը , 74

Ստորագոճ վեճալին մէկ իրճտ մեղաւորին ողջը , 79

ԳԼՈՒԽ Ը

Իր մեղապարարութիւնը աւ իրճտարտ քաղաքարարութեան ըստ
 ճանըստ մեղաւորին իւր յայտնութիւնը իրճտարարութիւնը իրճտ-
 րութեան ըստը , 82

Մեղաւորին իրճտագոճութիւնը աւ աւտարտին ըստ , 88

ԳԼՈՒԽ Թ

Ստորագոճ վեճալութեան արանըստ ըստ աւտարտ իրճտարար-
 արտարութիւնը իւր , 91

Մեղաւորը իւր իրճտագոճ վեճալութեան աւ ճանըստ իրճտարար-
 արտարութիւնը , 99

Գ Լ Ո Ւ Խ Ժ

Առանդան յորդոր ՚ը և ըստանյան՝ Ռդա-արին՝ որ սա ճամ-
բով փրկուի , 102

Մեղա-արը ին զնձանի՝ սա ազաւանեհերան , և Վրիարսով
եղած փրկու-նի-նը ընդո-նից ինյայտեի , 108

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա

Յորդորան ճառ ՚ը աննոյ՝ որ զին ու-զիք համազ-իւ Ա-ի-
արարանին նպարտին համայայեիւ , 111

Ա իրոգրեալ զնձանի Ռ-ը եղող անզի-զը Ռդա-արին համար ա-
զնի՝ ՚ը , 124

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ

Խոսք այնպիսի Ռիտան , որ իր Ռդիերո-ն Ռծո-նի-նը զգալով
այնտան ին ը-արի , որ ըհամարյայիք Վրիարսով երևաւ
փրկու-նի-նան յոսով , 128

Ա տալաւիւրո-նի-նեհերան զտայ իորհրաքանո-նի-նան , նաև իո-
նարհ և իտանդո-նան հաղխանի ՚ը սա Վրիարսո՝ ողորտ-
նի-նան համար , 133

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

Իր հաւատարին ու զզնանը անի-զնո-նի-նանը զտայ արարա-
նոսող հոգիին ըրած հարցանո-նի-նեհերան հանա-ար
զնո-նի-նան ՚ը , 137

Իր զզնանն ու հաւատարին անի-զնո-նի-նանը Ասարածոյ ղնա-
նի-նանը արալը յգող հոգ-այն ազնիւք , 143

Գ Լ Ո Ւ Խ Ժ Դ

Վրիարսուհալան արամարո-նի-նան զանազան ճի-զիւրան զտայ
սոսու-իւ հանա-ար արանո-նի-նան ՚ը , որ ընի-երջող սու-ից

օգնութիան ասուել իր ինչ ըլլալան՝ և ինչ ըլլալ զանս ընդ
նելապարտութան ըլլալան զնայ քապտահ ընելա , 146

Ազնի՛ ըստ մշտի հասին Ստրի Գրոց իտտիրոջ շարտար-
րուած , որոան մեջ քրիստոնէական արտահարութեան զա-
նազան ցիւղերը ստատել և համարօք իրարմ ճշ շարտած
ին վերագրելու խորհիւց , 161

ԳԼՈՒԽ ԺԵ

Ընկերացոյն ի ընելա թե ո՛րոան խորօք է ինչը Աստուծոյ
հոգւոյն օգնութեանը , որ վերը նկարագրուած բնու-
թիւնը որոյ իրին . և թե ինչ ավանդութեան ակնկալու-
ել անկել , 166

Մեկ խոնարհ բարեհաղ ընութեան ճշ աստուածային շարհաց
աղտեցութեաններոան համար , հոգւոյն մեջ աստուած-
ապաշտութեան յատաջ բերելա ու զնայընելա , 172

ԳԼՈՒԽ ԺԶ

Վարչի իմած մղաւորին զգուշութեան ու ավանդութեան ի ը
որոտն ան զհաստութեաններոան որե՛մ , որոնս ի ը հանդիպին
հոգւոր ընկացի ճշ մեջ հոսած աստեղը , 175

Աս քոթուարութեաններոան զգացումն զարհուրելով , ինչ-
զնիցը աստուածային պաշտպանութեան յանձնող հոգւոյն
ազնիւց , 180

ԳԼՈՒԽ ԺԸ

Քրիստոնէական ինչպէսը Աստուծոյ ծառայութեանը բացար-
խապապէս նորերելա համար յորոր և օգնութեան , 183

Անձնանորհման օրինակ ճշ , 186

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը

Տերսնէ ընկերէիս հազարգոմբիանը , 195

Աղջիկ + այնպիսի Տիգրան ին Համար , որ անյիմեօ՛ ին Քաղկայ
Տերսնէ սեղանին Տարեկան , Քայց ան անուար իորհար-
դին հազարգոմբիան իրանսան՝ անինկանըն զբայով գիտ Տի-
գանի արարախոյս անի , 201

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ

Վանի ին արիւ Տանուար իրարանիւր Աստուծոյ Հիւր լարու-
նալ հազարգոմբիան անիկանըն , իմ անոր իրիկանին Տիգ-
իկանըն զբայ յարիտանա , 204

Խաղախան Տորս Տահը Տարածիւ պատիւըն արիկանիս , 220

Գ Լ Ո Ւ Խ Ի

Միւր օրերը անիքնկանց գիտոյն Տիւր արարագրուած իրարոյն ան-
ցընիւն Համար իտանդուան յարգորան՝ ին , 222

Սիւրը անարագրուածին պիտ իտան՝ ին անցընիւն փոփոտող
հագոյն յարճար արջիկ ին , 230

Գ Լ Ո Ւ Խ Ի Ը

Միւր զգոմբիան ին ան անիկան փորցոմբիանին արիկ ,
որան գիտանիլիս արիտանին զիտգրեմըն ընկանցիկն ին իտ-
արիցընին , 234

Մտ արագոյնիկան զանանիկն արիկ անարուածային պարարու-
նանիկանըն ինարիւն Համար՝ գիտանիլիս արիտանին ան-
ղջիկըն , 244

ԳԼՈՒԽ ԻՆ

Հոգևոր վեճակին իղձմանն ու խաղա-նիւտանը վրայ , 247

Հոգևոր իղձման վեճակին մեղ իղողին աղընէլ , 255

ԳԼՈՒԽ ԻԳ

Ինչպէս ի Հանրիստոսան իրարով Աստուածայ նախընտրան և հոգևոր վեճակի մեղ լսողով ի յառաջընդարձակութեան ընկնան իսրէլ , գիտութեամբ և խաղա մեղով մեղ ի յնողին յառաջ վեճակ , 259

Հոգևոր արդարանիւր և ուխտեր ընկնան իսրէլ ծանր մեղով մեղ ի յնողին համար աղընէլ ի , 267

ԳԼՈՒԽ ԻԿ

Վրիստոսանի ի ի իսրէլ արև Աստուած իր երեսը ծածկած է , 272

Խոնարհ հողմանս ի իսրէլի մեղ իսրէլ համար , արև Աստուած իր երեսը ծածկեր է , 283

ԳԼՈՒԽ ԻԾ

Մի՞ծ և ծանր նիղա-նիւտան քաջ ճգնող քրիստոսան , 287

Շունը նիղա-նիւտան քաջ ճնչառած միտան առ Աստուած իսրէլ հարձ աղաղակ , 292

ԳԼՈՒԽ ԻՁ

Վրիստոսանի իր լսողայ մեղ ասիլը լսելու համար օգնութեան , 296

Վրիստոսի կենտրոնական հոգևածիքը՝ ընդհանուր հիմնական հասարակություն , 306

ԳԼՈՒԽ ԻԵ

Հոգևածիքի հիմնական հիմնական հոգևածիքը՝ ընդհանուր հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , 308

Վրիստոսի կենտրոնական հոգևածիքը՝ ընդհանուր հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , 315

ԳԼՈՒԽ ԻԸ

Վրիստոսի կենտրոնական հոգևածիքը՝ ընդհանուր հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , 320

Վրիստոսի կենտրոնական հոգևածիքը՝ ընդհանուր հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , 332

ԳԼՈՒԽ ԻԹ


Վրիստոսի կենտրոնական հոգևածիքը՝ ընդհանուր հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , 335

Վրիստոսի կենտրոնական հոգևածիքը՝ ընդհանուր հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , 344

ԳԼՈՒԽ Լ

Վրիստոսի կենտրոնական հոգևածիքը՝ ընդհանուր հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , 347

Վրիստոսի կենտրոնական հոգևածիքը՝ ընդհանուր հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , և հիմնական հոգևածիքը , 356



Ե Ս Տ ՈՒ Ե Ծ Պ Ե Շ, Տ ՈՒ Թ Ե Ե Ն

Մ Ե Բ Գ ՈՒ Ս Լ ՈՂ Ի Ո Յ Ն Մ Լ Ե Ց,

Ծ Ե Գ Ի Լ Ն ՈՒ Յ Ե Ռ Ե Ց, Ե Բ Թ Ե Լ Ը

Գ Լ ՈՒ Խ Ե

Յատուկաբան գրություն, հանդերձ հիշումի ծանոթութեամբ անոր նպատակին վերայ :

1 • Երբոր աշխերնիս վեր վերցընելով ուշադրութեամբ բոլորտիքնիս նայինք, և մարդոց բնաւորութիւններն ու հետամուտ եղած բաները քննենք, ակներև կը տեսնենք որ թէպէտ երկրիս երեսը բնակող բոլոր արարածներէն միայն մարդիկ ընդունակ են Վստուածագաշտութեան՝ իրենց նախնական կազմութեամբը, բայց անոնց շատը անարգաբար զանց կ'ընեն անիկայ : Եւ Վստուածագաշտութիւն ըսուած բանին վրայով մարդիկ ի՛նչ զանազան զաղափարներ որ ունենան, ամէնն ալ պիտի խոստովանին՝ թէ ամենեւին ընդհանուր բան մը չէ անիկայ :

2 • Վստուածագաշտութիւնը՝ ամենէն ընդհանուր առմամբը նայելով հոգւոյն այնպիսի մէկ զգացումն է Վստուծոյ վրայով, և անանկ ճանչնալ մը մեր անոր ունեցած պարտաւորութիւնները, ու անկէ կախում ունենալիս, որ մեծ փափարնիս ընել կու տայ մեր կեանքն անանկ կերպով մը անցընել, որ իրաւամբ կրնանք հաւատալ թէ հաճոյ պիտի ըլլայ անոր : Երդ՝ հիմա որ աս յայտնի ծանօթութիւնը տուինք Վստուածագաշտութեան ի՛նչ ըլլա-

լուն վրայ, ալ ամենեւին հարկաւոր չէ որ հետաւոր հե-
 թանոս վայրենի ազգաց մէջ երթանք՝ անոր օտար եղողներ
 փնտռելու: Արբոր քրիստոնեայ ազգաց մէջ ժողովրդեան
 ընդհանրութեանը վարքը զխոնք, որոնց առ Աստուած
 ունեցած պարտաւորութիւնները երկինքին տակը եղած
 բոլոր ուրիշ ազգերէն վեր են, մեզմէ ճիշտ պիտի ըսէ թէ
 Աստուած պաշտութիւնը ընդհանրապէս կը տիրէ մեր մէ-
 ջը: Անկը պիտի կարծէ՞ թէ ամէն մարդոց և ամէն սրտի
 մէջ կը թաղաւորէ անիկայ: Աւանդ. յայտնի անհաւա-
 տութիւնը՝ Աստուծոյ անունն ու օրը պղծելը՝ գինեմոլու-
 թիւնը՝ ցփութիւնը՝ անիրաւութիւնը՝ ստախոսութիւնը՝
 հպարտութիւնը՝ շայտութիւնը՝ անարդ անձնասիրու-
 թիւնը՝ և անձին ու ուրիշներուն հոգեւոր ու յաւիտենա-
 կան շահուցք վրայ բոլորովին անզգայ ըլլալը, որոնք առ
 հասարակ մեր մէջը կը դսնուին, բարձրաձայն ասոր հա-
 կառակը կ'աղաղակին. անանկ որ ասիկայ տեսնելով՝ մարդ
 կը կարծէ թէ հազարաւորներն ու բիւրաւորները Աս-
 տուած պաշտութիւնը զանց ընելն ու մինչև անգամ անի-
 կայ անարդելը փառք կը սեպեն յաւէտ քան թէ նախա-
 տինք: Աւ ճւր է ան դրացնութիւնը, ճւր է ան ընկե-
 րութիւնը, ճւր է ան երջանիկ ընտանիքը բաւական մար-
 դոցմէ բաղկացեալ, որուն մէջ ծիշը քննութիւն մը ընե-
 լով՝ իրաւունք ունենանք ըսելու թէ՛ «Ահա աստուած-
 պաշտութիւնը աս փոքրիկ խումբին վրայ կը տիրէ»:
 Գուցէ թանձր և զայթակղեցուցիչ մոլորութիւններէ ազատ
 են, արտաքին պարկեշտութիւն մը ունին վարուց, հրա-
 պարակական պաշտամունքի արտաքին արարողութիւննե-
 րուն ներկայ կը դսնուին, և երբեմն ընտանեկան աղօթից,
 բայց աս ամենուն մէջ հոգեւոր և աստուածային կենաց հա-
 րազատ գործքերուն երկոյթն ունեցող բան չկայ: Աս-
 տուած սիրութեան նշոյլը չկայ, ոչ անոր ներկայութենէն
 ակնածութիւն, ոչ անոր շնորհացը անձուկ՝ իրրև ամենա-
 մեծ բարիք, ոչ սրտանց հաւատք փրկութեան Աւետա-
 րանին, ոչ սաստիկ փափաք մեղքով արժանացած դատա-
 պարտութիւններնէս ազատելու, ոչ ՚ի սրտէ հառաչանք
 ան յաւիտենական կեանքը ձեռք ձգելու, որ Քրիստոս
 վաստըկեցաւ իր ժողովուրդին համար: Աւանդ, որչափ

ալ բարեկամի մը կամ մինչև անգամ զաւակի մը սէրը մեզ ստիպէ , որչափ ալ հակամիտեալ ըլլանք ամէն բանի մէջ աղէկին յուսալու և ամէն բան աղէկ է հաւատալու , տակաւին աչքովն տեսած փորձերնիս ընդհակառակը կը վկայեն և սկամայ սա եզրակացու թիւնը յառաջ կը բերեն մեր մտքին մէջ՝ թէ աս սիրելի բարեկամին կամ ան խանդակաթ տղուն քով ինչ սիրուն բաներ ալ որ կենայ ,

3 . Եւետարանին հաստատ հաւատացող և մարդոց ու ամէն բանի յախտենականութեան լուսով նայող մէկու մը սրտին՝ աշխարհիս մէջ զանաւան յոյժ սղբալի խորհրդաձու թիւններէն մէկն է ասիկայ : Այս յիբաւի ասանկ մէկու մը՝ մարդկային ազգին բիւրաւորներուն աս ճշմարիտ աստուածագալտութենէն զուրկ ըլլալուն ու անոնց՝ անոր դէմ ունեցած աս հակառակութեանը հետ բաղդատելով՝ մարդկային բնութեան բոլոր ուրիշ արկածներն ու չարիքները ոչինչ կ'երևան : Այժմէ աս վերնայ , բոլոր ուրիշ չարիքներուն դիւրաւ կը տանի մարդ . այդ անոնցմէ բարիք յառաջ կու գայ : Բայց եթէ աս մտալու ըլլայ , « մահուան պտուղ կը բերէ » . **Հոմով . Է . 5 .** և հետեւապէս անթիւ բաղմութիւն , որոնք « Նախախնամութեան կարգադրութիւններուն տակն են մեզի հետ , և դէթ նոյն հասարակ բնութեան կապովը կապակցած են մեզի , քանի մը տարուան մէջ յետին կործանման պիտի երթան , և անզերծանելի կերպով յախտենական կրակին մէջ պիտի ընկղմին :

4 . Եւետարակոյս շատերը կան ամէն կարգ քրիստոնէից մէջ , որոնք 'ի ծածուկ Եստուծոյ առջևը կ'ողբան , իրերուն աս ցաւալի վիճակը տեսնելով . և կենդանի քրիստոնէութեան ու ճշմարիտ Եստուածագալտութեան նուազած կրակին վերասին բորբոքելուն վրայ իրենց ունեցած բաղձանքին անկեղծութեանը համար կրնան վկայ կոչել ան բոլոր սիրտերը Վննողը : Այս շատերէն 'ի զատ աս զբքին հեղինակը փտահուութեամբ կրնայ բռնել թէ աս է իրեն քաջալերութիւն տուողը աս գործին ձեռք զարնելու , իր բաղմութիւ հոգերու և աշխատութեանց մէջ տեղը : Աս պատմաբան կ'ուզէ զարդարուն խօսքերը մէկդի ձգել , որ

Եթէ կարելի է ամէն մարդոց ընդունակութեանը յարմար ըլլայ : Ասոր համար պիտի ջանայ ամէն ընթերցողին դատումը յաղթահարել և սրտին թափանցել . և մէկ խօսքով , ասոր համար առանց մոլեռանդի անունէն վստիմարու՝ եթէ մէկը առանց խորոզութեան աս անունը տալու ըլլայ աս դործին վրայ , հեղինակը իբր թէ քու սենեակդ պիտի մտնէ քեզի հետ ամէն օր . և ամենայն պարզութեամբ և ազատութեամբ՝ յանկատակս պիտի խօսի մեծ բաներու վրայով , որոնք քրիստոնէական յայտնութենէն սորված է , և աղէկ գիտէ թէ քու յախտնական երջանկութիւնդ անոնցմէ կախում ունի . որ եթէ մինչև հիմա առանց աստուածապաշտութեան քու կեանքդ անցուցեր էիր , հիմա արթննաս ու անոր վրայ մտածես , և անոր ընթացքին ու կարևորութիւնը սորվիս . կամ՝ եթէ աստուածային շնորհաց միջոցովք արդէն փորձառութեամբ տեղեկացած ես անոր , կարենաս օգնութիւն առնելով առաւել յառաջադիմութիւն ընել :

5 . Ըստ այն անկանօք քեզմէ սա շնորհքը կը ինդրէ թէ՛ որովհետև ասիկայ յայտնապէս մէկ ծանր դործ մըն է որուն ձեռք կը զարնենք , դուն ալ լուրջ և եռանդուն ուշադրութեամբ մտիկ ընես իրեն : Ա՛աղաչէ որ աս յորդորանքները և աս խորհրդածութիւնները անզբաղ ժամանակ կարդաս , և առանձին անոնց վրայ խորհիս , և՛ թէ՛ անոր ու թէ՛ քեզի իրաւունք բրած ըլլալու համար՝ հոս տրուած նկարագրութիւնները և տրուած խրատները անկեղծութենէ և սէրէ յառաջ եկած ճանչնաս , յառաջ եկած մէկ սրտ մը՝ որ ամենեկին շուղեր հարկաւոր չեղած տեղը՝ երկրիս երեսը եղող ամենանուաստ արարածին բոպէ մը ցատալ , ո՛ւր կը մնայ մարդու : Աթէ շատ ձանձրութիւն տայ քեզի , պատճառը սա է որ գոնէ ինքը կը կարծէ թէ պէտք է որ ասանկ ընէ . և կը վստիմայ որ չըլլայ թէ աս գիրքը ձեռքերնին անցնողներէն ոմանք ալ ըլլան ան հազարաւորներուն պէս՝ որոնք աստուածապաշտութիւնը բոլորովին զանց ընելով կործանած են , և անոնց պէս՝ որոնք շատ վնասուած են առաւել հաստատուն և մշտառե ուշադրութիւն մը չընելուն համար :

6 . Ան որ իր ընկերներուն տրամութեանցը վրայ կը

նայի առանց անոնց կարեկցութիւն ցուցընելու , և զէթ ցանկալու որ կարողութիւն ունենար անոնց օգնելու , բարբարոս է ան , և արժանի չէ մարդ ըսուելու : Անշուշտ երկիրը երկինք պիտի ըլլայ ան մարդուն որ տեղէ տեղ կ'երթայ՝ գացած տեղը երջանկութիւն սփռելով , թէ և մարդոց մի միայն մարմնոյն օգնութեան հասնելու կարող ըլլայ , և մահկանացու մարմնոց երջանկութենէն աւելի աղէկ բան մը հաղորդելու կարող չըլլայ : Բայց անոր երջանկութիւնը հաղորդած բարութեան բնութեանն ու աստիճանին համեմատ կ'աճի : Մենք 'ի բոլոր սրտէ երանի կը կարդանք Վրիստոսի ան պատուաւոր ծառաներուն , որոնք եկեղեցւոյ նախկին օրերուն մէջ յուսահատելոց հրաշալի բժշկութիւն տալու բարեւէր և ցաւակից զործիքներն էին , կոյրերուն ու համբերուն տեսութեան և լնելու պարզեանքը տուին . և մեռելները կանչեցին ու զործելու և երջանկութիւն վայելելու կարողութիւնները տուին նորէն : Բայց ասիկայ մէկ պատիւ մը և երջանկութիւն մըն է՝ որ յարմար չէ որ Մտուած առ հասարակ մարդոց պարզեէ : Բայց սակայն ամէն դարու մէջ եղած են , և օրջնեալ ըլլայ իր անունը որ հիմա ալ կան անանկ մարդիկ , որոնք իր զործիքներն ըրած է՝ անոնցմէ աւելի ազնիւ և աւելի երկարատե օրջնութիւններ պարգևելու իրենց ընկերներուն : Մահը՝ շատ ժամանակ է որ ան հըրաշքով բժշկութիւն դանդոններուն աչքերը ծածկած ու ականջները գոցած է , և նորէն կը տիրէ անոնց վրայ , որոնք միանգամ գերեզմանէն դուրս կանչուեցան : Բայց ան հոգիները՝ որոնք Մեծտարանին հաւատալու կանչուած են , յախտեան կ'ապրին : Մտուած վկայած է ամէն դարու մէջ իր հաւատարիմ պաշտօնեաներուն աշխատութիւններուն՝ աս օրջնեալ արդիւնքները յատաճ բերելով . և անոնցմէ ոմանք « թէպէտ մեռան , բայց տակաւին կը խօսին » , Աբր . Ժն . 4 , զօրութեամբ և յաջողութեամբ աս մեծ և օգտակար զործին համար : Աւրեմն մի՛ զարմանար որ , թէ՛ մեռնիմ և թէ՛ ապրիմ , աս պատուոյն ցանկացող եմ , և բերանս ազատութեամբ կը բացուի , քանի որ ճշմարտիւ կրնամ բնել թէ՛ « իմ սիրտս լայնցած է » : Ը Արթն . Գ . 11 :

Եւ գրին յաղագորհուն գործերուն համար Ազգէ՛ ՚ը :

Մ՛իլ յախտննական Ակիզքն և Երարիչ ամենայն աւարած զոյութեան և երջանկութեան , քեզի երկրպագութիւն կը մատուցանեմ , որ մարդը աստուածպաշտութեան ընդունակ ստեղծեցիր , և մեր բնութեանը ասպատիւն ու երջանկութիւնը տուիր , որ սորվինք բնէ թէ՛ Օչխ ստեղծող Մատուածը ո՛ւր է : Յո՞ք . լէ . 10 : Սոքբամ բոլոր մարդկային սեռին վրայ տարածուած անխանգարմանը վրայ , որ մեր փառքը անարդութեան դարձուց , Ո՛չ . 7 , և զՄատուած մոռնալը որ յոյժ տուլի է , այսպիսի հասարակ և ընդհանուր ախտ մը բրաւ : Մ՛իլ Սուբբ Հայր , դիտենք որ քու ներկայութիւնդ ու քու սորվեցընելդ է միայն՝ որ կրնայ քու մտըրեալ զաւակներդ ևս դարձընել , անոնց սրտերուն վրայ աստուածային իրաց զգացում մը տպաւորել , և ան զգացումը մնայուն ու արդիւնաւոր բնել : Վեզմէ յառաջ կու դան ամէն բարի խորհուրդներն ու բաղձանքները . և ամենէն աւելի իմաստութիւն՝ աստուածպաշտութիւն՝ և երջանկութիւն սրբուելու բաղձանքը ասանկ աշխարհի մը մէջ , որ թէպէտ այսպիսի խորին ուրացութեան մէջ ընկղմած է , բայց քու անհուն գթութիւնդ բոլորովին երեսէ ձգած չէ զանիկայ :

Ղուն " մ՛ի Տէր , մարդոց որդիներուն սրտերը գիտես" . ք Սոք . 7 . 30 . և մէկ արդար հոգի մը կ'ուրախանայ իր դործքերուն ամենազաղանի խորհուրդներն ու սկզբունքները գիտնալու համար , քանի որ աշխարհ զինքը կը նախատէ և կ'սակածներ կ'ընէ իր վրայ : Ղիտես դուն քու անարժան ծառայիդ անկեղծութիւնն ու եռանդը՝ որով կը փափաքի քու անուանդ գիտութիւնն ու քու Եւետարանիդ ճաշակը տարածել ան ամէն տեղումները , ուր որ աս գիրքը երթայ : Ղուն գիտես որ եթէ աս աշխարհիս մէջ ինծի հարստութիւն տայիր , իմ ամենէն անխնայութիւնս պիտի ըլլար՝ իբրև քու սպասաւորդ՝ քու ատաղութիւններդ չբաւորներուն ու կարօտեալներուն բաժնել , և ասանկով քու ծառայիդ ձեռքը բաժնուած բարութիւնովք տրտմալից սիրտերը ուրախացանել : Ղուն գիտես որ եթէ՛ կ'ամ սովորական և կ'ամ արտարոյ

կարդի միջոցներով քու ծառայիդ բժշկութեան պարգևը տայիր, անոր ամէն օրուան զուարճութիւնը պիտի ըլլար մարդոց մարմիններուն ցաւերը՝ հիւանդութիւնները՝ և տկարութիւնները բժշկել, նուազեալ դէմքին պայծառանալը տեսնել անոր առողջութիւն ու զուարթութիւն տալով, և ամենէն աւելի՝ խոտովեալ և ցնորեալ մարին իր բանական կարողութիւնները խաղաղութեամբ և զգաստութեամբ գործածելու դառնալը տեսնել: Բայց երջանիկ՝ յոյժ առաւել երջանիկ՝ կը համարի ինքզինքը, աս խոնարհ պարագաներուն մէջ, որոնց մէջ քու նախախնամութիւնդ դրեր է զինքը, եթէ բարեհաճիս իր աս տկար ջանքերը օրջնել անոնց միջոցովը մարդոց մտքերը սփոփելու և լուսաւորելու, մեղսալից վիճակի մը յիմարութենէն զանոնք բժշկելու, և քու բանական արարածներդ իրենց Մատուծոյն գիտութեանը՝ ծառայութեանը՝ և վայելմանը բերելու: Կամ արդէն եկածները յառաջադէմ ընելու:

Թող ո՛վ որ աս գիրքը կարդայ կամ մտիկ ընէ, անոր վրայ զայ աս օրջնեալ ներգործութիւնը: Տէ՛ր՝ մի սրտմտիր երբոր ես քեզմէ խնդրեմ՝ թէ որքան տկար ու անարգ որ երևնայ աս գիրքը աս աշխարհիս որդւոցը աչքերուն, և իրօք ո՛րքան անկատար ալ որ ըլլայ, ինչպէս որ ես ալ անարժան եմ, սակայն և այնպէս քու առջևդ ընդունելի թող ըլլայ, և աստուածային զօրութեան միջոցովը կարող ըլլայ հեռաւոր տեղուանք բնակողներուն ու զալու ազգերուն մտացը մէջ աստուածպաշտութեան ծագումն ու յառաջադիմութիւնը յառաջ բերել: Տէ՛ր, մի սեպեր մեղապարտ փառասիրութիւն եթէ փափագիմ որ՝ իմ անունիս ինչ ալ որ ըլլայ, որուն վրայ ամենեւին չեմ ուզեր խորհիլ քու առջևդ եղած ատենս, աս գործը որուն ձեռք կը զարնեմ հիմա քու զօրութեամբդ, լիմնայ և շատ հեռու տեղուանք երթայ տարածուի, դեռ չծնածներուն ձեռքն ալ հասնի և անոնց քու անունդ ու զովարանութիւնդ սորվեցընէ, քու ծառայիդ մարմինը շատոնցուրնէ թաղուելէն ետքն ալ, որ երբոր վերջին հաշիւին ան մեծ օրը քու առջևդ երևնայ, իր ուրախութիւնը աճի և իր պսակը պայծառանայ շատերուն

երջանկութեամբը, որոնք ոչ զինքը կը ճանչնան և ոչ
 մէկզմէկ : Բայց թէ որ աս աղաչանքին շնորհուելուն ար-
 ժանի չեմ ես, որ ամենեին իրաւունք չունիմ յուսալու
 թէ ամենափոքր բանի մը անդամ արժանի եմ, եթէ ոչ
 քու շնորհօք, կ'աղաչեմ՝ տուր որ քու ամենակարող
 ձեռօք մէկ հոգի մը դարձի դալուն ու փրկուելուն որչնեալ
 միջոցը բլամ : և եթէ միայն մէկ հատ ալ բլայ, ան ալ աս
 գիրքը կարդալու կարող եղողներէն ամենատկարն ու ամե-
 նանուաստը, տակաւին շնորհակալութեամբ պիտի ընդունի
 զանիկայ քու ծառայ՝ իրբև առատ հատուցումն ան բոլոր
 աշխատութեանը համար որ պիտի թափէ ասոր վայ . և
 թէպէտ ուրիշներուն նկատմամբ ան աշխատութիւնները
 սրարապը ելին, բայց ան մէկ հոգիին համար, ամէն հոգի
 որ դուն ո՛վ Մտուած Հիսուսի արեամբը և քու Հոգւոյդ
 շնորհօք փրկեցիր՝ անմահ երգեր ու փառարանութիւն պի-
 տի կարդան քու անունիդ . և յաւիտենական փառք պի-
 մատուցանեն երկինքի մէջ բիւրաւոր հրեշտակներ և անդ-
 բանիկներու հանդիսաւոր ժողովք ու եկեղեցին Հօր՝ Ար-
 դւոյ և Սրբոյ Հոգւոյն . Ամէն :

ԳԼՈՒԽ Բ

Մեծոք Բարձրապետի արձանագրութիւնք :

1. Թեպէտ և աշխարհս շարաշար և անամօթ կերպով անհոգ եղած է Մատուածպաշտութեան վրայ, բայց տակաւին օրհնեալ ըլլայ Մատուած որ՝ անիկայ անկեղծութեամբ ընդունող խնաստութեան որդիք քանի մը հասկան . որոնցմով մինչև անգամ աս յիմար ու խանդարեալ դարուս մէջ « խնաստութիւնը արգարացաւ » . Մարտի 19 . որոնք Մատուածային շնորհաց միջոցովք Վրիստոսով Մատուծոյ գիտութեանը բերուելով, անկեղծութեամբ իրենց սիրտերը անոր նուիրած են, և բնական հետեութեամբ իրենց կեանքն ալ անոր ծառայութեանը կ'ընծայեն : Այժմէ վստահ ըլլայի որ աս դիրքս անոնցմէ ՚ի զատ ուրիշին ձեռքը պիտի չանցնի, իմ աս դործս առաւել կարճ՝ դիւրին՝ ու հաճելի պիտի ըլլար :

2. Սակայն շատ հաւանական է որ ասիկայ կարգացողներէն ոմանք ան հազարաւոր անձանց թիւէն ըլլան, որոնք ատուածպաշտութեան վրայ անիոյթ են, և անոնց դժբաղդ վիճակը այնքան խորունկ կը ներգործէ ինծի, որ սիրտս կը ստիպէ զիս ինչպէս նիւթիս բնական ընթացքն ալ որ նախ և առաջ անանկներուն խօսիմ . և վասն որոյ քեզի ալ ո՛վ ընթերցող, ո՛վ որ ես, թէ որ անհոգ մեղաւորներուն կազէն ես :

3. Սաղաշեմ՝ քեզի աս անունին համար մի՛ բարկանար : Հոգւոյ բժիշկները պարզապէս խօսելու են, եթէ ոչ բժշկելիքնին կը սպաննեն : Խիստ և անպատշաճ են թաղրութիւն չեմ ընծեր : Վեզի ուրիշ բան մը չեմ ըսեր՝ բայց միայն ինչ որ բացարձակապէս հարկաւոր է հասկըցընելու թէ քեզի է խօսքս : Այսն որոյ շեպեմ թէ դուն ամբարիշտ և անձնատուր անտաակ մըն ես . չհամարիմ թէ դուն Մատուծոյ կը հայհոյես, անոր անունը անպատիւ կ'ընես միշտ երգում ընելով, կամ անոր սուրբ

օրը կը պղծես շարաշար , կամ միշտ անհող եւ հրապարակաւ աղօթից զանուելու . շխարժեմ թէ քու դրացիներուդ վնաս մը հասցուցած ես թէ՛ կեանքերնուն , թէ՛ ողջխոհոհողութեանը եւ թէ՛ ստացուածքներնուն կամ բռնութեամբ եւ կամ դաւով . կամ թէ յոյժ անարդ կերպով նուաստութիւն բերած ես մարդկային բանական բնութեանը վրայ , ան անարդ գինովութեամբը՝ որ մարդը անբաններուն ամենանուաստ տեսակին կը դարձնէ , կամ անոնցմէ ալ վար բան մը կ'ընէ :

4 . Ընդհակառակն , համարիմ թէ դուն կը հաւատաս Մատուցոյ գոյութեանն ու նախախնամութեանը , եւ Վրիստոնէութեան ճշմարտութեանը իբրև անկէ յայտնուած . որուն վրայով եթէ տարակոյս մը ունիս , կ'ուզեմ որ անմիջապէս ուրիշ տեղ տարակոյսդ լուծես : Մամիջապէս կ'ըսեմ . քանզի ճշմարիտ ըլլալուն համոզուած ըլլալը անիկայ սուտ է բնէ է . եւ մարդս ստուգիւ կործանման կը տանի , թէպէտ կարելի է կործանումը այնքան ծանր չըլլայ՝ որքան պիտի ըլլայ՝ երբ երկրացութեան ու զանցատութեան հետ արհամարհանք ու հակառակութիւն ալ ըլլայ : Բայց քեզ անուամբ քրիստոնեայ համարելով , եւ ոչ թէ աստուածեան կամ սկեպտիկեան , պիտի համարիմ նաև թէ մարդոց մէջ քու ունեցած վարմունքդ ոչ միայն անմեղադրելի է , այլ նաև սիրելի , եւ քեզ շատ աղէկ ճանչցողները կը խոստովանին թէ արդարասէր եւ զգաստ , մարդասէր եւ քաղցրարարոյ , կարեկից եւ առատաձեռն մարդ մըն ես . բայց աս ամենուն վրայ կրնայ ըլլալ որ “ մէկ բան մը պակաս ըլլայ քեզի ” . Մարկ . Ժ . 21 . որմէ քու յաւիտենական երջանկութիւնդ կախում ունի :

5 . Սաղաչեմ քեզի ընթերցող , ո՛վ որ ես , կ'աղաչեմ որ լրջմտութեամբ քու սրտիդ նայիս հիմա , եւ անոր սա պարզ խնդիրը հարցնես . Ճշմարիտ հաւատացեալ եմ ես . Մատուցոյ սէրը իմ կեանքս կառավարող սկզբմունքն է . անոր ներկայութեանն ակնածութիւնն իմ կ'ապրիմ . ամէն օր անոր հետ հաղորդակցութիւն կ'ընեմ՝ աղօթիւք եւ ժառարանութեամբ . եւ վերջապէս անոր ծառայելը իմ դործս ու զուարճութիւնս ըրանձ եմ , զանիկայ իմ Տէրս ու իմ Հայրս համարելով :

6 • Այս հիմն միայն ան մարդուն պիտի խօսիմ , որուն խղճմանը բացասական պատասխան կու տայ աս հարցումներուն : Այլ պիտի բողոքեմ հաւասար պարզութեամբ ու ազատութեամբ , մեծին ու պզտիկին , հարուստին ու աղքատին • քեզի , որ՝ ինչպէս Սուրբ Գիրքը կը զրուցէ ահաւոր բայց պատշաճ կերպով , « աշխարհի մէջ անաստուած ես » • Ամբ . ք . 12 • և թէպէտ խօսքով ու արտաքին գործքով « կը խոստովանիս զՍտուած , բայց կ'ուրանաս զանիկայ քու գործքերովդ » • Տէր . ւն . 16 • և բայ 'ի քանի մը արտաքին ձեւերէ , ըստ մեծի մասին ճիշդ անանկ կ'ապրիս , ինչպէս որ պիտի ապրէիր՝ թէ որ անանկ հաւատայիր ու վստահ ըլլայիր թէ Ստուած չկայ : Ա՛վ ապերջանիկ արարած , ո՛վ որ ես • բուն քու սիրտդ քեզ անմիջապէս կը յանդիմանէ • և ո՛րքան ևս առաւել ան « Ստուածը որ քու սիրտէդ մեծ է , և ամէն բան գիտէ » : ւն Հովհ . ք . 20 : Անիկայ « զազատուկը կը տեսնէ » , Մատթ . ք . 6 , ինչպէս յայտնին ալ • և լեզու մը չկրնար յայտնել ան ուրախութիւնը , որով իր որդիքը կը հաղորդակցին անոր հետ մինակ • բայց 'ի ծածուկ դուն չես խոստովանիր անիկայ , ոչ աղօթք կ'ընես անոր առանձին և ոչ փառաբանութիւն կ'ընծայես առանձնութեանդ մէջ : Հաշիւ ընելու , նամակ գրելու , բան սորվելու համար շատ անգամ սենեակդ կը մտնես • բայց թէ որ մի միայն հոգևոր պաշտօն կատարելու տեղ մը ըլլար ան , ամենեին ոտք չկոխելու տեղ մը պիտի ըլլար քեզի : Այլ ահա աս կերպով օրէ օր յառաջ կ'երթաս շարունակ զՍտուած մոռնալով , և բոլորովին անկրօն մէկը կ'ըլլաս • որպէս թէ շատ ժամանակէ 'ի վեր ինքզինքիդ սպացուցած ես թէ կրօնը միայն երազ մըն է : Հիրաւի եթէ հիւանդ ըլլաս , թերևս առ Ստուած պիտի աղաղակես առողջութեան համար , մէկ յետին վտանգի մը մէջ աչքերդ ու ձայնդ վեր վերջընես ազատութեան համար • բայց երբ որ մեզայ թողութեան ու Վեետարանին օրջութիւններուն զայ բանը , անոնց վրայով ամենեին աղաչանք մը չես ըներ սրտանց , թէպէտ կը խոստովանիս թէ Վեետարանը Ստուած մէ է , ու անոր օրջեալ արդիւնքներն ալ յախտնական են : Վու բոլոր խորհուրդներդ

ու բոլոր ժամանակդ կենաց գործքերուն ու զուարճութիւններուն տուած ես, և եթէ մերթ ընդ մերթ մէկ ահաւոր արկած մը կամ մէկ սրտաշարժ քարոզ մը կամ դիրք մը քեզ արթնցընէ, միայն քանի մը օր, կամ քանի մը ժամ է տեւելիքը, անկէ ետքը առջինին պէս նոյն անհոգ արարածն ես դարձեալ: Արջապէս այնպէս կը գործես, որպէս թէ որոշեր ես որ յանդգնիս ու անձամբ փորձես թէ արդեօք կրօնքը զանց ընելուն հետևութիւնները՝ անոր պաշտօնեաներուն ըսածին պէս ահաւոր են: Յիրաւի անոնց տուած ազացոյցները երբեմն մը համոզեն քեզ, որովհետև գտնուած դարուդ ու գաւառիդ նայելով շատ դժուար է բոլորովին հերքել զանոնք: Բայց կարելի է Ասայեայ ժողովուրդին վարպետութիւնը սորված ես, «լսելով լսել ու շինանալ, և տեսնելով տեսնել, ու չգիտնալ» քու սիրտդ թանձրացած է, ու ականջներդ ծանրացած, ու աչքերդ գոցուած»: Կոսյ. 5. 9, 10: Իսկ իսկ աղօթից ու պաշտամանց ատենը քու խորհուրդներդ «երկրին ծայրերն են»: Լուս. 24: Կրկնակայութեան ամէն զուարճութեանը ու բախտութեամբ տեղի կու տաս, թէ որ միայն մէկդի տանի քու միտքդ աստուածպաշտութեան պէս անհամ և տհաճելի առարկայէ մը: Եւ շատ հաւանական է որ վերջին անգամ աղօթքի ժողովքին գտնուած ատենդ ալ ճիշդ այնպէս ըրիր, ինչպէս որ պիտի ընէիր եթէ գիտնայիր որ Աստուած քու ընթացքիդ վրայով բան մը չգիտեր, կամ եթէ սեպէիր որ ամենեկին հոգ մը անգամ ընել չարժեք թէ արդեօք Աստուած կը հաւնի՞ աս ըրածիս թէ չէ:

7. Աւանդ, Աստուծոյ նախախնամութեան՝ և Սուրբ Գրքին վրայ ունեցած հաւատքդ կը ներկ՞ որ սեպես թէ կրօնքի վրայ ամենեկին խորհուրդ մը անգամ ընել չարժեք. թէ մինչև անգամ մէկ ժամ նստիլ ու զգուշութեամբ խորհրդածութիւն ընել ու մտածել չարժեք թէ «ի՞նչ է Աստուած և Վրիստոս, և թէ դ՞ու՞ն ինչ ես, ու ասկէ ետքն ալ ի՞նչ պիտի ըլլաս»: Արեմն ճշտ են քու բանական կարողութիւններդ: Ի՞նչ բանի կը գործածես անոնք, կամ յաւէտ ինչ՞ով թմրեցուցեր ու անզգայ ըրեր ես:

8 . Խօսուած բաներուն ստուգութիւնն ու կարևորութիւնը՝ հիմնուած ըլլալով անանկ սկզբունքներու վրայ որ դուն ալ կ'ընդունիս՝ այնքան յայտնի է , որ մէկը կրնայ գրեթէ տղու մը կամ յիմարի մը տրամաբանել տալ անոնց վրայ : Այս սակայն չափահաս մարդիկն ալ ընն մը տածեր ասոնց վրայ , որոնց հասկըցողութիւնը տեղն է . և անոնցմէ ոմանք՝ դուցէ ան աստիճան նուրբ հասկըցողութեան հասած են , որ իրենց մեծ զրկանք եղած պիտի սեպեն եթէ քաղաքավար ու իմաստուն անձանց կարգը չսեպուին :

9 . Սակայն քու զանցառութիւնդ աս բաներուն էութեանն ու ծանրութեանը վնաս չկրնար հասցընել : Հիբրաւի քեզի վնաս կը հասցընէ , բայց երբէք չկրնար ազդել անոնց : Այսն որոյ՝ ես ինքնս արթնցած ըլլալովս՝ ներեցէք ինծի որ ձեր ամէն մէկուդ դամ , և ըսեմ՝ ինչպէս որ ասկէ շատ քիչ վտանգաւոր փոթորիկի մը առնելը նաւավարները Հոմանին ըսին երբոր կը քնանար , “Վեզի ի՞նչ եղաւ՝ ս'վ խորունկ քնացող , ելի՛ր քու Մտուծոյդ աղաղակէ” : Հօմ . ւն . 6 : Ար տարակուսի՞ս ասանկ ընելու պատշաճութեանն ու հարկաւորութեանը վրայ : “Վեզի հարցընեմ , ու դուն ինծի իմացնւր” . Հօմ . Լը . 3 . քու խղճմտանքիդ պատասխանն տուր , յիշելով որ շատ չանցած ուրիշ հաշիւ մը ունիս տալու :

10 . Ար խոստովանիս թէ Մտուած մը կայ , և աղէկ կ'ընես , քանզի չես կրնար քու աչքերդ բանալ՝ առանց անոր էութեանը՝ ներկայութեանը՝ և անոր ներդործող զօրութեանը ինքնայայտ ապացոյցներ տեսնելու : Վուրոյրրտիքդ եղած ամէն բանին մէջ անոր վկայութիւնը կը տեսնես : Ար զգաս զանիկայ քու ներսիդիդ , այն կրնամ ըսել , քու ամէն երակիդ ու քու ամէն ջիզիդ մէջ : Ար տեսնես ու կը զգաս թէ ոչ միայն քեզ ստեղծեց շատ գերազանց իմաստութիւնով մը , որ ոչ մէկ մահկանացու մարդ մը կրցաւ երբէք լիովին բացատրել կամ հասկընալ , այլ նաև միշտ մերձ է քեզի ուր որ ըլլաս , և ինչ դործով որ զբաղեալ ըլլաս , թէ ցորեկ և թէ գիշեր “անով կ'ապրիս ու կը շարժիս ու կաս” : Պտղ . Ժ . 28 : Վուն անձամբ աղէկ գիտես թէ քու իմաստութիւնդ՝ զո-

բութիւնդ՝ և ուշագրու թիւնդ չէ՛ որ քու սիրտդ կը բաղ-
խեցընէ ու արեանդ շրճան բնել կու տայ . որ կ'առնէ ու
կու տայ կեանքին շունչը՝ ան յոյժ անստոյգ կեանքի մը
անհաստատ շունչը , “ որ քու ընդացդ մէջն է ” : Եւայ .
թ . 22 : Եւ բաները կ'ըլլան երբոր դուն կը բնանաս ,
ինչպէս քու արթուն եղած ժամանակդ ալ , երբոր արեան
շրճագայու թեանը՝ կամ շնչառութեան հարկաւորութեանը
վրայ չես խորհիր , կամ մինչև անգամ միտքէդ չանցնիր
թէ սիրտ կամ թոք ունիս : Երդ՝ Եստուծոյ ձեռքէն 'ի
զատ ի՞նչ է աս , որ շարունակ կը բռնէ ու գործել կու
տայ աս սրանչելի մեքենաները , որ ինք ստեղծեր է :

11 . Ոչ ալ իր աս խնամքը մի միայն քու վրայ է , այլ
երբոր քու տեսութեանդ հասածին չափ հեռու քու բոլոր-
տիրդ նայիս , կը տեսնես որ ամէն բանի վրայ ալ է անիկայ .
և ո՛հ , քու տեսնելու կարող եղածէդ ո՛րքան ալ հեռու :
Ստածէ անգամ մը արեգակին ամէն կողմ սփռած լուսոյն ու
ջերմութեանը վրայ . մեր դունտը շրճագատող օդին վրայ .
և ան յարմար բարեխառնութեանը վրայ , որմէ բոլոր մարդ-
կային սեռին ու երկրիս երեսը բնակող բոլոր ստորին արա-
բածներուն կեանքը կախում ունի : Խորհէ՛ անգամ մը մար-
դոց և կենդանեաց համար ստեղծուած ան յարմար և առատ
պաշարներուն վրայ . որք են խոտ , ցորեն , գանազան պը-
տուղներ , և բանջարեղէնք , ու ծաղիկները , ան ամէն
բաները որ մեզի սնունդ կու տան , ան ամէն բաները որ
մեզ կը զուարճացընեն , և անոնք ըսէ՛ ասոնք ամէնը յայտ-
նապէս և բարձրաձայն չե՞ն բարբառիր թէ մեր Եմենա-
կարող Երարիչը մերձ է մեզի , և թէ հոգ կը տանի մեր
վրայ , և բարերար է մեզի : Եւ մինչդեռ աս ամէն բա-
նէրը անոր բարութիւնը կը պատմեն , չէ՞ որ անոր զօ-
րութիւնն ալ կը յայտնեն : Այնպէս զի ո՞ր զօրութիւն
բաղձատուելու մէկ բան մը ունի ան զօրութեանը հետ ,
որ ան յոյժ առատ պարգևներովը կը լեցընէ մեզ . և ան-
ձանձիր և անփոփոխ օր ըստ օրէ և դարէ 'ի դար շարունակ
սրանչելի և մեծագործ արդիւնքներ յառաջ կը բերէ բոլոր
երկրին երեսը , և երկինքի բոլոր սահմաններուն մէջ :

12 . Եպա ուրեմն յայտնի է թէ Եստուած ներկայ է ,
այն Եստուած քու ստեղծիչդ ու պահպանիչդ , բոլոր և

բեկի և անբեկի՝ աշխարհին ստեղծիչն ու պահպանիչ
Մատուածը՝ ներկայ է քեզի հետ աս բոլորին : Այլ չէ՞ որ
ներկայ է ան իրբն ամէն բան դիտող և մտադիր էակ մը :
“ Կի՞թէ ականջը տնկողը չըլտեր , կամ թէ աչքը ստեղ-
ծողը չըտեսներ : Կի՞թէ մարդու գիտութիւն սորվեցը-
նողը ” , անոր բանական կարողութիւնները տուողը , և
անոր պայծառացող մտքին վրայ բոլոր ան լոյսը թափողը՝
որ միտքը ան կարողութիւններովը կ'ընդունի , “ չըդի-
տեր ” : Սող՝ . դ՛ր . 9 , 10 : Ան որ իր արարածներուն
բոլոր կարօտութիւնները կը տեսնէ՝ ու ժամանակին կը
լեցընէ , անոնց գործքերն ալ չըտեսներ . և թէ որ կը
տեսնէ , չըգատեր զանոնք : Ո՞չ ապաքէն մեզի կարօ-
ղութիւն տուաւ բարին ու չարը՝ ճշմարիտն ու սուտը՝ և
բնութեամբ ու վարքով ուղիղն ու խանգարեալը զգալու և
որոշելու . ու ինքը չունի՞ կարողութիւն աս բաները որո-
շելու : Կի՞ խաղար քու խղճմտանքիդ հետ որ մէկանց
կ'իմացնէ քեզի՝ թէ Մատուած կը դատէ քու վարքդ և
անոր արդար կամ մեղապարտ , իրաւացի կամ անիրաւ
ըլլալուն համեմատ կը հանի կամ կը դատապարտէ . և
անոր վճիռը բոլոր իր արարածներուն շատ մեծ բան է :

13 . Այլ արդ՝ աս բոլոր ըսածներս քու վրագ առնե-
լով , յանկատակս կը հարցընեմ քեզի թէ իրաւացի՞ բան
է որ աս մեծ ու փառաւոր Բարեբարը բոլորովին իրենց
մտքերնէն հանեն ու անհոգ ըլլան անոր վրայ իր բանական
արարածները . անոնք՝ որ ընդունակ են մէկ աստիճան մը
գիտութիւն ստանալու անոր վրայ , և անոր աստուածա-
վայել պատիւ մատուցանելու : Երգար և իրաւացի՞ է որ
մտնաս ու անփոյթ ըլլաս անոր վրայ : Կի՞թէ անիկայ իր
ձեռաց բոլոր գործքերէն միայն քեզ մոռցած կամ վրադ
անփոյթ եղած է : Ո՞վ անխորհուրդ մեղաւոր , չես կրո-
նար համարձակիլ ատ բանը ըսելու կամ մինչև անգամ
մտքէ անցընելու : Հարկ չէ որ քու մանկութեան ու տը-
ղայութեան օրերուդ երթաս , որ ատեն անօգնական էիր ,
ստոր հակառակը ըլլալուն համոզուելու համար : Հարկ չէ
որ աս բանին համար ան երեւի բաները յիշես , որ թերևս
քու վրագ կատարուեցան շատ տարի առաջ : Արե՛կ գիշե-
րուան վայելած հանգստութիւնդ , այսօրուան վայելած

սիրտութիւնդ ու մտիթարութիւնդ . այս , աս նոյն բու-
պէին ընդունած ողորմութիւնդ անոր վիաներն են . և սա-
կայն դուն չես իմանար անիկայ . ո՛վ ապերախտ արարած ,
բարերար մարդու մը ասանկ կ'ընե՞ս : Բարերար ծնողքի
մը կամ միայն քանի մը ամիս քու վրայ ծնողական խը-
նամբ տանող ազնիւ բարեկամի մը կրնան երեսը նայիլ .
անոր առջէն եղած ատենդ անկէ չակնածել . անոր նոր-
հակալութիւն չմատուցանել . բնաւ մէկ բան մը չընել
փոքր ինչ խոստովանելու համար անոր քեզի բրած բոլոր
բարութիւնը : Կարգկային վատթար բնութիւնը աս
աստիճան նուաստութեան ինկած չէ : Այլ և ոչ անբան
կենդանեաց բնութիւնը այսբան նուաստ է : Անշուշտ
բոլորտիբոց եղած ամէն ընտանի կենդանի սիրտի ամէնէ
քեզ ասանկ ապերախտութիւն ընելու : Աթէ միայն քա-
նի մը որ փոքր ինչ խնամբ տանիս շան մը վրայ , և կե-
րակրես անիկայ քու սեղանէդ աւելցած փշտանքներով ,
քեզի սպասաւորութիւն կ'ընէ ու կ'ուզէ միշտ քու քովդ
կենալ . շատ կը բաղձայ քու ետեւէդ դալ տեղէ տեղ , և
քիչ մը ատեն հեռու տեղ մը երթալէդ ետքը երբոր
դառնաս տուն , հաղարաւոր սիրոյ շարժումներով կը ցու-
ցընէ՝ թէ ո՛րքան ուրախ է քեզ նորէն տեսնելուն հա-
մար : Աւ խելքի ու հասկրցողութեան կողմանէ անկէ
շատ վար անբանները անգամ , մեր իրենց ցուցուցած բա-
րերարութեանը վրայ զգացում մը ունին , և իրենց կեր-
պովը կը յայտնեն զանիկայ , ինչպէս որ Աստուած կը զի-
ջանի ըսել աս նոյն կերպովը որ ես յիշեցի , թէ « Ազբ իր
տէրը կը ճանչնայ , ու էջը իր տիրոջը մտորը » : Ասոյ .
Թ . 3 : Այն որոյ ինչ ողբալի նուաստութիւն է որ
դուն չես ճանչնար , դուն՝ որ Աստուծոյ ժողովուրդին
հետ սեպուած ես , չես նայիր ու չես ուզեր նայիլ քու ա-
նոր ունեցած անթիւ պարտականութիւններդ :

14 . Անշուշտ թէ որ անկեղծ բնութիւն մը ունիս ,
սիրտի ամէնաս ու վշտանաս ստիկայ կարգացած ատենդ .
բայց թէ որ չունիս , ներէ՛ ինձի որ աս գլխուն վրայ քեզի
հետ քիչ մըն ալ տրամարանութիւն ընեմ սակաւ ինչ
ուրիշ դիրքով մը ներկայացընելով բանը : Արնան ինք-
զներդ ապահով համարիլ , քանի որ ասանկ կը գործես :

Չե՞ս հաւատար քու խղճմտանքիդ մէջ թէ ապառնի դատաստան մը պիտի ըլլայ : Չե՞ս հաւատար թէ անբեկոյթ և յաւիտենական աշխարհ մը կայ : Իբրև բրիտանոնեայ ամենքս ալ կը հաւատանք . վասն զի վէճի տակ ինկած բան մը չէ , այլ Սուրբ Գրոց մէջ այնպիսի պարզ ապացոյցներով յայտնուած է , որ թէպէտ մոլորութեան մէջ մարդիկ ֆարապէտ ու սրամիտ են , բայց դեռ ճամբայ մը գտած չեն ասիկայ սուտ հանելու : Եւ ասիկայ հաւատալով՝ չե՞ս տեսներ թէ քանի որ դուն այսպէս կը մոլորիս Նստուծմէ , “ կործանում և թշուառութիւն քու ճամբաներուդ մէջն են” : **Հով . Գ . 16** : Ես անփոյթ ու զանցառու բնութիւնը քեզի ապահովութիւն մը կու տայ . մահուան դէմ քեզ կը պաշտպանե՞ . քեզ դատապարտութենէ կ'ազատե՞ : Երաւել իրաւացի կերպով կրնաս յուսալ թէ աչքերդ զոցելով գիշատիչ առիւծի մը կատաղութեանը դէմ պիտի պաշտպանուիս , կամ թէ մէկ ուրիշ կողմ մը նայելով գնտակի կամ սուրի մը հարուածէն պիտի ազատիս , քան թէ անհոգ ըլլալով դատապարտութենէ ազատիս : Երբոր Նստուած անխորհուրդ արարածոց ոմանց տարապայման յիմարութեանը վրայ կը խօսի , որոնք ամենևին խրատի մտիկ չեն ընել հիմա , շատ ահաւոր կերպով մը կը յաւելու թէ , “ Երբի օրերը ասիկայ աղէկ պիտի հասկընար” : **Եբեմ . Իգ . 20** : Եւ չե՞ որ սա խօսքը քեզի կը յարմարի : Ո՞չ ապարէն կանուխ թէ ուշ պիտի սկսիս աս բաներուն վրայ խորհիլ , ուզես չուզես : Եւ քանի որ սա այսպէս է , չե՞ս գիտեր ստուգիլ թէ անոնց վրայ ժամանակին ու սրբաբի մտք խորհրդածելն է Նստուծոյ շնորհքովը կործանումէ ազատելու մի միայն ճամբան :

15 . Ես ի՞նչ մեղաւոր , ասոր պէս նիւթի մը վրայ հարկ չէ որ այլ ևս խօսքը երկընցընեմ : Քու խղճմտանքդ արդէն ներսիդիդ համոզուած է , թէ եւ քու հպարտութիւնդ չուզէ խոստովանիլ : Եւ ասիկայ հաստատելու համար քեզի հարցում մը բնեմ . Ինչևիցէ պայմանով կամ խորհրդածութեամբ կ'ընե՞ս անանկ որոշում մը թէ այսուհետև աստուածապաշտութեան վրայ ամէն խորհուրդ ու ամէն փոյթ մէկգի ընես ու աս զանցառութեան հետեւ

ւանքները քաշելու պատրաստ ըլլաս : Ըստ դժուարաւ կը հաւատամ թէ մէկ մարդ մը կրնայ դաժնուիլ բաւական քաջութիւն ունեցող աս որոշումը ընելու : Աստուծեմ թէ ասոր խորհուրդը անգամ ընթերցողաց շատերը պիտի սարսափեցնեն :

16 . Բայց թէ որ հարկաւոր է աս բաները երբէք խորհրդաճութեան տակ ձգել , հարկ է շուտով ընել . վասն զի կեանքը այնքան երկար չէ , ոչ ալ այնքան ստոյգ , որ խելացի մէկը ապաւինի անոր շարունակութեանը :

Եւ կը յուսամ թէ վերջը քեզ պիտի համոզեմ որ հարկ է անմիջապէս ընել , և հոգևոր բաներու վրայոք վերջը կը մտածեմ բռնն ալ ամենեւին մտածմունք պիտի չընեմ բռնու յիմարութենէն վար շինար : Բայց առաջ աս խօսած բաներուս վրայ քիչ մը խորհրդածէ , որով պատրաստ կ'ըլլաս յաջորդ գլխուն մէջ գրուցելիքներս ընդունելու :

Երբեմն անխորհուրդ՝ իսկ այժմ արձնցող միջոցով էր խորհրդաճութեանը :

Երթնցի՛ր , ս'ի իմ անփոյթ հոգիս . արթնցի՛ր աս մտաւոր երազներէն : Գարնի՛ր ունայնութեան ետեւէ իյնալէն , և բոլոր աս խորհրդաճութիւններովը համոզուէ քիչ մը դեպ 'ի առաջ ու դեպ 'ի վեր նայիլ գոնէ քանի մը վայրկեան : Եւ բաւական է կենաց դործքերուն ու գուարճութիւններուն տուած ժամերդ ու օրերդ : Արթնայեր քանի մը վայրկեան տալու , ինքզինքդ ու բու աւանանմեծ դործքերդ քննելու և մտմտալու թէ ս'ի և ինչ ես . ինչէ՛ն է որ հոս ես , և թէ քիչ ատենէն ինչ պիտի ըլլաս :

Երգարև ինչպէս որ վերը ստորագրուեցաւ՝ անանկ է բանը : Ս'ի իմ հոգիս , դուն Եստուծոյ ստեղծածն ես , անիկայ ըրաւ քեզ ու կարողութիւններ տուաւ քեզի , և դրաւ մարմինի մը մէջ , որն որ ինքը շինեց և ինքը կը պաշտպանէ . մարմին մը՝ որուն մէջ միայն ժամանակ մը բնակելու համար դրաւ քեզ : Ս'հ , խորհէ միանգամ թէ՛ աս երկրաւոր տունը ս'րքան շուտով պիտի քակուի , թէ Արթն . Ե . 1 . և դուն Եստուծոյ պիտի դառնաս . Ժող . Ժք . 7 : Եւ միթէ Են , Արթն՝ Ենհուն՝ Յաւի-

տենական՝ Եմէնօրձեալ՝ և Եմէնափառաւորեալ Լշակը ,
 քու փոյթ ըրած բաներուդ ամենէն փոքրը պիտի սեպես :
 Ես բնութիւնսդ պիտի ապրիս ու մեռնիս , քու ամեն
 աւուր դորձքերուդ ըսելով Մատուցոյ թէ « Բաշուէ՛ ինծ-
 մէ , ինչու որ քու ձամբաներդ զիտնալ չեմ ուզեր » :
 Յո՞ր . իս . 14 : Երառուն՝ ցորեկը՝ իրիկունը և գիշերը ,
 ժամանակին ամէն մէկ կէտին աս անհոգութեանդ համար
 ջատագովութիւն կը զանես : Բայց ո՞վ իմ հոգիս , երբոր
 անոր թափանցող աչքը դիտելու ըլլայ , ան ատենը ինչ
 պիտի երևնան աս ջատագովութիւնները : Ես խարեական
 ջատագովութիւնները կրնան իմ աչքերս զոցել , բայց ոչ
 անորը :

Ո՞վ դուն Բարերար , որ գրեզ վշտացուցի՝ քեզ
 մոռցայ և բարկացուցի . երբոր կը խորհիմ մինչև անգամ
 միայն մէկ երկու ըսպէ քու մեծութեանդ ու բարութեանդ
 վրայ , կ'ապշիմ ան անզգայութեանը վրայ որ իմ սրտիս
 մէջ տիրեր է և մինչև անգամ տակաւին կը տիրէ .
 « կ'ամշնամ , և իմ երեսս քեզի վերջընելու չեմ համար-
 ձակիր » : Եղ . թ . 6 : Յոյժ հարևանցի դիտողու-
 թիւնով մը անգամ կը տեսնեմ որ « ահա յիմարութիւն
 ըրի , ու մեծապէս սխալեցայ » : Իմ Թառ . իգ . 21 :
 Բայց և այնպէս աս իմ անզգայ սիրտս կ'ուզէ՝ քեզ այնքան
 ժամանակ զանց ընելը պատճառ մը ընել ան նոյն զանցա-
 ութեանը մէջ յառաջ երթալու : Ար խոստովանիմ թէ
 պէտք էր որ ամէն բանական արարած ինքզինքը նուիրած
 ըլլար իր քեզի ունեցած պարտականութիւնները կատարե-
 լու և քեզ սիրելու . ամէն սիրտ քու ներկայութեանդ
 գիտութիւնովը լեցուն ըլլար . և ամենուն քով քեզի հա-
 ճոյ ըլլալու անանկ հոգ մը կենար , որ բոլոր ուրիշ հոգերը
 մէկդի դնէր : Բայց և այնպէս դուն բոլորովին իմ մոռիս
 մէջ չեղար . Սող . Ժ . 4 . և աստուածագալտութիւնն
 ալ՝ որ իմ էութեանս վախճանն ու փառքն է , այնպիսի
 օտարի մը պէս երեսը շնայեցայ , որ հազիւ երբէք ուշա-
 դրութեամբ անոր հարցուցած ունիմ ինքզինքիս ինչ ըլ-
 լալը : Վիտեմ որ եթէ ասանկ երթալու ըլլամ , կը կոր-
 սուիմ . և սակայն իմ թիւր բնութեանս մէջ մէկ զաղանի
 դժկամակութիւն մը կը գցամ աս խորհուրդներուն հէ-

տեւելլու . մէկ հակամիտութիւն մը կը զգամ որ զանոնք զէթ առ այժմ մէկդէի դնեմ , թէ որ բողոքողին ալ չհուսայրնեմ : Միտքս վարանած ու երկմտած է . բայց վստահ եմ թէ դուն որ զիս ստեղծեցիր , զիտես թէ որն է ամենն աշէկը ինձի համար : Այան որոյ կ'աղաչեմ քեզի որ « քու անունիդ համար ինձի առաջնորդես ու զիս կառափարես » : Սաղ . լւ . 3 : Տոող մի տար որ ես յապաղեմ մինչև որ ժամանակը անցնի : Խանձողի պէս զիս կրակէն հանէ : Մովս . Գ . 11 : Վարատե ան հրապոյրը որ իմ սէրս աշխարհային բաներու վրայ է բռներ , որն որ դատուած կը դատապարտէ . և տուր որ վերջապէս անանկ մտքի վիճակ մը ստանամ , որ երբ քու վրադ և իմ վրաս խորհիմ՝ չփահմամ , և չփորձուիմ ցանկալու թէ զիս ստեղծած չբլայիր , կամ թէ բլայն որ յաւիտեանս զիս մտնայիր . և չփափարիմ թէ անբաններուն պէս կորնչիմ :

Թէ որ այլ ևս ինչ որ պիտի ընթեռնուիմ հոս՝ ճշմարտութեան ու բանականութեան համաձայն է , թէ որ իմ երջանկութիւնս առաջ կը տանի , և քու իմ վրայոյն ունեցած կամքիդ ու հաճութեանդ վրայ զիտութիւն կու տայ ինձի . ո՛վ Աստուած , տո՛ւր որ մտիկ ընեմ ու շահանդիմ անոնց : Թոող քու ծառայիդ քու դատիդ ջատագովութիւն ընող խօսքերը իմ մտքիս թափանցեն խթաններու նման , և տո՛ւր որ յաւէտ զգամ ու ցաւիմ , քան թէ մեռնիմ : Թոող անոնք « դամուած բեւեռներու պէս բլլան » . Ժող . ԺԲ . 11 . որ հաւատոյ մէջ ինչ զաղտնիքներ կամ ինչ դժուարութիւններ ալ որ բլլան , տակաւին եթէ աստուած պաշտութիւնը հարկաւոր բան մըն է , վերջապէս զանց չընեմ անիկայ , և եթէ պատշաճ է որ անվերջապէս միտք դնեմ անոր , տո՛ւր որ շուշանամ աս մտադրութիւնը ընելու : Աւ ո՛վ Տէր , թող քու շնորհքդ սորվեցընէ ինձի ան դասը՝ որ ես ծուլութիւն կ'ընեմ սորվելու , և յաղթէ ան հակառակութիւնը որ ես կը զգամ իմ սրտիս մէջ բուն իսկ աս խորհուրդին զէմ : Այլ աս բեկեալ աղաղակները քու Արդւոյդ համար , որ ինձի պէս անթիւ յամտեալ մեղաւորներու սորվեցուց ու փրկեց . և կրնայ « քարերէն Աբրահամին որդիներ հանել » : Մատթ . Գ . 9 : Մեն :

Գ Լ Ո Ւ Խ Գ

Յորդոր արևնցած Բզա—որին որ անհնապէս հրաձիւղ— ունի
— շապարի :

1 . Ար յուսամ թէ անցեալ գլխուն մէջի գրուցածներս
ընթերցողիս յանցաւոր ըլլալը զգացընելով այնքան ար-
թնցուցին , որ սա խորհուրդին բերին անիկայ , թէ մէկ
ատեն մը հոգևոր մտածութիւն ընելու պիտի օկսի :
Իսկ ներէ՛ ինծի՛ որ յանկատակս և ուղղակի հարցընեմ
քեզի՛ թէ Ն՞՞ր պիտի ըլլայ աս : “ Դուն հիմա զնա , և
երբոր ժամանակ ունենամ՝ ես քեզ նորէն կը կանչեմ ” ,
Գործ . ի՞ . 25 , էր ապերճանիկ փելիքսին պատասխանն
ու կործանումը , երբոր առաքելոյն տրամարանութիւնն
ըր ու յաղթահարիչ ապացոյցները լեւով կը գողար :
Փորձիչը համարձակեցաւ հրապուրել որ բոլորովին մէկդի
ձգէ զզնման ու նորոգութեան բոլոր խորհուրդները , այլ
համոզեց որ առ այժմ գործով (որ անշուշտ շատ էին)
գրաղեալ ըլլալուն համար միայն ուրիշ աւուր մը ձգէ :
Նարքը յաջողեցաւ , և փելիքս կորսուեցաւ՝ որչափ որ
մենք գիտենք :

2 . Դուն ալ այսպէս ըսելով զիս պիտի արձակե՞ս՝ օվ
ընթերցող : Դուն իսկ քեզի համար , և քու կորսուելու
անմահ հոգւոյդ վրայ կարեկցութիւն ունենալուս համար
բնաւ թող չեմ տար քեզ կամաւ , ոչ թէ և ժամանակ
մը որոշեալ աս բանին համար , և ոչ էթէ գալ տարի գալ
ամիս կամ գալ շարաթ և մինչև անգամ վաղուան օրը
յատկացրնես : Եմենայն անձկութեամբ և բարեկամա-
կան սիրոյ թախանձանօք , պիտի ստիպեմ և աղաչեմ՝ որ
բանին կայանք մը տաս աս բուզէին : Այսն զի էթէ ըսես
թէ “ Ես բաներուն վրայ փողը կը մտամտամ ” , զրեթէ
յոյս պիտի չունենամ . և պիտի հետեցընեմ թէ՛ մինչև
հիմա բոլոր խօսածներս և բոլոր կարգացածներդ ընդու-
նայն եղան :

3. Երբ որ քեզ կը հրաւիրեմ՝ աստուածայաշուութեան վրայ հողալու և անոր հետեւելու, զարմանալի բան է որ փաստարանութիւն հարկաւոր ըլլայ քեզ համոզելու համար որ անմիջապէս միտ դնես և զործադրես: Ան բանը որուն քեզ կը հրաւիրեմ՝ ինքնին այնքան ազնիւ ու վեմ, մեր բանական բնութեան զերազանցութեանը այնքան արժան ու յարմար, այնքան արիական ու իրաւացի է որ, մարդ պիտի համարի թէ հրաւերը լրածիդ պէս՝ իբր թէ պիտի բռնկիս, այն, ասանկ ու բախալից լուր մը անմիջապէս քու հոգիդ դրաւելու է համոզեմ տեսակ մը սրամտութեամբ ինքզինքիդ դէմ՝ թէ ինչո՞ւ աւելի կանուխ չհետեւեցար անոր: «Մըդեօր կրնամ իմ աչքերս և իմ հոգիս Մատուծոյ վերցունել, ինքզինքս անոր նուիրել, հիմա աս բուպէիս մէկ բարեկամութիւն մը սկսել անոր հետ, բարեկամութիւն մը՝ որ յաւիտեան պիտի տեւէ և աս իմ ունեցած անմահ բնութեանս ապահովութիւնը՝ զուարճութիւնը և փառքը պիտի ըլլայ: Այլ միթէ ես ե՞տ կենամ ու բնեմ թէ՛ Բայց աս բարեկամութիւնը շուտով չսկսիմ աշխարհիս մէջ այլ ևս դէ՞թ քանի մը շարժ կամ քանի մը օր ալ ապրիմ առանց Մատուծոյ»: Անշուշտ շատ աւելի բանաւոր պիտի ըլլար դառնալ ներսիդ իրդ ու բնել, «Ո՛վ իմ հոգիս, ինչո՞ւ քու երկնաւոր Հայրդ վշտացունելով թողուցեր ես ու ատ մնտաի եղջիւրներով կը ճարակիս: Իմ աղքատութեանս՝ իմ նախատանացս՝ և իմ թշուառութեանս օրերը բազմապատկեցու փափարիմ»: Ես սկզբունքով անշուշտ ամէն մարդ ամէն կերպով պիտի ընտրէ յաւետ անմիջապէս Մատուծոյ դառնալ քան թէ յիմարութիւնը շարունակելով առաւել յառաջ երթալ Մատուած բարկացընելու, և անանկով հոգեւոր սով կրելու և իր հոգին վերաւորելու մինչև անգամ թէ և ներկայ կեանքին մէջ աւելի ապրիլը աղէկ գիտնար, և Մատուծոյ ու իր պարտաւորութիւններուն դառնալը կատարելապէս իր ձեռքն ըլլար՝ ամէն մէկ ապառնի վայրկեանի մէջ, ու զալու շատ տարիներու մէջ:

4. Բայց դուն ո՞վ ու ի՞նչ ես՝ որ զալու տարիներ կամ ամիսներ հաշիւի կ'առնես: «Ի՞նչ է քու կեանքդ, չե՞ որ շոգի մըն է, որ քիչ մը ասուն կ'երկնայ,

ու ետքը կ'ոչնչանայ" : Յով . Գ . 14 : Եւ ի՞նչ է քու ապաւինութիւնդ , կամ ի՞նչ մասնաւոր վկայութիւն ունիս որ անոր շարունակութեան ստուգութեանը վստահիս՝ քու հողիդ անոր քով բացարձակապէս դրաւը դնել յանդգնելու չափ : Թերեւս պիտի ըսես թէ "Վեռ երիտասարդ եմ , զեռահաս և զօրաւոր . հարիւրաւորներ կը տեսնեմ իմ բոլորտիքս որոնք իմ տարիքիս երկու անգամէն աւելի են . և անոնցմէ քիչ մը քիչերը շնն՝ որ կը սեպեն թէ զեռ կանուխ է հողեշահ բաներու միտք դնելու" :

Վնդանի եղողներուն կը նայիս ու ասանկ կ'ըսես : Իայց կ'աղաչեմ քեզի Դաւանդեբան վրայ ալ մտնա : Վու խորհուրդներդ դարձուր ան զերեզմաններուն վրայ , որոնց մէջ քու երիտասարդ ընկերներէդ ու բարեկամներէդ քանինքը դրած ես : Վուն զանոնք քիչ մը ժամանակ առաջ զուարթ և աշխոյժ , ու կեանքին յոյսերովը և խորհուրդներովը ջերմ տեսար : Եւ և թէ անոնց մէկ բարեկամը մահուան ու յախտնականութեան վրայ ահաւոր ճառ մը խօսելով անոնց զբաղմունքն ու զուարճութիւնները ընդմիջէր , անոնցմէ ոմանք անոր ըրածը շատ անպատեհ ձանձրութիւն մը պիտի համարէին : Եւ սակայն ասոնց երկուքին ալ երգերքը կայնած էին ան ատենը : Եւ անկէ ետքը տեսար անոնց դիւրը կամ զէթ դադաղները , և հաւանակամարար անոնց թաղմանէն ետքը վրադ սուգի նշան ալ առած ես : Մնոնց ան զօրաւոր և թերեւս զեղեցիկ մարմինը հիմա հողին մէջ ապականեալ կեցած է ու թսուն տարի ապրելէն ետքը մեռած մարդու մը փոսած մարմինին պէս անզգայ և անօգնական : Եւ ան որ աւելի դիտելու արժան է , անոնց հողինքը՝ թէ պատրաստ աս փոփոխութեանը և թէ՛ անփոյթ , Մտուծոյ առջևը երեցած , և աս բոպէին հաստատուն կեցած են կամ երկինքի մէջ և կամ դժոխքին մէջ : Երգ՝ միտ դիւր աս կարեւոր հարցմանը , միթէ հրաշալի կամ տարօրինակ բան մը պիտի ըլլար , եթէ ասանկ բան մը քեզի պատահէր : Ինչէ՞ն գիտես՝ որ մէկ մահառիթ ախտ մը պիտի չսկսի աս բոպէին գործել քու երակներուդ մէջ : Ինչէ՞ն գիտես՝ որ երբէք կարող պիտի ըլլաս այլ ևս կարգաւու , կամ խորհե-

լու թէ որ հիմն չես միտ դներ կարդացածներուդ , և չես
 հետեւիր մօքիդ ցուցուցած խորհուրդին : Աս յանկարծա-
 կան փոփոխութիւնք զոնէ կարելի է որ պատահի , և եթէ
 պատահի , յիրաւի ահաւոր բան մը պիտի ըլլայ քեզի :
 Ասանկ անակնկալ կերպով Աստուծոյ ներկայութեանը
 առջևը ելլելը , մէկէն 'ի մէկ աշխարհէն բաժնուիլը , ո-
 րուն բոլոր սրտով ու հոգիով փակած ես , ան աշխարհէն
 որ բոլոր քու խորհուրդներդ ու հոգերդ , բոլոր քու բաղ-
 ձանքներդ ու գործքերդ զբաւած է , և անանկ վիճակի մը
 մէջ հաստատուիլը , որ մէկը՝ ան վիճակին պատրաստուե-
 լու համար մէկ ժամ մը անոր վրայ խորհել տալու չափ
 չէր կրնար համոզել քեզ , աս բաները միտք բերած ա-
 տենդ ի՞նչպէս սարսափելու , և ի՞նչպէս ահով լեցուելու
 ես : Օարմանալի բան է որ ասանկ պարագաներու մէջ
 կենաց անստուգութեան խորհուրդներովը զրեթէ չես ցնո-
 րիր , և մահուան երկիւղը զրեթէ մահու չափ չսարսափե-
 ցըներ քեզ : Աւ ասանկ ազգու խրատ մը լսելէն ետքն
 ալ զԱստուած մոռնալն ու անիկայ արհամարհելը շարու-
 նակելը՝ անոր բարկութիւնը աւելի բորբոքել է , որ կրք-
 նայ ըլլալ թէ՛ ալ բոլոր միւսներէն վերջը ասիկայ մա-
 հաբեր ըլլայ . ոչ ալ եթէ անանկ ընես ուրիշ բան մը
 ունիս ակնկալելու , այլ թէ անմիջապէս քեզ մէջտեղէն
 պիտի կտրէ , և քու կործանմամբդ ուրիշ անխորհուրդ
 արարածոց սորվեցընէ՝ թէ ի՞նչ վտանգաւոր փորձ մը կ'ը-
 նեն , երբոր անոնք ալ քեզի պէս գործեն :

5 . Իսկ արդ՝ աս ամենուն վրայ տակաւին աս անգերծա-
 նելի վտանգին մէջ պիտի վազել՞ս : Դ՞նչ խորհրդով կ'ը-
 նես ասիկայ : Դ՞նչ , կը կարծես թէ աստուածպաշտու-
 թիւն ստանալը քու ուշացընելովդ քիչ հարկաւոր կամ ա-
 ւելի դիւրի՞ն պիտի ըլլայ : Գիտե՛ս որ ասանկ չըլլար :
 Գիտե՛ս՝ թէ ինչ որ ամենօրնեան Աստուած կը պահանջէ
 հիմն , ասկէ քսան կամ երեսուն տարիէն ալ նոյնը պիտի
 պահանջէ , եթէ ապրելու ըլլաս այնքան ստոն : Աս-
 տուած հաստատուն բրած է իր կերպը , որով մեղաւորնե-
 րուն թողութիւն պիտի տայ և ընդունի զանոնք իր Եւե-
 տարանովը : Անիկայ երբէք կը փոխել իր կերպը : Աւ
 եթէ ան չփոխեր , մարդիկ կրնան փոխել : Չես ուզեր

որ խորհիս զգալու և ինքզինքդ Մատուծոյ անջնէր խոնարհեցընելու վրայ, որ անոր ձրի շնորհքէն Վրիստոսի ձեռքովք արդարութիւն և կեանք ընդունիս . և մանաւանդ ամենէն աւելի կը զգուիս սուրբ շնազանդութիւնով Մատուծոյ դատնալու խորհուրդէն : Բայց միթէ երբէք աս վերոյիշեալ պայմանները զանց ընելով նոր աւետարան մը կը հրատարակե՞ Մատուած, անզեղջ ու անհաւատ մեղաւորներուն կեանք ու փրկութիւն խոստանալով, միայն թէ որ ինքզինքնին քրիստոնեայ կոչեն ու քանի մը արտաքին արարողութիւններ կատարեն : Ո՞րքան ատեն պիտի ըստպասես իրերուն սահմանադրութեանը մէջ ասանկ փոփոխութիւն մը ըլլալու համար : Ահա Մատուած ատանկ ինքզինքը շուրացած և իր բոլոր ստորագրելիքներուն և ըսածներուն չհակառակած՝ մահը քու վրադ պիտի գայ, ու աշխարհ ալ ընդհանուր կործանումով պիտի քաղուի :

6 . Այլ եթէ իր պահանջմունքները միշտ նոյն կը մնան, ինչպէս որ անշուշտ պիտի մնան, կը կարծես թէ անոնց մէջ քեզի հիմա տհաճելի եկած բան մը՝ ասկէ ետքը հիմակուրնէ քիչ տհաճելի պիտի գայ : Սեղբ գործելը քիչ պիտի սիրես, երբոր անիկայ աւելի ունակութիւն ըլլայ քեզի, ու խղճմունքդ առաւել տկարանայ ու ապականի : Ի՞նչ որ դուն հետեակներուն հետ վազեցիր ու քեզ հոգնեցուցին, հասցա ձիաւորներու հետ ի՞նչպէս ասպարէզք պիտի մտնես : Արե՛մ . ԺԻ . 5 : Անշուշտ ասանկ բան մը չես կրնար երեւակայել : Քու կեանքիդ սպառնացող հիւանդութիւն վրադ եկած ատենը ամենեին չես ըսեր թէ « Անամ մինչև որ քիչ մըն ալ դէշի երթամ, ու հասցա բժիշկ կանչեմ . թող ախտը քիչ մըն ալ արմատանայ կենսական մասանցս մէջ, ու հասցա ջանամ փարատելու ճարը նայիլ » : Ո՞չ . միայն հոգիին կեանքին վրայ է որ մարդիկ այսպէս այլանդակ կը խորհին . մարմինին կեանքն ու առողջութիւնը այնքան անարգ չեն սեպեր որ այնպէս անհոգ ըլլալով կորսընցընեն :

7 . Աթէ ասանկ վտանգաւոր փորձեր ընելէն ետքը քու ճամբաներէդ դառնաս, քու հոգևոր ախտերուդ աճեցեալ շուրթեանը համեմատ՝ շատ զօրաւոր և կարի սրանչելի

կերպով՝ Մատուածային շնորհաց քու հոգւոյդ վրայ ներ-
գործելովք ըլլալու է ասիկայ : Այլ կրնան յուսալ թէ
Հոգին Սուրբ առաւել պատրաստ պիտի ըլլայ քեզի օգ-
նելու , զինքը անարգելուդ համար : Հիմա ալ մէկ շա-
փով մը քու սրտիդ կը ներգործէ : Այժմէ աս բաները
կարդալուդ վրայ սրտիդ մէջ կակղու թիւն մը կը գցաս ,
ատիկայ նշան մըն է որ բոլորովին երեսէ ձգուած չես :
Իսկ զի գիտէ՞՞ զուցէ անոր այսքան ժամանակ իրեն դէմ
խտտացած սրտի մը՝ վերջին անգամ դպչիլն է : Ո՞վ գի-
տէ՞ զուցէ Մատուած այսօր պիտի « երդում ընէ իր բար-
կութեանը մէջ որ իր հանդիսորը չմոնես » : Աճ . 4 .
18 : 4 . 3 : Քեզի բնի թէ կրնայ ըլլալ որ անմիջապէս
մեռնիս : Ար խոստովանիս՝ թէ ասիկայ կրնայ ըլլալ :
Այլ կրնան ասիկէ աւելի ստակալի բան մը դանկէ : Այժ ,
նձ մեղաւոր . անմիջական մահէն ու անմիջական դատա-
պարտութենէն առաւել ահաւոր բան մը պիտի ըսեմ քե-
զի : Արնայ ըլլալ որ ամէնօրնեան Մատուած բռն թէ ,
« Են թշուառ արարածը , որ այսքան ատեն զիս առ ոչինչ
համարեցաւ և բարկացուց , թող այլ ևս ապրի . թող
յաջողութեան և առատութեան մէջ ապրի . թող նաև
Մատուածային ամենամարտը և ամենազոր տահմանադ-
րութիւններուն տակը ապրի , որ շարաշար գործածելով
զանոնք՝ իր դատապարտութիւնը աւելցրնէ , ու եօթըն-
պատիկ անէծքի տակ մեռնի : Այլ ևս շնորհք պիտի
չտամ անոր իր ճամբաներուն վրայ բոպէ մը սրտի մտօք
մտածելու . այլ թող յառաջ երթայ զէշէն զէշին , իր
անօրէնութիւններուն շարք լեցրնելով , մինչև որ անակն-
կալ ժամու մը մէջ մահն ու կործանումը անոր վրայ հաս-
նին , և « բարկութիւնը անոր վրայ հասնի մինչև վերջը » :
ա թիւ . 5 . 16 :

8 . Ար կարծես թէ ասիկայ շատ տարօրինակ բան մըն
է . բայց կը վախնամ թէ քու կարծածէդ շատ տարբեր
է : Ար վախնամ թէ շատ ժողովուրդներուն մէջ որոնց
Մատուածոյ խօսքը հաւատարմութեամբ քարոզուած , ու
անոնցմէ շատ անգամ անարդուած է , մանաւանդ անանկ-
ներէն որ ատեն մը արթնցած էին , Մատուածոյ աչքը ասանկ
անթիւ թշուառ հոգիներ կը տեսնէ . թէպէտ և աս մահ-

կանացու վիճակին մէջ անկարելի է մեզի ասոնց ո՛վ ըլլալը գիանալ :

9 . Կս չեմ համարձակիր ըսելու քեզի ինչ ընելիքը՝ ո՛վ ընթերցող . թէ արդեօք անմիջապէս քեզ մէջ տեղէն պիտի կտրե՞՞, կամ թէ սրտի յետին խտուրտեան ու անզեղջու թեան տանկ փակէ, կամ թէ արդեօք իր շնորհքը վերջապէս քեզ պիտի արթնցընէ՞՞ որ քու ճամբաներդ քննես ու Վնոր դառնաս, մինչև անգամ թէև քու սիրտդ հիմակուրնէ աւելի խտացեալ ալ ըլլայ : Ասան զի անոր ամենակարող շնորհացը բան մը դժուար չէ, մինչև անգամ քարեղէն ժայռը մարդ կամ սուրբ մը ընելը : Բայց սն կ'ըսեմ վստահութեամբ որ եթէ այլ ևս յապաղելու ըլլաս, ժամանակ կու գայ՝ որ ատեն դառնապէս պիտի զղջաս աս յապաղմանը վրայ, կամ աս կեանքիս մէջ ժամանակ պիտի ունենաս սրտի անձկութեամբ Վստուծոյ առջև անոր վրայ ողբալու, կամ դժոխքին մէջ պիտի աւնիծես քու յիմարութիւնդ ու խնթութիւնդ : Վ, յո՛ւ ան ատենը պիտի ուզես որ յաւէտ առաւել շուտ ինկած ըլլայիր ան սուկալի դժոխքին մէջ, քան թէ այսքան շարաւար գործածուած ողորմութիւններուն մէջ ապրելիր, քու պատժոյ աստիճանդ առաւել անտանելի՞ և անոր զգացումը առաւել սաստիկ տանջող ընելու համար :

10 . Ասան որոյ մեծաւ անձկանօք կը խրատեմ քեզ մեր Տէրոջը Հիսուս Վրիստոսի անունովը, և քու անմահ ու կորսուելու վտանգի մէջ եղած հոգւոյդ արժէքովը, որ այլ ևս օր մը կամ ժամ մը չյապաղիս : Հետու կենալով « աչքերուդ քուն՝ ու արտեանունքներուդ նիրհում տալէն », Վոսմ . դ . 4, աս ծանրակշիռ գործքին երկարատե զանցաութեանը մէջ՝ մինչև անգամ հիմա աս կէտիս « քու հետդ խօսքե՛ր առ, ու Տէրո՛ջը դարձի՛ր » . Ո՛ւ . ժ . 2 . և հիմայ եղած տեղէն չեղած՝ անոր սուրբ ներկայութեանը մէջ ծունկերուդ վրայ ինկիր, և ասանկ կամ դէթ ասանկ միտք տուող խօսքերով քու սիրտդ դո՛ւրս թափէ :

Մզջլէ՛ սոյնպիսի Տէ՛րու ին Համար , որ Նկարչիս աստուածապաշտ-
տութեան կարեւորութեանը վրայ Համարած է , Բայց ու-
նոր հիփոթիլը ուղարկելու փորձութեան Տէ՛րն է :

Ո՛վ երկնի և երկրի արդար՝ սուրբ և ամենակալ Տէր •
ն՛վ Մատուած , “ որ քու ձեռքդ է իմ շունչս , և քու կը-
նն իմ ամէն ճամբաներս ” : Գան . Ե . 23 : Ար խոս-
տովանիմ որ իմ վարքս շատ Հեռու էր քեզ փառասորե-
լէն , կամ քու կամքիդ յայտնածին պէս զործելէն :
Սան որոյ մեծ պատճառ ունիմ քու Համբերութեանդ ու-
րարութեանդ երկրպագութիւնս բնելու , որ արդէն իմ
շունչս չգաղբեցուցիր , ու զիս կենդանիներուն երկրէն
չկտրեցիր : Արկրպագութիւնս կը մատուցանեմ քու Համ-
բերութեանդ՝ որ զիս ամիսներով ու տարիներով առաջ
դժոխքը չձգեցիր , ուր բիւրաւոր յապաղող մեղաւորներ
իրենց յիմարութեանը վրայ կ’ողջան Հիմա , և պիտի ող-
բան ալ անոր վրայ մինչ՝ ի յախտեան : Բայց ն՛վ Մա-
տուած , ս՛րչափ դիւրին է որ իմ աս ունայն սիրտս՝ վեր-
ջապէս ան նոյն կործանմանը մատնէ զիս , և ան ալ աւանդ ,
քու բոլոր ինծի ցուցուցած աս Համբերութիւններուդ Հա-
մար՝ աւելի ծանր կործանման մը մէջ : Համոզուած եմ
որ աստուածապաշտութիւնը՝ թէ՛ կանուխ և թէ՛ ուշ իմ
մեծ Հոգս բլբլու է , ապա թէ՛ ոչ՝ պիտի կորսուիմ : Աւ-
սակայն իմ յիմար սիրտս ետ կը քաշուի աս լուծէն • տա-
կաւին ինքզինքս ծուլութեան անկողինին վրայ կը փռեմ ,
ու կ’ըսեմ թէ՛ “ Կիչ մըն ալ քնանամ , քիչ մըն ալ
նիրհեմ , ու քիչ մըն ալ ձեռք ձեռքի վրայ դնեմ ննջելու
Համար ” : Մատ . 4 . 10 : Այսպէս կը Հաստատուէ իմ
ապականեալ սիրտս իմ դատմանս դէմ՝ իր բրած ծուլու-
թեանը Համար : Ե՛նչ ըսեմ • ն՛վ Տէր՝ փրկէ՛ զիս իմ
ձեռքէս • ազատէ՛ զիս մեղքին ջարքներէն ու խարէու-
թենէն : Փրկէ՛ զիս աս իմ թիւր և ապականեալ բնու-
թեանս դաւաճանութիւններէն , և տպաւորէ՛ մտքիս վրայ
Հիմակուան կարդացածներս :

Ո՛վ Տէր , աս սորվածներս այնպիսի ճշմարտութիւններ
չեն , որոնք ինծի առաջ բոլորովին անձանօթ էին : Հաս-
անգամ կարդացած եմ կենաց անստուգութեանը և փր-

կութեան օրուանը մեծ անտուղութեանը համար արթուն կենալու վրայ : Եւ մէկ քանի թեթե խորհուրդներ ունեցած եմ , և սկսած եմ իմ ճամբուս մէջ մէկ քանի անհաստատ քայլեր առնել դէպ 'ի քեզի դառնալու : Բայց աւանդ , աստուածպաշտութեան բողոքօրէքը կը շարժէի միայն , և բնաւ անոր վրայ հաստատուած չէի : Բողոք իմ որոշումներս մուխի պէս , կամ հոյին առջևը եղող ամպերէն շողի նման ցրուեցան : Ո՛հ թէ աս բաները հիմա իմ սրտիս մէջ բերէիր , մինչև հիմա ունեցածէս շատ առաւել զօրաւոր համոզմամբ մը : Երանի թէ անոնցմով իմ հոռեւ իյնայիր , երբոր ես անոնցմէ փախչիմ : Այնչև անգամ եթէ այնքան յիմարանամ , որ ջանամ նորէն անոնցմէ հեռանալ , թող քու Հոգիդ ահաւոր խօսքերով ինձի բարբառի , և ան ամէն զօրաւոր կերպերը բանեցընէ , որոնք հարկաւոր կը համարիս զիս արթնցընելու համար աս թմբութենէն , որ եթէ քու օգնութիւնդ չըլլայ , մահաբեր պիտի ըլլայ : Թող աս բաներուն ձայնը իմ ականջներուս մէջն ըլլայ " թէ տանս մէջ նստած ստենս , թէ ճամբայ զացած ստենս , և թէ պառկելու ու ելլելու ստենս " : Ը () Գլխ . Գ . 7 : Եւ եթէ աս խորհուրդները խախտանն զիշերուան հանգրտութիւնս և ցրեկուան զբաղմունքս ժամանակ մը , թող այնպէս ըլլայ ' ո՛վ Աստուած , միայն թէ կարենամ ասանկով իմ քեզի հետ ունեցած դործս յառաջ տանիլ լուադոյն կերպով մը , և վերջապէս քեզմով հանդիստ մը վաստդիկի՛լ փոխանակ ան բողոք երկիւղէն որ հիմա կը կրեմ , երբոր " Աստուած կը յիշեմ , ու անհանդիստ կ'ըլլամ " : Սող . 45 . 3 :

Ո՛վ Տէր , " իմ մարմինս ահէդ դողաց . ու ես քու դատաստաններէդ վախցայ " : Սող . Ծթթ . 120 : Աը վախնամ որ չըլլայ թէ նոյն աս ներկայ ժամանակս որ ըսկըսեր իմ խորհիլ աստուածպաշտութեան վրայ , մէջ տեղէն կտրես զիս աս որոշիլ և կարեւոր փայրկեանիս մէջ՝ դեռ խորհուրդներս չհասունցած . և 'ի դերև հանես անոր իմ մօրիս մէջ նոր բողոքիլ ու ծաղկիլ ըսկսելը : Բայց ո՛վ Տէր՝ երեսանկեալ կ'աղաչեմ քեզի , ինայէ՛ ինձի . քու ողորմութիւններուդ համար՝ բիչ մըն ալ երկայնա-

միտ եզիր ինծի : Աարելի է քու շնորհօրդ դարձի զամ :
 Աարելի է որ՝ եթէ քու իմ վրաս ունեցած համբերու-
 թիւնդ քիչ մըն ալ երկարես , ես՝ երկիրը խափանողս ,
 քիչ մը պտուղ տամ : Առաջ . ժպ . 7 , 8 : Եւ թնգ
 քու արդէն իմ վրաս բանեցուցած երկար համբերութեանդ
 յիշատակութիւնը արգիլէ զես՝ քու վրադ և իմ հոգւոյս
 վրայ անփոյթ ըլլալ շարունակելէն : Ո՛վ Տէր , աս օ-
 րէն՝ աս ժամէն՝ աս բոպէէն սկսելով կարող ըլլամ մինչև
 հիմա բոլոր կարդացածներովս և բոլոր լսածներովս իմ
 սրտիս վրայ եղած տպաւորութիւններէն շատ աւելի երկա-
 րատև տպաւորութիւններ ստանալ աստուածպաշտու-
 թեան վրայ . Ամէն :

ԳՂՈՒԻՍ Գ

Մեղաւորը կ'ամբաստանուի ու իր Դաւադարտութիւնը իր
յայտնուի :

1 . Որովհետեւ իմ ջանքս քեզ ճշմարիտ աստուծապաշտութեան առաջնորդել է , և ոչ թէ միայն անոր մէկ արտաքին ձևին . վասն որոյ աղէկ գիտեմ որ ասիկա չկրնար ըլլալ առանց քու վիճակիդ դէշութեանը համար խորին ամօթ և նախաախնք զգալուդ : Ուստի սեպեցով՝ թէ ասիկէ առաջ կարդացածներուդ վրայ եղած աստուածային օրհնութիւնովը համոզուեցար մտածութիւն ընել աստուծապաշտութեան վրայ , կրցածիս չափ ազգու կերպով պիտի ջանամ հիմա նախ և առաջ սրտանց զգացընել քեզի որ Մտուծոյ առջևը յանցաւոր ես : Այսն զի աղէկ գիտեմ որ եթէ աս բանին չհամոզուիս ու անիկայ չզգաս , աւետարանական շնորհաց քեզի տալիք բոլոր սնունդները պիտի արհամարհես , և քու հոգիդ անտարակոյս՝ իր կենդանութեանը համար սահմանուած ամենալաւ միջոցներուն մէջ ալ պիտի կորսուի : Եւստ աղէկ համոզուած եմ՝ որ հազարաւոր մարդիկ կ'ապրին ու կը մեռնին մեղսալից ընթացքի մէջ , առանց մեղաւոր ըլլալնուն վրայ զգացում մը ունենալու սրտերնուն մէջ թէպէտ և առ ամօթոյ չեն կրնար շխտատուանիլ խօսքով : Եւ ուստի ներէ՛ ինձի որ հաւատարմութեամբ խօսիմ քեզի , թէպէտ կարելի է որ խստութեամբ խօսող երևնամ . վասն զի հոգւոյդ փրկութեանը վերաբերեալ խօսակցութեան մէջ մարդահամարութիւնը պէտք չէ որ մեր գրուցուածքին իջնէ :

2 . Այսն որոյ ներէ՛ ինձի՝ ս'ի մեղաւոր , որ ինքզինքս Մտուծոյ փաստարանը համարիմ , անոր կողմանէ քեզի դէմ խօսող մը սեպեցով և քեզի յայտնապէս զրուցելով՝ որ դուն երկնի և երկրի Գերագոյն Իշխանին դէմ ապրտամբ ու դաւաճան ես : Որչափ ալ մեծ ու երևելի ըլլաս մարդոց մէջ և ծնած խիստ ազնուական ցեղէ , ու քու ամթողութազաւորներուն հետ՝ և քու բազուկը կենդա-

նեաց երկրին մէջ զորաւորներուն ահարկութիւն (Եզեհ . ԼԷ . 27) ըլլայ , տակաւին հարկ է քեզի բսել և յայտնասպէս բսել , թէ թագաւորաց թագաւորին օրէնքները կտարեցիր , և անոնք կտարելով ինքզինքդ անոր արդար դատապարտութեանը տակ ձգեցիր :

3 . Խղճմտանքդ կ'ըսէ քեզի թէ դուն Մատուծոյ հպատակ ծնար , անոր օրինացը անժխտելի պարտաւորութիւններուն տակը ծնար : Այն զի շատ յայտնի է թէ քու բանական բնութեանդ կազմութիւնը , որ քեզ Մատուծմէ օրէնք ընդունելու ընդունակ կ'ընէ , քեզ պարտաւորութեան տակ կը ձգէ ան օրէնքներուն ֆազանդելու : Եւ նոյնչափ յայտնի ու ստոյգ է թէ աս օրէնքին՝ պետք եղածին պէս չ'ֆազանդեցար . այն՝ բազմութիւ ու դէշ կերպերով եղծեցիր անիկայ :

4 . Ար համարձակի՞ս աս բանը ուրանալու : Ար համարձակի՞ս Մտնող եմ՝ բսելու : Յիշէ՛ որ անմեղութիւնը կտտարեալ ըլլալու է . այն՝ արդարութիւնն ալ կտտարեալ ըլլալու է . եթէ ոչ ամենեւին օգուտ մը չընէր քեզի , այլ միայն կը ցուցնէ թէ՛ թէպէտ դատապարտեալ մեղաւոր ես , բայց ուրիշներուն չափ յանցաւոր չես , և դժոխքին մէջ անոնց չափ տար տեղ պիտի չերթաս : Մտիկայ քննելէն ետքը ինքզինքդ անմեղ պիտի հանես : Խղճմտանքիդ յիշատակարանները քննէ , վասն զի Մատուծ կը քննէ զանոնք . սրտանց հարցնւր անոր՝ թէ կեանքիդ մէջ բնաւ Մատուծոյ դէմ չ'մեղանչեցի՞ր : Սողմոն իր ժամանակին համար ըսաւ թէ « Երկրի վրայ արդար մարդ չկայ՝ որ աղէկութիւն ընէ ու մեղք չգործէ » : Ժող . է . 20 : Եւ Պողոս առաքեալ կ'ըսէ՝ թէ « Մտնորը մեղք գործեցին , և Մատուծոյ փառքէն պակասած են » , Հռոմ . ք . 23 , թէ « Հրեաները և Հեթանոսները՝ (որ բոլոր մարդկային սեռը բսել է) ամենքը մեղաց տակ են » : Հռոմ . ք . 9 : Եւ կրնաս մեկ պատճառ մը երեւակայել հաւատալու թէ՛ աշխարհս անոնց օրերէն հետէ այնքան աղէկցած է , որ զանուրիս անանկներ որ կրնան բսել թէ Մենք անոնց պէս չենք . կամ թէ դուն կը համարձակի՞ս երկնի ամենազէտ Խշտանին դէմը ելլել ու բսել թէ Ես անանկ չեմ :

5. Առաջ ալ ըսածնուս պէս՝ սեպելով թէ դուն ազատ ես ան ամէն շար գործքերէն, որոնք այնքան վնասակար են մարդկային ընկերութեան՝ որ ընդհանրապէս մարդկային օրինօք ալ կը պատուհասեն զանոնք, կրնան ըսել թէ փոքր պարագաներու մէջ աստուածպաշտութեան՝ ժուժկալութեան՝ և գթութեան կանոնները եղծած չես : Անց անանկ քեզ աղէկ ճանչող մէկը՝ որ կարող ըլլայ վկայել թէ ծուռ բան մը խօսած կամ ըրած չես : Ամբ թէ որ ուրիշները չկրնան համոզել քեզ, բուն խիլ քու սիրտդ չը վկայեր . չըցուցըներ քեզի թէ հպարտ՝ բարկացող՝ հեշտասէր՝ աշխարհս ու անոր վայելչութիւնները շափազանց սիրող ես, տրտնջող՝ կամ դէթ Աստուծոյ դէմ զաղաուկ ներսխիլէդ զանգատող նախախնամութեան վըշտացուցիչ հարուածներուն առնէր, ժամանակիդ մեծ մասը պարապ տեղը վասնող . Աստուծոյ առատութեան պարզեաները ունայն տեղը գործածող, և երբեմն ալ գէշ նպատակներու համար, քու աղօթքներովդ զանխկայ ծաղրարանող, « քու բերանովք անոր մտննալով, չըթթունքներովք անխկայ պատուելով, քանի որ քու սիրտդ անկէ հեռու է » : Առայ . իմ . 13 : Խղճնոսանք շամբաստաներ քեզ թէ օրէնքին գոնէ մէկ պատուիրանքը կտարած ես : Ալ մէկ հատը կտորելով Սուրբ Գրքին վճիռովք « բոլոր օրէնքին պարտական կ'ըլլաս », Առ . թ . 10, և այնքան անկարող կ'ըլլաս արդարանալ Աստուծոյ առջևը քու որ և իցէ աստիճան նազանդութիւնովք՝ որքան եթէ բիւրաւոր յանցանք գործած ըլլայիր : Եւ այց իրօք բիւրաւոր յանցանքներէ ալ աւելի են քու յանցանքներդ : Արբոր մտածես ոչ միայն ըրած գէշ գործերդ, այլ և զանց ըրած բարի գործերդ՝ բոլոր ան պատահութիւնները « երբոր ձեռքէդ աղէկութիւն ընել կու գար ու չըրիր », Առ . գ . 27, ամէն աստուածային պաշտամունք որ զանց ըրիր՝ մանաւանդ 'ի ծածուկ՝ ամէն անզգայ անհոգութիւն որ ցուցուցիր Աստուծոյ պատուոյն և ընկերներուդ աշխարհային ու յախտնական երջանկութեանը վըրայ . սա ամէնը՝ կ'ըսեմ, երբոր մէկտեղ բերելու ըլլանք, թիւր հաշուի սահմանէն շատ պիտի անցնի և քեզի ազաղակել պիտի տայ թէ « Անօրէնութիւններս գլխուս

մազէն շատ են" : Ստեղ . խ . 12 : Այնպիսի լուսով մը պիտի երևնան առջևդ , որ քու սիրտդ՝ վրադ անթիւ յանցանքներ պիտի ձգէ . ալ որքան ևս առաւել "Աստուած , որ քու սրտէդ մեծ է՝ և ամէն բան զիտէ" : Իմ ձեռք . Գ . 20 :

6 . Եւ բա՛կ , ս'ի մեղաւոր , փո՛քր բան կը համարիս երկինքի Աստուծոյն իշխանութիւնը բանի տեղ չդնելու և անոր օրէնքը եղծելու յանդգնիլը , թէ՛ և սոսկ անհոգութիւնով ու անմտադրութիւնով ըլլայ : Ուրեմն յանցանքը որքան ևս առաւել ծանր պիտի ըլլայ , երբոր շատ անգամ զիտութեամբ ու կամայ ըրած ես : "Կերէ՛ ինձի որ սա ծանրակշիռ հարցումը ընեմ . և կ'աղաչեմ դուն քու հոգիիդ հարցուր անիկայ , թէ՛ "Ղուծ ս'ի նախատեսցիր ու հայհոյեցիր , ու որո՞ւն վրայ ձայնդ վերցուցիր" : Գ թառ . ԺԺ . 22 : Որո՞ւն օրէնքը ոտքի տակ առնելու ես ելեր՝ ս'ի մեղաւոր . և որո՞ւն բարեկամութիւնը և որո՞ւն թշնամութիւնը ատ կերպով անդոսնելու կը յանդրդնիս : Բեզի պէս մե՛րդ մըն է ան՝ որ նախատեսցիր : Սոսկ աշխարհային թագաւոր մըն է — անանկ մէկը՝ "որ մարմինը կը սպաննէ , ու անկէ ետեւ տելի բան մը ընելու կարողութիւն չունի" : Ղուս . ԺԻ . 4 :

Այո՛ , մեղաւոր . չես համարձակիր անանկ վարուելու նկատմամբ աշխարհային թագաւորի մը ինչպէս վարուեցար նկատմամբ "Մեղծ և Մեղեւոյթ Յախոննական թագաւորին" : Իմ ՏԻ . Իմ . 17 : Ինչ զին ալ որ տային քեզի՝ երկրաւոր ինքնակալի մը հետ ան ընթացքով ամենեւին պիտի չվարուէիր ինչպէս որ երկնաւոր Աստուծոյ հետ վարուեցար , որուն առջևը քերովքներն ու սերովքները շարունակ երկրպագութիւն կ'ընեն : Արբոր անոր կամքը բոլոր երկնային լէզէններուն կը յայտնուի , անոնց մէջ ամենեւին մէկ հակառակող կամ զանգատող , կոխ ընող կամ տրանջող խօսք մը չլսուիր : Իսկ դուն ս'ի ես , ս'ի թշուառ մեղաւոր , դուն ս'ի ես , որ կը հակառակիս անոր . որ կը հակառակիս ու կը բարկացընես անհուն զօրութիւն ունեցող ան ահաւոր Աստուածը , որ իր միահեծան կամքին միանգամ լոկ կամենալովը կընայ քեզ մէկ բոպէին մէջ ամէն ունեցածներէդ

զրկել, ամէն յոյսէ կտրել՝ կորսնցընել ու բնաջինջ ընել քեզ 'ի գոյութենէ եթէ ուզէ, կամ ան որ միայն վեր չարագոյն է, ամենազատն ու յախտնական ցաւերու մատնել քեզ : Իայց և այնպէս աս Մատուածն է որ դուն բարկացուցիր ու երեսին դէմ նախատեցիր՝ անոր առջև անոր յայտնի օրէնքները եղծելու ելլելով : Աս է ան Մատուածը՝ որուն առջև կը կենաս իբր դատապարտեալ չարագործ մը . դատապարտեալ ոչ միայն մէկ երկու մասնաւոր յանցանքներով, այլ հազարաւոր և բիւրաւոր յանցանքներով, շարունակ ապստամբ և զայրացուցիչ ընթացքով մը, որուն մէջ քիչ կամ շատ յարատեւած ես ծնած ատենէդ հետէ անանկ մասնաւոր պարագաներով՝ որ դրեթէ ամէն աստիճանաւ կը ծանրացընեն յանցանքը, Ստածէ՛ ատնց վրայ, և ուրացի՛ր աս ամբաստանութիւնը՝ թէ որ կրնաս :

7 . Աթէ գիտութիւնը յանցանքը կը մեծցընէ, քու յանցանքդ յոյժ մեծցած է՝ ո՛վ մեղաւոր : Այն զի դուն Քրիստոնէից մէջ ծնած ես . և Մատուած «ի օրէնքին մեծ բաները քեզի գրեց, սակայն դուն օտար բանի մը պէս սեպեցիր անոնք» : Ո՛ւ . Ը . 12 : Դուն բարին ընելը գիտցար՝ ու չբրիր անիկայ, Յով . Դ . 17, վասն որոյ անիկայ զանց ընելը ճշմարտապէս քեզի մեղք կը սեպուի : «Միթէ չգիտցամ, կամ չտեսնեմ» : Կոթ . Խ . 28 : Չէ՞ որ պղտիկուց սորվեցուցին քեզի Մատուծոյ կամքը : Այո՛, չէ՞ որ քու պարտաւորութիւններդ շատ անգամ այնքան պարզ էին, որ մինչև անգամ բնաւ առանց սորվելու՝ քու բանականութիւնդ կրնար մակարերել զանոնք : Այո՛ չէ՞ որ քեզի սորվեցուցին ալ թէ աննազանդութեան հետևութիւնները գէշ են, անոնցմէ փախչիս : Չէ՞ որ «գիտէիր Մատուծոյ դատաստանը, թէ անոնք որ ասանկ բաներ կ'ընեն՝ մահուան արժանի են» : Իս . սակայն, թերևս դուն «չէ՛ թէ միայն ան բաները բրած ես, այլ ան ընողներուն հաւանութիւն ալ տուած ես», Հոմով . Կ . 32, քու ամենէն մտերիմ բարեկամներդ ու ընկերներդ բրած ես անանկները, որ մէկզմէկու նայելով ու իբրար հրապուրելով ձեռքերնիդ անօրէնութիւններնուդ մէջ զօրացընէք :

8 . Մանաւանդ՝ եթէ աստուածային սէրն ու ողորմութիւնը քու գործած մեղքդ կը ծանրացնեն , քու մեղքերդ յոյժ ծանրացած են՝ ձ՛վ մեղաւոր : Պարտական չե՞ս խոստովանելու՝ ձ՛վ յիմար և անխելք արարած : Չե՞ որ քեզ անիկայ « իր զաւակին պէս մեծցուց ու բարձրացուց , ու դուն անոր դէմ ապստամբեցար » : Առաջ . Թ . 2 : Չե՞ որ « քեզ մօրդ . արդանդէն հանողը Աստուած է » : Սող . Իբ . 9 : Չե՞ որ անիկայ հսկեց քու վրադ քու մանկութեանդ օրերը , և բխբաւոր վտանգներէ պաշտպանեց քեզ , որոնք յոյժ խնամածու ծնողքը կամ դայեակը չէր կրնար տեսնել կամ արդիւնէ : Չե՞ որ անիկայ տուաւ քեզի քու բանական կարողութիւններդ , և չե՞ որ ան կարողութիւնները մշակելու ամենայն պատեհութիւնը անկէ ես առած : Չե՞ որ անիկայ ամէն օր քու կարօտութիւններդ լեցուցած է անդուլ առատութեամբ , և ասիկայ կարգացողներուն շատերուն ալ՝ կենաց ան ամէն հարկաւոր պիտոյքներէն 'ի զատ փափկութիւններ ալ տուած է : Չե՞ որ « քու աղաղակդ լսած է , քու վրադ փորձանք եկած ատենը » . ՀՅԹ . Իե . 9 . և շատ անգամ ալ օգնութեան հասած է քեզի , երբոր նեղութեան ատենդ օգնութեան կանչած ես անիկայ : Չե՞ որ քեզ կործանմանէ ազատած է , երբոր կործանումը վրադ հասած է քեզ կըլելու . և հիւանդութիւններդ բժշկած է , որ ատեն քովդ եղողներուն ամենուն ալ երեցած է թէ՛ « քու օրերուդ կէսին մէջը պիտի վերնաս » : Սող . Ծբ . 24 : Ամ թէ որ ասանկ ալ եղած չէ , խոստովանելու չե՞ս թէ այրան տարի քու վայելած աս երկար և անընդհատ առողջութիւնդ նոյնչափ շնորհակալութեան առարկայ մըն է : Չորս՝ դիդ նայէ բոլոր ունեցածներուդ վրայ . և ըսէ , աշխարհիս մէջ ունեցածներէդ ո՞րը անոր բարութիւնը չէ պարզեողը ու մինչև հիմա անիկայ շարունակողը : Աս մենուն վրայ աւելլուր նաև անոր՝ իր կամքը մարդասիրաբար քեզի յայտնելը , քեզի իմաստուն միտք և բարի բնաւորութիւն մը տալու համար ըրած քաղցր յորդորանքները , և անոր Աշխտարանին յայտնութիւններն ու հրաւերները , որոնք լսած ու արհամարհած ես . և վերջը ըսէ՛ թէ՛ արդեօք քու ապստամբութիւնդ ծանրացած չե՞ քու

անարդ աստերախտութեամբդ, և թէ՛ արդեօք աս ծանրանալը քիչ կրնայ սեպուիլ :

9. Վարձեալ . եթէ մեղքը խղճմտանքին դէմ գործելով յանցանքը կը մեծնայ՝ քու յանցանքներդ շատ մեծ են՝ ո՛վ մեղաւոր : Վննէ՛ միանգամ անոր յիշատակարանները, և ապա հերքէ՛ աս բանին ասանկ ըլլալը՝ թէ որ կրնաս : «Մարդուն ներսիդին հոգի կայ, ու Վճինակարողին շունչը անոնց հանձար կու տայ՝» (Հո՞ . ԼԷ . 8 . և աս հանձարը կը գործէ, և անոր գործքերէն անանջատելի է սա ներքին գիտակցութիւնը թէ՛ զինքը Ստեղծողին ու Պահպանողին պատասխանատու է : Վիւրին է մարդոց խրատներուն դէմ խօսիլն ու բաներուն խաբերայ երեւոյթ տալը անոնց առջևը . բայց շատ անգամ սիրտը կը դատապարտէ, երբոր բերանը կ'արդարացընէ : Շատ անգամ ասանկ եղած չէ՞ քեզի : Խղճմտանքդ քու անցեալ վարուցդ դէմ յանդիմանութիւն ըրած չէ՞, և աս յանդիմանութիւններն ալ կսկծեցուցիչ եղած չէ՞ն : Խղճմտանքդ այնքան թմրած՝ այնքան «խանձուած» է որ, անոր դէմ ըրած բռնութիւններուդ բնաւ մէկուն համար ձայն հանած չըլլայ : Ենոր դէմ ըրած բաներուդ մահաբեր հետեւութիւններէն քեզ բնաւ զգուշացուցած չէ՞ : Ես զգուշութիւնները արդեամբ Վստուծոյ ձայնն են . անոնք անոր՝ քու կուրծքիդ մէջ դրած փոխանորդին ձեռքովը տուած խրատներն են : Եւ երբոր քու շար գործքերուդ համար իր վճիռը կտրէ քու վրայ յախտեանական մահուամբ, պիտի լսես դարձեալ ան ձայնին քեզի դէմ խօսիլը՝ առջինէն առաւել բարձրաձայն և աւելի դառնութեամբ, և անոր կշտամբանքովը պիտի տանջուիս յախտեանս, ժամանակին՝ անոր խրատներուն մտիկ չընելուդ համար :

10. Աերէ՛ որ յաւելում դարձեալ թէ՛ եթէ Վստուծոյ քու մտքիդ վրայ իր Հոգիովը շարժեալէն ետքը գործած մեղքդ մեծ կ'ըլլայ, անշուշտ քու մեղքդ աս կերպովն ալ մեծցած է : Սովսխական մութ ու անկատար անտեսութեանը տակը Հոգին հրէից ազգեցութիւն կ'ընէր, եթէ ո՛չ Ստեփաննոս չէր կրնար անոնց ըսել թէ՛ «Վճն ատեն անոր հակառակ կը կենար» : Գործ . է . 51 : Ենշուշտ

Հիմն առաւել իրաւամբ կրնանք մակարերել թէ՛ Աւետարանին տակն եղած մեղաորներուն ազգեցութիւն կ'ընէ : Այլ քեզ արթնցընող տրտաքին պարագայ մը կամ քովդ աստուածապաշտ ուսուցիչ մը շունեցած ատենդ անգամ՝ դուն բնաւ աս տեսակ բանի փորձառու չեղամք : Արծնքի վրայ խորհիլ տուող՝ անմիջապէս անոր վրայ խորհրդածութեան ստիպող՝ քաղցրութեամբ անոր վրայ փորձ ընելու հրաւիրող՝ և աս անզգայ զանցառութեանդ վրայ քեզ ողբալու խրատող բնաւ մէկ ներքին ազդում մը զգացած չե՞ս քու մտացդ մէջ : Ո՛վ մեղաւոր , ինչո՞ւ համար աս օրհնեալ շարժումներուն ականջ չկատեսցիր : Ինչո՞ւ համար հոգւոյդ առազաստը չպարզեցիր ան երկնային՝ և յաջողակ սիւզը ընդունելու համար : Այլ անհոգութեամբ զանց ըրիր անիկայ , ու աս բարերարական ազգեցութիւնները ոտքի տակ առիր : Աւրեմն հրքան արդարացի պիտի ըլլար Աստուածային բարկութեան սա վճիռը քեզի տըրուելը թէ , « Իմ Հոգիս միշտ մարդու վրայ պիտի չմընայ » : Օճնք . 7 . 3 : Այլ արդարեւ ո՞վ գիտէ թէ արդէն ալ տրուած չէ : Այլ թէ զաղտնի մտայուզութիւն մը՝ խղճի խայթ մը՝ կամ արթնութիւն մը չես զգար՝ երբոր ասանկ յանդիմանութիւններ կը կարգաս , շատ կասկածելու տեղի կայ՝ թէ արդէն անանկ եղած է :

11 . 'Իարձեալ' մեղաց մէկ ուրիշ ծանրութիւնն ալ Աստուծոյ հետ ըրած ուխտերդ կտարելը է : Սիրտդ մինչև անգամ տղայութենէ՞դ այնքան տարօրինակ աստիճանի մը կարծրացած է որ բնաւ չես աղաղակած Աստուծոյ՝ մէկ վրտանդի մը և նեղութեան մը մէջ : Այլ բնաւ աս աղաղակներուն ատենը ուխտեր չըրի՞ր : Ինչաւ չխոստացամ՝ որ եթէ Աստուած լսէ և օգնէ քեզի ան նեղութեանդ ժամուն մէջ , պիտի ձգես մեղքերդ ու ծառայես անոր՝ որքան որ ազրիս : Ընիկայ լսեց ու օգնեց քեզի՝ եթէ ոչ Հիմն չէիր կրնար կարգալ ասոնք , և ասանկ օգնութեամբ քեզ ազատելով ուխտերուդ տակը քեզ կապեց . և ուստի անոնք կտարելով գործած յանցանքդ անոր առջև կը կենայ , թէպէտ և դուն անոնք մոռնալու չափ անզգայ եղած ես : Ընիկայ բան մը չմոռնար , բան մը զանց չընեք . և օր պիտի գայ՝ որ ատեն հաշիւը քու առջև ալ պիտի դրուի :

12 • Եւ արդ՝ ո՛վ մեղաւոր , աղէկ մտածէ թէ ի՞նչ պատասխան պիտի տաս աս ամէն բաներուն համար : Պատրաստէ՛ ջատագովութիւնդ • կոչէ՛ վկաներդ • բողոք ըրէ անկէ , որն որ բարկացուցիր , անկէ առաւել գերագոյն դատաւորի մը՝ թէ որ անանկ մէկը կայ : Եւ ա՛յն ան ջատագովութիւններդ այնքան տկար և ունայն են՝ որ քեզի պէս որդերէն մէկը անգամ կրնայ դիւրաւ ՚ի դերև հանել և խայտառակել զանոնք , ինչպէս ես քիչ մը ետքը պիտի ցուցնեմ՝ քեզի : Իայց քու կանխագուշակ խղճմը տանքդ արդէն գիտէ բանին ելքը : Ղուն կը ճանչնաս յանցանքդ՝ կը ճանչնաս քու խիստ ծանրացած յանցանքներդ : Ղուն “ քու սիրտդ շտնարհեցուցիր , հապա երկնից Տէրոջը դէմ՝ քեզ բարձրացուցիր ” , Ղան . Ե . 22 , 23 , և “ քու դատաստանդ անոր երեսէն պիտի ելլէ ” : Սաղ . ԺԷ . 2 : Ղուն անոր յայտնի օրէնքները կտորեցիր • անոր անթիւ ողորմութիւնները արհամարհեցիր ու չարաչար գործածեցիր • խղճմտանքիդ՝ իր քու հոգւոյդ մէջ դրած փոխանորդին դէմ կեցար • անոր Հոգիին դէմ դրիր ու անիկայ տրտմեցուցիր • անիկայ քու բոլոր կեղծ Ֆազանդութիւններովդ ծաղր ըրիր • և մէկ խօսքով՝ և ան ալ անոր խօսքովը , “ քու կարողութեանդ չափ չարութիւն գործեցիր ” : Երեմ . Գ . 5 : Ենտարակոյս հազարաւոր անձինք կան արդէն դժոխքին մէջ՝ որոնց յանցանքը բնաւ քուկինիդ հաւասարած չէ • և զարմանալի է որ Եստուած ինպէր է քեզի քու վիճակիդ աս նկարագրութիւնը հիմա կարդալու՝ ու անոր վրայ կայնելու մտմտալու : Ես պիտի ծանրագին վայրկեան մը պարապը մի՛ անցուներ • այլ մտադրութեամբ և կրցածիդ չափ խոնարհութեամբ աս քու ողբալի և ահաւոր վիճակիդ յարմար խորհրդածութիւններ ըրէ :

Իր միջէրուան վրայ խորին նուազումն սրտացած միզաւորի իջ խոսքովանոթիւնը :

Ո՛վ Վերագոյն Եստուած , որ դքեզ վշտացուցիր • դճն ամենատես և Եմենակարող Ղատաւոր • ի՞նչ կրնամ ըսել աս յանցանքներուս համար՝ որ իմ վրաս կը դնեն : Արնամ՛ ըսել թէ զրպարտութիւն է ըրածնին , և կրնամ՛

ճատագործութեան ելլել քու առջևդ : Չեմ համարձա-
կիր աս բանը ընելու , վասն զի « իմ յիմարութիւնս
դուն գիտես , ու յանցանքներս քեզմէ ծածկուած չեն » :
Սող . կթ . 5 : Իողմնուանքս ինծի կ'ըսէ թէ՛ յանցանք-
ներս ուրանալը միայն թէ՛ կը շատցնէ զանոնք , և քու
արդար բարկութեանդ կրակին նոր ճարակ կը յաւելու :
« (ձ)է որ անձս արդարացնեմ , իմ բերանս զիս կը դա-
տապարտէ . թէ որ զիս կատարեալ երեցընեմ , զիս յան-
ցաւոր կը հանէ » . Հոբ . թ . 20 . « Ասան զի անթիւ-
շարիքներ իս պատեցին . անօրէնութիւններս ինծի հա-
սան , ու ես չեմ կրնար տեսնել » . անոնք՝ ինչպէս որ քու
անունովէ ինծի զրուցուած է , « զլիուս մագէն շատ են .
ու սիրտս իս թողուց » : Սող . իս . 12 : Իմ յան-
ցանքներս այնքան շատ են՝ որ ուրիշ մը չհամարձակիր այն-
քան յանցաւոր ամբաստանել զիս : Սիրտս ամէն ուրիշ
դատախոսզէ աւելի կը խօսի : Եւ դուն սվ Տէր , իմ
սրտէս շատ մեծ ես , և ամէն բան գիտես : Ին Հոբ .
դ . 20 :

Ի՞նչ էր իմ կեանքս . եթէ ոչ՝ շարունակ քեզի դէմ
ապստամբութիւն : Ես կամ ան մասնաւոր գործքս չէ
միայն՝ որ վրան ողբալու եմ : Գործքերուս , սկզբունք-
ներուս , կարծիքներուս և դիտումներուս մէջ բնաւ մէկ
ուղիղ բան մը չկար : Բոլոր հոգիս խանգարած է :
Բոլոր խորհուրդներս՝ բոլոր կիրքերս՝ բոլոր բաղձանք-
ներս՝ և բոլոր հետամտութիւններս թշուառարար քեզմէ
օտարացած են : Քեզ ատողի մը պէս վարուեցայ , որ
բոլոր էակներէն անհունապէս առաւել սիրելին ես . իբր
թէ կը ջանայի որ յետին աստիճան փորձեմ քեզ և քու
զարմանալի համբերութիւնդ հատցընեմ : Գործքերս
չար են , սակայն խօսքերս անոնցմէ առաւել շար են .
բայց սվ Ամենօրէնեալ Ետուած , սիրտս աս երկուքէն
ալ որքան աւելի պապականեալ է : Ենոր մէջ ի՞նչ անբա-
պառ աղբիւր մը կայ մեզաց : Ի՞նչական ապականութեան
աղբիւր մը , որ իր դասն ջրանցքները իմ մանկութեանս
օրերուն հետ խառնեց . և որն որ՝ աւաղ , գործքով կամ
խօսքով ցուցընելու կարելութենէն աւելի կը հօսէ մինչև
ցայսօր : Սասնաւորապէս յիշած օրերս կը տեսնեմ որ

ասանկ էր . բայց ո՛հ , քանի՛ քանի ամիսներ ու տարիներ մտայած եմ , որոնց համար միայն ընդհանուր դիտողութիւն մը ընկելով՝ դիտեմ թէ անոնք ալ յիշած օրերուս շատ նման են , միայն թէ օրէ օր աւելի դէշի կ'երթայի , և քու համբերութիւնդ առաւել ևս կը զայրացնէի , թէպէտ և անիկայ նորանոր ու աւելի ևս սքանչելի եղած էր իմ վրաս :

Այս ճրքան կը սքանչանամ որ քու համբերութիւնդ տակաւին կը շարունակուի իմ վրաս : Պատճառը աս է որ « դուն Աստուած ես , և չէ՛ թէ մարդ » : Ո՛վ . ԺԿ . 9 : Աթէ մէկը զիս այսպէս վշտացնէր , որ մեղաւից որդ մըն եմ , չէի կրնար դիմանալ : Աթէ ես թագաւոր մըն ալ ըլլայի , շատոնցմէ հետէ արդարութեան վճիռը պիտի կտրէի ան ապստամբին վրայ , որուն յանցանքները միայն մէկ հեռու նմանութիւն մը կրնան ունենալ իմինիս : Աթէ ծնողք մը ըլլայի , շատոնցմէ հետէ զուրս պիտի ձգէի ան ապերախտ որդին , եթէ բոլոր իմ կեանքիս մէջ իմ քեզի դէմ ըրածիս պէս ընէր ինծի , ո՛վ իմ հոգւոյս շայրը : Ինչպէս սիրոյ բոցը պիտի մարէր , և անոր երեսը տեսնել ու անունը անգամ լսելը զգուելի պիտի ըլլար ինծի : Ուրեմն ինչո՞ւ համար՝ ո՛վ Տէր , ևս « քու երեսէդ չեմ ձգուիր » : Աբե՛մ . ԺԷ . 3 : Ինչո՞ւ համար կործանման անգառնալի վճռոյ մը տակը չեմ իյնար : Իմ ապրիլս քու երկայնմտութեանդ կ'ընծայեմ : Բայց ո՛հ , եթէ տակաւին մէկ ճամբայ մը կայ ազատութեան , եթէ տակաւին մէկ յոյս մը կայ ինծի պէս յանցաւոր արարածի մը , թո՛ղ քու Աւետարանովդ ու քու շնորհօրդ բացուի իմ առջև : Այս եթէ աւելի սարսափ խոնարհութիւն՝ կամ երկիւղ հարկաւոր է իմ ապահովութեանս ու փրկութեանս համար , թո՛ղ իմ դէմն ելլեն ու կրեմ անոնք : Ո՛րաւորէ՛ իմ սիրտս՝ ո՛վ Տէր , միայն թէ ետքը բժշկես անիկայ . և կտրէ , միայն թէ , հաճիս անիկայ պատելու : Ո՛վ . Գ . 1 :

Գ Լ Ո Ւ Խ Ե

Մեղաւորին շնչին ջարագութեամբ անկերը պարտաւ կ'իջէն :

1 • 'Կախընթաց գլուխը մեղաւորը յոյժ ահուդողի ու յոյժ ողորմելի պարագաներու մէջ ձգեց • Եստուծոյ ատեալնին առջևը դատապարտուած յանցաւոր մը , կատարեալ անմեղ ըլլալու՝ և կատարեալ ֆազանդութիւն ցուցուցած ըլլալու ամէն կեղծիքներէ զրկուած , և հետեւապէս սուրբ օրէնքի մը դատապարտութեանը ենթակայ , այնպիսի օրէնքի մը՝ որ ամենեւին մէկ յանցանքի մը ներում չկրնար բնել , ո՛չ ամէնափոքրին անգամ չկրնար • այլ ամէն անֆազանդութեան զործքին դէմ մահ ու անէծք՝ կը սպառնայ , ուրեմն ճիշտն ևս առաւել ապստամբութեան ան անթիւ ու մեծ գործքերուն դէմ , որոնց համար՝ ո՛վ մեղաւոր , խղճմտանքդ քեզ դատապարտած է Եստուծոյ առջևը : Ար յուսամ թէ ընթերցողներէն ոմանք ճշմարտասիրութեամբ քննելով բանը՝ պիտի համոզուին , և ջատագովութիւն բնել պիտի չմտնտան • վասն զի վստահ եմ որ ասանկ ապերջանիկ վիճակի մը մէջ Եստուծոյ ատեանին առջևը խոնարհութեամբ ինքզինքը յանցաւոր խոստովանելէն վայելուչ և անկէ խելացի բան մը չկայ բնելու : Այ սակայն մեղսալից ու ապականեալ սրտի մը խաբերայութիւնն ու ինքզինքին շողջորթութիւնը զիտեմ : Վիտեմ անոր ինչ ջատագովութիւններ բնելը • և մէկ ապաստանարանէ մը վճնտուած ժամանակը ինչպէս ուրիշի մը դիմելը , ինքզինքը համոզանաց դէմ պատասպարելու • և ո՛չ ժխայն ուրիշը , այլ ինքզինքն ալ համոզելու՝ որ « եթէ մէկ քանի բաներու մէջ մեղադրելի եղած ալ է , տակաւին ցուցուածին չափ յանցաւոր չէ • դեռ կը գտնուին այնպիսի խորհրդածութիւններ որ իր կողմանէ կը ջատագովեն • որ եթէ զինքը չեն կրնար ալ արդարացընել , չափով մը կը թեթեւցընեն յանցանքը » : Արտքին մէկ ասանկ զաղտնի խորհիլը թէ և դեռ որոշ խոր-

Հուրդ մը եղած ալ չըլլայ, կը կոտորէ մեղքի ճանաչման ուժը և շատ անգամ կ'արգիլէ նոյն ճանաչումէն յառաջ գալիք ան ամօթ ու նախատինքի խորին զգացումը Մտուածոյ առջևը, որ մտեցող փրկութեան բարեգուշակ նշանն է: Աստի մասնաւոր կերպով քննենք աս խնդիրը, և աս բանին համար սա կարևոր հարցումը կ'ընեմ. Ի՞նչ ջատագոյութիւն ունիս յառաջ բերելիք ինքզինքիդ համար. ինչ՞ը Մտուածոյ դատապարտութեան վճիռը պիտի չկտրուի վրադ. և ինչ՞ը անոր անաչառ դատաստանին ձեռքը պիտի չիյնաս:

2. Իայց նախ և առաջ աս ըսելու եմ որ խնդիրը ան չէ՛ թէ Ի՞նչպէս պատասխան պիտի տաս ինծի, որ քեզի պէս տկար մեղաւից որդ մըն եմ, ու քիչ ատենէն ետքը քեզի հետ նոյն ատենանին առջևը պիտի կայնիմ. և «Տէրը ինծի տայ՝ որ ան օրը Տէրոջմէն ողորմութիւն գտնեմ» . ք Տի՛ . ւն . 18 . այլ ի՞նչ պատասխան պիտի տաս քու Դատաւորիդ: Ի՞նչ ջատագոյութիւն կրնաս ընել՝ եթէ հիմա իրօք անոր ատենանին առջևը ըլլաս, ուր որ ունայն խօսքեր աւելցրնենք ու դատարկ ջատագոյութիւններ շարելը մի միայն քու յանցանքդ ու անոր բարկութիւնը կ'աւելցրնէ: Անշուշտ անոր ներկայութեան խորհուրդը անգամ ան շնչին ջատագոյութիւններուն հազարը կ'ունայնացրնէ, որոնք երբեմն կը խաբեն ան «ցեղը՝ որ իր աչքին առջևը մարուր է» . թէպէտ «իւ աղտեղութենէն լուացուած չէ» . Եսո՛ւ . Է . 12 . կամ՝ քանի որ գիտեն իրենց աղտեղութիւնները, «սուտ խօսքերու կ'ապաւինին՝ որոնք չեն կրնար օգուտ մը ընել» . Աբել . Է . 8 . և «ջախաւ ջախած եղէդէ ցուպի կ'ապաւինին» : Ասոյ . Է . 6 :

3. Անշուշտ ան վիճակին մէջ ասանկ ջատագոյութիւն պիտի չընես թէ՛ «Աս աստուածպաշտ ծնողքէ սերեալ եմ» : Յիրաւի ատիկայ քեզի մէկ առանձնաշնորհութիւն մըն է. և վայ քեզի որ աս շնորհքը չարաշար գործածեր ես, և «քու հայրերուդ Տէր Մտուածը թողուցեր ես» : ք Մնոց . Է . 22 : Իսմայէլ անմիջապէս Արբազամէն՝ Մտուածոյ բարեկամէն սերեալ էր, և Ասա որդի էր Իսահակայ, որ խոստմունքին համեմատ ծնած էր. բայց և այնպէս՝ գիտես որ աս երկուքն ալ զրկուեցան ան

օրհնութենէն , որուն կը կարծէին թէ տեսակ մը ժառանգական իրաւունք ունին : Միտրդ կու գայ որ մեր Տէրը ոչ միայն մէկուն համար ըսաւ թէ « քայր Աբրահամ » կը կանչէր քանի որ « բոցին մէջը կը տանջուէր » , այլ յայտնասէս ըսաւ թէ թաղաւորութեան որդիներէն շատերը անկէ դուրս պիտի մնան . և անոնք՝ երբոր ուրիշները շատ հեռու տեղերէն գան ան թաղաւորութեանը մէջ թաղմուտ , իրենց՝ թշուառութեան մէջ տանջուող ընկերներէն պիտի որոշուին միայն իրենց աւելի բարձրաձայն լացողը ու « ակուաներուն աւելի սաստիկ կձոցընելով » : Մատթ . Ը • 11 , 12 :

4 • Ոչ ալ պիտի համարձակիս առ Հատագոյութիւնը ընել ան ատենը թէ՛ Արօնքին տեսական ու վերացեալ մասերուն քննութեանը վրայ միտք յորնեցուցած եմ : Այսն զի ասկէ ի՞նչ օգուտ կ'եղէ , դատապարտութիւնդ աւելցընելէն զատ : Արովհետեւ Աստուծոյ օրհնքը կտարեցիր , և որովհետեւ կրօնքին ամենէն ակներև ու յայտնի պարտաւորութիւններուն հակառակեցար , փասն որոյ անիկայ քննած ու անոր վրայ տրամաբանութիւն ըրած ըլլալդ մէկ պարագայ մըն է՝ որ քու յանցանքդ առաւել յանդուդն կ'ընէ : Ի՞նչ . կարծեցիր թէ կրօնքը մարդուս նրբամտութեանը լոկ առակայ մը ու անոր հետարբերութեանը մէկ զուարճութիւնն է : Մարդուս հասարակ զգացողութիւնը կը ցուցընէ թէ կրօնքը գործնական բան մըն է , ուստի որովհետեւ տրամաբանութիւն ըրած ես անոր վրայ , հարկաւ դատած ու իմացած ըլլալու ես անանկ ըլլալը . եթէ այսպէս է , ինչո՞ւ անոր համեմատ չգործեցիր : Գիտէիր անոր մասնաւոր ճիւղերը . և ինչո՞ւ ուրեմն անոնց ամէն մէկուն ականջ չկոխեցիր : Թէ որ կրնայիր ըսել թէ՛ Տղէտ էի ու միջոց չունէի իմանանալու , միայն ան պիտի ըլլար ամենէն ազէկ Հատագոյութիւնդ . այն , իրական տղխութիւնը՝ որ թէպէտ յանցանք է , դուքէ քու մեղքիդ քիչ մը թեթեւութիւն ըլլար : Բայց քանի որ բուն իսկ քու խոստովանութեամբդ « քու Տէրոջդ կամբը դիտցած ես , ու անիկայ 'ի գործ դրած լես » , դուն քեզի դէմ վկայութիւն կու տաս թէ արժանի ես « շատ ծեծ ուտելու » : Ղուկ . ԺԲ • 47 :

5 • 'Խարձեալ' ոչ ալ բաւական կ'ըլլայ ըսել թէ "Ես ուղիղ դադարաբար ունեի կրօնքին թէ՛ վարդապետութիւններուն և թէ՛ պատուէրներուն վրայ" : Աւտի անոր գործադրութիւնը ընելու դիւրութիւնդ ևս առաւել մեծ էր . բայց հասկընալն ու ուղիղ գործելը՝ բնաւ մի և նոյն բանին տեղը չանցնիր թէ Մատուծոյ և թէ մարդոց դատաստանին մէջ : "Իո՞ւն կը հաւատաս որ Մատուած մէկ է . աղէկ կ'ընես" , բայց "դեւերն ալ կը հաւատան՝ և կը սարսափին" : ՀՅԷ . ք . 19 : 'Բխտոսի' Մատուծոյ Որդին ու անոր Սուրբը ըլլալը խոստովանելու ալ աղէկ ըրեր ևս . բայց գիտես որ պիղծ հոգիներն ալ աս նոյն ուղղափառ խոստովանութիւնը ըրին . 'Եւ . ք . 34 , 42 . բայց և այնպէս "մշտնջենաւոր կապերով խաւարի մէջ պահուած են մեծ օրուան դատաստանին" : ՀՅԷ . 6 : Եւ սրտիդ մէջ վստահութիւն պիտի դնես այնպիսի բանի մը վրայ՝ որ դժօխքին հոգիներն ալ քեզի պէս կրնան յառաջ բերել :

6 • Բայց թերևս կը մտմտաս սա ջատագովութիւնը ընել թէ՛ կրօնքի մէջ իրօք մէկ բան մը ըրած ևս : Ո՛ր հաւատքը ու պաշտամունքը ամենաողջամիտ և ամենամաքուր ըլլալը դատելով ան հաւատքն ու պաշտամունքը ունեցող ընկերութիւններուն մէջ մտար , և անոնց մէջ ինքզինքդ նշանաւոր ըրիր քու պաշտամանց գտնուելու ճշգրութիւնովդ , անոնց փաստը յառաջ տանելու համար ունեցած նախանձովդ , և ան եռանդովը՝ որով անոնց սկզբունքներուն ու սովորութիւններուն համար կը վիճէիր : Ո՛վ մեղաւոր , շատ կը վախնամ որ կրօնքին պարագաներուն վրայ ունեցած սա նախանձը յաւելտ պատասխանատուութիւնդ կը մեծցընէ՝ քան թէ թեթեւութիւն մը կ'ըլլայ : Ըն որ քու սիրտդ կը քննէ , գիտէ ան նախանձին ուրիշ ծագիլն ու մինչև ուր հասնիլը : Գուցէ անիկայ կը տեսնէ որ բոլորովին կեղծաւորութիւն է ան , մէկ խարբբայ քող մը՝ որուն տակը աս աշխարհիս վրայ ունեցած անարգ խորհուրդներդ յառաջ կը տանէիր , քանի որ Մատուծոյ և կրօնքին սուրբ անունները կը պղծէիր խիստ անարգ կերպով . և եթէ այսպէս , ծանր անիծիք անիծեալ ևս դուն՝ Մատուծոյ ամենագիտութեան ու արդարութեանն ալ դէմ

այսպիսի յանգուզն նախառնից ընկուց համար : Պատկարն է որ սն եռանդը՝ որով կը վճռէր « սն հասարակն ու պաշտամանը համար՝ որ սնզամ՝ մը սարքերուն աւանդուեցան » (Յոր - 3), սակ ախարաստանութիւն ու հոգւոյ դաւանութիւն ըլլաւ . և բոլոր յուսացած նախանկը կրնայ ըլլալ որ բուն իսկ յու գաղտնիք վառուէնէ՛ր՝ յիշի հախտակ կողմն վե՛մ սնհամեր ըլլալէ՛ր՝ իսկ հոգւոյ մէկ ներքին շարութիւն մը ունենալէ՛ր յառաջ եկած ըլլաւ : որն որ Բարեկարգ կը գուարանայրնն ու բիւնիցը գաղտնադարանով ու մինչև սնզամ՝ կիցկրնով . այս, որն որ եթէ ներքին է ինչ այսպէս ըսել՝ վարչը գաղտնի վայր յարաւակելուն պէս դաւանութեամբ կը յարեակի կրնային վայր : և կ'ուզէ գանձից յոր հախտակ բնութեան մը գարելունէ : Եւ սակայն պիտի պաշտպանը՝ յիշ սն մեծ գաղտնաստանին առջեւ : Չէ՛ որ ևս առաւել պիտի գոչարարնն սնոր ահանութիւնը որ զինչստանէ կը ըստան :

7 . Ընց ըստի թէ սն կրնական գաղտնաբերութեան ու ներքին համար ունեցած նախանկը բարի գիտասարքութենէ յառաջ եկած ըլլայ, ու աչկի կերպով ալ յառաջ տարած ըլլաս . Ետանոց յիշատակութեան զբարն մէջ յիշի վե՛մ գրուած այսքան բազմութիւ գանձատութեան ու սնխազանդութեան գործերուն մէջ ի՞նչ պատ պիտի ընն սակայն յիշ արդարացրնելու կողմնէ : Եւ ետարանին յայտնելով վարդապետութիւնները արդարեւ պարտիցը եռանդով գաղտնիք , բայց սննոր գաղտնիք ու նոյն առանձը մեծանցնէ և սն մեծ գործնական նպատակը՝ որուն համար որ սննոր յայտնուեցան : Ետանութին ու սակիթին և շաննին տաւանորդը վճարել , ու « պէնքին ծանր բաները նշելն » . Ե , Սորթ . ից . 23 , պիտիցն Ետանած սիրելի , որ սրելնքին « առաջին ու մեծ պատուիրանքն » է : Սորթ . ից . 38 . Ո՛հ , ի՞նչպէս կարող պիտի ըլլաս արդարացրնել սն իրաւացի վճարը՝ որ ուրիշներուն վայր կարած ևս իրենց սնհաստանութեանը կամ սնխազանդութեանը համար , առանց « յու բերնէր գաղտնելու » : Վստ . յթ . 22 :

8 . Արեւն յու մարտ բարոյական փնջրը , յու արդարութեան՝ ու ողբունութեան գործը՛րդ յառաջ պիտի

Համար կը դատուիս ու կը դատապարտուիս : Այլ քու բնութեանդ ու վարքիդ մէջը՝ թէ որ առաքինութեան նման երևցող, և թէ որ ձեռք ու խարդախութեանէ՝ ի զատ բան մըն ալ կար՝ կրնայ ըսուիլ թէ նոյն խոյն անոր գործադրութիւնը իր վարձքը եղած է, և աստուածային «Մախախնամութեան քեզի տուած զաննազան բարութիւնները՝ ըսլոր քու անթիւ զայրացուցիչ գործքերուդ մէջ, հազար անգամէն աւելի փոխարէն եղած են՝ այսպիսի պակասաւոր և անկատար առաքինութիւններուդ : Այսին որոյ վրադ կը մնան հազարաւոր յանցանքներ, որոնց համար ճատագոյնութիւն չունիս, թէպէտ կան մէկ բանի եղեռնագործութիւններ որ բրած չես : Այլ ան բարի գործքերը՝ որոնց այդչափ կ'ապաւինիս, ամեննին պիտի չարդարացնեն քեզ անոր ահաւոր ատեանին առջևը, ինչպէս որ մարդու մը իր ազբատ դրացիներուն բրած բարեբարութիւնը չհրնար փաստ մը սեպուիլ իր դատապարտութիւնը վերջընելու, երբոր իր թագաւորին դէմ մեծ դաւաճանութիւն մը բրած է :

9. Բայց թերևս պիտի ըսես թէ՝ «Մա ամենը չէի ակնկալեր : չէի կարծեր թէ հոգեւոր բաներուն վրայ անհոգ ըլլալուն հետեւութիւնները այսքան մահաբեր են» : Այլ ինչէ՞ն չէիր կարծեր : Ինչ՞ի համար աւելի ուշադրութեամբ և աւելի անաչառ մտօք չբննեցիր : Ինչ՞ի համար թող տուիր որ ունայն սրտիդ ամբարտաւանութիւնն ու յիմարութիւնը այսպիսի թեթեւ երևցիւթներով զոհ ըլլայ : Եւ Մտուծոյ խօսքին բացարձակ յայտնութեանը դէմ՝ ապաւինեցար նախապաշարեալ մտքիդ ոչինչ ազդումներուն : Այթէ մտածէիր թէ անիկայ աշխարհիս զերազոյն Աստուծարիչն է, պիտի խմանայիր որ հիմա մեր ըսածին պէս հատուցման օր մը ըլլալու է հարկաւ : Այթէ մտադրութիւն ընէիր Սուրբ Վիրքին, որուն աստուածային հեղինակութեանը հաւատալ կը դաւանիս, անոր ամեն մէկ երեսը քեզի պիտի սորվեցնէր ասիկայ ակնկալել : Արձնքի վրայ շտրհեցայ, կ'ըսես, ուրեմն ինչի՞ վրայ կը խորհէիր երբոր մտոցար կամ զանց բրիր ասիկայ : Աւրիչ շմտ գործ ունէիր : Ի՞նչ գործ, կ'աղաչեմ քեզի : Ետոր հաւասար ծանրութիւն ունեցող ուրիշ ի՞նչ նպատակ

առաջագրած էիր : Այն . այնքան զբաղմունք ունենալովք ալ տակաւին՝ խիղճդ կը վիպէ որ եղան անանկ տուններ , երբ միտքդ խորհուրդ մը չըլլալովք ժամանակն ու կեանքը քեզի բնո մը կու զար . և տակաւին կրօնքի վրայ մտածելու դէմ կը պատասպարելիր՝ Թ՛չնամուց դէմ պատըսպարելու պէս , և որպէս թէ բոլորտիքդ ամէն կողմանէ անխորհրդու թեան պատնէշ մը քաշեցիր , իբր թէ ինքզինքդ մէկ յոյժ վտանգաւոր յարձակմունքէ մը պիտի պաշտպանելիր » Աստուած դիտէր որ դուն անխորհուրդ էիր , և անոր համար քեզի « խրատ խրատի վրայ , հրաման հրամանի վրայ » խրկեց , Առայ . իր . 10 , այնպիսի պարզ խօսքերով որ ամենեին հարկ չէր սրամտութիւն կամ ուսմունք անիկայ հասկընալու համար : « Ասե քեզ փորձեց նեղութիւններով ալ՝ ինչպէս ողորմութիւններով , քու մահարեք ընթացքէդ քեզ արթնցրնելու համար . և տակայն երբ որ կ'արթննայիր՝ կ'ուղէիր նորէն ծուլութեան անկողինիդ վրայ պառկել : Այս հիմա՝ որչափ ալ որ հաճելի էին երազներդ՝ պէտք է որ « դուն տրտմութեամբ պառկիս » : Առայ . 5 . 11 : Արածութիւնը վերջնապէս քու վրագ հասաւ . որովհետեւ չէիր ուզեր բարեկամի պէս մտիկ ընել , և հիմա տրտմեցունողի մը պէս մտիկ ընելու ես անոր :

10 . Բայց թերևս ոմանք երեսակայնս թէ՛ դեռ կարևոր ջատագովութիւն մըն ալ կայ , և տեղի կայ ըսելու թէ՛ « քու բնութեանդ հարկադրութեամբը հարկադրուեցար անբաները ընելու՝ որոնք հիմա քու վրագ յանցանք կը սեպուին » , և ան դտնուած պարագաներուդ մէջ ձեռքդ չէր անանկ չընել : Թէ որ աս ջատագովութիւնը զօրութիւն մը ունենայ , աս զօրութիւնը ուրիշ այնքան բանի ալ վերաբերութիւն պիտի ունենայ , որ պիտի հաստատէ և ոչ մէկը : Աթէ ուղէի պատասխանել քեզի՝ քու սկզբունքներուդ յիմարութեանն ու անխելքութեանը համեմատ , պիտի ըսէի թէ ան խորհրդածութիւնը՝ որ կը ցուցընէ թէ հարկ էր որ յանցաւոր դատուէիր , կը ցուցընէ ալ թէ՛ հարկ է որ Աստուած ալ քեզ պատժէ . և յիբաւի չպատժէլ ալ չկրնար , ու կրնայի ըսել ալ մէկ երևելի հեղինակի մը հետ , թէ « ան սկզբունքները

որ մեղաց անիրաւութիւնը կ'եղծանեն , պատժոյ անիրաւութիւնն ալ կ'եղծանեն" : Բայց եթէ չես ընդունիր ասիկայ , եթէ տակաւին ընդդէմ սկզբանց պիտի պատասխանես թէ՛ անիրաւութիւն է անանկ դործքի մը համար պատժել , որ չընելը բացարձակապէս քու ձեռքդ չէր , յիրաւի կը սեպեմ թէ շիտակ պատասխան կու տաս : Բայց աս պատասխանին մէջ քու դաղափարիդ կը հակառակիս՝ ինչպէս որ վերը ցուցուցի . և ես քու խղճմանքիդ կը թողում դատելը թէ՛ ինչ տեսակ դաղափար մը ըլլալու է սոս որ ամէն տեսակ պատիժը անիրաւ համարի . վասն զի փաստը ամէն կերպով նոյն ըլլալու է , թէ մարդկային պատժոյ նկատմամբ և թէ աստուածային : Ըփոթութեամբ լեցուն և ահարկու դաղափար մըն է ասիկայ : Աղէկ գիտեմ որ տունդ յափշտակելէն ետքը կը բակը տուող ծառան թէ որ ասանկ ըսէր՝ պիտի մտիկ չընէիր . ներսիդիէդ բնաւ պիտի չհաւատայիր՝ թէ չէր կրնար չընել , կամ պիտի չսեպէիր՝ թէ աս ճատագովութիւնովը ինքզինքը արդարացուց . և համոզուած եմ թէ ան մեծ օրը Աստուծոյ առջևը պայպիսի ճատագովութիւն մը ընելը քեզի այնքան հեռու պիտի ըլլայ որ , մինչև անգամ հիմա չես համարձակիր քու արթթիդ մէջ խառնելու անիկայ : Արեւակայէ՛ թէ մէկ շարագործ մը կը տեսնես մահուան կէտին՝ որ աս խօսքերը կը զրուցէ , «Մ'վ Աստուած , յիրաւի իմ ընկերներս կողոպտեցի ու սպաննեցի . բայց դուն գիտես որ իմ պարագաներս այնպէս արամաղքեալ էին՝ որ ուրիշ կերպ չէի կրնար ընել . կամքս՝ քու՝ առջևս դրած շարժառիթներովդ անընդդիմանալի կերպով որոշած էր անանկ ընել . և թէ որ կրնայի երկրիս հիմերը խախտել , կամ հաստատութեան մէջի արեղակը խաւարեցնել , ան զիս յառաջ վարող թելադրութեան ալ դէմ՝ կրնայի դնել : Խղճմանքիդ կը ձգեմ թէ արդեօք պիտի չնայեի՞ր ասանկ խօսքի մը վրայ զրուանքով և իբրև միւսներուն վրայ աւելած շարութիւն մը : Աւսակայն՝ թէ որ քու ճատագովութիւնդ արժէք մը պիտի ունենայ , անորն ալ քու կիներդ շափ արժէք կ'ունենայ . և կը յարմարի որ և իցէ ամենասարսափելի շարագործութիւններու ալ : Բայց արդարև ասոր ան-

տեղութիւնը այնքան յայտնի է ամէն աստիճանի դատողութեան տէր մտքի , որ դժուարաւ կրնամ համոզել ինքզինքս թէ մէկը կրնայ հաստատ հաւատալ անոր բողբոջին . և իմ ժամանակս չարաչար փաստուած պիտի սեպեմ , եթէ կենամ մաքառիմ անանկ կեղծուպատիր փաստերուն դէմ . որոնց՝ մարդկային ճարտարքանութիւնը չանբ ըրած է փայլուն երևոյթ մը տալու :

11 . Աւրեմն ասոնցմէ կը տեսնես թէ շրջափ պարսպ են քու բոլոր ջատագովութիւններդ , և որչափ դիւրին կերպով՝ անոնցմէ ամենէն զօրաւոր երեցածը անգամ ընդունայն կրնայ հանել քեզի պէս մահկանացու մարդ մը . ուրեմն ճրքան ևս առաւել Մն՝ որ բոլոր սիրտերը կը քննէ , և կրնայ մէկ բոպէին մէջ քու յանցաւոր ըլլալուդ շատ զօրաւոր և անդիմադրելի ապացոյցը խղճմտանքիդ վրայ թափել : Մն աստե՛նը Ի՞նչ կրնաս ընել , երբոր Աստուծոյ ատեանը կը կանգնիս յանցանքներդ յայտնուած : Ի՞նչ ընելու ևս , բայց եթէ լուռ կենալ՝ քու անարդարանալի յանցանքդ՝ ի՛նչերքուստ զգալով , և պատրաստ ըլլալ անոր օրէնքին քեզի դէմ սպառնալու վճիռը լսելու : Պիտի տեսնես ասոր գործադրութիւնը՝ թէ որ վերջնապէս Աւետարանը չփրկէ քեզ . և մինչև որ չափով մը չզգաս ասոր երկիւղը , չես կրնար արթննալ և աւետարանը փրնտրուել փրկութիւն գտնելու համար :

Աստուծոյ առջևը ըրած ունայն ջատագովութիւնները Բիլլի 34-ող՝ ու խղճմտանքին քանջուող Բողաւորի՛ իր խորհրդածութիւնը :

Ո՞վ Տէր , աս Ի՞նչ ողբալի վիճակ է՝ որուն մէջ ինկեր եմ ևս : «Մեղանչեցի , քեզի Ի՞նչ ընեմ , ո՞վ մարդիկները Վննող՝ : Յոբ . է . 20 : Ի՞նչ ըսել համարձակիմ : Յիմար էի ևս , որ ինքզինքս այսպիսի ոչինչ ջատագովութիւններով խարեցի , և համարեցայ թէ քու ահաւոր ներկայութեանդ առջևը արժէք ունին , կամ թէ կարող պիտի ըլլամ զանոնք հոն յիշելու : Չեմ կրնար աս բանը ընել : Լուռ և խռովեալ եմ . աւաղ . յոյսերս մեռան , և հոգիս ալ ահա պիտի մեռնի , Ի՞նչ մահուամբ որ կրնայ մեռնիլ անմահ հոգին . և ևս ալ զրեթէ

կ'ըսեմ, երանի թէ Չար ըլլար բոլորովին մեռնիլ : Յերուսի դատարարի ձեռք անցած շարագործ մ'ըն եմ ես, իմ ապականած գէշերեւէս բոլորովին զրկուած : Պատճառանք յառաջ բերելը միայն բարկութեան վրայ բարկութիւն պիտի դիզէ : Այսան որոյ յայտնապէս և ազատարար պիտի խոստովանիմ իմ յանցանքս . զԱյստուած "բոլորովին ինծի նմանող սեպելու" պէս գործեցի, բայց անիկայ ըստ թէ "քեզ պիտի յանդիմանեմ", ու աչքիդ առջևը պիտի շարեմ քու բրածդ" . Սող . 5 . 21 . պատերազմի ճակատը յարդարողի պէս պիտի շարեմ անոնք քու առջևդ : Եւ ո՛հ, ի՛նչ սոսկալի բազմութիւն մը կ'երեւան անոնք . և ի՛նչպէս կը չըմապատեն զիս, որ փախչելու Չարքը չեղայ : Ո՛վ իմ հոգիս, անոնք քեզ գերի բռնեցին, ու քեզ աստուածային ատեանը կը քաշեն :

Հոն երեւալու ես դուն . պիտի տեսնես ան ահաւոր յախտնական Գատարը, որ "երկամունքները կը փորձէ", Երեմ . ԺԷ . 10, և ուրիշ վիպի մը կարօտ չէ, վասն զի "ինքը վիպ է բոլոր քու անդամութեանդ" : Երեմ . իթ . 23 : Պիտի տեսնես անիկայ՝ ո՛վ իմ հոգիս, քու վրադ դատաստան ընելու համար նստած . և երբոր ճշգութեամբ "անօրէնութիւնները յիշելու ըլլայ", Սող . ԺԷ . 3, ի՛նչպէս պիտի "պատասխան տաս հաղարէն մէկուն" : Յոբ . թ . 3 : Եւ եթէ չես կրնար պատասխան տալ, ի՛նչ պիտի ըսէ քեզի : Տէր, քանի որ իմ վիճակս ասանկ է, ուրիշ լսելիք բան մը չեմ յուսար, բայց միայն դատապարտութիւն : Եւ ի՛նչ դատապարտութիւն մ'ըն է ան : Խորհիմ մէյմը անոր վրայ : Աարդում մէյմը իմ վճիռս՝ վերջին օրը անդամնալի կերպով վրաս կարգացուիլը չլսած : Վիտեմ որ անիկայ իր խօսքին մէջ գրած է, և գիտեմ ընդհանուր կերպով որ բարեբարութեան համար է գրելը : Վիտեմ որ մեզ փախցընելու համար է, որ չըլլայ թէ կորնչենք : Այսան որոյ խօսէ ինծի՝ ո՛վ Տէր, քանի որ խօսքդ վերջ չես բրած, և քանի որ այնպիսի պարագաներու մէջ ինկած չեմ, որ ատեն ալ պիտի չլսես ինծի : Խիստ ահարկու կերպով խօսէ ինծի միայն թէ՛ խօսքդ անդարմանելի յուսահատութեան մէջ չնդէ զիս : Եւ թող քու

ԳԼՈՒԽ Գ.

Մէջաւորին դատապարտութեան վճիռը պրտաւած ։

1 . Մտիկ ըրէ՝ ո՛վ մեղաւոր , և ես անգամ մըն ալ պիտի խօսիմ քեզի (Յոթ . խբ . 4) , Ետուծոյ անունով , Ետուծոյ քու ամենակարող 'Խատարիդ վրայօք , որ եթէ անոր ծառաներուն մտիկ չընես՝ քիչ առնեն՝ աւելի անմիջական կերպով մը պիտի խօսի քեզի , այնպիսի զօրութեամբ և ահաւորութեամբ՝ որ դիմանալու կարող պիտի չըլլաս ։

2 . 'Իսն չիմա դատուած ու յանցաւոր ելած ես որպէս թէ անոր ներկայութեանը առջեւ ։ 'Իու ջատագովութիւններդ ոչինչը զացած կամ յաւետ պապանձած են ։ Ետուծոյ առջև և քու խղճմտանքիդ ալ կ'երևնայ թէ այլ ևս ուրիշ բան մը չունիս յառաջ բերելու՝ դատապարտութիւնդ վերցընելու համար . վասն որոյ լսէ՛ քու վճիռդ , և թէ որ կրնաս՝ հոգւոյդ բոլոր կարողութիւնները կանչէ անոր գործադրութիւնը կրելու ։ Յիրաւի " ոչինչ բան մըն է մարդէ դատուիլը " . բայց " ան որ հիմա քեզ կը դատէ , Տէրն է " ։ Կաթն . Գ . 3 , 4 ։ Աւստի լսէ՛ , և սարսափէ՛ , երբ որ քեզի կը զօրացեմ անոր քեզի ինչպէս խօսելիքը , կամ յաւետ՝ երբ որ քեզի յայտնի Սուրբ 'Վրքէն կը ցուցընեմ թէ՛ մինչև անգամ հիմա ինչպէս կը խօսի , և ի՛նչ է անոր խօսքին վաւերական ու հաստատուն գրուած վճիռը . անոր խօսքին՝ որ կ'ըսէ թէ " Երկինք և երկիր պիտի անցնին , բայց օրէնքէն յովտ կամ նշանագիր մը պիտի չանցնի " ։ Մատթ . Ե . 18 ։

3 . Ետուծոյ օրէնքը միայն քեզի չխօսիր՝ ո՛վ մեղաւոր , ո՛չ ալ մէկ մասնաւոր խօսք մը կ'ուղղէ քեզի . այլ բոլորովին ընդհանուր կերպով կը խօսի բոլոր յանցաւորներուն մէկէն և կը թափէ իր սպառնալիքները բոլոր յանցանքներուն դէմ՝ թէ մեծին և թէ փոքրին ։ Այլ աս է անոր խօս-

քը . “Անիծեալ ըլլայ ամէն մարդ՝ որ օրէնքին գիրքը ամէն գրուածներուն մէջ չկենար որ զանոնք կատարէ” : Գող . 4 . 10 : Ես է անոր ձայնը բոլոր աշխարհին . և ասիկայ կը խօսի քեզի ալ : Ես ահաւոր խօսքերը քու անձիդ կը վերարեքին սօվ ընթերցող , և խղճմտանքդ կը վկայէ ասիկայ . չես կրնար չզգալ թէ , “անթիւ չարիքներ քեզ պատեցին” . Սող . 10 . 12 . Տուր կը մնայ անոր ամէն գրուածներուն մէջ կենալ որ զանոնք կատարես : Արեմն յայտնի է թէ անոր զատապարտած մարդն ես դուն . մինչև անգամ հիմա “անէծքով անիծուած” ես դուն , ինչպէս որ Եստուած ազգու կերպով կը խօսի , Սող . 4 . 9 , Բարձրեալ Եստուծոյ անէծքովը . այն , “օրէնքին գրքին մէջը գրուած ամէն անէծքը” քու վրայ է . Ի Օրէն . իթ . 20 : Եստուած իրաւամբ կրնայ մէկ բողեկին մէջ ան անէծքներուն որ և իցէ մէկը քու վրայ գործադրել . և թէպէտ հիմա անոնցմէ մէկն ալ չես զգար՝ բայց եթէ անոր անհուն ողորմութիւնը չըլլայ՝ քիչ մը ատեն կայ միայն , անկէ վերջը “անէծքը ջուրի պէս փորիդ մէջը կը մանէ” , մինչև որ քեզ ճաթեցընէ , ու կ’անցնի “ձէթի պէս՝ քու սկոբներուդ մէջը” : Սող . ճթ . 18 .

4 . Եսպէս կ’ըսէ Տէրը . “Ան անձը որ մեղք կը գործէ՝ անիկայ պիտի մեռնի” : Եղէ . 4 . 4 : Դուն ալ մեղք գործեցիր , վասն որոյ մահուան վճիռի տակ ես : Եւ ի՞նչպէս մէկ մահուան մը սօվ ապերժանիկ արարած : Ես բաներուն վերջը ի՞նչ պիտի ըլլայ : Մահուան տաղնապաները վրայ պիտի հասնին , և հոգիդ նուազեալ մարմնէդ պիտի քակուի , և դուն “հոգ պիտի դառնաս” ուրկէ որ առնուած ես” : Սող . ճդ . 29 : Երդարեւ ասիկայ մեղքին ահաւոր արդիւնքներուն մէկն է . Եստուած ամէն սոգզի ու ամէն դարու մէջ աս ազգու նշանովը՝ այսինքն մահով ցուցուցած է մեղքին դէմ ունեցած իր սրբազան ատելութիւնը և արդար բարկութիւնը : Բայց աւանդ , մահուան աս բոլոր սարսափելի հանդէսն ու երկիւղը ահաւոր տեսարանին բացուիլն է միայն :

5 . Եսպէս կ’ըսէ Տէրը , “Եմբարիշտները դժոխքը պիտի դառնան , և ամէն ազգերը որ զԵստուած կը մոռնան” : Սող . թ . 17 : Թեպէտ և ամբողջ ազգեր

ըլլան անոնք, իրենց բազմութիւնն ու ուժերնին պաշտպանութիւն մը պիտի չըլլայ իրենց : Ենոնք մեկտեղ դժոխքը պիտի իյնան — ան բոցափառ բանտին մէջ՝ զոր աստուածային վրէժխնդրութիւնը պատրաստած է — “Տօփեթին մէջ՝ որ շատոնցմէ պատրաստուած է”, այո՛, թագաւորներու համար ալ որոնք կը մեղանչին, ինչպէս որ ուրիշներու համար . ահա այսպէս մարդկային մեծութիւնը չկրնար պաշտպանել մարդը : “Օգանիկայ խորունկցուց ու լայնցուց . անոր դէզը կրակի ու շատ փայտ է . զանիկայ Տէրոջը շունչը՝ ծծումբի հեղեղի պէս պիտի բռնկեցնէ” . Եսայ . Լ . 33 . և բոցափառ հեղեղը այնքան արագ պիտի վազէ անոր մէջ՝ որ անիկայ կրակի ծով մը պիտի դառնայ . կամ ինչպէս որ Սուրբ Գիւրբը կը զրուցէ, յախտեանս յախտնից “կրակով ու ծծումբով վառած լիճ մը” : Յայտ . իս . 8 : “Մտիկայ է երկրորդ մահը”, ան մահը՝ որուն դատապարտեալ ես դուն Վատուծոյ խօսքովը՝ ս՛վ մեղաւոր :

6 . Եւ աս վճիռը պարմպ տեղը գրուած պիտի կենայ : Օրէնքը կը զրուցէ անիկայ, աւետարանն ալ կը զրուցէ . և միթէ որ մը հանդիսական կերպով պիտի շարուի՞ աս վճիռը . Վատուած բնաւ պիտի չքննէ՞ ու պատիժը՝ ՚ի գործ պիտի չգնէ՞ : Պիտի քննէ՞ ս՛վ մեղաւոր և գործադրէ ան վճիռը, թէ և ժամանակ մը ուշացնէ : Այսան զի աղէկ դիտես թէ . “Ինքը մէկ օր մը սահանեց, որուն մէջ՝ բոլոր “աշխարհս արգարութեամբ պիտի դատէ՛ ան մարդուն ձեռքովը, որն որ որոշեց՝ ու ամենուն հաւատացուց՝ զանիկայ մեռելներէն յարուցանելով” : Գործ . Ժէ . 31 : Եւ երբոր դատէ Վատուած աշխարհը, քեզ ալ պիտի դատէ՛ ս՛վ մեղաւոր՝ ս՛վ որ ես : Եւ քանի որ աս բանը միտքդ կը ձգեմ, ես ալ կ’ուզեմ յիշել թէ զիս ալ պիտի դատէ : Եւ “Տէրոջը վախը գիտնալով”, (Թ Կորնթ . Ե . 11,) “իմ հոգիս ազատելու համար”, (Եզեկ . ԼԳ . 9,) ամենայն պարզութեամբ և անկեղծութեամբ պիտի աշխատիմքու հոգիդ ազատել :

7 . Այսան որոյ կը կրկնեմ ան ահաւոր ազգարարութիւնը : Դուն՝ ս՛վ մեղաւոր, “Երբտոտի ատեանին առջևը պիտի ներկայանաս” : Թ Կորնթ . Ե . 10 : Պիտի

տեսնես ան ահաւոր երևոյթը , որուն նկարագրութիւնը այնքան ընտանի է քեզի՝ որ անիկայ կրկնելը տպաւորութիւն մը չընէր մտքիդ վրայ : Իսոյց անշուշտ որչափ որ անդոյց ալ եղած ես հիմա , հրեշտակապետին սաստկա-նշիւն փողը պիտի սարսէ քու հոգիդ , և եթէ ուրիշ բան չկարենայ արթնցնել և սարսափեցնել քեզ , քայ-քայուող աշխարհին սասանութիւնն ու բոցերը պիտի ընեն :

8 . Եթէ իրօք անանկ կը կարծես թէ Վրիտանի վերջին դաշտանն զիտաւորութիւնը՝ միայն իր ժողովուրդը զերեզմանէն հանել ու փառքի և երջանկութեան հասցընել է : Ինչ հաստատութիւն որ ունիս թէ « արդարոց յարութիւն մը » պիտի ըլլայ , նոյնը ունիս նաև թէ « մեղաւորաց յարութիւն մը » ալ պիտի ըլլայ . Գործ . իդ . 15 . և յարուցեալ մեռելները , « իրարմէ պիտի զատէ ինչպէս որ հոյիւ մը ոչխարները այծերէն կը զատէ » , Մատթ . ին . 32 , պիտի զատէ նոյնչափ ճշգումեամբ և անհունապէս աւելի դիւրութեամբ : Աստ՝ թէ միտքդ կ'անցնի՞ր ասանկ կարծիք մը թէ՛ Ստուած միայն քանի մը նշանաւոր ու անուանի շարագործներ պիտի խոյտառակէ ան օրը , քանի որ բաւած է թէ « պզտիկ ու մեծ մեռելները աթոռին առջևը պիտի կայնին և ծովը իր մէջի մեռելները պիտի տայ , ու մահը և դժողոքը իրենց մէջի մեռելները պիտի տան , ու ամեն մէկը իրենց գործքերուն համեմատ պիտի դատուին » . Յայտ . ի . 12 , 13 . և մինչև անգամ « ան որ շէր զիտէր իր Տէրոջը կամքը » , որ հետեւապէս կ'երևի թէ բոլոր ուրիշներէն աւելի աղէկ ջատագովութիւն ունի՝ անոր նազանդելու զանցառութիւն ընելուն համար , սակայն « ան ալ » , բուն իսկ իր զանցառութեանը համար « ծեծ պիտի ուտէ » , թէպէտ և « քիչ » : Առկ . ժբ . 48 : Աստ՝ թէ կրնամ խորհիլ որ անանկ հանդէսով և ահարկութեամբ տրուելիք վճիռ մը՝ որ Ստուած անով իր արդար դատաստանը պիտի յայտնէ և իր ամենապայծառ ու վերջին յաղթութիւնը պիտի ընէ , ան վճիռը մեծ բան մը պիտի ըլլայ , կամ թէ ան պատիժը՝ որ անիկայ պիտի սահմանէ մեղաւորին , թեթեւ կամ տանելի բան մը պիտի ըլլայ : Եւստ քիչ բանաւոր պատճառ

պիտի ունենայինք ասանկ ըմբռնու՛մ մը ունենալու , մինչև անդամ թէ որ սոսկապէս մեր կարծիքներուն մնար ան վճռոյն ինչ ըլլալը որոշել : Բայց հիմա շատ հեռու է բանն ասանկ ըլլալէն . մեր Տէր Յիսուս Քրիստոսը , իր անհուն խոնարհութեամբն ու զթութեամբը հաճեցաւ իր վճռոյն օրինակը տալ մեզի՝ և անտարակոյս շատ ճիշդ օրինակ մը . և անիկայ պարունակող խօսքերը արժանի են ամէն սրտի վրայ փորագրուելու : « Թագաւորը » , բոլոր ան շքեղութեան ու վեհափառութեան մէջ՝ որով ան ատենը պիտի երևայ , իր « աջ կողմը եղողներուն պիտի ըսէ , Ելէ՛ + իմ շօրս օրհնածնէրը՝ ալեարհի սիդէն յեղէ համար պարբարոսած Բագաւորութեանը խոնարհեցե՛ » : Մատթ . ին . 34 : Եւ « ուր որ թագաւորին խօսքը կայ » , արդարեւ « հոն իշխանութիւն կայ » : Մատթ . ք . 4 : Եւ աս խօսքերը անանկ զօրութիւն ունին՝ որ իրաւամբ կը կենդանացնեն խոնարհ քրիստոնէին սիրտը խորին տրտմութիւն պատած ատենը անդամ , և կը լեցնեն անիկայ « անպատմելի ու փառաւորեալ ինդութիւնով » : Թագաւորութեան հրախրուիլ , հրախրուիլ անիկայ անմիջապէս և յախտեան վայելելու . և ինչ թագաւորութիւն . այնչափ աղէկ պատրաստուած , այնքան փառաւոր , այնքան կատարեալ , անանկ բոլորովին յարմարած ասանկ արարածոց զուարճութեանն ու ստոխանացը , որոնք անանկ ձեակերպած ու անանկ նորոգուած են , որ պատշաճ է Մատուծոյ յախտեական խորհուրդներուն՝ հայթայթել , և պատշաճ է իր սիրոյն՝ պատրաստել և ուրախանալ անիկայ իր ժողովուրդին պարզեւելու խորհուրդովը . ահա յիրաւի մէկ օրհնեալ յոյս մը , մէկ պայծառ ու փառաւոր յոյս մը , որուն « նորէն ծնանք Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարութիւն առնելովը » , Թագաւորութեան . 3 , և կենդանացանք՝ Մատուծոյ շօրոյն մեր մտացը վրայ ունեցած սրբացուցիչ ազդեցութեամբը : Բայց ասիկայ մէկ յոյս մըն է , որմէ առ այժմ մերժուած եւս դուն՝ սի մեղաւոր . և կը մտածեմ թէ ինչ ցաւալի բան է որ մէկը խորհի թէ « Քրիստոս աս առատաշնորհ խօսքերը պիտի խօսի ոմանց և շատ մարդոց , բայց ոչ ինձի . իմ վրաս կարգա-

ցուեցաւ որ զնա թիւն չկայ . ինծի համար պատրաստուած թագաւորութիւն չկայ” : Բայց ան է ամենք : Աւաղ , մեղաւոր . մեր Տէրը աս վճռին միւս և սոսկալի մասը կուտայ քեզի համար : Անիկայ առաջուց ըսած է թէ ինչ պիտի ըսէ քեզի , թէ որ աս եղածիդ պէս մնաս . քեզի , և աշխարհին բոլոր անգեղջ ու չաւատացող ազգերուն , որչափ բազմութիւ և որչափ մեծ աստիճանի տէր ալ որ ըլլան : Անիկայ պիտի ըսէ իրեն դեմ ապստամբ եղող երկրի թագաւորներուն , մեծամեծներուն , հազարապետներուն , հարուստներուն ու զօրաւորներուն , ինչպէս բոլոր ծառաներուն և ստորին կարգի բոլոր աղատներուն ալ , Յայտ . Կ . 15 , “ Սէլիդի գոցէ՛ ինձե՛ տնի՛նսնի՛ր՝ յաւիտեանս իրաւի՛ն Տէր , որ պարտադրուած է Սարսուռ յին՝ ու իր հրէշտակներուն” : Սարս . ին . 41 : Ո՛հ , կանկ առ , և մտածէ՛ աս խօսքերուն վրայ , որ կարենաս անոնց ինչ ծանր բան ըլլալը հասկընալ :

9 . “ Սէլիդի գոցէ՛” պիտի ըսէ . և դուն խայտառակութեամբ և նախատանօք պիտի վրնատուխ անոր առջևէն . ան որ կենաց և երանութեան աղբիւրն է , որուն քովը երկինքի բոլոր բնակիչները շարունակ կ’ուրախանան : Ի՞նչ անկէ մեկդի պիտի երթաս տնի՛նսնի՛ր : Աստուծոյ օրէնքը կոտորած ես , և անոր անե՛ծքը վրայ է . և դուն ան մշտնջենաւոր անե՛ծքին տակն ես՝ ու պիտի ըլլաս . ան օրէն՝ Աստուած և բոլոր անոր արարածները պիտի նային քեզի՛ իրրև անիծեալ և դարձելի բան մը և իրրև արարածոց ամենապիղծ և ամենաթշուառ մասը : “ Արա՛նի Տէր ” պիտի երթաս , և ո՛հ , խորհէ՛ միանգամ թէ ինչ մեկ կրակի մը մէջ : Միթէ՛ պիտի իյնաս կատաղի բոցի մը մէջ որ լափէ քեզ մեկ բոպէի՞ն մէջ , թող ըլլայ թէ սաստիկ ցաւերով . արդարև աս ալ սոսկալի է . բայց ո՛հ ասանկ երկիւղները անոր քովը արժանի չեն յիշուելու : Ի՞նչ կինդ՝ ո՛վ մեղաւոր , “ Յաւիտեանս իրաւի՛ն ” է : Անիկայ ան է որ մեր Տէրը այնպիսի ահաւոր խօսքերով զրուցած է թէ ան տեղն է աս կրակը՝ “ ուր որ անոնց որդը չմեռնիր , ու կրակը չմարիր” . և դարձեալ՝ սրանչեղի կարեկցութեամբ երեք անգամ կ’ըսէ թէ՛ “ Ուր որ անոնց որդը չմեռնիր , ու կրակը չմարիր” : Սարս . թ . 43 ,

45, 47 : Ոչ ալ ասիկայ 'ի սկզբան կամ գլխաւորաբար քեզի համար պատրաստուեցաւ , այլ « պատրաստուած է Սատանային և իր հրեշտակներուն » համար . ան առաջին մեծ ապստամբներուն համար , որոնք ինչաճնուն պէս իսկոյն հոն ձգուելու դատապարտուեցան . և որովհետև դուն ալ մասնակից եղար անոնց ապստամբութեանը , վասն որոյ դուն ալ անոնց հետ ան բոցալատ կործանմանը մէջ ընկողմելու ես . և շատ առաւել պիտի ընկղմիս , վասն զի Փրկիչը անարգեցիր , քանի որ անոնց բնաւ Փրկիչ չստրկուեցաւ : Ենոնք քու ընկերներդ ու քեզ տանջողները պիտի ըլլան , որոնց հետ յախտեան պիտի բնակիս : Այս ե՞ս եմ աս բանը քեզի դրուցողը , կամ թէ չէ՞ որ Եստուծոյ օրէնքը և աւետարանը նոյնը կ'ըսէ : Չէ՞ որ յայտնապէս կ'ըսէ Տէր Հիսուս Քրիստոս . որ ան է « հաւատարիմ ու ճշմարիտ վկան » , Հայտ . Գ . 14 , այն նոյն ինքն ան՝ որ վճիռը պիտի տայ :

10 . Այս երբոր աս վճիռը տրուի , երբոր անդամ մը անոր բերնէն ելլէ , չէ՞ որ զործադրութիւնն ալ կ'ըլլայ : Ո՞վ կրնայ ասոր հակառակը երեւակայել՝ ո՞վ կրնայ երեւակայել թէ աս ահաւոր վճիռը միտքը սուտ երկիւղներով լեցընելու համար միայն պիտի տրուի և չօգիտ պէս պիտի ցնդի երթայ : Դիւրաւ կրնաս իմանալ թէ ասիկայ աւելի անարգանք մը կ'ըլլայ Եստուածային կառավարութեանը՝ քան թէ պիտի ըլլար եթէ բնաւ վճիռ չտրուէր : Այն որոյ վճիռին տրուելէն դիւրաւ կրնանք մակարերել թէ անոր ետեւէն ալ զործադրութիւնը կուգայ : Բայց որպէս զի չըլլայ որ մեղաւորին խաբերայ սիրտը զանիկայ այսպիսի ունայն յոյսով մը խարէ , աս զործադրութեան ստուգութիւնն ալ անմիջապէս գրուած է ազգու խօսքերով : Պիտի ըլլայ . իսկոյն պիտի ըլլայ : Են ատենը , ան նոյն օրը , քանի որ անոր ձայնը դեռ իրենց ականջներուն մէջն է՝ « չարերը պիտի երթան յաւիտենական տանջանքը » . Սաթ . ին . 47 . և դուն՝ ո՞վ մեղաւոր , ո՞վ որ ես . անոնց թուոյն մէջ գտնուելով , անոնց հետ մեկտեղ պիտի երթաս . պիտի քշուիս աս թշուառ բազմութեանը մէջ , և ընկղմիս անոնց հետ յախտենական կործանման մէջ : Գոտիքին լայն դռները

պիտի բացուին քեզ ներս առնելու համար . վրայէդ պիտի գոցուին յախտեանս քեզ բանտարկելու . և Մատուծոյ անաչառ դատաստանին Մմենակարող ձեռքը ամուր պիտի կղզուին՝ որ փակչելու ամէն յոյսը և ամէն կարելութիւնը վերնայ յախտեանս :

11 . Եւ ուստի ¹¹ քու Մատուածդ դիմաւորելու պատրաստուէ՛ : ¹² Մտա . Դ . 12 : Ի՞նչոք քաջութիւնդ մէկտեղ ժողովէ սասանկ վճիռի մը ու սասանկ պատիժի մը դիմանալու համար , վասն զի անիկայ մարդու պէս չէ որ երբեմն սիրաբը չցիմանայ՝ երբոր հարկ եղած խիստ զործ մը կատարելու վրայ է , անանկ որ գութը մտքին դատմանը ու անաչառութեան յաղթէ : Ա՛չ , այլ Մատուծոյ պէս քու դէմը պիտի ելլէ , որուն խորհուրդներն ու վճիռները իր աթոռին պէս անշարժ են : Այսն որոյ անոր անունովք քեզի վկայութիւն կու տամ այսօր որ եթէ Մատուած ճշմարիտ է՝ այսպէս պիտի խօսի . և եթէ կարող է , այսպէս պիտի ընէ : Եւ եթէ քու անդեղջ ու անհաւատ վիճակիդ մէջ յարատեւս , աս թշուառ վիճակին մէջ պիտի իյնաս . թէ որ Մատուած կամ սուտ կամ տկար չէ , պիտի կորսուիս , յախտենականապէս պիտի կորսուիս :

Ի՞ր դատարարստութեան վճարն աւելն զարեւոտք Ռդաւորին
Կրածոսութեանը :

Ա՛հ , որքան ողորմելի եմ ես : Ի՞նչ ընեմ , կամ թէր փակչիմ : ¹ Աշխարհ կըտուեցայ , ու պակաս գըտնուեցայ՝ : Ի՞նչ . Ե . 27 : Յիրաւի աս է իմ լսելիք դատակնիքս . որ պիտի լսեմ Կրիստոսի բերնէն . անոր բերնէն՝ որ մեռաւ մարդոց ազատութեանն ու փրկութեանը համար : Ա՛վ սոսկալի վճիռ . և յոյժ աւելի սոսկալի՝ անոր բերնէն ըլլալուն համար : Ի՞նչ բանի նայիմ՝ անկէ ինքզինքս ազատելու համար : Ար՞ի կանչեմ : ² Եւ անբժան կանչեմ ³ թէ իմ վրաս ինկէք , ու բլուրներուն , թէ իս ծածկեցէք : ⁴ Ա՛ն . Ի . 30 : Ի՞նչ կը շահիմ ստով : Երգարե եթէ ժայռերն ու լեռները վրաս իյնալու ըլլան , չեն կրնար ծածկել զիս անոր աչքին տեսութեանէն . և անոր ձեռքը հոն ալ նոյն գիւրութեամբ կը հասնի ինձի՝ ինչպէս որ ուրիշ որ և իցէ տեղ մը :

Արդարև շատ ողորմելի եմ ես : Ա՛հ թէ բնաւ ծնած չըլլայի : Ա՛հ թէ բնաւ ճանչցած չըլլայի բանական բնութեան պատիւն ու առանձնաշնորհութիւնը : Արդարև մահարե՛ր առանձնաշնորհութիւն , որ զիս դատապարտութեան ու բարկութեան ենթակայ կ'ընէ : Ա՛հ թէ յաւէտ բնաւ սորված չըլլայի Աստուծոյ կամօրը , քան թէ այսպէս սորվելով՝ անհոգ ըլլայի ու զանց ընէի անխիայ : Երանի թէ մարդկային սեռին ամենանուաստ մասին մէջ ծնած ըլլայի , որոնք շատ մօտ են անբաններուն վիճակին , քան թէ՛ քաղաքավարեալ վիճակի մը մէջ , մտաց այսբան մշակութիւններ եղած տեղ մը , և (սոսկալի՛ խորհրդածութիւն) Վրիստոնէութեան այսբան արտօնութիւններուն մէջ իյնալով բաժինս , ասանկ ամէնը իմ կործանմանս դարձընէի : Ա՛հ թէ Աստուած՝ մեկդի առնէր աս բանական հոգին . բայց աւա՛ղ , յախտեան պիտի ազրի , պիտի սպրի յախտենական մահուան ցաւերը քաշելու : Ինչ՞ու համար այսպիսի աշխարհի մը գեղեցկութիւններն ու փառքերը տեսայ , եթէ ան բոցավառ բանտին հետ փոխելու էի : Ինչ՞ու համար իմ Արարչիս այսբան առատութիւններուն համն առի , թէ որ վերջապէս անոր բարկութեանը մըրուրը պիտի խմէի : Ինչ՞ու համար ընկերական կենաց և բարեկամական կենակցութեան զուարճութիւնները ճանչցայ , թէ որ վերջապէս զանոնք դժոխքին մէջ եղող սատանաներուն ու դատապարտեալ հոգիներուն զգուելի ընկերութեանը հետ պիտի փոխէի : Ա՛հ , ո՛վ կրնայ բնակիլ անոնց հետ՝ մաշող կրակին մէջը . ո՛վ կրնայ բնակիլ անոնց հետ յախտենական՝ յախտենական՝ յախտենական բոցերուն մէջը : Երոայ . ԸԳ . 14 :

Բայց աս ամէնուն մէջ ո՛վ մեղադրեմ՝ եթէ ո՛չ ինքզինքս : Հանցանքը որո՞ւ վրայ կրնամ ձգել . եթէ ո՛չ բուն իսկ իմ թմբեալ անուղղելի յիմարութեանս վրայ : Ինչէ՞ն ծագած է բոլոր աս ահաւոր կործանումը , եթէ ոչ միայն ասկէ՝ որ Աստուծոյ օրէնքը կտորած ըլլալով անոր Աւետարանն ալ մերժեցի :

Եւ սակայն կեցի բ ո՛վ իմ հոգիս , երբոր աս ցաւազին և կանխագուշակ դանդառները կ'ընեն : Արնամ՝ ըսել թէ Աւետարանը յուսկ յետոյ մերժած եմ : Չէ՞ որ մինչև աս

օրս անոր ձայնը կը լսեմ : Դեռ ինձի դէմ եղած վճիռը՝ բոլորովին անդառնալի բլլալու շափ որոշեալ կերպով մը տրուած չէ : Ես բոլոր թանձր երեւոյթիս մէջէն յոյսի մէկ ճառագայթ մը կ'երեւնայ , և կարելի է որ դեռ կրնամ ազատուիլ :

Ո՛վ սփոփիչ խորհրդածութիւն : Աւրախացի բանով ս՛վ իմ հոգիս , թէ և դողալով ըլլայ . և անմիջապէս ան Մատուժոյն դարձիր , որ թէպէտ բիւրաւոր յանցանքներովդ բարկացուցիր , բայց տակաւին « Իր բարկութեանը մէջ » երդում չբաւ , որ թող շտայ քեզի այլ ևս իր հետը հաղորդակցութիւն ընելու , կամ « որ ջմանես իր հանգիստը » : Սող . զէ . 11 :

Այս ան որոյ՝ ս՛վ ամէնօրնեալ Տէր , քու առջեզ ինքզինքս հողին վրայ կը տարածեմ : Աը խոստովանիմ թէ ես դատապարտեալ ու թշուառ արարած մըն եմ : Բայց իմ խօսքս ան խոնարհ մաքաւորին խօսքն է , « Մատուած՝ ողորմէ ինձի մեղաւորիս » : Ղու . ԺԸ . 13 : Ա՛էր 'ի վերջ և աղօտ կերպով կը տեսնեմ՝ մէկ ճամբայ մը որով քնար է ազատիլ : Ո՛վ Մատուած , կ'աղաչեմ քեզի , ան ճամբան ինչ ըլլալը ցուցուր ինձի : Երկարի յոյսնի կերպով մը ցուցուր՝ որ չկրնամ սխալիլ : Եւ ս՛հ , սիրտս դարձնուր անոր՝ թէ և խոնարհեցուցիչ՝ և ցաւալից ճամբայ մը ըլլայ անիկայ :

Ենչու շա՛ շատ բան ունիմ սորվելիք ս՛վ Տէր , բայց դ՛սն եղիր ուսուցիչս : Բու վեր վերցուցած ձեռքդ բոպէ մըն ալ թող կենայ , և քու անհուն զթութեամբդ յապաղէ հարուածը , մինչև որ աղէկ մը սորվիմ թէ ի՞նչ պէս կրնամ ազատիլ անկէ :

ԳԼՈՒԽ Լ:

Պատասպարտութեան որով իզող Բողոսորին անօգնական
Վեճակը :

1. Ո՛վ մեղաւոր, լսեցիր դուն Եստուծոյ վճիռը՝ իր սուրբ և անփոփոխելի խօսքին մէջ գրուած . և անոր տակը յախտնական յուսահատութեան մէջ պիտի պառկի՞ս . բնաւ ջանք պիտի չընե՞ս անկէ ազատելու համար, որ ատեն անիկայ ուրիշ բան չխօսիր, բայց միայն բուհոզեոյդ յախտնական մահը : Այժէ մարդկային օրինօք դատապարտեալ յանցաւոր մը՝ մի միայն յոյսի մէկ ամենափոքր շուք մը տեսնէ ազատելու, բոլորովին իր մտադրութիւնը ան բանին կու տայ : Այժէ մէկ բարեկամ մը ըլլայ՝ որ կը կարծէ թէ անիկայ կրնայ օգնել իրեն, ի՞նչ զօրաւոր թախանձանօք ան բարեկամին միջնորդութիւնը չմաղթեր : Այս մինչև անգամ երբոր դատաւորին առջևն է, ո՛րքան դժուար է շատ անգամ ատենան զանիկայ դուրս ընելը, քանի որ ողորմեցէ՛ք՝ ողորմեցէ՛ք՝ ողորմեցէ՛ք կ'աղաղակէ, թէ և ալ ատենը անցած ըլլայ : Արբոր սոսկ կարելութիւն մը ըլլայ թէ ասիկայ ազդեցութիւն մը ընէ, շատ եռանդով կը շարունակէ իր աղաղակը, և շուզեր որ լռել տան և դուրս ընեն զինքը :

2. Արեմն՝ ով մեղաւոր, դեռ դատապարտութիւնդ չկատարուած, ան դատապարտութիւնդ որ կրնայ ըլլալ թէ աս նոյն օրը կատարուի, խելքդ վրագ ժողկելով պիտի չմտմտան թէ ի՞նչ կրնայ ըլլալ ազատութեան համար : Ղեռ ի՞նչ միջոց կայ մնացած որ կրնաս բանեցընել : Եղէ կ'ամուսն, վասն զի ասիկայ մեծ գործ մըն է : Ինչաւասիկ մեծ առիթ մը չկրնար ըլլալ քու իմաստութիւնդ զօրութիւնդ՝ ճարտարախօսութիւնդ՝ և մտադրութիւնդ բանեցընելու : Այժէ կրնաս դուն քեզի օգնել՝ բո՛ւ : Այժէ մէկ զաղտնի միջոց մը ունիս դարման մը գտնելու, ուրիշին մի՛ երթար օգնութեան համար : Այժէ մատուցանելու զո՛հ մը, եթէ բանեցընելու զրութիւն մը ունիս,

այն՝ եթէ ինչ և իցէ օգնական մը ունիս երկրիս վրայ կամ անդիի աշխարհին մէջ, որ կրնայ պաշտպանել կամ ազատել քեզ, ըրէ՛ ընելիքդ՝ որ վերջնապէս փրկուիս, ու քու կործանումդ չտեսնենք: Բայց ըսէ՛՝ Վատուծոյ առջևը ո՞վ մեղաւոր ի՞նչ զոհ պիտի մատուցանես, ի՞նչ զօրութիւն պիտի բանեցընես, ի՞նչ դաշնակից օգնականներու պիտի դիմես՝ այնպիսի ստիպողական՝ այնպիսի անյոյս ատեն մը: Այս անգի իրան անյոյս ըսելու եմ, թէ որ ասանկ միջոցներու դիմես:

3. Վատուծոյ արդար դատաստանին դէմ զործեր ես. ունի՞ս ասիկայ քաւելու կերպ մը: Աթէ արթնցող մեղաւորին մեկուն պէս հարցուփորձի ելլէիր, թէ՛ «Տերոջը առջևը ինչո՞վ երթամ», ու Բարձրեալ Վատուծոյն առջևը իյնամ. արդեօր անոր առջևը ողջակէզներո՞վ, մեկ տարեկան որթերո՞վ երթամ. արդեօր Տէրը հազարաւոր խոյերու, կամ բիւրաւոր եղի գետերու պիտի հաւնի՞» . Մէ + . Գ . 6, 7 . աւանդ, եթէ Աողոմնին չափ մեծ իշխան մը ըլլայիր, և յիրաւի կարենայիր անոր պէս զոհեր զնելու, անոնք յիշելու անդամ արժանի պիտի չըլլային: «Ախր անանք կրակի համար բաւական պիտի չըլլար. ո՞չ ալ անոր անասունները աղջակէզի համար բաւական պիտի ըլլային»: Ասայ . իս . 16: Ան զոհերը ընդունող և պահանջող հին անտեսութեան ատենը անգամ, ցուլերուն ու նոխազներուն արիւնը՝ թէպէտ ժամանակաւոր պատիժէ ազատ կը պահէր յանցաւորը, բայց «չէր կրնար մեղքերը վերցընել», (Աբր . Ժ . 4,) ո՞չ ալ խղճմտանքը կրնար մարբել Վատուծոյ առջևը: Այլ ան անձը որ «յանդգնութեամբ բան մը կ'ընէր», անոր թոյլտուութիւն չէր բնաւ մեղքի կամ յանցանքի պատարագ բերելու, այլ դատապարտուած էր «ժողովուրդին մէջէն կորսուելու»: Թուոց ԺԵ . 30: Արդ՝ Վատուած ու խղճմտանքը գիտեն թէ քու յանցանքներդ միայն տղիտութեան ու անզուլութեան սխալմունքները չեն, այլ դուն մեկ բարձր ձեռքով մը մեղանշեցիր, շատ անգամ և յանցանքը մեծցունող պարագաներով, ինչպէս որ արդէն խոտովաւնած ես: «Պիտի աւելլունն՞ս վերջիչեալ՝ ողորմելի մեղաւորին հետ, «Արդեօր իմ յանցանքիս համար՝ իմ անդրաւ-

նիկս , ու հողւոյս մեղքին համար՝ որովայնիս պտճւոյր տամ" : Մի + . 4 . 7 : Սիրելի զաւկի մը արիւնը ի՞նչ կրնայ ընել ասանկ բանի մը մէջ . միայն թէ յանցարներդ աւելի սեցընել և մինչև հիմա չցիտցուած աստիճանաւ զարհուրելի ընել : 'Իուն՝ անհուն իշխանութեան տէր Ասակի մը դէմ յանցանք գործեցիր . և եթէ ատ յանցանքը արիւնով պիտի քառուի , քու զաւկըներուդ երակներուն և քու երակներուդ մէջ վազած արիւնէն տարբեր արիւն մը ըլլալու է :

4 . Ուրեմն դուն տանջուելով ինքիրմէ՞դ պիտի ընես աս կատարեալ հատուցումը : Ինչո՞ւ չպէս պիտի ընես անիկայ : Ես մահախնայու վայրկենական կեանքին մէջ տառապանքներ քաշելով պիտի ընես : Ուրեմն Աստուծոյ արդարութիւնը այնքան փոքր բան մը կը սեպուի՝ որ քանի մը օրուան տրտմութիւնը անոր պահանջմունքները ընցընելու բաւական ըլլայ : Ասմ թէ անդիի աշխարհին մէջ ապառնի չարչարանացը վրայ կը խորհիս : Աթէ կը խորհիս , ատ փրկութիւն չէ . և աս բանին նայելով կրնամ ըսել թէ՛ երբոր կատարեալ հատուցում ընես , կ'ազատիս . երբոր ան պարտքիդ յետին նաքարակիտը վճարես , բանտիդ դռները պիտի բացուին . բայց մինչև ան ատենը " դժոխքը անկողինդ պիտի ընես" . Սաւլ . Ճլթ . 8 . և ճ՛՛հ՛ անպերճանիկ մարդ , պիտի պառկի՞ս հոն մէկ դաղտնի յուսով մը՝ թէ ան բուպէն պիտի գայ , որ ատեն Աստուծոյ արդար դատաստանին սաստկութիւնը կարող պիտի չըլլայ քաշածէդ աւելի պատիժ զնելու քու վրադ , և ան ատենը՝ պիտի կարենաս պահանջել քու ազատութիւնդ իրբև քու իրաւունքդ : Հիրաւի աղէկ պիտի ըլլար քեզի՛ եթէ կրնայիր այսպիսի սուտ ու անհիմն յոյս մը տանիլ . քեզի՛ հետ . բայց աւանդ , բաները այնպիսի ուղիղ հայեցողութիւնով մը պիտի տեսնես , որ ասկէ՛ ՚ի զատ միութարութիւն մը չունենալդ յախտնական յուսահատութիւն պիտի ըլլայ քեզի : 'Քու վճռոյդ ան միակ բառը՝ " յախտնական կրակ " , ու ան միակ խօսքը՝ " որդը՛ շինունիր , ու կրակը շմարիր " , բաւական պիտի ըլլայ այս յոյսը շիթեղու , և քեզ անյոյս տազնապով ու երկիւղով խտովելու :

5 . Աստ կը կարծե՞ս թէ ասկէ վերջը վարքդ չտկելդ և պարտաւորութիւններուդ վրայ բազմահոգ ըլլալդ քեզ աս վճիռէն պիտի ազատէ : Խորհէ անգամ մը ո՞վ մեղաւոր , թէ ի՞նչ տեսակ շնագանդութիւն պիտի ընծայես ամենասուրբ Մատուծոյ : Վճիռի՞ծ և կատարեալ ըլլալու է ան , որպէս զի անոր անհուն սրբութիւնը հաւնի և ընդունի , թէ որ քեզի միայն նայի՝ առանց Վրիտաոսի միջնորդութիւնը նկատելու . անհաստատութիւն՝ անհոգութիւն՝ մեղախառնութիւն ըլլալու չէ հետը : Այլ կը համարձակի՞ս յուսալ պայտիտի շնագանդութիւն մը ցուցնելու , և ան ալ կեանքիդ մնացած մասին բոլոր ժամանակը . դուն՝ որ այնքան սկզբնական ապականութեամբ և այնքան մեղաւոր ունակութիւններով տկարացած ու անթիւ ներգործական յանցանք չազատեալ ես : 'Ի զուր պիտի ջանաս աս շնագանդութիւնը ընելու մինչև անգամ մէկ օր մը : 'Աոր յանցանք մը անմիջապէս քեզ նոր կործանման մը մէջ պիտի ձգէ : Բայց թէ և ասանկ չըլլայ , եթէ աս բուպէէն մինչև քու կեանքիդ վերջը՝ Մատուծոյ օրէնքին՝ Վրախտին մէջ Մղամէն պահանջածին պէս՝ բոլորովին կատարեալ ալ ըլլայ ընելիք շնագանդութիւնդ , բաւական պիտի ըլլայ անցեալ յանցանքը ջնջելու : 'Աոր պարտքի մը տակ չիյնալդ քեզ հին պարտքէ մը կ'ազատե՞ : Մտիկայ առաջարկէ ընկերիդ , և տե՛ս թէ պարտքիդ իբր վճարում կ'ընդունի՞ . և եթէ չընդունիր , Մատուծոյդ առաջարկելու պիտի համարձակի՞ս :

6 . Բայց ալ խօսքս չերկնցընեմ պայտիտ պարզ նիւթի մը վրայ : Վանի որ աս բաները կը խօսիմ , ժամանակը կ'անցնի , մահը կը մերձենայ , և դատաստանը կը մտնենայ : Այլ ի՞նչ բան կրնայ փրկել քեզ անոնցմէ , կամ ի՞նչ բան կրնայ պաշտպանել քեզ անոնց մէջ : Արնայ աշխարհը փրկել — ան քու փափաքանացող ու հեհետամտութեանցդ ունայն երազական կուռքը , որուն քու յախտնական յոյսերդ կը զոհես : Մղէկ դիտես որ անիկայ բոլորովին պիտի մոռնայ քեզ քու ամենէն աւելի կարօտ եղած առեւտր . և անոր վայելութիւններէն մէկը քեզի հետ չես կրնար տանիլ անդիի աշխարհը , ո՞չ մինչև անգամ մէկ շնչին իբ մը չես կրնար տանիլ՝ անով զինքը

յիշելու համար, եթէ ուզես աշխարհին պէս անհաստատ
և խարերաց բարեկամ մը յիշել :

7. Եւ երբոր մեռած կամ մեռնելու վրայ ըլլաս,
քու մեղաւից ընկերներդ կրնան փրկել քեզ : Անց ան-
ոնց մէջը մէկը, որ եթէ ուզէ աս բանը ընել, « կրնայ
քու փրկանքդ Մատուծոյ հատուցանել » ; (Ասդ . խթ .
7,) քեզ գերեզմանը կամ դժոխքը երթալէն ազատելու
համար : Եւսդ . ասիկայ այնքան աղէկ պիտի խմանաս,
որ երբոր գերեզմանին սահմաններուն վրայ ըլլաս՝ պիտի
չուզես տեսնել կամ խօսիլ անոնց հետ, որոնք առաջ քու
սիրելի ընկերներդ էին : Այնչև անգամ ան ժամանակը
յաւէտ ցաւ պիտի ըլլան քեզի քան թէ օգնութիւն, ու-
րեմն որքան ևս առաւել անկարող պիտի ըլլան, օգնել
քեզի Մատուծոյ ատեանին առջևը, երբոր իրենք իրենց
դատապարտութիւնովը սարսափած են :

8. Խաւարին իշխանութիւններուն համար աղէկ դի-
տես թէ՛ քեզի օգնութեան հասնելու հակամտութենէ
կամ կարողութենէ բոլորովին հեռու են : Աստանան
արթուն կը կենար ու քու կործանմանդ համար կ'աշխա-
տէր, և հիմա պիտի յաղթող հանդիսանայ իր ըրածին մէջ :
Բայց եթէ ձեր մէջը բարեկամական դաշնակցութիւն մը
կրնայ ըլլալ, ի՞նչ պիտի ըլլայ ատիկայ՝ եթէ ոչ կոր-
ծանման մէջ ընկերակցութիւն մը : Այսն զի ամբա-
րիշտներուն դատաստանին օրը՝ աս ապստամբ հոգիներուն
ալ դատաստանը պիտի ըլլայ . և ան կրակը՝ որուն մէջ
պիտի երթաս դուն ո՞վ մեղաւոր՝ « Աստանային և իր հը-
րելուակներուն համար պատրաստած կրակն է » : Ասդ .
ին . 41 :

9. Ա՛րջնայէս՝ երկնային հոգիները պիտի փրկեն քեզ :
Իրենց զօրութիւնը կամ իրենց ազօթքները քեզի համար
պիտի բանեցընեն : Ա՛ճիւր քեզի դէմ տրուելէն ետքը՝
զօրութիւն բանեցընելը երկինքի դէմ ապստամբութիւն
է, որն որ աս սուրբ ու գերազոյն արարածները կ'ատեն :
Եւ երբոր Ղաատաորին վերջին կամքը կ'իմացուի, փոխա-
նակ զուր տեղը թշուառ յանցաւորին համար միջնորդու-
թիւն ընելու, յաւտ իրենց Տէրջը փառքին համար նա-
խանծով վառուած, և անոր իմաստուն ու արդար որոշ-

մանը մէջ 'ի սրտէ միակամութիւն ունենալով , կը պատ-
րաստուին անոր գործադրութիւնը ընելու : Այս ,
թէպէտ հիմա զժուար է մտք առնելը , բայց ստոյգ
ճշմարտութիւն է որ 'Վրիստոսի ծառաները' որոնք հիմա
յոյժ քաղցրութեամբ կը սիրեն քեզ , և յոյժ կարեկցու-
թեամբ քու փրկութիւնդ կ'ուզեն , մինչև անգամ անոնք
ալ որ բնութեան կամ բարեկամութեան ամենամերձ կա-
պերովը կապուած են քեզի , միաբերան Մէն պիտի աղա-
ղակեն անոր վճիռին : Յիրաւի հիմա աղիքնին կը զարա-
րի վրագ , և աչքերնին արտասուք կը թափէ քեզի համար :
Հիմա քեզ կը յորդորեն , և քեզի համար Աստուծոյ
ճատագոգութիւն կ'ընեն , որ եթէ կարելի է՝ քանի որ
ժամանակ կայ , "խանձողի պէս կրակէն հանուխ" :
Մտօք . 7 . 11 : Բայց աւանդ , անոնց խրատներուն հի-
մա մտիկ չես ընէր . և անոնց աղօթքներուն համար ինչ
ըսենք , ի՞նչ խնդրեն քեզի համար : Աթէ՛ որ որ խնա-
նաս կորսուած ըլլալդ և ինքզինքդ ու ինչ և իցէ ուրիշ
արարածէ բոլորովին յոյսդ կարելով , կտորած ու խոնարհ
սրտով Աստուծոյ առջևն իյնաս . և ինքզինքդ անոր արդար
դատաստանին յանձնելով , և ինքզինքդ և բոլոր արա-
րածներուն ինչ և իցէ ապաւինութիւնը բոլորովին ուրա-
նալով , զժոխքին խորութիւններէն վեր նայելու պէս՝
խոնարհ հայեցուածով վեր անո՛ր նայիս , որ թերևս զը-
թութիւն ընէ քեզի , և առաջնորդէ քեզ աղատութեան
ան հրակ կերպին , որն որ՝ քանի որ իրերը հիմակուան
պէս կը մնան , ո՛չ երկիրը՝ ո՛չ դժոխքը՝ և ո՛չ ալ երկին-
քը կրնան ցուցնել քեզի :

Եւ ողորմելի վեհալին Բիլ էղող Բողասորին ողբը :

Ո՛վ արամալից՝ անմխիթար՝ անողնական վիճակ :
Ո՛հ ինչ ողորմելի եմ ես որ ինքզինքս ասոր մէջ ձգեցի :
Ինեղձ՝ ողորմելի՛ թշուառ և լքեալ արարած : Ո՛ւր
է իմ հպարտութիւնս և իմ սրտիս ամբարտաւանութիւ-
նը : Ո՛ւր են իմ պաշտած կուռքերս , " որոնք սիրեցի ,
և անոնց ետէն դացի , և զանոնք փնտռեցի" , (Նբի .
2 .) քանի որ իմ յանցանքներս կ'աւելցնէի երկինքի
իշխանութեանը դէմ : Չկայ իմ վրաս կարեկցութիւն

ընող սիրտ մը : Չկայ իս ազատող ձեռք մը : « Մի իմ բարեկամներս՝ դուք ողորմեցէ՛ք ինձի , ողորմեցէ՛ք ինձի . քանզի Աստուծոյ ձեռքը ինձի դպաս » . Հո՞ք . ԺԺ . 21 .
 անխկայ զիս բռնեց : Ար զգամ որ անոր ձեռքը իմ վրաս կը ծանրանայ , և ի՞նչ պիտի ընեմ ես : Թմերես անոնք պիտի զթան իմ վրաս . բայց աւանդ , որքան տկար կարեկցութիւն մը : Աթէ բնութեան բոլոր սահմաններուն մէջ՝ մէկ տեղ մը՝ մէկ օգնութիւն մը կը դանուի , մի միայն անոր ուր տեղ ըլլայր ցուցուցէ՛ք ինձի : Մ՛հ՝ ցուցուցէ՛ք , առաջնորդեցէ՛ք ինձի դէպ՛ի անոր . կամ յաւեա՛ ձեռքէս բռնեցէ՛ք ու տարէ՛ք զիս հոն , քանզի միտքս խոռվեալ ու շփոթեալ է :

Մի դուք Տէրոջը պաշտօնեաները , որ ձեր պաշտօնը ողորմելի հոգիները մխիթարել ու անոնց առաջնորդել է , ողորմեցէ՛ք ինձի : Ար վախնամ որ շատ ուրիշ աւօզնական արարածներուն մէկ օրինակն եմ , որ ինձի պէս ձեր օգնութեանը կարօտ եմ : Աւրիշ հոգեբնիդ մէկդի՛ դրէ՛ք ու իմ հոգեւոյս հոգ տարէ՛ք , աս իմ ծանրագին հոգեւոյս հոգ տարէ՛ք , որ մահուան արիւն կը թափէ , քանի որ դուք թերես հազիւ անգամ մը կը նայիք , կամ մէկ ակնարկութիւն մը կ'ընէք վրաս՝ ու « անդի ի կողմէն կ'անցնիք » : Ա՜ռ : Ժ . 32 : Բայց սակայն՝ աւանդ . աս իմ վեճակիս մէջ ձեր միջնորդութիւնը ի՞նչ կրնայ ընել թէ որ մինակ ան ըլլայ . « Եւ որ Տէրը չօգնէ ինձի , դուք ի՞նչպէս կրնաք օգնել » : Պ՛մա՜ . ի . 27 :

« Մի Աստուած՝ բոլոր մարդոց հոգիներուն Աստուածը » , ((Թատոց ժի . 22 ,) իմ աչքերս վեր քեզի կը վերցընեմ , և « քեզի դերեզմանին փորէն կը կանչեմ » : Հո՞ք . Ժ . 2 : Վեզի կ'աղաղակեմ , դէթ անոր սահմաններէն : Աւ սակայն , քանի որ աս յետին թշուառութեանը մէջ կը կենամ քու առջևդ , գիտեմ որ քու ամենակարող զօրութիւնդ ու անչափ շնորհքդ կրնայ դեռ ճամբայ մը գրանել իմ փրկութեանս համար :

'Իտն ան ես՝ որ ամենէն աւելի վշտացուցի ու նախատեցի . բայց և այնպէս միայն քեզմէ դարման փնտռելու եմ հիմա : « Վեզի՛ միայն քեզի դէմ մեղանշեցի , և քու աչքերուդ առջևը շարութիւն ըրի » . անանկ որ « արդար

ըլլաս խօսքերուդ մէջ , ու անարատ ըլլաս դատաստանիդ մէջ" , (Սող . ծն . 4 ,) թէ և աս բոլորէիս զիս յախտնական թշուառութեան դատապարտես : Եւ սակայն մէկ բան մը կը գտնեմ որ ներսիդիէս զիս քեզի կը քաշէ , որ իբր թէ բժշկութիւնը հոն կրնամ գտնել , ուր որ ամենամեծ կործանման արժանի եղած եմ : Մ՛յ ամենօրհնեալ Մատուած , " ես զիս կորսնցուցի , բայց իմ օգնութիւնս քեզմէ է" , (Ո՛վ . ժ . 9 ,) թէ որ երբէք օգնութիւն մը կրնայ ըլլալ ինծի :

Ար կարգամ որ " քու խորհուրդներդ մեր խորհուրդները շնն , ոչ ալ քու ճամբաներդ մեր ճամբաները , հասցա որչափ որ երկինքը երկրէս բարձր է , այնչափ ալ անոնք մերիններէն" : Եսայ . ծն . 8 , 9 : Այսն որոյ " ողորմէ՛ ինծի՛ ո՛վ Մատուած՝ քու ողորմութեանդ համեմատ , քու առատ զթութեանդ համեմատ" : Սող . ծն . 1 : Մ՛յ Տէր՝ ցուցո՛ւր ինծի ազատանի քաղաքին ճամբան , ո՛վ Տէր՝ դուն " զիս դէպ՛ի յախտնական ճամբան առաջնորդէ" : Սող . ճլթ . 24 : Գիտեմ որ քու Վետարանդ է մի միայն դարմանը , ո՛վ Տէր՝ սորվեցո՛ւր քու ծառաներուդ զանիկայ մատակարարել : Պատրաստ՛ իմ սիրտս ալ անիկայ ընդունելու , և թող մի տար՝ շատ ուրիշ անգամներուն օգէս , որ իմ բնութեանս մէջ այնքան տարածուած չարութիւնը՝ ան ազնիւ դեղը թոյնի դարձրնէ :

ԳԼՈՒԽ Ը

Իր Բիզանդացիք-Մի-նը ու խորուստի դաստիարակութեամբ ըլլալը
ճանչում Բիզանդիս իր յայտնուի Վերիստոսով Էլլաձ Էրիս-
Մի-նն լտարը :

1 • Ո՛րքելի ընթերցողս , Մետարանին մեծ նպատակն է՝ և ամեն ո՛ւր որ սրտանց կ'ընդունուի , նաև անոր փառասոր արդիւնքն է՝ սիրաբ լեցընել սիրոյ զգացումներով , մեզի սորվեցընել որ ասոնք բոլոր անհարկասոր խստութիւնը և դատնութիւնը , և մեր ընկերներուն ո՛չ թէ թշուառութիւնովը՝ այլ երջանկութեամբը ուրախանանք : Գժուարաւ կրնամ իմանալ թէ ի՞նչպէս քրիստոնեայ կրնայ ըլլալ ան՝ որ անբանի մը անգամ կրած նեղութիւնովը կը զուարճանայ , ո՛ւր կը մնայ որ մարդուն կրածոյը . և մանաւանդ ան տեսակ նեղութիւնով՝ որն որ իմ գրած խորհրդածութիւններս կու տան մարդուս , եթէ մէկը արժան մտազրութիւն ընէ անոնց զօրութեանն ու ծանրութեանը : Հաստ անգամ մէկ գորովալի ցաւ մը կը զգայի աս բաները գրած ատենս . և շատ սրտանց կ'ուզէի՝ որ հարկ չըլլար դանտը այսբան դառն և այսբան ցաւընող ոճով գրուցել : Բայց հիմա գրբիս այնպիսի մէկ մասը գրել կը սկսիմ , որուն անպատմելի ուրախութեամբ ներ կը զարնեմ , որն որ յիրաւի աշխիս առջևը ունէի արդէն՝ բոլոր ան անասոր բաները առջևդ գրած ատենս : Վեզի ցուցուցի որ եթէ մինչև հիմա անգեղջ և մեղաւից վիճակի մը մէջ ապրած ես , Մտուծոյ արդար դատաստանովը դատապարտեալ ես , և քու մէջդ յուսոյ աղբիւր՝ կամ ազատութեան նարասորութիւն մը չունիս : Բայց՝ քեզ աս երկիւղալի խորհրդածութեան մէջ թողուլ չէ իմ միտքս , որ անոր մէջ ի՞նչս՝ ու յուսահատութեամբ մեռնիս , զանգատելով ան անգութ եռանդէն , որ քեզ « ատենէն առաջ տանջեց » : Մտքն • Ը • 29 :

2 . Ելիբբ , ի՞նչ դուռն լքեալ հոգի , որ Մատուծոյ առջևը հոգին վրայ ինկած ես , և կը դողաս անոր արդար վճռոյն երկիւղէն . վասն զի ես խրկուած եմ քեզի զրուցելու , որ թէպէտ “ դուռն քեզ կորսնցուցիր , բայց քու օգնութիւնդ Մատուծմէ է ” : Ո՛վ . Ժ . 9 : “ Քեզի մեծ ուրախութեան աւետիս կու տամ ” , (Դ . 1 . ք . 10 ,) ու սիրտս կը բերկրի քանի որ կը զրուցեմ , և կը յուսամ թէ քու սրտիդ ալ պիտի հասնի ան աւետիսը ու կենդանացնէ . այ՛ն՝ Փրկչին արիւննովն ու արդարութեամբը եղած փրկութեան աւետիսը : Եւ որպէս զի առաւել ապահով ըլլաս , քեզի շնորհատու և ներողամիտ Մատուծոյ խօսքերովը զրուցեմ , թէ “ Քրիստոսով աշխարհը իրեն հետ հաշտեցուց , և անոնց յանցանքները իրենց շեղեց ” : Թ . Աորն . Ե . 19 :

3 . Ասիկայ է ան ամենալաւ լուրը որ երբէք լսուած է , ան ամենամեծ պատգամը որ Մատուած երբէք խրկած է իր արարածներուն . և թէպէտ չեմ տարակուսիր որ քրիստոնէայ երկրի մը մէջ ըլլալովդ շատ անգամ լսած ես անիկայ , թերևս հազարաւոր անգամ , բայց ամենայն պարզութեամբ և մեկին կերպով քեզի նորէն պիտի զրուցեմ , և անանկ պիտի զրուցեմ որ իբր թէ բնաւ լսած չես առաջ : Ա՛յ մեղաւոր՝ եթէ առաջին անգամ զգալը հիմա ըլլայ , ուրեմն մէկ նոր Վեետարան մը պիտի ըլլայ քեզի , թէ և յոյժ ընտանի է քու ախանջներուդ . և “ ինծի ձանձրութիւն ” պիտի չըլլայ այսքան ընդհանուր մէկ բան մը զրուցելը , որովհետեւ “ քեզի շատ ապահովութիւն ” է ու հարկաւոր : Փիլիպ . Գ . 1 : Անոնք որ շատ խորին և ընտանի կերպով տեղեակ են անոր , փոխանակ ձանձրանալու , մեծ հաճութեամբ մտիկ պիտի ընեն անոր . բայց անոնք որ մինչև հիմա թեթեւ բան սեպած են , ազէկ դիտեմ որ կարօտ են նորէն լսելու : Եւ բացարձակապէս անկարելի չէ՛ որ աս խօսքերս կարդացողներէն զո՛նէ մէկ հոգի մը դանուի՛ որ բնաւ պայծառ կերպով և լիովին կրթութեամբ չըլլայ աս մեծ փարդապետութեանը մէջ , որ անիկայ զխանայէն և ընդունելէն կախում ունի իր յախտնական բաժինը : Այսան որոյ հոգ պիտի տանիմ որ այսպիսի մէկը իր ձեռքը միջոց մը չընէ աս բանը՝ անով Մա-

տուժոյ ատեանին մէջ ինքզինքն արդարացընելու , ըսելով թէ՛ “ թէպէտ քրիստոնեայ անուանեալ ժողովրդոց մէջ ապրեցոյ , բայց բնաւ բացայայտ և հաւատարիմ կերպով չսորվեցուցին ինձի Հիսուս Քրիստոսով եղած փրկութեան վարդապետութիւնը , որ ինքն է “ ճամբան , ու ճշմարտութիւնը , ու կեանքը , որ առանց անոր մէկը չօրը քով չգար ” : Յովհ . ԺԳ . 6 :

4 . Ս անս որոյ կը վկայեմ՝ ձեզի այսօր , որ երկնի ու երկրի սուրբ և շնորհաձիր Անձութիւնը առաջուց տեսնելով ան մահաբեր անկումը որուն մէջ բոլոր մարդկային սեռը պիտի իյնար , շորոշեց մէկ տաստիկ և դառն խատուութիւնով մը վարուիլ ձեզի հետ , և մեզ ընդհանուր կործանման և անդառնալի դատապարտութեան տակը ձգել . այլ ընդհակառակն՝ որոշեց խաղաղութեան և հաշտութեան ուխտի մոնսէլ , և կեանք ու փառք հրատարակել ան ամենուն՝ որոնց որ Աւետարանը պիտի հասնէր , այնպիսի կերպով մը՝ որ իր անհուն իմաստութիւնը փայլուչ սեպեց իր բնութեան մարբութեանն ու իր կառավարութեանը պատուոյն : Եսիկայ յիրաւի շատ սքանչելի կերպ մըն էր , որն որ՝ թէպէտ և ընտանի է մեր խորհուրդներուն ու լեզուներուն , բայց և այնպէս չեմ կրնար միտք բերել և յիշել անիկայ առանց մեծ զարմացման : Արոշեց բուն իր Արդին աշխարհ խրկել , “ իր փառքին պայծառութիւնն ու իր էութեանը բուն պատկերը ” , (Աբդ . ան . 3 ,) իր Եստուածային կատարելութիւններուն ու պատիւներուն կցորդը , ոչ միայն արդարութեան ուսուցիչ ու շնորհաց պատգամաւոր ըլլալու , այլ նաև մարդոց մեղքերուն համար դո՛հ . և պիտի հասնէր անոր զանոնք փրկելու , միայն աս պոյնտալութէ՛ն ոչ միայն աշխարհայլ նաև մեռնի աս բանին համար :

5 . Բ շատ այն՝ , այնպիսի ժամանակ մը որ անհուն իմաստութիւնը յարմար սեպեց , Հիսուս Քրիստոս Տէրը մարդկային մարմնով երեցաւ . և անընդհատ ու երկարատե նեղութիւն քաշելէն , ու բոլոր նախընթաց վնասները կրելէն ետքը , որչափ որ մարդոց ապերախտութիւնն ու չարութիւնը կրնար հասցընել անոր , յօժար կամօք “ մինչև մահուան՝ շագանդ եղաւ , ու մին ալ խաչին մահ

Հուանը" • Փիլիպ • ք • 8 • և "մեր յանցանացը Հստար մասնուեցաւ և մեզ արդարացընելու համար յարութիւն առաւ" : Առաջ • դ • 25 : Յարութիւն առնելէն ետքը բաւական առնն կեցաւ երկրիս վրայ՝ իրեն հետեողներուն իր յարութեանը վրայով յոյժ համոզիչ ապացոյցներ տալու համար , և ապա "երկինքը համբարձաւ , երբոր անոնք կը նայէին" • Գործ • ան • 9-11 • և անկէ իր Առդին խորկեց առարեաններուն , կարող ընելու զանոնք յոյժ համոզիչ կերպով և իշխանաբար "աւետարանը քարոզելու" • և անիկայ աս բանը պատուիրեց անոնց և ան ամենուն՝ որոնք իւրաքանչիւր դարու մէջ պիտի յաջորդէին անոնց՝ նկատմամբ անոնց պաշտօնին աս մասին , որ անիկայ հրատարակութիւնը ստեղծուածներուն , (Մարկ • ԺԷ • 15 ,) որ ան ամենը որ կը հաւատան անոր , փրկուին անոր հաստատուն զորութիւնովը՝ և անոր աստուածային հեղինակին անփոփոխելի զօրութիւնովն ու շնորհօքը , որ "նոյն է երէկ ու այսօր , և յաւիտեանս" : Եբր • ԺԳ • 8 :

6 • Աւտի աս Աւետարանը հիմա քեզի կը քարոզեմ՝ ու կը հռչակեմ՝ ո՛վ ընթերցող , անկեղծ փափաքով՝ որ աստուածային շնորհաց միջոցովը "այսօր քու հոգւոյդ փրկութիւն" ըլլայ : Առաջ • ԺԺ • 9 : Ասան որոյ գիտցի՛ր ու մտմտան ասոր վրայ ո՛վ որ ես , թէ աս խօսքերուն հիմա աչքիդ առջևը ըլլալը ո՛րքան ստոյգ որ է , այնքան ստոյգ է թէ Աստուծոյ մարմնացեալ Որդին "տեսարան եղաւ աշխարհի , ու հրեշտակներուն , ու մարդիկներուն" • ան Առաջ • դ • 9 • կռնակը խարազաններով ծեծուեցաւ , գլուխը փուշերէ պսակ դրուեցաւ , թեւերն ու ոտքերը փայտին վրայ տարածուեցաւ , և անիծեալ փայտին դամուեցաւ • և աս թշուառ վիճակին մէջ ձեռքերէն ու ոտքերէն կախուեցաւ՝ ամենուն նախատանացն ու անարգանքին առարկայ : Ասանկ մեռաւ իր անգութ թշնամեացը բոլոր անարգանացն ու նախատանացը մէջ , որոնք իր արեանը կը ծարաւէին • և ան որ ամենէն աւելի տրտմալիցն էր , ան ջաւերուն մէջ՝ որոնցմով իր բոլորովին անմեղ՝ կատարեալ՝ և օգտակար կեանքը վերջացուց , շունէր աստուածային ներկայութեան ան օգնութիւնները , որոնք մեղանշական մարդիկները շատ անգամ կ'ունենան , երբոր

իրենց խղճմտանքին տուած վայութեանը համար նեղութիւն կը կրեն : Ըստ անգամ ուրախութեան շարժումներ ու դուարանութեան երգեր կը սկսին , քանի որ իրենց դահիճները իրենց դժոխային շարութիւնը կը լեցնեն , վայրենի բարբարոսութենէ առաւել անոնց տանջանքները արհեստիք յոյժ դառնացընելով . բայց խաշեալ Յիսուսը իր անբիծ ու սուրբ հոգւոյն նեղութեանը մէջ պայպէս գոչեց , “ Եստուած իմ , Եստուած իմ , զիս ինչ՞ու թողուցիր ” : Մատթ . իէ . 46 :

7 . “ Այլէ քու սիրելի Փրկչիդ . նայ՛ աս ողբալի ահաւոր՝ և սակայն մէկ կերպով մը ուրախալից տեսարանին , և ան առենը հարցնւր քու սրտիդ թէ՛ Ար հաւատամ որ Յիսուս շարշարուեցաւ և մեռաւ պայպէս : Այս ինչ՞ու համար շարշարուեցաւ ու մեռաւ : Քեզի պատասխանեմ ես բուն Եստուծոյ զրուցած խօսքերովը , “ Անիկայ մեր մեղքերուն համար վերադարձուեցաւ , և մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ . մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ , և անոր վէրքերովը մենք բժշկուեցանք . Տէրը հաճեցաւ որ զանիկայ ծեծելով ցաւերու մատենէ . անոր անձը մեղաց համար զո՛հ բլլալու ատենը . վասն զի Տէրը մեր ամենուն անօրէնութիւնը անոր վրայ դրաւ ” : Եսայ . ժ 5 , 6 , 10 : Անանկ որ քեզի Եռաբեւոյն խօսքերովը կրնամ խօսիլ , թէ՛ “ Հայտնի ըլլայ քեզի , որ ասոր միջոցովը քեզի մեղաց թողութիւն կը քարոզուի ” , Գործ . ժ 38 , ինչպէս որ իր պատուէրն էր անմիջապէս յարութիւն առնելէն ետքը “ Ենոր անունովը մեղաց ապաշխարութիւն ու թողութիւն քարոզուիլ բոլոր ազգերուն մէջ՝ Արուստակմէն սկսած ” , Գործ . ի 47 , ան նոյն տեղէն՝ ուր որ նո՛ր իր արիւնը թափուեր էր այնպիսի անգութ կերպով : “ Ասեւ կը վկայեմ քեզի , մէկ ուրիշ ներշնչեալ հեղինակի մը խօսքերովը , թէ Եստուած անիկայ՝ որ մեղք չէր դիտեր , “ մեզի համար մեղաւոր սեպեց , որ մենք անոր միջոցովը Եստուծոյ արդարները բլլանք ” , Բ Մատթ . ն . 21 , այսինքն՝ անոր լեցուցած արդարութիւնովը և կատարած քառութեանը միջոցովը կարող բլլանք Եստուծմէ ընդունուիլ իրրև արգար , և ո՛չ միայն թողութիւն զաններ , այլ անոր սիրել-

լի ալ ըլլանք : “Մս փրկութեան խօսքը ձեզի խրկուեցաւ” , Գործ . Ժ . 26 , և քեզի՝ ո՛վ ընթերցող , մինչև անգամ՝ հիմա կ’առաջարկէ Մատուած անոր օրհնութիւնները , և անկեղծութեամբ կ’առաջարկէ . անանկ որ՝ բոլոր առջի գլուխներուն մէջ ըսածներովս ալ Մատուծոյ օրէնքը կ’առեւլք քեզ կործանման տակ չձգեր , թէ որ անոր Մատարանն ալ չմերժես : Սեղաց ան բոլոր լէզէոնները որ քու դէմք ճակատ կազմած են , կարող պիտի չըլլան քեզ կործանելու , թէ որ անհաւատութիւնը անոնց առաջնորդ չըլլայ , և յետին անգեղջութիւնը վերջապահ : Գիտեմ՝ որ մեղքին ճանաչումը երկչոտ կ’ընէ մարդը . վասն որոյ նոյն ինքն Մատուծոյ խօսքերովը պիտի խօսիմք քեզի , որոնցմէ աւելի մխիթարականը չըլլար . “Մն որ Արդիին կը հաւատայ , յախտնական կեանք ունի” , Յովհ . 4 . 36 , “ու դատապարտութեան տակ չիյնար” : Յովհ . 6 . 24 : Այսան որոյ ինչ և իցէ տեսակ կամ՝ ինչ և իցէ աստիճանաւ . “դատապարտութիւն չկայ” բոլոր “Յիսուս Քրիստոսով եղողներուն՝ որոնք մարմնաւոր կերպով չեն վարուիր” : Հովհ . 1 : Յիրաւի շատ մեծ մեղաւոր մըն են դուն , և քու յանցանքներդ ալ յիրաւի խիստ անձարին ծանրութիւն ունին . բայց սակայն ուրախացիր սա վստահութիւնով թէ “ուր որ աւելի եղաւ մեղքը՝ ալ աւելի եղաւ շնորհքը . որ ինչպէս մեղքը թագաւորեց մահուամբ” , ինչպէս որ խիստ ընդարձակ կերպով իշխանութիւն քշեց և անդիմադարձ կերպով յաղթութիւն ըրաւ , “անանկ ալ շնորհքը թագաւորէ արդարութեամբ մինչև յախտնական կեանքը մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքովը” : Հովհ . 6 . 20 , 21 : Մն արդարութիւնը՝ որ պիտի վստաւելիս անոր հաւատաւորով , ո՛չ միայն պիտի կտորէ ան շղթաները՝ որոնցմով մեղքը քեզ իբր թէ իր կառքին անիւներուն տակը կը քաշքշէր կատաղի ընթացքով մը դէպ’ի յախտնական կործանման , այլ պիտի հազվեցընէ քեզ փրկութեան հանդերձներով , պիտի հաստատէ քեզ փառաց աթոռի վրայ , ուր որ պիտի սպրիս ու թագաւորես յախտեանս երկինքի իշխաններուն հետ , պիտի թագաւորես անմահ վայելչութեան ու ուրախութեան մէջ , աստուածային

տհաճութեան առանց մէկ բիծն ալ մնալու քու վրադ , և առանց մէկ հատիկ անանկ նշան մը ըլլալու՝ որ անկէ կարենայ զխոցուիլ թէ ատեն մը բարկութեան և անէծքի տակ եղած ես , բայց 'ի այն դովարանութեան երդէն որ պիտի մատուցանես « Կառին որ մորթուեցաւ , և քեզ իր արիւնովը քու մեղքերէդ լուաց » : Հայտ . ան . 5 :

8 . Կան հարկաւոր չէ որ յանցանքներէդ ազատելու և աս բարձր ու կատարեալ հանգստութեանը հասնելու համար , Յիսուսի երթալու չհամարձակած քու բարի գործքերդ բերես՝ անոր ընդունելութեանը արժանաւոր ըլլալու համար : Յիրաւի ճշմարիտ է որ եթէ հաւատքդ անկեղծ ըլլայ , անշուշտ բարի գործքեր յառաջ պիտի բերէ . բայց Աստուծոյ խօսքին իշխանութիւնը ունիմ՝ քեզի գրուցելու՝ որ եթէ այսօր անկեղծութեամբ կը հաւատաս Աստուծոյ Արդւոյն անունին , այսօր անոր խնամքը քու վրադ պիտի ըլլայ , և իր ոչխարներուն թուոյն հետ պիտի համբուիս , որոնց համար քաղցրութեամբ ըսաւ թէ « Կանոց յախտեան կեանք կու տամ » , և թէ « յախտեան պիտի չկորսուին » : Հովհ . Ժ . 28 : Այսին որոյ պէտք չէ որ ըսես թէ , « Ո՞վ պիտի ելլէ երկինքը կամ թէ ո՞վ պիտի իջնէ անդունդը ինծի համար : Կնչու որ խօսքը մտ է քու բերնիդ մէջը , և քու սրտիդ մէջն է » : Հատմ . Ժ . 6 , 7 , 8 : Արդ՝ կը թողում քեզ աս ուրախակից պատգամովը . աս հաւատարիմ խօսքովը՝ որ յիրաւի « բուրբուրովն ընդունելութեան արժանի » է . ան ՏԻՄ . ան . 15 . աս աւետարանովը՝ ո՞վ մեղաւոր , որ իմ կեանքս է , և եթէ չմերժես , քու կիսնդ ալ կ'ըլլայ :

ՍԷ՛ղաւորին հարաձուլիւնը աս տախտիսին զրայ :

Ո՞վ իմ հոգիս , որ քան սքանչելի է այսօր ընդունած պատգամը : Յիրաւի շատ անգամ ըսած էի առաջ , և այնքան ընտանի եղած է ինծի՝ որ զարմանքը անզգալի է : Բայց մտածէ՛ ո՞վ իմ հոգիս , ի՞նչ է աս լսածդ . և բռն՝ թէ արդեօք Փրկչին անունը , որուն բերածն է աս պատգամը , չէ կրնար պատշաճութեամբ « սքանչելի , խորհրդակից՝ կոչուիլ » , (Կոթ . թ . 6 ,) երբոր քու

առջևդ սիրոյ պայպիսի սքանչելիքներ կը դնէ , և քեզի խաղաղութեան պայպիսի խորհուրդներ կու տայ :

Ո՛վ ամենօրջնեալ Յիսուս , յիբարի ասանկ է : Մարդկային մտաց կեղծիք չէ՞ արդեօք : Անտարակոյս կեղծիք չէ : Ո՞ր մարդկային միտք կրնար պայպիսի բան մը նարեւ կամ մտքէ անցընել : Յայտնի և ստոյգ բան մըն է որ՝ երկնային աշխարհին մեծութիւնն ու ուրախութիւնը ձգեցիր ինծի պէս թշուառ մը մեղքընալուդ համար : Ո՛հ , եթէ ան իշխանութեան ու երջանկութեան բարձրութենէդ միայն բոպէ մը իմ վրաս նայէիր , և մէկ բարեբար խօսք մը խրկէիր իմ ուղղութեանս ու մխիթարութեանս համար՝ մինչև անգամ քու ծառաներուդ ամենանուատին ձեռօքը , իրաւամբ կրնայի ինքզինքս քու առջև ձգել երախտադէտ դարմանքով , և մինչև անգամ “անոր ոտքերը” պահնել , “որ փրկութիւն կը քարոզէ” : Առայ . ծբ . 7 : Ասցց ահա դուն խնարհեցար պատգամաւորը ինքնդ ըլլալու : Ի՞նչ շնորհք . թէ և միայն մէկ անգամ անձամբ քարոզած ու անմիջապէս անթող դարձած ըլլայիր , ուրիշ Աստուածային գթութիւնը քեզ վար բերաւ . բայց աս չէր ան քու փառաւոր շնորհքիդ ըրած յաղթութեանը բողոքը . անիկայ քեզ ոչ միայն աշխարհ բերաւ , այլև շատ տարիներ մարմնոյ տկար տաղաւարին մէջ մնալ , և նախատինք ու անգթութիւն կրեւնէ ևաւ , որոնց վրայ խորհելով սիրտս կը վերաւորուի , վերջնապէս կեանքդ ալ տալ ու շարագործի մը պէս խաչին վրայ տարածուիլ տուաւ քեզի , ահա պայպես քառութիւն ըրիր իմ աստուածային արդար օրէնքին դէմ ըրած յանցանքիս , ու “դիս ծախու առիր Աստուծոյ՝ քու արիւնովդ” : Յայտ . և . 9 :

Ի՞նչ ըսեմ , “Աը հաւատամ Տէր , օգնէ իմ անհաւատութեանս” : Մարկ . թ . 23 : Հաւատքը՝ կ'երևի թէ իր վերջին կէտը հասցընելու է , ըմբռնման յետին ծայրէն ալ անդին անցնող աս սքանչելի բանին ճշմարիտ ըլլալը ընդունելու համար : Օրջնեալ՝ յախտեանս օրհնեալ ըլլայ քու անունդ՝ ո՛վ Հայր գթութեանց , որ աս ճամբան նարեցիր : Յախտեանեան շնորհակալութիւններ Գառին՝ որ մորթուեցաւ , և ան բարեբար՝ Աստու-

ինամուծեանը՝ որ աս փրկութեան խօսքը ինձի խրկեց : Ո՛հ՝ թող «Մտուծոյ շնորհքը պարագտեղը ընդունած չըլլամ»՝ թէ և բխրաւոր աշխարհներ տան ինձի : Եւ Կորնթ . Դ . 1 : Ո՛հ՝ տպաւորէ՛ աս Մեկտարանը իմ հոգւոյս վրայ , մինչև որ անոր փրկող գորութիւնը բոլոր կարողութիւններու մէջ տարածուի : Ո՛չ միայն լսեմ՝ խոստովանիմ՝ և դաւանիմ , այլ նաև զգամ : «Քու գորութիւնը» ըրէ անիկայ «ինձի փրկութեան համար» . Հռոմ . Թ . 16 . և տո՛ւր ինձի ան խոնարհ՝ և քաղցր երախտագիտութիւնը , տո՛ւր ինձի ան գործունեայ՝ և անխոնջ նախանձը քու ծառայութեանդ մէջ , որ կը վայլէ «իր շատ մեղքը ներուած» (Ղուկ . Է . 47) և այսպիսի կերպերով ներուած մէկու մը :

Սրտիս մէջ մէկ յանկարծական բորբոք մը կը զգամ երբ որ աս աւետիսը ականջներուս կը շնչէ . բայց ո՛հ՝ թող ասիկայ թիթե՛կ հարեանցի շարժում մը չըլլայ : Ո՛հ՝ թող ասիկայ՝ որ յօժարութեամբ կ'ուզեմ իմ քրիստոնէական ուրախութիւնս կոչել , ան «յիմարներուն ծիծաղին պէս» , որուն այնքան անխեղութեամբ կը զնայէի , «կաթացին տակի փուշերուն ձայնին նման» չըլլայ : Ժող . Է . 6 : Ո՛վ Տէր՝ սորվեցո՛ւր ինձի ձեռք ձգել աս գերազանց պարզեւր՝ աս փառաւոր յոյսը քու սահմանած կերպովդ . և պահէ՛ զիս , որպէս զի բնութեան ուրախութիւնը՝ որն որ կործանմանէ ազատելու նշոյլ մը տեսնելով կը վայելեմ , սխալմամբ շնորհքին ազգած ան հաւանութեանը տեղը չտանեմ , որ կը զրկէ և կը խրացնէ փրկութիւնը :

ԳԼՈՒԽ Թ

Եւ ճամբով փրկուելին ստուանալու վրայ առաւել խանաւոր
 արդիւնութիւն հը :

1. Հիմար կը սեպեմ թէ դուն ինձի սա հարցումը կ'ընես՝
 ո՞վ սիրելի ընթերցող , որ երբեմն Հրեայք մեր Տէրոջը ը-
 րին , « Եւ ընկեր » որ Եստուծոյ գործքերը գործենք » :
 Յովհ. Գ. 28 : « Եւ ընթացք բռնեմ » առ ըսած ա-
 զատու թիւնդ ու փրկու թիւնդ ձեռք բերելու , որ Վրիս-
 տոս իր ժողովուրդին համար պատրաստած է » : Աստուծոյ
 եղածին շտի փութով և սրտի մտք պիտի պատասխան
 տամ ատոր , այնպիսի մեկու մը պէս՝ որ գիտէ թէ ո՞րքան
 հարկաւոր է քեզի սա բանը աղէկ զիտնալ . և իբրև այն-
 պիսի մեկը՝ որ գիտէ թէ ի՞նչպէս ճշդութեամբ պատաս-
 խան պիտի տայ Եստուծոյ՝ իր տուած պատասխանին մէջ
 ունեցած փոյթին ու անկեղծութեանը համար : Ո՞չ թէ
 կարող ըլլայի « անոր պատգամներուն պէս » խօսիլ , (ս
 « Գործք . Գ . 11 ,) այսինքն անանկ կերպով մը՝ որ սուրբ
 պատգամներուն սորվեցուցած բաները հաւատարմութեամբ
 անդրադարձէ :

2. Եւ հոս՝ որպէս զի ամենէն ապահով առաջնորդնե-
 րուն և ամենէն բարի օրինակներուն հետեւելուս փտահ
 ըլլամ , պէտք է որ « դէպ 'ի Եստուած ապաշխարու-
 թեամբ , և մեր Տէր Յիսուս Վրիստոսին վրայ եղած հա-
 ւատքով » փրկու թիւն քարոզեմ քեզի , (Վործք . Ի .
 21 ,) ան հին՝ բարի վարդապետութիւնը՝ որ առաքեալ-
 ները քարոզեցին , և մէկը շիրմար փոխել՝ առանց իր և
 իրեն հետեւողներուն հոգին փտանդի մէջ ձգելու :

3. Ար սեպեմ թէ հիմա քաջ տեսած ես քու յանցանքդ
 ու դատապարտութիւնդ , նաև ինքզինքդ ազատելու ան-
 կարող ըլլալդ : Բայց սակայն ներէ՛ ինձի՝ որ յորդորեմ
 քեզ առ բաները շատ խորին կերպով զգալու , և աւելի
 ծանր կերպով քու հոգւոյդ վրայ տպաւորելու՝ թէ « դուն

քեզ կոտորնցուցիր՝, և քու օգնութիւնդ քեզմէ չէ :
Ո՛վ . Ժ . 9 : Այսն որոյ համոզուէ որոշ ու հաստա-
տուն կերպով՝ և անկեղծութեամբ մէկգի ձգել բոլոր յանձ-
նապատասխանութիւնը , որուն դեմ եթէ արթուն չըլլաս ,
պատրաստ է ան ծածկարար ետ դառնալու , որ ան ատենը
կը սկսիս նորէն շինել ան որ հիմա կ'աշխատիս քակել :

4 . Աղէկ գիտցիր որ եթէ փրկուիս , ան փրկութիւնը
Մատուոյ ձրի շնորհքին սալու ես բոլորովին : Այս եթէ
որչափ ալ որ յանցաւոր ու թշուառ ես , ոչ միայն ընդու-
նուիս , այլև պատկուիս , պէտք է որ « քու պատկը ակտու-
տին առջևը ձգես »՝ ամենախոնարհ երախտագիտութեամբ :
Յայտ . Գ . 10 : « Ա՛յլ կ'մարմին մը պարծենալու չէ Մա-
տուոյ առջևը , բայց ան որ կը պարծենայ , Տէրոջմով
թող պարծենայ . ինչու որ անկէ ենք մենք Քրիստոս Յի-
սուսով , որ ան մեզի Մատուձմէ խնամութիւն՝ արդարու-
թիւն՝ սրբութիւն՝ և փրկութիւն եղաւ » : Ին Աորնն . Ին .
29 , 30 , 31 : Այս զգալու ես թէ այնպիսի վիճակի մը
մէջ ես որ՝ աս յիշեալներէն մէկն ալ քու մէջ չունենա-
լով , ուրիշին կարօտ ես : Այսն որոյ գիտնալու ես որ
տղէտ ու յանցաւոր , ապականալ ու գերի ինկած ես .
կամ՝ ինչպէս որ մեր Տէրը կ'ըսէ քրիստոնէական դաւա-
նութիւն ունեցող մէկ քանիներուն համար , մեղաւոր ըլ-
լալով « խեղճ ու թշուառական և աղքատ ու կոյր ու մերկ
ես » : Յայտ . Գ . 17 :

5 . Այթէ աս գիտողութիւնները խորին կերպով տպա-
ւորուին մտքիդ վրայ , պատրաստ պիտի ըլլաս ընդունիլ
հիմա քեզի դուրսը : Այսն որոյ լսէ՛ համառօտ խօս-
քով մը պարտքդ՝ դարմանդ՝ ու ապահովութիւնդ՝ որ ահա
պիտի ըսեմ . « Քրիստոսի դնա , քու առջի մեղքերդ
աստիկատելով և անոնք մէկգի ձգելու հաստատ առաջադ-
րութիւնով . աս առաջադրութիւնը անոր շնորհացը զօ-
րութիւնովը բնելով , և Մատուձմէ ընդունուելու համար
քու վտահելու տեղը միայն անիկայ բնելով , ու մինչև
անգամ՝ քու վերջին կարողութիւնովդ բարիք գործել խոր-
հած՝ և խորհածդ գիտաւորութեանդ համեմատ՝ ի գործ
գրած ատենդ ալ՝ վստահութիւնդ միայն անոր վրայ դնե-
լով » :

6. Առաջին և կարևոր խրատը՝ որ կրնամ տալ քեզի քու ներկայ պարագաներուդ մէջ, աս է որ Վրիստոսի նայիս և անոր երթաս : Եւ հոս՝ մի ըսեր քու սրտիդ մէջը, « Ո՞վ պիտի ելլէ երկինքը անիկայ վար բերելու համար » . Հոտմ . Ժ . 6 . կամ թէ՛ ո՞վ պիտի զիս հոն հանէ, անոր առջևը տանելու : Մտնորնեալ « Հիսուսը, որով ամէն բան հաստատ կը կենայ », (Սող . ան . 17,) թէպէտ իր անունը կրողներուն շատերը մտցած են զինքը, բայց « մեր ամէն մէկէն ալ հետու չէ » . Գործ . Ժէ . 27 . և չէր կրնար խոստանալ ըսելով թէ՛ « Աւր որ երկու կամ երեք հոգի ժողովուած ըլլան իմ անունով, հոն եմ ես անոնց մէջը » , (Մատթ . ԺԸ . 20,) թէ որ չունենար ճշմարտապէս ան աստուածային ստուրոգելիքը, որով ամէն տեղ ներկայ է : Աստի կ'ուզե՞ս փրկուիլ՝ ո՞վ մեղաւոր : Գնա՛ Վրկին : Մուզե՞ս ազատիլ : Նայէ՛ ան մեծ Մղատչին . և թէ և յանցանքով՝ ամբողջ՝ վախով՝ կամ երկիւղով տակնուվրայ ըլլաս՝ անանկ որ չկրնաս խօսիլ անոր, ինկի՛ր անոր ոտքը աս անբարբառ շիտթու թեանդ մէջ, և նայէ՛ անոր իբրև « Մտուծոյ Գառը, որ աշխարհի մեղքը կը վերցընէ » : Հոմ . ան . 29 :

7. Վասն որոյ նայէ՛ անոր մտադ իր աչքը, և ըսէ՛ ինձի՛ անոր տեսնուածքը չե՞ղպչէր քու սրտիդ, և մինչև անգամ չե՞հալեցընէր զանիկայ : Չե՞ս զգար որ՝ ի՞նչ յիմար և ի՞նչ թշուառ արարած մըն ես եզեր դուն, որ աս քու հետեւած անարդ և աղտեղի հեշտութիւններուդ ու շահուցը համար « Ահնայ Առաջնորդը սպաննեցիր » : Գործ . Գ . 15 : Նայէ՛ ան խորին վէրքերը որ քեզի համար կրեց, քու խոցածիդ նայէ, ու անոր վրայ անշուշտ պիտի ողբաս, (Ռոմ . ԺԲ . 10,) եթէ ո՛չ քու սիրտդ քարացեալ ըլլալու է : Գործած մեղքերեդ որմն վրայ կրնաս մտածել ու ըսել թէ՛ « Մտր համար կ'ամէր իմ Վրկիչս վտայցընէլ, և Մտուծոյ Որդին այնպիսի շարձարանաց տակ ձգեւլ » : Եւ ասկէ ետքն ալ ի՞նչ մեծ փորձութիւններ կրնան դէմդ ելլել որ ըսես թէ՛ « Մտր համար իմ Տէրս կրկին խաչը պիտի հանեմ » : Եբր . Գ . 6 : Մեղաւոր՝ ապաշխարելու ես, ամէն մեղքերէ ապաշխարելու ես, և մէկգի ձգելու ես անոնք . բայց եթէ կ'ուզես աս բա-

ները ընելու մէջ անյաջող չըլլալ, աղէկ դիտեմ որ խաչին ոտքը ընելու ես անոնք : Եւ մէն ցանկութիւն զոհելու ես, մինչև անգամ քեզի ամենէն սիրելի եղածը, թէ և քեզի « աջ աչքի կամ աջ ձեռքի » պէս ըլլայ անիկայ . Մատթ . Ե . 29, 30 . և անոր համար քեզ ան սեղանին առաջնորդեցի՝ որուն վրայ « Վրիստոս իր անձը քեզի համար անուշահոտ պատարագ ու զոհ բրաւ » . Եփես . Ե . 2 . որ եթէ կարելի է՝ քաջալերութիւն առնես աս բանը ընելու : Պէտք է որ « քու անձը Եստուծոյ ընծայես » որպէս թէ մեռնիւրէն որջնցած » : Հռոմ . Կ . 13 : Եւ անոր համար քեզի ցուցուցի թէ ինչ գինով ծախու առնուեցար, ինչու որ « դուն չէ՛ թէ ապականացու արծաթով կամ ոսկիով փրկուեցար, հապա Վրիստոսի պատուական արիւնովը » որպէս թէ ամբիծ ու անարատ Գառի մը » : Ին Պիտր . Ին . 18, 19 : Եւ հիմա պիտի հարցընեմ քեզի որպէս Տէրոջը առջևը, Վու սիրող ի՞նչ կ'ըսէ ասոր : Արցախի՞ն առջի մեղքերուդ համար : Պատրանա ես անոնք մէկդի ձգելու : Պատրանա ես անոր զուարթ՝ և շնորհակալ ծառան ըլլալու, որ քեզ ծախու առաւ իր արիւնովը :

8 . Հիմա կ'ենթադրեմ թէ ասանկ ընելու խորհուրդ մը ծագած է քու սրտիդ մէջ : Մըլափ հաստատ և սրբան ազգու ըլլալը չեմ գիտեր . ասկէ ետքը ինչ տարբեր տեսութիւններ ծագիլը կամ աս ներկայ զգացումը կ'ըրբ մաշիլը չեմ գիտեր : Բայց աս աղէկ դիտեմ, որ բնաւ իրաւացի պատճառ պիտի չցանես աս տեսութիւններդ փոխելու . փասն զի ինչպէս ալ որ փոխես, « Յիսուս Վրիստոսը նոյն է երէկ ու այսօր, և յաւիտեանս » : Եփես . Ժ . 8 : Եւ ան պատճառները՝ որ հիմա քեզի կը ցուցընեն թէ զոհումն ու հաւատքը հարկաւոր և փայելուչ է, պիտի անփոփոխ մնան որքան որ Եմեոքնեալ Եստուծոյ կատարելութիւնները նոյն են, և որքան որ իր Արդին նոյն կը մնայ :

9 . Բայց քանի որ աս խորհուրդները և դիտաւորութիւնները ունին, պէտք է քեզի իմացընեմ թէ քու փրկուածութեանդ հարկաւոր եղածին ամենը աս չէ : Մէ միայն խորհուրդը ունենալու եւ, բայց՝ Եստուծոյ տուած պատահութիւնը գործածելով, մեղքին դէլութիւնը՝ և սրբ-

բուժեան հարկաւորութիւնն ու գերազանցութիւնը գլխաւոր մէկու մը պէս գործելու ալ ես : Եւ որպէս զի կարող ըլլաս ամէն բանի մէջ ասանկ գործել , նախ և առաջ և իբրև Մատուցող պահանջած մեծ և առաջին գործքը , (ինչպէս որ մեր Տէրը կ'ըսէ ,) պէտք է որ «Մատուցող խրկածին հաւատաս» . Հովհ . Գ . 29 . պէտք է որ անոր ապաւիննս . պէտք է հոգիդ Վրիստոսի ձեռքը յանձնես անկէ փրկութիւն գանելու համար՝ բուն իր «սահմանած կերպովը» : Ես է փրկարար հաւատքին մեծ գործքը , և կը ինդրեմ Մատուցմէ որ փորձով հասկընաս ու գիտնաս անոր միտքը , անանկ որ կարող ըլլաս Պօզոս առաքելոյն հետ մահը մտ սեպելով ըսել , «Գիտեմ թէ որն էմ հաւատացեր , և համոզուած էմ՝ որ իմ իրեն աւանդած բանս կրնայ պահել մինչև ան օրը» , (Ի Տիմ . ւս . 12 ,) ան մեծ որոշեալ օրը՝ որ եթէ քրիստոնեայ ենք , միշտ աչքերնուս առջևը ունինք : Ես բանին կը յորդորեմ քեզ . և ո՛հ թէ՛ քանի որ կը խօսիմ ասոր վրայով աս գիտուն և յաջորդ զլուսնեբուն մէջ , կարենայի՛ քեզի ձեռք զարնել տալ աս բանին : Եղէկ գիտցիր թէ պէտք չէ որ անմիջապէս Մատուցող երթաս՝ Սիլվանորդը զանց ընելով : Աչ Մատուցող ընդունելի է , և ո՛չ ալ քեզի ապահովութիւն՝ անոր վազելոյ , առանց իր Արդւոյն նկատում ընելու , որն որ ինքը սահմանեց որ մեղաւորները անով իրեն զան : Եւ եթէ դուն ուրիշ կերպով կ'երթաս , մեղաւոր չեղողի պէս կ'երթաս : Ինչու իսկ անոր խօսելու կերպը՝ ունեցած յանցանքդ ուրանալ մը պիտի ըլլայ . և անոր համար քեզ պիտի չընդունի , մինչև անգամ վրայ ալ պիտի չուայի : Ենոր համար մեր Տէրը վճռական կերպով ըսաւ թէ՛ «Ա՛յ կը շօրքով չգար եթէ ոչ ինձմով» : Հովհ . ԺԳ . 6 :

10 . Այնան որոյ աս փառաւոր փրկչին զնա : Ենիկայ սիրելի է ամէն հաւատացող աչքի՛ իր խաչին վրայ թափած արիւնովը , և հոն ընդունած վէրքերովը . Գնա անոր՝ ո՛վ մեղաւոր սցսոր՝ աս բոպէին , քու բոլոր մեղքերովդ : Գնա անոր աս վիճակիդ մէջ , վասն զի եթէ ընա չերթաս անոր՝ մինչև որ առաջ արդար ու սուրբ ըլլաս , անանկով ընա երբէք արդար ու սուրբ ըլլալիք չունիս .

առանց անոր՝ արդար ըլլալու ճամբայ մը ըլլալու է, որ կարենաս առ ենթադրութեամբ արդար ըլլալ . և ան առանն ալ ալ հարկ պիտի չըլլայ նորէն անոր երթալ արդարութեան ու սրբութեան համար : Հիշաւի ասիկայ ան բանին կը նմանի՝ որ մէկ հիւանդ մը բժշկին շերտայ մինչև որ իր առողջութիւնը չգտնէ : Այսն որոյ նորէն կը գրուցեմ, զնա անոր ճիշդ աս վիճակիդ մէջ՝ և բսէ, (նշ թէ աս բողբոս կարող ըլլայիր բսել քու սրտէդ,) « Ա՛յ մաննոր՛նեալ Հիսուս, անուշտ մինչև հիմա քու առջևդ գեանատարած ինկած ամենէն մեղաւոր և ամենէն թշուառ արարածներէն մէկն եմ ես . բայց սակայն քեզի կու գամ, ինչու որ լսեր եմ թէ դուն բսած ես՝ Եղէք ինձի բոլոր հոգնած ու բեռնաւորածներ, և ես ձեզ կը հանգչեցընեմ՝ : Մատթ . Ժ . 28 : Բեզի կու գամ, ինչու որ լսեցի որ դուն լսեր ես թէ, Են որ ինձի կու գայ, բնաւ դուրս պիտի չհանեմ՝ : Յովհ . Դ . 37 : Ա՛յ Խաղաղութեան Իշխան, ն՛յ փառաց թաղաւոր . դատապարտեալ թըշուառ մեղաւոր մըն եմ ես . իմ հոգիս կործանեցի, և դատապարտեալ եմ յախտեանս, եթէ չօգնես ինձի ու շփոթես զիս : Քու Հօրդ և քուկին օրէնքդ կոտրեցի . վասն զի Գուն ու Են մէկ էք : Յովհ . Ժ . 30 : Երժանի եմ բարկութեան ու դատապարտութեան . և մինչև անգամ աս բողբոս յախտնական կործանման վճար տակ եմ, մէկ կործանման մը՝ որ բոլոր քեզի դէմ ըսած նախատիքներովս կը մեծնայ, ն՛յ արինձով շողախեալ Գառն Եստուծոյ : Այսն որոյ չեմ կրնար և չեմ ուզեր ծածկել քու առջևդ, թէ քեզի դէմ անիրաւութիւն ըրի, սաստիկ անարդութեամբ և ասեբախտութեամբ քեզի դէմ անիրաւութիւն ըրի, քեզի՛ իրբև փրկիչ և իրբև Տէր : Բայց հիմա պատրաստ եմ քու առջևդ խնարհելու . և իմ խեղճ դողացող հոգիս բերի քու ձեռքդ աւանդելու, եթէ հաճիս ընդունիլ անիկայ . և եթէ չընդունիս՝ անիկայ պիտի կորսուի : Այլ Տէր՝ ահա քու ոտքիդ տակը կը կենամ, երկընցնէք քու ոսկի գաւազանդ որ ասորիմ : Լաթ . Դ . 11 : Իմէ որ թաղաւորին հաճոյ կ'երեւայ, ինչի՛րքովս իմ հոգիս ինձի տրուի՝ : Լաթ . Է . 3 : Գանձ շունիմ՝ որով ծախու առնեմ ա-

նիկայ . անանկ բան մը չունիմ որ անոր համար տամ քեզի . բայց եթէ ատ քու գթառատ սիրտդ՝ երկինքին տակը եզոզ խիստ թշուառ արարածներէն մէկը փրկելով հաճութիւն կը զգայ , ան հաճութիւնը ւհան հոռ կրնաս գանձել : Ո՛վ Տէր , յիմարութեամբ ջանացի իմ փրկիչս ես ըլլալու , բայց չյաջողիր : Գիտեմ որ աս ջանքը ունայն է , և անոր համար մէկդի կը ձգեմ անիկայ ու քեզի կը դիմեմ : Ո՛վ ամենօրնեալ Հիսուս , քու վրագ՝ կը ցանկեամ իմ խարխիս ձգել , որ ապահով ու հաստատ ես : Քու վրագ կ'ուզեմ իմ յախտնեական յոյսերս կանգնել , իբր մի միայն ապահով հիմն : Քու սորվեցուցածներն էլ կ'ուզեմ նազանդիլ , ո՛վ Տէրոջը անսխալ Մարգարէն , թէ և քու վարդապետութիւններդ շատ խորին ալ ըլլան , բաւական է ինձի որ դո՛ւն զուցեցիր անոնք : Քու ըրած քառութեանդ՝ նազանդութեանդ՝ և բարեխօսութեանդ կ'ապաւինիմ՝ ո՛վ սուրբ և միշտ ընդունելի Քահանայապետ : Եւ քու կառավարութեանդ կամուօր և զուարթ նազանդութիւն կ'ընեմ՝ ո՛վ բարձրեալ Գերագոյն Իշխան . 'ի նշան սիրոյ և յարգութեան՝ Որդին կը համբուրեմ' . Սող՝ Թ . 12 . անոր ոտացը առջևի զետինը կը համբուրեմ : Ա՛րնդունիմ քեզ՝ ո՛վ իմ Փրկիչս , և անպատմելի ուրախութեամբ սրտիս մէջի աթոռը քեզի կու տամ նստելու : Բազմէ հոն , և թաղաւորէ՛ յախտեանս : 'Կուածի՛ն թշնամիներս՝ ո՛վ Տէր , քանզի անոնք քու թշնամիներդ են . և զիս քու հաւատարիմ ու նախանձաւոր ծառանդ բրէ , հաւատարիմ մինչև 'ի մահ և նախանձաւոր յախտեանս' :

11 . Եսանկ ըլլալու են քու սրտիդ խօսքերը Տէրոջը առջևը : Բայց յիշէ՛ նաև թէ բոլոր վարքդ ալ ասոնց համաձայն ըլլալու է : Շրթունքներուն խօսքերը ասանց սրտանց պնդակս դիտաւորութիւն ունենալու , ունայն ծաղրաբանութիւն են : Միտոյ խիստ բորբոքեալ եռանդը յարդի յանկարծ փայլող մէկ բոցին նման պիտի ըլլայ անոր սեղանին վրայ , փոխանակ անուշահոտ խունկի : Ելայտիս խոնարհութիւնով , պայտիս սիրով , պայտէս սրտանց ինքզինքդ նուիրելով և հոգիդ անոր յանձնելով՝ յաճախակի քու անձդ Քրիստոսի առջևը տարածելու ես . և

վերջը մէկդի երթալու եւ անիկայ քու աչքիդ առջևը պահելով . մէկդի երթալու , և անոր միջոցովը Մատուծոյ ապրելու եւ , “ամբարշտութիւնը ու աշխարհային ցանկութիւնները ուրանալով , և զգաստութիւնով ու արդարութիւնով և բարեպաշտութիւնով ապրելով աս” ունայն ու խաբերայ “աշխարհիս մէջ” : Տ՛իք . Թ . 12 : Ա՛նձ հոգ պէտք է ունենաս քու սէրդ Ֆազանդութիւնով ցուցնել . կարելի եղածին շափ ինքզինքդ Յիսուսի բնութեանն ու վարքին յարմարցնելով , որուն դուն կը հաւատաս : Քու կենացդ մեծ նպատակը ընելու եւ Քրիստոսի կենդանի մէկ պատկերը ըլլալ , որ ասկէ աւելի ազնիւ նպատակ մը չես կրնար ունենալ , անանկ որ՝ մինչև անգամ անոնք որ անոր վրայովը շատ լաւ կամ կարդացած չեն , պարագաներուն ներածին շափ , քեզի նայելով շափով մը տեսնեն և զիտնան թէ Յիսուսի վարած կեանքը ի՞նչ տեսակ կեանք մըն էր : Այս ասիկայ ըլլալու է քու մշտապէս հոգդ և քու տիրող բնաւորութիւնդ , որքան որ կ’ապրիս : Անոր ետեւէն երթալու ես՝ ուր որ քեզ տանի . խաչդ ուսիդ վրայ բեռցած երթալու եւ , երբոր անիկայ պատուիրէ քեզի “խաչդ վերցնել” . Մատթ . ԺԳ . 24 . և այսպէս մինչև ՚ի մահ հաւատարիմ եղիք , յուսալով “կենաց պսակը” առնել : Յայտ . Թ . 10 :

12 . Ասիկայ է՝ որքան որ կարող եղած եմ Մատուծոյ խօսքէն սորվել , ապահովութեան և փառքի տանող ճամբան . ամենէն ապահով և մի միայն ճամբան , որ կրնաս բռնել : Ասիկայ ան ճամբան է , որմէ Քրիստոսի ամէն հաւատարիմ պաշտօնեան անցած է ու կ’անցնի . և ան ճամբան՝ որուն՝ ուրիշները առաջնորդելու է , թէ որ ինք իր հոգւոյն փրկութիւնը կ’ուզէ : Չենք կրնար և չենք ուզեր ո՛չ մեզի և ո՛չ մեր սիրելի բարեկամներուն համար փոփոխութիւն մը ընել աս բանին մէջ : Արքան որ մեր դատումը կը սորվեցնէ՝ ասիկայ ան ճամբան է որ միայն անով ամենօրնիս Մատուծոյ կը վայլէ՝ իր ապստամբ ծառաները փրկել : Այս աս պատճառաւ՝ ո՛վ ընթերցող , կ’աղաչեմ և կ’աղերսեմ քեզի սրաի մտօք՝ որ քննես անիկայ . և թո՛ղ քու խղճմտանքդ պատասխան տայ որպէս թէ Այս

տուծոյ առջևը , թէ յօժարութեամբ կ'ընդունի՞ս անիկայ թէ չէ : Բայց գիտցիր որ անիկայ մերժելը քու յախտնանական մահոյ է : Այն զի՛ ինչպէս որ « անկէ 'ի զատուրիչ անուն մը չկայ երկիրնին տակը մարդուս տրուած , որ անով կարող ըլլանք փրկուիլ » , (Վորժ . 4 . 12 ,) բայց միայն աս Նազովրեցի Հիսուսին անունը , անանկ ալ չկայ մէկ ուրիշ կերպ մը ասկէ 'ի զատ , որ անով Հիսուս մեզ փրկելու հաճի :

Միշտ-որը ինչ որ թէ փրկութեան աս համբուն բռնելու շնորհ :

Խորհէ՛ սիւ իմ հոգիս , ի՞նչ պատասխան պիտի տաս աս առաջարկութիւններուն : Անշուշտ եթէ աս ապակուանալ և անարգ սրտիս առաջին գրուցածը ըսելու ըլլամ , աս պիտի ըլլայ պատասխանս . « Խիստ է ատ խօսքը . սիւ կրնայ ատոր մտիկ ընել » : Հովհ . 4 . 61 : Ի՞նչ . այսպէս խոնարհիլ , այսպէս ընկճիլ , այսպէս նուաճիլ՞ : Այնպիսի լուծ մը առնել վրաս , և որքան որ սպրիմ աշիկայ կր՞ : Ամէն սիրելի ցանկութիւն մէկդի՞ ձգել , թէ և աջ աչքի պէս ինծի սիրելի , և ըստ երևութին աջ ձեռքի պէս հարկաւոր : Միջ միայն կեանքս՝ այլ սիրտս ալ Հաղանդեցընել ուրիշ մը հրամանին և կառավարութեանը : Ա՛յ կ տէր մը ունենալ սրտիս մէջ , և այնպիսի տէր մը որ իմ սիրելի կիրքերէս շատը պիտի սանձահարէ , և անոնք բոլորովին ուրիշ ճամբու պիտի դարձնէ . մէկ տէր մը՝ որ իր պատուիրանքներուն էութիւնը կը ցուցնէ՛ խաչը վերցընել ու իր հտակէն երթալու խօսքովը : Աստուածապաշտութեան և զգաստութեան , արդարութեան և ճշմարտութեան խիստ կանոններուն հետեիը . անոնցմէ ամենեկին շտտորելով ի՞նչ և իցէ պարագայի մէջ՝ թէ՛ մեծ և թէ՛ փոքր , ի՞նչ և իցէ փորձութեան տակ , ի՞նչ և իցէ օգուտի համար , կամ թէ և մեծ դժուարութենէ կամ չարիքէ մը փախչելու համար ալ ըլլայ , սիւ մինչև անգամ եթէ կեանքը պաշտպանելու համար ալ ըլլայ , այլ նաև Նախախնամութիւնը կանչած ատենը՝ այնպէս գործել՝ որպէս թէ ես իմ անձս ատէի : Վո՛ւ ! . Ժ4 . 26 : Տէ՛ր՝ խիստ է աս բանը մարմինին ու արիւնին . և սակայն

կ'իմանամ և կը զգամ թէ ասկէ խիտ պահանջմունք մըն ալ կայ :

Ես ամէն նախազգուշութիւններով , աս ամէն դառնութիւններով ալ՝ բնութեանս հպարտութիւնը մէկ ներքին աղբիւր մը պիտի գտնէր հաճութեան , եթէ միայն կարենայի ներսիդիէս խորհիլ՝ թէ ևս եղայ իմ փրկիչս , թէ իմ իմաստութիւնս ու իմ խորհուրդս կոտորոց թշնամիին կապերն ու շղթաները , և թէ ևս իմ գանձերէս տուի ան գինը՝ որով իմ փրկութիւնս ծախու առնուեցաւ : Բայց ընդհակառակն՝ պէտք է որ ուրիշի մը առջևը կենամ՝ յանցաւոր և դատապարտեալ , տկար և անօգնական : Այլ պէտք է որ , երախտապարտութիւնը բազմապատկուի վրաս , և Միջնորդի՞ մըն ալ երախտազիտութիւն պարտաւորիմ : Պէտք է որ խաչի՞ն երթամ իմ փրկութեանս համար , և իմ փառքս անոր վատ անունէն փնտռեմ : Պէտք է որ ամենեկին՝ արդարութիւն ունիմ՝ ըսելու բան մը շինեմք քոյս , և աս նկատմամբ ամենամոլի մարդոց հետ հաւասար ըլլամ , դատաստանի ատեանին մէջ ամենէն եղեռնագործներուն մէջ կայնիմ՝ անոնց հետ՝ յանցաւոր եմ ըսելով , և ազատութիւն փնտռեմ շնորհաց ան նոյն գործքովը՝ որով անոնք ազատեցան :

Չեմ համարձակիր ուղղակի՝ Ես կերպը անպատշաճ է ըսել : Խղճմունքս կը վկայէ թէ մեղք գործած եմ , և չեմ կրնար արդարանալ Եստուծոյ առջևը իբր անմեղ և անօգնող ծառայ : Խղճմունքս կ'ըսէ ինձի՝ թէ բոլոր աս խոնարհեցուցիչ պարագաները իրաւացի են , և պատշաճ է որ յանցաւոր եղած մէկը ծնկան վրայ զայ , և բռնուած ապստամբը զինութեան վրայ , և իր իշխանին առջևը խոնարհի , եթէ կեանքը փաստը կ'ուզէ : Եսն՝ բանականութիւնս խղճմունքիս հետ մեկտեղ կ'ըսէ թէ՛ եթէ երբէք փրկուիլ ըլլայ ինձի , յարմար է և հարկաւոր է որ ինչպէս մեղքին դատապարտութենէն , անանկ ալ անիկայ սիրելէն և անոր իշխանութենէն փրկուիմ . և եթէ յախտնական մահուան արժանի ըլլալէս ետքը՝ Եստուծոյ մեծ ողորմութիւնը ինձի նոր կեանք մը կու տայ , շատ կը վաղէ որ « ինքզինքս Եստուծոյ ընծայեմ որպէս թէ մեռելներէն ողջնցած » : Լուով . Գ . 13 : Բայց « ևս

մէկ խղճալի մարդ մըն եմ . օրէնք մը կը տեսնեմ իմ անդամներուս մէջ՝ որ իմ մտքիս օրէնքին դէմ կը պատե-
 րազմը՝, (Հոգի . Է . 23, 24,) և բանականութեանս
 ու խղճնոանքիս կը հակառակի : Ո՞վ պիտի ազատէ զիս
 աս գերութենէն : Ո՞վ պիտի յօժարեցընէ զիս ան բանը
 ընելու , որ իմ հոգիիս մէջ կ'իմանամ թէ ամենէն պատ-
 շած է : Ո՞վ Տէր , նուաճէ՛ իմ սիրտս , և թող ասանկ
 զօրաւոր կերպով մէկզի չքաշուի , քանի որ մտքիս
 բարձրագոյն կարողութիւնները զինքը ուրիշ ճամբու մը
 կ'ուզեն ուղղել : Հաղթէ՛ ներսիդիս եղած ամէն մոլե-
 կան սկզբունք , որ ինծի ուրախութիւն ըլլայ այնպէս ի-
 մաստութեամբ կատարուիր ու սանձուիր : Կանա-
 կանութիւնը՝ հպարտութիւնս , ան տիրապետող ազա-
 կանութիւնը՝ որ շատ անվայել է ինծի պէս ազգատապած
 և դատապարտեալ պարսածի մը , որպէս զի քու բացած
 փրկութեան ճամբադ այնքան սիրելի ըլլայ ինծի՝ որ քան որ
 խոնարհեցուցիչ է : Հակամխտութիւն մը կը զգամ
 Սողոմոն մէջ տնտնալու , բայց ողորմած եղիր ինծի , և
 դուրս հանէ զիս անկէ , (Օճնդ . Ժ . 16 ,) զեռ քու բո-
 ցափառ բարկութեանդ փոթորիկը վրաս չեկած՝ և բանը՝
 փախելու ճամբայ չգտնուելու աստիճանին չհասած :

ԳԼՈՒԽ Ժ

Իշտանդան յորդոր ին և լուխանյանս Դղլաւորին՝ որ աս Յամ-
 Բով փրկութի :

1 . Եւ ատ հեղ տեսեր եմ որ շատերը մինչև աս կէտս
 համոզուեր և շատ ալ ներգործուած են (եթէ դատենք
 շատ զօրաւոր երևոյթներէն) , բայց և այնպէս վերջը ունե-
 ցած համոզումնին անցեր և կրած ներգործութիւննին ան-
 յայտ է եղեր : Երտարուստ փորձութեան մէկ ձախող
 դէպքը միշտ միանալով փրկութեան աս սուրբ և խոնար-
 հեցուցիչ կերպին դէմ՝ դեռ չարացած սրտին ունեցած
 դժկամակութեանը հետ , շատերուն կործանուժը եղած
 է : Իւ սասնկները « խտացած են մեղքին խաբէու-
 թիւնովը » , (Եբր . 4 . 13 ,) ան աստիճան՝ մինչև կ'ե-
 րևան որ « կորսուած են և բժշկութիւն պիտի չզտենն » :
 Եւս . իթ . 1 : Իւ անոր համար՝ ի վ անմահ արարած ,
 որ հիմա աս խօսքերս կը կարդաս , կ'աղաչեմ՝ քեզի , որ՝
 քանի որ իրերը անանկ վիճակի մը մէջ են որ քիչ մը մէկ
 կամ միւս կողմին տեղի տալով զ բանդ շատ դէշ կամ շատ
 աղէկ պիտի ըլլայ , քանի որ միտքդ իր խորհուրդներովը
 կը տատանի ան փառաւոր Եւետարանը ընդունելուն ու
 մերժելուն մէջտեղը , որն որ հաւատարմաբար քու առջևդ
 դրի , մէյնալ ինծի մտադիր ունկնդրութիւն ըրէ՝ երբոր
 հիմա փաստաբանութիւն կ'ընեմ՝ Կստուծոյ կողմէն ը-
 սեմ , կամ յաւետ քու կողմէդ . և երբոր « Վրիստոսի
 կողմանէ դեպանութիւն կ'ընեմ » , իբրև թէ Կստուած կը
 բարեխօսեր ինձմով , կ'աղաչեմ՝ քեզի՝ Վրիստոսի կողմա-
 նէ , հաշտուէ՛ Կստուծոյ հետ » , (Է Սորմբ . Ե . 20 ,) և
 այսքան արթնութիւններէն ու հարցափորձներէն ետքը՝
 Կստուծոյ քու վրադ ունեցած գորովալից խորհուրդը մի՛
 մերժեր յիմարութեամբ , որ ետքը ան յիմարութեան վրայ
 ողբալը անշուշտ թշուառ յախտենախանութեան մը ցա-
 ւալից գործքը պիտի ըլլայ քեզի :

2. Յիրաւի մէկը պիտի սեպէ թէ հոս թախանձանաց կարօտութիւն չկայ : Պիտի սեպէ թէ երբոր կցրտուող մեղաւորներուն կը զրուցուի թէ բարկացեալ Մատուածը պատրաստ է հաշտուելու , թէ կատարեալ թողութիւն կը դնէ անոնց առջևը բոլոր իրենց մեծամեծ մեղքերուն համար , այն՝ երբ կ'ըսուի թէ պատրաստ է անոնք հիմա ընդունիլ իր ընտանիքին մէջ , որ վերջապէս կարենայ ընդունիլ զանոնք իր երկնային ներկայութեանը մէջ , անոնք ամենն ալ անմիջապէս պէտք է որ ամենայն պատրաստութեամբ և հաճութեամբ ընդունին այսպիսի պատգամ մը , և անոր ոտքը իյնան զարմացման՝ երախտագիտութեան՝ և ուրախութեան անբարբառ նշաններովը : Բայց աւանդ , շատ տարբեր կը գտնենք բանը : Շատերը կը տեսնենք որ բոլորովին անզգայ կը կենան . և շատերուն ալ միայն տկար ու վաղանցիկ ներգործութիւն մը կ'ընէ : Արդէս զի ըլլայ թէ քեզի ալ այնպէս ըլլայ՝ ս'իլ ընթերցող , քեզ կը յորդորեմ թախանձանօք որ ընդունիս աս պատգամը որն որ ինձի յանձնուած է . կ'աղաչեմ՝ քեզի հաշտուէ՛ Մատուծոյ հետ , և ընդունէ՛ թողութիւնն ու փրկութիւնը ան ճամբով՝ որով ասանկ ձրի քու առջից կը դրուի :

3. Ա'աղաչեմ՝ քեզի ան Մատուծոյն մեծութեամբը՝ որուն անուծովը կու գամ . որուն ձայնը կը լեցընէ բոլոր երկինքը յարգութեամբ և նազանդութեամբ : Ենիկայ պարսպ տեղը չխօսիր հրեշտակաց լէզեռններուն . բայց՝ եթէ ան օրհնեալ հողիներուն մէջ վէճ մը ըլլալ կարելի ըլլայ , սա բանին համար պիտի ըլլայ՝ թէ ս'իլ առաջ պիտի կատարէ անոր հրամանը : Ա՛հ , թ'ս'իլ պարսպ տեղը չխօսի թշուառ մահկանացուի մը : Ա'աղաչեմ՝ քեզի անոր բարկութեան երկիւղներովը , որ կրնար խօսիլ քեզի որոտմունքով , որ կրնար՝ իր լոկ կամելովը քու աս անհաստատ կեանքդ կտրել ու քեզ դժոխք խրկել : Ա'աղաչեմ՝ քեզի անոր ողորմութիւններովը՝ անոր քաղցր ողորմութիւններովը , անոր զթութեան աղիքներովը , որ տակաւին քու փրագ կը մոքմքի , իրբև ծնողքի մը աղիքները իր « սիրական գաւկին » վրայ , իր անուշիկ փափուկ որդւոյն վրայ , որ՝ անոր առջի սպերախտ ապստամբութիւնը իր

մոռնալով , “ շարունակ զանիկայ կը յիշէ ” : Աբե՛ժ . լն . 20 : Ա՛աղաչեմ՝ քեզի բոլոր անոր հայրական բարութիւնովը , որ չպարտաւորես զինքը՝ որպէս զի քաղցր ծնողքի մը բնութիւնը ձգելով անաչառ դատաւորի բնութիւնը ձեռք առնէ , անանկ որ՝ ինչպէս ինքը կը սպառնայ անոնց որոնք ինք ատեն մը իր որդիներն ու աղջիկները կռչէր էր , “ իր բարկութենէն կրակ վառի , ու դժոխքին մինչև ներքին տեղուանքը այրէ ” : Ի (Օրէն . լն . 19-22 :

4 . Ա՛աղաչեմ՝ քեզի նաև քու մեռնող վերջիդ անունովն ու սիրովը : Ա՛աղաչեմ՝ քեզի անոր մարդեղութեանը բոլոր խոնարհութիւններովը , անոր աղքատութիւնովը որն որ կամաւ յանձն առաւ , “ որ դուն հարստանաս ” յախտնական զանձերով . Ի Աբե՛ժ . լն . 9 . ան ամեն բարեշնորհ հրաւերներովը որոնք ինքը ըրաւ , ու տակաւին կը շէնն իր խօսքին մէջ , և տակաւին իր սրտէն ջերմութեամբ ելլելով “ մեղքէն ու խորխոխէ կաթած մեղքէն անուշ են ” : Առդ . ժԹ . 10 : Ա՛աղաչեմ՝ քեզի անոր գոցութեան և սքանչելեացը բոլոր փառաւոր գործքերովը , որոնք սիրոյ գործքեր ալ էին : Ա՛աղաչեմ՝ քեզի անոր յիշատակութիւնովը , որ ամենէն սիրելի անձը և մարդուս ամենէն ազնիւ բարեկամն է : Ա՛աղաչեմ՝ քեզի անոր քաշածներուն յիշատակութեամբը , և ըսածներուն ու ըրածներուն յիշատակութեամբը . ան մահուան տաղնապովը որ պարտէզին մէջ քաշեց՝ երբոր իր մարմինը “ արիւնի կաթիլներով ” ծածկուած էր : Առդ . ին . 44 : Ա՛աղաչեմ՝ քեզի ան ամեն վշտազին տառապանօքը որ զցայ , երբոր իր ամենասիրելի բարեկամները “ թողուցին անիկայ ու փախան ” , (Առդ . ին . 56 ,) և իր արիւնտխանձ թշնամիները քաշքըշեցին տարին զինքը՝ ամենացած զերթի և ամենամոլի եղեռնագործի մը պէս : Ա՛աղաչեմ՝ քեզի ան հարուածներովն ու ջախջախուած անդամներուն ցաւերովը , ան զարկուածներովն ու խարազանի ծեծերովը , որոնք սա վշտացեալ Նոյսը ինչպէս քաշեց երբոր անոնց ապստամբ ձեռքն էր , և թուրնը շուն ամօթովը , որմէ չժամկեց ան բարեբար և պատկառելի դէմքը : Առդ . ժ . 6 : Ա՛աղաչեմ՝ քեզի ան կարմիր վերարկուովը՝ եղէզովը՝ և փուշերէ թագովը՝ որոնք սա վառաց (մազաւորը հագաւ որ

մեզ երկնից իշխաններուն հետ նստեցընէ : Սող . Ճժ Գ . 8 : Ա՛աղաչեմ՝ քեզի խաչին ծանր բեռովք , որուն տակը հեծելով վաստակեցաւ՝ և նուաղեցաւ Վոդգոթայի տխուր ճամբուն վրայ , (Յո՛ւճ . ԺԺ . 17 ,) որպէս զի մեզ ազատէ մեր մեղացը բեռէն : Ա՛աղաչեմ՝ քեզի ան անդութ գամերուն յիշատակովք , որ իր սուրբ նեոացն ու ոտքերուն երակներն ու շնչերակը , ջիզերն ու ձգանքը ծակեցին . և ան անպարտելի և յաղթող բարութիւնովք՝ որ մինչդեռ երկաթը իր մարմինը կը ծակէր՝ «[՛] սյր թողութիւն տուր ատոնց , ինչու որ շն դիտեր ի՛նչ կ'ընեն՝՝ գոչել տուա : Ղ . Ի . Ի Գ . 34 : Ա՛աղաչեմ՝ քեզի ան անպատմելի տաղնապովք որ քաշեց՝ երբոր խաչը ելաւ , և հոն ցաւալի կերպով վեց ժամ տարածեցաւ , որ սիրտդ բանաս ուշադրութիւն գրաւող ան մեծ ազգեցութիւններուն՝ որոնք «[՛] շատերը անոր քաշած՝ են : Յո՛ւճ . ԺԻ . 32 : Ա՛աղաչեմ՝ քեզի ան ամէն նախասիրք ու ծաղբարանութիւններովք՝ որոնք «[՛] փառաց Տէրը քաշեց հոն՝ , (Սաոր . ԻԷ . 29-44 ,) և ան սաստիկ ծարաւութիւնովք՝ որուն համար քացախէն զատ սիրտում մը չունէր . Յո՛ւճ . ԺԺ . 28 , 29 . ան ցաւագին և զարմանալի աղաղակովք՝ որ [՛] որը Սիածնին բերնէն լսուեցաւ թէ «[՛] Մտուած իմ՝ Մտուած իմ , ինչու զիս թողուցիր՝ : Սաոր . ԻԷ . 46 : Ա՛աղաչեմ՝ քեզի ան շնորհքովք՝ որ նազանդեցուց և թողութիւն տուա մեռնող շարագործին . Ղ . Ի . Ի Գ . 42 , 43 . մեղաորներուն և քու վրադունեցած ան զթութիւնովք՝ որ կը գործէր իր սրտին մէջ որքան ժամանակ որ հոն կենսական շարժումը կը տէր , և որն որ ետքն ալ չմերձացաւ՝ երբ «[՛] ըսաւ . Մէն բան կատարուեցաւ ու զլուխը ծռելով՝ հոգին աւանդեց՝ : Յո՛ւճ . ԺԺ . 30 : Ա՛աղաչեմ՝ քեզի ան յաղթական յարութիւնովք , որով «[՛] Որդի Մտուծոյ յայնուեցաւ զօրութեամբ՝ . և սրբութեան [՛] ողիովք որ ան յարութիւնը կատարելու համար գործեց . [՛] ու՛ով . ան . 4 , 5 . ան բարեշնորհ քաղցրութեամբը՝ որ բոլոր ան յաղթութիւններուն հետ խառնեց , երբոր իրեն այնչափ տմարդութիւն ցուցընող աշակերտներուն համար գրուեցեց անոր՝ որմէ եօթը դե հաներ էր , «[՛] Վնա եղբայրներուս , և ըսէ՛ անոնց . Այս կ'ենքեմ

իմ ²օրս քովը ու ձեր ²օրը քովը, և իմ Մատուծոյս քովը ու ձեր Մատուծոյն քովը՝ : (Յովհ . ի . 17 : Մաղաչեմ քեզի ան խոնարհութեամբը՝ որով (Թովմասին զրուցեց՝ երբոր իր անհաւատութեամբը այնպիսի անտեղի խնդիրք մը ըրեր էր, « Մատդ հոս բեր, և նայէ՛ իմ՝ ձեռքերս, ու բեր քու ձեռքդ՝ և իմ կնոջս խօթէ, ու մի ըլլար անհաւատ՝ հապա հաւատացեալ՝ : (Յովհ . ի . 27 : Մաղաչեմ քեզի իր ժողովուրդին վրայ ունեցած ան ազնիւ և հաւատարիմ խնամքովը, որն որ իր հետը փառաց սահմաններուն մէջ տարաւ, և որն որ « ²ողին Սուրբ՝ հոս խրկել տուաւ՝ ան հրաշագործ պարզեւներուն անչափ առատութեամբը, իր փրկարար բանին տարածութեանը համար : (Գործ . ք . 33 : Մաղաչեմ քեզի ան զթութեան և զօրութեան ձայնովը՝ որով կանչեց Պօղոս առաքեալին « Սաւուղ Սաւուղ՝ ինչ՞ուզես կը հարածես՝ քանի որ դեռ անիկայ իր եկեղեցիին մնաս կու տար, (Գործ . թ . 4,) ան ազնիւ բարութիւնովը որով խնայեց ան գեախնը ինկած թշնամիին՝ երբոր իր ոտքը ինկաւ գողալով, և զանիկայ այնպիսի բարձր աստիճանի մը հանեց որ « երեւելի առաքեալներէն բանով մը պակաս չզանուեցաւ՝ : ք Սորնի . Ժք . 11 : Մաղաչեմ քեզի ան ամէն բաներուն յիշատակութեամբը՝ որ Վրիստոս մինչև հիմա ըրած է իր ժողովուրդին համար, և ան ամէն բաներուն ակնկալութեամբը որ ասկէ ետեւ ալ պիտի ընէ անոնց համար : Մաղաչեմ քեզի իր շնորհաց զաւազանովը, և միանգամայն իր արդարութեանը ան սուրովը՝ որով բոլոր իր անուղղայ « թշնամիները՝ պիտի « սպաննուին իր առջևը՝, (Ղուկ . ԺԹ . 20,) որ աս ծանրագին վայրկեաններուն հետ չխաղաս և քանի տեղ չընելով պարսպ չանցընես՝ քանի որ անոր ²ողին այս կերպով կը շնչէ քու վրայ . որ չկորսնցընես մէկ պատեհութիւն մը՝ որն որ կրնայ ըլլալ որ բնաւ ետ չզատնայ նորէն, և որուն արդիւնաւոր կերպով՝ ի գործ ամէլէն կախում ունի քու յստիտենականութիւնդ :

5 . Մաղաչեմ քեզի զթութեան ամէն ան աղիքներովը՝ որ պարտական ես Վրիստոսի հաւատարիմ պաշտօնուններուն, որոնք կ'ուսանին և կ'աշխատին, կը քարոզեն ու

կ'աղօթեն , ժամանակինն կ'անցընեն , ուժերնին ու շունչերնին կը հատցընեն , և շատ հաւանականաբար կեանքերնին կը կարճեցընեն քու հոգւոյդ և քու հոգւոյդ պէս հոգիներուն փրկութեանը համար : Ա'աղաչեմ՝ քեզի ան սիրով՝ որով բոլոր մեր Տէր Յիսուս Քրիստոսը անկեղծութեամբ սիրողները կը ցանկան քեզ անոր դարձած տեսնել : Ա'աղաչեմ՝ քեզի կենդանիներուն բարեկամութեամբը և մտեալներուն յիշատակութիւնովը , իրենց օրերը պարապ տեղը անցընող և իրենց մեղքերուն մէջ կորսուողներուն կործանումովը , և Վետարանը ընդունողներուն ու անով փրկուողներուն երջանկութիւնովը : Ա'աղաչեմ՝ քեզի ան երևելի "օրուան" մեծ ակնկալութեամբը , "որ տտեն Տէր Յիսուսը երկինքէն պիտի յայտնուի" . ք թՎԻ . Կ . 7 . քայքայուող աշխարհին ահերոյց . ք ՊԻԿ . Գ . 10 . "հրէշտակապետին փողին ձայնովը" . Կ թՎԻ . Գ . 15 . և ան անհունապէս առաւել ահաւոր վճռոյն ձայնովը , թէ "Եկէ՛ք իմ շօք օրհնածները" , և "Մէկդի դացէ՛ք ինձմէ անիծեալներ" , որով ան մեծ ու ահաւոր հանդէսը պիտի վերջանայ : ՄԿԿԻ . ԻԵ . 34 , 41 :

6 . Ա'աղաչեմ՝ քեզի վերջապէս քու պատուական և անմահ հոգիովց . մահուան անկողինը իյնալուդ կամ յանկարծական կերպով ան անտեսանելի վիճակին փոխուելուդ ստուգութիւնովը , և աս խորհուրդովը թէ՛ ան ատենը՝ երբոր մարմինդ ու սիրտդ կը նուաղին պիտի ուզես մտիթարութեան մէկ կայծ մը զգալ քու հեռացող հոգւոյդ մէջ : Ա'աղաչեմ՝ քեզի Քրիստոսի ատեանին ստջեր անձամբ երևնալովդ , (վասն դի անձամբ երևնալ մը պիտի ըլլայ՝ մինչև անգամ անոնց համար , որ հիմա ամբողջութեամբ վրայ կը նստին ,) երանելիներուն բոլոր ինդութիւններովն ու դատապարտեալներուն բոլոր ցաւերովը , որոնցմէ կամ մէկը կամ միւսը քու յախտնական բաժինդ պիտի ըլլայ : Միրով կ'աղաչեմ՝ և կ'աղերսեմ՝ քեզի աս ամէն խորհրդածութիւններուն ուժովը մեկտեղ , որովհետեւ պատասխան պիտի տաս ինձի , որ կարելի է ան օրը քեզի դէմ վիպութիւն տալու պիտի կանչուիմ , (և որ անպատմելի կերպով աւելի մեծն է ,) որովհետեւ պատասխան պի-

տի տաս խղճմաններդ , և պատասխան պիտի տաս յախտեանական Վատասորիդ , կ'ազաչեմ որ աս խորհուրդները՝ աս մտածութիւնները՝ և աս հոգերը մէկդի չնեանս , մինչև որ բանը աղէկ վախճանի մը բերես , մինչև որ Վրիստոսը և անոր սահմանած փրկութեան ճամբան վճարար ընտրես , և բոլոր սրտով ինքզինքդ Մատուցոյ նուիրես յախտեանական ուխտին կապերովը :

7 . Այս ահա պսակս՝ բանը քու առջևդ և Տէրոջը առջևը կը ձգեմ : Վեզի ըսի իմ պատգամաւորութիւնս . իմ դեսպանութիւնս կատարեցի : Ասոնցմէ զօրաւոր փաստեր չեմ կրնար բանեցընել . ասոնցմէ աւելի սիրուն և աւելի ահաւոր խորհրդածութիւններ չեմ կրնար ազգել : Այսն որոյ ընտրէ՝ թէ քու՞ հաղած պիտի երթամս անոր ոտքը ինչաւո՞ր որ հիմն քեզի կը խրկէ աս խաղաղութեան և թողութեան առատաշնորհ պայմանները . կամ թէ մէկդի պիտի ձգես մինչև որ սուրը ձեռքը երևնայ հաշիւ տեսնելու քեզի հետ՝ ըրած ապստամբութիւններուդ ու յանցանքներուդ համար , և անոնց վրայ աս իմ դեսպանութիւնս ալ գանցընելուդ համար : Այս աղէկ կողմը կը յուսամ . և չեմ կրնար հաւատալ թէ աս սիրոյ աշխատութիւնս այնքան անցաջող պիտի ըլլայ՝ որ մէկ հոգի մը Վրիստոսի ոտքը չքերէ անկեղծ շաղանդութիւնով և խնայահաւատքով : Այսն որոյ «ձեր հետը խօսքեր ստէք , ու Տէրոջը դարձէք» . Ո՞ւր . ԺԳ . 2 . և երանի թէ ան բաները՝ որ ասկէ ետքը պիտի խօսիմ , գոնէ ըստ իմաստին՝ իւրաքանչիւր ընթերցողին բուն խօսքերն ըլլային :

Միւլտասորը ինչպէ՞նի՞ աս ազաչանելիքուն , և Վրիստոսով իզած ժրխաւիւնը ընդունից ինչոյսնէ :

Ո՞վ ամենօրնիւսը Մատուած , բաւական է . շնտ է : Անշուշտ հարկ չէ այնքան զանազան փաստեր , այնքան համոզանայ թախանձանքներ՝ զիս երջանիկ ընել ջանալու , թողութիւն՝ կեանք՝ յախտեանական փառք ընդունիլ յորդորելու : Ո՞վ դթառատ Ֆրկիլի , հոգիս շաղանդեցաւ . անանկ որ կը յուսամ թէ քու նեղութեանդ խօսքերը իմ զղջմանս խօսքերը եղան , և կրնամ ըսել թէ՛ «Միբոս մտնի պէս եղաւ , հալեցաւ փորիս մէջը» : Ստուլ . իր . 14 :

Ո՛վ բարեշնորհ փրկիչ , արդէն շատ երկար ժամանակ քեզ ձգած եմ : Եւ շատ անգամ քեզ վշտացուցած եմ . իմ յանցանքովս ու անզեղութեամբս քեզ կրկին խաչը հանած եմ , իբր թէ հաճութիւն մը կը գգայի քեզ խայտառակելով : Աբբ . 4 . 6 : Բայց սիրտս հիմա քու առջև կը խոնարհի անկեղծ նազանդութիւնով : Չեմ փափաքիր ուրիշ պայման ընել քեզի հետ՝ բայց միայն աս , թէ բողբոջին քուկը ըլլամ : Չուարթութեամբ կը ներկայանամ քու առջև անգիր տախտակով , ազաւելով որ քու կամեղ ինչ ըլլալը գրես անոր վրայ : Սորմեցո՛ւր ինձի՝ ո՛վ Տէր , ինչ որ կ'ուզես որ ես ընեմ . վասն զի կը ցանկամ որ սորվիմ համարս , և անանկ սորվիմ որ կատարեմ : Աթէ իմ տկար զօրութիւններուս կարողութենէն վեր ըլլայ , կը յուսամ որ դուն ինձի աւելի զօրութիւն պիտի տաս . և ան զօրութիւնովը քեզի պիտի ծառայեմ : Ո՛հ՝ ընդունէ՛ ան հոգին որ դուն յօժարեցուցիր անիկայ՝ քուկինդ ըլլալու :

Աչ ևս՝ ո՛վ ամենօրնեալ Յիսուս , ոչ ևս հարկաւոր է որ ազաւես և աղերսես ինձի : Թայտուութիւն ըրէ ինձի յաւէտ՝ որ ես քեզի խօսիմ կորսուող մեղաւորի մը բողբոթախանձանքներովը , որ վերջնապէս կը տեսնէ և կը գիտնայ թէ « ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ » : Պորթ . 4 . 12 : Թո՛ղ տուր ինձի հիմա Տէ՛ր , որ դամ և քու ոտքի իյնամ՝ իբրև դուրս ձգուած անօգնական մէկը , որ ուրիշ տեղ պատուարան չունի , բայց միայն քու բարեշնորհ զթութեանդ տակը , արեան վրէժ ինդ իրներէն հալածուող , ու ասրաստանի քաղաքին մէջ անձկութեամբ ընդունելութիւն փնտռող մէկու մը պէս : Հիւ . 1 . 2 , 3 :

« Աս Տէրջն կը սպասեմ , իմ անձս կը սպասէ , ու քու խօսքիդ կը յուսամ » (Սորմ . 87 . 5 ,) թէ դուն « զիս բարութեամբ պիտի ընդունիս » : Ո՛վ . 34 . 2 : Իմ անձս քու բարութեանդ կ'սպասիմ և անիկայ կը յարգէ : Այսբան երկար ժամանակ ինձի ցուցուցած համբերութիւնդ կը յարգեմ , և ան շնորհքը՝ որ հիմա զիս սրտանց յօժար կ'ընէ քուկը ըլլալ , քուկը ըլլալ բուն քու պայմաններովդ , քուկը՝ ինչ պայմանով որ ըլլայ : Ո՛վ Տէր՝ քեզի գրաւէ աս խաբեբայ սիրտս : Ո՛վ Տէր՝ զիս այն-

պիսի անբակտեղի կապերով քեզի հետ միացուր , որ
 մարմնոյ և արեան հրապոյրներէն մէկը , խարերայ աշխար-
 հին ունայնութիւններէն մէկը , և մեղսակից ընկերներու
 թախանձանքներէն մէկը չկրնայ քեզմէ կտ քաշել զիս ու
 նորէն յանցանքի և կործանման մէջ ընկղմել : Ա՛լ Տէր՝
 “ քու ծառայիդ բարութեան համար երաշխաւոր եղիր ” ,
 (Սող . ճժ 17 . 122 ,) որ կս քու վրադ՝ ու յաւիտենա-
 կան կենաց վրայ հաստատ ըլլամ . մինչև որ վերջապէս
 ուրախակից և մշտապէս փորձառութիւնով առաւել աղէկ
 զիսնամ թէ որչափ կատարեալ Փրկիչ մըն կս գուն :
 Մէն :

ԳՂՈՒԽ ԺԵ

Յարգարական ծառայել տեսնոյ՝ որ շին սուրբ Համոզումիւ Եւրոպայական եպիսկոպոսին Համոյանիլ :

1 . Խոնարհութեամբ կը յուսամ թէ նախընթաց գլուխները թմրած և անզգայ մեղաւորներու արթըննալուն միջոցը պիտի ըլլան՝ որ Աւետարանին փրկութեանը կարօտ ըլլալուն համոզուին և սրտանց ընդունին զանիկայ : Բայց սակայն ինքզինքս այնքան չեմ կրնար պատրել՝ որ մինչև անգամ յուսամ թէ աս գիրքը ձեռքերնին անցնողներուն ամենուն ալ առանկ պիտի ըլլայ : Ահա . « Ես իմ հայրերէս » , կամ իմ եղբայրներէս « լաւ չեմ » , (Գ թ . 4 ,) որոնք ամէն դարու մէջ իրենց զանգատը կ'ընէին շատերուն համար թէ « բոլոր օրը իրենց ձեռքերը երկընցուցին անձազանգ ու հակառակող ժողովուրդի մը » : Ահա . Ժ . 21 : Թերևս այսպիսի շատերը գտնուին իմ ընթերցողներուս թուոյն մէջ . շատերը՝ որոնց վրայ ոչ ահի և ոչ ալ սիրոյ խորհրդածութիւնները մէկ խորին և մշտապէս տպաւորութիւն մը պիտի ընեն . շատերը՝ որոնք ինչպէս որ մեր Տէրը փորձառութեամբ զրուցեց , « Արքայ փող կը ձեռքընենք անոնց , շին խաղար . և երբոր ողբ կը կարդանք անոնց , շին լար » : Ահա . Ժ . 17 : Թէ որ մինչև հիմա ըսածներս բանի տեղ չցնեն , ուրիշ անոնցմէ աւելի բան մը չեմ կրնար ըսել զանոնք համոզելու : Այսն որոյ հոս զատուելու ենք . աս գլխուն մէջ բաժնուելու եմ անոնցմէ . և ոչ թէ կարենայի այնպիսի կերպով մը ընել ասիկայ , որ զատուելու ատենա իրենց կորուսեալ մեղաւոր ըլլալուն զգացումը հաստատեի անոնց սրտին մէջ , որ (թէպէտ առ ժամանակ մը կը զատուի իրենցմէ և զիրենք նորէն նախընթաց գլուխները քննելու կը խորհեմ , որովհետեւ միայն անոնց հետ հիմակու հիմա առնուելութիւն մը ունին ,) կարենան շուտով նորէն ինծի հասնիլ , և աս գլխուն մնացած մասին մէջ մէկ յարմարութիւն

մը գտնել, որ ամենեւին հիմա չեն կրնար գտնել : Դժբանգ արարածներ, ձեզ կը թողում ինչպէս որ բժիշկ մը իր սիրած հիւանդը կը թողու, և զանիկայ իբրև անբուժելի բոլորովին ձգելու վրայ է : կրկին և կրկին կը դառնայ, և նորէն կը քննէ զանազան նշանները՝ իմանալու թէ արդեօք անոնցմէ մէկ քանին միւսներէն աւելի յոյս կու տան, որ քաջալերութիւն առնէ նորէն դարման ընելու :

2. Անանկ ալ նորէն անգամ մըն ալ կը դառնամ ձեզի : Դուք ձեր մէջը բաղձանք մը չէք գտներ Աւետարանն ընդունելու, Վերհատուի երթալու, ինքզինքնիդ Աստուծոյ ծառայութեանը նուիրելու, և աստուածապաշտութիւնը ձեր կեանքին մեծ գործն ընելու : Բայց թէ որ ես չեմ կրնար համոզել ձեզ որ ասիկայ բնէք, ներքեք բնծի որ գոնէ պատասխան խնդրեմ ձեզմէ, կամ յուէտ ձեր խղճմունքին պատասխան տուէք : Ինչո՞ւ պիտի չընէք : Պատճառը կրօնքին գլխաւոր սկզբունքներուն վրայ մէկ գաղտնի անհաւատութիւնն է : Եթէ ասանկ է, իմ մինչև հիմա յառաջ բերած օրինակներէս տարբեր է բանը, և դարմանն ալ տարբեր ըլլալու է : Ասիկայ յարմար տեղ չէ անհաւատութեան տարակոյտներուն հետ կուտելու : Բայց սակայն կը փափայրիմ անձկանօք ձեզի հարցնել թէ՛ մինչև ո՞ւր կը հասնին աս տարակոյտները : Աւետարանին մէկ մասնաւոր վարդապետութեանը կը դպչին, որուն վրայ իմ փաստս կը կայանար, թէ բոլոր քրիստոնէական յայտնութեանը : Ասմ թէ ես առաւել անդին կ'անցնին, և չէ թէ միայն յայտնաւին, այլ բնական կրօնքի՞ն ալ կը դպչին . անանկ որ տարակոյտ կ'ունենար թէ Աստուած՝ նախախնամութիւն և ապառնի վեճակ մը կոյ արդեօք թէ չէ : Արովհետև անոնք ամենը տարբեր բաներ են, վասն որոյ հարկ է և կարեւոր որոշել ինչ սկզբունքներ իբրև ստոյգ բուն ընդ, որ տարակոյտ ունեցած բաներնիդ քննելու ատենը դիտնար ինչի վրայ հիմնելու է քննութիւնը : Բայց ի՞նչ որ ըլլան աս տարակուսանքները, ես դարձեալ պիտի հարցնեմ թէ՛ ո՞րքան ատեն տեւած են ասոնք, և ի՞նչ կերպ բանեցուցած էք զանոնք լուծելու և որոշելու համար : Ար սեպե՞ք թէ այսպիսի ծանր նիւթերու մէջ ներքի պիտի ըլլայ ձեզի

զանոնք բանի տեղ չդնելով անհոգ բլլալ և զանց ընել ան բաներուն ապացոյցները յննել, ու ետքը անոնց համեմատ չգործելնիդ արգարացընելու համար ջատագովել թէ ան ապացոյցները ձեզի յազկցուցիչ չէին : Բանականու թեան սկզբունքները ձեզ վստահեցընելու չե՞ն, որ եթէ աս բաները ճշմարիտ են, (ինչպէս որ անոնց վրայ տարակուսելնուդ վրայով խօսած ատեննիդ կը խոստովանիք՝ թէ կարելի է որ են,) անոնք անհունապէս առաւել ծանրակըշիտ են կեանքին ո՞ր և իցէ գործքերէն՝ զբաղմունքէ և կամ զուարճութենէ, որոնց պատճառաւ զանց կ'ընէք զանոնք : Ուրեմն ինչո՞ւ համար կը կենաք անհոգ և անփոյթ շարժութէ շարժութ և ամիսէ ամիս, որ հաւանականարար խղճմտանքնիդ ալ կ'ըսէ ձեզի ասանկ բլլալը :

3. Վուցէ պիտի հարցընէք թէ "Վ՞նչ կերպ կընայինք բանեցընել այն տարակողները լուծելու համար" : Եսիկայ դժուար խնդիր մը չէ : Եւջերնիդ բացէք • խորհուրդի նստեցէք • խղճմտանքնիդ թո՞ղ խօսի • և յիրուի կը հաւատամ որ եթէ խղճմտանքնիդ տարապայման աստիճանաւ մը խանձուած չէ, զորաւոր ազգարարութիւններ պիտի գանէք՝ թէ՛ բնական և թէ՛ յայտնեալ կրօնքին ստուգութեանը վրայ • նաև ապառնի երանաւետեան կեանքը ստանալու համար զոչումը՝ հաւատքը՝ և սրբութիւնը բացարձակապէս հարկաւոր բլլալուն վրայ : Աթէ փոքր ինչ ուսման տէր էք, չէք կրնար չգիտնալ թէ ո՞ր հեղինակները և ի՞նչ գիրքերու մէջ պաշտպանած են աս երևելի ճշմարտութիւնները : Աթէ չէք, գոնէ կրնաք անսակ մարդիկ գտնել, որոնք քրիստոնէութեան գլխաւոր վկայութիւնները ձեզի կրնան հասկըցընել, և անոր դէմ անուս մարդոց մտքին պատահած առարկութիւններուն պատասխան տալ : Ուրեմն անմիջապէս Ետուծոյ անունովը աս նիւթին վրայ մտնուալ սկսեցէք : Ու թէ որ աս բանիս ձեռք զարնէք, բոլորովին ուշադրութիւննիդ ասո՞ր դարձուցէք, և ասիկայ զանց ընելով ձեր ժամանակը մի անցընէք չափաբերական գիտութեամբ՝ բանաստեղծութեամբ՝ պատմութեամբ՝ իրաւարանութեամբ՝ կամ բժշկականութեամբ, որոնք ասոր հետ բաղդատելով փետուրի պէս թեթեւ են : Անանկ քննէք աս բանին ապացոյցը՝ որպէս

Թէ կեանքերն իդ ասկէ կախում ունի . վասն զի կեանքէն շատ առաւել մէկ բան մը կախում ունի անկէ : Վննեցէք թէ ինչ աստիճան համոզուած էք . և ինչո՞ւ համար անկէ առաւել չէք համոզուիր : Արկու կողմէն վկայութիւնները բազզատեցէք : Այլ ամենէն աւելի , Նոր Ատակարանին նպատակն ու արդիւնքն էրը քննեցէք : Տեսէք թէ ինչի՞ պիտի առաջնորդէ ձեզ և ան ամենը՝ որ սրտանց կ'ընդունին զանիկայ . և ապա ըսէք՝ թէ ազէկ չէ՞ անիկայ : Այլ քննեցէք թէ իր ճշմարտութիւնը որքան բնական կերպով կապակցած է իր բարութեանը հետ : Անոր հեղինակներուն բնաւորութիւնն ու հանդամանքները փրնտըտեցէք , որոնց կենդանի պատկերը , և թէ ներքին է ինձ այսպէս ըսել , տակաւին կը կենայ իրենց գրուածքներուն մէջ , և ապա հարցուցէք ձեր սրտին՝ թէ կրնա՞ք ստիկայ խաբէութիւն մը սեպել , ամբարիշտ և անգութ խաբէութիւն մը . վասն զի ասանկ եղած պիտի ըլլար , և թէ ամենակն խաբէութիւն մը ունենար . Նարք մը՝ զԱստուած ծաղր ընելու , մարդիկ կործանելու , մինչև անգամ ամենէն բարի մարդիկն ալ , այնպիսիները՝ որոնք կը յարգեն խղճմտանքը , և ամէն նեղութիւն կը քաշեն իրենց ճշմարտութիւն սեպած բաներուն համար : Սա հարցումը ըրէք ձեր սրտին , կրնա՞մ խղճմտանքով հաւատալ թէ անիկայ այսպիսի խաբէութիւն մըն է : Արնամ՝ ամենագէտ Աստուծոյ նայիլ և ըսել , “Ո՛վ Տէր , զիտես որ քեզ յարգելուս և ճշմարտութիւնն ու առաքինութիւնը սիրելուս համար է՝ որ աս զիրքը և ասոր մէջ գրուած երջանկութեան ճամբան կը մերժեմ” :

4 . Բայց սակայն դժուարութիւններ կան աս ճամբուն մէջ . թող ըլլան . միթէ աս դժուարութիւնները բնաւ չբացատրուեցան : Բայցէք քրիստոնէութեան կենդանի փաստարաններուն , անոնց՝ որոնց բաւականութեանը՝ անկեղծութեանը և աստուածպաշտութանը վրայ ամենէն աւելի համարում ունիք , և թէ ձեր անոնց դէմ ունեցած ընդդիմութեան ոգին թող տայ որ ասանկներուն վրայ ազէկ համարմունք ունենար . զրուցեցէք անոնց՝ ունեցած դժուարութիւններն իդ . մտիկ ըրէք անոնց տուած բացատրութիւնները , կընեցէք զանոնք զգուշութեամբ՝ Աս-

տու ծոյ պատասխան տալու պարտական ըլլալին զիտոյդ ներու պէս . և քանի որ տարակոյսն ընկող կը մնան , ճշմարտութեան ետեւէն գացէք որքան որ ձեզ տանի , և զոյշ եղիք որ չըլլայ թէ “ զանիկայ անխառութեամբ բունէք ” : Գործք . ան . 18 : Ասկէ աւելի անյարմար և անտեղի բան չըլլար՝ որ մէկ մարդ մը սրբանալու համար կեղծէ թէ համոզուած չէ Աւետարանին վկայութիւններուն , իբրև պատճառ մը իր կատարեալ քրիստոնեայ չըլլալուն . որ ատեն բանականութեան ու միանգամայն խղճմտանքին գրուցածներուն դէմ կը գործէ , և մինչև անգամ հեթանոսներուն դատապարտած մոլութիւններուն մէջ կ’անցընէ կեանքը : Բարեկամներ՝ Վրիստոս ասանկներուն վրայ այսպէս վրձուեց , և շատ իրաւամբ ու իմաստութեամբ , թէ “ Անոնք չար կը գործեն , և անոր համար լոյսը կ’ատեն . և լուսին քովը չեն գար՝ որ իրենց գործքերը չյանդ իմանուին ” : Գործք . 4 . 20 : Բայց լոյս մը կայ որ անոնց գործքերը յայտնի պիտի ընէ ու յանդիմանէ , որուն դէմը գալ՝ և անոր ջաւալի հետազոտութեանը տանիլ պիտի ստիպուին :

5 . Բայց սակայն եթէ որոշէք որ ալ քննութիւն չընէք աս նիւթին վրայով , գոնէ ներեցէք ինծի՝ որ ձեր գլխուն վրայ աւելի ծանր կործանում չզիզելնուդ . համար անկեղծ փափաք ունենալովս աղաչեմ ձեզի որ զոյշ ըլլաք՝ թէ ինչպէս ինքզինքնիդ աւելի վտանգի ենթակայ կ’ընէք ան բանով՝ որ դուք ալ խոստովանելու էք թէ հարկաւոր չէ . ըսել կ’ուզեմ ուրիշները Աւետարանին ճշմարտութեանը հաւատալէն ետ պահելու համար ըրած ջանքերնիդ : Թո՛ղ տուէք անոնք՝ Մտուծոյ համար և ձեզի համար , ան բերկրութիւններուն և ան յոյսերուն մէջ , որ միայն քրիստոնէութիւնը կրնայ տալ . և մի գործէք այնպէս՝ որպէս թէ ցանկայիք անհաւատութեան յանցանքին վրայ ան տասնորդաւի դատապարտութիւնը յաւելուլ , որ անոնք որ ուրիշներուն հողիները թիւրոշն ու կործանողի եղած են՝ ակնկալելու են , եթէ ան Աւետարանը՝ որուն պնդան յանդգնարար հակառակած են , յայտնուի , (ինչպէս որ անշուշտ պիտի ըլլայ ,) իբրև մէկ մեծ և իրենց ահաւոր ճշմարտութիւն մը :

6 . Եթէ հիմա չիրկամ յաջողիլ նպատակիս հասնե-

լու , (այն պատճառով որ բարձր հասկըցողութիւն մը ցուցնելու հպարտութիւնը՝ այսպիսի ընթերցող մը կ'ըստիպէ որ մերջին աստիճան ջանայ Վետարանը անարդու-թեամբ ոտքի տակ առնելու ,) պիտի արձակեմ զանիկայ սա մէկ առաջարկութեամբը , որն որ կը կարծեմ թէ բանին մեծութիւնը յոյժ արդարացնէ պիտի : Աթէ քրիստոնէութիւնը քններ ընցուցեր ես , և որոշեր ես որ այնպէս ապրիս և այնպէս վարուիս որպէս թէ ստուգիւ սուտ ըլլար ան , ուրեմն նստե՛ և ատ որոշմանդ մէկ յիշատակագիրը ըրէ : Գրէ՛ մէկ տեղ մը թէ ,

“Վս ինչ տարուան այն ինչ օրը խորհրդածութեամբ որոշեցի՝ որ քրիստոնէութիւնը մերժելով պիտի ապրիմ ու մեռնիմ՝ , և անիկայ տակնուվրայ ընելու համար ամէն կըցածս պիտի ընեմ : Վս օրս որոշեցի՝ Աագովըցի Յիսուսին ոչ միայն ամէն նազանդութիւնը մերժել , և անկէ ամէն ակնկալութիւնը մերցնել , այլ նաև իմ կենացս գործքին մէկ մեծ մասը ընել՝ որքան որ կրնամ՝ ուրիշներուն մտացը մէջ անոր վրայ եղած բոլոր նկատումը ջնջել , և իմ ամենէն զօրաւոր ջանքերս բանեցընել տրամաբանութեամբ և ծաղրարանութեամբ անոր կրօնքին յարգը ցածցընելու , և եթէ կարելի է՝ աշխարհիս մէջէն արմատախիլ ընելու . հանդարտ և հաստատ կերպով կը խորխտամ ան օրուանը համար՝ որ անոր հետեողները կ'ըսեն թէ Պիտի երևի մեծութեամբ և ահով , իր թշնամեացը դէմ սպառնացեալ վրէժը 'ի գործ դնելու' :

Աը համարձակի՞ս ասանկ գրել ու ստորագրել : Հաստատ կը հաւատամ որ շատ մարդիկ՝ որ աստուածեան սեպուիլ կ'ուզեն ու թիւերնին շատցընել կը ջանան , ասանկ պիտի չգրեն : Աւ եթէ դուն ալ չես համարձակիր ընել , ատ փոքր ինչ զգուշութիւնը թուտի կը ծագի : Պատճառը յայտնի է : Իդճմտանքիդ մէջ մէկ գնդոնի երկիւղ մը կայ թէ կարելի է որ աս անարգեալ՝ հակառակութիւն կրող՝ և ծաղր ըլլուող Վետարանը յետ ամենայնի ճշմարիտ ելլէ : Աւ եթէ այսպիսի երկիւղ մը կայ , ուրեմն թող որ խղճմտանքն իր պաշտօնը կատարէ , և դատապարտէ՛ քեզ քու ընթացքիդ ամբարիշտ յիմարութեանը համար , որ անիկայ սողոգ և յայտնի ստութիւն

մը համարելու պէս վարուեցար : թնօղ որ ըսէ՛ քեզի բն-
դարձակորէն , թէ՛ « Շըլլայ թէ՛ Եստուծոյ դէմ՝ մարտըն-
չող զանուխ » . Գործ . Է . 39 . որ թեպէտ համարձա-
կու թեամբ Եստուծոյ ահուն դէմ կը խրոխտաս , բայց
կարելի է որ անոր ձեռքն իյնաս . և լսեն անարգած վճիռդ
որ՝ յախտենական Կատարորին բերնէն լսելով , զանիկայ
պիտի չլինաս անարգել : Կու բոլոր անարգանքդ գիտ-
նալով ալ տակաւին պիտի կրկնեմ . կարելի է թագա-
ւորը քեզի պիտի ըսէ թէ՛ « Կէկզի՛ գնա ինձմէ անի-
ծեալ՝ յախտենական կրակին մէջը , որ պատրաստուած է
Սատանային՝ ու իր հրեշտակներուն » : Սորթ . Ին . 41 :
Եւ արդ՝ գնա և ծածուկէ՛ և ծայր ըրէ Սուրբ Գիբբը ,
գնա և նախատէ՛ անոր քաջազուններուն բնութիւնը , և
ծաղրէ՛ անոր մարգարէներուն ու անոր առաքեալներուն
վսեմ խօսքերը , ինչպէս որ ոմանք ըրած են , որոնք մի
միայն իրենց տգիտութեանը՝ ամբարշտութեանը՝ և շա-
րութեանը կարծատե յիշատակը իրենց ետէն ձգած են :
Կնա և անոնց պէս պարզէ՛ անհաւատութեան դրօշակնե-
րը , և հպարտացի՛ր անոնց տակը մտնող անձանց թուո-
վը : Եւ այց զգո՛յշ եղիր՝ շըլլայ որ նախատեալ Կալիկեա-
ցին գաղանի նետ մը շիտկէ քու սրտիդ , և քու ամբա-
րիշտ շունչդ դադրեցնէ՛ անոր դէմ արտասանելիք յաջորդ
խօսքդ չմնացած :

7 . Հիմա պիտի դառնամ աստուածեանէն կամ սկեպ-
տիկեանէն , և անունով քրիստոնէին պիտի խօսիմ . եթէ
երբէք կրնայ քրիստոնեայ կոչուիլ ան՝ որ աս ամէն ըսած-
ներէս ետքը հակամիտութիւն մը չզգար ինքզինքը ան
Փրկչին կառավարութեանը ու շնորհացը նուիրել , որուն
անունը իր վրայ կը կրէ : Ա՛վ մեղաւոր , դուն մէկզի
կը դառնաս Տերօջմէս , որուն դատը կը պաշտպանեմ .
բայց ջերմ եռանդով կ'աղաչեմ քեզի՛ որ սրտի մտքք քրն-
նես թէ ինչո՛ւ համար մէկզի կը դառնաս . և « որո՛ւ պի-
տի երթամ » զանիկայ թողելով , որուն համար կը վկայես
թէ՛ « յախտենական կենաց խօսքեր ունի » : Յովհ . Գ .
69 : Ինքզինքդ քրիստոնեայ կ'անուանես . և սակայն չես
ուզեր ինչ և իցէ կերպով համոզուիլ բարի եռանդով
փրկութիւն փնտռելու՝ Յիսուս Կրիստոսէն և անոր միջո-

ցովք, որն որ քու Արդապետդ ու Տէրդ կը կանչես : Ի՞նչպէս կ'արդարացընես քու խղճմտանքիդ առջև՝ մինչև անգամ՝ ըստէ մը զանցառութիւն ընելը : Աթէ քեզ տախտէի որ վէճի տակ եղած բան մը ընդունիս, ան ատենը տարբեր կ'ըլլար բանը : Աթէ սաստիկ աշխատէի որ քեզ քրիստոնէից այն ինչ մասնաւոր մէկ կողմին հերձուածոյն աշակերտ ընեմ, յապազումդ ան ատենը աւելի բանաւոր կ'ըլլար . այո՛, թերևս պիտի կարծէիր՝ որ ըսածիս հաւանութիւն չտալովդ մեր ընդհանուր Արդապետին պարտքդ կատարած կ'ըլլաս : Բայց վիճարանութեան նի՞ւթ մըն է ասիկայ քրիստոնէից մէջ, թէ արդեօք մեծ սուրբ՝ և արդար Մատուած մը կայ . և թէ՛ արդեօք այսպիսի մէկ Աշակ մը, որուն միտքան կը հաւատանք, պէ՛տք է յարկել և սիրել, թէ զանց ու անպատիւ ընել : Ա՛խճարանութեան նի՞ւթ մըն է ասիկայ՝ թէ արդեօք մեղաւոր մը պէ՛տք է որ խորին և ծանր կերպով զգնայ իր մեղքերուն վրայ, կամ թէ անոնց մէջ յառաջ երթայ : Ա՛լճի տակ ինկած բան է ասիկայ մեր մէջը՝ թէ արդեօք Հիսուս մարմին առաւ ու մեռաւ խաչին վրայ մեղաւորաց փրկութեանը համար՝ թէ չէ : Այլ եթէ վէճի տակ ինկած բաներ չեն ասոնք, կրնան վէճի տակ ձգել անոնք՝ որ կը հաւատան անոր ԱրդարՄատուծոյ և Փրկիչ մարդկան ըլլալը, թէ արդեօք մեղաւոր մը անիկայ փնտռէ՛ կամ զանց ընէ . կամ թէ ան որ քրիստոնէայ եմ կ'ըսէ, պէ՛տք է որ անօրէնութենէ զատուի, թէ ինքզինքը անոր մէջ թող տայ : Մեր մեծ Արդապետին պատուէրները այնքան մո՞ւթ գրուած են իր խօսքին մէջ՝ որ անկեղծաբար վէճի տակ ձգելու առիթ կենայ թէ արդեօք ջերմեռանդ՝ սուրբ՝ խոնարհ՝ հսկող՝ անձնուրաց կեանք մը կը պահանջէ, կամ թողլուութիւն կ'ընէ ասոնց հակառակ տեսակին : Քրիստոս կեանքն ու անմահութիւնը լոյսին դէմը բերելէն ետքը՝ անստոյգ ձգեց թէ արդեօք ապառնի երջանկութեան և թշուառութեան վիճակ մը կայ, կամ թէ աս վիճակներուն ո՞րը որոնց սահմանուած են : Ա՛խճարանութեան նի՞ւթ մըն է թէ արդեօք Մատուած "ամէն գործքը՝ ամէն ծածուկ բաներու հետ՝ թէ բարին և թէ չարը՝ դատաստանի պիտի բերէ" թէ չէ . Ժող . Ժք . 14 .

կամ թէ արդեօք ան դատաստանը ըմենալէն ետքը “ մեղաւորները յախտնական տանջանքը , իսկ արդարները յախտնական կեանքը պիտի երթան ” : Մատթ . ին . 46 : Աղէկ զիտեմ որ գոնէ ամշնալուդ համար՝ պիտի ջցուցընես թէ տարակոյս ունիս աս բաներուն վրայ ու տակաւին քրիստոնեայ կոչես ինքզինքդ : Աւրեմն ինչո՞ւ համար չես համոզուիր սիրտդ դնել զանոնք և այնպէս գործել ինչպէս որ քու պարտաւորութիւնդ և օգուտդ կը պահանջեն : Մ՛ի մեղաւոր՝ պատճառը յոյժ յայտնի է . մէկ պատճառ մը՝ որ յիրաւի բոլորովին անարժան է պատճառ կոչուելու : Անոր համար է՝ որ ունայնութիւններովդ ու ցանկութիւններովդ կուրացեալ ու թմրած ես : Անոր համար է՝ որ մէկ շնչին և անցաւոր բան մը ունիս , որ երեակայութեամբդ ու զգայարանքներդ կը կախարդէ , անանկ որ անկկայ Աստուծով ու Քրիստոսէն , հոգիէդ ու անոր փրկութենէն առաւել սիրելի է քեզի : Մ՛ի խօսքով . անոր համար է՝ որ տակաւին ան մարմնատէր մտքին ազդեցութեանը տակն ես , որ՝ ինչ բարեպաշտական ձևեր ալ որ առնէ վրան երբեմն , տակաւին “ Աստուծոյ դէմ թըշնամութիւն է . ինչու որ Աստուծոյ օրէնքին շնազանգիք , մանաւանդ չկրնար ալ ” : Հով . ք . 7 : Այս ուստի բուն իսկ ան թշուառներուն վիճակին մէջն ես , որոնց՝ մեր Տէրը երկրի վրայ եղած ատենը ըսաւ թէ “ Կուք չէք ուղեր ինձի դալ , որ կեանք ունենար ” , (Յով . Ե . 40 ,) և անոր համար “ ձեր մեղացը մէջ պիտի մեռնիք ” : Յով . ք . 24 :

8 . Աս վիճակիդ մէջ չեմ տեսներ թէ ի՞նչ օգուտ կըրնայ ընել առջի գլուխներուն մէջ ըսածներս ու ըրած տրամարանութիւններս նորոգելը : Ինչպէս որ մեր օրջեալ Փրկիչը կ'ըսէ անոնց համար՝ որ իր Աւետարանը կ'ատեն , թէ՛ “ Տեսան ու ատեցին՝ զիս ալ իմ Հայրս ալ ” , (Յով . ԺԵ . 24 ,) անանկ ալ ճշմարտիւ ձեր վրայովը կրնամ ըսել թէ՛ ջանացի ձեզի ցուցընել Քրիստոսն ու Հայրը ամենապայծառ խօսքերով . ձեզ յորդորեցի որ երկուքին ալ ունեցած պարտքերնիդ կատարէք . յանցանքնիդ ու դատապարտութիւննիդ առջևնիդ դրի . մի միայն դարմանը ցուցուցի . ցուցուցի ան վէմը՝ որուն վրայ ես իմ

յաւխտենական յոյսերս հաստատած եմ, և ան ճամբան որով միայն փրկութեան կը յուսամ: Աս բաները ձեր առջևը դրի, որոնք եթէ Աստուած պատահութիւն տայ, իմ մահուան շունչիս ատենն ալ սիրով և անձկանօք իմ որդւոցս առջևը պիտի դնեմ, և ան ամէն սիրելի բարեկամներուս, որ երկրիս վրայ ունիմ, որոնք որ ան ատենը քովս կը զանուին՝ զանիկայ իմ բարեկամութեանս մեծ նշանը, և իմ անոնց վրայ ունեցած սիրոյս անսխալ ապացոյցը համարելով: Այլ եթէ Աւետարանին ճշմարտութեանը հաւատարմով որոշէք որ մերժէք զանիկայ, ուրիշ ըսելիք մը չունիմ, բայց միայն աս՝ թէ հետեանքը պիտի կրէք: Բայց տակաւին ինչպէս որ Պովսէս, երբոր վերջին անգամ Փարառոնին ներկայութենէն դուրս ելաւ՝ անոր սիրտը աւելի ևս կարծրացած տեսնելով ան ամէն իրեն եղած հարուածներովն ու շնորհքներովը, ըսաւ թէ Աստուած պիտի անցնի երկիրէն ահաւոր կերպով՝ առջիններէնը մահուամբ պարնէք, և զգուշացուց զանիկայ ան մեծ և ողբալի աղաղակին վրայով, որն որ սաստակիչ հրեշտակին սուրը պիտի հանէր բոլոր իր թաղաւորութեանը մէջ. (Ամք . ԺԿ . 4-6 . անանկ ալ հիմա ես քանի որ քեզ պիտի ձգեմ՝ ո՛վ մեղաւոր, քեզի պիտի խօսիմ նորէն, « թէ՛ ըսես և թէ՛ զանց ընես », (Ամք . Ի . 7,) և քեզի յոյժ առաւել մեծ հարուած մը պիտի զրուցեմ, որն որ աստուածային վրէժինդրութեան սուրը՝ որ արդէն սըրուած ու քաշուած և « երկինքի մէջ արբեցած է », (Ասոյ . ԼԳ . 5,) քեզի դէմ կը պատրաստէ. որն որ յոյժ առաւել ցաւազին աղաղակ մը պիտի պատճառէ, թէ և դուն ան չար ինքնակալէն առաւել մեծ ու առաւել դիմադարձ ըլլաս: Այո՛, ո՛վ մեղաւոր, որպէս զի Պողոս առաքեալին հետ կարենամ ուրիշներուն դառնալու ատենս՝ որոնք հաւանականաբար պիտի մտիկ ընեն ինձի, հանդերձներս թօթօվել ու ըսել, Աս անպարտ եմ ձեր արիւնէն, (Գործ . ԺԶ . 6,) անգամ մըն ալ պիտի ըսեմ քեզի աս բաներուն վախճանն ինչ ըլլալը: Այլ ո՛հ թէ կարենայի այնպէս խօսիլ որ նպատակիս հասնէի. կարենայի ականջներուդ այնպիսի ուժգին ահի որոտում մը որոտալ՝ որ քեզ արթնցընէր, և այնքան սաստկաւնչիւն ըլ-

լար՝ որ մարմնաւոր ուրախութեան բոլոր ձայները չկարենային խափանել, կամ ան ամէն վտանգաւոր թմբեցուցիչ դերերը չկարենային անզոր ընել զանիկայ, որոնք շարած եւ խղճմտանքդ թմբեցընելու համար :

9. Ո՛վ մեղաւոր, փնտռէ ինչ զուարճութիւններ ու բերկրութիւններ որ կ'ուզես : Վեզի կ'ըսեմ, որ թէ և իշխանութեամբ՝ զօրութեամբ՝ և մեծութեամբ հաւասար ըլլաւ Վարիլոնի ան մեծ թագաւորին, «քու փառքդ, և տաւիղներուդ ձայնը դերեզմանը պիտի իջնեն. քու տակդ զեռուներ պիտի տարածուին, ու որդերը քեզ պիտի ծածկեն» . Դսոյ . ԺԷ . 11 . այն՝ մեղաւոր, «աս բաներուն վերջը մահ է» . Հռոմ . Կ . 21 . մահ՝ ամենէն յոյժ ահաւոր մահ քեզի, եթէ աս բնութիւնովդ յառաջ երթաս : Ենկէ շեւ կրնար ազատիլ . և՛ եթէ ըսել կրցած որ և իցէ մէկ խօսքս կրնայ արդիլել մոռնալդ, ոչ ալ պիտի մոռնաս զանիկայ : «Վու ուժդ քարերու ուժ չէ, ոչ ալ մարմինդ պղնձեղէն» : Յոբ . Կ . 12 : Ինչպէս որ ուրիշներուն՝ անանկ ալ քեզի հիւանդութիւն կրնայ մտնելու . և քիչ ատենէն պիտի տեսնենք (եթէ մէկ յանկարծակի պատահմունք մը չարդիլէ զանիկայ,) թէ ինչպէս քաջութեամբ պիտի կենաս մահուան անկողինին վրայ, և յաւիտենակամութիւնը մտտեցած տեսնելով : Կուն՝ որ հիմա կ'ատես Վրիստոս և բանի տեղ շեւ դներ անոր Վելտարանը, պիտի տեսնենք քեզ վհատեալ և նուազեալ՝ քու բոլոր մարմնաւոր զուարճութիւններուդ ու քու ունայն ընկերներուդ վրայ ունեցած անորժակդ դացած : Եւ եթէ անոնցմէ մէկը յանդգնարար քեզի դայ, և այնքան անբան ու յանդուգն ըլլայ՝ որ մեռնող մարդ մը զուարճացընել աշխատի զուարճացուցիչ պատմութիւնով մը, կամ մէկ պիղծ կատակով մը, պիտի տեսնենք թէ ինչ համ պիտի առնես անկէ : Այիտի տեսնենք թէ ինչ միտիթարութիւն պիտի ունենաս անցեալին վրայ մտմտալովդ, կամ ինչ յոյս ապառնիին նայելովդ : Թերեսս դողալով և սարսափելով Վրիստոսի պաշտօնեաները կանչելով, որոնք հիմա կ'անարգես ունեցած ան եռանդուն համար՝ որով կ'աշխատին քու հոգիդ փրկել, անոնց պիտի հարցընես ան տեսնը մէկ սոսկալի երկիւղով մը, թէ «Ինչ ընեմ որ

նես : Եւ ան ատենը՝ պիտի լես հրեշտակապետին փողին ձայնը , ան տրտմալի աշխարհին ո՛ր խոռոչին մէջը որ ըլլաւ : Անոր ձայնը քու բանտիդ մէջ պիտի թափանցէ , ուր որ թէպէտ տխուր և ահաւոր տեղ մըն է , բայց պիտի ուզես որ կարենաս տակաւին թոյլտուութիւն ունենալ յանցաւոր գլուխդ ծածկել յաւետ , քան թէ ան ահաւոր Դատաւորին առջևը երևնալ , որուն առջևէն « երկինք և երկիր կը փախչին » : Յոպ . Ի . 11 : Բայց պարտական ես յառաջ դալ և մէկ նոր մարմին մը հագնիլ յախտնական ցաւեր կրելու , որոնք թէ որ աս մահկանացու վիճակին մէջ ըլլան , խիղջն կը քայքայեն զանիկայ : Ախն չես ուզեր համոզուիլ Վրիտտոսի երթալու , անզոյցարար երես կը դարձընես անկէ , հակառակ բանականութեան՝ հակառակ խղճմտանքի՝ հակառակ Աւետարանին բողոք քողոք թախանձանքներուն , և անոր ամենահաւատարիմ պաշտօնէիցը բազմափոյթ խրատներուն : Բայց ան ատենը՝ մե՛ զաւոր , անոր հետ պիտի տեսութիւն ընես , եթէ կրնանանք տեսութիւն կուզել ասիկայ , որ ասն պիտի չհամարձակիս գլուխդ վեր վերցընել ահաւոր և անողորմի Դատաւորիդ երեսը նայելու : Ան՝ ո՛րքան ալ որ մեր ազրած ատենը և մեր բնակութեան տեղը մեկզմէկէ հեռու ըլլայ , հոն պիտի տեսնենք թէ ի՞նչ քաջութեամբ « պիտի գիմանայ սիրտդ » , և ո՛րչափ « ուժով պիտի ըլլան ձեռքերդ ան օրերը՝ որ Տէրը աս բանը պիտի ընէ » : Եղե՛ի . Իբ . 14 : Ան պիտի տեսնեմ՝ քեզ հազարաւոր և բիւրաւոր յուսահատեալ թշուառ արարածներու մէջ դողդըղալով և շփոթած՝ ո՛վ ընթերցող , ո՛վ որ կ'ըլլաս եղեր , քանի որ յառաջ կ'երթաս աս անզեղջ վիճակիդ մէջ : Ան պիտի լեսմ՝ քու աղաղակներդ ուրիշ շատերուն հետ մէկտեղ , որ ոչինչ տեղը պիտի կանչուրտուէք : Դատաւորը պիտի ելլէ իր ամօռէն վսեմ հանդարտութիւնով , և քեզ պիտի ձգէ՝ որ յախտնական կրակներու մէջ իյնաս , որոնց դատապարտած է քեզ անոր արդար վրէժխընդրութիւնը , անոնցմէ փրկուիլ չուզելուդ համար : Դժոխքն իր բերանը յախտնանս պիտի գոցէ քու վրայէդ , և քու հեծութիւններուդ ու աղաղակներուդ ցաւագին արձագանքը պիտի խափանուի երկինքի Ալէլուիաներուն

մէջ , և ան օրը Տէրոջմէն ողորմութիւն գտնողներուն ա-
կանջը պիտի չհասնի :

11 • Եւ բաներուն վախճանը ստուգիւ ասանկ պիտի
ըլլայ • և դուն՝ իբրև անուամբ քրիստոնեայ , կը խոս-
տովանիս թէ զիտես և կը հաւատաս ասոր : Իմ սիրտս
կը շարժէ աս բանը , եթէ քուկդ չշարժեր : Հաստատ
կը հաւատամ որ փրկութիւն և փառք ընդունողներուն ա-
մէն մէկը իր վերկշին պատկերը ան աստիճան պիտի ստա-
նայ իմաստութեամբ՝ բարութեամբ՝ և Եստուծոյ համար
նախանձաւորութեամբ , և բոլոր տիեզերքին երջանկու-
թեանը համար այնքան նկատմունքով , որ աս տխրագին
սեսարանը անդորր հաւանութեամբ և առանց կսկծեցու-
ցիչ մտայուզութեան պիտի դիտէ : Բայց ես դեռ մար-
մին ու արիւն եմ , վասն որոյ աղիքս կը վշտանան և աչ-
քերս շատ անգամ կ'արտասուեն ցաւոք՝ երբոր կը մտածեմ
թէ թշուառ մեղաւորները իրենք իրենց հոգիներուն վրայ
չեն դիտար • երբոր կը մտածեմ թէ հակառակ ամենայն
խրատու՝ յանդձնարար վերջին և յախտնական կործան-
ման կը դիմեն : Աշինչ տեղը պիտի երթայ հոս աղօթք
մը կամ խորհրդածութիւն մը գրեւ թեղի համար : Թը-
շուառ արարած , չես ուզեր մտածութիւն ընել , չես ուզեր
աղօթել : Բայց սակայն ինչպէս որ շատ անգամ իմ սիրտս
աղօթքի տուած եմ մահուան վիճակի մէջ եղող բարեկա-
մի համար , երբոր անիկայ ախտին բռնութենէն կարող
եղած չէ ինծի հետ ձայնակցիլ , անանկ ալ հիմա Եստու-
ծոյ պիտի երթամ թեղի համար՝ ո՛վ ապերձանիկ արարած :
Եւ եթէ իմ կարեկցութեանս խօսածները այնքան անար-
գես որ չկարդաս զանոնք , տակաւին կը յուսամ թէ ա-
նոնք՝ որ Եւեաբարանին իրենց հոգւոյն վրայ ունեցած զօ-
րութիւնը զգացած են , որովհետեւ թեղի պէս անձանց
վրայ անշուշտ պիտի ցաւին պիտի միանան ինծի հետ այս-
պիսի եռանդուն թէ և նուաստ աղաչանքներու մէջ :

Ա իրողութեւ վեճակն թէ իրող անգլոյ թշուառին համար ու-
զել + Իլ :

Ո՛վ ամենակարող Եստուած • քու քովդ ամէն բան
կարելի է : Մատթ . ԺԹ . 26 : Այս ան որոյ խոնարհու-

Թեամբ քեզի կու գամ՝ աս սիրելի անմահ հոգիին համար , որ կը տեսնես թէ հոս կը կորնչի իր մեղքերուն մէջ , և կը խտացընէ ինքզինքը ան յախտենական Աւետարանին դէմ՝ որ Մատուց զօրութիւնն է հազարաւորներուն ու բիւրաւորներուն փրկութեանը համար : Դուն վկայ ես՝ ո՛վ ամէնօրնեալ Մատուած , դուն վկայ ես որ հրաւիր բացայայտութեամբ և ջերմեռանդ զգացումներով իմ պատգամաւորութիւնս կատարեցի : Դու ներկայութեանդ մէջ աս ահաւոր խօսքերը գրեցի . և քու ներկայութեանդ մէջ քարզացուեցան : Այսն որոյ հաճէ՛ քու յիշատակութեան գրքիդ մէջ գրել՝ որ եթէ աս ամբարիշտը իր անօրէնութեանը մէջ մեռնի , իր ճամբայէն զջուշացընելու համար յայտնապէս և անկեղծութեամբ խօսելէս ետքը , անոր արիւնը իմ ձեռքս չփնտուի , (Լուի . ԼԳ . 8 , 9) ո՛չ ալ ան քրիստոնէին ձեռքէն , ո՛վ որ ըլլայ ան՝ որ աս գիրքը անոր կու տայ անկեղծութեամբ անոր հոգիին փրկութեանը ցանկալով : Ակնկեղծ՝ ո՛վ օրնեալ Յիսուս , « ան օրը որ մարդոց ծածուկ բաները պիտի դատես » , (Գալ . Ի . 16 ,) որ քու Աւետարանդ քարոզուեցաւ աս խտասիրտ թշուառին , և քու արեամբդ եղած փրկութեանը առջին դրուեցաւ , թէպէտ ինքը տակաւին շարունակ կ'անարգէր զանիկայ : Այս շնորհէ որ քու աս անարժան պատգամաւորդ « Մատուց անուշ հոտ մը ըլլայ Բրիստոսով » , աս հոգիին նկատմամբ , թէ և վերջապէս կորնչի ալ : Ի՛նչ որն . Ի . 15 :

Իսկոյն ս' է թէ աս իր բոլոր խտութենէն ու անգեղջութենէն ետքը՝ տակաւին հաճէիր քու ազգու շնորհացդ զերագոյն զօրութիւնովը արթնցընել ու դարձի բերել զանիկայ : Աղէկ դիտենք՝ ո՛վ համայն տիեզերաց Տէրը , թէ ան որ հոգին ստեղծեց կրնայ անանկ բանալ անոր աչքերը որ ճանչնայ իր մեղապարտութիւնը : Ա՛հ թէ քու անհուն իմաստութիւնովդ ու սիրովդ ճամբայ մը զանկիր ձեռք զարնել և փրկել աս մեղաւորը մահէն՝ յախտենական մահէն : Ա՛հ թէ՛ եթէ քու օրնեալ կամոյդ է , հաճէիր անմիջապէս ընել աս բանը : Դուն դիտես՝ ո՛վ Մատուած , որ կորստեան վիճակի մէջ է անիկայ . դիտես որ եթէ մէկ բան մը ըլլուի անոր՝ շուտով ըլլուելու է . քու

խմաստուն և բարի նախասահմանութեան գրքիդ մէջ նը-
շանակեալ բոպէ մը կը տեսնես, որ պիտի փակէ զանիկայ
անփոփոխ վիճակի մը մէջ : Ո՛հ թէ հաճէիր ձեռք զար-
նել անոր քանի որ դեռ կենդանիներուն հետ է, և յոյս
կայ : Ժող . թ . 4 : Ենորհաց մատակարարութեանը
մէջ քու ունեցած անփոփոխելի օրէնքներդ թող չեն տար՝
որ հոգի մը անտեսանելի աշխարհը մտնելէն ետքը դառնայ
ու նորոգուի : Ո՛հ շնորհէ որ քու Սուրբ Հոգիդ զօրծէ
քանի որ անիկայ դեռ անոր ներգործութեանը սահմաննե-
րուն մէջն է : «Երգործէ՛՛ ս՛վ Եստուած ինչ կեթզով
որ կ'ուզես, միայն թէ դթան անոր, ս՛վ Տէր դթան անոր,
որ դատապարտութեան և կործանման խորութիւններուն
մէջ չի յայ, որոնց եղբրքը կեցած կ'երևի յայտնապէս :
Ո՛հ թէ հաճէիր զանիկայ ծանր արկածից և թշուառու-
թեանց մէջ ձգել, եթէ հարկաւոր է այնպէս ընել, և
եթէ պատշաճ կ'երևի քեզի : Ո՛հ թէ Կանաակին պէս
«կապերով բռնեն, և զանիկայ ոսնակապերով կապեն՛՛»,
միայն թէ որ աս բանը պատճառ կ'ըլլայ «իր Տէր Եստու-
ծոյն երեսը խնդրելու» : Ի Կնաց . ԼԳ . 11, 12 :

Եացց ես քու անհուն խմաստութեանդ սահման մը չեմ
ցուցներ : Ղուն քու զօրութիւնդ փառաւոր և սքանչելի
օրինակներով ցուցուցած ես, որոնք՝ կը գոհանամ քեզմէ
որ մանրամասնաբար գիտեմ, և անոնք գիտնալուս ամրա-
ցած եմ անոնց յանդուգն փտահոյութեանը դէմ, որոնք
տկարութեամբ և յանդգնութեամբ կ'ըսեն թէ՛ Ենկարելի
է աս բանը, որն որ իրօք ըրած ես դուն : Ղփտեմ որ
դուն մարդը մինակ եղած ատենը, երբ հեռու էր շնորհաց
միջոցներէ և կրօնական արտանութիւններէ՝ անոր միտքը մէկ
հատիկ խորհուրդ մը ձգելով ըրած ես ան բանը, որ սչ
ամենաահաւոր խրատները՝ սչ ամենաքաղցր աղաչանքնե-
րը՝ սչ ամենասոսկալի տառապանքները՝ սչ սքանչելի ա-
զատութիւնները կարող եղած են ընել :

Փառաւորէ՛ քու անունդ՝ ս՛վ Տէր, և փառաւորէ՛ քու
շնորհքդ ան կերպով որ քու անհուն խմաստութեանդ
պատշաճ կ'երևնայ : Միայն թէ շնորհէ՛՛ կ'աղաչեմ քու
կամօքդ ամենայն խնարհ նազանդութեամբ, որ աս մե-
ղաւորը փրկուի . կամ եթէ ոչ՝ աս գրքիս աս մասին աչ-

խատու թիւնը բոլորովին ոչինչը չերթաց, այլ՝ Եթէ ոմանք մերժեն զանիկայ՝ ի կործանումն իրենց հոգւոյն, ուրիշները մտիկ ընեն ու ազրին. և քու ան ծառաներդ՝ որոնք աշխատած են անոնց փրկութեանն ու երջանկութեանը համար, տեսնեն զանոնք փառաց սահմաններուն մէջ, իբրև աւար՝ զորս դուն պարզեցիր իրենց՝ իբրև զանոնք դարձի բերելու դործիքները, և միանան անոնց հետ երկնային ալիւթի փաներով՝ «Մտր՝ որ մեզ սիրեց, ու մեզ իր արիւնովը մեր մեղքերէն լուաց, և մեզ՝ դատապարտեալ ապստամբներուն ու անիծեալներուն և ապականեալ մեղաւորներուն մէջէն առաւ, և թագաւորներ ու քահանաներ բրաւ Մատուցոյ ու իր Հօրը, որուն փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն՝ : Յայտ. ւն. 5, 6 :

ԳԼՈՒԽ ԺԻ

Իստոյ այնպիսի մեկուն , որ իր մեղսերուն մեծութիւնը պատշաճ
այնտան ինչուարի , որ չհամարձակիր Վերիստոսի երկու
փորձութիւնան յոստով :

1 . Հիմա կը ձգեմ ան թշուառ արարածները , որոնք
Մեկտարանը կ'անարգեն , և անոնք՝ որ անոր երեսը չեն
նայիր : Մեծ հաճութեամբ հիմա կը դառնամ անոնց՝
որոնք առաւել մտադրութեամբ մտիկ պիտի ընեն ինծի :
Ան պէսպէս վիճակի մէջ եղողներէն , որ մտքիս առջևը կու
դան հիմա՝ և կը կարօտին իմ՝ քաղցրութեամբ՝ զորովով
և յարգանք իրենց ինամբ տանելուս , առաջիկայ գլխոյս
վերնագրին մէջ յիշածէս աւելի կարեկցութեան արժանի՝
և օգնութեան հասնելու համար առաւել անմիջական ջանք
պահանջող ուրիշ մը չկայ :

2 . Ետ հաւանական է որ վշտացելոյն մէկը աղաղա-
կէ թէ՛ « Բաւական է . այլ ևս մի սաստկացնէր ցաւս
ու թշուառութիւնս : Ան վճիռը՝ որ այնքան ահաւոր
կերպով նկարագրեցիր որ անգեղջ և անհաւատ մեղաւորին
գլխուն պիտի դայ , ինծի տրուելիք վճիռն է . և անոր ա-
հերը՝ իմ ահերս են : Ինչու որ իմ անօրէնութիւններս
մինչև երկինքը հասան . և իմ յանցանքներս մինչև ամ-
պերը ելան : Յայտ . ԺԷ . 5 : Իմ վիճակս տարօրինակ
վիճակ մըն է : Անշուշտ բնաւ ինծի չափ մեծ մեղաւոր մը
եղած չէ : Մտքան ողորմութիւններ ընդունած եմ , այսքան
պատեհութիւններ վայելած եմ , Մեկտարանին շնորհացը
այսքան հրաւերները մտիկ բրած եմ . և տակաւին սիրտս
այնքան կարծր է , և բնութիւնս այնքան անհարկ մեղան-
չական է , և իմ գայրացուցիչ գործքերուս թիւն ու ծան-
րացնող պարագաները այնքան են , որ չեմ համարձակիր
ոչս մը ունենալ : Բաւական է որ Մտուած մինչև հի-
մա համբերեց ինծի . բաւական է որ՝ այսքան տարի չա-

րու թեամբ անցնելէս ետքը , տակաւին դժոխքին մէջը չեմ : Եւ մէն աւուր յապաղումը ողորմութիւն մըն է՝ որուն վրայ կը սքանչանամ : Ար պակկիմ և կը հիանամ որ մահն ու դատապարտութիւնը վրաս չհասան իմ գործքերուս մէջ նոյն օրը : Արթըննամ՝ և կը հիանամ որ անկողինս իմ գերեզմանս չեղաւ . կը հիանամ որ հոգիս մարմնէս չզատուեցաւ , և դեկրուն ու դատապարտեալ հոգիներուն մէջ չինկաւ” :

3 . “ Յիրաւի փրկութեան աւետիսը կը լսեմ . բայց աւանդ , ան փրկութեան աւետիս չէ ինձի : Արջանիկ հոգիներ կան որ յոյս ունին . և յիրաւի անոնց յոյսը Վրբիստոսի ու անոր միջոցով ցուցուած Վատուծոյ շնորհքին վրայ է : Բայց իրենց սրտերնուն մէջ քաջալերութիւն մը կը զգան անոր երթալու , մինչդեռ ես չեմ համարձակիր : Վրբիստոս և շնորհքը այնպիսի բաներ են , որուն մէջ կը վահնամ թէ ես բաժին չունիմ , ու անկաւելլու ալ չեմ : Ըստ առատ և պատուական խոստումներ կան Վատուծոյ խօսքին մէջ . բայց ինձի՛ կնքուած գրքի մը պէս են , ու ծածկուած են ինձմէ . անանկ որ ինձի օգուտ մը չկայ : Վիտեմ որ Վրբիստոս կարող է փրկել . գիտեմ որ կամեցող է փրկել ոմանք : Բայց իս փրկելու յօժար ըլլալը — այսպիսի ապականեալ՝ այսպիսի զայրացուցիչ արարած մը , ինչպէս որ Վատուած գիտէ , և ինչպէս որ խղճմտանքս ալ գիտէ թէ էի և մինչև այսօր ալ եմ — չեմ գիտեր թէ ինչպէս հաւատամ . արդարև այսչափը կը խոստովանիմ որ բացարձակապէս անկարելի չէ . և յետին յուսահատութեան մէջ չեմ . թէպէտ աւանդ՝ կ'երևնայ թէ անոր սահմաններուն մօտ եմ , և կը սպասեմ ամէն օր և ամէն ժամ որ անոր մէջ պիտի իյնամ” :

4 . Թներևս աս վիճակին վրայով այսքան մանրամասն պիտի չխօսէի , եթէ շատերը անոր մէջ տեսած չըլլայի . և ս'վ ընթերցող՝ եթէ դուն աս վիճակին մէջն ես , քեզի քաջալերութեան համար շատերը պիտի ցուցնեմ , որոնք հիմա հաստատուն՝ զուարթամիտ՝ և օգտակար քրիստոնէից թուոյն մէջն են : Այլ կը յուսամ թէ աստուածային շնորհքը քեզ անոնց հետ պիտի խառնէ , թէ որ աս “խորունկ տեղերէն Տէրոջը կանչես . Սողմ . ճԼ . 1 . ու թէ

և Յովնանու պէս Տէրոջը երեսէն ձգուած ալ երևնաս ,
 Յովնանին հետ « տակաւին անոր սուրբ տաճարի՛ն նայէ՛ » :
 Յով . Բ . 4 :

5 . Մի սեպեր թէ ան օր՛նեալ Հոգին՝ որուն պաշտօնը
 ան մեծ Միսիթարիչն ըլլալ է , մէկդի ձգելով կը ջանամ
 քեզ առ անմիսիթար վիճակէն ազատել . վասն զի անիկայ
 իբրև բանականութեան մեծ աղբիւր կը վարուի բանասոր
 արարածներուն հետ . և անոր համար ալ բանական մի-
 ջոցներով ու խորհրդածութիւններով կը ներգործէ :
 Ասան որոյ թողութիւն շնորհէ ինծի որ հանդարտու-
 թեամբ խօսիմ քեզի , և հարցընեմ թէ ի՞նչ պատճառ
 ունիս քեզի դէմ առ ամէն կրիւք զանգատներուդ ու ամ-
 բաստանութիւններուդ համար : Ի՞նչ պատճառ կրնաս
 ցուցընել թէ քու վիճակդ տարօրինակ է , որ ատեն ան-
 թիւ անձինք քեզի կ'ըսեն թէ՛ իրենք ալ նոյն զգացումները
 ունեցած են : Ի՞նչ պատճառ ունիս այսպիսի խտու-
 թեամբ վճիռ ընել քու անձիդ դէմ , երբոր Աւետարանը
 այնպիսի յուսալից խօսքերով կը խօսի : Արմ ի՞նչ պատ-
 ճառ ունիս խորհելու թէ անոր ըսած շնորհալիր բաները
 քեզի համար չեն : Յիրաւի քու որտիդ ապականութիւնը
 աւելի գիտես քան թէ ուրիշներունը . և անոնց տեսանելի
 սխալմունքներուն ու տկարութիւններուն հազարաւոր
 գթալի ջատագովութիւններ կը զանեն , որոնք քու կիսնե-
 րուդ համար չես առներ . և կրնայ ըլլալ որ , անոնցմէ ո-
 մանք՝ որոնց որ կը զմայլիս որպէս թէ սուրբ են՝ քեզի հետ
 բազդատելով , իրենք զիրենք մինչև հողը կը խոնարհեցը-
 նեն՝ իբրև անարժան Մատուցոյ Ժողովուրդին ամենէն փո-
 քրըներուն թիւէն համարուելու , և կ'ուզեն քեզի նման
 ըլլալ , անանկ սեպելով թէ քու վրոզ առաւել բարի բան
 և քիչ չար բան կը տեսնեն՝ քան թէ իրենց վրայ :

6 . Իսցց ասոր հակառակը ենթադրելով՝ ի՞նչ կ'ըլլայ
 թէ որ ըսնք թէ երբէք երկրիս երեսը զօնուած մեղաւոր-
 ներուն ամենէն մեծը դուն ես : Ի՞նչ կ'ըլլայ եթէ քու ա-
 նօրէնութիւններդ ամէն օր մինչև երկինքը հասած , և քու
 ամբարշտութիւններդ մինչև ամպերը ելած ըլլան . Յայտ .
 ԺԲ . 5 . Հոն հասած այնպիսի սոսկալի մեծութեամբ , որ
 երկիր և երկինք զարշէին քեզմէ իբրև հրէշ ամբարշտու-

Թեան : Աս ամենը ընդունելով՝ «Տերոջ առջևը դժուարին բան մը կայ արդեօք» : Ծանոթ . Ժբ . 14 : Անն այնքան մութ գոյն մեղքեր , որոնց վրայ մեղաւորը կրբոր զղջայ , Վրիստոսի արիւնը կարող չըլլայ ջնջել զանոնք : Այն՝ Թեպէտ յանդուզն ամբարշտութիւն և զարհուրատեալ յիմարութիւն պիտի ըլլայ մէկու մը մեղք գործելը որ շնորհքը շատնայ , (Հովն . 5 . 1 ,) բայց տակաւին եթէ յիբաւի աստուածային շնորհաց կրբէք ներածէն շատ աւելի ըլլայ քու յանցանքներդ , ո՞վ պիտի սահման դնէ Աստուծոյ շնորհքին . կամ ո՞վ պիտի բէթէ՝ անկարելի է որ Աստուած բուն քու այնպիսի թշուառական ըլլալուդ համար քեզ ընտրած ըլլայ ուրիշներուն մէջէն՝ զԹուրթեան յիշատակարան մը ընելու , և մինչև հիմա նմանը չերեցած շնորհաց յաղթանակ մը կանգնելու : Պօղոս առաքեալ զօրաւոր կերպով կ'ըսէ թէ՝ ասանկ եղաւ իրեն . և ինչ՞ու համար նմանապէս դուն ալ չկրնաս ողորմութիւն ընդունիլ , եթէ յիբաւի «մեղաւորներուն գլուխն» ալ ըլլաս , որ քու վրագ՝ իրբէ մեղաւորներուն գլխուն վրայ , «Յիսուս Վրիստոս ցուցընէ բոլոր երկայնամութիւնը՝ օրինակ ըլլալու անոնց որ պիտի հաւատան իրեն» : Իմ ՏԻ . Իմ . 15 , 16 :

7 . Թեպէտ քու կասկածներդ շատ տրամալի են , բայց ես յայտնապէս պիտի հարցընեմ թէ խղճմտանքիդ մէջ կը խորհի՞ս թէ Վրիստոս կարող չէ քեզ փրկել : Չէ՞ որ «բոլորովն կարող է ապրեցընելու անոնք՝ որ իրմով Աստուծոյ կու գան» : Լքբ . 5 . 25 : Այն՝ պիտի բես , մեծապէս կարող է ընելու . բայց չեմ համարձակիր խորհիլ թէ՝ պիտի ընէ : Լը ինչէ՞ն դիտես թէ պիտի չընէ : Ենիկայ՝ ամենամեծ մեղաւորներուն օգնած է , որոնք որ իրեն եկած են . և քու առջիկ ալ շնորհք և փրկութիւն դրած է յոյժ շնորհալից և քաջալերական խօսքերով : «Թե որ մէկը ծարաւ է , թող ինձի գայ՝ ու խմէ» . Յովն . 5 . 37 : «Են որ ծարաւ է՝ թող գայ , ու ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը ձրի առնէ» : Յայտ . իբ . 17 : «Երկէք ինձի բոլոր հոգնած ու բեռնաւորածներ , և ես ձեզ պիտի հանգչեցընեմ» : Ստաբ . Ժա . 28 : Լը գարնեալ . «Են որ ինձի կու գայ , բնաւ դուրս պիտի

չհանեմ" : Յովհ . Դ . 37 : Պիտի ըսես թէ "Ղ' շմարիտ է , ան ամէնը որ Հայրը իրեն կու տայ դուրս չհաներ . եթէ գիտնայի որ ես ալ անոնց թիւէն եմ , ան ատենը դուարթութեամբ կ'երթայի անոր" : Բայց սիրելի ընթերցող , կ'աղաչեմ քեզի որ ընարանին աղէկ նայիս , և տեսնես թէ հոն ատ կոպարը կայ : Ենչպէս գրուած է հոն , միթէ կ'ըսէ՞ թէ Կոնք որ Հայրը ինձի կու տայ , անոնցմէ մէկը դուրս չեմ հաներ : Եւելի քաջալերական կերպով գրուած է . և ինչո՞ւ համար 'ի դերև պիտի հանես անոր իմաստութիւնն ու բարութիւնը քու քովէդ խօսքեր շինելով : "Կնոր խօսքերուն վրայ բան մի աւելցընէր , որ չըլլայ թէ քեզ յանդիմանէ" . Եբու . Է . 6 . այլ գրուածին պէս առ , և ուրախացիր անոնց տուած միութարութիւնովը : Մեր Տէրը գիտցաւ թէ ինչ շիտթութեան մէջ կրնայ ըլլալ որ իննան խորունկը մտածող ումանք՝ իր առջի ըսած խօսքովը թէ "Կն ամէնը որ Հայրը ինձի կու տայ , ինձի պիտի դայ" . և ուստի որպէս թէ դիտեամբ զանիկայ հաւասարակշռելու համար , սա շնորհաձիր խօսքերն ալ կը յաւելու , "Կն որ ինձի կու դայ՝ բնաւ" , երբէք՝ բնաւ մէկ կերպով մը "դուրս պիտի չհանեմ" :

8 Այսան որոյ եթէ արդէն վհատած և սարսափած ես քու մեղքերուդ մեծութեանը վրայ , մի յաւելուր անոնց ծանրութեանն ու թուոյն վրայ բոլոր ուրիշներէն աւելի մեծն ու գէշը , որքեալ Փրկչին հաւատարմութեանն ու շնորհացը վրայ չվատահիլը : Կնոր քու վրայ ունեցած սիրոյ նպատակներուն մի հակառակիր : Ո՛վ թշուառ հոգի , որմէ՞ կը վախնաս : Որ՞ու կը դողաս մերձեալ : Խաչեալ Փրկչին՝ զինեալ Գառին քով այդպիսի վախնալու բան մը կայ : Թէ որ քու հոգիդ՝ որ դրեթէ իր յանցանաց բեռին տակը կ'ընկզմի , տանիս և անոր ոտքը ձգես , ի՞նչ կու տաս անոր , եթէ ոչ ան աւարը՝ որն որ վատարկելու համար արիւն թափեց ու մեռաւ : Այլ միթէ զանիկայ այնքան սուղ զինով ծախու առաւ որ՝ արհամարհելով մերժէ՞ : Գնա անոր ուղղակի , և անոր առջեւը ինկիր , և քու թշուառութիւնդ՝ որ հիմա հակառակ նկատումով մը կը ցուցնէիր , ներկայացուր իրեն՝ իրրև ա-

ուրիշ հոգիիդ անոր երթալուն , և իբրև փաստ կարեկից Փրկչին՝ քեզ ընդունելու : Գնահ և վատահ եղիր , « ուր որ աւելի եղած է մեղքը , ալ աւելի պիտի ըլլայ շնորհքը » : 20 : Աստահ եղիր որ եթէ մէկ մեղաւոր մը միւսէն աւելի աղէկ ընդունելութիւն գտնել կը յուսայ , չէ թէ յանցանքն ու թշուառութիւնը քիչ եղողն է ան , այլ ան՝ որ յոյժ խորին կը խոնարհի Աստուծոյ առջևը իր թշուառութիւնն ու յանցանքը զգալով :

Աս փառալիրութիւններու վրայ խորհրտածութիւն , նաև խոնարհ և խառնարան հաղթանք մը աստ Վրիստոս՝ ողորձութիւն համար :

Ա՛յլ իմ հոգիս , ի՞նչ կ'ըսես աս բաներուն վրայոք : Գտնէ կարելութիւն մը չկայ՝ օգնութիւն գտնելու Վրիստոսէն : Այլ կայ ուրիշ կերպով օգնութիւն գտնելու կարելութիւն մը : Արկինքին տակը ուրիշ անուն մը կայ տրուած , որով կարենանք փրկուիլ : Գործ . 7 . 12 : Գիտեմ որ չկայ : Աւրեմն Խարայէլացի բորոսներուն պէս ըսելու եմ թէ՛ (7 . 4 ,) « Ի՞նչ որ հոս նստիմ , կը կորուսիմ » . բայց թէ որ երթալս պարագա ալ ելլէ , տակաւին պիտի մեռնիմ » . բայց թերևս կը փրկէ իմ հոգիս : Ասան որոյ պիտի ելլեմ , և երթամ անոր կամ յաւէտ , հաւատալով թէ ինքը հոս է իր հոգևոր ներկայութեամբը՝ մեղաւից և թշուառ պիտի անոր առջևը ինձամ երեսի վրայ աս բոպէիս , և հոգիս առջին պիտի թափեմ :

Ա՛յլ օրհնալ Յիսուս , ինքզնեքս քեզի կը ներկայացընեմ իբրև թշուառ արարած մը , յիրաւի հարկադրութենէ ստիպեալ ասանկ ընելու : Ասան զի անշուշտ եթէ ան հարկադրութիւնը բացարձակ և ստիպողական չըլլար , առ ամօթոյ պիտի չհամարձակէի քու սուրբ և փառաւոր ներկայութեանդ երևնալ : Աստարեկապէս համոզուած եմ որ մեղքերս ու յիմարութիւններս այնքան մեծ են՝ որ չեմ կրնար արդարացընել . այնքան՝ որ չեմ կրնար պատմել , և չեմ կրնար միտք առնել : Իմ ապականեալ և անարգ բնութեանս մէջ կը զգամ որ՝ մեղաց աղբիւր մը

կայ , որ անօրէնութիւն ու ամբարշտութիւն կը բղխէ՝
ինչպէս որ այգիւր մը իր ջուրը դուրս կու տայ , և իմ
անձս ինծի բեռ մը ու ահ մը կ'ընէ : Իմ յանցանքներս
այնքան մեծ են՝ որ անոնց համար թողութիւն խնդրելը
յանդգնութիւն կը թուի ինծի : Այս սակայն՝ աւելի մեծ
յանդգնութիւն պիտի չըլլամ ըսել թէ անոնք քու ողոր-
մութեանդ՝ և քու արիւնիդ զօրութեանը չափէն վեր են .
ըսել թէ դուն միայն ստորին կարգի մեղաւորներու թո-
ղութիւն տալու ու փրկելու չափ զօրութիւն ու շնորհք
ունիս , բայց ինծի նմանները կարողութեանէդ դուրս են :
Պահէ զիս աս հայհոյական դաղափարէն : Պահէ՛ զիս աս
անտեղի կասկածէն : Վիտեմ որ ամէն բանի կարող ես .
ու քու դիտաւորութիւնդ բնաւ չարգիլուիք : ՅԷ .
ԽԲ . 2 : Յիրաւի դուն կարող ես բոլորովին փրկելու ,
ինչպէս որ քու խօսքդ կը զօրեցէ . ԱԷԲ . Է . 25 : Այս
ուստի ամօթոյ և երկիւղի բնոր ընդդիմութիւններուն մե-
ջէն ճեղքելով , որոնք զիս քեզի դալէն ես կը պահէին ,
քու առջև կու գամ և զեախնը կ'իյնամ հողին վայ :
ՄՎ Տէր , դուն զիտես իմ բոլոր մեղքերս ու իմ բոլոր
յիմարութիւններս : Սաղ . կԹ . 5 : Չեմ կրնար
ծածկել զանոնք քու առջև . և կը յուսամ որ կրնամ ը-
սել թէ չեմ ուզեր ծածկել՝ կամ ճշմարտութեան կերպա-
բանք ունեցող ճատագովութիւններ գտնելու աշխատիլ :
Վճրաստանէ՛ ինծի համար՝ ո՛վ Տէր , ինչպէս որ կ'ուզես .
և ես ճշմարտութեամբ պիտի ըսեմ թէ յանցաւոր եմ աս
բոլոր ամբաստանութիւններով : Պիտի խոստովանիմ
թէ քու զօրեցածիդ չափ մեծ մեղաւոր մըն եմ , բայց
տակաւին այնպիսի մեղաւոր մը որ թողութեան համար
քեզի կու գամ : Աթէ մեռնիմ , Նազանդելով՝ և մա-
հարեր հարուածին արդարութիւնը խոստովանելով պիտի
մեռնիմ : Աթէ կորսուիմ , սեղանին եղջիւրներէն բըռ-
նելով պիտի ըլլայ , ինքզինքս քու ոտքիդ տակը ձգելով ,
թէպէտեւ այսպիսի ապստամբ մը եղած եմ քու աթոռիդ
դէմ : Շատերը կատարեալ թողութիւն ընդունած են
հոն . մինչև անգամ իրենց յուսացածէն աւելի շնորհք
գտած են : Իսկ ո՛վ օրհնալ Յիսուս , միթէ քու բոլոր
կարեկցութիւններդ հատան : Պիտի մերժե՛ս հիմա մէկ

խոնարհ արարած մը որ քեզի կու դայ կենաց համար , և ուրիշ բան մը չըսեր՝ բայց միայն ողորմութիւն ու ձրի շնորհք կը խնդրէ : Վթա ինծի՝ ո՛վ բարեշնորհ Փրկիչ , զթա ինծի , և իմ հոգիս քու աչքիդ առջևը թող պատուական սեպուի : Դ՛ թառ աս . 14 : Ա՛հ՝ մի վճռեր զիս ան յետին թշուառութեան և յուսահատութեան տեղը խրկել , որմէ քու բարեշնորհ նպատակդ է ազատել և փրկել շատերը :

Ա՛վ Տէր , զիս քու երեսեղ մէկդի մի՛ վճռեր և մի՛ բարկանար՝ երբոր համարձակիմ՝ քու արքայական հանդերձէդ բռնել և ըսել թէ՛ Չեմ կրնար թող տալ և չեմ թողուր քեզ , մինչև որ իմ աղաչանքս շնորհուի : Ծանօթ . ԼԷ . 26 : Ա՛հ՝ յիշէ՛ որ իմ յախտնական բաժինս փասնդի մէջ է : Յիշէ՛ ո՛վ Տէր , որ յախտնական երջանկութիւն ընդունելու՝ և յախտնական՝ անօգնական՝ անյոյս կորուստէ ազատելու բոլոր յոյսերս քու վրադ խարխուսալ են , անոնք քու երեսիդ խնդումովք կը հաստատուին , ու երեսդ կնձռելովք կ'իյնան : Ա՛հ՝ զթա ինծի աս իմ անմահ հոգւոյս համար : Ասմ թէ որ միայն իմինիս համար ալ չէ , շատ ուրիշներուն համար ալ , որոնք մէկ կողմանէ ինծի ըրած ողորմութենէդ քաջալերութիւն կրնան առնել , կամ միւս կողմանէ մեծապէս վերաւորիլ ու յուսահատիլ իմ թշուառ յուսահատութեանս օրինակովք : Ա՛ղաչեմ քեզի՛ ո՛վ Տէր ողորմէ քու արժանաւորութեանդ համար , և քու Հօրդ առատ ու զերազոյն շնորհացը արտայայտութեանը համար : Ա՛ղաչեմ քեզի խաչին վրայ թափած արիւնովք : Ա՛ղաչեմ քեզի շնորհաց և խաղաղութեան ուխտովք , որն որ Հայրը քեզի հետ ըրաւ , հաւատացեալ և զղջացող մեղաւորներուն փրկութեանը համար , փրկէ՛ զիս , փրկէ՛ զիս՝ ո՛վ Տէր , որ անձկանօք կը փափայրիմ զղջալ և հաւատալ : Յիրաւի ևս մէկ մեղաւոր մըն եմ , որուն վախճանական և յախտնական կորուստովք քու արդարութիւնդ կրնար փառաւորուիլ . բայց ո՛հ , եթէ թողութիւն շնորհես ինծի , մէկ յիշատակարան մը պիտի ըլլամ՝ ՚ի պատիւ քու շնորհացդ ու արեանդ զօրութեանը , անարգիս առանց քու ողորմութեանդ՝ ունեցած նուաստութեանն ու թշուա-

ութեանը չափովը : Վու ամենօրնեալ Հոգիովդ խօսէ
ինձի՝ ոյլ Տէր , և փարատէ՛ իմ երկիւղներս : Վու սիրոյ
և շնորհաց երեսովդ նայէ՛ ինձի , և ըսէ՛ ինձի՝ ինչպէս որ
քու երկրիս վրայ եղած օրերդ շատ խոնարհ աղաչողներուն
ըսիր՝ “Վու մեղքերդ ներուած են քեզի , դնա՛ խաղաղու-
թեամբ” :

ԳԼՈՒԽ ԺԳ

Իր հասարակն ու գիտնոր տնխիցնութեանը վրայ ստորա-
 իտասող հոգիին ըրած հարցառննութիւննի-բռան հասնասոր
 օգնութեան յը :

1 . Կախընթաց գլուխներուն մէջ գրուցուած կարևոր
 բաներուն հետեւութեամբը կը յուսամ թէ սխալած պիտի
 չըլլամ խորհելով թէ քանի մը բարեպաշտական տպաու-
 բութիւններ եղած պիտի ըլլան ան սրտերուն վրայ՝ որ ա-
 ռաջ զգացած չէին ան բաները . կամ ուր որ յառաջմանէ
 պաղած ու թմրած էին , նորէն կենդանացած պիտի ըլլան :
 Իսկ սակայն աղէկ գիտեմ և կը փափարիմ որ դուն ալ
 աղէկ գիտնաս՝ թէ աս կարևոր նիւթիս մէջ ի՞նչ մեծ վը-
 տանգ կու գայ անձը շողորթութելէն . և թէ որքան հար-
 կաւոր է մարդիկը զգուշացընել՝ որ իրենց մտացը մէջ քանի
 մը եռանդուն զգացումներ գցալով , և իրենց նախկին վա-
 բուցը քանի մը անառակ ընթացքները ուղղելով , շաճա-
 պարեն վճռելու թէ՛ իրօք նորոգեալ են : Ես քանիս մէջ
 մէկ սխալմունք մը ընելը կրնայ ըլլալ որ անհունապէս մա-
 հարեր ըլլայ . կրնայ ըլլալ որ ան սուտ խաղաղութեան
 կէտը ըլլայ՝ որ մարդուս իր սրտին մէջ իր անձին երանի
 տալու , և զինքը ապահով սեպելու կ'առաջնորդէ , քանի
 որ Եստուծոյ օրէնքին բոլոր սպառնալիքներն ու անէճքները
 իր սկանջին կը նշեն , և ճշմարտիւ իրեն վրայ են ուղղակի .
 ք (Օրէն . իթ . 19 , 20 . քանի որ նոյն ատենը հազարա-
 ւոր խոսամունքներ իրեն կ'առնէ որոնց մէջ ինք բաժին
 չունի . որոնք սաստիկ ջերմի մէջ եղող մարդու մը տրուած
 ոգեկնց գինիի , կամ քնափութեան մէջ եղող մէկու մը
 տրուած զօրաւոր ամիսնի կը նմանին իրեն համար : Եպա-
 ռատ երկրի նման եղող ունկնդիրները ու բախութեամբ ըն-
 դունեցին խօսքը , և այնպէս թճուեցաւ թէ շատ ատա-
 հունձք մը պիտի յառաջ բերեն . բայց սակայն շուտով
 շորցան : Մատթ . ԺԳ . 5 , 6 , 20 : Հիմա՝ որպէս զի
 ասանկ չըլլայ քեզի , որպէս զի մինչև հիմա բոլոր իմ թա-

փած աշխատութիւններս ու քուկդ ալ պարապը չերթայ ,
 և որպէս զի ապահովութեան ու երջանկութեան խարերայ
 երազ մը քեզ թշուառութեան ու կործանման մէջ աւելի
 խորունկ չթաղէ , ներէ՛ ինձի՛ որ սրտիդ մէջ մէկ մեծ
 հարցում մը ընել տամ քեզի , որ ասանկով աւելի աղէկ
 կերպով կարող ըլլաս վիճակիդ վրայ որոշում ընել , և զա-
 նազանել թէ ի՞նչ է երկինքի թագաւորութեանը միայն
 մերձ գալը ու անոր ճշմարիտ մէկ անդամը ըլլալը :

2 . Երդ՝ ասիկայ Վրիստոսի վրայ ունեցած հաւատքիդ
 անկեղծութենէն կախում ունի , երբոր հաւատքը ամենէն
 ընդհանուր մտքով առնենք , ինչպէս որ վերը բացատրե-
 ցինք . այսինքն՝ անանկ հաւատք մը , որ կը պարունակէ
 զոչում՝ ու նոր և ընդհանրական շնորհաւորութեան ան
 հաստատուն դիտաւորութիւնը , որ կ'էժէ ճշմարիտ ըլլայ՝
 իր կենսական տարրը անշուշտ հաւատքը պիտի ըլլայ :
 Աւստի քու վիճակիդ վրայ դատում ընելուդ մէջ քեզի
 օգնելու համար , ներէ՛ ինձի՛ որ հարցընեմ քեզի՛ կամ
 յաւէտ աղաչեմ քեզի որ դուն ինքզինքիդ հարցընես . մե-
 ղաց ու Վրիստոսի վրայ ի՞նչ գաղափարներ ունէիր , և
 հիմա ի՞նչ գաղափարներ ունիս . և քու կենացդ մնացած
 մասին մէջ վարքիդ վրայով ի՞նչ ապանի դիտաւորու-
 թիւններ ունիս : Ես խօսքերով առաջարկած զանազան
 մասնաւոր բաներուս վրայ երկարօրէն պիտի չտրամարա-
 նեմ , այլ յաւէտ քեզ պիտի խրկեմ կարդալու և ըննելու՝
 որ դատես թէ որքան համաձայն են անոնք Վրստոսոյ խօս-
 քին՝ որ է ան մեծ կանոնը , որով մեր բնաւորութիւնները
 շուտով պիտի քննուին , և մեր յախտնական վիճակը ան-
 փոփոխելի կերպով որոշուի :

3 . Արտանց հարցուր նախ՝ թէ ի՞նչ գաղափարներ ու-
 նիս մեզաց վրայ , և ի՞նչ զգացումներ ունեցած ես հոգիիդ
 մէջ անոր վրայով : Ետեն մը՝ մեղքը մէկ խարերայ կեր-
 պարանք մը հազաւ , և զեղեցիկ՝ հրապուրիչ երևոյթ մը
 ցուցուց . անանկ որ բոլոր սիրող հրապուրեցաւ անկէ ,
 և քու կենացդ գործն էիր ըրեր զանիկայ՝ ի գործ դնել :
 Իսկ անկէ վերջը խարուած ըլլալդ իմացար : Օգուցիր
 որ « օձի պէս կը խածնէ , ու քարբի պէս կը խայթէ » :
 Եւսմ . իգ . 32 : Եւզի տուած զուարճութենէն շատ մեծ

ատելութիւնով մը նայեցար անոր : Այսպէս աղէկ :
 Եսանկ կ'ըլլայ ամէն ճշմարիտ զղջացողին , և կը վախնամ
 թէ անոնց ալ՝ որոնք ան թիւէն չեն : Այս ան որոյ ներէ
 ինծի որ հարցընեմ նաև թէ աս ատելութիւնը ո՞ւրիկ
 ծագեցաւ : Աոկ անձնասիրութեան սկզբունքն էլաւ :
 Աոկ անկէ միտաորուելով համար էլաւ : Աոկ անով
 հոգիիդ վրայ դատապարտութիւն ու կործանում գալուն
 համար էլաւ : Ինչու անոր յոռութիւնը՝ անարգու-
 թիւնը՝ և չարութիւնը չզգացի՞ր , իբրև օրնեալ Բս-
 տուծոյ դէմ գործուած , որ փառաորեալ՝ առատա-
 բաշխ՝ և ողորմած Ասկ մըն է : Ինչու անոր անարգ ապե-
 րախտութեանը գաղափարովը չխռովեցանք : Իսկ ան դի-
 տաորութիւններուն համար՝ որ սրտիդ մէջ ծագեցան ,
 կ'աղաչեմ քեզի որ մտածես թէ ի՞նչպէս ձևացան անոնք ,
 և մինչև հիմա ի՞նչպէս 'ի գործ դիրք զանոնք : Ի՞նչ հա-
 ն՞ուր էին : Հաստատուն էին : Իւր տակաւին բոլոր ատ
 հաստատութեանը մէջ խոնարհ էին : Արբոր առաջադ-
 րեցիր մեղքի դէմ պատերազմիլ , ամէ՞ն մեղքի դէմ էր
 աս առաջադրութիւնդ : Իւր անհատելի է ան պատե-
 րազմը՝ որ աստուածային շնորհօք կ'առաջադրես յառաջ
 մարել մինչև որ բոլորովին յաղթես , կամ ջանքիդ մէջ
 մեռնիս : Իւր ասոր համաձայն՝ զանիկայ նուաճելու և կոր-
 ծանելու համար ունեցած ջանքերուդ մէջ աշխոյժ ես :
 Աթէ այսպէս է , ի՞նչ են " բերած ապաշխարութեան
 արժանաւոր պտուղներդ " : Ա՜ս - Գ . 8 : Ար յուսամ
 թէ բոլոր ապաշխարութիւնդ տրամութեան հեղեղներով
 շնորք երթար : Չարութիւն գործելէն զազարեցանք :
 Իարութիւն ընել կը սորվե՞ս : Ասայ . Կ . 16 , 17 :
 " Կորոզութիւնդ կը ցուցընէ թէ մեղացդ վրայ կը զղջաս ,
 կամ ասոր հակառակ՝ նորանոր մեղքի մէջ իյնալներդ կը
 ցուցընեն թէ մինչև անգամ զղջում կոչածիդ վրայ կը
 զղջաս : " Աերքին ատելութիւն մը ունի՞ս ամէն մեղքի
 դէմ , և ճշմարիտ նախանձ մը անոր դէմ : Իւր աս բա-
 նը մեղաց առիթներու և փորձութիւններու դէմ զջու-
 շանալու մէկ հոգ մը յառաջ կը բերէ՞ : Քեզ որոգայթի
 մէջ ձող պարազաններու դէմ կը հսկե՞ս . և մասնաւոր
 կերպով կը կրկնապատկե՞ս հսկողութիւնդ " քեզ դիւրաւ

պաշարող մեղքին" դէմ : Եբբ . Ժբ . 1 : Ըն մեղքը մեկդի դրամն ես , որ քրիստոնէական ասպարէզը վազես . հաստատուն որոշումով մեկդի դրամ , որ ալ չդառնաս անոր , ալ հաղորդ չըլլաս անոր , ու բնաւ քայլ մըն ալ չառնես դէպ 'ի անոր :

4 . Կերէ նաևս որ հարցընեմ թէ Վրիստոսի վրայ ունեցած զաղափարներդ ի՞նչ են : Ի՞նչ կը խորհիս անոր վրայ , և քու անոր հետ ունեցած առնչութեանդ վրայ : Աստարեւապէս համոզուած ես՝ որ անոր ու քու հոգւոյդ մէջտեղը միարանութիւն մը հաստատուելու է : Այս կը տեսնենք ու կը զգանք թէ ոչ միայն հեռուանց պատիւ՝ և վաղանցիկ յարգութիւն մատուցանելու ես անոր , իբրև իմաստուն՝ բարեսէր՝ և զերագոյն անձի մը , որուն անունն ու յիշատակութիւնը կը յարգես , այլ որովհետև կենդանի է ու կը թաղաւորէ , և միշտ քեզի մօտ է , և քեզ կը դիտէ , դուն ալ անոր նայելու՝ անոր մօտենալու՝ և խոնարհութեամբ անոր հետ զօրծդ տեսնելու ես , ան ամենամեծ զօրծդ՝ որմէ քու փրկութիւնդ կախում ունի :

5 . Երդ՝ դուն կը հարցընես թէ " Տէրօջը առջևը ինչով երթամ , ու Բարձրեալ Մտուածոյն առջևը իյնամ " : Մի+ . Գ . 6 : Թմերևս երբեմն կը մտածէիր զօհերու վերայ , ինչ որ քու ձեռքէդ կու դայ ընել : Հիմա համոզուած ես որ անոնք բաւական չեն . և թէ ան Գառին երթալու ես որ Մտուած պատրաստած է : Արբէք անանկ զաղափար մը ունեցամք Յիսուսի վրայ թէ " աշխարհի մեղքը կը վերցընէ " , (Յովհ . ան . 29 ,) և թէ " անիկայ որ մեղք չէր գիտեր , Մտուած մեզի համար մեղաւոր սեպեց , որ մենք անոր միջոցով Մտուածոյ արդարները բլլանք " : Բ Կորնթ . Ե . 21 : Անանկայ ինքնին կատարելապէս արդար սեպեցի՞ր . և քու արդարութիւնովդ արդարանալէն վհատելով , " Մտուածոյ արդարութեանը նազանդեցամ " : Հովհ . Գ . 3 : Աիրտդ երբէք սա երևելի ճշմարտութեանը աղէկ մը համոզուեցամ , որ եթէ փրկուելու ըլլաս , Վրիստոսի միջոցովն է . եթէ երբէք որդրմութիւն գտնելու ըլլաս Մտուածմէ , Վրիստոսի համար է . եթէ երբէք Մտուածոյ վերին տաճարին մէջ հաստատուիս , հոն պիտի կենաս իբրև յախտենական յաղ-

Թանակ մը ան յաղթութեանը՝ որ Վրիստոս մաստրիկեցաւ զժողովին իշխանութիւններուն վրայ, որ եթէ ինքը չքլար՝ անոնք պիտի յաղթէին քեզի :

6 . Սեր Տէրը կ'ըսէ թէ՝ « Ենծի նայեցէք, որ փրկուիք » : Երոյ . խն . 22 : Ա'ըսէ թէ « Արքայը երկրէն բարձրանամ , ամէնն ալ ինծի պիտի քաշեմ » : Յովհ . ժբ . 32 : « Այսեցանք անոր իբրև մի միայն փրկուիլ , անոր քաշուեցանք ան սուրբ մագնիսով , անոր մինչև մահուան յանձնառու եղող սիրոյն ձողական զորութիւնով : Վիտե՞ս ի՞նչ է Վրիստոսի երթալը իբրև խեղճ յոգնած ու բեռնաւորած մեղաւոր , որ հանդիս : Ասորք . ժն . 28 : Վիտե՞ս ի՞նչ է հոգևոր մտք « Որդւոյ մարդոյ մարմինը ուտելը , և անոր արիւնը խմելը » . Յովհ . զ . 54 . այսինքն՝ խաշեալ Վրիստոսին նայիլը իբրև մի միայն մեծ ապաւեն քու հոգւոյդ , և անոր վրայ՝ բնութեան ախորժակի՞ն՝ իր կերակուրին վրայ ունեցածին չափ՝ եռանդուն փափաք ունենալը : Վիտե՞ս ի՞նչ է սրտանց ինքզինքը Վրիստոսի տալը , իբրև թշուառ արաւրած մը՝ որ սերը ստացուածք բրած է անոր : Վու անմահ հոգիդ անոր յանձնած ես , որ մաքրէ և փրկէ զանիկայ . որ իր խօսքին պատուէրներովն ու իր Հոգւոյն ազգեցութիւնովը կատարէ զանիկայ , իր փառքին համար զործածէ , իր ուզած զործքին ու կրթութեանը տակ դնէ , քանի որ հոս մարմնի մէջ կը բնակի . և բնդունի զանիկայ մեռած ատենը , և ան հոգիներուն հետ խառնէ , որոնք գովարանութեան մշտնջենաւոր երգերով անոր աւթուր կը չքնապաւեն , և անոր ծառաներն են յախտեանս : Երտանց հաճած ես ասոր : Եւ աս բանին համար քու հաճութիւնդ կը նորոգե՞ս : Խորհրդով և հաստատուն որոշմամբ կը նորոգե՞ս զանիկայ , և կը զգաս որ հոգիդ Են՞ն՝ կ'ըսէ , քանի որ կը կարգաս ասիկայ : Եթէ այսպէս է , ուրեմն ես ալ կրնամ մեծաւ հաճութեամբ հաւանութեան ձեռք տալ քեզի , և ողջունել ու բնդունել քեզ իբրև Տէր Յիսուս Վրիստոսի մէկ անկեղծ աշակերտը . իբրև « խաւարին իշխանութեանն ազատուած , և Եստուծոյ սիրելի Որդւոյն Թաղաւորութեանը փոխադրուած » մը : Աող . ան . 13 : Ուրեմն կրնամ ողջունել

քեզ Տէրոջմով, իբրև այնպիսի մէկը՝ որուն խրկուած ու ապապրուած եմ մխիթարութեամբ խօսելու իբրև Հիսուսի պաշտօնեան, և զրուցելու որ (ոչ թէ ես կ'արձակեմ՝ քեզ քու մեղքերէդ, վասն զի չնչին բան մըն է մարդոց դատաստանովը դատուիլը, այլ) ամէնօրջնեալ Մատուած կ'արձակէ քեզ, և դուն այնպիսի մէկն ես՝ որուն՝ իր Մեկտարանին մէջն ըսաւ և միշտ ալ կը զրուցէ թէ՛ «Վու մեղքերդ ներուած են» . վասն որոյ զնա խաղաղութեամբ, և վայելէ՛ անոր մխիթարութիւնը : Դու՛ . է . 48 ; 50 :

7 . Վայց եթէ օտար են քեզի աս փորձառութիւններն ու աս վիճակը որ հիմն նկարագրեցի, տակաւին մեծ գործը կատարուած չէ . զգումէ և հաւատքէ զուրկ մեղաւոր մըն ես, և Մատուծոյ բարկութիւնը քու վրադ է : Հովհ . Գ . 36 : Թե՛ և արթնցած և զարհուրեալ մեղաւոր մը ըլլաս, և ի՛նչ և իցէ հաստատուն որոշումներ որ կազմած ըլլաս կենացդ ուղղութեանը համար, որքան ուզիդ ալ որ ըլլան զաղափարներդ, որքան մարտը որ ըլլայ պաշտամունքիդ կերպը, որքան եռանդուն որ ըլլայ նախանձաւորութիւնդ, որքան սաստիկ որ ըլլայ խտամբերութիւնդ, որքան մարդասէր որ ըլլայ բնաւորութիւնդ, որքան անմեղ որ ըլլայ կեանքդ, մխիթարութիւն չեմ կրնար տալ քեզի : Վորը բարեպաշտական յոյսերդ ունայն են, եթէ բոլոր մեղքերուդ համար Մատուծոյ ներկայութեանը սրբտանց խոնարհութիւն մը ըրած չես . եթէ Մատուծոյ ամէն անհաճոյ եղած բանին դէմ աս ուխտեալ պատերազմը հրատարակած չես . եթէ Վրիստոսի կարօտութիւն ունենալուդ՝ և առանց անոր կորսուած ըլլալուդ վրայ զգացում ունեցած չես . եթէ եռանդով անոր զացած չես, և հաւատքով հոգիդ անոր ձեռքը յանձնած չես, ու ինքզինքդ ուրացած չես, որ քու յոյսիդ խարխիւր անոր վրայ հաստատես . եթէ ինքզինքդ անոր նուիրած չես, ամէն ատեն և ամէն կերպով անոր հաւատարիմ ծառան ըլլալու . և եթէ աս ամենուն վրայ չես խոստովանիր թէ դուն մէկ անպիտան ծառայ մըն ես, որ ընդունելութիւն կամ թողութիւն գտնելու համար ուրիշ բանի ակնկալութիւն մը չունիս բայց միայն անոր արգարութեանն ու արեանը՝ և

անոր քովն եղած աստուածային շնորհաց արդեանցը . նորէն կ'ըսեմ՝ որ բոլոր յոյսերդ ունայն են , և աւագի վրայ հիմ կը դնես : Ստոր . է . 26 : Քու արդէն կանգնած տունդ պէտք է որ յերկիր կործանի , և անոր հիմունքը քակուի ու նորէն ձգուի , եթէ ոչ՝ դուն ու քու բոլոր յոյսերդ քեզի հետ մէկտեղ քիչ ատենէն պիտի քակուին երթան , և պիտի թաղուին յախտնական կործանման մէջ :

Իր զգնանն ու հուսարիւն անխորհուրդնը Մարութոյ շնորհութեանը Գողգոթայի խորհրդի վրայ յիշող հոգեւոյն արձնելը :

Ո՛վ Տէր Մատուած , դուն « սիրտը կը քննես , և երկկամունքները կը փորձես » : Երբ . ժէ . 10 : « Վորձէ զիս՝ ո՛վ Մատուած , ու գիտցի՛ր իմ սիրտս . իս քննէ , ու գիտցի՛ր իմ մտածմունքներս , և նայէ՛ թէ արդեօք չաք ճամբու մէջ եմ , և զիս դէպ 'ի յախտնական ճամբան աստ՞նորդէ » : Ստոր . ճլթ . 23 , 24 : Չե՞ որ խղճմբտանքս ալ քու ներկայութեանդ մէջ կը վկայէ՛ ո՛վ Տէր , թէ իմ զղճումս ու հաւատքս այնպէս են՝ ինչպէս որ ստորագրուեցաւ , կամ գոնէ իմ ջերմեռանդ աղօթքս աս է որ այնպէս ըլլան : Այնն որոյ եկուր՝ ո՛վ ամենօրնեալ Հոգի , որ ամենայն շնորհաց և մտիթարութեան աղբիւր ես , եկուր և իմ հոգւոյս աս վիճակը առաւել կատարելագործէ : Ո՛հ՝ մեղքը իր ամենազարեւիտ երևոյթովք իմ աչքերուս առջին դիր , որ անխարին և անհաշտ ատելութիւն մը ունենամ անոր դէմ : Ո՛հ՝ ամենօրնեալ Մատուածոյ մեծութիւնն ու ողորմութիւնը այնպէս ցուցուր ինձի , որ սիրտս զարհուրի ու հալի : Չ'արկ վէմին , որ ջուրերը դուրս բղխին . Ստոր . հք . 20 . հարագաս՝ անկեղծ՝ և որդիական զղճման ջուրերը : Ո՛վ ամենօրնեալ Հոգի , յանդիմանէ՛ զիս մեղքի՛ արդարութեան և դատաստանի համար : Հոգ . ժղ . 8 : Ինձի ցուցուր որ ես ինքզինքս կորսընցուցած եմ . բայց իմ յոյս միայն Մատուածէ է , (Ո՛վ . ժգ . 9 ,) Մատուածէ՛ Քրիստոսի միջոցով , որ անով միայն զթուութիւն ու օգնութիւն կ'ընէ ինձի : Քու մասնաւոր պաշտանիդ համեմատ , Քրիստոսինէն առ՝ ու ցուցուր ինձի : Հոգ . ժղ . 15 :

Մտոր փրկարար զօրութիւնը ցուցուր ինձի : Իր աս զօրութիւնը բանեցընելու յօժարութիւնը ցուցուր ինձի : Սորովեցուր իմ հաւատքիս որ խաչին վրայ տարածուած տեսնէ զանիկայ , տարածեալ բազկօր , կողը ծակած ու արիւնահոս . և որպէս թէ կ'ըսէ ինձի ամենազօրաւոր խօսքերով թէ որքան տեղ ունի իր սրտին մէջ ինձի համար : Տուր որ գիտնամ՝ թէ ինչ է բոլոր սրտիս սիրով նուածիլը . նուածիլ անոր հետ խաչուելու չափ . **Հոռով . Գ . 6 .** մեղքին ու աշխարհին մեռնիլ՝ իսկ Յիսուս Վերստնոսով Մատուծոյ կենդանի ըլլալը : **Հոռով . Գ . 11 :** Տուր որ անոր զօրութեանն ու սիրոյն վստահիմ : Տուր որ անյապաղ անոր յանձնեմ իմ հոգիս , անոր պատկերը կրեմ , անոր օրէնքները պահեմ , անոր ծառայութեանը մէջ ըլլամ . և մէկ յիշատակ մը ըլլամ յախտեանս յաւթօնից իր Մետաբանին զօրութեանը , և մէկ յաղթանակը իր յաղթող շնորհքին :

Ո՛վ ամենօրնեալ Մատուած , եթէ անկեղծ քրիստոնեայ մը ըլլալուս պակաս բան մը կայ , յայտնէ ինձի ու շնորհէ անիկայ իմ մէջս : Ա՛տղաչեմ քեզի ամէն սուտ ու յանդուզն յոյսերս փրկուր , որքան սուղ եղած ալ որ ըլլայ ան շէնքը որ այսպէս կը կործանի , և որքան հպարտ ալ որ եղած ըլլամ անոր ունայն զարդերուն վրայով : Տուր որ իմ վիճակիս դէշութիւնը գիտնամ , թէ և աս գիտութիւնը յոյժ աղետալի ըլլայ . և եթէ այլ ևս վտանգ մը մնայ , ո՛հ՝ թող սիրտս զգայ անիկայ , զգայ քանի որ դեռ դարման կայ :

Եթէ հոգւոյս մէջ տակաւին թաղուցեալ մեղք մը կայ , որ անկեղծութեամբ վերնտած չեմ զանիկայ , յայտնէ ինձի անիկայ , և փարատէ իմ սրտես , թէ և յոյժ խորին արմատներ արձակած և անոր շորս դին օրատած ըլլայ , ու թէ և զանիկայ խելելովչ ամէն ջիղ ցաւի : Ո՛վ Տէր , շնորհաձիր կսկծեցուցիչ ձեռօք խլէ զանիկայ : Եւ ո՛վ Տէր , կ'աղաչեմ քեզի որ աստիճանաւ՝ այն արագ ընթացիւք յառաջ երթաս և կատարեալ ընես ինչ որ տակաւին պակաս է հաւատքիս մէջ : **Թ . ԹԿ . Գ . 10 :** Աստարէ իմ մէջս քու բարութեանդ բոլոր հաճութիւնը : **Թ . ԹԿ . Թ . 11 :** Հարստացուր զիս ո՛վ Արկ-

նաւոր Հայր , քու Հոգւոյդ բոլոր շնորհքներովք . քու սիրելի Արդւոյդ կատարեալ պատկերին պէս ըրէ զիս . և ապա՝ անոր արժանաւորութեանը համար ինձի՛ եկուր , և յայտնէ իմ հոգւոյս քու շնորհալից ներկայութիւնդ , (Յովհ . ԺԳ . 21 , 23 ,) մինչև որ անիկայ հասուննայ ու յարմար ըլլայ ան փառաց վիճակին , որուն անիկայ պատրաստ ընելու համար սահմանուած են աս բոլոր գործողութիւնները : Ամէն :

ԳԼՈՒԽ ԺԴ

Վերխարոնէտիան որոտորութեան զունազան ճիւղերուն վրայ
առաւել խանաւոր արտաւելան ճը, որ ընթերցողը ասելէ
օգնութեան առեւ իր ինչ ըլլալուն՝ և ի՛նչ ըլլալ ջանք
նելու պարտախան ըլլալուն վրայ որոտոր ընելու :

1 . Արբոր յախտնականութեան անհուն մեծութիւնը
կը քննեմ, յոյժ դժուար է ինքզինքս յազեցընել բոլոր
ան խօսքերովը՝ որն որ մարդոց կրնամ գրուցել, ան բա-
ներուն վրայ՝ որոնց վրայ անոնց յախտնական բարելա-
ւութիւնը կը կայանայ : Վեզի անդին մէկ նկարագրու-
թիւն մը ըրի ճշմարիտ քրիստոնէական բնաւորութեան վը-
րայով, կը յուսամ թէ ատուգութեամբ կրնամ ըսել որ մէկ
ճիշդ և հաւատարիմ նկարագրութիւն մը ըրի : Բայց
տակաւին՝ քեզի աւելի ևս օգնութիւն ըլլալու համար,
անիկայ զանազան կերպով յայտնելով քու քննութեանդ
տակը պիտի ձգեմ, որ կարող ըլլաս դատում ընել թէ
ինչ ևս, և ի՛նչ ըլլալու ևս : Այս աս բանին մէջ միտքս
ոչ միայն քու վիճակդ քեզի ձանչընել է, և թէ տակա-
ւին ճշմարիտ աստուածպաշտութենէ օտար ևս . այլ և՛ քեզ
առաւել ևս հաստատել է, թէ որ Աստուծոյ շնորհքովը
փորձառութեամբ տեղեկացած ևս անոր : Արջանիկ պիտի
ըլլաս, անպատմելի կերպով երջանիկ, թէ որ՝ քանի որ
յառաջ կ'երթաս յողուածէ յողուած, կարենաս ըսել թէ՛
“Աս է իմ բնաւորութիւնս ու որպիսութիւնս” : Ան-
սահման աստիճանաւ երջանիկ պիտի ըլլաս, թէ որ կրնաս
ըսել թէ՛ “Աս է՝ որուն կը ցանկամ, որուն համար ա-
ղօթք կ'ընեմ, և որուն ետեէն ինկած եմ, բոլոր ուրիշ
բաներէն նախապատիւ համարելով, թէ և հիմակուան
ունեցածս դեռ աս ըլլայ” :

2 . Վննէ ուրեմն և փորձէ թէ՛ “ինչ հողի տէր ևս
դուն” : Ղուկ . թ . 55 : Այս ան որ բոլոր սրտերը կը
քննէ, աս քննութեան մէջ առաջնորդէ քեզի, և կարող

ընէ անանկ դատուել ինքզինքդ , որ Տէրոջմէն չդատապարտուիս : *ան Աորնի . Ժա . 31 , 32 :*

3 . Հայտնի ըլլայ քեզի ասիկայ ընդհանրապէս , որ եթէ յիրաւի քրիստոնեայ ես , « քու մարտիչ հոգիովը նորոգուած ես » . (Եփե . 23 . այնպէս նորոգուած՝ որ նորէն ծնած ես : Բաւական չէ նոր անուն մը առնելը , քանի մը բաներէ կտ կենալը , կամ քու վարուցք քանի մը մասնաւոր բաներուն մէջ ըստ մասին փոփոխութիւն մը ընելը : Փոփոխութիւնը մեծ ու հանրական ըլլալու է : Արեմն քննէ , թէ արդեօք բաներու վրայ նոր դադափարներ վատարկամեծ ես . առջի ունեցածներէդ տարբեր գործնական դատում մը ունեցամեծ ես . թէ արդեօք քու առաջադրած նպատակներդ և ան զգացմունքները՝ որ կը զգաս թէ սրբախիղ մէջ կը ներդործեն , և ան ընթացքը՝ որուն ուղղած ես քու գործքերդ աս զգածմունքներովը , բովանդակապէս նճր են՝ թէ հին : Վարձեալ՝ եթէ յիրաւի քրիստոնեայ ես , « աստուածային բնութեանը հաղորդ » ես . *Ի Պի . ան . 4 . աստուածային՝ Մատուծմե ծագելովը , անոր հակելու վը , և քեզ անոր նմանցընելովը : Այսն որոյ քննէ թէ արդեօք Մատուած անանկ մէկ սկզբունք մը տնկի՞ր է սրախիղ մէջ որ քեզ իրեն կը տանի ու իրեն նման կ'ընէ : Առաջարութեամբ քու հոգիդ քննէ , և տես թէ Մատուծոյ բարոյական կատարելութիւններուն , այսինքն անոր սրբութեանը՝ արդարութեանը՝ բարութեանը՝ և հաստատմութեանը պատկերը իրօք ունի՞ս . ինչու որ « նոր մարդը Մատուծոյ պատկերին պէս ստեղծուած է , արդարութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով » , (Եփե . 24 ,) և « զիտութիւնով նորոգուած է իր Աստեղծողին պատկերին պէս » : Աոր . 2 . 10 :*

4 . Վարձեալ առաւել ես օգնութիւն առնելու համար՝ քննէ թէ արդեօք դուն « նոյն միտքը ունի՞ս , որ Վերստոս Հիսուսի մէջն էր » : Փիլի . Բ . 5 : Թէ արդեօք Մատուծոյ մարմնացեալ Արդւոյն պատկերը ունի՞ս , որ շօքը ամենապայծառ և ամենագեղեցիկ նմանութիւնն է , որ երկինք կամ երկիր երբէք տեսած է : Եմեւորնեալ Հիսուսը ինքզինքը մէկ օրինակ մը ըրաւ բոլոր իր հետեողներուն . և ստուգիւ՝ հետեւելու ամենա-

յարմար օրինակ մըն է ան , բուն մեր բնութեամբը մէկ օրինակ մը , և ամենուն յարմար պարագաներով . օրինակ մը՝ որ միանգամայն իր անբիծ կատարելութիւնն ու դէպ 'ի մեզ՝ իրբև Տէր՝ Բարեկամ՝ և Վլուխ , իր ունեցած սիրելի առնչութիւնները գովելի կ'ընծայեն մեզի , իրբև ան անձը՝ որով մեր յախտնական վիճակը պիտի հաստատուի , և որուն նման ըլլայնուս մէջ կը կայանայ մեր յետին երջանկութիւնը , թէ որ երբէք երջանիկ պիտի ըլլանք : Արեմն Բրիտտոսի վարուցն ու բնաւորութեանը նայէ , ինչպէս որ նկարագրուած ու բացատրուած է Վեւտարանին մէջ , և քննէ ու տես թէ քուկինիդ մէջ անոր նման բան մը կրնաս գտնել : Անոր անձնանուէրութեանէն՝ սէրէն՝ և Վստուծոյ դիմող բնաւորութենէն դուն ալ ունի՞ս : Անոր հեղութենէն՝ խոնարհութենէն՝ և դէպ 'ի մարդիկ ունեցած բարեսիրութենէն դուն ալ ունի՞ս : Անոր մարբութենէն ու իմաստութենէն , անոր աշխարհատեսցութենէն՝ համբերութենէն՝ հաստատութենէն՝ և նախանձաւորութենէն դուն ալ ունի՞ս : Այս յերաւի քրիստոնէական բնաւորութեան բոլոր ուրիշ ճիւղերը , բաց 'ի անոնցմէ՝ որ զիրենք ունեցող անձին վրայ նախկին մեղաւորութիւն կը ցուցնեն , կրնանք աս կարգին մէջ դասել ու յառաջ բերել քու քննութեանդ բացատրութիւն ու օգնութիւն ընելու :

5 . Աը յաւելում դարձեալ՝ որ եթէ քրիստոնեայ ես , ըստ մեծի մասին « հոգևոր խորհուրդի՝ տէր ես , զիանալով որ անիկայ « կեանք ու խաղաղութիւն՝ է , քանի որ « մարմնաւոր խորհուրդը մահ է » : **Հոռն . Ը . 6 :** « իմէպէտ մարմնի մէջ ես , բայց չէ թէ մարմնաւորապէս զինուորութիւն կ'ընես » , (**Բ Աորն . Ժ . 3 ,**) չէ թէ քու պատուէրներդ ու հրամաններդ անկէ կ'առնես : Յիշուի անոր հարկաւոր շահերուն հոգ կը տանիս իրբև պարտաւորութիւն , բայց տակաւին ուրիշ առաւել արգիւ շահու մը նայելով պիտի ըլլայ ատիկայ . այսինքն բանական և անմահ հոգւոյն շահուն նայելով : Խորհուրդներդ , զգացմունքդ , հետամտութիւններդ և ընտրութիւնդ յաւելտ հոգևոր բաներու նայելով պիտի որոշուին քան թէ մարմնաւոր : **Մէկ խօսքով՝ « հաւատքով կը քալես ,**

ու չէ թէ երևոյթով՝ : ք Սորնը . և . 7 : Վու միտդ ապառնի՛ աներևոյթ՝ և ըստ մասին անխմանալի բաները պիտի զբաւեն : Եստուծոյ էութիւնը՝ կատարելութիւնները՝ նախախնամութիւնները՝ պատուիրանքները՝ սպանալիքները՝ և խոստմունքները քու հաւատքիդ նպատակը պիտի ըլլան : Ընոր պիտի նպատակ ընես Վրիստոս ալ որն որ շտեասծ պիտի սիրես ու պատուես : ան Պիտ . ան . 8 : Հաւատքիդ նպատակ պիտի ընես ան անտեսանելի աշխարհքն ալ , որն որ գիտես թէ յախտնական է , վասն որոյ անհունապէս առաւել արժանի է քու սրտեռանդ նկատմանդ՝ քան թէ ան բաները որ կ'երևնան ու ժամանակաւոր են : ք Սորնը . և . 18 :

6 . Եսոնք քրիստոնէական բնաւորութեան ընդհանուր տեսութիւններն են , որոնց վրայօք կ'աղաչեմ որ ինքզինքդ քննես : Եւ հիմա՛ կ'ուզեմ որ շարունակեմ և առաջնորդեմ քեզ անոր մեծ ճիւղերը քննելու , որոնք Եստուծոյ , մեր ընկերին , ու մեզի կը վերաբերին . և ան յատկութիւններն ալ , որոնք աս ամէն մէկ ճիւղերուն ետեէն կ'երթան , ինչպէս անկեղծութիւն՝ յարատեութիւն՝ քաղցրութիւն՝ նախանձաւորութիւն՝ և խոհեմութիւն : Եւ կը խնդրեմ որ աղէկ մտադրութիւն ընես , քանի որ ասոնց ամէն մէկուն վրայով առջևդ քանի մը ակնարկութիւններ կը դնեմ , որոնցմով կարող ըլլաս թէ վիճակիդ և թէ պարտաւորութիւններուդ վրայ լուսազոյն դատում ընել :

7 . Աւրեմն կ'աղաչեմ քեզի՛ քննէ՛ սրտիդ տրամադրութիւնը նկատմամբ ամենօրնեալ Եստուծոյ : Ընոր անզուգական վսեմութեանցը վրայ յարգական երկիւղ մը և գերազոյն սէր ու մեծարանք կը գտնե՞ս , մէկ փափաք մը անոր վրայ՝ իբրև ամենամեծ բարոյ , և սրտանց երախտադիտութիւն մը դէպ 'ի անոր՝ իբրև գերազոյն բարեբար : Արնամ անոր խնամքին վստահիլ : Արնամ անոր վնայութեանը ապաւինիլ : Ար փափաքի՞ս կատարեալ նազանդութիւն ընել անոր բոլոր պատուիրածներուն , և մէկ խոնարհ հպատակութիւն մը անոր նախախնամութեանը բոլոր տնօրէնութիւններուն : Ընոր փոքրը քու ամենէն աղնիւ վախճանդ կը համարի՞ս , և ինքզինքդ ա-

նոր հանեցընելը քու կենացդ մեծ գործը կ'ընե՞ս : Մտոր նման ըլլալն ու « հոգիով ու ճշմարտութիւնով անոր երկրպագութիւն ընելը » քու գլխաւոր հոգը կ'ընե՞ս : Յովհ . 7 . 24 :

8 . Վրիստոսի վրայ հաւատքը ինչ ըլլալը արդէն երկարորէն նկարագրեցի , վասն որոյ ալ բան պիտի չըսեմ թէ՛ Վրիստոսի զօրութեանն ու շնորհացը վրայ ան համոզմանը վրայով , որ հաւատքին մեծ հիմն է , թէ՛ Վրիստոսը բուրբ իր հանգամանքներովը ընդունելու վրայով , և թէ՛ հոգին անոր ձեռքը յանձնելու վրայով , որուն մէջ կը կայանայ հաւատքին մասնաւոր և սեպհական բնութիւնը :

9 . Թե՛ որ Վրիստոսի վրայ եղած աս հաւատքը անկեղծ ըլլայ , անտարակոյս դէպ 'ի անոր սէր պիտի յառաջ բերէ , որ աս սէրը ինքզինքը կը ցուցընէ անոր վրայ եղած քաղցր խորհուրդներով , դէպ 'ի անոր կատարեալ փութահութիւնով , անոր պատուէրը խնամօք պահելով , անոր օգիին՝ անոր բարեկամներուն՝ և անոր փաստին վրայ նըկատմունք ունենալով . յարգելով անոր՝ մահուան յանձնառու եղող սիրոյն յիշատակները , որոնք ինքը սահմանադրեց . անձուկ փափաք ունենալով երկնային աշխարհին վրայ , ուր որ ինքը կը բնակի՝ և վերջապէս բոլոր իր ժողովուրդն ալ պիտի բնակեցընէ : Յովհ . 6 . 2 :

10 . Ար յաւելում դարձեալ՝ համաձայն Աստուծոյ խօսքին , թէ՛ Վրիստոսի այսպէս հաւատալով ու անիկայ սիրելով , պիտի ուրախանաս ալ անով , անոր ունեցած փառաւոր խորհուրդովը , և իր ան խորհուրդը կատարելու համար ունեցած կատարեալ յարմարութիւնովը . իր բանին խոստմունքներովը , և իր ժողովուրդեան արտօնութիւններովը : Ուրախութեան առիթ ըլլալու է քեզի՝ որ աս աշխարհիս մէջ այսպիսի Վրիստոս մը երեցաւ . և քեզի համար ունեցած ուրախութիւնդ համեմատ պիտի ըլլայ ան պայծառութեանը՝ որով քու անիկ ունեցած օգուտդ ու դէպ 'ի անոր ունեցած առնչութիւնդ կը նշմարես :

11 . Վեղ քանի մը խորհրդածութիւններու ալ կ'աւազնորդեմ՝ քու սրտիդ ունեցած զգացումներուն վրայ դէպ 'ի ան Ամենօրէնեալ Հոգին : Թե՛ որ « Վրիստոսի

Հոգին չունինք , անորը չենք" : Հոգի . Ը . 9 : Թե
 որ Աստուծոյ Հոգիով չենք առաջնորդուիր , Աստուծոյ
 որդիքը չենք : Հոգի . Ը . 14 : Աւրեմն թէ որ
 ճշմարիտ քրիստոնեայ եւ պիտի փափաքիս , որ " Հոգիով
 ընցուիս" , (Եփես . Ե . 18 ,) հոգւոյդ ամէն մէկ կարու-
 զութիւնը անոր իշխանութեանը շնորհակալ ընես , ու ա-
 նոր քու սրտիդ ներգործելը առաւել հաստատուն՝ առա-
 ւել զօրաւոր՝ և աւելի հաճելի ըլլայ : Եւ աս սուրբ
 ազգեցութիւնները պահելու համար՝ շատ անգամ՝ ի սրտե-
 քննութիւն ու խորհրդածութիւն պիտի ընես . եւ պիտի
 կենաս ան մեղքերէն որ զանիկայ կը վշտացընեն . պիտի չք-
 փախցընես ան քաղցր պատեհութիւնները , երբոր կ'ե-
 ընի թէ անիկայ կը շնչէ քու հոգւոյդ վրայ . աղօթքով
 Աստուծոյ պիտի թախանձես անձկանօք , որ անիկայ վրադ
 աւելի առատօրէն թափուի Յիսուս Վրիստոսի ձեռօքը .
 Տէր . Կ . 6 . և պիտի ցանկաս անոր առաքմանն ու պաշ-
 տօնին վախճանը յառաջ տանիլ , որ է Վրիստոսը փա-
 ռաւորել , (Յովհ . ԺԳ . 14 ,) և անոր թաղաւորու-
 թիւնը հաստատել : Պիտի ցանկաս անոր իրքե որդեղ-
 րութեան Հոգի ըրած ազգեցութիւններուն , որ քու
 աղօթքդ ու պաշտամունքներդ ազատ և խանդակաթ ,
 շնորհակալութիւնդ զօրաւոր , մեղքի համար ունեցած
 տրամութիւնդ բորբոքեալ և սրտաուշ , անձնատուու-
 թիւնդ խոնարհ , և սէրդ եռանդուն ընէ . մէկ խօսքով ,
 առաջնորդէ քեզի քու կենացդ ու մահուան մէջ՝ այնպիսի
 տղու մը տրամադրութեամբը , որ իր հօրը վրայ կ'ուրա-
 խանայ , և կը ցանկայ առաւել ևս մօտ ըլլալու անոր ներ-
 կայութեանը :

12 . Վարձեալ՝ եթէ յիրաւի քրիստոնեայ եւ , քա-
 ջութեան հոգին առնելու պիտի փափաքիս : Հոգւոյ ան
 խոնարհ վիճակին մէջ անգամ՝ որուն պիտի վիճակիս ,
 Վրիստոսի գործքին մէջ դիւցազունի աստիճան ելլել պի-
 տի ցանկաս , հաստատուն որոյնմէր հակառակելով խա-
 ւարին զօրութեանց ամենազօրաւոր ջանքերուն , սրտիդ
 ներքին ապականութիւններուն , և ան ամէն արտաքին
 դժուարութիւններուն դէմ՝ որոնց կը պատահիս քու հը-
 նազանդութեան ճամբուդ մէջ , քանի որ նոյն ատենը

Քրիստոսի գործքին մէջ և անոր զօրութեամբը՝ յառաջ կ'երթաս « յաղթելով և յաղթելու » :

13 . Ըստ ամէն բաները աստուածապաշտութեան ճիւղերը կրնան սեպուիլ . ան աստուածապաշտութեանը՝ որ « ամէն բանի օգտակար է , ու թէ ներկայ և թէ ապանի կենաց խոստումները ունի » : ԿՍԻ . Ի . 8 :

14 . Կակ առջիկ կը դնեմ քրիստոնէական տրամադրութեան քանի մը ճիւղերն ալ , որոնք առաւել անմիջապէս ինքզինքնուս կը վերաբերին : Եւ արդ՝ թէ որ յիշուի քրիստոնէայ ես , անտարակոյս հոգին մարմինէն՝ և յաւիտեանական բաները ժամանակաւոր բաներէն նախապատիւ պիտի համարիս : Քու անմահ հոգեւոյդ յարգն ու արժէքը գիտնալով՝ անշուշտ հաստատ որոշում մը պիտի ընես որ անոր երջանկութիւնը ձեռք ձգես , աս բանին համար ինչ որ տալ և ինչ ալ որ քաշել հարկ ըլլայ : Եթէ ճշմարիտ քրիստոնէայ ես , նաև պիտի « խոնարհութիւն հագնիս » : ԿՍԻ . Է . 5 : Եւ բնական եւ բարոյական անկատարութիւններուդ , քու գիտութեանդ սահմանին կարծութեանը , քու առաջադրութիւններուդ անստուգութեանն ու տկարութեանը վրայ , և յարածամ ըստուծմէ ու բոլորաթիք եղած զրեթէ ամէն բաներէն կատուճ ունենալուդ վրայ քաջ ճանաչում պիտի ունենաս : Եւ մանաւանդ քու մեղապարտութեանդ վրայ ազէկ ճանաչում պիտի ունենաս . որուն յիշատակը քեզ ամօթով ու շիտթութիւնով պիտի լեցնէ , մինչև անգամ երբոր պատճառ ունենաս յուսալու թէ ներում դատած ես : Եսիկայ՝ ընկերներուդ հետ ունեցած վարմունքներուդ բոլոր խստութիւնն ու լրութիւնը կ'արգիլէ : Ա՛ռաւուցանէ քեզի՝ նախախնամութեան սահմանած պատուհաններուն մէջ ամենայն սուրբ նազանդութեամբ կրել Տէրոջը բարկութիւնը , անոր դէմ մեղք զործելին գիտցողներու պէս : ՄԻ՛ . Է . 9 : Կարձեալ՝ եթէ յիշուի քրիստոնէայ ես , հոգեւոյ մարտութեան ետեւ պիտի ըլլաս , և բոլոր արգիլեալ ցանկական հեշտութիւններուն վրայով հաստատուն ատելութիւն մը պիտի պահես ներսդիդ : Ենցեալ աղտոնութեանց յիշատակութիւնը քեզ ամօթով ու վիշտով պիտի լեցնէ , և ապանիին համար ջանք պի-

տի ընես որ խորհուրդներուդ ու փափաքներուդ վրայոք զգոյշ կենաս, նոյնպէս՝ խօսքերուդ ու գործքերուդ ալ և ոչ միայն շարութիւն գործելէն ետ պիտի կենաս, այլ անոր հետաւոր երեւոյթէն ու հաւանական պատեհութիւններէն ալ՝ զիսնալով ան Մատուծոյն կատարեալ սրբութիւնը՝ որուն հետ որ կը հաղորդակցիս, և ան յոյսին մարբարար բնութիւնը, (ն է՝ 3ովհ. 4. 3,) որն որ ունենալ սորվեցոց քեզի իր աւետարանովը :

15. Մտր հետ շատ սերտ կապակցած է ժուժկալութեան ան սիրելի առաքինութիւնը, որն որ քեզի կը սորվեցընէ զոյշ ըլլալ կերակուրներն ու խմելիքները այնպիսի կերպով մը գործածելէն, որ մարմինը անյարմար ընէ հոգւոյն ծառայութեանը. կամ աս երկուքին այնպիսի կերպով մը յարելէն, որ քու պատուական անդամանդդ՝ ժամանակդ կողոպտէ, կամ մէկ ծախք մը պատճառէ՝ որ պարագաներդ չվերցըներ, և արգելք ըլլայ ան ծախքերուն որն որ պարտական ես Քրիստոսի գործքին մէջ ընել, և տալ աղքատաց որչափ որ քու և անոնց առ Մատուած ունեցած առնչութիւննիդ ու մէկզմէկու ունեցած առնչութիւննիդ կը պահանջէ : Համատարի՝ զոյշ պիտի ըլլաս ան ամէն բաներուն դէմ որոնց բերմունքն է ցանկական բնութիւնդ աճեցընել, ան ամէն բաներուն դէմ՝ որ հոգին Մատուծոյ հետ ունեցած հաղորդակցութենէն կ'օտարացընեն, և Մատուծոյ ծառայութեանը մէջ ունեցած նախանձաւորութիւնն ու աշխոյժը կը նուազեցընեն :

16. Մէնօրջնեալ Յիսուսի աստուածային փիլիսոփայութիւնը պիտի սորվեցընէ քեզի նաև գոհ բնութիւն մը ունենալ : Մնիկայ կը չափաւորէ բաղձանքներդ ան աշխարհային վայելչութիւններուն վրայ՝ որոնց համար շտտերը անյադ տննչ մը ունին, որ յարածամ՝ յառաջ երթալով աճելու վրայ է : Օգոյշ պիտի ըլլաս որ չափէ դուրս խնամք չտասնիս ան բաներուն՝ որ քու երկնային ժառանգութիւնդ մոռցընելու կը ծառայեն : Այժէ՛ Մախախնամութիւնը՝ ի դերև հանէ ձեռք զարկած բաներդ, պիտի նապանջիս. եթէ ուրիշները աւելի յաջող ըլլան, պիտի նախանձիս անոնց, այլ յաւէտ շնորհակալ պիտի ըլլաս

Մատուցոյ՝ ան բաներուն համար՝ որ հաճեր է անոնց պարգևել, ինչպէս որ ան բաներուն համար, որ քեզի կը պարգևէ : Մագրինաւոր միջոցներ պիտի չբանեցընես ներկայ միճակդ փոխելու համար . և միճակդ ինչ որ է՝ պէտք է որ անիկայ ՚ի բարին գործածես, յիշելով որ անհուն իմաստութեան ու բարութեան քեզի սահմանածը ան է, և թէ քու արժանի եղածէդ յոյժ անհամեմատ աւելի է ան . այո՛ կրնայ ըլլալ որ բուն անոր թերութիւններն ու դժուարութիւնները քու ապառնի և կատարեալ երջանկութեանդ յառաջդիմութեանը ձեռնտու ըլլան :

17 . Պոհութեան հետ, եթէ Վերիտոսի աշակերտ ես, համբերութիւն ալ պիտի կցես, և « համբերութիւնով հողիդ պիտի ստանաս » : Ղուկ . ին . 19 : Հիրաւի բոլորովին անզայ չես կրնար ըլլալ թէ՛ նեղութեանց և թէ՛ զրկանքներու . բայց միտքդ խաղաղ ու հանդարտ պիտի ըլլայ անոնք կրելու ատենդ, և քու պարտաւորութիւնդ կատարելու մէջ՝ հաստատուն, թէ և նեղութիւնները ձեռն և յոյսերդ՝ սիրելի յոյսերդ ու ակնկալութիւններդ ու շանն : Համբերութիւնը կ'արդիլէ շուտ ու անզոյշ վճիռները, և կ'ամբացընէ քեզ շարիքէ ազատելու անկանոն միջոցներ մնատելու դէմ . միանգամայն քեզ տրամադրելով՝ (մինչև որ Մատուած հաճի քեզի օգնութեան հասնիլ,) քու նազանդութեան ճամբուդ մէջ հաստատուն յառաջ երթալու, և քու հողիդ անոր յանձնելով բարիք գործելու : ԿՊԵ . Գ . 19 : « Եւս հոգ պիտի տանիս որ « համբերութիւնը կատարեալ գործ ունենայ », (Յով . Կ . 4,) և իր մասնաւոր գործադրութիւնը պահանջող պարագաներուն համեմատ տիրէ : Չոր օրինակ՝ երբոր զանազան շարիքներ մէկգմէկու ետեւ երկար յաջորդեն, անանկ որ « անդունդը անդունդին կանչէ », և թուի թէ « Մատուծոյ ամեն կոհակներն ու ալիքները քու վրայէդ կ'անցնին » մէկգմէկու ետեւ, (Սաղ . խն . 7,) երբոր Մատուած քու ամենափափուկ մասիդ դպչի . երբոր քեզի հետ բռնած ընթացքին պատճառները բոլորովին անմեկնելի ըլլան . երբոր քու բնական զօրութիւններդ տկարանան ու թուլան . երբոր անոնցմէ ազատելու ապօրինաւոր միջոցները մտա ու դիւրին երևան, տակա-

ին երկնաւոր Հօրդ կամքին վրայ ունեցած յարգութիւնդ , ընդդէմ ամենայնի տանելու է անոնց , և խաղաղութեամբ սպասել տալու է քեզի իր ատենին ու իրեն ուզած կերպովը ազատութիւն գտնելու :

18 . Մտտուծոյ ու մեր անձին նկատմամբ մեր ունենալու քրիստոնէական տրամադրութեանը վրայ մինչև հիմա համառօտ նկարագրութիւն մը ըրի . ներէ հիմա որ յաւելում թէ Մեծտարանը քու ընկերներուդ նկատմամբ ուրիշ կարգ մը շատ երեւելի դասեր կը սորվեցընէ քեզի : “Ռուրը աս խօսքին մէջ կը բովանդակուի” , թէ “Ռու ընկերդ սիրես քու անձիդ պէս” , (Հոմմ . Ժ . 9 ,) և “Մէն ինչ որ կ’ուզես՝ (այսինքն , ինքզինքդ անոնց տեղը դնելով ամէն ինչ որ պատշաճապէս և բանաւորապէս կըրնայիր ուզել) որ մարդիկ քեզի ընեն , դուն ալ անոնց անանկ ըրէ” : Մատ . է . 12 : Մեծօրջնեալ Հիսուսի սորվեցուցած կրօնքը՝ երբոր յաղթութիւն գտնէ հոգւոյդ մէջ , անկանոն անձնասիրութեան իշխանութիւնը կը նուաճէ , և քեզի պարզութեամբ ու քաղցրութեամբ կը սորվեցընէ քու ընկերիդ վրայ՝ իբրև քու մէկ ուրիշ անձը նայիլ : Ինչպէս որ քու իրաւունքներդ գիտես , անորն ալ պիտի գիտնաս . ինչպէս որ քու անունդ կը պաշտպանես , անոր անունն ալ պիտի պաշտպանես : Մտր բարելաութեանը պիտի բաղձաս , և պատրաստ պիտի ըլլաս անոր կարօտութիւնը լեցընել , ինչպէս որ պիտի ուզէիր որ քու կդ մէկ ուրիշը լեցընէ : Մտր ամենակասկածելի խօսքերուն ու գործքերուն բարի մեկնութիւն պիտի տաս : Մտր երջանկութեանը վրայ պիտի ուրախանաս , և անոր թշուառութիւնը մէկ աստիճանաւ մը իբրև քու կինդ պիտի զգաս : Այլ յոյժ երջանիկ պիտի ըլլաս , երբոր աս պայծառ կանոնը քու մտքիդ ընտանի ըլլայ , երբոր աս ոսկեղէն կանոնը սրտիդ վրայ դրուի , և երբոր սովորութիւն ընես անառարար անոր համեմատ գործել ամէն ատեն :

19 . Նաև Մեծտարանը կը սորվեցընէ քեզի “Հեզութիւն հազնիլ վրայդ” , (Մող . Գ . 12 ,) ոչ միայն նրկատմամբ Մտտուծոյ՝ անոր խօսքին հեղինակութեանը՝ և անոր նախահիմանութեան տնօրէնութեանը Ֆրազանդիլ , ինչպէս որ առաջ ըսինք , այլ նաև քու եղբայրներուդ

նկատմամբ : Անոր հեղիկ խրատները խաղաղ բնութիւն
 մը ունենալ պիտի սորվեցընեն քեզի , փնասուց ու բար-
 կութեանց մէջ . անանկ որ առանց պատճառի կամ ճիշտ
 պատճառին չտիկն աւելի չբարկանաս : Պիտի սորվեցընէ
 քեզի խօսքերուդ զգուշանալ , որ չըլլայ թէ բարկացընես
 ու դառնացընես անոնք , որոնք՝ յաւէտ սորվելու ես սիրով
 վատըկիլ ու քաղցրութեամբ բժշկել : Անոր թիւնը
 պիտի սորվեցընէ քեզի խիստ ու բուռն միջոցներ չգործա-
 ծել , եթէ կարելի է մէկ օրինաւոր կերպով մը զանց ընել .
 և եթէ այսպիսի միջոցներու ձեռք զարկած ես՝ պատրաստ
 ըլլալ հաշտութիւն մը ընելու և մինչև անգամ առաջար-
 կելու , եթէ դեռ յոյս կայ յաջողութեան : Վերստոնէա-
 կան տրամադրութեան աս ճիւղն որ տիրէ սրտիդ մէջ ,
 մեծ փոյթ կ'ունենաս զգոյշ ըլլալու ան ամէն բաներէն որ
 պարագ տեղը ցաւ կու տան ուրիշներուն . քու վիճակիդ
 ու կացութեանդ համեմատ համեմատ վարք մը կ'ունենաս .
 և կը սորվեցընէ քեզի՝ որ թէ՛ մեծին և թէ՛ փոքրին նայելով
 պատշաճ կերպով մէկը պատուես ու միւսը շանարգես ու
 չհարստահարես , չվշտացընես ու շնախատես : Աւ նոյն
 ինքն կրօնական մասին մէջ , կը սանձէ ամէն անպատեհ
 նախատիքներն ու խիստ սողտանքները . և ձգել կու տայ
 մարդուն ան բարկութիւնը՝ որ Աստուծոյ արդարութիւնը
 գործելու տեղը՝ անոր կը հակառակի , (Հօփ . ւ . 20 ,)
 և ամօթ ու փնաս կը բերէ ան բարի փաստին , որուն մէջ
 խստիւ և կատաղութեամբ զբաղեալ է :

20 . Անոր հետ բնականապէս կապակցած է խաղաղա-
 սէր բնաւորութիւն մը ունենալը : Աթէ յիբաւի բրիս-
 տոնեայ ես , այնպիսի յարգ ու համարում ունենալու ես
 խաղաղութեան վրայ , որ ջանք ընես ձեռք ձգել ու պահել
 անիկայ « որչափ որ կարելի է » , (Հօփ . Ժ . 18 ,)
 որքան որ պատշաճապէս ոս պատուով կրնաս : Ասիկայ
 քու վարուցդ վրայ այնպիսի ազդեցութիւն մը պիտի ունեցայ՝
 որ քեզ ոչ միայն ուրիշը վշտացընելէն զգոյշ ու վշտանա-
 լու ծանր կ'ընէ , այլ նաև անձկանօք կը փափաքեցընէ որ՝
 երբոր խաղաղութիւնն աւրուի , կարելի եղածին չափ շու-
 տով ձեռք ձգես անիկայ , որ վէրքը բժշկուի՝ քանի որ նոր
 է , ու քանի որ դեռ բորբոքած ու շարաւացած չէ : Աս բնա-

ւորութիւնը “ Զողւոյն Արքայ միարանութիւնը խաղաղութեան կապովը պահէլ’ տայ պիտի քեզի , (Արք . Գ . 3 ,) մանաւանդ “ ան ամենուն հետ’ որ ամէն տեղ մեր Տէր Յիսուս Վրիտտոսի անունը կը կանչեն’ , (Կ Արք . Կ . 2 ,) որն որ եթէ ճշմարտապէս կը սիրես , պիտի սիրես նաև ան ամէնն ալ , որ կը հաւատաս թէ անոր աշակերտներն ու ծառաներն են :

21 . Եթէ դուն ճշմարտիւ ան թիւէն ըլլաս , “ վրայ պիտի հազնիս նաև գութը ” : Արք . Գ . 12 : Աստուծոյ ողորմութիւններն ու ամենօրջեալ ժողովն ողորմութիւնները սրտիդ վրայ ներգործելու են՝ կարեկցութեան ու առատաձեռնութեան զգացումներ տալու համար , որպէս զի ուրիշներուն կարօտութիւններն ու տրտմութիւնները զգաս որ անոնց կարօտութիւնները լեցնել բաղձաս . և քանի որ պատեհութիւն զանես , բարիք ընես թէ մարմիններնուն և թէ հոգիներնուն . բարեսէր զգածմունքը ցուցնելով յարմար գործքերով , որոնք եւ անկեղծութիւննին կը ցուցնեն և ազգու կ’ընեն ան զգածմունքները :

22 . Իբրև քրիստոնեայ՝ նաև ճշմարտութիւնը անարատ պիտի պահես , ոչ միայն վիայութիւն տուած ատենդ՝ երբոր երգմամբ կը հաստատես բան մը , այլ նաև հասարակ խօսակցութիւններուդ մէջ : Անպիտի յիշես ալ որ խոստմունքներդ պարտաւորութիւն կը դնենքու վրայ , որ ամեննին աղատութիւն չունիս զանց ընելու : Ա՛րքնպէս՝ մեծ փոյթ պիտի ունենաս որ խօսքերուդ ու գործքերուդ մէջտեղը կատարեալ համաձայնութիւն մը պահես , ճշմարտութեան Աստուծոյն մէկ ծառային վայլածին պէս :

23 . Գարձեալ՝ որովհետև աստուածային բոլոր պատուէրները պահելու համար յոյժ մանրակրկիտ խնամք ըրած ատենդ ալ զեռ շատ թերութիւններ կը զանես , որոնց համար աղօթք ընելու կարօտես որ “ Աստուած քեզի հետ դատաստանի շմունէ ” , աղէկ գիտնալով որ “ շես կրնար արդարանալ անոր առջին ” , (Արք . Ճիւ . 2 ,) վասն որոյ պիտի զգուշանաս որ “ ուրիշները այնպիսի կերպով մը չգատես՝ որ անոր դատաստանին խտութիւնը

քեզի դէմ զարթուցանես" : Ստոր . Է . 1 , 2 :
 Այսին որոյ պէտք է որ անոնց գործքերը , երբոր անոնք
 քեզի վերաբերութիւն մը չունին յանդգնարար դատես .
 ոչ ալ խտուութեամբ , առանց պարագաները քննելու .
 ոչ ալ աշտութեամբ , առանց ուշադրութեամբ և լա-
 կշուելու զանոնք . ոչ ալ անգթութեամբ , ինքնին տարա-
 կուսելի եղած բաներու գէշ կերպարանք մը տալով , դի-
 տաւորութիւնները ստուգիւ երեւցածէն աւելի չար սեպե-
 լով , մարդոց վիճակը՝ կամ անոնց բնաւորութեանը բո-
 լոր մասերը մէկ մասնաւոր գործքէ մը յանցաւոր վճռե-
 լով , և անմեղը յանցաւորին հետ խառնելով : Բոլոր
 աս ծայրերուն հակառակ՝ չափաւորութիւն մը կայ , որն որ
 Վեւտարանը կը գոյլէ . և եթէ Վեւտարանը սրախէ մէջ
 բարի եռանդով ընդունիս , կացինը այսպիսի չարութեանց
 արմատին քով կը դնէ անիկայ :

24 . Վերստոնէակիան բնութեան և հանդամանաց գը-
 խաւոր ճիւղերը այսպէս համառօտակի բացատրելով ,
 նկարագրութիւնս պիտի վերջացընեմ՝ միտքդ ձգելով քանի
 մը ընդհանուր որպիսութիւններ , որոնք ամենուն հետ
 պիտի խառնուին՝ և անոնց ամէն մէկուն գոյն պիտի տան .
 ինչպէս անկեղծութիւն , յարատեւութիւն , քաղցրու-
 թիւն , նախանձաւորութիւն , և խոհեմութիւն :

25 . Սիշտ յիշէ որ անկեղծութիւնը ճշմարիտ կրօնքին
 բուն հոգին է . զՎատուած հաճեցընելու և մեզ անոր
 հաւնեցընելու պարզ դիտաւորութիւնը կենդանացընելու
 և կառավարելու է մեր ամէն ըրած կրօնական բաները :
 Աս սկզբունքին ազդեցութիւնովը՝ անաշտապէս ամէն
 պարտաւորութիւններդ հասկընալու համար քննութեան
 պիտի ելլես , և քեզի ծանօթ եղածին չափ անոր գործաւ-
 րութեանը պիտի նայիս : Բոլոր ըրածներդ սրտանց պի-
 տի ըլլան : Վասնին վարժունքդ յոյժ համաձայն պիտի
 ըլլայ ընկերական վարժունքիդ : Վատուածային իշխանու-
 թեան վրայ ունեցած ճանաչումդ պիտի սորվեցընէ քեզի
 " Վատուծոյ՝ ամէն բանի վրայով պատուիրած բոլոր հրա-
 մանները ուղիղ համարիլ , ու ստութեան ամէն ճամբան
 առել " : Ստոր . Ճթթ . 128 :

26 . Վստպէս " Վատուծոյ առջևը պարզմտութեամբ ու

անկեղծութեամբ վարուելու եւ աշխարհի մէջ" : Ը Արթնք .
 ւն . 12 : Եւ նաև պէտք է որ հողիդ պարտքի տակ դնես
 " Հաստատ ըլլալ , անշարժ կենալ , և ամէն ատեն ա-
 լելնալ Տէրօջը գործին մէջ" : ւն Արթնք . ԺԵ . 58 :
 Այ միայն երբեմն մէկ յանկարծական եռանդ մը ու ոտք
 ելլել մը ըլլալու է բարեպաշտութեան՝ կամ անոր նման
 երեցող մէկ բանի մը մէջ , այլ կրօնքը ունակական և
 հաստատուն բան մը ըլլալու է : Եւ ամէն ատեն անոր յա-
 րեալ մնալու գիտաւորութիւն մը ունենալու եւ : Ահան-
 քիդ Հաստատուն և կանոնաւոր գործն ընելու եւ անիկայ :
 Խորհրդով և գիտութեամբ գործուած մեղքերը մեծ փու-
 թով մէկդի ձգելու եւ . կեանքիդ հասարակ տկարու-
 թիւններուն դէմ ամբութիւն մը հաստատելու եւ . և
 պատահական սխալմունքները Մտուծոյ առջև առաւել ևս
 զղջալու նիւթ մը , և անոր ծառայութեանը Համար նորէն
 հաստատուն որոշում մը կազմելու առիթ մը ըլլալու են :
 Եւ այսպէս մինչև կեանքիդ վերջը յառաջ երթալու եւ , ա-
 ռանց վատելու ճամբուն երկարութենէն ու դժուարութե-
 նէն , և առանց մէկ կողմանէ հրապուրուելու , կամ միւս
 կողմանէ ահարկել ըլլալու ան ամէն փորձութիւններէն որ
 քեզ կը շրջապատեն ու վրադ կը յարձակին : Հողիդ աս
 հիման վրայ հաստատելու եւ , և հանապաղ այնպիսի մէկու
 մը պէս անցընելու եւ կեանքդ , որ գիտէ թէ անփոփոխ Մտ-
 տուծոյ մը կը ծառայէ , և անկէ " անշարժ թագաւորու-
 թիւն մը" կը յուսայ : Աճ . ԺԸ . 28 :

27 . 'Բարձեալ' եթէ Եւետարանը սրտիդ մէջ կը
 ախրէ , փափուկ հոգւոյ տէր պիտի ըլլաս , և քարը մար-
 մինի պիտի դառնայ : Պիտի փափաքիս որ աստուածային
 իրաց վրայ ունեցած դաղափարներդ կենդանի ըլլան ,
 գեղամունքներդ պատշաճ տպաւորութիւններ առնելու
 պատրաստ , խղճմտանքդ միշտ գիւրազգաց , և վերջապէս՝
 որոշումներդ աստուածային իշխանութեանը հնազանդ , և
 սրտանց յօժար՝ Մտուած ինչ ըլլալ և ինչ ընել որ սահ-
 մանէ՝ նոյնը ըլլալու և ընելու : Մտուծոյ խօսքին վրայ քաղոր
 նկատում , մեղքի դէմ դիւրազգաց զոյւշութիւն , յաջողու-
 թեան վիճակին որոգայթներուն դէմ հաստատուն ամբու-
 թիւն , և Մտուծոյ ձեռքէն եկած պատուհաններուն խնարհ

Նազանդութիւն ընելու եւ . մէկ խօսքով , ինչ բանի մէջ որ Աստուծոյ պատիւը կայ , անոր վրայ դիւրազգաց պիտի ըլլաս , և մեծ փոյթ պիտի ունենաս որ ոչ դուն այնպիսի բան մը ընես , և ոչ ուրիշին թող տաս որ ընեն՝ (որքան որ կրնաս ազգեցութիւն բանեցընել ,) որով Աստուած կը վշտանայ , կամ կրօնքը կը նախատուի :

28 . 'Նաև՝ աս ամենէն՝ի զատ , թէ որ ճշմարիտ քրիստոնէութիւնը կ'իշխէ քու մտազդ , պէտք է որ քու Փրկչիդ ու քու Հօրդ ծառայութեանը մէջ սուրբ նախանձաւորութիւն մը ունենաս : "Մէն ատեն բարիին նախանձաւոր պիտի ըլլաս" , (Գաղ . Գ . 18 ,) մէկ բան մը որչափ որ բարի և կարևոր կը սեպես : Մանաւանդ նախանձաւոր պիտի ըլլաս քու մէջդ եղած ամէն անկանոն բաները ուղղելու , և աշխատելու Աստուծոյ գործին համար՝ կարողութեանդ մինչև յետին աստիճանը : Աս բանին մէջ ուրիշներուն վարմունքին վրայ ալ անտարբեր աչք կարող պիտի չըլլաս նայելու . այլ՝ զթութեան՝ հեզութեան՝ և խոհեմութեան պահանջածին համեմատ , անոնց վարմունքին մէջ զտնուած Աստուծոյ անպատիւ և մարդոց վնասակար ամէն բաներուն համար տհաճութիւնդ պիտի ցուցընես : Եւ պիտի աշխատիս՝ զանոնք ոչ միայն այսպիսի ընթացքներէ ետ կեցընելու , այլ նաև իրենց կրօնական պարտաւորութիւնները ճանչցընելու և զիրենք անոր մէջ զօրացընելու :

29 . Եւ դարձեալ՝ պիտի փափաքիս Աստուծոյ քեզի տուած խոհեմութիւնը դորձածել , ներկայ պարագաներուդ մէջ առ Աստուած՝ առ ընկեր՝ և առ անձն պարտաւորութիւնդ ինչ ըլլալը դատելու , և անիկայ կատարելու ամենէն ընդունելի կերպը՝ և օգտակար կերպով ինչ աստիճան անոր հետեւելու կարելի ըլլալը որոշելու . յիշելով որ ան է յիբաւի ամենէն խնայտուն ու երջանիկ մարդը , որ շարունակ մտադրութեամբ խորհելով՝ բարի ընելու ամենամեծ պատեհութիւնները կը գտնէ , և եռանդուն ու կենդանի որոշումով ամէն ընդդիմութեան կը յաղթէ , որ կարենայ ան պատեհութիւնները ձեռքէ հանել :

30 . Ասիկայ՝ քրիստոնէական որպիսութեան վրայով՝

այսպիսի անձուկ սահմանի մը մէջ դիւրին կերպով մը նը-
կարագրելու շարի կարելի եղած բացատրութիւն մըն է . և
կը յուսամ թէ շատերուն ծգնութիւն պիտի ընէ անձ-
նայրնութեան մեծ ու կարեւոր գործին մէջ : (Թող քու
խղճմտանքդ պատասխանէ թէ արդէն որքան ստացած ես
աս որպիսութիւնը , և մինչև ի՞նչ աստիճան անիկայ վաս-
տըկիլ կը ցանկաս . և թող հոս նկարագրուած գլխաւոր
նիւթերը քու յիշողութեանդ ու սրտիդ մէջ հաստա-
տուին , որ շնորհաց ատենին մատուցած ամէն օրուան ա-
ղաչանքներուդ մէջ Աստուծոյ առջևը յիշես զանոնք , ա-
նոնց գործարութեանը համար հարկաւոր եղած բոլոր
օգնութիւնը անկէ ընդունելու համար :

Մտըլ՝ ըստ մեծի հասին Սոբի Գրոյ իտուրով շարադ-
րութեամբ , որուն մէջ բնութեան արտադրութեան զա-
նազան սիւղերը առաւել համարուող իրարմէ իւրարմէ
ին վերագրուել խորովը :

Ո՛վ ամենօրնեալ Աստուած , խոնարհութեամբ երկրը-
պագութիւն կը մատուցանեմ քեզի իբրև լուսոյ մեծ շօ-
րը , և ամէն բարի տուրք ու ամէն կատարեալ պարգևնե-
րուն Տուողին : Հով . ան . 17 : Այսին որոյ քեզմէ կը
իննդրեմ ամէն օրնութիւն , և գլխաւորապէս ան օրնութի-
ւնները որոնք զիս քեզի կ'առաջնորդեն , և քեզ յախ-
տեանս փայտելու կը յարմարցնեն զիս : Արկրպագու-
թիւն կը մատուցանեմ քեզի իբրև մարդոց սիրանքը քն-
նող ու երկխմանքները փորձող Աստուծոյ : Արթ . Ժ .
10 : Վորձէ զիս՝ ո՛վ Աստուած , ու զիսցիր իմ սիրտս .
իս քննէ՛ ու զիսցիր իմ մտածմունքներս , և նայէ թէ ար-
դեօք շար ճամբու մէջ եմ , և զիս դէպ 'ի յախտեանս
ճամբան առաջնորդէ : Սող . ճիթ . 23 , 24 : Ար-
նորհէ որ զիսնամ թէ ի՞նչ հոգիի տէր եմ ես , (Ղոմ .
թ . 55 ,) և սխալմունքէ ազատ ըլլամ , ուր որ սխալ-
մունքը անհունապէս մահաբեր կրնայ ըլլալ :

Անորհէ՛ ո՛վ Տէր , որ մտքիս հոգիովը նորոգուիմ :
Արթ . Գ . 23 : Ինծի նոր սիրտ մը տուր , ու իմ ներ-
սիդիս նոր հոգի՛ դիր : Արթ . ԼԳ . 26 : Աստուածային
բնութեանը հաղորդ ըրէ զիս , (Թ Պիտ . ան . 4 ,) և

ինչպէս որ ան՝ որ զիս կանչեց սուրբ է , շնորհէ որ ես ալ սուրբ ըլլամ՝ իմ բոլոր վարմունքներուս մէջ : Ինչպէս . Ինչպէս . 15 : Շնորհէ որ ան նոյն միտքը ունենամ , որ Քրիստոս Յիսուսի մէջ էր , (Փիլիպ . ք . 5 ,) և անանկ քալեմ , ինտոր որ անիկայ քալեց : Ինչպէս . Ինչպէս . 6 : Ազատե՛ զիս մարմնաւոր խորհուրդէ , որ մահ է . և իմ մէջս հոգևոր խորհուրդ հաստատե՛ , վասն զի անիկայ կեանք ու խաղաղութիւն է : Ինչպէս . Ինչպէս . 6 : Այլ շնորհէ որ քանի որ աս տեսանելի աշխարհիս մէջ կը քալեմ , հաւատքով քալեմ , ու չէ՛ թէ երևոյթով , (Ինչպէս . Ինչպէս . 7 ,) և հաւատքով զօրանամ ու Աստուծոյ փառք տամ : Ինչպէս . Ինչպէս . 20 :

Քու շնորհքդ՝ ո՛վ Տէր , որ բոլոր մարդոց երեցաւ , և ինծի ալ երեցաւ այսպիսի փառաւոր յայտնութիւնով ու պայծառութիւնով , շնորհէ որ ազգու կերպով սորվեցընէ ինծի ամբարշտութիւնն ու աշխարհային ցանկութիւնները ուրանալ , և զգաստութիւնով ու արդարութիւնով և բարեպաշտութիւնով ապրիլ աս աշխարհիս մէջ : Տէր . Ինչպէս . 11 , 12 : Ազգէ՛ իմ սրտիս մէջը ան աստուածապաշտութիւնը որ ամէն բանի օգտակար է , (Ինչպէս . Ինչպէս . 8 ,) և քու ամենօրինակ շնորհքդ ազգեցութեամբը սորվեցուր ինծի քեզ իմ Տէր Աստուածս իմ բոլոր սրտէս , և իմ բոլոր անձէս , ու իմ բոլոր մտքէս , և իմ բոլոր զօրութիւնէս սիրել : Ինչպէս . Ինչպէս . 30 : Շնորհէ որ իմ անձս քեզի ընծայեմ , որպէս թէ մտեմնեմն ողջնցած , (Ինչպէս . Ինչպէս . 13 ,) և իմ մարմինս քեզի կենդանի զոհ մը ընծայեմ , սուրբ՝ և քեզի հաճելի , որ է իմ բանաւոր պաշտօնս : Ինչպէս . Ինչպէս . 1 : Շնորհէ որ ամէնօրինակ Յիսուսի՛ քու մարմնացեալ Արդարեւ՝ քու փառքիդ լոբին , և քու էութեանդ բուն պատկերին յոյժ հաւատարիմ ու սրտեանդ նկատում մը ունենամ : Ինչպէս . Ինչպէս . 3 : Թեպէտ տեսած չեմ , բայց շնորհէ որ սիրեմ անիկայ . և թեպէտ հիմա չեմ տեսներ , բայց հաւատաւով՝ ուրախանամ անով՝ անպատմելի ու փառաւորեալ ինդութիւնով , (Ինչպէս . Ինչպէս . 8 ,) և շնորհէ որ հիմա որ մարմնի մէջ կ'ապրիմ , Աստուծոյ Արդարեւ հաւատքով ապրիմ : Ինչպէս . Ինչպէս . 20 : Շնորհէ որ շնորհով

լեցուիմ, (Եղեւ. Ե. 18,) և անով առաջնորդուիմ. Հոսիմ. ք. 14. և այսպէս յայտնի ըլլայ ուրիշներուն, և մանաւանդ իմ հոգւոյս, որ եւս Մատուծոյ մէկ որդին եմ ու փառաց ժառանգորդք: Ենորհէ՛ որ ծառայութեան հոգին չառնեմ զախնալու, այլ որդեգրութեան հոգին, որով կարող ըլլամ կանչել, Վերայ՝ Հայր: Հոսիմ. ք. 15: Ենորհէ՛ որ անիկայ ներգործե իմ մէջս իբրև հոգի գորութեան՝ ու սիրոյ՝ և զգաստութեան, (Է. Տէ՛. ւ. 7) որով կարենամ հաւատարիս վրայ առաքինութիւն աւելցրնել: Է. Պէ. ւ. 5: Ենորհէ՛ որ զօրանամ ու քաջ ըլլամ, (Յե. ւ. 7,) և ժիր ըլլամ, (ւ. Արեւ. Ժ. 13,) և քրիստոնէի պէս ինքզինքս ան գործին տամ, որուն որ կանչուեցայ. և ան պատերազմին, որ իմ աչքիս առջև ունէի, երբ որ իմ փրկութեանս ան մեծ Մատուծոյին գորչակին տակը մտայ:

Սորվեցուր ինծի՛ ով Տէր, իմ հոգւոյս բնութիւնը սրտի մտօք քննել, և անոր արժէքը աղէկ գիտնալ: Ենորհէ՛ որ գործեմ ոչ միայն կամ գլխաւորապէս՝ կորուստական կերակուրին համար, հապա ան կերակուրին համար՝ որ յախտնական կենաց մէջ կը մտայ: Յով. Կ. 27: Ենորհէ՛ որ քու հօր ձեռքիդ տակը խոնարհիմ, ու խոնարհութիւն հաղնիմ, (ւ. Պէ. ւ. Ե. 5, 6,) և հեղ ու հանդարտ հոգիին զարդովք զարդարուիմ, որն որ Մատուծոյ առջև խիստ պատուական է: (ւ. Պէ. ւ. Գ. 4:) Ենորհէ՛ որ մարուր ըլլամ սրտով, որ Ղատուած տեսնեմ, (Սա. Ե. 8,) երկրաւոր անդամներս սպաննելով, (Սո. Գ. 5,) անանկ որ՝ թէ որ աջ աչքս զիս դայթակղեցրնէ, հանեմ անիկայ ու ինծմէ ձգեմ. և թէ որ աջ ձեռքս զիս դայթակղեցրնէ, կտրեմ զանիկայ՝ ու ինծմէ ձգեմ: Սա. Ե. 29, 30: Ենորհէ՛ որ ամէն բանի մէջ շափաւորութիւն պահեմ, (ւ. Արեւ. Թ. 25,) բաւական սեպեմ ձեռքս եղած բաները, (Եղ. Ժ. 5,) և սորվիմ գոհ ըլլալ իմ զսնուած վիճակիս մէջ: Փիլ. Գ. 11: Ենորհէ՛ որ նաև համբերութիւնը կատարեալ գործ ունենայ իմ մէջս, որ կատարեալ ըլլամ, ու բանի մը պակասութիւն չունենամ: Յով. ւ. 4:

Ով Տէր՝ կ'աղաչեմ քեզի, դէպ 'ի բնկերներուս պատ-

չաճ տրամադրութիւն մը տուր ինծի : Շնորհէ՛ որ իմ ընկերս սիրեմ իմ անձիս պէս , (Ղառ . և . 14 ,) և ինչ որ կ'ուզեմ՝ որ ուրիշները ինծի ընեն , ես ալ անոնց անանկ ընեմ : Մարտ . և . 12 : Շնորհէ՛ որ իմ վրաս հազնիմ հեղութիւնը ամենամեծ փնտուց ու բարկութեանց մէջը , (Սող . Գ . 12 ,) և որչափ որ կարելի է՝ ամէն մարդոց հետ խաղաղութիւն ունենամ : Հոգի . ԺԲ . 18 : Շնորհէ՛ որ զթած ըլլամ՝ ինչպէս որ իմ Հայրս ալ զթած է : Ղառ . Գ . 36 : Շնորհէ՛ որ ճշմարտութիւն խօսիմ իմ սրտիս մէջ , (Մարտ . Ժ . 2 ,) և սիրով խօսիմ անիկայ , (Սփեա . Գ . 15 ,) զոչը ըլլալով դառն և չար բնասորութեան ամէն երևոյթներուն դէմ . և հոգ տանելով որ խտուրթեամբ չդատեմ ուրիշները , ինչպէս որ ես չեմ ուզեր խտուրթեամբ դատուիլ , որուն՝ դուն ով Տէր գիտես , և խղճմտանքս ալ գիտէ թէ՛ կարող չեմ գիմանալ :

Մաղաչեմ քեզի՛ ով Տէր , աղչէ իմ ներսիդիս քրիստոնէական բնութեան ան ամէն յատկութիւնները , որ զիս մասնաւոր կերպով ընդունելի կ'ընեն քեզի , և իմ աշխարհի մէջ բրած դաւանութեանս զարդարանք մը կ'ըլլան : Մաղաչեմ քեզի իմ ներսիդիս ուղիղ հոգի՛ նորոգէ , (Մարտ . Ժա . 10 ,) զիս բո՛լ իրացընէ խարայելացի մը , որուն ներքը նենգութիւն չկայ : Յովն . ան . 47 : Աւ մինչեւ կը ցնծամ Քրիստոսով , իբրև ինծի համար զոհուած զատիկ , շնորհէ՛ որ անկեղծութեան ու ճշմարտութեան անխմոր հացովը կատարեմ տօնս : ան Մարտ . և . 7 , 8 : Շնորհէ՛՛ ով ամենակարող և անփոփոխ Աստուած , որ հաստատ ըլլամ , անշարժ կենամ , և ամէն ատեն աւելնամ քու գործքիդ մէջ , գիտնալով որ իմ աշխատութիւնս վերջապէս պարապը պիտի չելլէ Տէրօջով : ան Մարտ . Ժ . 58 : Իմ սիրտս կակղացուր , Գ (Ժառ . ԻԲ . 19 ,) որ քու խօսքդ ու նախախնամութիւնդ դիւրաւ տպաւորուի վրան . և սիրոյ նկատում մը ունենայ քու փառքիդ , և քու Հոգւոյդ ամէն ազգեցութիւնը զգայ : Շնորհէ՛ որ իմ Աստուծոյս համար նախանձաւոր ըլլամ , (Թառոց ին . 13 ,) գիտութեան ու սիրոյ վայլածին համեմատ նախանձաւորութիւնով մը ,

(Հատվ. Ժ. 2 : ան Սորնը . Ժ. 14 ,) և սորվեցուր ինծի՝ որ քու ծառայութեանդ մէջ օձին խորագիտութիւնը առիւծին քաջութեանն ու աղանիին միամտութեանը հետ միացընեմ : Մտքը . Ժ . 16 : Եսպէս քու շնորհքդ զիս իմ սիրելի Վրկէիս մէկ պայծառ պատկերը ըրէ . և վերջապէս արժանի ըրէ անոր բնական աշխարհին մէջ անոր սրբութեանն ու փառացը պայծառ նմանութիւնը հաղանի . որ յաւիտենական պատիւ ընծայեմ քեզի՝ ով Հայր ողորմութեանց , ու անոր՝ որ քու անզին պարզեղ է , և քու Սուրբ Հոգւոյդ , որուն շնորհացիր ազգեցութեամբը խոնարհութեամբ կը յուսամ թէ կրնամ քեզ իմ Հայրս կռել , և զՅիսուս իմ Վրկէիս . Եմէն :

ԳԼՈՒԽ ԺԵ

Ընկերացողին իւր յիշուի ինչ որ քան խարստ է ինչը Աստուծոյ
 Հոգւոյն օգնութեանը , որ վերը նկարագրուած բնու-
 թիւնը որայ իրին . և ինչ ինչ ամբողջութեան ամբողջու-
 է անկէ :

1 . Հիմա քու ատենդ դրի մէկ համառօտ նկարագիր
 մը ան բնութեանն ու որպիսութեանը , որ Աւետարանը
 կը սրահանջէ , և որուն՝ եթէ ճշմարիտ բրիստոնեայ ես ,
 պիտի բաղձաս ու հետեիս : Արդարեւ անոր նոյն ինքն
 նկարագրութեանը մէջ բան մը կայ , որ զօրաւոր կերպով
 պիտի զարնէ ամէն մտքի , որ բնաւ ճաշակ ունի ճշմարտա-
 պէս գեղեցիկ ու գերազանց եղող բանի : Այս ես չեմ տա-
 բակուսի՛ր՝ իմ սիրելի բնութեցողս , որ անշուշտ անիկայ
 աղղկեցութիւն մը ըրած պիտի ըլլայ սրտիդ : Այս անմի-
 ջապէս կենդանի դիտաւորութիւն մը պիտի դնես միտքդ
 անիկայ ստանալու ջանալ . և գուցէ կարծես թէ ստուգի-
 ւ շուտով պիտի հասնիս անոր : Արտեանես թէ որքան
 պատշաճ է անիկայ , և ինչ ցանկալի հետեւութիւններ
 անհրաժեշտ կերպով անոր ետեւէն կ'երթան , ու կը տես-
 նես ալ քու ներկայ վայելչութեանդ ու ապառնի երջան-
 կութեանդ վրայ անոր ունեցած ներգործութիւնը , վասն
 որոյ կ'որոշես անոր համաձայն գործել : Բայց ներէ՛ ինձի
 որ սա կարեւոր խորհրդածութիւնը յիշեցընեմ՝ քեզի՛ թէ
 որքան անձինք եղեր են , (երանի՛ թէ պայպիսի մէկ քանի
 օրինակները իմ դիտողութեանս սահմանին մէջ պատահած
 չըլլային ,) “ որոնց բարութիւնը առաւօտեան ամային
 պէս , ու կանուխ իջած ցօղին պէս ” եղած “ է , որ ” շու-
 տով “ կ'անցնի ” : Ա՛յ . 4 . 4 : Հիրաւի պատշաճ չէ՛
 Հետուայ խօսքերը բացարձակապէս մէջ բերել՝ նախնական
 մտքը առնելով , երբոր Խարսկէլին ըսաւ թէ “ Ձեք կըր-
 նար Աջօղան պաշտել ” . Հի . 19 . որպէս զի կա-
 բնայ անոնց երազ և խիստ որոշումները խոնարհեցընել :

Բայց պիտի համարձակվի՞մ ըսել թէ դիւրաւ չես կրնար ծառայել : Ա՛ւ՛՛ղ . չես գիտեր քու յաղթելիք դժուարութիւններդ . չես գիտեր Սատանային քու ճամբուգ վրայ դնելիք փորձութիւնները . չես գիտեր թէ քու ունայնասեր և մեղաւից ընկերներդ որքան պիտի աշխատին քեզ նորէն ետ քաշել՝ քու փախչել ջանացած որողայթիդ մէջ ձգելու . և ամենէն աւելի , չես գիտեր ան խորամանկ շարքները՝ զորս քու սրտիդ ապականութիւնները վրադ պիտի բանեցընեն , քու վրադ ունեցած իշխանութիւնին նորէն ձեռք ձգելու : Հիմակուան ունեցած զաղափարներդ կը կարծես թէ մշտապէս պիտի ըլլան , անոնց ենթակայ եղող սկզբունքներուն ու առարկաներուն մշտապէս ըլլալուն պատճառաւ . բայց թերեւս վաղուան օրը քեզի պիտի իմացընէ քու խարուիչ , կամ նորէն պիտի խարէ քեզ . թերեւս վաղուան օրը մէկ ոչինչ բան մը պիտի ներկայացընէ քու աչքիդ՝ մէկ նոր կերպարանքով մը , որն որ քեզ զուարճացընէ ու աս ամէնը մոռնալ տայ : Ա՛յո՛ , թերեւս աս իրիկուն չարակամ , հիմակուան ունեցած սպաւորութիւններդ պիտի ցնդին : Արտիդ ապականեալ բաղձանքները , որ թերեւս հիմա քիչ մը դադարած են ու մեռածի պէս պառկած , կարելի է նոր սաստկութեամբ կրկին պիտի զարթնուն , որպէս թէ միայն զօրութիւննին կենդանացընելու համար քնացած ըլլան . և թէ որ քու կիներդ վեր զօրութիւնով մը չարաշտպանուիս , աս աղատութեան համար բանեցուցած ծիզդ՝ ապառնի շղթաներդ առաւել ծանր՝ ամօթաւից և մահաբեր պիտի ընէ :

2 . Ուրեմն ի՞նչ ընելու է : Իր մեղացը վրայ համոզուած մեղաւորը յուսահատութեան մէջ մնալու է , ըսելով թէ՛ «Այս անօրնական գերի մըն եմ , և ինքզինքս բռնութեամբ կապերէ ազատելու ջանալով՝ կարելի է կապերէս առաջ անդամներս խորտակեմ՝ , և վանել ուզած չարիքս շտացընեմ » : Քա՛ն լիցի : Աղէկ համոզուած եմ թէ՛ չկրնար ըլլալ որ այնքան քիչ տեղեկացած ըլլաս քրիստոնէութեան , որ չչիտնաս թէ աստուածային օգնութիւնը քրիստոնէութեան գլխաւոր վարդապետութիւններէն մէկն է : Չեմ տարակուսիր՝ որ շատ անգամ կարգացած ես թէ «Վրիստոս Յիսուսով կենաց Հոգիին

օրէնքը մեզ կ'ազատէ մեզաց ու մահուան օրէնքէն" , (Լուսնի . Ը . 2 ,) և լսած ես թէ " Լուսնիով մարմինն գործքերը կը սպաննենք " : Լուսնի . Ը . 13 : Աստուծոյ ձայնն է " Եւստի քանի կարող ըլլալ Քրիստոսով , որ մեզ կը զօրացնէ " , (Փիլիպ . Դ . 13 ,) որուն շնորհքը " Հեռիք է մեզի " , և " զօրութիւնը տկարութեան մէջ կը կատարուի " : Ի Արժ . Ժ . 9 : Այսին որոյ ներքիննի որ քու մտադրութիւնդ աս բանին դարձնեմ , իբրև ամենապայծառ՝ յայտնի և յոյժ կարևոր ճշմարտութեան մը :

3 . Արդարև բանականութեան՝ ինչպէս որ Աւրբ Գրոց բողոք իմաստին ալ կը համաձայնի ասիկայ : Լուսնի ստեղծեալ աշխարհը հարկաւոր կախում մը ունի Աստուծոյ . մինչև անգամ բնական բաներուն գիտութիւնը Անկէ կ'ելլէ , (Առդ . ԳԳ . 10 ,) և անոնց մէջ եղած հանձարը Անոր կ'ընծայուի : Եւս . Ը . 3-6 : Այսպիսի մեծ ու գերազանց գործք մը , այսինքն մարդկային միտքը նորոգելը , յոյժ առաւել բարձրաձայն կերպով մը կը յայտնէ իրեն Աստուածային Պատճառը : Երբոր մըտածես թէ որքան զանազան են քրիստոնէական բնութեան ճիւղերը , և նաև անոնցմէ շատերը որքան հակառակ են ան բնութեանը՝ որ քու սրտիդ մէջ տիրած էր ու քու կեանքդ մինչև հիմա կը կառավարէր , ան ասնը իբրոր պիտի տեսնես թէ աստուածային ազդեցութիւնները հարկաւոր են յառաջ բերելու ու սնուցանելու քու մէջդ ան բնութիւնները , ինչպէս որ արեւին ու անձրեւին ազդեցութիւնները հարկաւոր են զանազան տունկերն ու ծաղիկները , շտեղչներն ու պտուղները բուսցնելու , որոնցմով երկիրս զարդարուած է ու կը պահպանուի : Անկէ արդէ պիտի զգաս ասիկայ թէ որ մտածես ան բուն ընդգիտութեանը վրայ , որուն՝ ակն ունենալու ես թէ աս երջանիկ գործքը պիտի պատահի . որուն վրայով վերջը արեւին կը զգուշացնեմ քեզ , որուն եթէ արդէն փորձառու եղած չես , պատճառը աս ըլլալու է որ դեռ նոր սկսած ըլլալու ես հոգևոր բաներու վրայ խորհիլ :

4 . Արեւին եթէ Աւրբ Գրքը բնակելու ըլլաս աս նիւթին նկատմամբ , (և եթէ քրիստոնէի մը պէս կ'ուզես

ապրիլ , պէտք է որ ամէն օր քննես անիկայ , և դադարփարներդ ու դործքերդ անով ձևացնես ,) պիտի տեսնես որ անոր բոլոր խնայան ալ Մտուծոյ վրայ ան նոյն կախումը կը սորվեցընէ , որ հիմա ևս կը սորվեցընէ : Մասնաւորապէս պիտի տեսնես՝ թէ հոգւոյն մէջ աստուածպաշտութեան յառաջ դալը աստուածային խոստմունք մըն է , և երբոր անիկայ հոգւոյն մէջ ըլլայ , Սուրբ Գիրքը աստուածային ներդործութեան կ'ընծայէ զանիկայ , և շորհաց ու աստուածպաշտութեան ածիլը ան մարդոցը սրտին մէջ՝ որոնք ճշմարտապէս վերստին ծնեալ են , Մտուծոյ դործքն է ըսուած է , որ « կը սկսի ու կը կատարէ մինչև Յիսուս Քրիստոսի օրը » : Փիլի . ւ . 6 :

5 . Ես ամէն ճշմարտութիւններուն հետևութեամբը քեզի մէկ ամէնատոյդ սկզբունք մը ըրէ՝ թէ կրօնքի մէջ ջանք մը բնելու չես բուն քու գորութեամբդ : Աթէ աս բանը մոռնաս , և Մտուած ուղէ փրկել քեզ վերջապէս , անիկայ պիտի խոնարհեցընէ քեզ կրկին և կրկին քու ջանքդ 'ի դերև հանելով , մինչև որ աղէկ մը սորվեցընէ քեզի : Պէտք է որ նախ ամէնապէս դուն քեզմէ ձևացուցած զանազան դադարփարներու ու ջանքերու վրայով , մինչև որ ճշմարտ հիմանք վրայ հաստատուիս : Հաւանականաբար պիտի ցուցընէ նաև ոչ միայն բնդհանուր կերպով մը թէ քու գորութիւնդ յերկնից բղխելու է , այլ նաև մասնաւոր կերպով մըն ալ թէ ամէնօրինալ Հոգւոյն պաշտօնն է քու սիրտդ մարտի , և քու մէջ սուրբ դիտարութիւններ հաստատել . ու նաև՝ թէ աս ամէն դործողութիւններուն մէջ անիկայ Քրիստոսի Հոգին սկսուելու է , անոր առաջնորդութեամբը դործող . և մէկ կենդանի հաղորդակցութիւն մը՝ անկէ մեզի խրկուած իր բնեկեղեցւոյն մեծ Գլուխէն , աս սուրբ և բարի ազգեցութիւններուն իր բնե մեծ Գանձապետն ու Մատակարարը : Ար աս պատճառաւ կ'ըսուի Յիսուս Քրիստոսի Հոգին , (Փիլի . ւ . 19 ,) որ « Մտուծոյ աջ ձեռքով փրկիչ ըլլալու բարձրացած է , ազաշխարհութիւն և մեզայ թողութիւն տալու » , (Գործ . և . 31 ,) և անոր շորհօքը միայն կրնանք զօրանալ , (Ի Տի . ք . 1 ,) և « իր լեցունու-

Թեանէն շնորհք կ'առնենք շնորհքի տեղ" : Յովհ. ւն . 16 :

6 . Ուստի հաստատապէս որոշէ Մատուծոյ ծառայու-
թեանն ու քու հոգւոյդ համար աշխատիլ , բայց համեա-
տութեամբ ու խոնարհութեամբ որոշէ : " Արիտասարդ-
ները անգամ պիտի յոգնին ու թուինան , և ընտիր կըտ-
րիձները բոլորովին պիտի իյնան . բայց Տէրոջը ապաւի-
նողներուն ուժը պիտի նորոգուի" : Առայ . Խ . 30 ,
31 : Արբոր մէկ հոգի մը գրեթէ կը վախնայ Տէրոջը
առջևը ըսելու թէ՛ Այլ պիտի չլնեմ աս կամ ան բանը ,
որն որ առաջ բարկացուցած է զանիկայ , երբոր կը վախ-
նայ բացարձակապէս խոստանալու թէ Ճրութեամբ և
յարատևութեամբ պիտի կատարեմ աս կամ ան պարտա-
ւորութիւնը , այլ միայն իր խոնարհ և եռանդուն բաղ-
ձանքը կը ցուցնէ թէ շնորհք կարող ըլլար մէկը մեր-
ժել և միւսին հետամուտ ըլլալ , ան ատենը՝ որքան որ
գիտողութեամբ ու փորձառութեամբ գիտեմ , փոր-
ձութեան յաղթելը և պարտաւորութիւնը կատարելը սոր-
վելու երջանիկ արուեստին ամենէն աղէկ ճամբուն մէջն
է ան :

7 . Ընդհակառակն՝ թող աս՝ Հողիէն կախում ու-
նենալդ , և առանց անոր մշտատե օգնութեանը ինչ և իցէ
հոգևոր բանի մը տկար ու անբաւական ըլլալուդ վրայ ու-
նեցած զգացումը չվհասեցընէ քեզ ինքզինքդ Մատուծոյ
նուիրելէն , և աստուածաբաշտութեամբ կեանք մը վարե-
լու սկսելէն , յիշելու թէ որքան մեծ յոյս ունիս՝ որ աս
շնորհածիր ազդեցութիւնները քեզի պիտի արուին : Աը-
նութեան լոյսը՝ երբոր կը սորվեցընէ մեզի առաքինի ըն-
թացքի մէջ ըլլալու համար Մատուծմէ օգնութեան կա-
րօտ ըլլալնիս , կ'առաջնորդէ մեզ եզրակացընել թէ այս-
պիսի բարեւեր Աշակ մը , որ մարդկային սեռին ամենէն
անարժան ու անհոգներուն անգամ այնքան օրջութիւններ
կը պարգևէ , մասնաւոր հաճութիւն մը պիտի ունենայ
խոնարհութեամբ խնդրողներուն ան շնորհալից օգնու-
թիւնները տալ , որոնք անոնց անմահ հոգիներուն իր նը-
մանութիւնը կու տան , և յարմար կ'ընեն զանոնք ան եր-
ջանելութեանը՝ որուն ընդունակ է անոնց բանական բնու-

Թիւնը , և որուն վայելմանը համար ստեղծուեցաւ 'ի սկզբանէ : Աստուծոյ խօսքին մէջ շատ աւելի առատապէս կը հաստատուի աս յոյսը : Հոն կը լսես որ աստուածային խնայողութիւնը՝ մինչև անգամ անոնց որ երկարատեն ոչինչ համարած են անոր տուած խրատները՝ կ'աղաղակէ թէ " Իմ յանգիմանութեանս դարձէք , ահա իմ Հոգիս ձեր վրայ պիտի թափեմ " : Աւագ . Կ . 23 : Ար լսես որ առաքեալը կ'ըսէ՝ թէ " ալ համարձակութիւնով մտնենանք շնորհաց աթոռին առջևը , որ ողորմութիւն ընդունինք՝ ու շնորհք գանձենք պէտք եղած ատենը մեզի օգնելու " : Աբր . Գ . 16 : Այս՝ հոն կը լսես նաև որ մեր Տէրը ձեռնարկութիւն կ'ընէ սա անուշ ու համոզիչ կերպով . " Աւստի եթէ դուք՝ որ շար էք , ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ դիտէք , որչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց , որ իրմէ կը խնդրեն " : Աւագ . Ժ . 13 : Սուրբ Հոգւոյն աս պարզէն ու խոստմունքը Վրիստոսի յանձնուեցաւ՝ երբոր երկինքը համբարձաւ , որ բոլոր իր ճշմարիտ աշակերտներուն տրուի : Աստուած " անիկայ առատօրէն թափեց մեր վրայ Յիսուս Վրիստոս մեր Փրկչին ձեռքով " : Տէր . Գ . 6 : Այլ կը յաւելում թէ՝ Սուրբ Հոգին աւելի առատութեամբ ընդունելու համար ունեցած բուն խի բաղձանքդ , արդէն տրուածին առաջին պտուղներուն արդիւնքն է . անանկ որ պատշաճաբար կրնաս սեպել անիկայ մասնաւոր կոչում մը՝ որ " լայն բանաս բերանդ ու գանձիկայ ան լեցընէ " : Սաղ . Ժ . 10 : Չօրաւի ես , վասն որոյ զուարթութեամբ կրնաս ըսել թէ՝ Յիսուս հրաւիրած է զիս որ երթամ ու խմեմ . նաև խոստացած է որ՝ ոչ միայն պիտի խմեմ , թէ որ անոր երթամ , այլև " իմ փորէս կենդանի չուրի զետեր պիտի բղխեն " . ուրիշներուն շնորթեանն ու կազդուրմանը համար : Յովհ . Է . 37 , 38 :

8 . Արեմն զնա խոնարհ զուարթութեամբ քրիստոնէական կենաց բոլոր պարտաւորութիւնները կատարէ : Գնա և յաջողութիւն գտիր " Տէր Ահաւային զօրութիւնով . անոր արդարութիւնը՝ միայն անորը յիշէ " : Սաղ . Կ . 16 : Այլ իբրև նշան աւելի հաղորդութեան՝

սիրտդ զօրանայ յոյժ եռանդուն փափաքով մը ան օրհնութիւններուն վրայ՝ որոնք հիմա քու առջևդ դրի որ փնտրուես : Իցէ՛ թէ արթննայիր հետեւալ սուրբ հառաչանքներով Մատուծոյ առջևը սիրտդ թափելու . և իցէ՛ թէ անոր շնորհալից ներկայութեանը առջևը քու ամէն աւուրազօթքդ ըլլային անոնք :

Մէկ խոնարհ բարեխաղ լուսինն էր աստուածային շարձացադուխտութիւններուն համար , հոգնոյն ՔՉ աստուածապաշտութիւնն յատուալ բերելու ու զբոսցնելու :

Ո՛վ ամենօրնեալ Մատուած , անկեղծութեամբ կը խոստովանիմ՝ քու առջևդ՝ հոգևոր բարի բաներ ընելու տկար ու անբաւական ըլլալս : Հազար անգամ փորձառու եղած եմ ասոր . բայց տակաւին իմ յիմար սիրտս նորէն իրեն կ'ապաւինի , (Մատ . ԻԸ . 26 ,) և իր զօրութիւնովը որոշումներ կը կազմէ : Բայց թող քու անոր վրայ ըրած շնորհալից ազդեցութեանդ առաջին պտուղներն աս ըլլայ , որ զանիկայ խոնարհութեամբ իրմէն վհատեցընէ , ու քեզի ապաւինիլ տայ :

Մեծապէս կ'ուրախանամ՝ ո՛վ Տէր , մարդասիրաբար ինձի տուած վկայութիւններուդ համար՝ վստահացնելով զիս քու յօժար ու պատրաստ ըլլալուդ՝ առատապէս պարզեւելու այսպիսի մեծ պարզե մը : Այսն որոյ քու շնորհալից հրաւերքիդ համեմատ՝ համարձակութեամբ կը մօտենամ շնորհաց աթոռիդ առջևը , որ շնորհք զանեմ պէտք եղած աստե՛նը ինձի օգնելու : ԱճԻ . Գ . 16 : Ո՛վ Տէր Մատուած , չեմ ուզեր քու շնորհքդ անառակութեան դարձընել , (Յուդ . 4 ,) կամ իմ՝ տկարութիւնս պատճառանք մը ընել անհոգութեան ու ծուլութեան : Աը խոստովանիմ՝ որ իմ բանեցուցածէս աւելի զօրութիւն տուած ես ինձի արդէն , և շատոնցունէ՛՛ աւելի առատ պարզեւներ ընդունած չըլլալուս պակասութիւնը ինձի կուտամ ու չէ թէ քեզի : Աը փափաքիմ որ այսուհետեւ թիր ըլլամ բոլոր սահմանեալ միջոցները բանեցընելու , որոնք զանց ընելով այսպիսի խնդրուածքներ ընելը՝ աղէկ զիտեմ որ ամբարիշտ ծաղրաբանութիւն մըն է , և շատ

Հաւանական է որ կը զայրացընէ քեզ ունեցածս ալ ձեռքէս առնելու , քան թէ քեզ կը յօժարեցընէ որ աւելի պարզեմ : Բայց հաստատ որոշելով յետին աստիճան ջանքընելու , անձկանօք կ'աղաչեմ որ քու շնորհքդ պարզեմս ինձի , որպէս զի կարող ըլլամ աս որոշումը կատարելու :

Ս՛վ Տէր , “ քու ծառայիդ բարութեան համար երաշխաւոր եղիր ” : Սող՛ . ճժ՛Թ . 122 : Հաճէ քու սրբաբացուցիչ ազգեցութիւններդ թափել իմ հոգւոյս վրայ , որ ինձմէ պահանջած ամէն պարտաւորութիւններդ կատարեմ : Ա'աղաչեմ քեզի՛ իմ սրտիս մէջը խորին տպաւորեմ ամէն շնորհք և առաքինութիւն , և հաստատ պահէ ներսիդիս ան երջանիկ ոգին՝ ներսէն ու դուրսէն եղած ան ամէն յարձակմունքներուն մէջ , որոնց միշտ ենթակայ եմ քանի որ աս աշխարհիս մէջն եմ ու այսբան տկարութիւններով պաշարեալ : Ա'աղաչեմ քեզի՛ լեցուր իմ սիրտս բարի զգածմունքներով դէպ 'ի քեզ իմ Աստուածս , և դէպ 'ի ընկերներս : Վու ներկայութիւնդ ինձի միշտ յիշեցուր , և շնորհէ որ յիշեմ թէ հոգւոյս ամէն ծածուկ զգացումները բաց են քեզի : Այսն որոյ շնորհէ որ մեղքին ծագմանն ու անոր մտնեալուն դէմ զուշանամ . և որպէս զի չըլլայ թէ Աստանան իր շար թելադրութիւններուն տեղի գտնէ , անձկանօք կ'աղաչեմ քեզի՛ ո՛վ Տէր , որ իմ սիրտս քու Սուրբ Հոգիովդ լեցընես , և քու բնակութիւնդ հոն հաստատես : Իմ մէջս բնակէ , ու իմ մէջս քալէ , (Ե՛ Աորն՛ . Կ . 16 ,) և թող իմ մարմինս տաճար ըլլայ Սուրբ Հոգիին : Ե՛ Աորն՛ . Կ . 19 :

Հնորհէ՛ որ իմ Տէրոջս Յիսուս Քրիստոսի այնպէս միանամ , որ անոր հետ մէկ հոգի ըլլամ , (Ե՛ Աորն՛ . Կ . 17 ,) և անոր զօրացուցիչ ազգեցութիւններուն շարունակ զիս ամէն փորձութիւններէ և ամէն ապականութիւններէ ազատ պահելը զգամ . որպէս զի քանի որ երիտասարդները կը յօգնին ու կը թուլնան , և ընտիր կտորիճները բոլորովին կ'իյնան , ես այնպէս ապաւինիմ քեզի որ ոյժս նորոգուի , (Ե՛սայ . Ի՛ս . 30 , 31 ,) և հաւատոյ՝ սիրոյ՝ նախանձաւորութեան՝ և սրբութեան մէջ աստիճան

աստիճան յառաջ երթամ, մինչև որ Սիօնի մէջ քու անջիգ կատարեալ երևնամ, (Սաղմ. ձգ. 7,) անմահ զօրութեամբ և ուրախութեամբ քեզմէ լեցուելու, որ աս երկուքին ալ յաւիտենական աղօթիւրն ես, իմ Տէրոջն Յիսուս Վրիստոսի միջոցովը՝ որով ունիմ արդարութիւն ու զօրութիւն, (Ասայ. խն. 24,) որոնց մէջ բրած բոլոր յառաջադիմութիւններու գովութիւնը կը ցանկամ միշտ իրեն ընծայել. Վմն :

ԳՂՈՒԽ ԺԳ

Պարէի եկած Ռուսաստանի սպանութեան ու քաղաքացիական իրարմէի տն զնապատութեանն իրան որեւ, որոնք ին Հանրապետիկ հոգեւոր ընկացութի ին ձեզ յարած արեւը :

1. Շատ պատշաճ է մեր աստուածային Այրդապետին մեղմէ պահանջածը թէ՛ «Վանք ըրէք որ նեղ դռնէն մտնէք», (Ղուկ. ԺԳ. 24,) ասով խնայքնելով որ՝ ոչ միայն ճամբան նեղ է, այլ թէ թշնամիներով ալ պաշարուած է, աջ կողմէն և ձախ կողմէն խորամանկ և զօրաւոր թշնամիներով պաշարուած : Եւ աղէկ գիտցիր՝ ո՞վ ընթերցող, որ կենացդ պարագաները ինչ որ ըլլան, անոնց պիտի պատահիս ու քեզի գէ՛մ պիտի դնեն : Այսն որոյ քու խոհմտութիւնդ պիտի ըլլայ քու խորհրդածութիւններուդ մէջ զանոնք մտադրութեամբ կլուէ, որ տեսնես թէ ըլլալու բանը ինչ է. և քննես թէ ինչ զբահով հարկաւոր է որ հագուիս, ու ինչ գէնքերով պէտք է որ գինուորիս պատերազմը յառաջ տանելու : Շատ անգամ լած ես որ թշնամիները իբր թէ իրեք մեծ պարագլուխներու բաժնուած են, այսինքն մարմինը՝ աշխարհը՝ և Սատանան. և աս բաժանմանը համեմատ պիտի քննել տամ քեզի ասոնց ամէն մէկուն զօրութիւնը, իբրև քեզի գէ՛մ ճակատամարտ կանգնած : Ո՛հ թէ դրուէիր «վրադ առնել Մատուծոյ սպառազինութիւնը», (Լուկ. Գ. 13,) և քրիստոնէին վայլածին պէս «զօրանալ» : Ինչպէ՛ս. ԺԳ. 13 :

2. Թող խղճմտանքդ պատասխանէ՝ թէ ապականեալ ու ինկած բնութիւն մը չունի՞ս : Չե՛մ տարակուսիր որ անոր արդիւնքները կը զգաս : Աը զգաս՝ առաքելոյն խօսքին պէս, որ կը խօսի անոր վրայով իբրև ամէն քրիստոնէից վիճակը՝ թէ «Մարմինը կը ցանկայ հոգիին հակառակ», անանկ որ՝ կարող պիտի չըլլաս ամէն բանի մէջ «ինչ որ կ'ուզես՝ ան ընել» : Վրադ. Ե. 17 : Հետք

Թիւր հակամիտութիւններ բերիր աշխարհի մէջ . և ինքզինքդ այնքան անզամ թող տուիր ան մեղսալից հակամիտութիւններուն , որ մեծապէս աճեցուցիր անոնց զօրութիւնը . և հետեապէս պիտի տեսնես որ աս ունակութիւնները առանց մեծ դժուարութեան շին յաղթուիր : Կատարակոյս շատ անգամ պիտի յիշես ան ազդու օրինակները՝ որոնցմով մարդարէն քուկինիդ նման վիճակ մը կը նկարագրէ . և պիտի խոստովանիս թէ շատ ճշդութեամբ նկարագրուած է « Աթէոզպացոյն իր մորթը և ինձին իր խայտուցները փոխելուն » օրինակներովը : Արհ . ԺԳ . 23 : Յիրաւի կարելի է որ 'ի սկզբան այնպիսի քաջ ու եռանդուն ոգի մը ունենաս , որ քեզի խորհիլ տայ թէ ամէն հակառակութիւն անմիջապէս քու առջիդ յաղթուած պիտի իյնան : Բայց աւանդ , կը վախնամ որ քիչ տեսնի մէջ՝ ան թշնամիները որ ոտքերուդ տակը սպաննուած կը թուէին , նորէն կենդանանան ու զէնքերնին տանեն , և աս կամ ան կերպով նորէն յարձակին : Այլ թերես քու ամենադժուար մարտդ անոնց հետ ըլլայ , որոնց յաղթելը ամենադիւրին կը համարէիր . և քու ամենամեծ փտանդդ ան թշնամիներէն , որոնցմէ ամենէն քիչ կը վախնայիր , մասնաւորապէս հպարտութենէն ու հոգւոյ ծուլութենէն , սրտին ծածկարար Կստուծմէ հեռանալէն , և անոր հետ կենակցելու դժկամակելէն , հանդերձ ապօրինաւոր կերպով մը « երեցած ու ժամանակաւոր բաներու » յարելով , որ շատ անգամ յոյժ փտանդաւոր է քու փրկութեանդ , թէ և գուցէ բացարձակ և ընդհանուր կերպով մը արդիւլուած չըլլան ան բաները : Այսպիսի հազարաւոր պարագաներու մէջ ու բանալու ես ինքզինքդ , եթէ ոչ՝ չես կրնար Քրիստոսի աշակերտն ըլլալ : Մատ . ԺԳ . 24 :

3 . Կակ գիտնալու ես որ մեծ դժուարութիւններու պիտի հանդիպիս աշխարհիս մէջ , քաղաքավարական կանոններէն և աշխարհիս ուրիշ սովորութիւններէն և օրինակներէն : Անկ կողմէն աշխարհիս բաները քեզ կը մոլորեցընեն , միւս կողմէն ալ աշխարհիկ մարդիկը : Հիմա որքան օգնութիւն որ կ'ակնկալես բարի մարդոցմէ բարեպաշտութեանդ մէջ , թերես անկէ յոյժ անկաւ օգնութիւն պիտի դասնես : Անր ժամանակի քրիստոնեաները

ընդհանրապէս այնքան զգոյշ են սնտախառութիւն երեցող բանէն ետ կենալու, և շատէ դուրս ջերմեռանդ է ըսուելուն մէջ այնպիսի անտանելի ահաւոր քան մը կ'երկնայ իրենց, որ քրիստոնեայ եղբայրներէդ շատերը պիտի տեսնես՝ որ աւելի կը ջանան ծածկել իրենց առաքինութիւնն ու աստուածպաշտութիւնը, քան թէ ուրիշները իրենց մոլութիւններն ու ամբարշտութիւնը: Իսկ քանի որ մէկ կողմանէ շատ քիչ օգնութիւն կը դոնես, թէ որ վիճակէ լզականապէս երջանիկ չէ, անտարակոյս միւս կողմանէ մեծ ընդդիմութեան պիտի պատահիս: Արոնքին թշնամիները քաջ ու աշխոյժ պիտի ըլլան իրենց յարձակումներուն մէջ, քանի որ անոր բարեկամներէն շատերը անտարբեր կ'երկնան. և շատ հաւանական է՝ որ մէկ մեղաւորը աւելի ազդեցութիւն պիտի ընէ քեզ թիւրեւ ու խանգարելու, քան թէ տասը քրիստոնեան՝ քեզ ապահովցնելու ու փրկելու: Անոնք՝ որ միանգամ քու մեղքի ընկերներդ էին, հազարաւոր խորամանկ նարքներ պիտի բանեցնեն քեզ հրապուրելու՝ որ նորէն քու ձգած ընկերութեանդ դառնաս, անոնցմէ ոմանք դուցէ քաղցր սիրոյ երեւոյթով մը, և շատերն ալ ծաղրաբանութեան գրեթէ անընդդիմանալի նարքովը, աս նարքը՝ որ ոմանք լըրութեամբ պարծենցած են թէ շիտակի ու ծուռի փորձ է, քու վրադ պիտի փորձեն, թերեւ առանց նկատումի՝ քաղաքավարութեան, կամ մինչև անգամ հասարակ մարդկութեան: Այլտի նախասեն ու անարգեն քեզ անոնք, որոնց համարումն ու սէրը բնականապէս պիտի ցանկաս քու վրադ ունենալ: Ինչուի հալածանքը պիտի քաշես, և թերեւ խելագար ալ պիտի ըսուիս, ուրիշ բանի համար չէ՝ բայց միայն աս պատճառին համար որ՝ հիմա կը սկսիս բանականութիւնդ գործածել մտածելու, և չես միանար անոնց հետ՝ որոնք իրենց յիմարութեան ու խելագարութեան վայրենի ընթացքին մէջ հողիներնին կը կորսնցնեն:

4. Իւր շատ հաւանական է որ Սատանան ալ միանգամայն իր յետին ճիգը պիտի բանեցնէ քեզ վհատեցնելու ու նեղելու: Անտարակոյս անիկայ ան հետութիւններուն՝ հաճութիւններուն՝ և ընկերներուն խիստ հրապուրիչ գաղափարը պիտի յարուցանէ մտքիդ մէջ, որոնք

պէտք է որ ձգես . մեծապէս վհատեցուցիչ և սոսկալի տեսութիւն մը պիտի տայ քեզի ան դժուարութեանց՝ նեղութեանց՝ ու վտանգներուն վրայ , որոնք անբաժանելի են աստուածաբանութենէ , ինչպէս որ ինքն ալ սցապէս համոզել պիտի ջանայ : Պիտի աշխատի զ՛ստուած՝ բարութեան և երջանկութեան աղբիւրը , այնպիսի մէկ խիստ տեք մը ցուցնել քու աչքերուդ , որ բնաւ կարելի չէ հաճեցնել : Թերեւս յոյժ տառապեցուցիչ երկխօսներով պիտի լեցնէ քեզ , և անգութ ու յանգուզն չարութիւնով քու վրայ պարծենայ իբրև իր դերին , որ ատեն դիտէ թէ Տէրոջը ազատն ես : Արբեմն իր անարդ թելադրութիւններովը պիտի ջանայ դադարեցնել քեզ քու պարտաւորութիւններդ կատարելէն՝ իբրև թէ անոնք կատարած ատենդ աւելի զօրութիւն մը կը ստանայ անխկայ քու վրայ : Արբեմն ալ պիտի ջանայ քու պաշտամունքներէդ քեզ ձանձրացնել , երկնցնել տալով մէկ անչափ և ձանձրացուցիչ սահմանով մը , այնպէս ազգելով քեզի թէ՛ չըլլայ որ իր զօրութիւնը բանի քու վրայ երբոր դադարիս : Համառօտի՛ւ աս վարպետ խաբերան այնքան շարքներ ունի որ հատորներ պէտք է անոնք նկարագրելու համար , հանդերձ անոնց գէժ մասնաւոր զգուշութիւններ տալով : Այլ քու պանդխտութեանդ մինչև վերջը ետեւդ պիտի իյնայ եղեռնալից շարքներով ու վարպետութիւններով . և մէկ շարք մը պիտի չթողու ձեռք չզարկած , որ հաւանականաբար ձեռքդ տկարացնէ և սիրտդ տրամեցնէ , որպէս զի եթէ չկարենայ արդէլք ըլլալ քու յաւտենական երջանկութեանդ՝ Մտուծոյ շնորհատու խնամքովը , դոնէ կարենայ վնաս հասցնել քու խաղաղութեանդ ու օգտակարութեանդ՝ որ ատեն կը դիմես ան երջանկութեանդ հասնելու :

Ե . Աս բանը Մտուծոյ ժողովուրդը կը զգայ , և մէկ աստիճանաւ մը դուն ալ պիտի զգաս , եթէ քու վիճակդ ու բաժինդ ալ անոնց հետ է : Բայց յետ ամենայնի մի՛ վհասաիր . Վրիստոս է « քու փրկութեան առաջնորդ » : Աբդ . բ . 10 : Աւրախայից բան մըն է անոր վրայ աս զաղափարով խորհիլ : Արբոր թշնամեաց աս դունդէրուն վրայով քննութիւն կ'ընենք , կրնանք դուխնիս ա-

նոնց ամենուն մէջ վեր վերցնել ու բնել , “ Մեզի հետ եղողները՝ անոնց հետ եղողներէն շատոր են” : Դժ . 16 : “ Տէրոջը յուսացողները Միւն լեռանը պէս են , որ չասանիր , հապա յախտեան կը մնայ” : Սող . ճիւղ . 1 : Երբոր թնամբներդ կ'ուժովն քու վրայ , յիշէ՛ որ “ Տէրը քեզի հետ է” : Օգո . Ժ . 5 : Այսին որոյ ջանք ըրէ արիարար հաստատ կենալ . ջանք ըրէ “ դէմ կենալ անոնց՝ հաւատքով հաստատուած” : Կ . 9 : Հիշէ՛ թէ “ Ենիկայ է յոգնածին ոյժ տուողը , ու կարողութիւն չունեցողին շատ զորութիւն հասցընողը” : Երայ . Լ . 29 : Երդէն հազար անգամ ըրած է ասիկայ , և այլ ևս բիւրաւոր անգամ ալ պիտի ընէ : Արքան պատանիներ յաղթած են իրենց հակայ ախտեանները՝ անոնց ամէն ահաւոր զրա՛նքովը մէկտեղ , որ ատեն անոնց դէմ գացած են , թէ և միայն ցուպով մը ու պարստակով մը , Իսրայէլի Տէր Եստուծոյն անունովը : Կժ . 40-45 : Արքան կանայք և տղայք իրենց թնամբն զորութիւնը սորի տակ առած ու “ տկարութենէ ուժովցած” են : Եժ . Ժ . 34 :

6 . Երկրիս ու դժոխքին բոլոր ընդդիմութիւններուն մէջը դէպ 'ի վեր և դէպ 'ի յառաջ նայէ , և նայելովք սրբաւոր մէջ կենդանութիւն պիտի զգաս : Քու զորապետք մտ է , մտ է քեզի օղնելու , մտ է քեզ վարձատրելու : Երբոր կը զգաս թէ փորձութիւնը սաստիկ կը ձնչէ վրայ , անոր վրայ մտածէ՛ որ մինչև անգամ խաչին շարձարանացը դիմացաւ քու աղատութեանդ համար : Քու աստուածային Եռաջնորդիդ քաջութեանը նայէ . և ջանք ըրէ անոր քայլերուն հետեւն շուրջ : Ասիկ ըրէ անոր ձայնին , վասն զի բարձրաձայն կ'աղաղակէ թէ “ Եհա ես չուտով կու գամ , և իմ վարձքս իմ հետս է” : Հայ . Ի . 12 : “ Մինչև 'ի մահ հաւատարիմ եղիք , ու քեզի կենաց պտակը պիտի տամ” : Հայ . Ի . 10 : Եւ ճշ , որքան պայծառութեամբ պիտի փայլն ան պտակը . և անոր լուսավայլութիւնը որքան երկար պիտի տեւէ : Երբոր ան գոհարները՝ որ ինքնակալներուն թագերը կը զարդարեն , և մէկ արքայական դուխէն միւսին կ'անցնին բազմաթիւ դարերուն յաջորդութեանը մէջ , ան վերջին բո-

ցին մէջ կը հային , ասիկայ կը մնայ “ փառաց անթա-
ւամ պահ ” : Ին Պիտ . Ե . 4 :

7 . Յիրաւի ճշմարիտ է թէ՛ “ անոնք որ իրենց ծուռ
ճամբաներուն մէջը կը մտնեն , Տէրը պիտի կորսնցընէ
անօրէնութիւն գործողներուն հետ ” , (Սող . Ճին . 5 ,)
ան ահաւոր կորուստովը որ աստուածային արդարութիւնը
պատրաստած է անոնց համար , և “ աղէկ էր անոնց ” որ
բնաւ արդարութեան ճամբան ճանչցած չըլլային , քան
թէ ճանչալով ևս դառնային ան սուրբ պատուիրանքն ” :
Ի Պիտ . Ի . 21 : Իսոյց աստուածային շնորհօք ևս լաւա-
զոյն բաներ կը յուսամք քեզմէ : Այս ասիկայ իմ սրտանց
աղօթքս կ'ընեմ քեզի համար՝ ո՞վ ընթերցող , որ “ Աս-
տուծոյ հզօր զօրութիւնը քեզ պահէ ” , յոյժ ապահով
կերպով ամէն կողմէն պատասպարեալ ամբողջի մը պէս “ Հա-
ւատքով՝ փրկութեան ” :

Աս Գրքոստորոշիւններուն պատշաճութեան զարհուրելով , Ին-
չէ՛քը աստուածային պաշտպանութեան յանձնող հոգեւոր
աղբիւր :

Ո՞վ ամենօրնեալ Աստուած , քու ամենակարող զօ-
րութեանդ կը դիմեմ : Այլ ինձի որ դժուարութիւն-
ներով ու վտանգներով պաշարուած եմ . և քու ամենա-
կարող բազուկդ երկնցուր զիս փրկելու , “ դուն որ քեզի
յուսացողները աջ ձեռքովդ կ'ազատես հակառակ կեցող-
ներէն ” : Սող . ԺԷ . 7 : Այսօր սրտիս խորութենէն
ինքզինքս քու պաշտպանութեանդ կը յանձնեմ . քու զօ-
րութիւնդ 'ի գործ դիր ինձի աղէկութիւն ընելու , և
շնորհէ ինձի “ քու թեւերուդ հովանաւորութեանը ա-
պաւինիլ ” : Սող . ԺԷ . 1 : Թող “ քու շնորհքդ
հերիք ըլլայ ինձի ” , և “ քու զօրութիւնդ կատարուի իմ
տկարութեանս մէջ ” : Ի Պիտ . ԺԻ . 9 : Չեմ հա-
մարձակիր ըսել թէ “ քեզ բնաւ պիտի չձգեմ ” , բնաւ քեզ
պիտի չուրանամ ” , (Սող . ԺԳ . 31 ,) բայց կը յու-
սամ թէ ճշմարտիւ կընամ ըսել ո՞վ Տէր , թէ չեմ ուզեր
ուրանալ . և իմ ներկայ խորհուրդիս ու գիտաւորու-
թեանս համեմատ , մահը շատ քիչ ահաւոր կ'երեւոյ ին-

ծի , քան թէ կամաւ և զիտութեամբ քեզ բարկացընելը :
 Ահա՛ արմատախիլ ըրէ իմ սրտէս ան աշականութիւննե-
 ըր՝ որ սաստիկ փորձութեան ժամանակ մը կրնան հակա-
 միտ ընել զիս իրերը տարբեր կերպով մը նկատել , և
 այնպէս զիս թշնամոյն ձեռքը մատնել : Օգորացուք իմ
 հաւատքս՝ ո՛վ Տէր , և քաջալերէ իմ յոյս : Ինծի դի-
 ցաղնապայել հաստատ որոշում տուր՝ որ երկնից ճամբուն
 մէջ եղած ամէն հակառակ բանի դէմ կենամ . և « իմ
 երեսս զայլախաղի պէս ըրէ » երկրիս ու դժոխքին ամէն
 յարձակումներուն դէմ : Եսայ . 5 . 7 : « Թե՛ որ մե-
 զաւորները զիս զխէ հանել ուզեն , ես անոնց հաւանու-
 թիւն չտամ » . Եսայ . 10 . 10 . Թէ որ նախատեն զիս ,
 հոգ չընեն . Թէ որ սպառնան ինծի , չվախնամ : Ենոնց
 յայտնած սրտերուն չարութիւնը պատահութիւն մը ը-
 նեն՝ սուրբ և եռանդուն , և սակայն խոհեմ ու ազէկ
 կառավարուող նախանձաւորութիւն մը ձեռք առնելու ,
 զանոնք համոզել և դարձրնելու համար : Գտնէ բնաւ
 չամենամ քու փաստդ պաշտպանելու՝ բարեպաշտութեամբ
 ամենէն ամբարիշտ ծաղրարաններուն դէմ : « Զնծու-
 թիւն և ուրախութիւն լսել տուր ինծի » իմ հոգւոյս մէջ ,
 և ես պիտի ջանամ « ամբարիշտներուն սորվեցընել քու
 ճամբաներդ , որ մեղաւորները քեզի դառնան » : Սուրբ .
 Ժմ . 8 , 13 : Եսայ՝ Տէր , քանի որ երկիւղներս կը շա-
 րունակեն՝ թէ և ինքզնիւս դատապարտեալ համարիմ ,
 այնչափ արգարութեամբ է իմ դատապարտութիւնս բուն
 իմ յիմարութեանս համար , որ ես քու փաստարանդ պի-
 տի ըլլամ՝ թէ և ինծի դէմ :

Պահպանէ՛ զիս՝ ո՛վ Տէր , հիմն՝ և ամէն ատեն : Ինչ
 հասակի կամ վիճակի որ համնիմ , թող մի՛ տար ինծի
 բնաւ որ խորհիմ թէ բաւական զորութիւն ունիմ առանց
 քեզի՝ աս մարտը զլուխ տանելու : Եսե թող մի՛ տար
 որ երևակայեմ թէ իմ հոգւոյս աստուածապաշտութեան
 աս նորահասութեան ատենը այնքան տկար եմ՝ որ կարող
 չեմ զիս պաշտպանել : Աւր որ զիս տանիս՝ ետեւդ
 դամ . և ինծի համար ուր որ սահմանես , տուր որ հոն
 աշխատիմ , տուր որ հոն պատերազմիմ ան սուրբ պատե-
 րազմը իմ փրկութեանս ամէն թշնամիներուն դէմ . և

յաւէտ իյնամ անոր մէջը , քան թէ անարդու թեամբ դասալիք ըլլամ :

Եւ դուն՝ ո՛վ փառաւորեալ Վրկիլէ , իմ փրկութեան Մաջնորդս , իմ հաւատքիս մեծ Մաջնորդն ու Ատաւորողը , (ՆճԵ . ԺԻ . 2 ,) երբոր քեզ ուրանալու վտանգի մէջ իյնամ , Պետրոսին պէս , դարձիր և այնպիսի վեհափառութեամբ ու քաղցրութեամբ ինձի նայէ , (Ղուկ . ԻԲ . 61 ,) որ ան նայուածքդ կամ իյնալէ ազատէ զիս , կամ շուտով զիս նորէն Մատուծոյ և իմ պարտուցս կատարմանը դարձնէ . և սրվեցընէ ինձի իմ սխալմունքներս առիթ մը ընել բոլոր իմ յանցանքներուս համար աւելի խոնարհելու , և իմ ապառնի փոյթս ու զգուշութիւնս կրկնապատկելու . Ամէն :

ԳԼՈՒԽ ԺԷ

Վերջագոնիան ինչպէս Վարդապետ Ժառանգութեանը Բացար-
չախազէս նուիրելու համար յորդոր է օգնութիւն :

1 . Արուհեան կը յուսամ թէ ամէն կերպ հակառա-
կութիւնները բանի տեղ չցնելով՝ նախընթաց երկու
գլուխներուն մէջ յիշուած ան ապիւ քաջալերութիւննե-
րուն ու շարժառիթներուն խորհրդովը , Վստուծոյ ծա-
ռայութեանը մտնելու սրտանց պատրաստ պիտի ըլլաս ,
անոր համար հիմա քեզ կը յորդորեմ ինքզինքդ բոլոր սրբ-
տով ան ծառայութեանը յանձնելու : Աչ միայն սրտիդ
մէջ այսպիսի դիտաւորութիւն մը հաստատե , այլ յատ-
կապէս յայտնէ՛ անիկայ աստուածային ներկայութեանը
մէջը : Ենիկայ այսպիսի հանդիսաւոր կերպով մը ընելը
ստուգիւ յոյժ պատշաճ է բանին բնութեանը նայելով . և
ճշմարտիւ յոյժ պատշաճ է Վստուծոյ հետ կապել այսպիսի
խարերայ սիրտ մը , ինչպէս որ գիտնէք թէ՛ մեր սրտերը
են : Հաճելի պիտի ըլլայ մտածել թէ աս բանը կատա-
րուեցաւ այս ինչ ժամանակը և այս ինչ տեղը ու այն ինչ
պարագաներով , որոնք կրնան ծառայել յիշողութեանն
ու խղճմաններին ազդեցութիւն ընելու : Վու վրայ եղած
Վստուծոյ ուխտերուն զգացումը փորձութեան ժամանակ
քեզ կը զորացնեն . և անոնց յիշատակութիւնն ալ խո-
նարհ համարձակութիւնդ ու վստահութիւնդ կը քաջալե-
րեն անոր մտնելու՝ իբրև ուխտի Վստուծոյդ ու Հօրդ ,
ինչպէս որ ապառնի հարկը պահանջէ :

2 . Այսն որք ըրէ ասիկայ . բայց խորհրդով ըրէ :
Վննէ թէ ինչ է ընելիքդ . և խորհէ թէ իր քան պատ-
շաճ է անիկայ ընելը , և ջերմեռանդութեամբ ու ուրա-
խութեամբ ընելը , “ չէ թէ ակամայ՝ հապա կամաւ ” ,
(ւ՛ ՊԷԳ . Ե . 2 ,) ինչու որ թէ աս և թէ ուրիշ ամէն
մտօք ալ “ Վստուած յօժարակամ տուողը կը սիրէ ” :
Ի Սրբնի . Թ . 7 : Արդ՝ ստուգիւ չկայ աւելի արժէք ու-

նեցող բան մը որ ուրախութեամբ կամ 'ի սրտէ հաճութեամբ ընելու ենք, բայց 'ի ինքզինքնիս Տէրօջը պայտես նուիրելէն, ան Մտուծոյն՝ որ մեզ ստեղծեց, որ մեզ աս հաճելի և բարեգարգ աշխարհիս մէջ դրաւ, պաշտպանեց մեզ մեր փափուկ մանկութեան ստենը, պատասպարեց մեզ տղայութեան ու պատանեկութեան անխորհուրդ օրերնուս մէջ, և մինչև հիմա շարունակ օղնեց՝ կերակրեց՝ և պահեց մեզ: Մեկիայ մեր արդար Տէրը և Վերագոյն Առաւելարը խոտտովանելէն աւելի բանաւոր բան մը չկրնար ըլլալ. ոչ ալ իբրև մեր յոյժ պարզեատու Բարեբարին՝ ինքզինքնիս անոր նուիրելէն, և իբրև մեր ամենամեծ երջանկութիւնը՝ անիկայ փնտռելէն: Հայտնապէս չկայ ասկէ աւելի իրաւացի բան մը, որ մենք՝ անոր զօրութեանը պատուներն ու իր Արդւոյն արեանը զինը, իրենն ըլլանք յախտեանս: Աթէ բանը արդարապէս նկատես, քու հոգւոյդ վիշտ պիտի ըլլայ որ մինչև հիմա օտարացեալ էիր ամենօրնեալ Մտուծմէ և անոր ծառայելէն. այնքան հեռու պիտի ըլլաս տարի մըն ալ կամ՝ օր մըն ալ ան օտարութեան վիճակին մէջ մնալ ուզելէն, որ պիտի ուրախանաս անոր ապրտամբ արարածը իրեն դարձնել. և ինչպէս որ առաջ «քու անդամներդ անիրաւութեան գործիք ըլլալու ընծայեցիր մեղքին», հիմա ալ ուրախութեամբ «անձդ Մտուծոյ պիտի ընծայես՝ որպէս թէ մեռելներէն ողջընցած», և գործածես քու անդամներդ իբրև արդարութեան գործիքներ՝ Մտուծոյ: **Հոով. Գ. 13:**

3. Ասե ինքզինքդ նուիրելը այնքան կատարեալ պիտի ըլլայ, որ բան սր զուարթալից ու անմիջական է: Մէն ինչ որ ես, և ամէն ինչ որ ունիս, և ամէն ինչ որ կրնաս ընել, ժամանակդ՝ ստացուածքդ՝ և ուրիշներուն վրայ ունեցած ազդեցութիւնդ՝ անոր նուիրելու ես, որ այնուհետև բոլորովին անոր համար և անոր փառքին համար գործածուին: Պիտի չփափարխ անկէ բան մը ես պահել. այլ սրտի մտօք պիտի դատես թէ մն ստենը ամենաճշմարիտ և վսեմ մտօք քուկդ ես, երբոր բոլորովին անորն ես: Ասե աս մեծ պատեհութեամբս բոլոր ունեցածներդ՝ անոր իմաստուն ու շորհաձիր նախախնամութեան կառավարութեանը յանձնելու ես. ոչ միայն անոր

զօրութիւնը խոստովանելով , այլ հաւանութիւն տալով անոր անտարակուսելի իրաւունքին՝ որ քեզի և բոլոր քեզի տուած բաներուն ինչ որ ինքը կ'ուզէ այնպէս ընէ . և սրտանց հաւանութիւն ցուցընելու ևս անոր բոլոր բրածններուն ու բոլոր ընելիքներուն ալ :

4 . 'Դարձեալ կը յիշեցընեմ՝ քեզի թէ աս անձնատուութիւնը մշտնջենաւոր ըլլալու է : Ինքզինքդ այնպիսի կերպով մը Մատուծոյ տալու ևս՝ որ այնուհետև բնաւ չսպեա թէ դուն քուկդ ևս . վասն զի Մատուծոյ իրաւունքները իրեն բնութեանը պէս յախտենալիսն ու անփոփոխ են . և իբր բանաւոր արարածներուն նայելով նոյն են երէկ և այսօր և յախտեանս :

5 . 'Կաես կը խրատեմ՝ քեզ և կը թախանձեմ՝ որ աս նուիրումը կարելի եղածին չափ հանդիսաւոր կերպով մը ընես : Բացայայտ խօսքերով ըրէ անիկայ : Այլ թերեւս շատ մարդոց աւելի պատշաճ է , ինչպէս որ շատ բարեպաշտ աստուածաբաններ ալ ճատագոյժած են , զբով ընել անիկայ : Ստորագրէ և կնքէ թէ 'Մյս ինչ տարուան այն ինչ ամուն այն թձ՝ օրը՝ այս ինչ տեղը կատարեալ խորհրդածութեամբ և սրտի մտք մտածելով սա բարի որոշումը ըրի թէ՛ ուրիշները ինչ որ ընեն , և Տէրօջը պիտի ծառայեմ' : Յե . իդ . 15 :

6 . թե՛ որ ուզես՝ պոսպիսի զրուածք մը կրնաս ընել քեզի համար . կամ թէ որ աւելի կ'ընտրես որ անիկայ պատրաստ ձեռքդ անցնի , ասանկ բան մը վարը կը դանես , որուն մէջ եթէ մտնաւոր բան մը քեզի չյարմարիր , կրնաս քու պարագաներուդ յարմար գալիք փոփոխութիւններ ընել դիւրաւ : Բացց ինչ որ գրես , աղէկ կշռէ , անոր վրայ զջուշութեամբ մտածէ , որ 'բերնովդ չաճապարես , և քու սիրտդ Մատուծոյ առջևը խօսք հանելու շարտորայ' : Վող . ն . 2 : Այլ երբոր կ'որոշես աս միջոցը բանեցընել , սովորականէն զատ յատուկ աղօթքով կատարէ աս գործը : Աթէ զիւրաւ կրնաս , ան օրը ծովով ու աղօթքով անցուր . և երբոր սիրտդ պատրաստուի Մատուածային վնհատիտութեանը վրայ պատշաճ ահ մը ունենալով , հանդերձ անոր բարութեանը խոնարհութեամբ վատահելով , և անոր շնորհքին համար եռանդուն տենչ

մը ունենալով , ան ատենը ծունկերուդ վրայ Մատուծոյ առջևը ներկայացիր , և կարդան անիկայ խոհական խորհրդով և հանդիսական կերպով . և երբոր ստորադրես անիկայ , մէկ ապահով տեղ մը դիր , որ անկէ ուզած ժամանակդ անես նայիս . և քեզի կանոն մը ըրէ տարուան այս ինչ ատենները աչքէ անցընել անիկայ , որ միշտ միտքդ պահես : Իւր Մատուած շնորհէ որ կարող ըլլաս պահել անիկայ , և քու բոլոր վարմունքիդ մէջ անոր համեմատ քալել : Անիկայ խարխիս մը ըլլայ հոգւոյդ՝ ամէն փորձութիւններու մէջ , և սիրտանք մը ամէն նեղութեան մէջ : Անոր յիշատակութիւնը քեզի համարձակութիւն տայ այնուհետև շնորհաց աթոռին առջևը համարձակ մտննալու , և քեզի առաւել զօրութիւն տայ քու հոգւոյդ զատուելու ատենը , զգացընելով թէ՛ անիկայ քու ուխտիդ Մատուծոյն ու շօրը և ան բարեշնորհ Փրկչին պիտի երթայ , որուն զօրութիւնն ու հաւատարմութիւնը ապահովութեամբ պիտի « պահէ իրեն աւանդած բանդ մինչև անօրը » : Ի Տ՛՛ . ան . 12 :

Անձնու-իրան օրինակ իջ :

Մ՛՛ վ յառիտնական և անփոփոխ Ահոյայ , երկնի և երկրի մեծ Արարիչը , և հրեշտակաց և մարդկան երկրպագելի Տէրը . հոգւոյ ամենախորին խոնարհութեամբ և նուաստութեամբ կը փափարիմ՝ քու ահաւոր ներկայութեանդ առջևը խոնարհիլ հիմա , և անձկանօք աղօթել՝ որ քու անձնակի և անխմանակի փառացդ վրայ պատշաճ զգացում մը թափանցես իմ սրտիս :

« Կարմինս կը սկսի դողալ » , (ԱճԻ . ին . 6 ,) երբոր ես՝ մեղալից որդս կը համարձակիմ գլուխս քեզի վերցընել , կը համարձակիմ աս ժամուս քու վեհափառ ներկայութեանդ առջևը երևիլ : « Մ՛՛ վ Տէր Ահոյայ , ես թ՛՛ վ եմ , ու իմ տունս ի՞նչ է » : Ի թ՛՛ առ . է . 18 : Ի՞նչ եմ ես և թ՛՛ րկէ սերեալ , ի՞նչ է իմ բնաւորութիւնս և արժանաւորութիւնս , որ այսպէս թաղաւորաց ճնաղաւորին և տէրերուն Տէրոջը առջևը խօսիմ : Մայլազունիմ , և շիտթամ եմ քու առջևը : Իայց՝ ո՛վ Տէր , ինչպէս որ քու մեծութիւնդ , անանկ ալ քու ողորմութիւնդ մեծ է :

Թիւ որ հաճիս քու արարածներուն հետ հաղորդակցու-
թիւն ընել , քու անհամեմատ կերպով բարձրացեալ
ընութիւնդ պէտք է որ խոնարհի , անհունապէս վար խո-
նարհի : Այս ես գիտեմ որ քու սիրական Արդարող Հի-
սուսի ձեռքովը կը խոնարհիս աս մեղաւոր մահականացունե-
րուն այցելութիւն ընելու , և անոնց թողլտուութիւն ընե-
լու՝ որ քեզի մօտենան , և քեզի հետ ուխտ ընեն . այս՝
գիտեմ որ աս խորհուրդը քուկող է , և դուն քու շնորհքդ
խրկեցիր անիկայ մեզի առաջարկելու . և մէկը քեզմէ շտր-
ված՝ կարող պիտի չըլլար անանկ դադափար մը ձեացընե-
լու , և ոչ պիտի հակամիտէր անիկայ ընդունելու , մինչև
անգամ իրօք առաջարկուելէն ետքը :

Այսն որոյ քեզի կու գամ հիմա , քու Արդարող ա-
նուամբը հրաւիրեալ , և անոր արդարութեանն ու շնոր-
հացը ապաւինած : Ինքզինքս քու ոտքդ ձգելով , աչքս
երկինքը վերցընել համարձակելով , և կուրծքս ձեծելով ,
խոնարհ մայրաւորին հետ կ'ըսեմ թէ՛ «Մատուած՝ ողոր-
մէ՛ ինձի մեղաւորիս» : Առ . Ժ . 13 : Ար խոստու-
վանիմ՝ ո՞վ Տէր , որ ես մեծ մեղաւոր մըն եմ : « Իմ
մեղքերս մինչև երկինքը հասան » , (Յոյս . Ժ . 5 ,) և
իմ անօրէնութիւններս մինչև ամպերը ելան : Ար . Ժ .
9 : Իմ ապականեալ և անարդ ընութեանս ան-
կարգ հակամիտութիւնները խիստ զօրաւոր կերպով ներ-
գործեցին , որ մահուան պտուղ յառաջ բերեմ : Առ . Ժ .
5 : Այս եթէ իմ յանցանքներս խոտութեամբ համ-
բես , ես լուռ կենալու եմ յանցանքիս բեռին տակը , և
անմիջապէս յախտնական կործանման մէջ իյնալու եմ :
Իսկ դուն քու շնորհքդ զիս քեզի դառնալու կանչեցիր ,
թէ և ես մոլորեալ ոչխար մը՝ ապստամբ որդի մը՝ ուխտա-
դրուժ զաւակ մըն եմ : Ար . Ժ . 22 : Այսն որոյ ահա
ես քեզի կու գամ՝ ո՞վ Տէր , քեզի կու գամ , ոչ միայն
իմ մեղքերս , այլ յիմարութիւնս ճանշնալով քեզի կու
գամ : Քեզի կու գամ սրտանց ամէցած , և անկեղծ ու
խոնարհ հոգւով խոստովանելով թէ , Հիմարութիւն
ըրի , ու մեծապէս մեղանշեցի : Իմ . Ժ . 21 : Աս
բաները յիշելով խոռոված եմ , բայց դուն « իմ անիրա-
ւութիւններուս ներող եղիր , և իմ մեղքերս ու անօրէ-

նութիւններս՝ ալ մի՛ յիշեր՝ : Եբր . ը . 12 : Շնորհէ ինծի՛ ով Տէր , քեզի դարձնել ան զօրութիւններս ու կարողութիւններս , որոնք ապերախտութեամբ ու ամբարշտութեամբ օտարացուցած եմ քու ծառայութենէդ . և կ'աղաչեմ քեզի՛ ընդունէ քու խեղճ ապստամբ արարածդ , որ հիմա զգացած է քու իր վրայ ունեցած իրաւունքդ , և բոլոր աշխարհիս մէջ բանի մը չքանկար՝ քուկդ ըլլալու ցանկանալուն չափ :

Ով ամենօրնեալ Մատուած , հանդիսական կերպով մը կը կատարեմ աս անձնատուութիւնս : Ասէ՛ ով երկինք , և ականջ զիր՝ ով երկիր . « այսօր Տէրոջը խօսք կու տամ , որ անխկայ ինծի Մատուած ըլլայ՝ » , (Ի՛ Օղև . իղ . 17 ,) և խօսք կու տամ ու կը հրատարակեմ այսօր՝ թէ իր ուխտին որդիներէն և ժողովուրդէն մէկն եմ : Ասէ՛ ով երկինքին Մատուածը , և քու յիշատակի՞ գրքիդ մէջը գրէ՛ , (Մաղ . ց . 16 ,) որ ասկէ ետքը քուկդ եմ , բուրբովին քուկդ : Ոչ միայն իմ կարողութիւններէս կամ իմ ստացուածքէս մէկ քանին քեզի նուիրել , կամ թէ բոլոր կրցածս սահմանեալ ժամանակ մը քեզի տալ կ'ուզեմ . այլ կ'ուզեմ որ բոլորովին քուկդ ըլլամ : Այս օրունէ կ'ուզեմ որ՝ ան առջի տէրերս , որ իմ վրաս տիրեցին , (Եսայ . իղ . 13 ,) և ամէն մեղքերս ու ցանկութիւններս հանդիսաւոր կերպով մը ու բանամ , և քու անունովդ յախտեան պատերազմելու խրոխտամ դժոխքին զօրութիւններուն դէմ՝ որոնք անիրաւութեամբ տէրութիւն զբաւեցին իմ հոգւոյս վրայ , նաև ան ամէն ապականութիւններուն դէմ , որոնք իրենց մահարեք փորձութիւնները մոցուցին հոգւոյս մէջ : Նութեանս բոլոր կարգութիւնը , մտքիս բոլոր կարողութիւնները , և մարմնոյս բոլոր անդամները կը փափաքիմ որ քու առջև ներկայացնեմ այսօր , իբրև « կենդանի զոհ մը՝ սուրբ , Մատուծոյ հաճելի , որն որ՝ զխեմ թէ « իմ բանաւոր պաշտօնս է՝ » : Հոով . ժբ . 1 : Բեզի կը նուիրեմ բոլոր իմ աշխարհային ստացուածքներս . աշխարհիս վրայ մնացած ժամանակս կը փափաքիմ որ քու ծառայութեանդ մէջն անցընեմ , և կը խնդրեմ որ զիս կրթես ու ազդես ինծի , անանկ որ՝ իմ հոս բնակիրս թէ երկար ըլլայ թէ

կարճ , ամէն տարիս և ամիսս , ամէն օրս և ժամն ան կերպովք գործածեմ որ արդեամբ քու պատիւդ յառաջ տանի , և քու իմաստուն ու բարեշնորհ նախախնամութեան դիտաւորութիւններուդ ծառայէ : Այլ անձկանօք կ'աղօթեմ որ ինձի ինչ ազդեցութիւն որ տաս ուրիշներուն վրայ՝ կենաց բարձրագոյն աննշուօթիւններուն մէջ , կամ ինչ մասնաւոր յարգ որ տան ինձի ուրիշները , ինձի զօրութիւն ու քաջալերութիւն տաս քու փառքիդ համար յետին աստիճան աշխատելու՝ որոշելով թէ ոչ միայն ես ինքնս այսպէս ընեմ , այլ թէ բոլոր ուրիշները , որքան որ բանաւոր և պատշաճ կերպով կրնամ ազդել անոնց , « Տէրօջ ծառայութիւն ընեն » : Յե . իդ . 15 : Աս ընթացքով՝ ով ամէնօրնեալ Աստուած , կը փառաբիմ որ հաստատուն կերպով յարատեւեմ մինչև կենացս վերջը՝ անձկանօք աղօթելով , որ իմ մնացած ամէն մէկ օրս անցուցած օրերուս թերութիւնները ըցընէ և թիւրութիւնները շիտէ . և ես աստուածային շնորհօք կարող ըլլամ՝ ոչ միայն հաստատուն կենալ ան երջանիկ ճամբուն մէջ , այլ ամէն օր աւելի աշխոյժ ըլլալ անոր մէջ :

Ասև ոչ միայն ինչ որ եմ և ինչ որ ունիմ՝ քու ծառայութեանդ կը նուիրեմ , այլ յոյժ խոնարհութեամբ ինքզինքս և ինչ որ իմ կրնամ կոչել , բոլորը քեզի յանձնեմ և քու սուրբ և զերագոյն կամօրիդ կը ձգեմ : Ա՛յլ Տէր , բոլոր ունեցածներս ու բոլոր ուզածներս քու կառավարութեանդ և առաջնորդութեանդ կը թողում . և ամէն վայելչութիւնս ու ամէն շահս քու առջևդ կը դրնեմ , որ ուզածիդ պէս անօրինես անոնք : Ա՛յլ Տէր , ինչպէս որ դուն ազէկ կը համարիս , այնպէս յարատեւեմ կամ վերնան ինչ որ ինձի տուեր ես , այնպէս պարգևէ կամ ետ պահէ ինչ որ կը կարծեմ թէ ինձի պէտք է : Այլ թէպէտ չեմ համարձակիր ըսել թէ՛ բնաւ պիտի չտոժոտիմ , բայց կը յուսամ թէ կրնամ համարձակիլ ըսելու որ պիտի աշխատիմ՝ ոչ միայն Նոպանդիլ , այլև հաւանութիւն տալ . ոչ միայն կրել ինչ որ վտայից արնտեսութիւններով կ'ընես , այլ նաև հաւանիլ անոր և քեզ գովարանել անոր համար , գոհ սրախ որոշելով թէ՛ ինձի համար ինչ բան որ սահմանես , իմ կամքս մէկ ըլլայ

քուկինիդ հետ , և զիս ոչինչ համարիմ , իսկ քեզ ով
Մատուած՝ ան մեծ ու յախտենական Մեծնը , որուն խօսքը
ամէն բան որոշելու , և որուն կառավարութիւնը բոլոր
բանական արարածոց ուրախութիւնն ըլլալու է :

Ով Տէր , կ'աղաչեմ քեզի , զիս գործիքի մը պէս գոր-
ծածէ քու փառքիդ համար , և արժանի ըրէ զիս , որ ին-
ծի համար սահմանած բանդ կամ ընելով կամ կրելով ,
քեզի գովարանութիւն և իմ բնական աշխարհիս մէջն ալ
օգուտ մը բերեմ : Այս աս որունքն անդին թող հաճոյ
ըլլայ քեզի՝ զիս քու սեպհական ժողովուրդիդ հետ համ-
բեւ , որ « ալ ասկէ ետե ես օտար ու պանդուխտ չըլլամ ,
հապա սուրբերուն քաղաքակիցը , և Մատուոյ ընտանի-
քէն » : Ա՛գէ՛ . Բ . 19 : Ով երկնաւոր Աստուծոյ , ընդու-
նէ աս քու գիրկդ դարձող անտակ որդիւն : Օխ քու
սիրելի Որդւոյդ արեամբը լուս . անոր կատարեալ ար-
դարութիւնովը հաղիցոր . և սուրբ ըրէ զիս քու Ա-
ղայդ գորութիւնովը : Ա'աղաչեմ քեզի՝ ջնջէ իմ սրտիս
մէջէն մեղքին գորութիւնը : Օխ քու պատկերիդ պէս
ձևացուր , և Հիսուսի նմանութեանը դարձուր , որն որ
այսուհետե իմ ուսուցիչս ու իմ զոհս , իմ բարեխօսս ու
իմ Տէրս կը ճանչնամ : Ա'աղաչեմ քեզի , հաղորդէ
ինծի քու սրբացուցիչ՝ ուրախարար՝ և մոտիմարիչ Ա-
ղայդ ան ամէն աղղեցութիւնները՝ որոնց կարօտ եմ :
Այս « քու երեսիդ լոյսը իմ վրաս ծագէ » , որն որ « իմ
սրտիս ուրախութիւն » ու մեծ խնդութիւն պիտի տայ :
Ասղ՛ . Գ . 6 , 7 :

Ով Մատուած , իմ գործքերս այնպիսի կերպով մը տը-
նօրինէ՛ որ քու փառքդ ու իմ ճշմարիտ երջանկութիւնս
յստաջ տանին . և երբոր քու կամքդ ընեմ ընցընեմ աշ-
խարհիս վրայ , կանչէ զիս ասկէ որ ատեն և ինչ կերպով
որ կ'ուզես . միայն թէ չնորհէ որ իմ մեռնելու ատենս ,
և յախտենականութեան մտեցած ատենս՝ աս քեզի ըրած
ուխտերս յիշեմ , և իմ վերջին շունչս քու ծառայու-
թեանդ մէջ անցընեմ : Այս ով Տէր , երբոր հոգեվա-
րութեան ցաւերը իմ վրաս տեսնես , յիշէ աս ուխտս ալ ,
թէ եւ ան ատենը ես կարող չըլլամ յիշելու : Ով իմ
երկնաւոր Աստուծոյ , նայէ աս քու նուազեալ և մեռնելու

վրայ եզոյ որդւոյդ վրայ՝ զԹառատ աչքք • քու յախտե-
նական բազուկդ տարածէ զիս պահպանելու համար • Իմ
զատուող հողւոյս զօրութիւն ու փտահաւթիւն տուր , և
ընդունէ՛ զանիկայ քու յախտենական սիրոյդ համբոյրնե-
րովք : Ընդունէ՛ զանիկայ Յիսուսով ննջողներուն բնա-
կարանները՝ (Կ՝ ԹԻՄ • Գ՝ • 13 ,) անոնց հետ ան օրուանք
սպասելու , երբոր քու ուխտիդ ժողովուրդին բրած խոստ-
մունքներուդ վերջինը պիտի կատարուի անոնց փառաւոր
յարութեամբը , և երբոր առատօրէն պիտի շնորհուի ա-
նոնց ան յախտենական Թաղաւորութիւնը մտնելը , (Բ
ՊԻՄ • Կ՝ • 11 ,) որուն վրայով փտահացուցած ես զա-
նոնք ՔՈՒՄԻԼՍՏՈՎՆԻ , և որուն յուսովք հիմա ան ուխ-
տին մէջ կը մտնեմ , փափարելով որ ապրիմ ու մեռնիմ
ան յոյսովք :

Եւ երբոր աս կերպով մեռեալներուն հետ խառնուիմ ,
և աս մահահանոցու վիճակին բոլոր մասնակցութիւններէն
զատուիմ , եթէ պատահի որ աս ահաւոր յիշատակը իմ
կենդանի մնացող բարեկամներուս ձեռքն իյնայ , իցէ՛ թէ
անոնց մտացը վրայ ազցու տպաւորութիւններ ընելու մի-
ջոյ ըլլայ : Իցէ՛ թէ կարգան անիկայ , ոչ թէ իբրև իմ
խօսքերս , այլ որպէս թէ բուն իրենց խօսքերը • և սորվին
իմ Տէր Ետուծմէս վախճալ , և ինծի հետ իրենց փտա-
հաւթիւնը անոր թիւին շուրջն տակը դնեն աս աշխարհիս
մէջ և յախտանս : Եւ իցէ՛ թէ սորվին նաև ինծի հետ
յարդութիւն մատուցանել ան շնորհացը , որ մեր սրտերը
հակամիտ կ'ընէ ան ուխտին մէջ մտնելու , և կը զիջանի
մեզ ընդունիլ անոր մէջ՝ երբոր այսպէս հակամիտինք , և
ինծի ու փրկուածներուն համայն ազգին հետ ան փառքը՝
պատիւը՝ և զօվարանութիւնը մատուցանել շօր՝ Ար-
դւոյ՝ և շօղւոյն Արքոյ , որ իրաւամբ արժանի է աստուա-
ծութեան իւրաքանչիւր անձին՝ իր աս երեւելի դործքին մէջ
ունեցած մասին համար • Եմն :

Շառեթոս-բիւն : Ընձնանուիրութեան աս ձևը երկար
համարողներուն համար , ինչպէս կարելի է շատերը պիտի
համարին , յարգի բարեկամի մը ինտիմ բովոք անոր մէկ
համառօտութիւնը դրի վարը , որ անպատճառ ստորագ-

րելէն առաջ ուշադրութեամբ կշռելու է ամէն մէկ պարբերութեան վերջը . և եթէ փոխել հարկ եղած բառ մը կամ խօսք մը կայ, անիկայ փոխելու է, որ սրտանոց հաւանութիւն տրուի անոնց ամենուն :

Ո՛վ յաւիտենական և ամէնօրջնեալ Մատուած, կը փափարիմ քու առջևդ ներկայանալու հոգւոյ ամենախորին խոնարհութեամբ և նուաստութեամբ՝ գիտնալով թէ այսպիսի մեղալից որդ մը որքան անարժան է երկնից սուրբ Ահհափառութեանը, թաղաւորաց Ուազաւորին ու տէրերուն Տէրոջը առջևը երկնալու, և մանաւանդ այսպիսի առիթով մը, որ է անյապաղ ինքզինքս քեզի նուիրել : Ինչո՞ք աս խորհուրդը բոլորովին քուկդ է : Քու անհուն խոնարհութիւնդ առաջարկեց անիկայ քու Որդւոյդ ձեռքովը, և քու շնորհքդ հակամիտ բրաւ իմ սիրտս՝ անիկայ ընդունելու :

Այս ան որոյ քու առջևդ կու գամ խոստովանելով թէ մեծ մեղաւոր մըն եմ ես, կուրծքս ձեծելով և խոնարհ մտքաւորին հետ բսելով՝ « Մատուած՝ որդրմէ՛ ինձի մեղաւորիս » : Քու Որդւոյդ անուամբը հրաւիրեալ, և բոլորովին անոր կատարեալ արդարութեանը ապաւինած քու առջևդ կու գամ և կ'աղաչեմ՝ որ անոր արժանաւորութեանը համար ներես իմ անօրէնութիւնս, և այլ ևս չլիջես իմ մեղքերս : Ա'աղաչեմ քեզի՛ ընդունէ՛ աս քու ապստամբ որդիդ . որ հիմա ճանչցած է քու իր վրան ունեցած իրաւունքդ, և քու կինդ բլլալէն՝ ի զատ ուրիշ բանի մը այնչափ չցանկար :

Մայր խիստ հանդիսական կերպով ինքզինքս քեզի կը նուիրեմ : Ա'ուրանամ և կը մերթեմ ան առջի տէրերս, որ իմ վրաս իշխանութիւն ստացած էին, և ամէն ինչ որ եմ ու ամէն ինչ որ ունիմ, ամէնը քեզի կը նուիրեմ . մտացս կարողութիւնները՝ մարմնոյս անդամները՝ աշխարհային ստացուածքներս՝ ժամանակս և ուրիշներուն վրայ ունեցած ազդեցութիւնս, ամէնը բոլորովին քու փառքիդ համար գործածուելու, և հաստատուն որդմամբ քու պատուիրաններուդ նազանդութեամբ գործածելու, որքան որ զիս կենդանի պահես . եռանդուն տենչ մը և

խոնարհ որոշում՝ մը ունենալով քու փառքդ՝ յառաջ տանելու յաւխտենականութեան անվախճան դարերուն մէջ . ինքզինքս միշտ մտադիր վիճակի մը մէջ պահելով քու կամքիդ յայտնութիւնները դիտելու , և պատրաստ ըլլալով նախանձաւորութեամբ և խնդութեամբ յառաջ դիմել անիկայ կատարելու :

Վաւ քու առաջնորդութեանդ կը յանձնեմ՝ ինքզինքս՝ ինչ որ եմ՝ և ինչ որ ունիմ , որ այնպիսի կերպով մը կառավարես զիս , որն որ դուն քու անհուն իմաստութիւնովդ յարմար կը դատես քու փառքիդ խորհուրդները յառաջ տանելու : Վեզի կը ձգեմ՝ բոլոր բաներուն կառավարութիւնը , և անյապաղ կ'ըսեմ թէ՛ « Չէ՛ թէ իմ կամքս՝ հապա քու կը թող ըլլայ » , Զազանդ սրտի ու բախանալով քու անսահման կառավարութեանդ վրայ , որ պէտք է ըլլայ բոլոր բանաւոր արարածոց ու բախութիւնը :

Ով Տէր , կ'աղաչեմ քեզի , զիս քու ծառայութեանդ գործիքի մը պէս գործածէ՛ . և զիս քու սեպհական ժողովուրդիդ թուոյն հետ խառնէ : Վու սիրելի Որդւոյդ արեամբը լուս զիս . և անոր արդարութիւնովը հազվեցուր զիս : Կնոր Հոգւովը զիս սրբէ՛ , և անոր կերպարանքին պէս նորոգէ՛ զիս էւել էւելօք : Վու սրբացուցիչ՝ ուրախարար՝ և մխիթարիչ Հոգւոյդ բոլոր կարօտ եղած ազգեցութիւններս՝ անոր միջոցովը պարզեէ՛ ինծի : Եւ թող իմ կեանքս ան ազգեցութիւններովն և քու շնորհալից դեմքիդ լուսովը անցնի , և դուն իմ Հայրս և իմ Եւտուածս ըլլաս :

Եւ երբոր մահուան ան ահաւոր ժամը հասնի , շնորհէ՛ որ յիշեմ քու ՈՒՒՏ՝ , « որ ամէն բանի մէջ պատրաստ ու հաստատ է . քանզի իմ բոլոր փրկութիւնս ու իմ բոլոր բաղձանքս ան է » , (Ի թմադ . իգ . 5 ,) թէ և ամէն վայելչութիւն և ամէն յոյս կորնչի . ով Տէր , դուն ալ յիշէ՛ անիկայ : Ով իմ երկնաւոր Հայրս , գթառատ աչքք նայէ՛ աս նուազեալ և շնչապառ որդւոյդ վրայ : Ընդունէ՛ զիս քու յաւխտենական բազուկներուդ մէջ : Զօրութիւն և վստահութիւն տուր իմ գատուող հոգւոյս , և Վրիստոսով ննջողներուն բնակարանները ընդունէ՛ զանիկայ՝ անդորրութեամբ և ուրախութեամբ սպասելու քու

Ժողովուրդիդ ըրած ան մեծ խոստմանդ կատարմանը, որ է ան փառաւոր յարութիւնը, և քու երկնային ներկայութեանդ մէջ անոնց վայելելիք յախանախան երջանկութիւնը:

Դու իմ մահուանէս ետքը՝ եթէ աս իմ քեզի հետ ըրած ահաւոր ուխտիս յիշատակագիրը ողջ մնացող բարեկամներուս մէկուն ձեռքն անցնի, շնորհէ՛ որ ինքն ալ աս ուխտը ընէ. և քու շնորհօքդ ընդունէ՛ անիկայ՝ ԳՈՒ ՈՒՍԻՏԻՒՐՈՐ օրհնութիւններուն մասնակից ըլլալու, իր մեծ Միջնորդին՝ Յիսուսի ձեռօքը. և անոր ու քեզի՛ ով Հայր, և Սրբոյ Հոգւոյդ յախանախան գովարանութիւններ թող ընծայեն ան բխբաւոր հոգիները՝ որոնք քեզմով փրկուած են, և ան ամէն երկնային հոգիները՝ որոնց պաշտօնին ու երանութեանը մասնակցելու պիտի կանչես զանոնք. Եմէն:

ԳՂՈՒԽ ԺԸ

Տէրոջ ընթերիս հաղորդութիւնը :

1. Ար յուսամ թէ սա գլուխը քեզ ամենարացարձակ հաճութիւնով Մատուծոյ սեպհական ժողովուրդէն մէկը եղած պիտի գտնէ, անկեղծարար և սրտանց անոր ծառայութեանը նուիրեալ, և իմ սրտանց աղօթքս սա է որ երկրիս վրայ ըրած սա ուխտերդ՝ երկնքի մէջ հաստատուին : Բայց որպէս զի սուելի կրթութիւն ու շինութիւն առնու, ներքէ՛ քննի որ յիշեցընեմ՝ քեզի թէ՛ Տէր Յիսուս Վրիստոսը մասնաւոր կերպ մը սահմանեց իրեն յարգութիւն տալու, իր մահուան յանձնատու եղող սէրը յիշատակելով, որն որ թէպէտ ուրիշ վայելուչ կերպով մը ընելն ալ շարդիւնը, բայց ամենեին սա մէկդի ձգելու կամ զանց ընելու չէ՛ տեղը ուրիշ մարդկային կերպեր նարելով, որքան խոհեմ ու պատշաճ ալ երեւան անոնք մեր աչքերուն :

2. Մեր Տէրը իմաստութեամբ սահմանեց որ ընկերակցութեան օգուաները կրօնքի մէջ մտնեն, և ինչպէս որ իրեն հրամանովք քրիստոնեայք մէկտեղ կը ժողովուին ընկերական պաշտամանց ուրիշ զործքերուն համար, անանկ ալ հաճեցաւ ընկերական սահմանադրութիւն մը հաստատել, որուն մէջ անոնց բոլոր ժողովք իր սեղանին դալու, և հոն նոյն հացէն ուտելու ու նոյն գաւաթէն խմելու է : Եւ ասիկայ ընելու են իրքն նշան իրենց սիրալիր յիշատակութեանը անոր մահուան յանձնատու եղող սիրոյն, ինքզինքնին հանդիսական կերպով մը Մատուծոյ նուիրելուն, և դէպ 'ի մէկզմէկ ու դէպ 'ի ամեն քրիստոնեաներուն ունեցած անկեղծ սերբնուն :

3. Թէ ճշմարտիւ անոնք են Տէրոջ ընթերիքին մեծ նպատակները, հիմա երկարօրէն պիտի չփաստարանեմ : Թէ որ Պօղոս առաքելոյն Արնթացոյ առաջին թղթոյն տասներորդ և մեասասներորդ գլխուն մէջ գրածները կար-

դաս միայն , աս բանին վրայով լիովին պիտի համոզուիս : Ան յայտնապէս կ'ըսէ մեզի թէ՛ մեր Տէրը հրաման բրտան հացէն ուտել , և ան դաւաթէն խմել զինքը յիշելու համար , (Խ Աորն՛ն . ԺԿ . 24 , 25 ,) կամ զինքը յիշատակելու համար . անանկ որ՛ քանի անգամ՝ որ աս սահմանադրութիւնը կը կատարենք , “ Տէրոջը մահը կը պատմենք ” , որն որ կատարելու ենք “ մինչև որ ինքը գայ ” : Խ Աորն՛ն . ԺԿ . 26 : Եւ մասնաւորապէս բնութեւ թէ՛ “ Ես դաւաթը ‘ Կոր Ուխտ է իր արխնովը ’ . այսինքն՝ ան ուխտին մէկ կնիքն է , որ իր արխնովը հաստատուեցաւ : Երդ յայտնի է որ աս պատճառաւ ան ուխտը մտքերնուս առջևը ունենալով մտնելու ենք անոր , անոր օրհնութիւններուն ցանկալով , և աստուածային շնորհօք անոր պատուէրներուն հաւանիլ որոշելով : Այսն որոյ համառօտիւ՝ ինչպէս որ առաքեալն ալ կը զրուցէ , աս խորհուրդը Վրիստոսի մարմնոյն ու արեանը հաղորդութիւնն է , (Խ Աորն՛ն . Ժ . 16 ,) և անոր սեղանին ու դաւաթին մասնակից ըլլալով , Վրիստոսի հետ կ'ընկերանանք , և ինքզինքնիս անոր կը յարենք իբրև իր ժողովուրդը . ինչպէս որ Հրէայք՝ իրենց զոհերը ուտելով , Եհովային հետ կը հաղորդակցէին , ու ինքզինքնին անոր կը յարէին : ‘ Կակ կը յիշեցնէ անոնց՝ որ թէպէտ շատուոր են , բայց ‘ մէկ հաց՝ մէկ մարմին են , վասն զի ամեն ալ ան մէկ հացէն կը վայելն ’ , (Խ Աորն՛ն . Ժ . 17 ,) ու “ մէկ Հողիով մէկ մարմին ըլլալու մկրտուած են ” . Խ Աորն՛ն . ԺԸ . 13 . այսինքն՝ մէկտեղ կը ժողովին իբրև մէկ բնտանիք և կը միանան ան մէկ արեանը յիշատակութեանը մէջ , որ իրենց ամենուն փրկանքն է , և Տէր Յիսուսի յիշատակութեանը , որ իրենց ամենուն գլուխն է : Երդ՝ յայտ է թէ աս ամէն նկենարկութիւնները հաւասարապէս կը յարմարին ամէն յետագայ դարու քրիստոնէից : Այսն որոյ ներե՛ ինծի՛ որ մեր Եստուածային Արդարապետին իշխանութիւնովը քեզ յորդորեմ՝ աս պատուէրը պահելու :

4 . Եւ ներե՛ որ յառաջ բերեմ՝ զանիկայ դարձեալ աս պատճառով ալ՝ որ շատ ներգործութիւն ունի քու ամենաճմարիտ օգուտդ յառաջ տանելու : Եստուած-

պաշտու թեան կենաց մեջ ճամբաց կ'ելլես , և ես երկարօրէն քեզի խնացուցի ան ընդդիմութիւնը , որուն ակնկալելու ես պատահիլ աս ճամբուն մեջ : Քրիստոսի սերը քեզ կենդանացնելու է անոր ամենուն յաղթելու : Ուրեմն անոր մէկ կենդանի տպաւորութիւնը հետզ կրելէն աւելի ի՞նչ բան ցանկալի կրնայ ըլլալ . և հոն նկարագրուած մահուանը վրայ խորհրդածելէն աւելի ի՞նչ բան կրնայ աս տպաւորութիւնը զարթուցանել մտացոյ մեջ : Ո՞վ կրնայ նայիլ ան բեկեալ հացին և հեղեալ զինիին , և չմտածել թէ մեր ամենորջեալ Հիսուսի մարմինն ալ այսպէս կտոր կտոր եղաւ իր շարշարաններովը , և իր սուրբ արիւնը դետինը թափուեցաւ ջուրի պէս : Ո՞վ կրնայ խորհիլ Վատուծոյ Արդւոյն սրտակտուր տազնապնտուն վրայ իբրև մեր ազատութեանն ու փրկութեանը զինը , առանց իր հոգին դութով հալելու , և երախտագէտ սիրով բոցափառելու : Եւետարանական ուխտին օրջութիւններուն վրայ ի՞նչ մէկ բարձր տեսութիւն մը կու տայ ան մեզի , երբոր ան ուխտին վրայ կրնայինք իբրև Վատուծոյ միածին Արդւոյն արեամբը հաստատուած : Աւերբոր մեր Վատուծոյն կը մտնենանք իբրև մեր երկնաւոր Հօրը , և ինքզինքնիս անոր ծառայութեանը կը նուիրենք այնպիսի հանդիսական կերպով մը , ի՞նչ սքանչելի ազդեցութիւն մը ունի աս մեզ համոզելու թէ մենք մերը չենք , այսպիսի գնով մը ծախու առնուած ըլլալովնիս : Ինչպիսիք . Գ . 19 , 20 : Ա՛րչափ կ'օգնէ մեզ պաշտպանելու ամէն փորձութեան դէմ , որոնք կը տօխեն մեզ այնպիսի մեղքեր գործելու՝ որ անանկ հանդիսական կերպով ուրացած ենք , և որչափ կ'օգնէ մեր հաւատարմութիւնը հաստատելու անոր վրայ՝ որուն մեր հոգիները կապած ենք երդումով : Աւ որքան պատշաճ է որ սիրտերնիս մեկտեղ կապուին փոխադարձ սիրով , (Առդ . Ի . 29) երբոր ինքզինքնիս մէկ կը տեսնենք Քրիստոսով . Իսող . Գ . 28 . անոր արիւնը ընկերութեան կապը կ'ըլլայ , և մեզ հոգւով կը միաւորէ , ոչ միայն մեկզմեկու , այլ « ան ամենուն հետ՝ որ ամէն տեղ մեր Տէր Հիսուս Քրիստոսի անունը կը կանչեն , իրենցը ու մերը » , (Ինչպիսիք . Ին . 2 ,) և յառաջագոյն կը նշմարենք հաճելի յու-

սով ան օրհնեալ օրը , որ Կտեն ժողովը կատարեալ պիտի ըլլայ , և մենք ամէնքս “ յախտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք ” : *Կ՝ ԹԻՒ՝ Գ՝ 16* : Արամնի թէ աս դադափարները մեզի մեր անձերը ուրանալ տային , որ մեր խաչերը վերցընենք , ու մեր խաչեալ Աշարդապետին ետեւն երթանք : *Ստաբլ . ԺԳ . 24* : Արամնի թէ մեզի մեր յետին ճիգը բանեցընել տային՝ աղօթքով և ամէն ուրիշ յարմար ջանքերովնս անոր հետեողներուն ու անոր բարեկամներուն օղնել ու կարեկից ըլլալու . անոնց՝ որ ինք իր արեամբը զնեց , և պիտի ըլլան իրեն ու մեր ընկերակիցները երջանիկ անմահութեան փառքերուն մէջ :

5 . Ասե մեր օրհնեալ Փրկչին յայտնի՝ սահմանադրութիւնն ու պատուէրն է՝ որ այսպիսի ընկերութեանց անդամները մեկզմէկու հոգևոր բարեկաւութեանը ցանկան , և վերջապէս իր եկեղեցիները մարուր ու սուրբ ըլլան , “ ետ քաշուին ամէն եղբօրմէ՝ որ անկարգութեամբ կը վարուի ” , (*Ը՝ ԹԻՒ՝ Գ՝ 6* ,) և “ դիտեն անանկները որ , իրենց սորված վարդապետութիւններէն դուրս դայթակղութիւններ կ'ընեն , և անոնցմէ ետ կենան ” , (*Հ՝ Գ՝ 17* ,) և թէ որ մէկը չձազանդիր Քրիստոսի խօսքին իր առաքեալներովը , անոնք անոր հետը չխառնուին , որ ամէնայ , (*Ը՝ ԹԻՒ՝ Գ՝ 14* ,) և անանկներուն հետ հաց ալ չուտեն , որոնք անկանոն են իրենց վարույքը մէջ , այլ ընդհակառակն , իրենց մէջէն վերցընեն անանկ չար անձինքները : *Կ՝ Ստաբլ . Ե . 11-13* : Այսն որոյ յայտնի է թէ այսպիսի ընկերութիւններ հաստատուիլը մեծապէս քրիստոնէութեան փառքին համար է , և անոր ճշմարիտ հետեողներուն օգտին համար : Այլ հետեապէս , մեր Տէրոջը Գաղանդութիւնը , և մեր ու մեր եղբարքը օգուտը կը պահանջէ , որ անոնք՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը անկեղծութեամբ կը սիրեն , անոնց մէջ մասնելու և անոնց հետ ժողովուելու են անոր սեղանին հաղորդութեանը աս հանդիսական և յատուկ արարողութեանը մէջ :

6 . Այսն որոյ կ'աղաչեմ՝ քեզի , և եթէ կրնամ համարձակիլ անոր անունովն ու անոր իշխանութիւնովը ըսել , կը պարտաւորեմ՝ քու խղճմանդ որ մեր Տէրոջը մահուան ատենի աս պատուէրը ոչինչը չհամարուի քու քովս . այլ

եթէ ճշմարտապէս կը սիրես անիկայ, ասիկայ պահես՝ ինչպէս ուրիշ պատուէրներն ալ : Վիտեմ որ կարելի է թէ առարկութիւններ յառաջ բերելու պատրաստուիս : Աս խորհուրդին մասնակից ըլլալու համար գլխաւոր հարցընելիք բանը քու արժանի ըլլալդ է . և աս նկատմամբ արդէն խօսուածներն ալ մէկտեղ առնելով կարծեմ՝ աս խնդիրը դիւրաւ պիտի լուծուի : Արքան որ գիտես քու սիրտդ՝ անկեղծութեամբ ինքզինքդ Աստուծոյ յանձնեցի՞ր Վրիստոսով, ինչպէս որ խրատ տուի քեզի ընել նախընթաց գլուխին մէջ : Աթէ ըրիր, թէ հոն իմ ըսած մասնաւոր կերպովս ըլլայ՝ և թէ ոչ, ստուգիւ ան ուխտին ձեռք գարկած ես, վասն որոյ ինքզինքդ Աստուծոյ յանձնելու ես՝ բոլոր իր պատուէրներուն նազանդելով : Առջկայ ու չկրնար ըլլալ այնպիսի հայեցողութիւն մը ան սահմանադրութեանը վրայով, որով աւելի առարկութիւն մը գտնես անոր դէմ : Աթէ կը փափայրիս Վրիստոսի մահը յիշել, եթէ կը փափայրիս ինքզինքդ անոր ձեռքը Աստուծոյ նուիրելոյ նորոգել, եթէ կ'ուզես անոր ժողովուրդին համբանքին մէջ անցնիլ, եթէ կ'ուզես անոնք սիրել և քու կարողութեանդ համեմատ անոնց աղէկութիւն ընել, և ընդհանրապէս՝ եթէ կ'ուզես ամենին թող չտալ ինքզինքիդ մէկ մեղք մը գործել կամ մէկ պարտաւորութիւն մը զանց ընել, ուրեմն վստահութեամբ պիտի համարձակիմ ըսել թէ՛ ոչ միայն ընդունելութիւն պիտի գտնես ան խորհուրդին մերձեւալու, այլ թէ անիկայ քեզի պէս եղողներուն համար սահմանադրուեցաւ :

7 • Աւրիշ առարկութիւններու վրայով քանի մը խօսքեր բաւական են պատասխանի տեղ : Արծական սկըզբունքին քու հոգւոյդ մէջ տկար ըլլալը, թէ որ իրօք տընկուած է հոգւոյդ մէջ, անիկայ զօրացընելու համար այսպիսի կերպ մը վնասուելուդ դէմ ամենին փաստ մը չըլլալէն 'ի դատ, յաւէտ զօրաւոր կերպով մը անոր հարկաւորութիւնը կը ցուցընէ : Աս վեմ գործքին զանցառութիւնը, որ կ'ընեն այսքան բազմութիւ անձինք՝ որոնք ինքզինքնին քրիստոնէայ կը կոչեն, յաւէտ քու նախանձաւորութիւնդ աւելցընելու է աս մասին՝ այսքան արհամարհուած ու զբրկուած սահմանադրութեան մը վրայ : Առ եթէ կը վախ-

նաս որ քու յանցանքդ աւելի ծանր պիտի ըլլայ՝ վերջը ուրացու թեան մէջ իյնալով, առ վախերուդ համար կ'ըսեն՝ թէ՛ մի ներքեր առանկ խորհուրդ մտացդ մէջ։ Աստուածային օրհնութեամբ ասիկայ գորաւոր դարման մը կրնայ ըլլալ վախցած վտանգիդ դէմ․ և ստոյգ է որ աս ներկայ վիճակիդ (ի՞մ ըրած են թաղրութեանս համեմատ) դարու համար դիտնալ ու զգալ պէտք եղած բաները գիտնալէն ու զգալէն ետքը, ալ տեղի չմնար ետ դառնալու վրայ խորհելու, հարկ չմնար սա խեղճ յոյսին ցանկալու որ դոնէ կորուսեալներուն ընդհանրութենէն քիչ թշուառ ըլլաս դուն։ Այսան որոյ քու խորհուրդդ աս ըլլալու է թէ վերկութիւնդ այնքան ապահով ու այնքան փառաւոր ընես, որ քան որ կարելի է․ և չեմ գիտեր մեր օրհնալ Վրիշին մէկ ուրիշ սահմանադրութիւնը որ աւելի մխիթարական հայեցուած մը կրնայ ունենալ ան երջանիկ վախճանին վրայ, քան թէ աս՝ որ հիմա կը ջատագովեմ քեզի։

8․ Մեկ բան մը դոնէ պիտի պնդիւ ջատագովեմ, և չեմ գիտեր թէ ի՞նչ համարձակութիւնով կրնայ մէկը ուրանալ։ Ասել կ'ուզեմ թէ՛ պէտք է որ սրտի մտօք խորհրդածութիւն ընես աս նիւթին վրայ․ պէտք է որ մանքակրկիտ կերպով քննես՝ թէ արդեօք խղճմանսկիզմէջ պատճառ ունի՞ս հաւատալու՝ թէ Աստուծոյ կամքն է որ հիմա մտնենաս ան խորհուրդին, թէ չէ․ և թէ պէտք է որ շարունակես խորհրդածութիւններդ, քննութիւններդ, և աղօթքդ, մինչև որ բաւական քաջալերութիւն ստանաս մտննալու, թէ որ աս քաջալերութիւնը մինչև հիմա չունէիր։ Այսան զի ասիկայ աղէկ գիտցիր թէ ան վիճակը՝ որով բոլորովին անցարմար ետ աս խորհուրդին մտննալու, անանկ վիճակ մըն է՝ որուն մէջ մահուան ու երկիրքի համար պէտք եղած պատրաստութիւններէն զուրկ ես․ և սկսող համար, թէ որ չես ուզեր թող տալ ինքզինքդ կորստեան եղերքը քնանալու, պէտք չէ որ անոր մէջ կենաս մինչև սնդգամ մէկ օր մը։

Եղև՛ արեւելեան Ռուսիոյ համար , որ անխնայ ինքազայ
Տէրովը սեղանին հօրինաւ , բայց ան ահաւոր խորհուր-
դին հաղորդուելու իրաւունք ստանալուն վրայով Ռուսի-
ականի արարախոյս ստեղծ :

Ա՛յլ ամենօրնեալ Տէր , երկրպագութիւն կը մատու-
ցանեմ քեզի՛ քու եկեղեցիիդ սրբութեան ու սիրոյ մէջ
չինութիւն աննկուն համար հաստատած շնորհակց
սահմանադրութիւններուդ համար : Եւ շնորհակալ եմ
քեզի՛ որ քու ծառաներուդ պատուիրեցիր եկեղեցի կազ-
մուիլ . և երկրպագութիւն կը մատուցանեմ իմ շնորհա-
տու վրեջիս , որ իբր թէ մահուան շունչով իր սուրբ և
ահաւոր Վնթրիքը սահմանեց , յիշատակ ըլլալու ամեն
դարու մէջ իր մինչև մահուան յանձնառու եղող սիրոյն ,
և մէկ կապ մը ըլլալու ան միութեանը , որն որ իր զերա-
զոյն կամին է թէ իր ժողովուրդը պահէ : Ա՛յլ Տէր , կը
յուսամ թէ դուն վկայ ես ան անկեղծութեանը՝ որով կը
փափարիմ ինքզինքս քեզի նուիրել . և թէ կրնամ վկայ
կանչել քեզ որ՝ եթէ հիմա կը տարակուսիմ աս մասնա-
ւոր կերպովը անիկայ կատարելու , պատճառը ան չէ որ ես
քու պատուիրանքներէդ մէկը կուտրել , կամ քու շնորհք-
ներդ բանի տեղ չդնել կ'ուզեմ : Այստա՛հ եմ որ զիտես
թէ իմ աս յայտարարման միայն իմ պարտաւորութեանս
վրայ վստահ չըլլալէս , և սուրբ բաները՝ անոնց անարժա-
նութեամբ մտնելով՝ պղծելու երկիւղէս յառաջ կու-
գայ : Բայց՝ ո՛վ Տէր , անտարակոյս՝ եթէ ինձի ակնա-
ծութիւն մը տուած ես քու պատուիրանքիդ վրայ , և մէկ
փափար մը քեզի հետ հաղորդուելու , և մէկ յօժարու-
թիւն մը ինքզինքս բուրբովին քու ծառայութեանդ տալու ,
անիկայ մէկ բարի նշան մը պիտի համարիմ՝ թէ կ'ուզես
զիս ընդունիլ , և թէ բուրբովին անյարմար չեմ ան սահ-
մանադրութեանը որն որ մեծապէս կը պատուեմ , և ու-
րուն յոյժ կը բաղձամ : Այսան որոյ՝ ո՛վ Տէր , պատր իմ
խոնարհ խնդրուածքս աս կ'ընեմ քեզի՛ որ քու շնորհօրդ
հաճիս զիս իմ պարտաւորութեանցս մէջ կրթել , և ան
ճամբան ինձի սորվեցրնել՝ որուն մէջ քալելու եմ : « Ա՛յլ
Տէր՝ զիս փորձէ ու քննէ . փորձէ իմ երիկամունքներս ու

սիրտս՝ : Սաղմ . ինչ . 2 : Ասոյ անանկ մեկ զաղտնի մեղք մը , որն որ կը սիրեմ՝ ու կը դործեմ : Ասոյ անանկ մեկ պատուէր մը , որն որ ունակարար կոտորելու թող տուած եմ ինքզինքս : Աը յուսամ թէ կրնամ բողբոջել քեզի իբրև վկայ՝ թէ չկայ : Արեմն իմ հոգւոյս անիրաւութիւն չընեմ՝ առանց պատճառի քու սուրբ սեղանէդ հետու կենալով , որ մեղք է : Իայց կ'աղաչեմ քեզի ով Տէր , շնորհէ՛ ինձի որ քու խօսքդ՝ քու նախախնամութիւնդ՝ և քու Հոգիդ այնպէս գործակից ըլլան՝ որ իմ ճամբաս ուղիդ ընեն իմ առջև : Մատթ . ԺԵ . 19 : Զբուէ՛ իմ մնացեալ տարակոյսներս , եթէ կը տեսնես որ անհիմն են անոնք : Վեղի հաստատուն հաւատքով և աւելի եռանդուն սիրով լեցուր զիս . և քու իրաւունքդ անանկ ազգէ իմ սրտիս՝ որ կարող չըլլամ այլ ևս ուշանալ քու սեղանիդ մտանալու , որն որ՝ եթէ ճշմարտիւ քու ծառայեմ , թէ պարտքս և թէ արտօնութիւնս համարուելու է : Միանգամայն շնորհէ՛ որ իմ խորհուրդներէս շատ չհեռանայ . այլ թէ ամենայն փութով նայիմ որ , եթէ տարակոյսի առիթ մը մնայ , մերժեմ անիկայ աւելի եռանդուն ճիգ ընելով՝ քու սրբութեանդ աչքերուն բոլոր անհաճոյ եղած բաներէն ետ կենալու և իմ պարտաւորութիւնս կատարելապէս լեցընելու : Իսաւեալ Քրիստոսի վրայ այնպիսի բնուել զաղափարներ ունենամ մտքիս մէջ , և իր մահու շափ սիրոյն վրայ այնպիսի զօրաւոր զգացում մը ունենամ հոգւոյս մէջ , որ իմ փորձառութիւնս բոլորովին փարատէ ամէն տարակոյս , թէ ևս անոնցմէ մէկն եմ՝ որոնց համար սահմանեց աս սիրոյ ինձոյբը :

Այ մինչև անգամ հիմա՝ հոգւով և սիրով քու եկեղեցւոյդ յարած , թէպէտ ոչ թէ ուզածիս պէս այնքան բացարձակ և բնտանի կապով մը , սրտանց աղօթք կ'ընեմ որ քու օրհնութիւնդ բոլոր քու ժողովուրդիդ վրայ ընես , որ հաճիս հոգուել քու ժառանգութիւնդ , ու յախտեան բարձրացընել զանոնք : Սաղմ . ինչ . 9 : Թող ամէն քրիստոնէական եկեղեցի ւաճի՝ զիտութեան՝ սիրոյ՝ և սրբութեան մէջ : “ Թող քու քահանաներդ փրկութիւն հազնին , ու քու սուրբերդ ուրախութեամբ ջնձան ” : Սաղմ . ճը . 16 : Այ թող ամէն տեղ փառաւոր յաւե-

լու՛մ՝ ըլլայ քու եկեղեցիներուդ անոնցմէ, որ պիտի թռչին անոնց՝ “ամպի պէս, ու դէպ ՚ի իրենց վանդակը թռչող աղանձիներու պէս” : Առայ . կ . 8 : Ա՛լ Տէր, թող քու սեղանդ հիւրերով ընցուի՛, (Առարլ . իբ . 10,) և թող ան ամէնը որ քու արդարութիւնդ կ'ուզեն ըսեն թէ, թող Աստուած մեծանայ, որ իր ծառաներուն խաղաղութիւնը կ'ուզէ : Առդ . լէ . 27 : Այլ անձկանօք կ'աղաչե՛մ որ ան ամէնը՝ որ Քրիստոս Յիսուս Տէրը ընդունած ըլլալ կը դաւանին, արժանաւոր կերպով մեծ փոյթ ունենան անով քալելու, (Աող . բ . 6,) և ամէնքս ալ պատրաստ ըլլանք անդրանիկներուն ան ընդհանուր ժողովքին, և միաբանինք ան ազնիւ և աւելի անմիջական երկրպագութեանը մէջ, ուր որ աս ամէն դադափարներն ու շուքերը մէկդի պիտի մնան, և ստանկ յիշատակներ՝ ալ հարկաւոր պիտի չըլլան, այլ կենդանի և ներկայ փրկիչը անոնց յաւիտենական խնդութիւնը պիտի ըլլայ, որոնք հոս հեռուէն կ'ուրախանան անոր մահը յիշելով . Ամէն :

ԳԼՈՒԽ ԺԹ

Վասն ի իւրեւ իսանսոր իրաւաներ Վարսաձոյ հիւր շարս-
նաւ հաղորդութեան սանկուլու , իմ անոր երկի-ղէն Տեղը
իւնուլու վրայ յաւիտեանս :

1 . Ար յուսամ թէ խորին խորհրդածուիթեամբ՝ անձ-
նարննութեամբ՝ և աղօթիւք ինրզինքը Վատուծոյ նուիրեց
ընթերցողը . և աս է հիմա իր հողը որ հարցընէ թէ իր
վրայ եղած Վատուծոյ ուխտերուն համեմատ ինչպէս կրնայ
գործել : Արդ՝ որպէս զի աւելի օղնութիւն աննէ աս մա-
սին , քրիստոնէական բնութեան ու որպիսութեան վրայ ար-
դէն տուած ընդհանուր տեսութենէս զատ , քանի մը մաս-
նաւոր խրատներ ալ պիտի տամ ան անձնանուէր՝ հողերը՝
և երկնային բնութիւնը ունենալու վրայով , որն որ Աուրբ
Պրոց լեզուովը “Վե՛ն օր Վատուծոյ հետ քալել” , կամ
“ամէն օր անոր վախին մէջ ըլլալ” կ’ըսուի : Վասն ի .
իդ . 17 : Այլ չեմ գիտեր թէ ասոր վրայ իմ ձեացուցած
գաղափարս՝ քանի մը տարի առաջ երեւելի աստուածա-
պաշտ երիտասարդի մը դրած նամակիս մէջ ցուցուցածէս
աւելի պայծառ և որոշ կերպով մը ինչպէս կրնամ արտա-
յայտել , որուն հետ ան ատենը մտերիմ բարեկամութիւն
մը ունէի , որ ան նամակը ընդունելէն քանի մը ամիս ետքը
մեռաւ , և մեծ ցաւ պատճառեց իր բոլոր ճանչորնե-
րուն : Եւայց կը յուսամ թէ՛ բաւական երկար ատեն
ապրեցաւ ՚ի գործ դնելու ընդունած խրատները , որոնք
կը փոփարիմ ու աղօթք կ’ընեմ որ ամէն ընթերցող կա-
տարէ՛ զանիկայ իրեն գրուած համարելով , որքան որ իր
ընդունակութիւններուն ու կենացը պարագաներուն պատ-
շաճ կերպով կը յարմարին : Ա’ըսեմ՝ (և կը փոփարիմ
ալ որ միտք անուի ,) թէ կ’ուզեմ որ իմ ընթերցողս
աս խրատներուն համեմատ գործէ՛ որքան որ իր ընդունա-
կութեանն ու կենացը պարագաներուն պատշաճ կերպով
կը յարմարին . վասն զի աս հետեւեալ զանազան բաները

ամենեկին ընդհանուր կանոնի տեղ չեմ՝ դներ ամենուն համար, ոչ ալ որ և իցէ մարդու մը ամէն ատենի համար: Անոնք որ կրնան, և երբոր պատեհութիւն կ'ունենան, թող 'ի գործ դնեն անոնք. և երբոր դուն չես կրնար անոնց ամենուն հասնիլ, անոնց երևելիներուն այնքան մտաւցիլ՝ որքան որ պատշաճ կերպով մը կրնաս: Աս նախազգուշութիւնով նամակը յառաջ կը բերեմ, որ՝ կը յուսամ թէ զանիկայ սխալ հասկընալու վտանգէն զգուշանալու համար առաջուց փոյթ ընելէն ետքը՝ պիտի չվհասեցնէ մինչև անգամ ամենատկար քրիստոնեան: Օն աւրիք՝ զուարթութեամբ և խոնարհութեամբ ընե՛նք որչափ որ կարողութիւն ունինք ընել, և ուրախանանք որ այնպիսի շնորհատու և այր մը ունինք, որ մեր ամէն տկարութիւնները գիտէ. և այնպիսի կարեկից Վահանայապետ մը, որ անկեղծ պարտաւորութեան և սիրոյ ամենատկար ջանքերնիս Աստուծոյ ընդունելի կ'ընէ:

Սէրէլէ բարեկամ

ԱրովՏետե կը փափայրիս որ իմ խորհուրդներս գրութեամբ և երկարորէն քեզի հաղորդեմ մտերս խօսած նիւթերնուս վրայ, թէ՛ «Սեր ամէն աւուր վարուցը մէջ՝ ինչ մասնաւոր կերպերով անձնանուէր և օգտակար կեանք մը կրնանք բարեբաղդաբար ձեռք ձգել ու շարունակել» — խնդութեամբ կը սկսիմ՝ միտքս բերել և որոճալ ան խրատներուն վրայ, որոնք ան ատենը քեզի տուի՝ յուսալով թէ օգտակար պիտի ըլլայ քեզի՝ քու յոյժ կարեւոր շահուցող նկատմամբ. և աւելի խորին պիտի հաստատէ մտքիս վրայ՝ ուրիշներուն տուած կանոններովս իմ կեանքս կառավարելու պարտաւորութիւնս: Աս աս տեսակ ջանքերը բարեկամութեան ամենահաճելի պտուղներուն ու ամենստոյգ կապերուն կարգը կը դասեմ. և որովՏետե կը յուսամ թէ մերը յախտեանս պիտի տեսէ, համոզուած եմ որ աս տեսակ զաղափարներ տալու փոխադարձ փոյթերնիս յախտեանկան քաղցրութիւն պիտի յաւելուն անոր վրայ:

2. Աս բանին վրայ ինծմէ ակնկալած խրատներդ բնականապէս իրեք մաս կը բաժնուին, թէ՛ Ռնչպէս նկա-

տելու ենք Մատուած՝ օրուան սկիզբը , մէջտեղը , և վերջը : Իմ սիրտս համարձակութեամբ պիտի բանամ քեզի ասոնցմէ իւրարանչիւրին վրայով , և քեզի պիտի թողում դատել՝ թէ աս իմ գրելիք խորհուրդներս որքան կը յարմարին քու պարագաներուդ . այս դիտաւորութիւնը առջևս ունենալով՝ որ ոչ մէկ կողմանէ ոչինչ բաներու մէջ մնապաշտական ճշդութիւններ ըլլան , ու ոչ ալ միւս կողմանէ անփոյթ դանդաղութիւն , որ աս ետքինը թէ որ փոքր բաներու մէջ ընդունուի , կասկածելի է որ իր ետեւէն յանցանք սեպուելու զանցառութիւններ ու վերջապէս աւելի մեծ մեղք սեպուելու անհոգութիւններ բերէ :

3 . Օրուան սկիզբը : Ենչուշա մեր փոյթն ըլլալու է արթնցածնուս պէս՝ ելլելու ատեննիս սրտերնիս առ Մատուած բարձրացրնել . և յետոյ անմիջապէս և սրտանց առաւօտեան առանձին աղօթքին պարապիլ :

4 . Կսոնցմէ առաջինը յոյժ բնական կը թուի : Բազմութիւ բաներ կան զանազան աստուածապաշտական խորհրդածութիւններ ու կարճ աղօթքներ թելադրող , որոնք աշխարհան յայտնի են՝ որ մտախոհ մարդ հազիւ կրնայ շտեմել զանոնք : Երթնցած ժամանակնիս մտքերնուս ունեցած հանդատութիւնն ու զուարթութիւնը , քնանալէն յառաջ եկած կազդուրումը , ան անպաշտպան վիճակին մէջ վայելած ապահովութիւննիս , տաք պահող և վայելուչ զգեստուց շնորհուիլը , վերադարձող արեգական զուարթադէմ լոյսը , կամ մինչև անգամ (որ քեզի կը պատշաճի յիշել) ան ամէն արուեստական նարքները , որ մեր վայելած բուրդը դիւրութիւններուն մեծ շեղինակը սորվցուցած ու նարգեւած է , որ անոնցմով արեգակը չեւած՝ կենաց օգտակար ժամեր կը վայելնէք , նաև բարեկամներնուս սիրելի ընկերութեանը դառնալու մեր յոյսը , Մատուոյ ծառայելու ու մեր մտքերը մշակելու համար ուրիշ օր մըն ալ անցընելու ակնկալութիւնը , և աս ամենէն աւելի՛ երջանակութեան ու փառաց յախտնական օրուան մը ուրախալից յարութեան կենդանի յոյսը . ասոնք ամէնն ալ , և այլ ևս շատ ուրիշներ ալ՝ որոնք չյիշեցի , մեզի հաճելի խորհրդածութեան ու զուարթախառն գովարանութեան նիւթ կ'ընծայեն քունէն ելլելու ատեննիս : Եւ որպէս զի

աւելի օգնութիւն առնենք աս մինակ եղած ատեննիս , անպատշաճ ըլլար երբեմն ինքզինքնուս և երբեմն մեր Նշրկնաւոր Հօրը՝ ուրախութեան և շնորհակալութեան բնական արտայայտութիւններովը խօսիլ : «Աերեցէք ինձի յաւելուլ որ եթէ սրտերնիս պայտիսի վիճակի մը մէջ կը դաննեք արթնցած ատեննիս , մինչև անգամ ատիկայ փառարանութեան պատճառ մըն է , և մանաւանդ թերևս պառկած ժամանակնիս ըրած աղօթքնուս պատասխանը :

5 • Առաւօտեան առանձին աղօթից համար , որն որ կը յուսամ թէ ընդհանրապէս մեր առաջին դործն ըլլալու է , ուրիշ մարդու մասնաւոր կերպ մը չեմ կրնար պատուիրել : Մէկ չափով մը քու օխորժակիդ հարցընելու ես՝ իմ սիրելի բարեկամս : Աս պաշտաման բաղադրիչ մասները ընհանրապէս յայտնի են : (Ըսէ որ մէկ մասնաւոր կերպ մը ցուցընելու ըլլամ անոնց՝ որ կէս ժամ կամ րեք քառորդ կրնան անցընել ասոր , (որն որ այնպէս կը կարծեմ թէ խոհեմութեամբ վարվելով շատերը պիտի կարենան ,) աս պիտի ըլլայ անիկայ •

6 • Առաւօտեան սահմանեալ աղօթքը ծուկերնուս վերայ առ Աստուած վսեմ դովարանութիւնով մը սկսիլ՝ ընդհանրապէս ցած բայց որոշ ձայնով մը , ան ողորմութիւնները խոստովանելով՝ որոնց վրայ կը մտածէինք երած ատեննիս , առանց մոռնալու Քրիստոսը յիշել իրբև մեր ամէն վայելութիւններուն ու մեր ամէն յոյսերուն մեծ աղբիւրը • կամ շնորհակալութիւն տալ ամէնօրջեալ Հոգւոյն ազգեցութիւններուն համար , որոնք սրտերնիս Աստուծոյ առաջնորդեցին , կամ ան միջոցին Նսիկայ փրնարուել կու տան մեզի : Մտիկայ , և աղօթից ուրիշ պաշտամունքներն ալ՝ որոնք ետքը պիտի յիշեմ , ուշադրութեամբ և անկեղծութեամբ ընելու է • վասն զի դովարանութիւննիս սրտանց շնատուցանելը՝ Աստուծոյ առջև բողբոլիկն չգովարանել է զինքը : Աս դովարանութիւնը պատշաճ կերպով վերջացընելու է՝ ինքզինքնիս Աստուծոյ նուիրելնիս նորոգելով , մեր յարատև և հաստատուն որոշումը ցուցընելով իրեն նուիրուած ըլլալու , և մասնաւորապէս առաջիկայ օրը իր փառքին համար ապրելու :

7. Այցելուչ է՝ ասկէ ետքը առջևնիս եղած օրուան վրայ աչք պտըտցընել , որքան որ ընդհանուր կերպով մը կրնանք յառաջմանէ տեսնել թէ ուր և ինչպէս պիտի անցընենք . և խորին կերպով մը մտածել թէ “ Այսօր ինքզինքս ի՞նչպէս զբաղեցընելու եմ Աստուծոյ համար : Ի՞նչ գործ պիտի ընեմ և ի՞նչ կարգով : Բարիք ընելու կամ ընդունելու ի՞նչ պատեհութիւններ կրնամ ակնկալել : Ի՞նչ փորձութիւններու պիտի պատահիմ որ և իցէ տեղ մը՝ ընկերութեան մը՝ կամ պարագաներու մէջ , որ հաւանականաբար կրնայ պատահիլ : Սօսերս ի՞նչ բանի մէջ սխալեցայ : Այլ հիմա ի՞նչպէս ապահով պիտի ըլլամ ” :

8. Աս քննութենէն ետքը՝ վայելուչ է կարճ աղօթք մը ընել , խնդրելով՝ որ Աստուած զօրացընէ մեզ աս նախատես եղած պարտաւորութիւններնիս կատարելու համար , որ ամբացընէ մեզ աս նախազուշակ ամէն վտանգներնուս դէմ , որ մեզի յաջողութիւն շնորհէ իր փառքին համար ձեռք զարնուած այս ինչ կամ այն ինչ գործին մէջ , և օգնէ մեզի անակնկալ փորձութեանց դէմ դնելու , առաջուց շտեմտած պատեհութիւններ զանելու ու անոնցմէ օգուտ հանելու , և համբերութեամբ ու հաւատքով ան ամէն նեղութիւններուն տանելու , որոնք նոր սկսած օրերնուս մէջ կրնայ ըլլալ որ մեր վրայ դան :

9. Ար խրատեմ քեզ՝ ասկէ ետքը Առբը Վրքէն մէկ մաս մը կարգալ . ոչ թէ շատ , կամ բոլոր աստուածաշունչը կարգաւ , այլ անոր յոյժ օգտակար մասերէն մէկ քանի ընտիր մասերը , թերեւ տասը կամ տասներկու տուն բան . ինքզինքդ շատ չյոգնեցընելով անոնց ճիշդ կապակցութեանը վրայով , կամ ուրիշ մանրակրկիտ նրբութիւններու վրայ՝ որ կրնան պատահիլ , թէպէտ ուրիշ անգամ աղէկ է որ անոնց վրայով քննութիւն ընես ունեցած կարողութեանդ ու պատեհութեանդ համեմատ . այլ հիմա միայն վերմուտանդութեան և հոգեւոր օգուտ առնելու մտօք կարգալով : Աս կարգացածներէդ ան խրատները առ , որոնք ինքնին մտքիդ կը զարնեն . կրկնէ զանոնք նորէն քու խղճմտանքիդ , և քու սրտիդ պարտքն ըլն՝ հաւատքով զանոնք պահել և անոնց համեմատ գործել , ա-

նոնց վրայ եղած աստուածային իշխանութիւնը զգալով : Կը եթէ աս կարգացած մասիդ վրայով աղօթք ընես՝ աստուածաշունչ առջիդ բացած , յիշողութեանդ ու սրտիդ վրայ աւելի խորին տպաւորութիւն կ'ընէ , և աղօթքի մէջ խորհուրդի ու խօսքի ճոխութիւն մը կու տայ : Այլեւ լուչ է նաև՝ աս աղօթքներդ սաղմոս մը կամ երգ մը ըսելով վերջացընել :

10 . Օրուան ընթացքը անցընելու վրայով դտած ամենէն ընդհանուր կանոններս ասոնք են . Որ եռանդուն ըլլանք օրուան աղօթքներուն , և ծիր՝ գործքերնուս մէջ , սյսխերն՝ մեր աշխարհային կոչումներուն գործադրութեանը մէջ . բարեխառն և խոհեմ ըլլանք անոր գուարձութիւններուն մէջ . մեծ փութով նշան դնենք օրուան նախախնամութիւններուն , զգուշութեամբ դէմ կենանք անոր փորձութիւններուն , անոր մէջ պատահած ամէն հարկադրութիւններուն յարմար՝ կենդանի և խոնարհ կախում մը զգանք աստուածային ազդեցութենէն . խորհուրդներնիս աղէկ կառավարներ օրուան ստանձնութեանը մէջ , և խօսքերնիս՝ ընկերութեան մէջ եղած ատեննիս : Ըս մասնաւոր բաներէն ամէն մէկուն վերաբերեալ խիստ հարկաւոր խրատներուն վրայով պիտի համառօտ խօսիմ :

11 . Աղօթքի մէջ ջերմեռանդ ըլլալու համար , թէ ընկերական և թէ ընտանեկան , այսպիսի ահաւոր բանի մը սկսելէն առաջ՝ քանի մը ըտպէ կանկ առնենք և մտածենք Մտուծոյ կատարելութեանը վրայ՝ որուն հետ պիտի խօսինք , ան գործքին մեծութեանը վրայ որ պիտի սկսինք , աղօթքի կանոնաւոր և ջերմեռանդութեամբ հանապազորդելուն հաճելի ու օգտակար ըլլալուն վրայ , և կեղծաւորութեամբ միայն արտաքին կերպով կատարելուն մեծ մեղք ու յիմարութիւն ըլլալուն վրայ : Արբոր սկսինք , հաստատուն հսկողութիւն մը ընենք մեր զօրութիւններուն վրայ , և խորհուրդներնիս սանձներ որ լմնորին : Երբոր պարտքերնիս կը լմնցընենք , անմիջապէս անիկայ կատարած կերպերնուս վրայ մտածենք , և խղճմտանքնուս հարցընենք թէ արդեօք բաւական պատճառ ունի՞ր եզրակացընելու թէ՛ Մտուծոյ ընդունելի եղանք աղօթքնուս մէջ : Այսան զի մէկ կերպ մը կայ աս ամէն պաշտօնները

կատարելու , որուն համար սրտերնիս անմիջապէս կ'ըսէ մեզի՝ թէ անկարելի է որ Մատուած հաւնի . և եթէ անզգուշութեամբ անոր մէջն իյնանք , պէտք է որ անոր համար յոյժ խոնարհինք Մատուծոյ առջևը , որ չբլայ թէ « մեր աղօթքը մեզք բլայ » : Առջ . ԾԹ . 7 .

12 . Աշխարհային զբաղմանց ժամերուն համար՝ թէ արուեստական և թէ ուսումնական կենաց զործ բլայ՝ որ ուղղակի կրօնական նիւթոց վերաբերեալ չէ , Մատուծոյ իշխանութեանը վրայ զգացում , և անոր փառացը նկատում ունենալով՝ սկսելու ենք կատարել զանոնք : Մերժենք ծոյլ և անհոգ բնաւորութիւնը և մտքին սնտոի խորհուրդներով զբաղիլը , որ իր զործքին վրայ կը բնանայ , և մէկ ժամին զործը երկու կամ իրեք ժամը կը կատարէ , որն որ դրեթէ ոմանց ստիւրական եղած է , որոնք տակաւին բնաւ ծոյլ չեն համարիր ինքզինքնին . ասոր հակառակ ջանք բնենք փութալ զործերնիս լմնցընել՝ որքան քիչ ատենի մէջ որ կրնանք , խորհելով թէ ձեռքերնիս եղած ժամանակը շատ քիչ է : Այլ միշտ մտքերնիս պահենք աստուածային օգնութեան ունեցած կարօտութիւննիս , որ անիկայ մեր աշխատութիւնները յաջող կ'ընէ :

13 . Օրօտանաց ժամերու համարալ աս կ'ըսեմ թէ՛ հոգ տանինք որ մեր զուարճութիւնները անմեղ բլան , որ բարի դիտաւորութիւնով բնենք զանոնք , կեանքերնուս զործքերը կաղցուրեալ զօրութիւնով մը զործել սկսելու համար . և այսպէս մի միայն Մատուծոյ պատուոյն համար զործածենք զանոնք՝ որ ան է մեր ամէն զործքերուն մեծ վախճանը : Օգոյշ բլանք՝ որ սրտերնիս Մատուծմէ շատարանայ անոնց պատճառաւ . և շատ ժամանակ շտանք անոնց , ամէն ատեն մտքերնիս պահելով՝ որ մարդկացին բնութեան կարողութիւնները՝ և քրիստոնէական յայտնութեան օգուտները պարապ տեղը չարուեցան մեզի , այլ միշտ մեծ և փառաւոր վախճանի մը ետեէ բլալու՝ և միայն այնքան ժամանակ տալու ենք զուարճութեանց և զօրանաց , որքան որ արժան է խոհական և ազնուական , բարեւէր և աստուածպաշտական վարուց :

14 . Ատիտանամութիւնը դիտելու համար , օգտակար է մեր հանդատութեանցն ու ներութեանցը մէջ աստուա-

ծային ձեռնառու թիւնը նկատել : Մեր հանդատու թեանցը մէջ , թէ՛ սովորական բլրան և թէ՛ արտաբոյ կարգի , որ առողջութիւննիս կը շարունակէ . կերակուր ունինք կենդանութեան ու հաճութեան համար . այսրան հաճելի կերպեր ունինք ժամանակնիս անցընելու . այսրան բարեկամներ ունինք , և անոնք ալ այսրան բարի և սցաքան երջանիկ . գործքերնիս յաջողութեամբ յառաջ կ'երթայ . ապահովութեամբ դուրս կ'ելլենք ու ներս կը մտնենք . հոգւոյ զուարթութիւն ու խնդու թիւն կը վայելննք , որ առանց ասոնց ուրիշ բան մը չենք կրնար վայելիլ . սա ամէնը նախախնամական շնորհքներ սեպելու ենք , և ասոնց համար արժան խոստովանութիւններ բնելու ենք Աստուծոյ քանի որ սա հաճելի բաները կը վայելենք : Կ'նդհակառակն , Կախախնամութիւնը ամէն անցաջողութեան , ամէն կորուստի , ամէն ցաւի , և ինքզինքնին մեզի բարեկամ՝ ցուցնողներէն կրած ամէն փրամներուս մէջ ալ նկատելու ենք . և ջանք բնելու ենք համբերութեամբ նազանդութեան մէջ կենալու՝ սա խորհրդածութեամբը , թէ Աստուծոյ ձեռքը կայ անոնց ամէն մէկուն մէջ՝ եթէ ուղղակի չէ , անուղղակի կերպով . և թէ՛ եթէ յատկապէս Կախախնամութեան գործքն ալ որ չեն , զոնէ անոր ձեռքին տակն են : Վսիկայ մէկ խորհրդածութիւն մըն է որ յատկապէս բնելու ենք՝ փոքր նեղութիւններուն՝ և մեր մտերիմ՝ բարեկամներուն բնութեանն ու վարուցը մէջ եղած տկարութիւններուն ու պակասութիւններուն նայելով , եթէ ոչ՝ ասոնք դիւրաւ կը խոսովեցընեն մեզ : Այս ասանկ պարագաներու մէջ՝ մտքերնիս պահպանելը շատ հարկաւոր է , որովհետեւ ան իմաստուն և բարի մարդիկն ալ այսպիսի փոքր իրերու մէջ շատ անդամ ինքզինքնին կառավարելը կը կորսըցընեն , որոնք բանականութիւնն ու կրօնքը իրենց օգնական առնելով , մեծ արկածից հարուածներուն դէմ կը կենան քաջութեամբ և հաստատուն որոշումով :

15 • Փորձութեանց դէմ հսկողութեան համար հարկաւոր է որ , երբոր տեղերնիս կամ գործքերնիս կը փոխենք , մտածենք թէ՛ « Ձու ի՞նչ որոգայթներ պատած են իմ շորս դիս » : Այս որովհետեւ ասիկայ մեր սովորա-

կան հոգն բլալու է, ուստի մասնաւորապէս զգոյշ բլալու
ենք ան որոգայթներուն դէմ, որոնք առտուանց կը նա-
խագուշակենք: Աւ երբոր ան պարագաներուն մէջ կը
մտնենք՝ որոնց մէջ կը խորհէինք թէ յարձակումը պիտի
զայ վրանիս, պէտք է որ մտածենք, (մանաւանդ թէ որ
շատ կարեւոր նիւթ մըն է անիկոյ,) թէ “Ախմա մարտը
պիտի սկսի. հիմա Աստուած և օրհնեալ հրեշտակները կը
դիտեն՝ թէ ինչ հաստատութիւն՝ ինչ քաջութիւն կայ
հոգւոյս մէջ. և թէ աստուածային իշխանութիւնն ու իմ
աղօթքներուս և որոշումներուս յիշատակութիւնը ինչ
ազդեցութիւն պիտի ունենան ինձի՝ երբոր փորձի տակ
կ'իյնայ հոգիս”:

16. Աստուածային շնորհքէն ու ազդեցութենէն ունե-
ցած կախումնիս՝ առ հասարակ ամէն բանի մէջ բլալու է.
և քանզի միշտ կարօտ ենք անոր, վասն որոյ բնաւ մոռնա-
լու չենք ատ հարկաւորութիւնը: Աստուածային օգնու-
թեան շնորհուելուն համար՝ խոնարհ և ջերմեռանդ հառա-
չանքներով մէկ բոպէ անցընելնիս անկէ բարիք յառաջ կը
բերէ, քան թէ շատ բոպէներ սոսկ տրամաբանութիւն-
ներու մէջ անցընելը. և յիշաւի թէ պէտ առ ալ մէկդի
ձգելու չես, որովհետեւ բանականութեան լոյսը տեսակ մը
աստուածային լուսաւորութիւն է, բայց տակաւին Աու-
սոյ Աօրմէն ունեցած կախումներնուս վրայով արժան զգա-
ցում մը ունենալով՝ հետամուտ բլալու ենք անոնց, եթէ
ոչ ուր որ ինքզինքնիս իմաստուն կը համարինք, հոն կը
յիմարինք: Առ 21, 22: Այսն որոյ միշտ
Աստուծոյ աղաղակներ և ըսներ, զոր օրինակ՝ երբոր ա-
ղօթք պիտի ընենք, “Տէր, հաստատէ՛ իմ մտադրու-
թիւնս: Արթնցոր իմ սուրբ զգացումներս, ու իմ վը-
րաս շնորհաց և աղօթից հոգին թափէ” : ՉԳԻ . ԺԲ .
10 : Արբոր աստուածաշունչը կամ մէկ ուրիշ աղէկ
դիրք մը ձեռքերնիս առնենք, “Բանց իմ աչքերս, որ
բու օրէնքէդ հրաշքներ տեսնեմ : Առ 18 :
Առասուրբէ իմ հասկըցողութիւնս : Տարցոր իմ սիրտս :
Շնորհէ որ իմ բարի որոշումներս հաստատուին, և իմ
կենացս բոլոր ընթացքը վայելուչ կերպով մը անցը-
նեմ” : Արբոր աշխարհային զբաղման մը ձեռք զարնելու

ըլանք , “ Տէր , ձեռքերուս դործքը Հաստատե՛ իմ վրաս , (Սող . զ . 17 ,) և իմ իրաւացի դործքերս օրհնե՛ ” : Երբոր ինչ և իցէ տեսակ զբօսանաց երթալու ըլլանք , “ Տէր , օրհնե՛ իմ սփոփանքներս : Յօղ մի տար որ քեզ մոռնամ անոնց մէջ , այլ միշտ քու փառքդ աչքիս առջևը պահեմ ” : Երբոր ընկերութեան մէջ մտնելու ըլլանք , “ Տէր , շնորհէ որ բարիք ընեմ ու բարիք վատարկիմ : Յօղ մի տար որ իմ բերնէս ապականեալ խօսք մը ելլէ , Հապա ինչ որ աղէկ է՝ պէտք եղած շինութեանը համար , որ ըտղներուն շնորհք տայ ” : Եփես . դ . 29 : Երբոր դժուարութիւններու հանդիպինք , “ Տէր , տուր ինձի ան խնատութիւնը որ յաջողելու օգուտը ունի : Ժող . Ժ . 10 : Վու ճամբադ ինձի սորվեցուր , ու շիտակ ճամբուն մէջը ինձի առաջնորդէ ” : Սող . իէ . 11 : Երբոր դառն փորձութեանց հանդիպելու ըլլանք , “ Ո՛վ բարեշնորհ Փրկիչ , թող քու զօրութիւնդ իմ տկարութեան մէջը կատարուի ” : Ի Սող . Ժք . 9 : Ես օրինակները խրատիս նպատակը կը բացատրեն , թէ պէտ կատարեալ կերպով համրած չեմ ան ամէն պարագաները , որոնց մէջ նկատելու ենք ասիկայ :

17 . Եւանձնութեան մէջ խորհուրդներնիս կառավարելու համար , սորվեցրնենք ինքզինքնուս ամէն ատեն պատշաճ դիտողութիւն մը ունենալ խորհուրդներնուս վրայ : Օգոյշ ըլլանք ան՝ միտքը յախշտակող կիրքերէն , կամ աչքերնուս տեսած ներկայ շահուցը յարելէն , որոնք մեր խորհուրդներուն վրայ ունեցած իշխանութիւններնէս մեզ կը զրկեն : Եռջևնիս խորհրդածութեան օգտակար նիւթ մը դնենք . ինչպէս ամենօրջեալ Վստուծոյ կատարելութիւնը , Վրիստոսի սէրը , Ժամանակին արժէքը , մահուան և դատաստանին ստուգութիւնն ու ծանրութիւնը , և ասոնց ետեւէն զալիք երջանկութեան կամ թշուառութեան յախտնականութիւնը : Նաև այսպիսի ատեն մեր հոգւոյն վիճակին վրայով մտածենք , թէ հաւատոյ մէջ յառաջ դացած՝ կամ ետ մնացած է . կամ վերջին լրտած քարոզնուս , կամ Սուրբ Իրքէն կարդացած վերջին մասերնուս վրայով : Եսոր հետ՝ տէր իմ , թերևս կը յիշէք մեր խօսակցութեանը մէջ հրամանքիդ առաջար-

կածս թէ, թէ որ շիտակ կը յիշեմ, օգտակար է առտուանց Սուրբ Գրքէն կարգացած մասերնէս մէկ տուն մը ընտրել և մտքերնիս պահել, մտքերնիս դնելով՝ որ հոգևոր խորհրդածութեան նիւթ մը չգտած ժամանակնիս անոր վրայ մտածենք, երբոր պատեհութիւն կ'ունենանք այսպիսի խորհրդածութիւններ ընելու: Ըստ անգամ աղբիւր մը պիտի ըլլայ ասիկայ՝ որմէ շատ օգտակար և գուարձալի խորհուրդներ կը բղխեն, որուն թերևս առաջ այնպիսի զօրութիւն և կապակցութիւն ունենալը չէինք նշմարել: Ասմ եթէ այսպէս չըլլայ, տակաւին համազում եմ որ՝ աւելի աղէկ կ'ըլլայ Սուրբ Գրքին մի և նոյն մասը օրը հարիւր անգամ կրկնել մտքերնուս մէջ հանդերձ մէկ բանի վերմուտանդ աղաչանքներ յարմարցնելով անոր վրայ, բան թէ խորհուրդներնիս թող տալ ան առջն ունայնութիւններուն, որոնք՝ թէ որ վերի ըսածիս պէս չընենք՝ վրանիս կու դան, և որոնց մէկզմէկ տարբեր ըլլալը իրենց ունայնութեանը դէմ ճար մը չէ:

18. Վերջնապէս՝ ընկերութեան մէջ խօսքերնիս կառավարելու համար մեծ փոյթ ընենք որ բերնեքնուս անանկ բան մը չփախչի՝ որ մեզ կամ մեր քրիստոնէական դաւանութիւնը ստորտանաց կամ նախատանաց տակ ձգէ. ոչ ալ հոն ներկայ չեղողներուն և կամ եղողներուն միասակար բան մը. ոչ շարասէր, ոչ կեղծեալ, ոչ ապականիչ, ոչ զայրացուցիչ, և ոչ ալ ընկերներնիս մոլորցնելու մէկ բան մը: Ասեմ անմենին դո՛հ ըլլալու չենք խօսածներնուս մի միայն անմեղ բաներ ըլլալուն. այլ մեր փախաքն ըլլալու է որ օգտակար ալ ըլլան մեզի և ուրիշներուն: Ես մտք՝ ջանք ընելու ենք խօսակցութեան օգտակար նիւթ մը ունենալ միշտ պատրաստ, որուն համար կրնանք օգնութիւն առնել՝ խորհուրդի նիւթ գանձելու համար առջի պարբերութեան մէջ յիշուածներէն: Պէտք է որ արթուն ըլլանք օգտակար խորհրդածութիւններ յառաջ բերելու պատշաճ պատեհութիւններուն ատենը. և եթէ մէկ աստուածապաշտ բարեկամ մը ջանք ընէ ասանկ ընելու, մենք ալ աշխատելու ենք անմիջապէս գործակից ըլլալու: Արբոր խօսակցութիւնը ուղղակի կրօնական նիւթերու վրայ չըդատանայ, աշխատելու ենք ուրիշ կերպով մը օգտակար

ընելու • ընկերութեան բնաւորութեանն ու ընդունակութեանն երունքուն վրայ մտածելու ենք՝ որ խօսակցութիւնն անբաներուն վրայ դարձնել տանք, որոնք որ աղէկ կը հասկընան • վասն զի աս բաներուն վրայ ըրած խօսակցութիւններնին հաւանականաբար աւելի հաճոյ պիտի ըլլայ անոնց, և մեզի ալ օգտակար : Այլ խօսակցութեան մէջ երբեմն երբեմն պատահած փոքր լուծեանց ատենը՝ անվայել չէ մէկ համառօտ աղաչանք մը բարձրացնել առ Աստուած, որ իրեն շնորհքը օգնէ մեզի և մեր բարեկամներուն՝ մէկզմէկու բարիք ընելու համար ըրած ջանքերնուս մէջ, որ բոլոր ըսածնիս և ըրածնիս արժանաւոր ըլլայ բնաւոր արարածոց և քրիստոնէից :

19 • Օրը հոգեւոր ընթացքով մը վերջացնելու համար տալիք խրատներս միայն երկու հատ են • հոգ տանիք՝ որ երեկոյեան առանձին պաշտօննիս աղէկ կատարենք • և բարեպաշտական զգացմամբ պառկինք անկողիններնուս մէջ :

20 • Արեկոյեան առանձին աղօթից համար՝ առաւօտեան աղօթքէն տարբեր կերպ մը պիտի առաջարկեմ • բայց տակաւին անոր պէս պարագաներուն նայելով պատշաճ փոփոխութիւններ կրնայ ըլլալ • Աղէկ կը սեպեմ նախ և առաջ Սուրբ Գրքէն մէկ մաս մը կարդալ, պատշաճ խորհրածութիւններով և աղօթիւք, առտուան պէս • յետոյ երգ մը կամ սաղմոսերգութիւն մը կարդալ • ասկէ ետքն ալ անձնաբնութեան մասնել, առջի աղօթքէն շատ աւելի երկար աղօթք մըն ալ ընելով, անցուցած օրերնուս վրայ ըրած քննութիւններնուս յարմար : Շնորհաց աթոռին առջևը մատուցած աս աղօթքներնուս մէջ շատ պատշաճ է աղաչել՝ որ Աստուած ան օրուան զանցառութիւններուն ու յանցանքներուն թողութիւն տայ • զոյսբանել զանկոյ իր մարմնաւոր և հոգեւոր ողորմութիւններուն համար • և ինքզինքնիս իրեն պաշտպանութեանը յանձնել առաջիկայ գիշերը, վայելուչ խնդրածքներ ընելով ուրիշներուն համար՝ որոնց համար որ պարտական ենք սրտանց անոր առջևը մտնեալ, և մասնաւորապէս ան բարեկամներուն համար՝ որոնց հետ կենակցութիւն կամ թղթակցութիւն ըրինք ան օրը : Շատ ուրիշ բաներ ալ պիտի պատահին թէ՛ առաւօտեան և թէ՛ երեկոյեան աղօթքի մէջ

յիշելու, որոնց համար բան մը չխօսեցայ ես. բայց ես չսեպեցի թէ մեր ներկայ նպատակին կը վերաբերի ան բաներուն վրայով կատարեալ յիշատակութիւն մը ընելը :

21. Ես գլուխը ընցընելէս առաջ պիտի խնայընեմ քեզի՝ թէ անձնարմնութիւնը այնքան մեծ պարտք մըն է որ արժան է քիչ մը ժամանակ տալ՝ անոր վրան քանի մը խօսք ընելու համար : Եւ սա պարտաւորութիւնը այնքան դիւրին է որ՝ երբ մասնաւոր հարցումներ կ'ունենանք առջնին, հասարակ հասկըցողութեան տէր եղող որ և իցէ մէկը աստուածային օրհնութեամբ կրնայ յուսալ օգուտ քաղելով կատարել սա պարտքը : Այն որոյ սա հետեւեալ հարցումները քու առջևդ կը դնեմ, զորս կը յուսամ թէ՛ միայն քեզի պատշաճ երեցած հարկաւոր փոփոխութիւնները ընելով, ամէն օրուան գործածութեան համար քուց պիտի պահես : « Ես առաւ Եստուծով արթնեցայ, և անոր բարութեանը վրայ երախտագէտ զգացումով մը ելայ : Եռաւօտեան առանձին աղօթքս ի՞նչպէս կատարեցի : Այնմ գովարանութիւններ մատուցի՞, և ինքզինքս Եստուծոյ նուիրելս նորոգեցի՞, վայելուչ մտադրութեամբ և պատշաճ զգացումներով : Օրուան զբաղմունքիս համար իմաստուն և բարի կարգադրութիւն մը կազմեցի՞ : Ի՞նչպէս կարդացի Սուրբ Գիրքը, կամ ինչ և իցէ ուրիշ բարեպաշտական գիրք մը, որն որ ետքը պատեհութիւն ունեցայ կարդալու : Արտիս մէկ օգուտ մը ըրամ, թէ միայն զուարճութիւն մըն էր : Օրուան ուրիշ սահմանեալ աղօթքներուն ի՞նչպէս զբաղմունեցայ, թէ՛ ընտանիքի մէջ և թէ՛ հրապարակաւ : Օրուան ստիբական զբաղմունքին փութով և հողևորպէս հետեւեցայ, ամէն բան իր ատենին կատարելով և ամենայն փութով, և « որպէս թէ Տէրօջ » : Առջ. գ. 23 : Ի՞նչ ժամանակ կորսնցուցի այսօր, առաւօտուն՝ կամ կէս օրին, կէս օրէն ետե՛ կամ երկոյն, (վասն զի սա բաժանումները դիւրութիւն կու տան յիշելու.) և ի՞նչ բան պատճառ եղաւ ան ժամանակի կորստեանը : Ի՞նչ տրամադրութեամբ և ի՞նչ կարգադրութիւններով անցուցի այս աւուր զբօսանաց ժամերս : Եստուծոյ ձեռքը նշմարեցի՞ ինձի եղած ողորմութիւններուն մէջ. այսինքն

առողջութեանս՝ զուարթութեանս՝ կերակուրիս՝ հազուա-
տիս՝ գրոցս՝ ճանապարհորդութիւններուս մէջ՝ զտած
պաշտպանութեանցս՝ գործոցս յաջողութեանը՝ կենցաղա-
վարութեանս՝ և բարեկամաց բարերարութեանը մէջ, և :
“Աշն ձեռքը նշմարեցի՞ նեղութեանց և մասնաւորապէս
փորք բաներու մէջ, որոնք բնականապէս կրնային զիս
նեղել և անհանգիստ ընել : Իմ պիտոյքներս շնորհա-
կալութեամբ, և նեղութիւններս նազանդութեամբ ըն-
դունեցի : Օրուան փորձութիւններէն ի՞նչպէս զգու-
շացայ, մասնաւորապէս ան փորձութենէն՝ որ աստուրնէ
կը նշմարէի : Իմ աստուածային ազդեցութենէն ունեցած
կախումն զգացի : “Մատուծոյ Արդւոյն հաւատքովք ապ-
րեցանք”, (Պատմ. իւ. 20,) և ‘Քրիստոսի՛ իմ ուսուցչիս
և կառավարչիս, իմ քառութեանս և բարեխօսիս, իմ
օրինակիս և պաշտպանիս, իմ զօրութեանս և առաջնոր-
դիս պէս նայեցանք այսօր : Սահուան և յախտնանականու-
թեան սպասեցի՞ այսօր, և ինքզինքս երկինքի պատրաս-
տուող, և շնորհաց միջոցովք անոր ակնկալող համարե-
ցանք : Խորհուրդներս աղէկ կառավարեցի՞, մասնաւորա-
բար առանձին գտնուած այս ինչ կամ այն ինչ ատեններս :
Իմ խորհուրդիս առարկան ի՞նչպէս ընտրեցի այսօր, և
որչափ նկատում բրի անոր : Մ, յս ինչ և այն ինչ ընկերու-
թեանը մէջ խօսքերս աղէկ կառավարեցի : Վարկու-
թիւնով, կամ վշտացուցիչ, զայթակղեցուցիչ, անխո-
հեմ, և անվայելուչ բան մը ըսի : Աիրտս առ Մատուած
և առ ամենայն մարդիկ սիրով լեցան էր այսօր . և բա-
րիք ընելու ու բարիք վաստըկելու պատեհութիւններ
մատուցի՞, զտանք, և գործածեցի՞ զանոնք : Ի՞նչ ուշադ-
րութեամբ կարգացի աս իրիկուն Սուրբ Վիքթր, և ի՞նչ
չահեցայ անկէ : Երէկ իրիկուն անձնաքննութիւնս ի՞նչ-
պէս բրի . և առջի անհողութիւններուս ու սխալմունքնե-
րուս վրայովք բրած յիշատակութիւններս՝ ի՞նչ օգուտ
բրին այս աւուր : Ի՞նչ զգացմամբ պատկեցայ, ու ինք-
զինքս քննալու տուի” :

22 . Վիւրաւ պիտի տեսնես՝ տէր իմ, որ աս հար-
ցումները անանկ շարուած են որ աս նամակին մէջք հրա-
մանքիդ տուած յոյժ գլխաւոր խրատներուս մէկ համառօ-

տուժիւնն են . և կը հաւատամ թէ ամենեին հարկ չէ
աս հարցումներուն օգտակարութեանը վրայով՝ քեզի պէս
հասկըցողութեան աէր եղող մէկու մը բան մը զըուցել :
Խղճմանքը շուտով պատասխան կու տայ անոնց . բայց
եթէ յոյժ երկար և մանրամասն կը համարիս դանոնք ,
կրնաս աւելի համառօտ քաղուած մը ընել ամէն աւուր
գործածութեան համար , և ասոնք միայն անանկ փոփո-
խութիւններ ընելով պահել , որ հարկաւոր կ'ըլլայ սոփո-
րականէն աւելի ճշդութեամբ քննութիւն ընելու ժամա-
նակները , որն որ կը յուսամ թէ դո՛նէ շարածը անգամ
մը պիտի ընես : Կեռ թմբուժիւնը մեզ անցարմար չը-
րած՝ առանձին աղօթքը այսպէս կատարելէն ետքը մինչև
հանդատանալ երթալու տոննիս , հետեւեալ պարբերու-
թեան մէջ յիշուած կանոններովը վարուելու ենք : Աշ-
աս մասին այլ ևս ուրիշ յիշելիք բան մը չմնար , բայց
միայն —

23 . Ան զգացումները՝ որոնցմով պատկիլ և ինքզինքնիս
քնանալու տալու ենք : Արդ՝ հոս յայտնապէս արժան է
խորհիլ՝ աստուածային բարութեան վրայ , որ մեր կենացը
առաջին օրերուն ու ողորմութիւններուն վրայ այլ ևս օր
մըն ալ և անոր օրհնութիւնները աւելցուց . մտմտալ՝ Ասա-
խախնամութեան մեզի յարմար բնակութիւն և հանգիստ
անկողիններ տալուն , ու մարմնոյ առողջութիւննիս պահ-
պանելուն վրայ՝ որ ասով կարենանք հանդատութեամբ ա-
նոնց վրայ պատկիլ , և մտաց այնպիսի հանդարտութիւն
տալուն՝ որ յոյս կու տայ մեզի թէ հանգիստ քուն պիտի
վայելենք , փափաքելի մէկ հանդատութիւն մը՝ ոչ միայն
իրբև կենդանական բնութեան սիտիանք , այլ իրբև ան
բանը որ մեր ամենխմաստ Արարիչը՝ այցբան տկարութիւն-
ներուն մէջ մեզ խոնարհ պահելու համար՝ հաճեցաւ հար-
կաւոր ընել , որ իր ծառայութեանը նոր զուարթութեամբ
հետեւելու կարող ըլլանք : Այսպէս մեր բոլոր ժամանա-
կը՝ թէ արթուն և թէ քուն եղած ատննիս՝ մէկ միտքով
մը Մտուծոյ նուիրենք : Աշ երբոր ինքզինքնիս մահուան
պատկերին յանձնելու կը մտնենանք , յայտնապէս պատ-
շաճ է նաև ամենայն կենդանեաց վախճանին վրայով սրտի
մտօք մտածել , և անանկ նորոգել զզջումն ու հաւատքը՝ որ

Հարկաւոր պիտի համարէինք եթէ այլ ևս հոս արթըննալու շքայինք : Անգամ մը տէր իմ , աս տեսակ խորհրդածութեան զրուածք մը տեսար իմ քովս . նամակիս վերջը կը գնեմ անիկայ քեզի համար , և ան պատճառաւ այլ ևս բան մը պիտի չյաւելում աս գլխուն մէջ , այլ ինձմէ խնդրած խրատներդ հոս կը վերջացընեմ :

24 • Այսպէս կը հաւատամ թէ աս կանոններէն երեւելիները հրամաներդ երկար ատենէ 'ի վեր աս կամ ան կերպով կը պահես , և քու կեանքդ կառաւարդ սկզբունքներն ըրած ես : Յեծապէս պիտի ուրախանամ թէ որ ատեն կարգալզ և ուրիշ ասոնց նմաններն ալ քննելո՞ւ ու փորձելո՞՞ Վստուծոյ հետ աւելի մօտ հաղորդութիւն մը ունենալու , և սասնկով՝ քու կեանքդ աւելի հաճոյ և օգտակար , և յախտնականութիւնդ ալ երբոր սկսելու ըլլայ , աւելի փառաւոր ընելու միջոցը ըլլան : Աշխարհիս մէջ չկայ մէկ մարդ մը , որ անոր ծառայել չուզեմ աս կարևոր բաներուն մէջ . բայց կրնամ քեզ հաւատարմութեամբ վառահացընել՝ Սիրելի՛ Տէր իմ , թէ մասնաւոր յարգանքք եմ

Վու ամենասիրելի բարեկամդ
և ծառայ :

25 • Ո՛վ ընթերցող , ասիկայ տասնութեց տարի առաջ ան արժանաւոր բարեկամիս զրած նամակս է , (ան բարեկամիս՝ որուն հիմա Վստուծոյ հետ ըլլալուն չեմ տարակուսիր ,) մէկ քանի բառերու փոփոխութեամբ , և վստահութեամբ կրնամ ըսել թէ աս տարիներուն ամեն մէկուն փորձը զիս հաստատեց աս գաղափարներուն մէջ , և վստահացուց թէ այս կերպով անցած մէկ օրը յոյժ նախապատիւ է՝ հեշտութեամբ և կրօնքի վրայ անհոգ ըլլալով անցած հազարաւոր տարիներէն : Եղէկ սեպեցի նամակը եղածին պէս գնել հոս , վասն զի անոր մէջ տուած խրատիս համարձակութիւնն ու մասնաւոր կերպը յոյժ բնական պիտի երեւայ իր նախկին ձևովը . և քանզի միտքս գրեր եմ աս խրատներուն համեմատ յորդորանք տալ հետեւալ գլխուն մէջ , վասն որոյ աս գլուխը կը վերջացընեմ ան խորհրդածութեամբը , որն որ բարեկամիս խոստացայ իրեն խրկած նամակիս վերջը գրել , և որն որ կ'ու-

զեմ թէ այնքան բնտանի բնես քեզի , որ կարող ըլլաս անոր գլխաւոր մասերը յիշել՝ երբոր ինքզինքդ քնանալու կու տաս :

Խոհախան Տարս Բաւը Տարսթիւ պատմիչու տարեանիս :

Ո՛վ իմ հոգիս , յառանջ նայէ քիչ մը՝ անձկանօք և մըտադրութեամբ . և բու վախճանդ մտածելով իմաստուն եղեր : Ը՛ Օրբն . ԼԷ . 29 : Քու անցաւոր օրերուդ մէկ հատն ալ համբուեցաւ ու լինցաւ հիմն . ինչպէս որ հանդերձներս հանեցի ու գիշերուան հանգստեանը համար ինքզինքս անկողինիս վրայ դրի , առանկ կեանքիս օրը շուտով իր վախճանին պիտի հասնի , և այնպէս՝ մարմինը մէկդի պիտի հանուի ու հողեղէն անկողինի մը մէջ դրուի իր հանգստեանը համար : Հոն թող հանգչի . վասն զի այլ ևս հիմնախուան մէկդի հանած հանդերձներէս աւելի պիտի չնկատեմ անիկայ : Յոյժ առաւել կարեւոր դործ մը ունիմ նայելու : Խորհէ՛՛ ո՛վ իմ հոգիս . երբոր մահը դայ , յախտենական աշխարհը պիտի մտնես , և կամ երկինքին կամ դժոխքին մէջ պիտի հաստատուիս : Աննայ ամէն խորհուրդներն ու հոգերը , յոյսերն ու երկիրնները , զուարճութիւններն ու տրամոթիւնները պիտի վերջանան , և հոգւոց աշխարհը առաջդ պիտի բացուի : Աւո՛հ , որքան շուտով կարելի է որ բացուի , թերեւս արեւակը նորէն չծագած . կրնայ ըլլալ որ վաղուան արեւակը իմ աչքերս չուսաւորէ , այլ միայն աս կենդանի մարմնոյս տեղը պատկող անզգայ դիակին վրայ ծագէ : Գոնէ շատ ծաղկահասակ անձանց մահը , և շատ անանկներունը՝ որոնք ընդունակութեան՝ աստուածապաշտութեան՝ և օգտակարութեան կողմանէ ինձմէ վեր էին , բարձրաձայն զգուշացրնէ զիս չվտառհիլ՝ թէ երկար պիտի ապրիմ . և յաւտ զարմացրնէ զիս որ այսքան տարի ապրեցայ հոս , քան թէ ապշեցրնէ՛ թէ որ շուտով փոխուելու ըլլամ ասկէ :

Աւ արդ՝ ո՛վ իմ հոգիս . պատասխանն տուր որպէս թէ Բատուծոյ առջևը՝ թէ Պատրմտա ես : Պատրմտա ես : Չունի՞մ մէկդի չձգած և վրան զգջում չբրած մեղք մը , որ աշխարհս ձգելու ատենս զիս տաղնապով լեցրնէ , և յախտենականութեան եղերքին վրայ զիս դողացրնէ :

Պախցիի ան մեղաց յանցանքին տակը մնալէն , և աս բու-
պէիս նորոգէ՝ քու յոյժ եռանդուն աղօթքներդ՝ որ Մատու-
ծոյ ողորմութեամբը և վերկէին արեանը միջոցովը անկէ
աղատիս :

Բայց եթէ տալիք ան մեծ հաշիւդ արդէն կատարած ես ,
եթէ նրտանց զղջացած ես քու բազմաթիւ յանցանքներուդ
վրայ , և անկեղծ մտօք ինքզինքդ ամենօրնեալ Հիսուսի
ձեռքը յանձնած ես հաւատքով , և անոր հետ ըրած
ուխող մերժած չես՝ նորէն մեղքի դառնալով , ուրեմն մի
սոսկար աս կեանքէս գատուելու խորհուրդէն . մահը
չկրնար Մատուծոյ ձեռքը յանձնուած և ան մեծ վերկէին
յարեալ հոգւոյն մնաս մը հասցընել : Արնայ զիս աշ-
խարհային վայելու թիւններէ զրկել , կրնայ 'ի դերե հա-
նել և աւրել երկրիս վրայ ծառայելու համար ունեցած
խորհուրդներս . բայց՝ ո՞վ իմ հոգիս , աստուածային վա-
յելու թիւններ և աւելի ազնիւ ծառայութիւններ կը սպա-
սեն յեզի՞ գերեզմանէն անդին : Յախտեանս օրնեալ
ըլլայ Մատուծոյ անունը և Հիսուսի սէրը , աս խաղաղա-
ւեան՝ քաջալերիչ՝ և ուրախացուցիչ հայեցողութիւններուն
համար : Խաղաղութեամբ պիտի պառկիմ՝ ու քնանամ
հիմա՝ (Պաղ . ք . 8 ,) անոր երկիւղներէն ազատ , աս
գիշերուան ելքը ինչ որ ըլլայ , թէ՛ կեանք սահմանեալ
ըլլայ ինծի և թէ՛ մահ : “ Զայր՝ քու ձեռքդ կը յանձնեմ
իմ հոգիս ” , (Ղոմ . իմ . 46 ,) ինչու որ դուն իս փրկե-
ցիք՝ ո՞վ Մատուած ճշմարտութեան , (Պաղ . լւ . 5 ,)
և անոր համար կրնամ գուարթութեամբ քու բնորութեանդ
ձգել՝ թէ՛ աս աշխարհիս՝ թէ՛ միւս աշխարհին մէջ ան-
թըննալ :

Գ Լ Ո Ւ Խ Ի

Մեր օրերը նախնական գլխոյն մէջ սորորադրուած ինքզնիք ան-
ցընելու համար իրանդուան յորորումս էլ :

1 • ‘Եստրնիթաց գլխոյն մէջ անանկ մէկ բան մը յա-
ռաջ բերի, որն որ կը վախնամ’ թէ ընթերցողացս ոմանց
այնքան ծանր գործ մը պիտի թուի որ պիտի չհամարձա-
կին ձեռք զարնել ըսածներս ընելու . և յիրաւի շատ բա-
ներու մէջ քրիստոնէից ընդհանրութեանը ունեցածէն այն-
քան հետի կեանք մըն է որ կը վախնամ’ թէ’ քրիստոնէաց
անուան արժանի եղող շատերը՝ իմ տուած ան ամէն նա-
խազգուշութիւններէս ետե, պիտի սեպնն թէ իմ աս խը-
րատներս պէտք եղածէն աւելի ճշդութեամբ ու խստու-
թեամբ գրուած են : Բայց ես աղէկ համոզուած եմ որ
քրիստոնէութեան պատուոյն ու համարմանը մեծ մասը կը
կորսուի՝ գանձիկայ դաւանողները իրենց նպատակը շատ
նուաստացնելուն, և իրենց ունեցած բարձր ու սուրբ
կոչմանը վրայ՝ կրօնքին բնութեանը պահանջած ու Մատու-
ծոյ խօսքին ցուցուցած բարձր ու վեճա՞ զաղափարելը զմու-
ծելուն համար : Ատարեկապէս խեղքս պատկած է որ
“Տէրոջը հետ քալել”, և “ամէն օր Տէրոջը վախին մէջն
ըլլալը”, (Մատ. . ինչ . 17,) և ամենէն աւելի, “մեր
Տէր Մատուածը սիրելը մեր բոլոր սրտէն, և մեր բոլոր
անձէն, ու մեր բոլոր մտքէն, և մեր բոլոր զօրութենէն”,
(Մատ. . ժր . 30,) ասոնք՝ թէ որ իմ ջատագովածներս ամ-
մէն պարագայիսքը մէկտեղ չգրահանջեն ալ, դոնէ ան ամե-
նուն էութիւնը անշուշտ կը պահանջեն, որքան որ կարո-
ղութիւն՝ ժամանակ՝ և պատահութիւն ունենալ . և չեմ
կրնար չխորհիլ որ շատերը կրնան աս ետքի ըսածս աւելորդ
ունենալ, և թերեւս ընդունակութիւններնին ալ մշակել,
թէ որ պէտք եղած հոգը ունենան ինքզնիքնին կառավա-
րելու, թէ որ մէկզի ձգեն ունայն և հարկաւոր չեղած
գուարձութիւններն ու այնպիսի զբօսանքները՝ որոնք մեր

բնութեանը միայն զգայական մասը կը զուարճացընեն , և ամենէն աղէկը խօսելով՝ թէ որ մեզ յանցանքի մէջ չնգնն ալ , դո՛նէ իրենցմէ աղէկ զուարճութիւններուն վայելչութեանէն մեզ կը զրկեն : Աս կանոններէն շատերը պիտի երևնային որ դիւրին է պահելը , թէ որ մարդիկ ուղէին սորվիլ որ ժամանակին յարգը զիտնան՝ և մասնաւորաբար անիկայ աւելորդ քունի շտան , որն որ օրուան ոսկեղէն ժամերը կը սպառէ . ան ժամերը՝ որ ատեն Տէրօջը ծառաներէն շատերը կ'ուրախանան իրմով , և կենաց ջուրէն յազենալու շափ կը խմեն , քանի որ աս իրենց եղբայրները անկողիններնուն մէջ կը քնանան , և ունայն երազներու մէջ ընկղմեալ են , որոնք բանական էակի մը հասարակ զուարճութիւններէն այնքան վար են՝ որքան որ խորին ջերմեռանդութիւններուն զուարճութիւնները ան զուարճութիւններէն վեր են :

2 . *Վասնապէս զիտեմ՝ որ միտք ըսածդ շատ յողոզող ու անհաստատ է , և շատ դժուար է այսպիսի կառավարութիւն մը ու իշխանութիւն մը պահել մեր խորհուրդներուն վրայ՝ որն որ յոյժ ցանկալի է , և որն որ իմ առաջադրած կերպս կը պահանջէ : Իսկ Մատուծոյ պատիւն ու մեր երջանկութիւնը այնքան կախում ունի անկէ , որ կ'աղաչեմ՝ քեզի՝ որ համբերութեամբ և մտադրութեամբ քիչ մը ուկնդրութիւն ընես ինձի՝ քանի որ քեզի կը խօսիմ , և սրտի մտօք քննես փաստերը՝ և սպա դատես , թէ արդեօք իմ ըսած փոյթս ու վարքս ըստ ինքեան բանաւոր չե՞ն , և թէ յոյժ օգտակար պիտի չըլլան կենաց մէջ հանգիստ և օգտակար՝ ու մահուան մէջ խաղաղ ըլլալուդ , և յախտնական փառքիդ յառաջ երթալուն ու աճելուն :

3 . Թող խղճմտանքն ըսէ՝ թէ արդեօք հոս վերը իմ նկարագրած իս պէս մէկ կեանք մը ինքնին յոյժ բանաւոր չե՞ : *Կորէն նայէ անոր վրայ , և աղէկ քննութեան տակ առ . քանզի շատ կը վախճամ՝ որ քանի մը թեթեւ առարկութիւններ ծագին մտքիդ մէջ անոնց ամբողջութեանը դէմ , որոնց հետեւութիւնը ըլլայ անանկ մասնաւոր բաներու դպչիլ , որոնց դէմ խոհեմ անձ մը ամենեկին առարկութիւն ընելու ձեռք չզարներ : Յիշէ՛՝ ո՛վ քրիստոնեայ ,

մտքիդ ու սրտիդ մէջը պահէ՛՛ քանի որ անխկայ կը կարգաս , թէ դուն Վատուծոյ ստեղծածն ես , թէ Հիսուսի արեամբը ծախու առնուած ես . և ապա ըսէ՛՛ թէ քու Վատուծոյ Հետ ունեցած աս առնչութիւններդ չե՞ն պահանջեր որ ան ամէն որոշումներն ու գործադրութիւնները ընես , որոնք ես գրուցեցի : Ասպէ թէ բոլոր տուած խրատներս 'ի գործ դրիր . սեպէ թէ ամէն օրդ՝ առ Վատուած Չեքմեռանդ Հատաչանքներ ընելով , առտու և իրիկուն անօր Հետ և քու սրտիդ Հետ Հազորդակցելու Համար առանձնանալով սկսեցիր ու վերջացուցիր . սեպէ թէ ամէն օր Հոգ տարիր ժամանակդ ինչպէս կառավարելու և ինչպէս անցընելու վրայ . սեպէ թէ Վատուծոյ վրայ աս նկատմունքը , անօր ներկայութեանը վրայ աս զգացումը , և անօր փառքին Համար աս նախանձաւորութիւնը ունեցար , քու ամէն աստուածային պաշտամունքներուդ և գործքիդ ու զուարճութեան ժամերուդ մէջ . սեպէ թէ՛ Կախախնամութեան վրայ աս մտադրութիւնը ունիս , փորձութեան դէմ՝ աս զգուշութիւնը ունիս , ինքզինքդ աստուածային ազդեցութենէն կախեալ կը ճանչնաս , առանձնութեան և ընկերական խօսակցութեանց մէջ խորհուրդներդ աս կերպով կը կառավարես . այն՝ պիտի ըսեմ ալ որ սեպէ թէ տուած ամէն մէկ մասնաւոր խրատս բռնեցիր , մէկդի առնելով պատահած մասնաւոր դիպումները , որոնց Համար կարող պիտի ըլլաս խղճէդ ըսել թէ՛ «Մէ թէ ծուլութենէ և անհոգութենէ է որ զանց կ'ընեմ՝ անխկայ , այլ քանզի կը սեպեմ թէ ան ժամուն աւելի Հատուծոյ պիտի ըլլայ Վատուծոյ ուրիշ բան մը ընելը » , որ կրնայ շատ անգամ պատահիլ մարդուս կենացը մէջ , թէ և ընդհանուր կանոնները շատ աղէկ շինուած ըլլան . սեպէ թէ՛ կ'ըսեմ , աս ամէնը կ'ընես ոչ թէ օր մը կամ շաբաթ մը , այլ ունեցած կեանքիդ բոլոր մնացած օրերուն մէջը , թէ՛ երկար ըլլայ կեանքդ և թէ՛ կարճ . և սեպէ թէ՛ կենացդ վերջը ասխկայ նորէն կը քննես , բանական կարողութիւններդ լիովին գործածելով . պատճառ մը պիտի ըլլայ աս խորհրդածութեանդ մէջ ըսելու թէ՛ «Չափէն աւելի ջանք բրի կրօնքի մէջ . իմ էութեանս Հեղինակը արժանի չէր իրեն այսքան բան ընելուս . ասկէ քիչ փոյթ , ասկէ

քիչ հաւատարմութիւն , և ասիկէ քիչ նախանձաւորութիւն բաւական էր իմ վրկութեանս համար թափուած արեանը : Արտիս մէկ մասը , ժամանակիս մէկ մասը , աշխատութեանցս մէկ մասը կրնար բաւական ըլլալ անոր՝ որ բոլոր իմ զօրութիւններս ինծի տուաւ . անոր՝ որ զիս ազատեց ան կործանումէն , որն որ իմ կարողութիւններս իմ յաւիտենական տանջանքս պիտի ընէր . անոր՝ որ զիս օրջնեալ անմահութեան սահմանները կը վերցընէ¹⁾ : Ա՞նչ երեսով կրնաս ասիկայ ըսել : Աթէ չես կրնար , ուրեմն ստուգիւ քու խղճմտանքդ կը վկայէ՝ թէ բոլոր ըսածներս , վերոյիշեալ սահմաններով՝ բանաւոր և պատշաճ են , թէ պարտաւորութիւնն ու երախտագիտութիւնը կը պահանջեն զանոնք , և հետեւապէս՝ անոնց մէջ բրած ամէն մէկ պակասութիւններովդ քու հոգւոյդ վրայ մեղք կը բերես , Աստուածդ կը բարկացընես , և քրիստոնէական դաւանութեանդ անվայել կերպով վարուած կ'ըլլաս :

4 . Ա՛աղաչեմ՝ նաև որ քննես թէ արդեօք աս իմ ջատագոված ընթացքս՝ կենաց մէջ հանգիստ ու օգտակար ըլլալուդ մեծապէս պիտի չօգնէ²⁾ : Արտի մտօք խորհէ՝ թէ ի՞նչ է ճշմարիտ երջանկութիւնը : Աստուծմէ հետանալովն՝ թէ անոր մօտ ըլլալուն մէջ կը կայանայ անիկայ : Անշուշտ չկրնար ըլլալ որ քրիստոնէայ եղած ըլլաս , անշուշտ չկրնար ըլլալ որ խելացի մարդ մը եղած ըլլաս թէ որ կը տարակուսիս՝ թէ արդեօք Ռարձրելոյն Աստուծոյ հետ հաղորդութիւն ընելը բերկրութիւն ու երջանկութիւն է : Այլ թէ որ ասանկ է , անշուշտ անոնք կը վայելեն անիկայ , որոնք որ հանապազ իրենց աչքին առջևը կը պահեն զինքը : Չես կրնար չփանալ քու խղճմտանքիդ մէջ՝ թէ աս է երկնից երջանկութիւնը կազմողը . վասն որոյ որքան որ վայելէ ասիկէ մարդ մը երկրիս վրայ , այնքան աւելի իր հոգւոյն մէջ երկինք մը եղած կ'ըլլայ : Աթէ աստուածպաշտութեան վրայ փորձ մը ըրիր , թէ և միայն քանի մը ամիս կամ քանի մը շաբաթ ըլլայ՝ յորմէ հետէ տեղեկացած ըլլաս անոր , քու փորձառութեամբդ պէտք է որ կարող ըլլաս զատելու թէ՛ քու կենացդ՝ որ օրերը լաւագոյն էին : Չէ՞ որ ան օրերն էին լաւագոյն օրերդ , որ ատեն ճիշդ աս սկզբունքներովդ կը քալէիր . ան օրերը՝ որ ատեն

յոյժ հանդարտութեամբ և հաստատ որոշումով յառաջ կ'երթայիր ժամանակիդ ամէն մէկ ժամերուն ու կենացդ ամէն մէկ պարագաներուն մէջ : Վրու հակամիտութիւններուդ դէմ՝ դնել պարտական եղած սանձդ՝ շատ անգամ անհաճոյ կ'երևի • բայց անշուշտ անոր փոխարէնը էեւլօք պիտի վայելես յոյժ երջանիկ կերպով մը , ան բերկու-
թեամբը՝ որն որ անձդ կ'առաջարկելը , ու խորհուրդներուդ՝ կիրքերուդ և գործքերուդ վրայ այսպիսի տիրողութիւն մը ունենալը տեսնելէդ պիտի ծագի , որ աս բաներուն վրայ աս տիրողութիւնը ունենալը՝ մարդոց վրայ իշխանութիւն ունենալէն շատ աւելի փառաւոր է :

Ծ • 'Ասե կ'աղաչեմ՝ քեզի՝ որ այսպիսի վարքի մը ու-
րիշներուն երջանկութեանը վրայ ունեցած ազդեցութիւնը քննես խմանաս : Այլ դիւրին է տեսնել թէ՛ շատ մեծ է ան ազդեցութիւնը • վասն զի քու սիրտդ միշտ յոժար պիտի տեսնես բարիք ընելու ամէն յարմար պատահու-
թիւնները հսկելու , և անձկանօք ու բերկրութեամբ գոր-
ծածելու աս պատահութիւնները : Վրու կենացդ գործն ու ուսումը պիտի ըլլայ բաները այնպիսի կերպով մը կար-
գադրել , որ մէկ բարի ու օգտակար գործքին վախճանը ուրիշի մը սկիզբն ըլլայ • ու աս ընթացքին մէջ յառաջ պիտի երթաս անանկ բնական կերպով մը , ինչպէս որ ըս-
տորին կենդանիները կ'ընեն ան գործքերն ու արդիւնքնե-
րը՝ որով կ'օգնեն մարդկային սեռին և կը հարստացնեն անիկայ • կամ ինչպէս երկիրը՝ որ ամէն ատեն զանազան տեսակ բուսականաց արմտիքը կու տայ : Աւ թէև մարդկային սեռը աս ապականեալ վիճակին մէջ դժբաղ-
դարար յոյժ հակամիտեալ ըլլայ բարիէն առաւել շար օ-
րինակներու հետեւիլ , տակաւին կը յուսացուի թէ՛ քանի որ " քու լոյսդ մարդոց առջին կը լուսաւորէ " , ոմանք " քու բարի գործքերդ տեսնելով " , պիտի ջանան նոյնը իրենց վարուցը մէջ ալ մտցնել և այսպէս " փառաւորել քու օջայդ " որ երկինքն է " : Մտորն • է • 16 : Անշուշտ այսպիսի գեղեցիկ օրինակներուն հրապոյրքը պիտի յափը-
տակե ոմանք , և հակամէտ ընէ զանոնք ջանք ընել՝ դո՛ւն նմանելու անոնց • և ամէն մէկ ջանքը ուրիշ ջանք մը յա-
ռաջ պիտի բերէ : Այլ այսպէս աստուածային բարու-

Թեամբը կրնաս մասնակից ըլլալ ոչ միայն անմիջապէս քու բրած բարիքիդ դովութեանն ու հատուցմանը, այլ քու պատճառովդ ուրիշներուն բրածինին ալ: Եւ ամենատես Եստուծոյ աչքէն Դի զատ մէկ աչք մը չկրնար տեսնել Թէ՛ մինչև որ ժամանակ կամ մինչև որ տեղուանք կը հասնին անոր ամենօրնեալ հետեութիւնները: Եւ ամէն ատեն որ աս հետեութիւնները կը տեսնես մէկու մը վրայ, անանկ աղնիւ և զերագոյն խնդութիւն մը պիտի մանկ արտիդ մէջ, որն որ ոչ մէկ աշխարհային յաջողութիւն մը կրնայ պատճառել, և կենդանի նըշանակն է ան բարձր խնդութեանը, որ ամենօրնեալն Եստուած կը զգայ՝ իր արարածները երջանիկ տեսնելով ու ընելով:

6. Յիրաւի՛ ճշմարիտ է թէ աս ամէն աստուածագաշտական ու բարեսէր հոգերուն մէջը նեղութիւններ կու գան, և մէկ շափով մը կը խափանեն քեզ քու առաջադրած խորհուրդներուդ մէջ: Իսկայ անշուշտ աս նեղութիւնները շատ կը թեթեւան, երբոր սիրտդ ուրախ ըլլայ մտքիդ խաղաղ ու զուարթ խորհրդածութիւններովն ու Եստուծոյ և մարդոց առջև մտքուր խղճմտանք ունենալովդ: Շատ ուրախակից բան մը պիտի գայ քեզի՝ աչքդ անցեալ տեսարաններուն վրայ դարձնել և խորհիլ՝ Թէ ինքզինքդ անցեալ մեղքերուդ համար ոչ միայն խոնարհեցուցիր, այլ թէ խոնարհութեանդ անկեղծութեանը վեկայ էական փորձ ալ ցուցուցիր, սխալմունքներդ շիտկելով՝ և քաջ ու զորաւոր որոշմամբ ուղիդ սկզբունքի համեմատ գործելով: Եւ քանի որ Եստուծոյ հետ հաղորդակցիլն ու մարդոց բարիք ընելը կենացդ մեծ գործն ու բերկրութիւնն էրած է, զուարճութեան հազարաւոր պատեհութիւն պիտի գտնես մինչև անգամ աս նեղութիւններուն մէջ, որոնք այնքան անընդունակ պիտի ընեն քեզ զգայարանաց հաճութիւնները ախորժելու, որ աս պարագաներուդ մէջ զանոնք յիշելը անգամ նախատելի ու անարգելի բան մը պիտի երևնայ քեզի:

7. Ա՛րքնապէս մահը՝ ան ահաւոր և երևելի ժամը պիտի գայ, որն որ եկած է այսպիսի կեանք մը անցընող բիրաւորներուն, ու այսպիսի կեանք մը անցընելու ան-

հոգ եղող միլիոնաւորներուն : Այլ թող խղճմտանքն ըսէ՝
 թէ արդեօք ան միլիոնաւորներէն մէկը երբէք բանաւոր
 պատճառ մը ունէ՞ր ուրախանալու իր անհոգութեանը
 համար , կամ ան բարի քրիստոնեաներէն մէկը եղաւ ար-
 դեօք՝ որ ան ատենը ողբար իր սիրան ու կեանքը այն-
 չափ նախանձաւոր կերպով Մտուծոյ նուիրած ըլլալուն
 համար : Թող խղճմտանքն ըսէ՝ թէ արդեօք անոնք ի-
 րենց այս կերպով անցուցած ժամանակին մէկ մասը կ'ու-
 ղէի՞ն որ իրենց տրուէր նորէն , որ աւելի մերձ գային աս
 աշխարհիս , որ աւելի խորունկ ընկղմէին ինքզինքնին անոր
 զքօսանացը մէջ , կամ անոր պատիւներուն՝ ստացուա-
 ծոցը՝ և կամ զուարճութիւններուն ետեւէն ըլլային առջի-
 նէն աւելի փափարով : Թէ որ դուն մեռնելու վրայ
 ըլլայիր , ու մէկ սիրելի բարեկամդ կամ զաւակդ քովդ
 կեցած ըլլար , և աս գիրքն ու նախընթաց գլուխը պա-
 տահմամբ միտքդ դար , պիտի զգուշացնէի՞ր ան բարե-
 կամդ կամ զաւակդ որ իմ զրուցած կանոններովս չվարուի :
 Հարցումս դուցէ հարկաւոր չերենայ՝ պատասխանը ինք-
 նին յայտնի և ստոյգ ըլլալով : Արեմն ներէ՛ ինծի որ
 աղաչեմ՝ քեզի , որ սորվես թէ ի՞նչպէս պետք է ապրիս ,
 մտածելով թէ ինչ կերպով մեռնիլ պիտի ուղեւ , և ինչ
 տեսակ կեանք մը անցուցած ըլլալ պիտի փափարքիս , երբ-
 որ աս աշխարհս ձգելու և հանդերձեալին մէջ մտնելու մօ-
 տենաս : Արտի մտք խորհէ՛ , թէ որ մահը յանկարծակի
 վրադ հասնէր , և մէկ ժամէն կամ մէկ րոպէէն թէ որ
 յաւիտենականութեան կանչուիլդ քեզի խնաց տրուէր ,
 պիտի շուղէի՞ր որ քու վերջին օրդ այսպէս սկսած ըլլայիր .
 և ան օրը՝ թէ որ առողջ ու աշխոյթ էիր , այսպէս անցու-
 ցած ըլլայիր : Արտի շուղէի՞ր որ Տէրդ քեզ այսպիսի
 խորհուրդներու և այսպիսի գործքերու մէջ զբաղած գրա-
 նէր : Աս կերպով՝ յերկրէ՛ յերկինս ըրած ճամբորդու-
 թիւնդ շատ դիւրին և հաճելի պիտի չգամ քեզի : Այլ
 ընդհակառակն , թէ որ մահը կամնց կամնց մտնենայ քե-
 զի , այսպիսի աստուածապաշտական՝ սուրբ՝ խոնարհ՝ ըզ-
 դաստ և օգտակար կենաց յիշատակութիւնը՝ ուրիշ կեր-
 պով եղածէն աւելի՛ քու մահուան անկողինդ կակուղ և
 հանդիստ պիտի չընէ՞ր քեզի : Այլ թէ աս բաներուն ա-

պաւնելով պիտի մեռնիս : Վա՛ւ լիցի որ ասանկ ընես : Վա՛ւ բազմաթիւ թերութիւններդ զիտնալով , անտարակոյս պիտի ցանկաս ինքզինքդ Վրիստոսի ոտքը ձգել , որ կարենաս « անոր արդարութիւնովը հազուած , և անոր արիւնովը քու մեղքերէդ սրբուած » Եստուծոյ առջևը երևնալ : « Կաև սրտիդ մէջ գտած ամէն բարի հակամիտութիւններդ , և ան ամէն արժանաւոր գործքերը որ կարող եղած ես գործել , քու վերջին շունչիդ անոր շնորհացը արդեանցը պիտի ընծայես : Բայց բիրաւոր աշխարհերով ծախու առնուելու արժանի ուրախութիւն մը պիտի չգցան , երբոր խորհիս թէ « Ենոր շնորհքը որ քու վրադ է , պարագ բան մը չեղաւ » , (Կն ԱրթնՆ . ԺԵ . 10 ,) այլ երախտագէտ սիրոյ խոնարհ սկզբունքէ մը շարժեալ քու երկնաւոր շայրդ փառաւորեցիր երկրիս վրայ , և շափով մը , թէպէտ ոչ թէ ճիշդ փափաքած կատարելութեամբդ , « լմնցուցիր ան գործը՝ որ քեզի տուեր էր ընելու » . Յովհ . ԺԷ . 4 . և այնքան տարի երկնից սահմաններուն մօտ ապրեցար , և ջանք ըրիր սիրտդ ու կեանքդ անոր բնակիչներուն բնութեանն ու վարուցը յարմարցընել :

8 . Եւ դարձեալ , կ'աղաչեմ՝ քեզի որ փառաց աշխարհը մտած ատենդ , (թէ որ աստուածացին ողորմութիւնը քեզ հոն տանի , որ կը յուսամ թէ աս երջանիկ դէպքը պիտի ըլլայ) աս նիւթին վրայով ինչ համարում ունենալիքիդ վրայ խորհիս հիմա : Չե՞ որ աս սուրբ ընթացքին վրայով բազմահոգ կամ անփոյթ ըլլալէդ կատարում ունի հոն ընդունելութիւն գանձելդ : Ենտարբե՞ր բան մը պիտի երևնայ ամէնօրջեալ Յիսուսի աչքին , որ հոն պատկները կը բաժնէ , և աթոռները ամէն մէկուն կու տայ , թէ արդեօք դուն իր յոյժ նախանձաւոր՝ թէ անփոյթ ծառաներէն ես : Ենչուչա պիտի ուզես որ « քեզի առատապէս շնորհուի մեր Տէր Յիսուս Վրիստոսի յախտնական թագաւորութիւնը մտնելը » . Ը Ալեք . Կն . 11 . և « ամէն ատեն աս գործին մէջ աւելնալէն » ի գատ՝ ուրիշ ի՞նչ բան կրնայ ստուգիւ տանիլ քեզ անոր : Կն ԱրթնՆ . ԺԵ . 58 : Չես կրնար ան փառաւոր վիճակին վրայ այնքան նուաստ բանի մը պէս խորհիլ , որ երևակայես թէ հոն չորս դիդ պիտի նայիս մէկ ներքին վը-

Հատուցութիւնով մը , և ըսես սրտիդ մէջ [Թէ՛ ընդու- նած ժառանգութիւնդ իր արժէքէն աւելի բանի տեղ դրած , ու պէտք եղածէն աւելի տննչանօք անոր ետեւէն ինկած ես : Անշուշտ պիտի շքանդատիս [Թէ՛ քու խոր- հուրդներուդ ու խնամքներուդ չափէն աւելի մեծ մասը դրաւած էր ան . այլ ընդհակառակն , շատ պատճառ ու- նիս հաւատալու որ՝ եթէ մէկ բան մը կայ հոն որ կրնայ քու բարկութիւնդ շարժել ու քեզ վշտացընել , սա ըլ- լալու է՝ [Թէ՛ այնքան բազմաթիւ շարժառիթներուն և այն- քան բազմաթիւ պատահութիւններուն մէջ՝ այսպիսի վարձք մը ձեռք ձգելու համար աւելի շահեատեցար :

9 . Իայց այսպիսի պայծառ նիւթի մը վրայ պիտի շեր- կարեմ , վասն որոյ պիտի վերջացընեմ գլուխը՝ միտք ձգելով որ եթէ կրօնքի մէջ անկատար յառաջադիմու- թիւններով դո՛հ եղած կը ձգես ինքզինքդ , և ունեցածէդ աւելի հաստատուն ու մարտւոյ հոգեւոր փիճակի մը վրայ կը նայիս շփակնրած մէկ բանիդ պէս , անկեղծութեամբ՝ հետամուտ չըլլալ որոշած մէկ բանիդ պէս , ասոնցմէ ա-ւելի մահարեւը նշան մը չենք կրնար երեակայել [Թէ՛ դուն բոլորովին օտար ես անոր առաջին սկզբունքներէն :

Ա ի բլ ի Կաղապարստանն պէս Իսուն՝ իւր անցընելու փոփոխող Հոգնոյն յարմար աղօթք մը :

Ո՛վ ամենօրնեալ Աստուած , չեմ կրնար աս ձեռնար- կութիւններուն զօրութեանը դէմ կենալ . ո՛հ [Թէ՛ անոնց մշտապէս ներդործութիւնները աւելի զգայի : Դուն էու- թեան և երջանկութեան մեծ աղբիւրն ես . և ինչպէս իմ էութիւնս քեզմէ ծագած է , անսակ ալ իմ երջանկու- թիւնս ուղղակի քեզմէ կը բղխի . և որքան աւելի մօտ գամ քեզի , այնքան առաւել մարտւոյ ու քաղցր կ'ըլլայ վտակը : " Անայց աղբիւրը քու քոյգ է . քու լուսովո- լոյս պիտի տեսնեմ " : Սաղմ . ԼԳ . 9 : Իմ յոյսիս մեծ նպատակն է յախտեանս քեզի հետ բնակիլ : Տուր ինձի հիմա ան ուրախութեան մէկ նախկին ճաշակը : Ա՛ղապա՛ւտ տուր որ փորձը առնեմ " ան մարդուն երանու- թեանը , որ Տէրովնէն կը վախնայ , ու անոր պատուի- րանքներուն շատ կը հաւանի " , (Սաղմ . ՃԺԷ . 1 ,) և քու

չնորհօքդ այնպէս բրէ իմ սիրտս , որ « Մէն օր Տէրոջը
փախին մէջ ըլլամ » : Մատթ . Իբ . 17 :

Թող արթնեցած ատենս իմ խորհուրդներս առ քեզ
ուղղուին . և իմ աչքերս բացած ատենս աչքերուս զար-
կած լուսոյ առաջին ճառագայթին հետ մէկտեղ՝ « ո՛վ
Տէր՝ քու երեսիդ լոյսը իմ վրաս ծաղէ » : Սաղ . Գ .
6 : Արբոր իմ կարողութիւններս կ'արթննան ան անօգ-
նական վիճակէն , որուն մէջ կը կենային՝ քանի որ քունի
մէջ թաղուած և իրր թէ ոչնչացած էին , շնորհէ՛ որ իմ
առաջին գործքերս քեզի նուիրեմ՝ ո՛վ Մատուած , որ ինձի
լոյս կու տաս , որ ամէն առտու որպէս թէ նոր կեանք մը
և մէկ նոր բանականութիւն մը կու տաս : Արողացուր
զիս որ որդիական յարգութեամբ՝ համարձակութեամբ՝ և
սիրով սիրտս քու առջևդ թափեմ : Աւ ըլլայ որ մտիկ
ընեմ ես Մատուծոյ , ինչպէս որ կը փափաքեմ՝ որ ան ալ
ինձի մտիկ ընէ : Շնորհէ՛ որ քու խօսքդ մտադրու-
թեամբ և հաճութեամբ կարդամ : Իմ հոգիս անոր կա-
ղապարէն իր տպաւորութիւնը առնէ , և « իմ սրտիս
մէջը պահեմ անխկայ , որ շնորհանքով քեզի դէմ » :
Սաղ . ճԹԹ . 11 : Հոն ցուցուած մեծ շարժառիթնե-
րէն շարժուած , շնորհէ՛ որ ամէն առտու ինքզինքս նորէն
քեզի նուիրեմ , քու սիրելի Արդւոյդ Յիսուս Քրիստոսի
միջոցով . և անկէ ամէն օր քու ամենօրնեալ Արդւոյդ
պարգևները առնեմ , որուն ազդեցութիւնները իմ հոգ-
ւոյս կեանքն են :

Աւ այս կերպով պատրաստուելով՝ ո՛վ Տէր , ձեռքէս
բռնած առաջնորդէ՛ զիս օրուան ամէն պարտաւորութիւն-
ներուն և դիպումներուն : Ան կոչումին մէջ , որուն
հաճեցար զիս կոչել , շնորհէ՛ որ կենամ քեզմով , (Կ
Պորն . է . 20 ,) ոչ թէ « ջանքի մէջ թուլասիրտ ըլլա-
լով » , այլ « հոգիով բորբոքելով և Տէրոջը ծառայե-
լով » : Սաղ . ԺԲ . 11 : Շնորհէ՛ որ ժամանակին
յարգը գիտնամ , և միշտ ամենէն օգտակար կերպով
գործածեմ անխկայ այնպիսի պարտաւորութեանց մէջ , ո-
րոնք որ ինձի սահմանած են , որքան նուստ ալ որ երե-
նան , կամ որքան ցաւալից ալ որ ըլլան : Շնորհէ՛ ո՛վ
Տէր , որ կենաց ամէն գործքերուն քու փառքիդ համար հե-

տամուտ ըլլամ, և անոր տիտիաներնեքը քու փառքիդ համար փնտռեմ: «Թէ՛ ուտեմ՝ թէ՛ խմեմ՝ և թէ՛ ի՛նչ գործ որ ընեմ», (Թ Կորնթ. Ժ . 31 ,) շնորհէ՛ որ տակաւին աս վախճանը աչքիս առջևը ունենամ, և անոր հասնիմ: Եւ թող ամէն տիտիանքս, և ամէն անգամ գործքէ հանդըստանալս, քեզի առաւել մեծ գորութիւնով ու սրտումով ծառայելու պատրաստէ զիս:

Թող իմ աչքս հսկէ՛ քեզմէ՛ եկած շնորհքները դիտելու, և քու ձեռքդ անոնց մէջն ըլլալուն վրայ ունեցած երախտագէտ զգացումս՝ անոնց ամենուն վրայ փառքական համ մը աւելցընէ: Եւ երբոր նեղութիւններ կու գան, որոնց պէտք է որ սյապիսի աշխարհի մը մէջ միշտ ակնկալեմ, շնորհէ՛ որ յիշեմ թէ՛ քեզմէ՛ կու գան անոնք . և թող աս բանը կատարելապէս զիջանի՛լ տայ ինձի, քանի որ հաստատ կը հաւատամ թէ՛ ան նոյն սէրը՝ որ մեր ամէն աւուր հացը կու տայ, մեր ամէն աւուր խաշն ալ մեզի կը խրկէ . և կ'ուզեմ որ սորվիմ՝ անիկայ վերցընել, որպէս զի իմ սիրելի Տէրոջս հետեիմ, (Մատթ . Ը . 34 ,) ինձի համար Գողգոթի լեռը ելած ժամանակը՝ ցուցուցած ողիին պէս ողիով մը, և անոր նման ըսելով թէ՛՝ « Ե՛ն զաւթը որ շայրը ինձի տուաւ, պիտի չմտնեմ »: Հովհ . Ժ Ը . 11 : Եւ երբոր « փորձութեան մէջ՝ կ'իյնամ » ով Տէր, « չարէն զիս ազատէ »: Մատթ . Կ . 13 : Կ'աղաչեմ՝ քեզի ճանչցուր ինձի իմ տկարութիւնս, որ իմ սիրտս քեզի հառաչէ պէտք եղած գորութիւնը ընդունելու: Երբոր ընկերական խօսակցութիւններու մէջ կը մտնեմ, թող իմ փախաքս ու փոյթս ըլլայ կարելի եղածին չափ օգուտ ընել և օգուտ չափել անկէ . և միշտ կենաց մեծ վախճանները կատարեմ՝ քեզ պատուելով և աշխարհիս մէջ օգտակար գիտութիւն ու երջանկութիւն տարածելով: Եւ երբոր առանձին կը մնամ, յիշեմ թէ՛ « իմ երկնաւոր շայրս իմ հետս է » . և քու ներկայութեանդ հաճութիւնը վայելեմ ու անոր կենդանացուցիչ գորութիւնը զգամ, որն որ իմ հողուոյս մէջ եռանդուն տենչ մը կը յարուցանէ այնպէս խորհելու և գործելու՝ որպէս թէ քու առջևդ:

Թող իմ օրերս ասանկ անցնին, և միշտ քու երկիրդիդ

մէջ ու քու ներկայութիւնդ ճանչնալով իրիկուն ընեմ : Ինծի հետ եղիբ՝ ո՞վ Տէր , իմ երկեցեան առանձնութիւններուս մէջ : Եւ որհէ որ ամենայարմար ժամանակն ընտրեմ աս բանիս համար , և դգու շուրթեամբ մտադրութիւն ընեմ ընթերցման և աղօթքի . և երբոր իմ վարքս քննեմ , շնորհէ որ անաչառ մտօք ընեմ ան : Թող անձնասիրութիւնը սուտ զոյն մը շտայ անոր , այլ ինքզինքս դատեմ՝ Տէրովմէղ դատուիլ ակնկալողի և քեզմէ հաւնուիլ ցանկացողի պէս , որ դուն՝ ո՞վ Տէր , բոլոր սրտերը կը քննես , և « իմ բոլոր գործքերս յախտեան չես մտնար » : Մտա . Ը . 7 : « Թող իմ աղօթքս խունկի պէս քեզի շխտուի , և իմ ձեռքերուս վեր վերցընելը առտուան և իրիկուան պատարագին պէս » : Սող . ճխն . 2 : Իմ կարողութիւններս քաղցր անդորրութեամբ և խաղաղութեամբ քունի տամ . գիտնալով՝ որ Տէրովմէղ համար անցուցի օրս , և ուրախութեամբ մտահ ըլլալով՝ թէ իմ Տէրս Յիսուս Քրիստոսի միջոցով քեզմէ ընդունուած եմ , և խոնարհութեամբ անոր միջոցով քու շնորհացդ ապաւինելով , թէ իմ օրերս երկար ըլլան երկրիս վրայ , և թէ անոնց կէսին մէջը՝ մնացած տարիներէս զրկուիմ : Առայ . Ը . 10 : Թէ որ մահը կամաց կամաց գայ ինծի , թող աս ընթացքին մէջ գտնէ զես . և եթէ յանկարծակի աս աշխարհէս ելլելու կանչուիմ , թող իմ վերջին օրերս ու ժամերս այսպիսի կերպերով անցուցած զանուիմ , որ աս ժամանակաւոր ծառայութիւններէս քաղցր և դիւրին ճանապարհորդութիւն մը ընեմ ու անցնիմ ան անմահ վիճակին անհունապէս առուել ազնիւ ծառայութիւններուն : Մտիկայ կը խնդրեմ անոր միջոցով , որ՝ քանի որ երկրիս վրայ էր , ամենայն առարկնութեան և շնորհաց ամենագեղեցիկ զաղափարն ու օրինակն եղաւ , և հիմա կենդանի է ու կը թագաւորէ՝ քեզի հետ , « բոլորովին կարող ապրեցընելու » : Աք . Է . 25 : Մտն բան լմնցընելով , խոնարհ խոստովանութեամբ՝ թէ « Ես անպիտան ծառայ » մըն եմ , (Առ . Ժ . 10) անոր վերահաս , որուն փառք յախտեանս յախտեմից . Մտն :

ԳԼՈՒԽ ԻԵ

Մէկ պտուղ-նիւն իւր ան տնիւ- փորշո-նիւններուն գիւմ , որոնք գիւտախիբի բրիտանիան զերբոքեալ ընթացակէ կը խո- րորեցնեն :

1 • Ինքզինքը Մատուծոյ նուիրելով և անոր հետ հա- զորդակցութիւն ունենալով կեանքն անցընողին հաճու- թեանն ու օգտին նկարագրութիւնը որ վերը ստորագրեցի , կը յուսամ թէ՛ իմ սիրելի ընթերցողս , քեզի քանի մը դիտաւորութիւններ կազմել , և մէկ ջանք մը ընել պի- տի տայ՝ զանիկայ ձեռք ձգելու : Բայց իրերուն բնու- թիւնը նկատելով և անոնց ընթացքը գիտելով շատ յայտնի կ'երևի թէ՛ ան ընդհանուր ընդդիմութեանն 'ի զատ , որուն համար առաջ ըսի թէ հաւանական է որ պի- տի պատահիս հոգևոր ընթացքի մը սկսած ատենդ , պիտի տեսնես՝ մինչև անգամ հաստատ որոշուածով անոր յաղ- թեւէդ ետքը՝ որ դերաստիճան բարեպաշտութեան հասնե- լու՝ և նշանաւոր կերպով խտակրօն ու շինութիւն տուող ընթացք մը վարելու ջանքերուդ մէջ բազմաթիւ արդելք- ներ պիտի ելլեն դէմդ քու ամէն աւուր ձամբուդ մէջ , և քանի որ մէկ քանի հաստատուն ջանքերով առջի տեսակ թնամիներէն մէկ քանիները կը յաղթես , ասոնք մշտն- ջնատարապէս պիտի նորոգեն իրենց յարձակումները , և մէկ զօրաւոր մարտ մը հաստատելու ևս շարունակ անոնց դէմ : Այսան որոյ թողութիւն չնորհէ՛ որ անոնց գլխա- ւորներէն մէկ քանիներուն դէմ մասնաւոր զգուշութիւն- ներ տամ : Իսկ հոս կ'ուզեմ սա ցուցնել թէ՛ մեծ դժուարութիւններ կը ծագին անհոգութեան և զուարճու- թեանց սէր տալէն , ունայն ընկերութիւններէ և աշխար- հային հոգերէ : Բոնց ամէնն ալ մեծ որոգայթ են ամէն մարդու , մասնաւանդ մատաղ հասակի մէջ եղողներուն , որոնց մասնաւոր նկատում մը ընել կ'ուզեմ հոս :

2 • Այսան որոյ նախ և առաջ կ'աղաչեմ՝ քեզի որ զոյշչ

դէմ գործելով , թէև միայն կէս ժամ անցընելու մտօր ալ ըլլայ , տակաւին մէկ աստիճան յանցանք մը գործած կ'ըլլաս , և մէկ սովորութիւն մը կը ստանաս , որ իր ետեւէն կրնայ շատ դէշ հետևութիւններ բերել : Այսին որոյ քննէ՝ տես թէ ինչ պարտաւորութիւններ ունիս կատարելու և ինչ ատենի մէջ : Մտքիդ մէջ դադարաբար խոհեմութեամբ ձեռնարկ՝ որքան որ կրնաս . և հաստատ որոշմամբ 'ի գործ դիր զանիկայ՝ թէ որ մէկ անակնկալ պատահմունք մը չծագի , որմէ հետևեցընես թէ պարտաւորութիւնք քեզ ուրիշ ճամբու կը կանչէ : Այտր է սյապխի յանկարծական ընդմիջահաստութիւններու տեղի տալ . բայց թէ որ աս պատճառաւ կը ստիպուիս հարկաւոր բան մը մէկդի ձգել՝ որ միտքդ դրած էիր այսօր կատարել , թէ որ կարելի է վաղը բռէ անիկայ . և մինչև որ ձեռքիդ գործը չմնցընես , ուրիշ գործի մը ձեռք մի զարնես . բայց միայն երբոր զանիկայ իրօր ոչ միայն առաւել զուարճալի , այլ նաև կարևորագոյն դատես : Այս միշտ յիշէ՛ թէ Վրիստոսի ծառան սա բանին նայելու է որ՝ սյապխի աստիճաններ իր ընկերք որոշումը որպէս թէ իր Տէրօջը առջևը ընէ :

3 . Ասե զգոյշ եղիր որ զգայական և մարմնաւոր զուարճութեան վրայ չափազանց սէր չունենաս . քանզի աս մեծ արգելք կ'ըլլայ քեզի ան հոգևոր ընթացքին մէջ , որուն մէջ քայլել խրատեցի քեզ : Չես կրնար չգիտնալ որ Վրիստոս ըսաւ մեզի՝ թէ մարդ պէտք է իր անձը ուրանայ , և ամէն օր իր խաչք վերցընէ , (Առ . 1 . թ . 23 ,) թէ որ կ'ուզէ իր աշակերտն ըլլալ : Վրիստոս՝ Աստուծոյ Արդին , “ ամէն բաներուն անդրանիկն ու ժառանգորդը , չէ թէ իր անձին հաճոյ եղաւ ” , (Առ . 1 . թ . 3 ,) հասցա՛ պարտաւորութիւն սեպելով , Աստուծոյ փառքին ու մարդոց փրկութեանը համար յանձնառու եղաւ չքաւորութեան՝ դժուարութիւններու՝ և նեղութիւններու , որոնցմէ ոմանք յետին աստիճան էին : Այս կերպով անոր ետեւէն երթալու ենք . և որովհետև չենք գիտեր թէ որքան շուտով կրնայ ըլլալ որ կանչուինք՝ “ արիւն թափելու չափ պատերազմելով հակառակ կենալու մեղքին ” , (Եբ . 1 . թ . 4 ,) վասն որոյ ստուգիւ բարի է փարժեցը-

նեւ ինքզինքնիս աս կրթութեանը՝ որն որ կարելի է թէ կանչուիք՝ ի դորձ զնեւ մինչև անգամ ասանկ յետին աստիճանով : Վրասուկ և թուլամորթ կեանքը՝ զորութիւն կու տայ փորձութեանց , որոնց դիւբաւ դէմ կրնայ զնեւ ան՝ որ սովորած է « նեղութիւններու համբերել Վրաստոս Յիսուսի բարի զննութիւն մը պէս » : ԸՍԷ . ք . 3 : « Ասե աս աշխարհիս կը յարէ մարդս , և ուզել շտար որ անիկայ ձգէ , որն որ չվայլեր անոնց՝ որ օտարական ու ճամբորդ են երկրի վրայ , և ակն ունին շուտով ան լուսազոյն երկիրը կանչուելու , որուն « կը փափարէին » : ԵԳԷ . Ժ . 13 , 16 : Ասոր վրայ աս ալ աւելցընեմ թէ՛ աշխարհին հաճելի կեանք կոչածը հարկաւորապէս բազմաճախ կեանք մըն է , և թերևս քեզ կ'առաջնորդէ՛ ինչպէս որ շատ ուրիշներն ալ առաջնորդած է , մասնաւորապէս անոնք՝ որոնց առջևը նոր կը բացուի աշխարհը , « Ատիսխանամութեան դրած շափէն անդին անցնիլ , և այսպէս՝ զեղևութեամբ ժամանակ մը անցընելէն ետքը , մէկ մեծ չքաւորութիւն մը յառաջ կը բերէ : Այլ թէպէտ ճշմարիտ է որ զթութիւն ցուցընելու է աղքատներուն , բայց աս այնպիսի աղքատութիւն մըն է որ իրաւամբ անարգելի է , քանզի մարդուս իր յիմարութեանը արդիւնքն է . և երբոր քու « կարօտութիւնդ սպառազինեալ մարդու պէս կու գայ » , (Մատ . Գ . 11 ,) ոչ միայն ինքզինքդ զբեկուած պիտի գտնես ան կարողութենէն , որն որ եթէ այս կերպով չվարուէիր կրնայիր ձեռքդ պահել այնպիսի զբթութեան գործքեր ընելու համար՝ որոնք քրիստոնէական դաւանութեան զարդարանք են , այլև հաւանականաբար զորաւոր փորձութեանց տակ պիտի ըլլաս՝ նուաստ ֆարքներ կամ անարգ կեղծաւորութիւն բանեցընելու , քրիստոնէական բնաւորութենէ և ուղիղ մարդու մը բնաւորութենէն շատ վար : Շատերը՝ որոնք միանգամ իստիք քրիստոնէայ կը դաւանէին ինքզինքնին , ժամանակ մը այսպիսի տրամալից և գայթակղեցուցիչ ֆարքներ բանեցընելէն ետքը , սնանկութեան ամենալատթար վատահամբաւութեանը մէջ ինկած են . բնէ կ'ուզեմ անոնք՝ որ ճշմարտիւ ուրիշինն եղած ստացուածքը իրենց վասնած են , և անանկով ժրջանին փնաս հասցուցած կամ թերևս կոր-

Ծանած են զանկիայ , յխմար՝ զեղի՝ և անախառ իղձ մը յազեցընելու համար , որն որ՝ յազեցուցած ժամանակնին իրենց ընտանեացը ամօթ էր , և երբոր այլ ևս չեն կրնար յազեցընել , իրենց տանջանք է : Ասիկայ սոսկալի նախատինք մըն է կրօնքին . այնպիսի նախատինք մը՝ որ մէկ բարի մարդ մը յաւէտ կ'ընտրէ լոկ հացով ու ջուրով ապրիլ , կամ մինչև անգամ չքաւորութենէ մեռնիլ , քան թէ սրտաճառ ըլլալ անոր :

4 . Այն ան որոյ կ'աղաչեմ քեզի՝ զգոյշ եղիր ան ամէն բանէն որ դէպ 'ի ան ճամբան կը տանի , մասնաւորապէս գործի մէջ ժրաջանութիւն , և ծախքի մէջ՝ խոհմութիւն ու շահաւորութիւն բանեցընելով . որոնք Աստուածային օրհնութեամբ մէկ բարեյաջող ազեցութիւն մը կ'ունենան գործքերդ յաջող՝ առողջութիւնդ գորաւոր՝ և միտքդ խաղաղ ընելու : Ապց ասիկայ չկրնար ըլլալ՝ առանց հաստատուն հսկողութիւն ընելու քու վրադ , և արհարար մերժելու հաւանութիւն տալ այնպիսի փորձութիւններուն՝ զորս ծուլութիւնը կամ հեշտասիրութիւնը առջիկ կը դնէ շատ հրապուրիչ ձևերով , և անոնց համար ջատագոյնութիւն կ'ընէ՝ թէ շատ քիչ բան կը պահանջեն : Զգոյշ եղիր , չըլլայ որ աս բանին մէջ ան անմիտ ծնողացը նմանիս , որոնք՝ իրենց տղոցը ամէն ուզած բանը տալով , ուժ կու տան անոնց՝ որոնք անզգալի աստիճանաւ աւելի կը բռնանան ու իշխողաբար իրենց ուղած բաները կը սրահանջեն . որպէս թէ կ'ուզեն անոնց հետ իրենք ալ կործանիլ , քան թէ անոնց դէմ դնել ոչինչ բանի մը մէջ : Յիշէ՛ և նկատէ՛ ան դերագանց խօսքը , որն որ հազարաւոր մարդոց կործանմամբը ճշգրտեալ կրնաքեալ է . « Են որ փոքր բաները կ'արհամարհէ , կամաց կ'իջնայ » :

5 . Արեմի՛ ներում շնորհէ ինձի նաև որ սրտանց և քաղցրութեամբ զգուշացընեմ քեզ՝ իմ սիրելի՛ ընթերցողս , ունայն ընկերաց որոգայթներէն : Եռաջի պէս՝ ան ընկերներուն վրայոք չեմ խօսիր որ յայտնապէս անառակ ու ամբարիշտ են , քանզի կը յուսամ թէ հիմա բնաւորութեանդ ու տեսութիւններդ մէջ մէկ բան մը կայ , որ այնպիսիներէն քեզ մէկդի դարձընել կու տայ զգուա-

նօք և ստկումով : Բայց կ'աղաչեմ քեզի՝ որ նկատես թէ ան ընկերներն աւելի վտանգաւոր են , որոնք 'ի սկզբան քիչ երկիւղ կու տան . ըսել կ'ուզեմ անոնք՝ որ թէպէտ կրօնքի յայտնի թշնամի և մոլութեան ու անկարգութեան յայտնի հետևողներ չեն , բայց այսու ամենայնիւ փորձաւական զգացում չունին իրենց սրտին մէջ աստուածային իրերու վրայ , որքան որ անոնց խօսակցութենէն ու կենցաղավարութենէն կրնանք դատել : Հարկաւ շատ անգամ այսպիսի անձանց հետ պիտի գտնուիս . և քրիստոնէութիւնը ոչ միայն կը ներէ , այլ կը պահանջէ ալ որ անոնց հետ հաղորդակցութիւն բրած . ամէն պատշաճ առիձներդ՝ անոնց հետ քաղաքավարութեամբ ու յարգանքովարուիս . բայց այսպիսիները քեզի մտերիմ բարեկամ մի ընտրեր , և քու պարագութեան ժամերուդ շատերը անոնց հետ մի՛ անցընէր : Այսն զի այսպիսի հաղորդակցութիւնը զգալի հակամիտութիւն մը ունի մարդուս հոգին Մտուծմէ օտարացընելու , և անոր հետ հոգևոր հաղորդակցութեան անյարմար ընելու : Ես բանին խելքդ պատկելու համար՝ բաւական է որ մտնուաս քու փորձառութեանդ վրայ , որ ասնն ժամերով այսպիսի բնութեան տէր մարդոց մէջ կը գտնուէիր : Ինքզինքդ անանկ ատեն ջերմեռանդ զգացումներու անյօժար չե՞ս գտներ : Չե՞ս տեսներ որ՝ սիրող անզգալի աստիճանաւ կամաց կամաց կը հակամիտի աշխարհիս յարելու , և ներքին ցրտութեամբ մը նայելու ան իրերուն ու գործքերուն վրայ՝ որ բանականութիւնն անոնց կ'առաջնորդէ մեզ իբրև ամենազնիւ և ամենարարի բաներ : Նկատէ՛ առաջին նշանները , և ըստ ժամուն զգոյշ եղի՛ր որոգայթէն . և աս նպատակին համար՝ ջանք ըրէ աստուածապաշտութեան վրայ հիմնուած՝ և անով հաստատուն կեցող բարեկամներ ունենալ : “Անոնց հետ ընկեր եղի՛ր որ Մտուծմէ կը վախնան , ու անոր հրամանները կը պահեն” : Սող . ճԺԺ . 63 : Եղէկ գիտես որ Մտուծոյ առջևը “անոնք են երկրիս պատուականները” . վասն որոյ թող “անոնց վրայ ըլլայ քու բոլոր հաճութիւնդ” : Սող . ԺԷ . 3 : Եւ որպէս զի անոնց բարեկամութեանը մասնաւոր օգուտը չկորսուի , ջանք ըրէ որ անոնց հետ անցուցած ժամերդ ըստ կարի օգ-

տակար կերպով անցընես : Մարդոց ամենէն խնաստունը գիտեր է որ՝ երբոր « մարդու մը սրտին մէջի խորհուրդը խորունկ չուրերու պէս է » , այսինքն՝ խորունկ ու ծածկուած է , « խելացի մարդը զանիկայ կը հանէ » : Մատթ . Ի . 5 : Այսան որոյ ջանք ըրէ ասանկ պատեհութիւններու մէջ՝ որքան որ վայելուիթեամբ և դիւրութեամբ կրնաս , խօսակցութիւնը հոգևոր նիւթի վրայ դարձընել : Աւերբոր ծանրակշիռ և օդատակար նիւթերու վրայ կը խօսուի , անոնք աղէկ միտքդ պահէ , և մշակէ՝ և առ նպատակին համար թող « Բրիտանի խօսքը քու մէջդ բնակի առատապէս » , (Սող . Գ . 16 ,) և ամէն ատեն « քու խորհրդականդ ըլլայ » : Սող . ճԹԹ . 24 :

6 . Թէ որ ասանկ ըլլայ , ան քեզ ազահով պիտի ընէ՝ ոչ միայն ծուլութեան ու շռայլութեան որոգայթնեւրէն , այլ ամէն շար օրինակի ազգեցութիւններէն : Աւնակ քեզ պիտի զգուշացընէ՝ որ անանկ չափազանց հետամտութիւն չընես աշխարհային գործոց , որ քու ժամանակդ ու խորհուրդներդ գրաւեն , և անով Մտուծոյ « խօսքը խեղճեն » , և զանիկայ՝ թէ որ բոլորովն ալ չէ , գէթ մէկ չափով մը « անպտուղ » ընեն : Սող . ԺԳ . 22 : Արիտասարդներն ընդհանրապէս անվիհեր բնութիւն ունին . բարդատարար քիչ փորձառու ըլլալով գործքի նեղութեան՝ և կենաց ձախորդութեանցն ու արդեւրաներուն , դիւրաւ իրենց երեակայութեանը մէջ կ'ոչնչացընեն զանոնք , և այնպէս կը կարծեն թէ իրենց ողին՝ իրենց ջանքն ու շարքը կարող պիտի ըլլայ գէժ գնել ու յաղթել ամէն արդեւրի և խօչնդոտի : Բայց փորձը ուրիշ կերպ կ'եղէ : Այսան որոյ կ'աղաչեմ՝ քեզի՝ զգոյշ եղիք որ պէտք եղածին պէս կառավարելու կարող եղածէդ աւելի բազմութիւ գործքերու մէջ շօթես ինքզինդդ . այսինքն՝ այս կառավարելու բաներուդ մէջ այնչափ մտնես , որ կարենաս քու հոգւոյդ հոգը ու Մտուծոյ ծառայութիւնը կատարելու , որոնք ստուգիւ ամեննին պէտք չէ զանց ընել : Արիտաւ ճշմարիտ է՝ որ աշխարհային շահուղ վրայ ունեցած խոհեմ՝ նկատումդ ալ այսպիսի զգուշութիւն մը կը պահանջէ . ինչպէս որ յայտնի է ամէն խնամք գիտողին , որ շատերը սնանկացած են՝ իրենց կարողութենէն

մեր բանի ձեռք զարնելուն համար : Աստի շատ անգամ տեսնուած է թէ՛ քանի որ հարուստ ըլլալ որոշած կ'երևնան , իբրք "ինքզինքնին շատ ցաւերու մէջ ձգած են" , (ւն Տէ՛ . Գ . 10 ,) իրենց ընտանեացը կործանմանը պատճառ եղած , և իրենց հետ շատ ուրիշներն ալ կործանման մէջ ձգած են : Բանի որ՝ եթէ կարենային զո՛հ ըլլալ չափաւոր գործքի և չափաւոր շահի , կրնային գործքելուն մէջ յաջողիլ , և կրնային կամաց կամաց աստուածային օրհնութեամբ մեծ և պատուաւոր յառաջադիմութիւն մը ձեռք ձգել . Բայց թէ որ աս կողմանէ ամենեկն վախճալու վտանգ մը չկենայ ալ , թէ որ հարուստ ըլլալու համար ձեռք զարնելիք գործքերու մէջ վրադ գալիք շինթութիւններն ու նեղութիւնները ստոյգ զխոցածիդ չափ՝ հարուստ ու մեծ ըլլալուդ ալ վտասը ըլլաս , կ'աղաչեմ՝ քեզի նկատե՛ թէ տակաւին որքան վտանգաւոր են ան վախճալութիւնները : Նկատե՛ թէ որքան անգամ մինչև անգամ "սեղանը որոգայթ , ու յաջողութեան տեղ վարձ կ'ըլլայ" : Սաղ՛ . ԿԹ . 22 : Այ՛ մոռնար ան կարճ դասը , որ կը պարունակէ այնքան բարձր իմաստութիւն մը՝ թէ "Սէկ բան մը պէտք է" : Դ . 42 : Եւ մէն օր մոռնու , քանի որ կենաց զուարճացուցիչ և մեծամեծ բաները աչքերուդ առջև կը շողողան , թէ մահը ինչ շուտով պիտի գայ , և իսկոյն զրկէ քեզ անոնց ամենէն . Ինչ շուտ քեզ ան ամէն ստացուածքներէդ պիտի հանուեցընէ՛ բաց 'ի անոնցմէ , որոնք մէկ մերկ հոգի մը կրնայ տանիլ իր հետը յախտնահանութեան մէջ , երբոր իր վրայի մարմինը զերեզմանը կը ձգէ : ՅԵՒԻՏԵՆԵԱԿՆՆՈՒԹՅԱՆ , ՅԵՒԻՏԵՆԵԱԿՆՆՈՒԹՅԱՆ , ՅԵՒԻՏԵՆԵԱԿՆՆՈՒԹՅԱՆ : Ընտր տեսութիւնը՝ թէ որ կարելի է , կենացդ բոլոր ժամերուն մէջ հետդ կրէ , և աղէկ համոզուէ կենաց մէջ անոր համանայն շեղած մէկ գործ մը և մէկ շահ մը չունենալուդ . վասն զի ինչ որ փաստակար է յախտնահանութեան մասին , քու գործդ՝ քու շահդ չէ անիկայ : Յիրաւի՛ կը տեսնես որ մարդոց ընդհանրութիւնը այնպէս կը գործէ , որպէս թէ անանկ կը սեպէ թէ ան մեծ բանը՝ որ Ետուած կը պահանջէ իրմէն իր շնորհքն ընդունելու համար , կարելի եղածին չափ

աշխարհային ինչք ղիղեն է, զոնէ այնքան՝ որքան որ կրնայ առանց խարդախութեան, և առանց ամենուն վնաս տալու: Այսպիսի անձինք ուրիշներուն կ'ըսեն՝ և զուցէ ինքզինքնին ալ կը խաբեն, թէ իրենք մի միայն աւելի օգտակար ըլլալու պատահութիւններ կը փնտան: (այց իրօք՝ թէ որ ուրիշ բան մըն ալ կայ մտքերնուն մէջ օգտակար ըլլալու կարողութենէն 'ի զատ, որ աս՝ երբոր ձեռք ձգեն՝ 'ի գործ շնն դներ, ընդհանրապէս ինքզինքնին կը խաբեն. և մէկ կերպով մը կ'եղծիք մըն է: Հաճախակի՝ և զրեթէ միշտ մարդիկ աշխարհը կը փնտան, կամ՝ որ կարենան հարստութիւն ղիղել իրենց անարգ և վատ փափաքը կշտացնելու քանի որ կ'ազդին՝ անոնց վրայ նայելով, և խորհելով թէ երբոր ալ մեռնին, իրենց համար պիտի ըսուի թէ այսքան հարիւր կամ հազար քանակ ստակ ձգեցին իրենց կտին, որն որ շատ հաւանական է թէ իրենց զուկըները կամ ժառանգորդները որոպայթի մէջ պիտի ձգէ: (քանզի աս սնապարծութիւնը միայն զուկի տէր եղողներուն յատուկ չէ.) կամ՝ որ կարենան հարբստութիւննին իրենց ցանկութիւնները յագեցնելու համար վատնել, և ինքզինքնին հետութեան հեղեղի մը մէջ խեղդել, որուն մէջ՝ թէ որ բանականութիւնը չկորսուի ալ, բարեպաշտութիւնը բոլորովին կը խեղդուի, և անոր հետ ան ամէն աղնիւ զուարճութիւններն ալ՝ որոնք կրնան մարդուս սրտին մէջ մտնել: Այս կերպով՝ հարուստ մարդոց ընդհանրութիւնը՝ ինծի աղքատներէն շատ աւելի կարեկցութեան առարկայ կ'երենայ. մանաւանդ՝ սեպելով թէ երկուքն ալ առանց Աստուծոյ երկիւղը իրենց աշխրուն առջևը ունենալու ապրին, (որ շատ անգամ կը հանդիպի,) հարուստները իրենց պարգևուած աւելի շատ և առատ շնորհքները շարաշար գործածելուն համար, անզեղ մեղաւորներուն սպասող ան սպասնի կորստեան աշխարհին մէջ հաւանականաբար աւելի սաստիկ զգացում մը պիտի ունենան իրենց թշուառութեանը վրայ:

7. Այս որպէս զի շրջայ որ ինքզինքդ այսպիսի վտանգէ ազատ համարիս, աս կ'ըսեմ՝ քեզի՛ իմ սիրելի՛ ընթերցողս, թէ մեծ պատճառ ունինք՝ վախնալու որ հիմա շատերը կան յոյժ թշուառ վիճակի մէջ, որոնք ատեն մը՝

նոր գործի ձեռք զարկած ատեննին երբ դեռ ստորին վիճակի մէջ էին, մեծ եռանդով կը խորհէին հոգեւոր բաներու վրայ • բայց վերջը զՄատուած մամնայի համար մէկդի ձգեցին, և հիմա ինքզինքնին ան ոսկիէ շղթաներուն մէջ կը հպարտացնեն, որոնք ամենայն հաւանականութեամբ քիչ ատենէն խաւարին շղթաներուն մէջ պիտի ձգեն զիրենք : Աւրեմն քանի որ աշխարհիս յարիւր այսպիսի մահաբեր հեռանքներ ունի, թող «քու սիրադ մեղաւորներուն շնախանձի», (Մատ. իդ. 17,) և անոնց ունեցածը ձեռք ձգելու փափաքով այսպիսի յիմարութիւն մը մի գործեր • այսինքն՝ ինքզինքդ սա երկու վտանգին մէջ մի՛ ձգեր • բրած ճիշդ մէջ պարտապը կ'ըլլու, և կամ յաջողելովք ինքզինքդ կորսնցնելու : Վափաքներդ սանձէ՛ • ջանք բոէ քիչով հանդիսս և զո՛հ բլլաւ • և թէ որ Նախախնամութիւնը քեզ աւելի մեծ գործի մը կանչէ, յանձնառու եղիր անոր՝ Նախախնամութեան Հրազանդելով • բայց կենաց փորձութիւններուն կնքը դասէ ան ալ, որուն դէմ կենալու համար աւելի շորհք պէտք է : Ասան զի աղէկ գիտցիր որ, քանի որ գործքերն ու շահերը կը շատնան, հոգերն ու պարտաւորութիւններն ալ անշուշտ կ'աճին, և հաւանականաբար յուսացածներդ ՚ի դերն կ'ելեն ու ցաւերդ ալ կը շատնան հաւասար համեմատութեամբ :

8 • Ա՛րջապէս՝ սորվէ՛ աստուածային շորհքը սա աշխարհիս մեռնիլ • իրբն ցած վիճակ մը համարիլ զանրկայ, որն որ Մատուած բնաւ չսահմանեց իր զաւակներէն մէկուն վերջին և կատարեալ երջանկութիւնը կամ անոր գլխաւոր հոգը բլլալու համար • աշխարհ մը՝ ուր յիբաւի վայելելու բաներ կան, բայց գլխաւորապէս ինքզինքնին վայելելիքը՝ քան աշխարհէն • բայց շատ բան կայ քաշելու համբերութիւնով և Մատուծոյ կամայը հպատակութիւնով, և մեծ պարտաւորութիւններ կան կատարելու, և շատ բաներ սորվելու, որոնցմով յարմար կ'ըլլաս լաւագոյն վիճակի մը, որուն՝ իբրև քրիստոնեայ, մտաես, և որուն Մատուած պիտի կանչէ քեզ գուցէ յանկարծակի, բայց անտարակոյս ամենայարմար ժամանակին և ամենէն աղէկ կերպով, թէ որ ճամբուդ վրայ հաստատուն

կենսա : Այսան որոյ աս ամէնը անոր ձգէ : (Թող աս աշխարհիս վրայ ունեցած յոյսերդ ու երկխոյններդ, անկալութիւններդ ու փառաբաներդ կարեւր եղածին չափ թիւ ըլլան . և որքան որ կրնայ ըլլալ՝ թող բոլոր քու խորհուրդներդ աս միակ կեդրոնին մէջ միասնան թէ՛ Մատուածինչ կ'ուզէ որ աս ներկայ պարագաներուդ մէջ ըլլաս և ինչ կերպ վարքն է ան, որով կրնաս տիրապէս հաճոյ ըլլալ անոր և փառաւորել զանկիայ :

Ես որոգայնէրուան վրանգին դէմ ասորուածայն պաշտպանուելանը ինքրիւս համար՝ դիտարկիլ բրիտանիան ու զԵրեւել :

Ո՞վ ամէնօրնեալ Մատուած, բիւրաւոր որոգայթնութուն ու վտանգներուն մէջէն՝ որոնք զիս ներսէն ու դուրսէն կը պաշարեն, համարձակութիւն տուր ինձի դէպ 'ի քեզ նայիլ իմ սա խոնարհ աղաչանքոյս, թէ՛ “Իմ վերաս ելողներէն իս վե՛ր վերցուր”, (Սաղ . ԺԹ . 1,) և “քու աչքերդ իմ վրաս հաստատէ բարութեան համար” . Երեւ . Իդ . 6 : Արբոր ծուլութիւնն ու անզգայութիւնը վրաս հասնելու ըլլան, արթնցուր զիս ան ունայն երպէն, կենդանի և ազդու տեսութիւններ տալով ան աներկոյթ և յախտնական աշխարհին վրայ՝ դէպ 'ի ուր իմ ընթացքս կ'ուզղեմ : Միտքս ձգէ թէ ինչ անհուն հարկաւորութիւն կայ որ մեծ փութով 'ի բարին դորձածեմ ան վաղանցիկ բոպէները՝ որոնք ինձի սահմանած ևս իբրև իմ պատրաստութեան ժամանակ :

Թէ որ մեղաւորները իս գլխէ հանել ուզեն, ևս անոնց հաւանութիւն չտամ : Եսալ . ան . 10 : Տուր որ քեզի հետ մէկ սուրբ հաղորդակցութիւն մը ունենամ, և ասիկայ ինձի մէկ զգուանք մը տայ քեզմէ օտար եղողներուն՝ և հոգիս քեզմէ բաժնել ուղղողներուն հետ հաղորդակցութիւն ընելէն : Շնորհէ որ “աստուածափախները պատուեմ”, (Սաղ . ԺԵ . 4,) և խնաստուն ու բարի մարդոց հետ պարտելով՝ ինքզինքս ամէն օր խնաստութեան ու սրբութեան մէջ յառաջացած տեսնեմ : Եսալ . Ժդ . 20 : Ո՞վ Տէր՝ զիս անոնցմով զօրացուր, որ ինձմով ալ ուրիշները զօրացընես : Օ՛րի ուրիշներուն սրտին մէջ

աստուածային սիրոյ բողբ արծարծելու և կենդանացընելու բարերազո գործիքը բրէ . և անիկայ սրտէ՝ ՚ի սիրտ անցնելով՝ իր ճամբուն մէջ ամէն բոպէ ածում գանկ :

Պահէ՛ զիս՝ ո՛վ Տէր , մարմնաւոր հաճոյքներուն սէրէն : Տուր որ սրտի մտօք յիշեմ թէ՛ « մարմնաւոր խորհուրդը մահ է » : Լուսնի . Ը . 6 : Այսան որոյ հաճէ՛ մարբէլ և սրբէլ իմ հոգիս քու Աուրբ Լուսնոյդ ազգեցութեամբը , որ միշտ ապօրինաւոր բերկրութիւններէ՛ ուրիշներուն անոնց ետեւէն իյնալէն աւելի փութով փախչիմ . և իմ կենդանական բնութեանս ան վայելմունքները՝ որոնց դուն թողլ կու տաս և որոնք հարկաւոր են իրաց կարգադրութենէն , շնորհէ՛ որ զգաստութեամբ և չափաւորապէս վայելեմ . բայց տակաւին յիշեմ հոգեւոր և իմացական բնութեանս դերազոյն մեծութիւնը , և իբրև իմ ամենազինեքմանկութիւնս ան զուարճութիւնները փնտռեմ՝ որ մարդոց ու քրիստոնէից կը պատշաճին : Եւ շնորհէ՛ որ հոգիս սրբազան մտածութեան թևերով աներևոյթ փառաց սահմանները թռչի . և աստուածային շնորհաց ազգեցութիւններովը ջանամ՝ ինքզինքս պատրաստ ընելու ան հրեշտակային հոգիներուն բնկրութեանը , որոնք քու առջևդ կը բնակին . ազատ՝ ան մեղսալից զուարճութիւններէն՝ որոնցմով մարմնի մէջ բնակող հոգիները շատ անգամ որոգայթի մէջ կ'իյնան , և որոնց մէջ շատ անգամ կը կորանցընեն իրենց նախկին վիճակին յիշատակութիւնը , ու ան ազնիւ յոյսերունը , որոնք միայն ան վիճակին կրնան համեմատ դալ :

Ո՛վ Տէր , ճանչցուր ինձի իմ կուլումս՝ որուն իս կանչեցիր . և հաստատուն կերպով հետեւիլ տուր ինձի իմ պարտաւորութիւններուս : Բայց ազաակ՝ զիս ան աշխարհիս ան չափազանց հոգերէն , որոնք այնպէս կը դրանն իմ ժամանակս ու խորհուրդներս՝ որ « մէկ բան մը պէտք բլլալ » մտնամ : Աշխարհային ստացուածոց վրայ ունեցած փափաքներս սանձէ , անոնց անստոյգ և չազկեցընող բնութիւնը ինձի ցուցընելով . և քանի որ ուրիշները երկրիս վրայ հարստութիւն կը գիլեն , ևս « Աստուծոյ հարստանամ » : Աստուծոյ . ԺԲ . 21 : Երբէք այնպէս չզրապիմ՝ որ քու և իմ հոգւոյս մէջտեղն եղած ան մեծ

գործընթացն չկարենամ նայիլ . ժամանակաւոր գործընթացով
այնպէս չզբաղիմ՝ որ յաւիտենականութեան շահերը զանց
ընեմ : Ընորհէ որ աս աշխարհէս անցնիմ՝ երթամ
սիրոս ու յոյսերս երկինքին վրայ հաստատած . և ձգողա-
կան ազգեցութիւնը առաւել զօրաւոր կերպով զգամ՝
բանի որ աւելի կը մտնեմ ան ցանկալի տեղին . մինչև
որ ան երջանիկ ատենը զայ , երբ ամէն երկրաւոր բաները
տեսութենէս պիտի աներևոյթ ըլլան , և երկնային աշխար-
հին լուսաւոր փառքերը լեցընեն իմ սուրցած և զօրացած
տեսութիւնս , որն որ ան ատենը պիտի ուրախանայ ան
բանով՝ որուն պայծառութեան հիմն չեմ կրնար դիմա-
նալ . Ամէն :

ԳԼՈՒԽ ԻԲ

Հագնոր վեճախն եղբժանն ու խաւալիտանը վրայ :

1 • Թե՛ որ այնչափ բարեբաղդ աստիճանի հասայ՝ որ սոււած յորդորանքներուս ու զգուշութիւններուս համազուած ես , շատ հաւանական է որ հաւատոյ մէջ բերկրութեամբ և մխիթարութեամբ յառաջ պիտի երթաս , և ճամբադ ընդհանրապէս “ ծագող լոյսին պէս պիտի ըլլայ , որ երթալով կը լուսաւորի , մինչև որ կատարեալ որ ըլլայ ” : Եւր. 1 . Գ . 18 : Բայց այսու ամենայնիւ չեմ կրնար ինքզինքս խարել որ յուսամ թէ՛ այնպիսի յաջողութիւն մը պիտի ունենամ , որ քեզ յառաջ տանիմ՝ ազատ ան դանազան զգացումներէն՝ վարմունքներէն և վիճակներէն , որոնցմէ ամենաբարի մարդիկն ալ քիչ շատ նեղութիւն կրած են : Եւստ կը վախնամ թէ՛ որքան ջերմութեամբ ալ որ սրտիդ վրայ տպաւորի իմ ըրած նկարագրութիւնս , թէ՛ և անփոփոխ մտան հաւատոյ և յուսոյ մեծ առարկաներդ , տակաւին անոնց նկատմամբ ունեցած ողիդ պիտի փոխուի : Եւստ կը վախնամ որ միտքդ Եստուծոյ բարի ճամբաներուն մէջ պիտի յողնի ու թուլնայ • այն՝ կրնայ ըլլալ որ հրապուրուիս անոնցմէ դուրս ըլլալ մը առնել , և անանկով որս մը ըլլալ ան փորձութիւններէն մէկ քանիներուն՝ որոնց վրայ հիմա սուրբ արհամարհանօք կը նայիս : Եսոր հաւանական հետեւութիւնը սա պիտի ըլլայ թէ՛ Եստուած իր երեսը քեզմէ պիտի ծածկէ , իր սլառուհասիչ ձեռքը քեզի դէմ պիտի երկընցընէ , և տակաւին պիտի տեսնես տրամալից ժամեր , որքան զուարթութեամբ ալ որ հիմա “ ցնծաս Տերօջմով , և ուրախանաս քու փրկութեանդ Եստուծովը ” : ՄԲ . Գ . 18 : Այսն որոյ կը յուսամ որ՝ եթէ աս յոյժ հաւանական դէպքը պատահի , օգուտ մը պիտի ընէ աս վիճակներուն վրայ հիմա սակաւ ինչ առաւել մանրամասնաբար խօսիլը • և սրտի մտօք աղօթք կ'ընեմ՝ որ անոնց վրայով խօսելիքներս Եստուած քու հոգւոյդ խաղաղու-

Թեանը՝ միսիթարութեանը՝ և զօրութեանը միջոցներն ընէ, և թէ Երբէք թող տայ քեզ ի՛նչ և իցէ սաստիճաւ նաւ մը իրմէն շեղելու :

2. «Ասի և սոսաջ հաւատոյ մէջ ևս երթալու և թուլութեան վիճակին վրայ պիտի խօսիմ» : Իսկ հոս կը բաղձամ որ՝ ուրիշ բան մը չբսած՝ սա աղէկ միտք առնես թէ սա ըսելիք նիւթիս մէջ՝ դեռահաս լուսաւորեալին աւտուածացին իրաց վրայ փորձառութեամբ տեղեկանալ նոր սկսած ժամանակը՝ իր ներսիդին զգացած ան եռանդին շեջանելուն վրայ պիտի խօսիմ : Անր բնութիւնն այնպէս կազմուած է որ՝ նոր բաները մասնաւոր կերպով մը տպաւորութիւն կ'ընեն մեզի . ինչպէս և մեր կիրքերը աղջեցութեան աւելի բնդունակ են կենաց առաջին տարիները, քան թէ տարիքնիս առած ժամանակը : Գուցէ սա բանը բաւական դիտած չէ ամէն մարդ : Ընդհանրապէս շափէն աւելի յարգ կը դնեն զգացումներուն բորբոքին վրայ, ու թէ որ շնորհաց մէջ յառաջ դացած ու յախտնական փառքին համար ըրած պատրաստութեանը մէջ մեծապէս յառաջադիմութիւն ստացած քրիստոնեան ասիկոց շունչնայ, երբեմն՝ յաւէտ երեւակայական քան թէ իրական եղծմանց վրայ կ'ողջայ, և առանց արդարացի հիման կ'ըսէ՝ «Աքրանի թէ առջի ամիսներուն պէս ըլլայի» : Յոբ . իթ . 2 : Այսան որոյ շատ անգամ յիշուելու է քեզի թէ՛ ստուածպաշտութիւնը դիւսաւորապէս Մատուծոյ կամքին համաձայն դանուելուն, և ան ամէն բաներէն հեռանալուն, որոնց վրայով կը համոզուինք թէ Մատուած կ'ատէ, և կենաց մէջ մեզի սահմանած բաները կատարելուն, և մարդկային սեռին երջանկութեամբը անոր փառքը յառաջ տանելուն մէջ կը կայանայ : Աս բանին աղէկ նայելու ենք, ամէն բանի մէջ նկատելով ան շարժառիթներուն պարզութիւնն ու մարբութիւնը՝ որոնցմէ շարժեալ կը դորձենք, և որոնց համար դիտենք թէ Մատուած՝ որ սիրաբ կը բնէ՝ զլիսաւորապէս անոնց կը նայի, միանգամայն մեր անթիւ անկատարութիւններուն ճանաչումովը ինքզինքնիս անոր առջին խոնարհեցնելով, և Քրիստոսի արեանն ու Աւետարանին շնորհացը տպաւինելով :

3. Աս նախազոյշութիւնը տայէս ետքը հիմա սակաւ

ինչ առաւել մանրամասն կերպով պիտի նկարագրեմ ան վիճակը՝ որ իյնալու վրայ եղող քրիստոնէին վիճակը կը կոչեմ, որչափ որ յաջորդ գլուխներուն մէջ խօսելի քննութեաւ չխառնուիր : Այս պէտք է սա ըսեմ թէ աս բանը գլխաւորապէս աստուածային բաները մոռնալուն՝ և ան զանազան պարտաւորութիւնները մէկդի ձգելուն մէջ կը կայանայ, որոնք պարտական ենք կատարել ինքզինքնիս հանդիսական կերպով մը Աստուծոյ ծառայութեան նուիրած ըլլալու համար : Աս վիճակին նշանները զանազան են քրիստոնէին տարբեր պարագաներուն ու առնչութիւններուն համեմատ, բայց կան ոմանք որ աւելի ընդհանուր են . և յատկապէս պատշաճ է ասոնց վրայ խօսիլ, մանաւանդ որ՝ աս անկումները շատ անգամ չեն տեսնուիր, Արիքեմի մաղերուն մէջը ճերմակ իյնալուն նման, որ ինքը չէր գիտեր : Ա՛յ . է . 9 :

4 . Ա՛նթերցող, աս վիճակին մէջ իյնալո՞ հաւանականաբար նախ և առաջ ներքին սենեակիդ պարտաւորութիւնները մէկդի ձգելէդ պիտի գիտնաս : Այլ թէ այնպէս կը սեպեմ թէ՛ ՚ի սկզբան բոլորովին զանց պիտի ընես, և ոչ ստուգապէս կը վճռեմ թէ՛ երբէք անանկ պիտի ընես, այլ թէ պաշ և արտաքին կերպով մը միայն պիտի կատարես զանոնք : Նշուցութիւնը՝ կամ ան ուրիշ որոգայթներէն մէկը, որոնցմէ քեզ զգուշացուցի նախնիքաց գլխուն մէջ, այնքան պիտի տիրէ քու վրագ՝ որ թէպէտ զուցէ գիտնաս և յիշես թէ առանձնանալու յատուկ ժամանակը եկաւ, բայց տակաւին երբեմն անկողինիդ մէջ պիտի պառկիս առտուանց, երբեմն խօսակցութեան կամ դործքի տաս ինքզինքդ երեկոյին, անանկ որ յարմար ժամանակ չունենաս անոր : Ամ թէ երբոր ժամանակին սենեակդ մտնես, զուցէ քեզի սիրելի եղած գիրք մը՝ որն որ կ'ուզես կարդալ, կամ մէկուն հետ ունեցած թղթակցութիւնդ, կամ մէկ ուրիշ զբօսանք մը աչքիդ պատահի կամ միտքդ իյնայ, և առաջ զանիկայ կատարելու փորձութեան մէջ ձգէ քեզ : Ասիկայ՝ հաւանական է որ՝ կարծածէդ աւելի ժամանակ պիտի անցընել տայ քեզի . և յետոյ առանձին աղօթքդ շտապաւ պիտի ընցընես, և զուցէ Սուրբ Գրքէն կարդալն ալ բոլորովին զանց ընես :

Թմերևս պիտի ընես թէ՛ միայն մէկ անգամ մըն է ասիկայ • բայց նոյն թոյլտուութիւնը երկրորդ և երրորդ անգամ ալ պիտի ընես , և ամէն մէկ անգամին առջինէն աւելի դիւրին և ընտանի պիտի դայ քեզի : Աւ այսպէս՝ Աստուած ծաղր եղած պիտի ըլլայ , և բուն քու հոգիդ իր հոգևոր կերակուրներէն պիտի զրկուի , թէ որ ներելի է ինձ այսպէս ըսել : Աստուծոյ խօսքը պիտի արհամարհուի , և անձնաքննութիւն ընելը բոլորովին մէկդի պիտի ձգուի • և առանձին աղօթքն ալ յաւէտ բեռ մը պիտի դայ քեզի՝ քան թէ բերկրութիւն , յաւէտ ոչինչ արարողութիւն պիտի թուի՝ քան թէ ջերմեռանդ յարգութիւն մը մեր երկնաւոր Հօրը ընդունելութեանը արժանի :

5 • Թմէ որ անմիջական և հաստատուն որոշմամբ միջոցներ չբանեցընես աս անկումներէն ազատելու համար , աւելի ևս պիտի տարածին և բնկերական պաշտամանց պարտաւորութիւններուն ալ պիտի հասնին : Հետեւութիւնները պիտի տեսնես՝ ընտանեկան և հրապարակական պաշտամանցդ մէջ : Աւ թէ որ չզգաս՝ նշանները ևս առաւել պիտի գէշանն : Թմափառական խորհուրդներ՝ աս պարտաւորութեանց բուն իսկ հոգին իբրև թէ պիտի սպառեն : Այնպէս կը հաւատամ որ շատ երևելի քրիստոնէից անգամ տրուած չէ բոլորովին ազատ ըլլալ անոնցմէ • բայց հաւանականաբար ան վիճակին մէջ խորին մտադրութիւն ընելու կամ ներքին ջերմեռանդութեան երկոյթն ունեցող բան մը ձեռք ձգելու շատ միջոց պիտի չըլլայ : Աւ երբոր աս պարտաւորութիւններդ այսպէս արտաքին կերպով կը ըննցընես , հագիւ թէ մէկ խորհրդածութիւն մըն ալ կ'ընես ետէն թէ՛ անոնցմով զՎաստուած որքան քիչ վայելցիր , և անոնցմով զանիկայ որքան քիչ պատուեցիր : Գուցէ Տերօջը Ղնթրիքին խորհուրդը՝ հոգւոյն մտադրութիւնը հաստատելու և անոր մէջ սուրբ զգածմանց եռանդուն գործադրութիւնը յստաջ բերելու այնպիսի սքանչելի կերպով յարմար եղած ըլլալուն համար , ան պարտաւորութեանց ամենէն վերջինն ըլլայ՝ որոնց մէջ աս եղծումները կը յայտնուին : Իայց տակաւին թ՛վ կրնայ ըսել թէ ան սուրբ սեղանին՝ քովը դուն զերծ պիտի ըլլաս ան փորձութիւններէն : Անհարկ պատրաստութիւններ

րով ներուած ըլլալով , սովորականէն քիչ սրտի հաստա-
տութեամբ և սիրտդ քիչ բացած պիտի երթաս : Աւ
զուցէ ինքզինդդ քննած ատենդ մէկ տհաճութիւն մը զգա-
լով , երբոր կը տեսնես թէ միտքդ մեծապէս խտտրած
կամ անզգայ եղած է , հակամիտիս շերթալ և զանց ը-
նել պարտաւորութիւնդ : Աւ երբոր հոգեւոր թշնամի-
ներդ միանգամ քու վրայդ աս յաղթութիւնը ստանան ,
հաւանական է որ առջինէն աւելի արագ աստիճանաւ պիտի
իյնաս , և անոնց բրած ջանքերուն դէմ՝ քու բրած ընդդի-
մութիւնդ երթալով պիտի տկարանայ :

6 • Երբոր Հօր Եստուծոյ և Տէր Յիսուս Քրիստոսի
վրայ ունեցած սէրէդ պաղես , Քրիստոսով եղբայրներուդ
վրայ ունեցած քրիստոնէական զգածման եռանդդ ալ հա-
մեմատարար պիտի մտի , և կենաց մէջ օգտակար ըլլալու
վրայ ունեցած նկատումդ ալ պիտի երթայ , մանաւանդ
հոգեւոր շինութեան համար ընկիւք բան մը եղած ատենը :
Ես կամ ան ջատագովութիւնը պիտի դանկա մէկդի ձգե-
լուդ համար հոգեւոր խօսակցութիւն ընելը , զուցէ ոչ
միայն դրացիներուդ և քրիստոնէայ բարեկամներուդ հետ ,
այլ մինչև անգամ անոնց հետ՝ որոնք քու ընտանեացդ
անդամներն են , և անոնց՝ որ քու խնամքիդ յանձնուած
են , թէ որ ծնողք կամ պաշտօնի տէր մէկն ես :

7 • Ես թուլութեան հետ , կամ զգայական հաճու-
թեանց կամ աշխարհային գործոց յարկը ալ կ'աւելնայ :
Ս'ան զի հոգին զբաղելու և զուարճանալու մէկ բան մը
ունենալու է . և որովհետև ասոնցմէ կտո՞ մէկին կամ միւ-
սին կը դառնայ , անոր համար ալ փորձութիւններուն
մէկը կամ միւսը անոր դէմը պիտի ելլեն : Երբեմն՝
զուցէ ժուժկալութեան ամենախիստ կասկերը և կենաց
կանոնաւոր կարգադրութիւնները պիտի աւրես , ասոր ա-
նոր հետ ընկերութիւն ընելու և անկէ հետեւած աշխար-
հային վայելչութիւններուն համար , որոնք շատ անգամ
անոր հետ կ'երթան : Աւրիշ անգամ ալ կենաց շահերը
ատաջուրնէ աւելի մեծ երևնալով , և միտքն աւելի դրա-
ւելով , ուրիշներուն բրած հակառակ շահերը քեզ ան-
հանգստութեան մէջ ձգէ , կամ կուսոյ և հակառա-
կութեան մէջ ընկզմեցընէ , որոնց մէջ շատ դժուար է

Հոգւոյն թէ՛ պարզութիւնը ու թէ՛ անմեղութիւնը պահել : Աւ զուցէ թէ՛ որ Հոգւոյ պաշտօնեաներն ու ուրիշ քրիստոնեայ բարեկամներ դիտեն աս բանը , և ջանան պարզ և հաւատարիմ կերպով մը քեզ քու մոյար ընթացքէդ դարձնելու , մէկ սուտ համեղութիւն մը՝ որ շատ անգամ մարդ այսպիսի վիճակի մէջ կը վատարկի , անոնց բրած աս ջանքերը սաստիկ տհաճոյ ընէ քեզի : Հոգւոյն վէրքը՝ թէ՛ որ կրնամ աս գրուցուածքը բանեցնել , պիտի շուգէ նևոք գպցնելնին՝ երբոր շատ կարօտ է անոր . և քրիստոնէական բարեկամութեանց ամենաղնխ և անձնուրաց գործքերէն մէկը՝ ցրտութեան և տհաճութեան , այն՝ զուցէ թէ՛ շամուութեան առթի պիտի դառնայ :

8 . Աւ հաւանական է որ՝ մէկ խօսքով , մտաց աս անկարգ վիճակը քեզ նախապաշարեցրնէ բուն իսկ ան սկզբունքներուն դէմ , որ կրնան շատ ներգործութիւն ընել քեզ դարձնելու համար . և քու մեծ թէ՛ շամուրդ այնքան յառաջ երթայ իր քեզի դէմ բրած ջանքերուն մէջ , որ համոզէ քեզ թէ՛ Հոգւոյ վիճակէդ բան մը կորսնցուցած չես , բանի որ գրեթէ բոլորը կորսնցուցեր ես : Շատ հաւանական է որ քեզ անանկ պիտի հաւատացրնէ թէ՛ քու առջի ունեցած ջերմեռանդ գագուցներդ սոսկ կոյր նախանձաբութիւննէ յառաջ եկած էին , և Մտուծոյ առջև ունեցած ընթացքիդ սուրբ կանոնաւորութիւնը անհարկաւոր խնտութիւն ու խղճահարութիւն մըն էր : Այն՝ կրնայ ըլլալ որ իմացականութեան կողմանէ յառաջադիմութիւն մը սեպես ասիկայ՝ որ սորվեցար քանի մը նոր վարդապետներէ թէ՛ եթէ մէկ մարդ մը իր ընկերներուն հետ մարդասիրութեամբ և քաղցրութեամբ վարուի , զանոնք միայն դատելով և անարգելով՝ որոնք ամբողջաւ դադարաբնութեան տէր ըլլալով ուրիշներուն նեղութիւն կու տան , անկաց հարկաւ շատ բարի վիճակի մը մէջ պիտի ըլլայ , թէ և Մտուծոյ հետ շատ հաղորդակցութիւն չընէ . բաւական է որ անոր վրայ յարգանք մտածէ , և զանիկայ թանձր մտութիւններով չզայրացնէ :

9 . Մտիկայ Հոգւոյ եղծմանց իրրև յետին աստիճանին մէջ յիշեցի , վասն զի ան կը սեպեմ՝ անոր ամենէն յարմար կարգը . և կը վախճամ թէ՛ փորձով ալ պիտի դանուի որ

խորհրդով և յանդուզն մեղքի մէջ իյնալուն ճիշդ սահմաններուն քով կ'իյնայ ասիկայ, որուն վրայ յաջորդ զխուն մէջ պիտի խօսիմ : Այս աս պատճառաւ ալ որ, ասիկայ ան նշանն է որ շատ ազգու կերպով կ'արգիլէ ինչ և իցէ յարմար դարմանի յաջողութիւնն ու մինչև անգամ դործագրութիւնը, յիմարական և մահառիթ կասկածով մը թէ անօգուտ են : Ասիկայ ան անզգայական թմրութեանը կը նմանի, թէ որ կրնամ աս նմանութիւնը բնել, որ շատ անգամ կաթուածէ կամ մահէ առաջ մարդուս վրայ կու գայ :

10 . Ամենևին իմ նպատակս հիմն կերկարօրէն քննել ու համբել չէ ան ամէն վտանգաւոր սկզբունքները՝ որոնք աս վիճակին մէջ պատրաստ են միտքը դրաւելու, և սուտ ու խարերայ իտաղաղութեան մը հիմը դնելու : Յիրաւի ան սկզբունքները զանազուն օրինակներու մէջ կը տարբերին, և երբեմն կրկու հակառակ ծայրերու կ'երթան : Իսկ թէ որ Աստուած քեզ արթնցնէ աստուածաշունչ մտադրութեամբ կարգալու, և քեզի զգացնել տայ ան ոգին՝ որով դրուած է, գրեթէ ամէն մէկ էջը պիտի ներգործէ քու վիճակդ քեզի ճանչցնելու, և լոյս մը պիտի ցաթէ խաւարին աս շուքերը ցրուելու և փարատելու :

11 . Բո խօսքերուն մէջ դիտարութիւնս աս է որ՝ եթէ կարելի է քեզ իսկոյն համոզեմ որ երբոր կը տեսնես աս եղծմանց առաջին նշանները, զգուշութիւնդ ձեռք առնես, և ջանք բնես կարելի եղածին չափ շուտով ինքզինքդ անոնցմէ ազատելու : Այս կ'ուզեմ քեզի իմացնել թէ դարմանը ան տեղ սկսելու է՝ ուր առաջին պատճառը կամ ախար սկսեց, ըսել կ'ուզեմ քու առանձնական ազօթքիդ տեղը : Բիչ մը ժամանակ անցուր սրտի մտք խղճմտանքիդ հարցնելու՝ թէ ամէնօրնեալ Աստուծոյ և քու հոգւոյդ մէջտեղը իրերն ի՞նչ վիճակի մէջ են : Բրդեօք հիմա ալ այնպէ՞ս են՝ ինչպէս էին ասին մը, և ի՞նչպէս պիտի ուղէիք որ ըլլան, թէ որ տեսնէիք թէ կեանքդ իր վախճանին հասեր է, և անմիջապէս յախոնական վիճակին մէջ կը մտնես : Հախոնականութեան վրայ եղած մինակ մէկ խորին խորհրդածութիւնը՝ ամօթով կը հանէ հազարաւոր ունայն ջատագովութիւնները, որոնցմով՝ թէ

որ աս խորհրդածութիւնը չընենք, հողինիս կը խարենք : Եւ երբոր սրտին ան ծածուկ կասկածը կը զգաս՝ որ բնականապէս աս քննութիւնէն պիտի ծաղի, ջանք մի՛ ընելը բանը ծածկելու և թեթե ու խարերայ ծածկոցներ դուռնելու ան բանին՝ որ քու սիրտդ կը դատապարտէ, այլ անաչառութեամբ ինքզինքդ ան դատապարտութեանը տակ կը ձգէ և խոնարհէ՛ անոր համար : Միտդ Աստուծոյ առջին թափէ, և անոր Հոգւոյն ու շնորհացը նոր աղօթչութիւնները խնդրէ : Առաւել ճշգրութեամբ առանձնական աղօթից և անձնաքննութեան դարձիր : Սուրբ Գիրքը ևս առաւել փութով կարդա, և մտնաւանդ անոր հոգևորական և ջերմեռանդական մասերը : Չ՛մնքըքէ սրտիդ մէջ հաստատել անիկայ, և զգալ ան բանը՝ որուն համար բանաւոր պատճառ ունիս հաւատալու թէ՛ անոր սրբազան Հեղինակները զգացին զբաժ մամանակինն, որբան որ պարագաները կը յարմարին : Ամենայն պարզութեամբ հողիդ բնոց ան ամէն դասերուն՝ որ Աստուծոյ խօսքը քեզի կը սորվեցընէ . և զգո՛յշ եղիր ան բաներէն՝ որ կ'իմանաս թէ՛ միտքդ բարեպաշտական զգացումներէն կ'օտարացընեն, թէ՛ և նոյն իսկ բաներուն մէջ զէշ սեպուելու բան մը չկենայ : Արնայ ըլլալ որ ընդհանրապէս աս բաները օրինաւոր ըլլան, և կարելի է որ ոմանց ալ պատշաճ ըլլան . բայց թէ որ վերը յիշուած արդիւնքը յառաջ կը բերեն, ստոյգ կ'ըլլայ որ քեզի համար պատշաճ չեն : Աս ամենէն 'ի դատ՝ աս պարագաներուն մէջ ան քրիստոնեաներուն հետ հաղորդակցութիւն քրէ, որոնց հաւատոյ մէջ ունեցած յառաջադիմութիւնը շատ երեւելի կը թուի, և որոնք իրենց դաւանութիւնը ամենահաճելի կերպով կը զարդարեն : Չ՛մնքըքէ՛ անոնց բնութիւնն ու զգացումներն ունենալ, և քու փիճակդ ու սիրտդ բնոց անոնց՝ խոհեմութեան պահանջած ամենայն աղատութիւնովը : Պարայ մամանակներ ունեցած ասունդ բարեպաշտական գրքքեր կարդա, որոնց մէջ աստուածապաշտ Հեղինակին միտքն ու սիրտը փոխադրուած է, և որոնց մէջ քրիստոնէութեան հարազատ ոգիին համբ կընաս առնել : Եւ վերջապէս՝ Տէրոջը սեղանին մտակնալու առաջին պատեհութիւնը ձե՛ռք աս, և ո՛չ մամանակ խնայէ՛՝ ոչ ալ աշ-

խատուածիւն սրտի մտօք անոր պատրաստուելու համար : Ընն Մատուծոյ հետ ունեցած ուխտդ նորոգէ , նորէն հոգիդ Վրիստոսի ձեռքը յանձնէ , և ջանք ըրէ իր մահու շափ սիրոյն սրանչելիքները նկատելու այնպիսի կերպով մը՝ որ մարելու վրայ եղող բոցը նորէն արծարծէ , և քեզ կենդանացընէ առջինէն առաւել զօրաւոր որոշումով « կենդանի ըլլալ անոր՝ որ քեզի համար մեռաւ » : Ի Աորնի . Ե . 15 : Այլ արթուն եղիք սրտիդ վրայ , որ ան միջոցին զգացած բարի ազդեցութիւններդ շարունակ մնան : Մի դադարիբ՝ մինչև որ ան քու դիտցած ամենէն հաստատուն հոգևոր վիճակդ կրկին ձեռք ձգես : Մի դադարիբ՝ մինչև որ առջինէն աւելի մեծ յառաջադիմութիւն մը ընես . փանն զի մի միայն յառաջ երթալու նախանձով մըն է որ կրնաս ապահով ըլլալ՝ ետ երթալու ու ետ առաւել ապրտատմբելու վտանգէն :

12 . Ա երջապէս սա մէկ բանն ալ կ'ըսեմ որ , հարկաւոր է սա նախազգուշութիւնները կարելի եղածին շափ շուտով 'ի գործ դնել . եթէ ոչ՝ շատ հաւանական է որ մտքեդ անցածէն շատ աւելի սրնթմաց յետախաղաց ընթացք մը պիտի ունենաս . և հաւանական է որ Մատուած քեզ թողու մէկ թանձր և մեծ մեղքի մը մէջ իյնալու , անանկ որ խղճմտանքդ մեծ տաղնապով ու ահով մը լինայ , որն որ կոտորած ոսկորներուն (Սող . ծն . 8) ցաւը շատ անկատար կերպով կրնայ իմացընել :

Ըստիւր իդճտն վճռիլն ձեզ իողովն սողելք :

Ո՞վ յախտնական և անփոփոխ Ահովայ , քու կատարելութիւններդ ու փառքերդ քու էութեանդ պէս անփոփոխ են : Վու Որդիդ Յիսուսը « նոյն է երէկ ու այսօր , և յախտեանս » : Աբր . Ժգ . 8 : Ան յախտնական աշխարհը՝ որուն կը վազեմ , միշտ հաւասարապէս կարեոր է , և՛ որչափ որ կը մտտնայ , այնքան աւելի հաստատուն ու զգուշաւոր նկատում մը կը պահանջէ մտադիր մտքէն : Բայց աւանդ , իմ տեսութիւններս ու զգածմունքներս և իմ ամենալաւ որոշումներս շարունակ կը փոխուին՝ սա ողորմելի մարմինին նման , որ ամէն օր և աւմէն ժամ իր վիճակինն ու պարագաներուն մէջ փոփոխու-

Թեան տակ է : Ո՞ւտտի է ո՞վ Տէր , ճւտտի է աս ցաւալի փոփոխութիւնը՝ որ սրտիս միճակին ու զգացմանը մէջ կը տեսնեմ : Ո՞ւտտի է աս իմ հոգւոյս քեզմէ խտտորիլը : Ինչո՞ւ համար չեմ կրնար դալ քեզի որդիական սիրոյ ամէն քաղցրութիւններովը հիմա , ինչպէս որ երբեմն կրնայի : Ինչո՞ւ համար քու ծառայութեանդ այսպիսի թուլութիւնով կը հետեւիմ , թէ որ երբէք հետեւիմ : Եւ ինչո՞ւ համար ան քու ծառայութեանդ գործքերը՝ որ երբեմն իմ ամենամեծ զուարճութիւնս էին , ինձի բեռ մը եղած են հիմա : Ո՞ւր է ան երանութիւնը՝ ո՞վ Աստուած , որուն վրայ երբեմն կը խօսէի , (Պատ . 15 ,) երբոր իմ քու վրադ եղած ուրախութիւնս՝ իբրև իմ երկնաւոր Հայրս , սյնքան պայծառ էր որ օտարները կրնային տեսնել , և երբոր իմ սիրտս դէպ'ի քեզ սիրով և քու ծառայութեանդ համար նախանձաորութեամբ սյնքան լեցուն էր , որ ինձի անձնուրացութիւն մըն էր հոգւոյս ան զորաւոր զգացումներուն հարազատ արտայայտութիւնները փակելը և սանձելը՝ խոհեմութեան և պարտաւորութեան պահանջած ատենը անգամ :

Եւ ա՞յ՜ Տէր , ո՞ւր եմ ինկեր : Վու աչքդ զիս դեռ կը տեսնէ . բայց ո՞չ՝ որքան տարրեր՝ երբեմն տեսածէն : Թեպէտ և ցրտացեալ և անզգայ եղած եմ , բայց սակայն մտածելու ատենս կ'ամչնամ : Վուն զիս « գաղտուկ կը տեսնես » , (Սաղ . 156 ,) և կը տեսնես զիս զուրկ շատ անգամ՝ որ ոչինչ բաներով կը զբօսնում ան ժամանակները , որոնք հանդիսական կերպով քեզի կը նուիրէի քու անմիջական ծառայութեանդ համար : Վուն զիս կը տեսնես որ ստիպմամբ կու գամ քու ներկայութեանդ , և երբոր քու առջևդ կը կայնիմ , սյնքան յետեալ եմ հողում՝ որ չեմ գիտեր ինչ բան քեզի , թեպէտ և դուն ես ան Աստուածը՝ որուն հետ է իմ գործս , ու թեպէտ և քեզի հետ մէկ խոնարհ և պարտուպատշաճ հաղորդակցութիւն մը պահելը անհամեմատ կերպով իմ կենացս ամենամեծ գործն է : Եւ մինչև անգամ երբոր կը խօսիմ քեզի չ որքան պաղ և արտաքին կերպով է ան : Վուրկ երեւակայութեան գործն է , շրթունքներուն աշխատութիւնը . բայց ո՞ւր են ան եռանդուն փախարները՝ ան

սաստիկ հասաշանքները առ Մատուած , զորս երբեմն ունէի : Մէր է իմ քեզմով ունեցած քաղցր հանդիսոս , որն որ երբեմն կը վայելէի , իբրև իմ աստուածային հանդըստեանս մօտ եկած , ան մերձաւորութեամբը երջանիկ ըլլալով , և որոշելով որ եթէ կարելի է բնաւ չհեռանամ անկէ : Իայց ս'հ' որքան հեռացեր իմ հիմա : Արբոր աս կարճ աղօթքներս կը լմննան , ան ալ թէ որ կրնան աղօթք կոչուիլ , որքան երկար ժամանակներ կ'անցընեմ քեզ մոռցած . և քու սիրովդ այնքան քիչ կենդանացեալ , և քու ծառայութեանդ ինքզինքս այնքան քիչ նուիրած կը թուիմ , որ մէկ օտար մը կրնայ իմ հետս խօսիլ երկար ժամանակ՝ առանց տեղեկութիւն մը ստանալու թէ երբէք հաղորդակցութիւն ըրած եմ քեզի հետ , և առանց իմանալու թէ Մատուծոյ վրայով զո՞նէ մէկ բան մը զխոցած կամ լրած եմ : Դուն զիս քու տունդ կը կանչես՝ ով Տէր , քու սուրբ օրդ . բայց սըքան առ երեսս են իմ հոն մատուցած պաշտօններս : Իմ մարմինէս ՚ի զատ ուրիշ բան մը չեմ ներկայացըներ քու առջիդ : Խորհուրդներս ու զգածմունքներս ուրիշ առարկաներու վրայ են՝ քանի որ ես « քեզի բերնովս կը մտանամ , ու քեզ շրթունքներովս կը պատուեմ » : Առայ . իթ . 13 : Դուն զիս քու սեղանդ կը կանչես . բայց իմ սիրտս այնքան պաղած է , որ հազիւ թէ կը կախուղնայ մինչև անդամ խաչին ոտքը , հազիւ թէ կը զգայ թէ Յիսուսի արիւնը մէկ աղղեցութիւն մը ունի : Ո՛հ ի՞նչ թշուառ արարած եմ ես : Արժանի չեմ քու կղ կոչուելու : Արժանի չեմ քու որդւոցդ մէջը տեղ ունենալու , կամ քու ընտանիքիդ մէջի ամենանուստ փիճակն ունենալու . արժանի եմ յաւէտ դուրս ձգուելու , մոռցուելու , այն՝ բոլորովին կորսուելու :

Ո՛վ Տէր , մն է ան պաշտօնը՝ որ երբեմն խոստացայ մատուցանել , և որն որ ինձմէ ակնկալելու անթիւ պատճառներ ունիս : Ասճ'նք են ըրած փոխարէններս՝ ամէն աւուր նախահնամարար հողալուդ , քու Արդւոյդ մատուցած պատարադին , Հողւոյդ աղղեցութիւններուն , իմ անթիւ մեծ մեղքերս ներելուդ , և յախտնական փառաց յոյսերուն , ան յոյսերուն՝ որոնց արժանի չեմ , և որոնք շատ անգամ կորսնցուցած եմ : Տէր՝ կ'ամչնամ քու

առջևդ կենալու : Բայց կ'աղաչեմ՝ ողորմէ՛ և օգնէ՛ ինձի . վասն զի յիրաւի ողորմելի արարած մըն եմ . իմ անձս հոգին կը փակչի , և ինքզինքը քու առջևդ կը ձգէ որպէս թէ հոգին վրայ . բայց դուն կենդանացուք զիս քու խօսքիդ համեմատ : Սող . ճԺԹ . 25 : Տուր որ այլ ևս ոչինչ բաներու հետ չխաղամ , վասն զի դահալէժ ժայռի մը ծայրն եմ : Իմ ճամբաներուս վրայ կը մտնում՝ ո՛վ Տէր , իմ ոտքերս քու վկայութիւններուդ դարձուր , որ առանց այլ ևս ուշանալու արտորամ քու պատուիրանքներդ պահելու : Սող . ճԺԹ . 59 , 60 : Քննէ՛ զիս՝ ո՛վ Տէր , և փորձէ՛ զիս : Սող . ՃԼԹ . 23 : Ես ախտաւորութեանս արմատին ձեռք զարկ , որն որ ինքզինքը հոգեոյս մէջ տարածեր է , և ազատէ՛ զիս անկէ : Աղաչեմ քեզի՝ ո՛վ Տէր , մեղաց ինչ ըլլալը ինձի ցուցուր՝ որ ատելութիւնով նայիմ անոր . և Տէր Յիսուս Քրիստոսը այնպիսի կերպով մը ցուցուր ինձի , որ նայիմ անոր և ողբամ , (Օւս . ԺԻ . 10 ,) որ նայիմ անոր և սիրեմ անիկայ : Տուր որ արթըննամ աս թմբութեանս՝ որուն մէջ կ'ընկղմիմ . և Քրիստոս տայ ինձի մինչև հիմա ընդունածէս շատ աւելի առատ հոգևոր եռանդ և նախանձաւորութիւն , և այնպէս զօրանամ ու կենդանանամ Ենով՝ որ կորսընցուցածս աւելօքք ձեռք բերեմ , և իմ ամենալաւ օրերուս մէջ ըրածէս աւելի արագ ու ճշմարիտ յառաջադիմութիւն մը ընեմ : Ո՛վ Տէր , շնորհէ՛ ինձի քու բարի Հոգիդ աւելի շատ և առատ հեղմամբ : Թող ան իմ մէջս բնակի իբրև իրեն յատկացուցած մէկ տաճար մը , (Իս Կորնթ . Գ . 16 ,) և քանի որ ինքը ան տաճարին բոլոր պաշտօնը կը կարդադրէ և կը կատարէ , ես շարունակ սուրբ և ընդունելի պատարագներ մատուցանեմ քեզի : Հատմ . ԺԻ . 1 : Թող ինկարկութիւնը շարունակ ըլլայ , և քաղցրահոտ : Թող սուրբ կրակը միշտ վառի՝ և մշտնջենաւորապէս բորբոքի : Ղև . Գ . 13 : Այլ անոր անօթներէն մէկը երբէք թող չպղծուի , անսուրբ կամ արգիլեալ բանի մը գործածուելով . Եմն :

ԳԼՈՒԽ ԻԳ

Ինչպէս չը հանդիսաւորան իւրդով Մարտոնայ նախնիքն և հոգեոր վէճակի մէջ չուրով չը ցառուհարիսութիան ընելն Էրուրը, գիտութեամբ և խառն միջի մէջ իյնողն ցառու վէճակը :

1 . Պէտք է որ ամէն մարդ խոստովանի թէ ան անկումները՝ որոնց վրայ նախնիքաց գլխուն մէջ խօսեցայ, մեծապէս ցառելու արժանի են . բայց երջանիկ պիտի ըլլաս՝ իմ սիրելի ընթերցողս, թէ որ փորձով գիտցած չես ասկէ առաւել ցառալի վիճակ մը : Գուցէ իրերու վրայ հիմնական ունեցած տեսութեանդ վրայ երբոր կը խորհիս, կը կարծես թէ ամենեին մէկ խորհուրդ մը չկրնար ըլլալ որ քեզ հրապուրէ մէկ բանի մը մէջ հակառակ գործել հիմնական ան ազդումներուն՝ որ կու տայ խղճմանքդ՝ կամ Մարտոնայ նոզին՝ որմէ լուսաւորեալ և առաջնորդեալ է խղճմանքդ : Այս անանկ կը սեպես թէ աւելի աղէկ պիտի ըլլայ որ մեռնիս : Այլ շիտակ կը խորհիս . բայց Պետրոս ալ այնպէս խորհեցաւ և ըսաւ թէ՛ « լծէ և քեզի հետ մեռնելու ալ ըլլամ՝ բնա քեզ պիտի շուրանամ » , (Մարկ . իջ . 35 ,) և սակայն վերջապէս ինկաւ . անոր համար « մի հպարտանար , հապա վախցիր » : Առով . ժա . 20 : Ընկարելի բան մը չէ որ իյնաս բուն ան մեղքին մէջ՝ որուն մէջ իյնալու ամենէն քիչ վտանգ կայ կը կարծես, կամ ան մեղքին մէջ՝ որուն դէմ կենալ շատ հաստատ որոշած ես, և որուն վրայով արդէն զառնապէս զղջացած ես : Արնայ ըլլալ որ կրկին անոր մէջն իյնաս : Բայց ո՛հ, թէ որ իյնաս, այն թէ որ խորհրդով և յանդգնաբար միայն մէկ անգամ իյնաս, ո՛րքան խորին պիտի խոցէ անիկայ քու սիրտդ : Ան փորձութեանը ետեւէն եկած զուարճութիւնը՝ որքան շատի պիտի նստի քեզի : Քեզ Մարտոնմէ ինչպէս պիտի դատէ անիկայ : Ինչ վհատութիւն, ինչ սոսկալի վհատութիւն մը պիտի

տարածի հողւոյդ վրայ : Շատ ցաւալի է ասոր վրայ
խորհիլը : Գուցէ այսպիսի վիճակի մը մէջ՝ երբոր նստին
սրտի մտօք մտմտաս , առաջին անգամ՝ արթնցած և դարձի
եկած ժամանակդ զգացածէդ շատ աւելի ցաւ և թշուա-
ռութիւն զգաս խղճմտանքիդ մէջ . վասն զի գործած
մեղքդ՝ շնորոգուած վիճակիդ մէջ գործածներէդ շատ ա-
ւելի ծանր պիտի ըլլայ :

2 . Յիրաւի բաւական է մէկուն սիրտը վերաւորելու՝
խորհիլ թէ ինչպէս քու սիրտդ պիտի վերաւորի , ինչ-
պէս բոլոր մխիթարութիւններդ՝ բոլոր քրիստոնեայ ըլլա-
լուդ վկայութիւնները՝ և բոլոր յոյսերդ պիտի մթնանան ,
ինչ թանձր մթութիւն մը պիտի պատէ ամէն կողմ . ա-
նանկ որ ոչ արեղակ՝ ոչ լուսին՝ և ոչ աստեղք պիտի ե-
րևնան քու երկինքդ : Հոգևոր մխիթարութիւններդ
պիտի երթան , և աշխարհային վայելչութիւններդ ալ
անհամ ու ձանձրալի պիտի ըլլան : Այլ թէ որ նեղու-
թիւններ խրկուին քեզի , ինչպէս որ հաւանական է թէ
պիտի խրկուին քեզ մեղքէ դարձնելու համար , մեղա-
պարտութեանդ ճանաչումը պիտի սրցնէ և թունաւորէ
աս նեղութիւններուն նիղակը : Են ատենը հողւոյդ թըշ-
նամին բոլոր իր նարքներովն ու զօրութիւնովը քեզի դէմ
պիտի ելլէ քու իյնալէդ քաջալերուելով . և պիտի աշխա-
տի քեզ բովանդակ և անյոյս կործանմամբ ոտքի տակ առ-
նել : Ահա պիտի համոզէ թէ արդէն անդարմանելի կեր-
պով կորսուած ես : Այիտի աշխատի ցուցնելու թէ ալ
ձար մը չէ մնացեր ձեռք զարնելու , ամէն ջանք՝ ամէն
օգնութիւն՝ և զղման ամէն գործք միայն աւելի դէշ կ'ընէ
վիճակդ , և քեզ ևս առաւել խորունկը կը թաղէ դժոխ-
քին մէջ :

3 . Երբպէս պիտի աշխատի ահեբով քեզ ևս պահել
ան ստոյգ դարմանէն ալ՝ որ դեռ կը մնայ : Բայց մի՛ զի-
ջանիր անոր : Յիրաւի վիճակդ շատ ցաւալի պիտի ըլ-
լայ . և թէ որ հիմա ան վիճակին մէջն ես , ողբալի բան
մըն է . բայց անոր մէջ մնալը աւելի ևս դէշ է : Ախրտդ
աւելի ևս պիտի կարծբանայ , և ուրիշ բան մը չլուսա-
ցուի բայց միայն յանկարծական և մեծ կործանում մը :
Բայց տակաւին՝ օրնեալ ըլլայ Եստուած , որ բանը բո-

լորովին անյոյս չէ : “Սէրքերդ հոտեցան ու փոխեցան
քու յիմարութեանդ պատճառովը” , (Սող . Լը . 5 ,)
բայց քաղցիկեղը անբժշկելի չէ : “Գաղաազու մէջ բալա-
սան մը կայ , հոն բժիշկ մը կայ” : Երբ . ք . 22 :
Սլանն որոյ՝ Իմ վիճակս անյոյս է՝ մի՛ ըներ , և այդ սուտ
ենթադրութեանն մահաբեր փաստ մը մի՛ հաներ ան օտար-
ներուն ետեւն երթալու որոնք սիրեր ես , (Երբ . ք .
25 ,) և անանկով վիճակդ անյոյս մի՛ ըներ : Վեղի՛ Մա-
տուծոյ իր ապստամբ ժողովուրդին խօսած խօսքերովը խօ-
սիմ , երբոր այնպէս կը կարծէին թէ աս վիճակին մէջն
էին , և անկէ այնպիսի հետեւութիւն մը հանեցին .
“Միայն թէ քու անօրէնութիւնդ ճանչցիր ու դարձիր՝ որ
քու՝ Տէր Մատուծուդ ապստամբեցար , կ'ըսէ Տէրը” :
Երբ . ք . 13 , 14 : “Կոր շնորհք խնդրէ , և անոր ուժու-
ղը աշխատէ՛ դառնալու : Եղաղակէ՛ Գաւիթին հետը նոյն
օրինակ յանցանքին տակը , “Սորսուած ոչխարի պէս մտը-
րեցայ . փնտռէ՛ քու ծառադ , ինչու որ քու պատուիրանք-
ներդ չմոռցայ” , (Սող . ճթ . 176 ,) և զանոնք չմոռ-
նալը կը յուսամ թէ աղէկի նշան մըն է : Իսկ թէ որ
երբէք պիտի դառնաս , շուտով՝ դարձիր : Վայլ մը ևս
աւելի մի՛ առներ ան մահաբեր ճամբուն մէջ , որուն մէջ
մտորներով ինկեր ես : Մի՛ խորհիր մեղք մըն ալ աւելը-
նել հաշիւիդ վրայ և ապա զղջալ , որպէս թէ ամէնը մի և
նոյն բանն է : Երկրորդ սխալմունքը առջինէն զէշ կրնայ
ըլլալ . կրնայ ըլլալ որ ճամբայ բանայ իրմէն ետե ուրիշ-
ներու , և հիմա երեւակայել կրցածէդ աւելի սոսկալի հե-
տեւութիւններ յառաջ բերէ : Սանն որոյ փութացի՛ և մի՛
յապաղեր : “Մնձո՛ ազատեցու համար փախիր” , (Օճնդ .
ժթ . 17 ,) “դեռ նետը քու լեարդդ չծակած” : Եւս .
է . 23 : “Մշքերուդ քուն՝ ու արտեանունքներուդ նիր-
հում մի՛ տար” , (Եւս . ք . 4 ,) անկողինդ մի՛ մտներ
յանցանքիդ թողութիւն շտաած , որ չըլլայ թէ շարը
քու վրադ հասնի , որ չըլլայ թէ աստուածային արդա-
րութեան սուրը քեզ զարնէ , և մինչդեռ վաղը դարձի
գալ կը խորհիս՝ աս զիչէր երթաս և դժոխքին մէջն
իյնաս :

4 . Մնամբնայէս դարձիր , և խորին զգացումով ու

խոհական մտքով դարձիր : Վանդի երբոր խղճմտանքը այնպիսի սաստիկ բռնադատուած է գիտութեամբ՝ կամաւ և խորհրդով մեղք գործելով , (դէպք մը՝ որ մարդ կը յուսայ թէ քիչ անգամ պիտի պատահի անոնց՝ որ միանգամ անկեղծութեամբ հոգևոր ընթացքի մը մէջ մտած են ,) ասիկայ մեծ բան մըն է , և անոր համեմատ վարուելու է : Թո՛ւք որ աս ցաւալի դէպքը քեզի պատահած է՝ իմ ազերջանիկ ընթերցողս , կը մեղքընամ՝ քեզ և կ'ողբամ վրայ , և կ'աղաչեմ՝ քեզի որ՝ որովհետև խաղաղութեանդ՝ դարձիդ՝ հոգւոյդ առողջութեանն ու բուն իսկ անոր կենացը արժէքը գիտես , մէկ ժամ պարապ շննջընես : Անմիջապէս առանձին տեղ մը քաշուէ և սրտի մտքը խորհէ : Աւրիշ գործքերդ ու զբաղմունքներդ մէկգլխի ձգէ , թէ որ այնպիսի գործքեր չեն որոնք խղճմտանքդ շնորհը քանի մը ժամ ետ ձգել , որ շատ քիչ կը պատահի իմ ենթադրած վիճակիս մէջ : Այսան որոյ Մտուծոյ առջևը ինքզինքդ անոր տուր , և խղճմտանքն ինչ ըսելիք որ ունի՝ համբերութեամբ և խոնարհութեամբ մտիկ ըրէ երկարորէն , թէ և անիկայ դառնապէս սաստե և յանդիմանէ քեզ : Այո՛ մեծ փափարով աղօթք ըրէ որ Մտուած խղճմտանքովդ քեզի խօսի , և աւելի կատարեալ կերպով զիտցընէ և զգուշացընէ թէ՛ « Գեշ ու դառն բան մըն է , որ քու Տէր Մտուածդ թողուցիր » : Երէմ . Ի . 19 : Յանցանքիդ ետեէն եկած ան ամէն ծանրացուցիչ պարագաներուն վրայ խորհէ . և մանաւանդ անոնց վրայ որոնք՝ ընդունած ողորմութիւնդ ու բարութիւնդ չարաչար գործածելէդ կը ծագին , և որոնք ոչ միայն Մտուծոյ ըրած ուխտերէդ և խոստմունքներէդ , այլ Փրկչին արեամբը կնքուած սիրոյն վրայ ունեցած տեսութիւններէդ ալ յառաջ կու գան : Իսկ ան է քու ըրած փոխարէնդ : Բաւական չէ՞ր որ Վըրիստոս իր թշնամիներէն աս չարիքները կրէր : Պէ՞տք է որ « իր բարեկամներուն տանը մէջն » ալ վէրքեր ընդունէր » : Օւս + ԺԳ . 6 : « Ես ամէն պղծութիւնները ընելու համար ազատեցար » : Երէմ . Է . 10 : Բ՛մէնօրջեալ Յիսուսը ցաւ քաշեց և մեռաւ քեզի համար որ համարձակութիւնով և ազատութիւնով մեղանչեա , որ մեղքին որպէս թէ ոգին ու ծովածը հանես , և զՄտուած

որ հողիդ անով մարբուի և յանցանքդ ջնջուի : Եւ քու գործած մեղքդ՝ որ ամենօր շնեալն Մատուած առաջուց տեսած էր , Փրկչիդ շարշարանացը ծանրութիւնը շատցուց , ու անոր արիւնքը թափուելուն պատճառ մը եղաւ : Խոնարհութեամբ դնա , և քու վէրքերդ ան պատուական բալասանին կաթիլներուն տակը բռնէ , որ անով միայն կրնան բժշուիլ : Են կարեկից Փրկիչք ուրախ պիտի ըլլայ քեզ առողջացնելու , երբոր իր ոտքերուն տակը պատկած խոնարհութեամբ կ'աղաչես . և քեզի հետ՝ իր տուած խաղաղութեանն ու հաճութեանը մասնակից պիտի ըլլայ : Ենոր ձեռքովը նորոգէ՛ քու ուխտդ Մատուծոյ հետ . ան կուտրած ուխտդ , որ անիկայ կուտրելդ աստուածային արդարութիւնը « Սքանչելի բաներով » կրնար քեզի ճանչցնել « արդարութիւնով » , (Սող . կն . 5 ,) բայց ողորմութիւնը կը ներէ : Թող ան ուխտը կուտրելուդ զխտութիւնն ու յիշատակութիւնը ուխտդ նորոգել տայ քեզի՝ տկարութեանդ վրայ առջինէն աւելի խորին բզզացում մը ունենալով , և ապահովութեանդ համար մինչև հիմա ունեցածէդ աւելի սրտանց կախում մը ցուցնելով աստուածային շնորհքն : Գիտեմ որ պիտի ամբշնաս Մատուծոյ որդւոցը հետ երևնալ անոր սրբարանին մէջ և մանաւանդ անոր սեղանին քով՝ քու մեծ յանցանքդ զխոնալովդ . բայց ամենալը մեկդի՛ ձգէ , թէ որ Ասխախնամութիւնը քեզի ճամբան բանայ : Ա՛ռդես քու բարկացուցած շորդ առջևը խոնարհիլ . ուրեմն ուրիշ մեկ տեղ մը չկայ անշուշտ՝ ուր որ աւելի հաւանական ըլլայ խոնարհիլդ , բայց ՚ի ինքզինքդ անոր տանը մէջ տեսնելու ստենէդ . և չկայ ուրիշ մեկ մատակարարուած խորհուրդ մը հոն՝ որ կարող ըլլայ աւելի խոնարհեցնել քեզ , բայց ՚ի անկէ որուն մէջ « քու աչքիդ առջևը Հիսուս Վրիտտոս խաչը ելած կը նկարագրուի » : Գաղ . դ . 1 : Մի միայն մեղաւորները հոն երթալու են . ամենէն բարի մարդիկը անգամ ան սուրբ սեղանին առջևը իրբև մեղաւոր կու գան : Գուն ալ անանկ մտակցիր անոր . այո՛ իրբև մեղաւորներուն ամենէն մեծը , այնքան կարօտ ըլլալով Հիսուսի արեանը՝ որքան որ երկրիս վրայ եղող որ և իցէ մեկը երբէք կրնայ ըլլալ :

6. Ուրիշ բան մըն ալ իմացընեմ քեզի : Թէ որ քու անկումը այնպիսի անկում մը եղած է՝ որ դայթակղութիւն տուած է ուրիշներուն , ամենեին մի՛ նայիր որ անոնց առջևը ուրիշ երևոյթմաներ ցուցընելով չափաւորես ան ամօթոյ գգացումներդ , որոնք յառաջ կու գան , թէ որ աննդ նուաստացընելու խոնարհիս : Ո՛չմարտիւ՝ աս վշտազնութեանդ խորութիւնն ու ցաւը պատուական դեղ մըն է , որ Մատուած իր իմաստուն բարութեամբը սահմաներ է քեզի համար՝ երբոր այսպիսի պարագաներու մէջ ես : Մայրիս դիպումածի մը մէջ յանցանքդ ամենայն համարձակութեամբ խոստովանէ՝ . յետին աստիճան մեծցուր . թողութիւն և աղօթք խնդրէ անոնցմէ՝ որոնք վշտացուցիր : Ըն առենը՝ և ո՛չ երբէք անկէ առաջ , խաղաղութեան ճամբուն մէջ պիտի ըլլաս , ո՛չ թէ յանցանք ծածկելով՝ ո՛չ թէ ունայն ճատագոյնութիւններ ընելով՝ ոչ թէ ուրիշներուն քեզի աս բանին մէջ խրատելու կերպին հակառակելով՝ որպէս թէ մէկու մը տուած հաւատարիմ խրատին մէջի եղած զորութեան սակաւ ինչ տաստկութիւնը յանցանք մըն է՝ մէկ մեծ ամբարշտութեան մը հաւատար , որն որ յառաջ բերաւ զանիկայ : Մտիկայ մի միայն հպարտութեան և անձնասիրութեան յիմարութեանն յառաջ կրնայ գալ . ասիկայ կարծացած՝ ուռած՝ և բորբոքեալ վերքի մը զգացողութիւնն է . և պէտք է որ կակուղնայ՝ ուռեցքը իջնէ և բորբոքումը զբանայ , որ կարելի ըլլայ բժշկուիլ : Կարողցմէ մեղադրուիին ու դատապարտուիլը՝ Մատուծոյ դատապարտիչ վճիռը իր վրայ բերելուն ճանաչումովը կատարելապէս խոնարհած և կտորած հոգւոյն՝ մեծ վիշտ մը պիտի չըլլայ : Մայրիս մէկը յաւէտ պիտի ցանկայ զՄատուած փառաւորել՝ իրեն արժան եղած մեղադրանքին շնորհակցելով , և պիտի վախնայ որ չըլլայ թէ ուրիշները խաբէ որ իր վրայ շորհալի համարում ունենան , որուն որ ինքը՝ ի ներքուստ գիտէ թէ արժանի չէ : Ըստնք են ան գգացումները՝ որ այսպիսի վիճակի մը մէջ եղող անկեղծ զղումը՝ ընողին կու տայ Մատուած . և աս միջոցով նորէն կու տայ անոր վրայ ուրիշներուն ան յարգն ու համարումը , որ ինքը չգիտեր թէ ինչպէս վատարկի , սակայն թէ իր միտքա-

բութեանը և թէ օգտակարութեանը համար՝ Մատուած կ'ուզէ որ անիկայ ձեռք բերէ , և մարդկորէն խօսելով , անկարելի է ուրիշ կերպով ձեռք ձգել : Բայց յանցանքը ազատարար խոստովանելուն՝ և անոր համար խորին խոնարհութիւն ցուցնելուն մէջ այնպիսի պատուաւոր մէկ բան մը կայ՝ որ ամէն տեսնողները՝ ի հարկէ հաւանելու են անոր : Այսպիսի տրամադրութեան մէջ գտնուող յանցաւորին վրայ կը գլխան , և ջանք կ'ընեն մխիթարել անիկայ՝ ոչ միայն իրենց սէրը՝ այլ նաև իրենց վարկումը յայտնող խօսքերով :

7 . Անդհակառակն , մեզայ մէջ իյնալու շատ ցաւալի օրինակներ ալ կրնան ըլլալ՝ ուր որ յանցանքը թէպէտ շատ մեծ է Մատուծոյ առջևը , բայց մարդոց աչքէն ծածկուած : Աս պարագային մէջ յիշէ՛ որ գործը Անոր հետ է՝ որուն թափանցող աչքին ամէն բան իր ճշմարիտ լուսովը կ'երևի . վասն որոյ անոր առջև՝ ձգէ հողիդ , և մէկ հանդիսական հաշտութիւն մը ըրէ անոր հետ , հաստատելով անիկայ իր Արդւոյն մահուան յիշատակներովը՝ սուրբ սեղանին հաղորդ ըլլալով : Աւ երբոր աս կ'ընես , մի՛ խորհիր թէ որովհետև թողութեան նշաններ առիր՝ վասն որոյ իյնալու յանցանքը իսկոյն մոռնալու է : Անիկայ դեռ յիշողութեանդ մէջ պահէ՛ դալու ժամանակին մէջ զգուշութեան համար . ողբն անոր համար Մատուծոյ առջևը , մանաւանդ առանձնական աղօթից ժամանակներդ . և խոնարհութեամբ նայէ՛ ան վէրքերուն նշաններուն՝ որոնց քու յիմարութիւնդ պատճառ եղաւ , մինչև անգամ աստուածային շնորհօք կատարելապէս բժշկուելէդ ետքն ալ : Այսն զի Մատուած չհաստատեր իր ուխտը՝ որ ամէն անցեալ անառակութեան զգացումը վերջընէ , այլ « որպէս զի յիշես ու ամշնաս . և ամշնալուդ պատճառովը մէյմըն ալ բերանդ չընաս , երբոր քու ըրած բոլոր գործքերուդ համար՝ քեզի քաւութիւն ընեմ՝ կ'ըսէ Տէր Ահովան » : Աղէ՛ . ԺԳ . 63 :

8 . Աւ արդ՝ բովանդակապէս , եթէ կը փափաքիս սրտի այսպիսի փիճակ մը ստանալ և այսպիսի քայլափոխութեամբ դառնալ , ուրեմն անմիջապէս Մատուծոյ առջևը գետինն

ինկիր՝ և հետևեալներուն պէս խօսքերով սիրտդ անոր առ-
ջին թափէ :

Նոգեալ որդւաներ և ուխտեր ընկելն էօրք ծանր հոգի մեզ
իցնողն համար աղջիւր է :

Ո՛վ Սուրբ , Սուրբ , Սուրբ , Տէր Մատուած . երբոր
կը խորհիմք քու ամբիժ մարբութեանդ ու քու հաստատուն
կառավարութեանդ ճիշդ և անաչառ կերպերուն վրայ ,
հանդերձ քու ամենակարող զօրութեանդ՝ որ կարող է
քու սրտիդ ամէն խորհուրդը անմիջապէս և կատարելապէս
'ի դորձ դնել , իրաւամբ ամօթով և երկիւղով կ'երևնամ
այսօր քու առջևդ՝ հոգւոյ խոտվութեամբ և սրտաթափու-
թեամբ : Այսօր՝ ո՛վ իմ Մատուածս , այս մութ ողբալի
օրը կ'ուզեմ՝ ձեռք առնել , և մեր յանցանայն ու մեր
թշուառութեանը ան ցաւալի աղբիւրին՝ մեր նախածնո-
ղացը անկմանը նայիլ , և քու յանցաւոր 'Իախթ ծառա-
շիդ հետ բսել , "Մհա ես անօրէնութիւնով ծնայ , ու
իմ մայրս մեղքով յղացաւ զիս" : Սաղմ . ծն . 5 :
Ա՛ողբամ այսօր այսպիսի ծննդեան մը՝ ինծի նկատմամբ բո-
լոր մահաբեր հետևութիւններուն համար : Աւ ո՛հ , որ-
քան շատ են անոնք : Իմ անզեղջ վիճակիս մէջ դորձած
մեղքերուս՝ և ան ետքը բրած սխալմունքներուս և ունեցած
տկարութիւններուս յիշատակները իրաւամբ զիս կը չիտ-
թեն : Ի՞նչ մեծ տեսարան մըն է՝ որ հիմա խղճմտանքիս
ու քու ամենատես աչքիդ առջին կը կենայ : Ասան զի
դուն՝ ո՛վ Տէր , "իմ յիմարութիւնս դուն գիտես , ու
յանցանքներս քեզմէ ծածկուած չեն" : Սաղմ . կթ . 5 :
"Իմ թափառական պտըտիլս քու զբքիդ մէջը գրուած
է" , (Սաղմ . ծղ . 8 ,) իմ քեզի դէմ բրած ամէն ան-
նապանդութիւնս ու ապստամբութիւնս կը տեսնես ու կը
դրես : 'Իուն կը տեսնես անոնք ամէն ծանրացրնող պա-
րագանքովը՝ որոնք ես ալ կը նշմարեմ , և շատ ուրիշ-
ներն ալ՝ որոնք ես բնաւ գիտած կամ վրան խորհած ալ
չեմ : Աւրեմն ի՞նչպէս պիտի երևնամ քու առջևդ՝ կամ
քեզի վերցրնեմ իմ երեսս : Աղբ . թ . 6 : Անարդանօք
լցուած եմ , (Յոթ . Ժ . 15 ,) և զազտնի տհամութիւն
մը կը զգամ՝ քեզի դալ խորհած ատենս . բայց "Տէր՝

որժև պիտի երթամ" : Յով . 5 . 69 : Քեզի՛ որմէ կախում ունի իմ կեանքս կամ մահս . քեզի՛ որ դուն միայն կրնաս վերցընել իմ յանցանքիս բեռը , որն որ զիս հիմա յերկիր կը ձնչէ . որ դուն միայն կրնաս տալ իմ հոգւոյս ան հանդիսան ու խաղաղութիւնը՝ որն որ կորսընցուցի , և որն որ արժանի եմ յաւիտեանս կորսնցընելու :

Ինծի նայէ՛ ով Տէր Աստուած , որ քու ոտքդ եմ ինկեր : Ինծի նայէ՛ որ քու առջևդ եկեր յանցանքս կը խոտտովանիմ , և ան արդար դատաստանին կը մատնեմ ինքզինքս , որմէ շեմ կրնար փախչիլ : Մէկ խօսք մը չունիմ ըսելու զիս արդարացընելու և ինծի ջատագոյութիւն ընելու համար : Խօսքերը՝ որ ամենեւին չեն կրնար իմ անմեղութիւնս հաստատել , նաև բնաւ չեն կրնար ըստ բաւականին նկարագրել իմ մեղքիս մեծութիւնն ու ինչի՛ արժանի ըլլալը : Գուն՝ ով Տէր , և դուն միայն գիտես լիովին , թէ որքան եղեւնաւոր և որքան մեծ է անիկայ : Քու անհուն իմաստութիւնդ միայն կրնայ չափել անոր չարութեանը անհուն խորութիւնը : Շատ պատճառներով ես անկարող եմ ասիկայ ընելու : Չեմ կրնար քու Սուրբ Ահհափառութեանդ փառքին վերահասու ըլլալ՝ որուն իշխանութիւնը ես անարգեցի , ոչ ալ ան պղեպղ ողորմութեանց թուոյն , որոնց դեմ մեղանչեցի : Չեմ կրնար միտք առնել քու սիրելի Արդւոյդ արեանը գինը՝ որն որ ասկերախտութեամբ ոտքիս տակն առի , ոչ ալ քու ամենօրէնեալ հոգւոյդ մեծութիւնը , որուն զօրութեանը որքան որ կրնայի՛ ջանացի դեմ կենալ , և որուն գործքը որպէս թէ բոլոր իմ կարողութիւնովս կ'աշխատեի ոչինչը հանել , և իր տնկած շնորհքը փրցընել , որն որ յաւետ ուղեւու եի որ կեանքս դնելով պահեմ և արխնովս ջրեմ : Միլ իմ վարուցս յոռութեանն ու յիմարութեանը . որ այսպէս հոգւոյս վէրքերը բացի , որոնցմէ շատոնցութեան կը մեռնէի՝ թէ որ քու ձեռքդ դեղ մը պատրաստած չըլլար , թէ որ քու միակ Արդիդ արիւն թափած չըլլար ան դեղը պատրաստելու համար . և եղծեցի ան ուխտս , որ ըրի քեզի հետ զոհով , (Ասով . 5 . 5 ,) և իմ Տէրոջս Յիսուսի զոհին յիշատակովը , որով պարտական եղայ անոր մարմնոյն և արեանը : Ին Ասով .

Ժն . 27 : Որ նաև կրօնքիս վրայ այսպիսի անպատուութիւն բերի , այնպիսի անվայել ընթացքով մը . և թերևս անոր ամենամեծ թշնամիներուն բերանները բացի , իմ պատճառաւս անիկայ նախատելու և մէկ քանիները գայթակղեցրնելու իրենց յաւիտենական կործանմանը համար :

Աը զարմանամ՝ ո՞վ Տէր Աստուած , որ հոս քու առջևդ կեցեր եմ ու աս ամէնը կը խոստովանիմ : Աը սքանչանամ՝ որ արդէն շատ ժամանակ առաջ շերեցար ինձի դէմ իբրև արագ վկայ մը , (Մող . ց . 5 ,) և քու բոցավառ բարկութեանդ կայծակը ինձի դէմ նետեցիր , ու զիս դժոխքը շերկեցիր՝ հոն զիս թէ՛ ինձի և թէ՛ քովս եղողներուն ահ մը ընելով՝ աւելի խիստ վրեժով և կորուստով մը երևելի ընելու իմ անձս մինչև անգամ ան տեղը , ուր ամէնն ալ թշուառ և ամէնն ալ անցոյս են :

Ո՞վ Աստուած , քու երկայնամտութիւնդ սքանչելի է : Բայց որքան ևս առաւել սքանչելի է քու շնորհքդ , որ աս ամենէն ետքը զիս քեզի կը հրաւիրէ : Քանի որ ես հոս կեցեր ինձի դէմ դատաստան կը կտրեմ թէ արժանի եմ մեռնելու՝ յաւիտեանս մեռնելու , դուն ինձի յաւիտենական կենաց խօսքերը կը խրկես , և աստատմբ որդւոյ մը պէս կը կանչես քեզի դատնալու : Երբ . ց . 22 : Ընոր համար ահա ես՝ ո՞վ Տէր , քու խօսքիդ հրաւերքովը և քու շնորհքիդ քաջալերելովը քեզի կու գամ . և իմ մեծ անօրէնութիւններովս խոնարհութեամբ կ'աղաչեմ քեզի ձերիսպէս անոնց ներում շնորհելու . վասն զի գիտեմ որ թէպէտ « իմ մեղքերս մինչև երկինքը հասան » , (Հայր . Ժ . 5 ,) և « մինչև ամպերը ելան » , (Երբ . Ժն . 9 ,) բայց « Քու ողորմութիւնդ՝ ո՞վ Տէր , երկինքէն վեր է » : Մող . Ժ . 4 : Հասցուր ինձի ան ողորմութիւնը՝ ո՞վ երկնաւոր Հայր , և աս երևելի օրինակովը յայտնէ քու շնորհացդ արդիւնքներն ու քու Որդւոյդ արեանք գորութիւնը . վասն զի անշուշտ թէ որ աս իմինիս պէս որդան կարմիրի պէս մեղքերը կրնան « ձիւնի պէս և ասրի պէս ճերմակ » ըլլալ , (Եսայ . ան . 18 ,) և եթէ ինձի պէս մէկ ասպտամբը կրնայ յաւիտենական փառքի բերուիլ , երկիրը զարմանքով և երկինքը զոխարանութեամբ լեցուելու է . և ամենամեծ մեղաւորը կրնայ զուարթութեամբ

Թողու՞թեան դիմել , թէ որ ես՝ « մեղաւորներուն գըլուխս » , թողու՞թիւն գտնեմ : Այս ո՛հ թէ՛ երբոր ես կ'ողբամ , և ոտքդ ինկած՝ որպէս թէ արիւն կը թափեմ՝ որքան ատեն որ դուն յարմար կը սեպես , վերջապէս կամենաս բժշկել իմ աննա որ քեզի դէմ՝ մեղանչեց , (Սող . խն . 4 ,) և « ինծի մոխիրի տեղ՝ փառք , սուղի տեղ՝ ուրախութեան իւղ , կտորած՝ հոգիի տեղ՝ զօրութեան պատմուճան տալ » : Ասայ . կն . 3 : Ո՛հ թէ՛ հաճէիր վերջապէս « քու փրկութեանդ ցնծութիւնը ինծի ետ դարձընել , և ուրախութեան երգեր լսել տալ ինծի , որ ցնծանան ոսկորները որ կտորեցիր » : Սող . ծն . 8 , 12 : Ան ատենը՝ երբոր քու ներող սիրոյդ մէկ խնայումը իմ սրտիս վրայ տարածի , և թողու՞թեան ձայնովը զուարթանայ անիկայ , քու շնորհքդ ուրիշներուն պիտի հռչակեմ . « ամբարիշտներուն պիտի սորվեցընեմ քու ճամբաներդ , ու մեղաւորները քեզի պիտի դառնան » , (Սող . ծն . 13 ,) անոնք որ քեզմէ ապտամբած են , քաջալերութիւն պիտի առնեն քեզ փնտռելու՝ նայելով իմ բարեյաջող փորձառութեանս , որն որ մեծ ուրախութեամբ պիտի պատմեմ ամենուն քու փառքիդ համար , թէ՛և իմ երեսիս մեծ ամօթ ու շիտթութիւն բերէ : Այս ըլլայ որ « Տէրոջը աս ուրախութիւնը իմ զօրութիւնս ըլլայ » , (Նեեմ . ք . 10 ,) անանկ որ անով ասկէ ետե քեզի ծառայեմ՝ մինչև հիմա դիտցածէս շատ աւելի զօրութեամբ ու նախանձաւորութեամբ : Ասիկայ կը խնդրեմ ամենայն խոնարհութեամբ քու կամքիդ նազանդելով , վասն զի չեմ համարձակիր պնդելու : Թէ՛ որ դուն յարմար կը տեսնես զիս ուրիշներուն զգուշութիւն մը ընելու համար սահմանել՝ որ իմ բոլոր օրերս մթութեան մէջ քայեմ , և վերջապէս ամպի մը տակ մեռնիմ , « քու կամքդ թող ըլլայ » : (Կայց՝ ով Աստուած , վերջապէս ողորմէ՛ աս մեղաւորեց հոգւոյս քու Որդւոյդ համար , և ինծի մէկ տեղ մը տուր փառաց սահմաններուն մէջ , թէ և քու բոլոր ուրիշ ծառաներուդ ոտքերուն տակն ըլլայ : Ո՛վ Տէր , զիս ան ամէնօրնեալ աշխարհք տար , ուր այլ ևս Աստուծմէ պիտի չհեռանամ , ուր այլ ևս խղճմտանքս պիտի չփրաւորեմ , և քու սուրբ անունդ պիտի չանար-

դեմ , թէև ճամբան ըլլայ ամենախաւար ձորին մէջէն ,
 որ երբէք մէկը անցաւ : Ան ատենը լեզուս պիտի բա-
 ցուի , որքան ատեն ալ որ հոս յանցանքիս շփոթու-
 թեամբը բռնուած ըլլայ . և անմահ գովարանութիւն-
 ներ պիտի մատուցանէ ան յաղթական արեանը՝ որ մեղաց
 այսպիսի վատահամբաւ գերի մը ազատեց , ինչպէս կը
 խոստովանիմ որ եմ , և քանի մը անգամ գերութեան ու
 ապականութեան մէջ իյնալէս ետքը , զիս արժանի ըրաւ
 անոնց իշխանութեանն ու սրբութեանը բաժանորդ ըլլա-
 լու , որոնք « Թագաւորներ ու քահանաներ են Աստու-
 ծոյ » . Հայտ . ւ . 6 . Ամէն :

Գ Լ Ո Ւ Ի Խ Ի Դ

Վերհասունէի հը վրայ՝ սրբէ Աստուած իր երեւը ծածկած է :

1 . Ա իճակ մը կայ՝ որ շատ անգամ կը պատահի քրքրատունէական կենաց ընթացքին մէջ , որն որ անոնք՝ որ կը սովորեցընեն ինքզինքնին միշտ բարեպաշտութեան ետեւէ ըլլալու , սովոր են “ Աստուծոյ երեսին ծածկիլը ” կոչել : Ասիկայ Աստուծոյ խօսքէն առնուած գրոյց մըն է , անոր համար կը յուսամ թէ մէկը պիտի չանարգէ զանիկայ՝ երբոր առաջին անգամ կը լսէ : Աս զլիսուն մէջ իմ դիտաւորութիւնս է նկարագրել զանիկայ՝ կրցածիս չափ պայծառ կերպով , և ապա քիչ մը խրատ տալ ան զիճակին մէջն ինկած ժամանակդ ինչ ընելիքիդ վրայով , ինչպէս որ շատ հաւանական է որ իյնաս անոր մէջ՝ աս աչխարհիս անապատին մէջ ճամբորդութիւնդ չլինցուցած :

2 . Աս խօսքին իմաստը՝ Աստուծոյ “ իր երեսը մէկու մը վրայ փայլեցընելը , կամ իր երեսին լոյսը մէկու մը վրայ ծագելը ” ըսուած հակառակ գրուցուածքով ըստ մասին կրնայ բացատրուիլ : Ասիկայ կը թուի թէ կ'ակնարկէ բարեկամի մը երեսին ունեցած հաճոյական և ուրախալից երեւոյթը , մանաւանդ մեզմէ վեր եղող բարեկամի մը , որ ատեն կը խօսի անոնց հետ՝ որոնք կը սիրէ , և որոնցմով կը զուարճանայ : Վախթ՝ Աստուծոյ իր շնորհքը իրեն յայտնելուն վրայ ունեցած բաղձանքին վրայով խօսած ատենը կ'ըսէ “ Ա՛վ Տէր՝ քու երեսիդ լոյսը իմ վրանս ծագէ ” , և իբրև անոր արդիւնքը՝ “ Իմ սրտիս ուրախութիւն սուիք , անոնց ցորենին ու զինիին առատութեան ժամանակէն աւելի ” : Սուղ . դ . 6 , 7 : “ Ահա անկարելի չէ որ Վախթին գործածած աս ոճին մէջ մէկ ակնարկութիւն մը ըլլայ ան պայծառ լուսափայլութեանը , որ ամպին մէջ կը բնակէր՝ Խարայէլի հետ եղած աստուածային ներկայութեան իբրև ակներև նշանը , որ Աստուած հաճեր էր մասնաւորապէս յայտնել մէկ քանի զլիստոր

դէպքերու ատեն , իբրև նշան իր շնորհացն ու ընդունելութեանը : Ասան որոյ ընդհակառակն , Եստուծոյ « իր երեսը ծածկելը » անտարակոյս իր շնորհացը նշանները պահելը նշանակելու է , և իր տհաճութեանը մէկ նշանը համարուելու է : Եսանկ կ'ըսէ Ասայի . « Չեր՝ ու ձեր Եստուծոյն մէջտեղը բաժանում՝ ձգողը՝ ձեր անօրէնութիւնները եղան . և ձեր մեղքերը անօր երեսը ձեզմէ ծածկեցին , որ չլսէ » . Ասայ . ծԹ . 2 : Աւ դարձեալ՝ « քու երեսը մեզմէ ծածկեցիր » , մեր քաշած շարիքներուն շնայելով , « ու մեր անօրէնութիւններուն պատճառով մեզ մաշեցիր » : Ասայ . կգ . 7 : Ա'ըսուի ալ թէ « Եստուած իր աչքերը կը ծածկէ » (Ասայ . ւ . 15) իրեն անհաճոյ եղած բնութեան տէր մտորդիկներէն . երբոր իրեն կու գան իրենց աղաչանքներովը , որպէս թէ չուզեր անոնց նայիլ : Եսիկայ է պարզապէս Սուրբ Գրոց ցուցուցած իմաստը աս խօսքին վրայօր , և ասոր համաձայն քրիստոնեաները առ հասարակ կը բանեցընեն աս ոճը հիմա ալ , և ան ամէն բաները՝ որ անոնց դէմ՝ աստուածային տհաճութեան մէկ նշան մը կը թուի , աս զբուցուածքով կը ցուցընեն :

3 . Այլ ևս աս ալ դիտելու է հոս թէ , ան բաները որ դէպ 'ի իրենց եղած աստուածային շնորհաց արտայայտութիւնները կը սեպեն , միայն ժամանակաւոր չեն , և ոչ գլխաւորապէս ժամանակաւոր , այսինքն միայն աս մարմնաւոր և կորստական կենաց օրջութիւններուն չեն վերաբերիր : Դաւիթ , թէպէտ օրէնքին խոստմունքը մշտտօրև վերաբերութիւն մը ունէին ասանկներուն , բայց տակաւին սորված էր ալ աւելի յառաջ նայիլ , և « ցորենի կալին կամ նձանին օրջութիւններէն » իբրև նախապատիւ՝ և վասն որոյ իբրև բողբոջիկն որոշ կը նկարագրէ զանոնք : Սող . դ . 7 : Այլ թէ որ դուն՝ որուն կը խօսիմ՝ հիմա , չես գիտեր անոնց ասանկ ըլլալը , յայտնի է որ բողբոջիկն ազէտ ևս մեր քննութիւն բրած նիւթին վերայով , և ճշմարտիւ գետ սորվելու ևս ճշմարտ հաւատոյ առաջին դասերը . Դաւիթին « Տէրօջը վայելչութիւնը տեսնելու » , (Սող . իէ . 4 ,) կամ « անկողինին վրայ զանիկայ յիշած ատենը իբր թէ ճարպով ու պարարտու-

Թիւնով կշտանալու" , (Սաղ . կ՛ . 5 , 6 ,) ինչպէս նաև " անոր տանը ու անոր սուրբ տաճարին բարութենէն լեցուելու" վրայ բոլոր ըսածներն ալ աս նոյն մտքն առնելու է , և ճշմարտիւ փորձառու եղող հոգիին շատ բացատրութեան կարօտ չեն : Բայց անոնք՝ որ Մատուծոյ երեսին լոյսը և անոր երեսին փայլիլը գիտցած են , աս զիտութեանը աստիճանին համեմատ կարող պիտի ըլլան զազափար մը ձևացնել՝ անոր իր երեսը ծածկելուն՝ կամ իր ժողովուրդին իր ներկայութեանն ու շնորհացը վստայով տուած նշանները ետ պահելուն վրայ , որն որ երբեմն մեծապէս կը դառնացընէ մեր երջանկութիւնը . ինչպէս անոր հակառակը կը մեղմացընէ տառապանքը , և շատ անգամ դառնութեան զգացումը բոլորովին կը վերցընէ :

4 . Եւ ներուժ շնորհէ որ խմացընեմ քեզի՝ իմ քրիստոնէայ բարեկամն , (վասն զի ասանկի տեղ գնելով ընթերցողս կը խօսիմ հիմա ,) թէ Մատուծոյ սիրոյն զգացումն և անոր շնորհացը նշաններէն այս կերպով զըրկուիլ՝ կրնայ ըլլալ որ շուտով քեզի ալ պատահի , թէև կարելի է հիմա Տէրոջը լոյսը քու վրայ ծագիլը տեսնելու բերկրութիւնը կը վայելես , կամ՝ թէև մինչև անգամ կը թուի թէ արեւը քու բոլոր հոգւոյդ մէջ կը փայլի : Արնայ ըլլալ որ աստուածային կատարելութեանց և փառաց վրայ ունեցած կենդանի տեսութիւններդ կորսնցընես , որոնց վրայ մտածելով հիմա ստ ներքին հաճութիւնը կը զգաս : Արնայ ըլլալ որ աստուածային իմաստութեան և զօրութեան , աստուածային ողորմութեան և հաւատարմութեան , ինչպէս նաև անոր արդարութեանն ու սրբութեանը վրայ մտածես , և տեսութեանդ մէջ հոգւոյ ներքին բերկրութիւն չզգաս շատ . ինչ և իցէ կենդանի տպաւորութիւններու նկատմամբ անանկ կրնայ ըլլալ , որպէս թէ մտածմունքդ սոսկ հասարակ առարկայի մը վրայ է : Արնայ այնպէս թուիլ քեզի թէ՛ աս երեւելի բաներուն վրայ բոլոր ունեցած զազափարդ կորսնցուցեր ես , թէև անոնց վրայ մտածելը երբեմն սքանչացման՝ զարմացման՝ և սիրոյ զգացումներով քու բոլոր հոգիդ կը յափշտակէր : Արնայ ըլլալ որ աստուածային շնորհաց վրայ ունեցած բերկրաւից զգացումը կորսնցընես : Արնայ ըլլալ

որ մեծապէս և ցաւազին կերպով տարակուսիս , թէ արդեօք Մատուծոյնն ես . և անոր ամէնօրնեալ Հողոյն բոլոր գործքը այնպէս ծածկուի ու գոցուի քու հոգիէդ , որ ան յաակութիւնները՝ որոնցմով ան Սուրբ Արքեպիսկոպոսի մեծքը կը ճանչուէր , բայտ մեծի մասին 'ի կորուստ երթան . և դուն ալ սեպես թէ՛ մի միայն ինքզինքդ խաբած եղար առջի ունեցած բոլոր յոյսերովդ : Հետեապէս՝ ան պաշտամունքները որոնցմով հիմա կ'ուրախանաս , քեզի շատ տհաճելի կրնան ըլլալ կամայ կամայ , մինչև անգամ երբ որ ճշմարտիւ կը ցանկաս անոնցմով Մատուծոյ Հետ հաղորդակցութիւն ընել : Արնայ ըլլալ որ Աւետարանին ամենէն բերկրալից ճշմարտութիւնները բացատրուիլը մըտիկ ըրած առնել , Մատուծոյ որդեոցը արտօնութիւնները յոյժ սիրելի կերպով քու առջևդ դրուած տեսնես , և ամենեկին մտքէդ շանցնի՝ թէ դուն անոնց մէջ ինչ և իցէ մասն կամ բաժին ունիս . և այդ ցրտութենէն ու անդգայտութենէն մէկ ուրիշ փաստ մը կ'ելլէ՝ թէ դուն անոնց Հետ բան մը չունիս ընելու : Այն ատենը՝ « քու սիրող փախեր կը մտածէ » , (Նոյ . ԼԳ . 18 ,) և քեզ խոռովեցրնող թշուառութեան մէջ քու անցեալ ամենասիրելի բերկրութիւններուդ վրայօքը երբոր կը մտածես , կը կարծես թէ անոնք թշուառութեանդ ծանրութիւնը կ'աւելցրնեն , և աւելի զգալի կ'ընեն քեզի անիկայ քանի որ մտածես թէ երբեմն ախորժակ ունէիր աս բաներուն , բայց հիմա բոլորովին կորսնցուցեր ես : Անանկ որ թերեւ թուի քեզի թէ՛ անոնք որ հոգևոր զգացմանց վրայ ամենեկին բան մը իմացած չեն երբէք , քեզմէ առաւել երջանիկ կամ գունէ քեզմէ քիչ թշուառ են : (Թերեւ աս ցաւալի ժամերուն մէջ մինչև անգամ տարակուսիս՝ թէ արդեօք երբէք աղօթք ըրած ես , և թէ՛ արդեօք ան ամէն բաները որ զՄատուծած վայելելու կը համարէիր , մէկ սուտ բերկրութիւն մըն էին հողոյ ամենամեծ թշնամիէն տրուած , քեզի սեպել տալու համար թէ քու վիճակդ աղէկ է , որ անանկով իրեն ապահով որսն ըլլաս :

5 . Արնայ ըլլալ որ ժամանակ մը աս ըլլայ վիճակդ և պարսպ տեղը պաշտամունքներու դոնուիս , և անոնց մէջ Մատուծոյ ներկայութիւնը փնտռելու ալ պարսպ ըլլայ :

Արեւի է որ առանձին աղօթք ընես հոգւով , և ապա ընկերական պաշտաման գտնուիս , և ասոնց երկուքին մէջն ալ շատ հաճութիւն չգտնես , այլ ստիպուիս Սաղմոսերգութիւն գանգատը ձեռք առնել , “Ո՛վ իմ Եստուածս՝ ցորեկը քեզի կը կանչեմ , ու չես սրտասխաներ . և դիւ չերը կը կանչեմ , ու չեմ դադարիր” , (Սաղմ . իբ . 2 ,) կամ Յորինը , թէ Ահա դէպ 'ի արեւելք կ'երթամ , ու անիկայ շերեւար , և դէպ 'ի արեւմուտք , ու զանիկայ չեմ նշմարեր . դէպ 'ի հիւսիս կ'երթամ , ուր որ ինքը կը դործէ , բայց զանիկայ չեմ կրնար դիտել . հարաւային կողմը կը պահուի , ու չեմ կրնար տեսնել զանիկայ” : Յօբ . իբ . 8 , 9 : Անանկ որ՝ մտքիդ մէջ հոգևոր երեցած ամէն բաները պիտի թուին թէ տրամութեան փոխուեր են կամ երկիրդ դարձեր են , կամ մէկ սախտրին զգացու՛մը եղեր են՝ թէ դուն անարժան ես՝ ու հետևապէս պիտի չհամարձակիս Եստուծոյ անջընք վեր վերցընել , և զրեթէ պիտի ամշնաս քու իր ծառաները սեպածներուդ աղօթից ժողովին մէջ կայնելու : Աս դիտեմ՝ աս բանը քանի մը աղչիւ քրիստոնէից վրայ , որոնց հոգևոր ընթացքի մէջ ունեցած յառաջադիմութիւնը երեւի եղած էր , և զորոնք Եստուած իրենց եղբարցը շատերէն աւելի պատուած էր՝ անոնց և անոնց ձեռքով ուրիշներուն՝ ըրած շնորհքներովը : Աւստի ներում շնորհէ որ այսպէս նկարագրելէս ետքը՝ քեզի մէկ պարզ խրատ մը տամ ասոր վրայով . և կրնամնլ երևակայութենէ յառաջ եկած մի՛ համարիր անիկայ՝ որ մէկ կողմանէ իրաց վրայ սերտ և յաճախ նկատմունք ունենալէն , և միւս կողմանէ այսպիսի աւերեալ վիճակի մը մէջ եղող փափուկ և աստուածապաշտ սիրտը սփոփելու համար անկեղծ և կաթոզին փափաքէ մը յառաջ կու գայ : Գննէ համազուած եմ որ՝ աշխատութիւնս անտես պիտի չընէ , և պիտի չտհամի անոր՝ “ոչխարներուն ան մեծ շովիւր” , (Աբբ . ժի . 20 ,) որ պատուիրած է մեզի “վատասիրտները մխիթարել” : Ին թմի . Ե . 14 :

6 . Իսկ հոս՝ առաջ կը խրատեմ քեզ մեծ փութով բննել թէ արդեօք աս ներկայ տառապանքդ յիրաւի ճշմարտապէս հոգևոր պատճառներէ յառաջ կու գայ՝ թէ

յաւէտ մարմնոյն մէկ անկարգութենէն , կամ կենաց այնպիսի պարագաներէն յառաջ եկամ չէ՞ արդեօք , որոնց մէջ դժուարած ես 'Աստիճանաժողովներէ , և որոնք կրնայ ըլլալ որ զօրութիւններդ տկարացնեն և միտդ թուլցունեն : Երբ բնութեանը նուաստագոյն մասին , (աս մարմնեղէն վիճակին մէջ քանի որ կը կենանք ,) աշուազունին՝ այսինքն անմահ հոգւոյն վրայ ունեցած ազդեցութիւնը այնքան յայտնի է որ՝ մէկ մտադիր անձ մը չկրնար բնդհանրապէս անոր տեղեակ չըլլալ . բայց և այնպէս շատ մարդիկ կան՝ որ ըստ բաւականին չեն նկատեր ասիկայ , և գուցէ դուն ալ անոնցմէ մէկն ըլլաս : Երևան որպիսութիւնը շատ անգամ անանկ է որ հարկաւ տխուր զաղափարներ կը յարուցանէ մինչև անգամ երազի մէջ . և անյարմար կ'ընէ հոգին ինչ և իցէ բանէ մը բերկրութիւն առնելու , և երբոր աս ասանկ է , ինչո՞ւ համար անանկ սեպնք թէ մանաւոր աստուածային տհաճութենէ մը յառաջ եկամ է՝ երբոր հոգին հաւատոյ մէջ իր սովորական բերկրութիւնը չցածնէ : Կամ ինչո՞ւ համար խորհնք թէ Մատուած հեռացեր է մեզմէ , թող տալուն համար բնական պատճառներուն՝ որ բնական հետեութիւններ յառաջ բերեն , առանց՝ աս կապակցութիւնը արելու համար հրաշքով միջահատելու : Երբոր ասանկ է բանը , յաւէտ բժշկին օգնութիւնը փնտռելու է՝ քան թէ աստուածաբանին . կամ դո՞նէ ան ալ փնտռելու է՝ ան ալ . և դեղը՝ պահեցողութիւնը՝ շարժումը՝ և օգափոխութիւնը կրնան քանի մը շարաթիւն մէջ ան ներգործութիւնն ընել , որն որ ամենազօրաւոր տրամաբանութիւնները՝ յոյժ ազգու յորդորանքներն ու մխիթարութիւնները թերեւս ամիսներով ոչինչ տեղը պիտի յողնէին յառաջ բերելու :

7 . Աւրիշ գէպերու մէջ մտքին վճատութիւնն ու թուլութիւնը կրնայ ըլլալ որ մեր աշխարհային պարագաներուն մէջ գանուած մէկ անյաջող բանէն ծագի : Արնայ ըլլալ որ մեր պարագաները մթնցընեն և գրաւեն մեր խորհուրդները , և դառնացընեն բնութիւննիս , և ասանկով մեծ աստիճանաւ մը անյարմար ընեն մեզ հոգեւոր պաշտամանց և հաճութեանց . և երբոր աս ասանկ ըլլայ , դարմանը կ'ըլլայ Մատուածային 'Աստիճանաժողովեան Զարգան-

ղելով՝ մեր կիրքերը կարելի եղածին շափ աս աշխարհէս վերջընելով՝ կրցածնուս շափ ինքզինքնիս բեռէն ազատելու համար խոհեմ փոյթ մը բանեցրնելով անպիտան ծախուց շափաւորութեամբն ու գործքերնուս աղէկ ետեւէն ըլլալով՝ և խոնարհութեամբ աստուածային օրնութեանը ապաւինելով , միանդամայն ջանալով որ հաւատքով վեր անոր նայինք՝ որ երբեմն թող կու տայ որ իր զաւկըները այսպիսի դժուարութեանց մէջ իյնան , որպէս զի ինքզինքը աւելի սիրելի ընէ անոնց՝ իր անոնց օրնութեանը համար բռնած ընթացքովը :

8 . Աս սկզբունքներուն համեմատ քննութիւն ընելով՝ կրնայ ըլլալ որ պիտի երևնայ թէ՛ մեր դանդաւած ներդու-
թիւնը մեր կարծածէն շատ տարբեր հիմն ունի : Բայց երբոր առողջութիւնը տեղն ըլլայ և պարագաներն ալ հանդիստ , երբոր կենսական գորութիւնները տրամադրեալ են ուրախութեան և ցնծութեան , բայց հոգևոր ուրախութեան համար եղած ախորժակը դացած է . երբոր հոգին բռնուած է տեսակ մը քնափութեան անզգայութիւնով , կամ ան բանով որ յարմար է կոշիւ անզգայութիւն՝ նկատմամբ գրեթէ ամէն հոգևոր գործքի , մինչև անդամ թէև չկենայ ան խորին ահաբկու ներդութիւնը կամ տաստիկ երկիւղը , որ առաջ ցուցուցի թէ մելամաղձի արդիւնքն է , ոչ ալ կենաց զիւրութիւններուն վրայով ան անձկութիւնը՝ որ նեղ պարագաները բնականապէս յառաջ կը բերեն . թէ որ քու փիճակդ այսպէս է՝ կը փոխեմ իմ խրատս , և կը պատուիրեմ քեզի թախանձանօք որ կարելի եղած ամենայն մտադրութեամբ և անաշտութեամբ ան պատճառը փնտռես , որ քու վրադ բերաս աս մեծ շարիքը՝ որուն տակը իրաւամբ կը հեծես : Այս հաւանականաբար ընդհանրապէս պատճառը մեղքն է , մէկ զաղանի մեղք մը , որ աշխարհի աշխին անտեսանելի է . փասն զի ան մեծ շարութիւնները՝ որոնք ուրիշները կը տեսնեն և կը մեղադրեն , հաւանականաբար նախկին գրչսուն մէջ յիշուած որպիսութեանը տակը կ'իյնան՝ գիտութեամբ և խորհրդով գործուած յանցանք ըլլալովսին : Երբ՝ Ետուծոյ աչքը տեսած է ան շարիքները որ ընկերներդ չեն կրցած տեսնել . և զանոնք ուրիշներէն ծածկե-

լու համար բրած աս ջանքիդ պատճառաւք՝ (բանի որ չէիր կրնար չցիտնալ թէ Մատուծոյ անոնք յայտնի էին,) մնաւ նաւոր կերպով մը զինքը նախատեցիր ու վշտացուցիր, ու զրեթէ ծաղր ըրիր պիտի ըսէի. և ահա ասկէ կ'ելլէ անոր արդար տհաճութիւնը: Ահ՛ բնաւ մի՛ մոռնար ասիկայ, որ յայտնապէս զրուցուած, ընդհանրապէս գիտցուած, և զրեթէ ամէն հոգեւոր ականջի ընտանի է, բայց և այնպէս մեր սրտերովք շատ քիչ կը զգանք անիկայ, «Չեր՛ ու ձեր Մատուծոյն մէջտեղը բաժանում ձգողը՝ ձեր անօրէնութիւնները եղան, և ձեր մեղքերը անոր երեսը ձեզմէ ծածկեցին, որ չլսէ»: Առայ. ծ. թ. 2: Այս ասիկայ բովանդակապէս՝ Մատուծոյ մէկ բազում մողորմ վարմունքն է քեզի հետ, թէև դառն թուի. վասն որոյ ընկրու թշուառութիւնդ մի սեպեր դանիկայ, այլ նաև քեզ արթնցնելու համար տրուած՝ որ զոհ չըլլաս Տէրոջը առջևը խոնարհութեան արտաստեքներով կենալ, այլ Յետուայ նման ելլես և մեծ զօրութեամբ ոյժդ՝ ՚ի զործ դնես «նզովածը քու մէջէդ վերցնելու», ինչ որ ըլլայ ան: Թող աս ըլլայ քու անմիջապէս և փափաքանօք ՚ի զործ դնելիք ճիգդ, որ հպարտութիւնդ ցածնայ, հսկողութիւնդ հաստատուն պահուի, կիրքերդ աշխարհի մեռնին, և վերջապէս՝ երկնից յարմարութիւնդ ամենայն նկատմամբ աճի: Ետնք ևն երկնաւոր Հօրդ դիտարութիւնները, և քու մեծ գործքդ թող ըլլայ անոնց համայն գործել:

9. Ասան որոյ վերջապէս, ընդունէ՛ ասիկայ իբրև ամենահարկաւոր խրատ՝ որ կրնայ տրուիլ քեզի, թէ անմիջապէս խղճմտանքդ ճշդութեամբ քննես: Վկանջ դիր անոր ամենամեղմ՝ ձայներուն անգամ: Թե՛ որ կասկած մը կը ծագի մտքիդ մէջ թէ մէկ բան մը ծուռ եղած է, ան կասկածին պատճառը փնտռէ, սրախդ ամէն ծածուկ խորշերը քննէ. բարեկամներուդ խրատը և թշնամիներուդ նախատիքները ձեռք առ վիճակդ աւելի կատարեալ կերպով հասկընալու համար. յիշէ՛ թէ ինչ բանի համար սիրտդ քեզ վերաւորեց Տէրոջը սեղանին քովք, ինչ բանի համար պիտի վերաւորէր քեզ՝ թէ որ մահուան անկողնոյ մէջ ըլլայիր, և ան նոյն ժամուն յախտնականու-

Թեան մէջ մտնելու ըլլայիր : Արբոր բան մը կը գտնես , գրէ՛ անիկայ . և յառնջ զնա քու քննութեանդ մէջ , մինչև որ կարենաս ըսել թէ՛ ասոնք են սրտիս մնացած ապականութիւնները , ասոնք են կենացս մեղքերն ու յիմարութիւնները . այս ինչ բանը զանց ըրի , այն ինչ բանին մէջ սխալեցայ : Աւ երբոր կըցածիդ չափ աս հաշիւդ կատարեցիր , Մտուծոյ դորութիւնովը Զննք ըրէ սրտի մտօք ինքզինքդ բարեկարգելու . կամ՝ յաւետ ամէն սխալ երեցած բանը գտածիդ պէս շուտով շխտելու աշխատէ . « Թէ որ Մենակարողին դառնաս , դուն պիտի հաստատուիս . անօրէնութիւնը քու վրաններէդ հեռացուր . ան ատենը Մենակարողէն ու բախտութիւն պիտի ունենաս , ու երեսդ դէպ 'ի Մտուած պիտի վերցընես : Ընոր պիտի աղաչես , ու քեզի պիտի լսէ . և քու ուխտերդ պիտի կատարես . ու ճամբաներուդ վրայ լոյս պիտի ձառագայթէ » : Յո՞ . Իբ . 23 , 26-28 :

10 . Միանգամայն սպասէ՛ Մտուծոյ՝ ամենայն խորին խոնարհութեամբ , և երկնաւոր Հօրդ պատիճներուն հըպատակէ՛՝ անոր արդար դատաստանը խոստովանելով և ողորմութեանը ապաւինելով . մինչև անգամ՝ երբոր խղճմբտանքիդ յանդիմանութիւնները շատ թեթեւ ըլլան , և Մտուծոյ ժողովուրդին հասարակ եղած տկարութիւններէն 'ի զատ ուրիշ բան մը չցուցընեն , տակաւին ինքզինքդ անոր առջևը ծոէ՛ , և խոտովանէ՛ թէ քու ամենալաւ օրերուդ շարիքներն այնքան շատ են , և ամենալաւ ծառայութեանցդ թերութիւններն այնքան բազմաթիւ են , որ անոնց պատճառաւ արժանի ես բոլոր քաշածներուդ , և քաշածներէդ ալ աւելին , արժանի ես՝ որ ոչ միայն արեգակդ խաւարի , այլ անցնի երթայ և այլ ևս չծագի , և հողիդ յախտնական խաւար վիճակի մէջ ձգէ : Աւ քանի որ խաւարը կը շարունակէ , անհամբեր մի՛ ըլլար : Մի՛ բարկանար ու մի՛ նեղանար , այլ յաւետ հողոյ հանդարտութեամբ և հեղութեամբ « Տէրձը համբերէ՛ » : Սող՛ . ԼԷ . 8 , 34 : Հաճոյ եղիք իր սահմանած ժամանակին սպասելու , և իր բարկութեան հայեցուածքին տանելու , աս խոնարհ յուսով՝ թէ վերջապէս պիտի « դառնայ և քեզի ողորմի » : Աբէ՛ . Ժբ . 15 : Բար-

բովին մոռցած չէ շնորհատու բլլալը , և ոչ ալ որոշած է որ « ալ բնաւ չհաճի » : Ստեղ . չէ . 7 , 9 : « Տէրը յաւիտեան չմերժեր . վասն զի թէև ցաւ կու տայ , իր ողորմութեանը շատութիւնովը զթութիւն ալ կ'ընէ » : Սղէ . 7 . 31 , 32 : Բաղդատապէս միայն « մէկ վայրկեան մին է որ կրեսը քեզմէ կը ծածկէ » . բայց խոնարհութեամբ կրնաս յուսալ որ իր մեծ ողորմութիւնովը պիտի ընդունի քեզ , և « յաւիտենական ողորմութիւնով քեզի պիտի ողորմի » : Մատ . ծի . 7 , 8 : Կս զեղեցկայարմար խօսքերը խն չեն , այլ իրենն են . և իբր թէ ճիշդ իրենց ճակատին վրայ սա բանը կայ , թէ « ան հոգին » որմէ Մատուած իր կրեսը ծածկած է , կրնայ բլլալ որ վերջապէս ընդունէ անիկայ , և իր յաւիտենական ջնորհքը տայ անոր » :

11 . Բայց քանի որ խաւարը շարունակէ , դուն յառաւջ գնա քու պարտաւորութիւններդ կատարելով : Շնորհաց միջոցներն ու սահմանեալ պարտաւորութիւններդ 'ի դործ դիր . կարգաւ և մտածէ . աղօթք բրէ , այո՛ . և Մատուծոյ գովարանութեան երգէ՛ր ալ երգէ , թէև արտեմած սրտով ալ բլլայ : « Մտր հօտերուն շախչներէն գնա » , (Մրդ . ան . 8 ,) գուցէ սա ընելով հօգիներուն Հովուին պատահիս : Գոնէ անոր անցնելու ճամբուն մէջ գանուէ . կարելի է որ սա միջոցով անոր մէկ քաղցր հայեցուածքը ձեռք բերես . և սա հայեցուածքը՝ կամ խորհուրդներուդ մէկ դարձուածքը՝ որ կրնայ բուսի մը մէջ բլլալ , հոգւոյդ մէջ իսկոյն երկինք մը կրնայ բուսեղծել : Տէրովը սեղանը գնա : Թիէ որ չես կրնար ուրախանալ հոն , գնա և ողբա : Գնա և ողբա ան վրկչին վրայ , որն որ խոցեցիր քու մեղքերովդ . Օղ . 4 . 31 . 10 . և հոն շատ անգամ հաստատած ուխտդ կատարելուդ վրայ ողբա : Թերես Քրիստոս զինքը քեզի ճանչընէ՛ « հայր կտրուած ատենը » , (Մտ . 1 . ից . 35 ,) և զարմանաս տեսնելով որ ան քեզի շատ մօտ է եզեր , երբոր դուն կը կարծէիր թէ շատ հեռու է քեզմէ . և կը սեպէիր թէ դուրս ձգուած ես անոր ներկայութենէն : Ե՛սպիտի վայելցնեցու մէջ փնտռէ միտիթարութիւնդ , և ոչ թէ սա աշխարհիս ունայն զուարճութիւններուն և զզայտեան

Հաճութիւններուն մէջ : Ինչաւ պիտի չմոռնամ ան եւս
 ռանդուն զրուցուածքը , որն որ աղէկ վատահ կամ թէ
 խիստ աստուածապաշտ սրտէ մը յառաջ եկաւ , քանի որ
 նոյն ժաման զրեթէ պատրաստ էր աս տեսակ տրտմու-
 թիւններովը նուաղելու . “Տէ՛ր՝ թէ որ քեզ չեմ կրնար
 վայելել , թող ուրիշ բան մըն ալ չվայելեմ” . այլ քու
 ետեւէդ ողբալով զերեզմանն իջնեմ” : Չզարմացայ երբ-
 որ ընցի՛ որ զրեթէ աս խօսքը աղօթքին մէջ Մատուծոյ
 առջևը զրուցածին պէս բեռը վրայէն վերցաւ , և Մատու-
 ծոյ փրկութեանը ուրախութիւնը ետ դարձաւ :

12 . ՄԼ ևս խրատ մըն ալ պիտի ըսեմ , և ասիկայ
 է թէ Նորէն Հիսուսի արեանը դիմես , որուն միջոցովը
 Մատուծոյ ու հոգւոյդ մէջտեղը հաշտութիւն կատարուե-
 ցաւ : Անիկայ է մեր խաղաղութիւնը , և անոր արիւնովն
 է որ մերձաւոր եղանք . Եփեփ . Ի . 13 , 14 . անիկայ էր
 որուն Մատուած հաւանեցաւ , իբրև իր Հոգւոյն սիրա-
 ծը . Սաբ . Գ . 17 . և անով է որ իր շնորհացը փառ-
 քին կ'ընդունուինք : Եփեփ . Կ . 6 : Ուստի՛ ո՛վ քը-
 բխտոնեաց , զնա և խաչեալ Փրկիչին դիմէ հաւատքով ,
 զնա և անոր ինկիր՝ իբրև ողորմած քահանայապետի , “քու
 դանպատդ անոր առջին թափէ քու նեղութիւնդ անոր
 առջին պատմէ” : Սաբ . ԾԽԵ . 2 : Հոգւոյդ թշուա-
 ռութիւնն ու անձկութիւնը բաց անոր , որ երբեմն փոր-
 ձառու եղաւ թէ ինչ է սա խօսքը ըսելը , “Մատուած
 իմ՝ Մատուած իմ՝ , ինչ՞ու զիս թողուցիր” : Սաբ .
 ԻԷ . 46 : Ո՛վ սրանչեղեացս , որ ասանկ խօսք մը ըսէ
 Անիկայ : Վթութեան և բժշկութեան համար անոր
 նայէ , որ ինքն ալ շատ բան քաշեց , ոչ միայն փորձուե-
 լով՝ այլև նկատմամբ զգալի երեւոյթներուն՝ երեսէ ձգուե-
 լով , որ անանկով գիտնայ թէ ինչպէս ողորմութիւն
 ցուցնէ անոնց , որոնք այսպիսի ցաւալի գիճակի մը մէջ
 են , և պատրաստ ըլլայ՝ ինչպէս որ կարող ալ է “օգ-
 նական ըլլալ անոնց” : Եփ . Ի . 18 : “Անիկայ Լու-
 ճանուէլ է , Մատուած մեզի հետ” , (Սաբ . Կ . 23 ,)
 և միայն անով ու անոր միջոցովն է՛ որ իւր Հայրը մեզի
 ողորմութեան և սիրոյ ամենաքաղցր ճառագայթներովը
 կ'երևի : Ուստի թող քու անմիջական փոյթդ ըլլայ ա-

նոր հետ ունեցած բարեկամութիւնդ նորոգել : Ասորչան նորէն անոր կենացն ու մահուան յիշատակազրութիւնները . և ասիկայ բնելու ատենդ անշուշտ մէկ ներքին քաղցրութիւն մը պիտի գգաս՝ որ քու հոգւոյդ վայ կը տարածի : Խաղաղ , հեզ , և լուռ վիճակ մը պիտի ունենաս , որուն մէջ հաւատքն ու սէրը զօրաւոր կերպով պիտի գործակցին . և Մատուած հաւանականաբար իր մխիթարիչ Հոգւոյն « մեղմ ու բարակ ձայնը » պիտի նշեցնէ , (Գժմագ . ԺԺ . 12 ,) մինչև որ հոգիդ գովաբանութեան երգերով լեցուած՝ դուրս բղխէ զանոնք , և « ուրախանաս ան օրերուն չափով » որ տրամեցար » : Սաղմ . 4 . 15 : Եւ աս միջոցին սա հետեւեալ մաղթանքին մէջ զրուցուած խօսքերուն պէս ազանքներն ալ պատշաճ են :

Խոնարհ հաղթանք հը այսպիսի հետ համար , որի Երեսմ իր երեսը ծածկեր է :

Ով ամենօրնեալ Մատուած , « քու քովդ է կենաց » և երջանկութեան « աղբիւրը » : Սաղմ . ԼԳ . 9 : Երկրպագութիւն կը մատուցանեմ քու անուանդ՝ որ քու աղբիւրէդ ճաշակեցի , որ քու երեսիդ լոյսէն՝ և քու սիրոյդ իմ հոգւոյս մէջ թափելէն ելած մասնաւոր բերկրութիւնը վայելցի : Բայց աւանդ , ան բերկրայից ժամանակները այլ ևս չեան ինձի , և անոնց յիշատակը « հոգիս իմ ներսի դիս թափել » կու տայ ինձի : Սաղմ . ԽԲ . 4 : Բեզի կու գամ՝ ինչպէս որ առաջ ըրի , և քեզ նոյն քաղցրութեամբը « իմ Հայրս և իմ Մատուածս » կը կոչեմ . Բայց աւանդ , չեմ գիտեր ինչպէս ընեմ ասիկայ : Յանցանքներն ու երկիրոյները կ'ելին ու թող չեն տար աս բերկրայից խօսքերը զրուցելու : Բեզ կը փնտռեմ՝ ով Տէր , Բայց ունայն տեղը կը փնտռեմ : Պիտի աղօթեմ , Բայց շրթունքներս կնքուած են : Բու խօսքդ պիտի կարդամ , Բայց անոր բոլոր խոստմունքները իմ աչքերէս ծածուած են : Շատ անգամ կը դռնուիմ ան պաշտօններուն՝ որոնք առաջ շատ սնուցիչ և մխիթարիչ էին իմ հոգւոյս , Բայց աւանդ՝ հիմա միայն պաշտամանց շուքերն են անոնք . Եւ թիւնը դացած է , կենդանացուցիչ զօրութիւնը փա-

խած է՝ և զանոնք թողուցած է առջի տեսածներուս իրբև լոկ պատկերը :

Բայց՝ ո՞վ Տէր , “ յախտեա՞ն մերժեցիր , ու ալ բնապիտի չհաճի՞ս ” : Սող . հէ . 7 : Եհաւոր դատաստանով վճռեցիր թէ հոգիս մշտնջենաւոր ձեռուան մէջ մնայ , որ յախտնական խաւարին ցաւալի նշանակն է : Յիրաւի արժանի եմ անանկի : Արխոստովանիմ՝ ըվ Տէր , որ արժանի եմ քու ներկայութենէդ դուքս ձգուելու արհամարհանօք , եղածէս խորունկ բնկզմելու , աւելի խորունկ . արժանի եմ “ աչքիս թարթիչներուն վրայ մահուան շուք ” ունենալու , (Յո՞ . ժ՞ . 16 ,) և մինչև անգամ տարտարոսական բանտին թամնք խաւարովը շրջապատելու : Բայց միթէ դուն շատերը՝ որոնք ինձի նման “ խաւարի կապերով տարտարոսը ձգուելու ” արժանի եղած են , (ի՞ Պէտ . Ի . 4 ,) քու վերին փառք տեսնելու բարձրացուցած շէ՞ս , ուր ամպ մը շիրնար գանուիլ որ քու և ան զուարթ հոգիներուն մէջտեղը անջրպետէ : “ Աղորմէ ինձի՞ ո՞վ Տէր , սղորմէ՛ ինձի ” : Սող . ճիգ . 3 : Իւ թէպէտ իմ անօրէնութիւններս հիմա ճշմարտապէս քեզի պատճառ եղած են “ քու երեսդ ինձմէ ծածկելու ” , (Եսայ . ժթ . 2 ,) բայց դուն հաճէ քու խօսքիդ շնորհալի գրուցուածքին համեմատ՝ յաւէտ “ իմ մեղքերէս երեսդ ծածկել , ու բոլոր անօրէնութիւններս ջնջել ” : Սող . ծա . 9 : Բու շնորհացդ նորէն դառնալուն նշաններովը իմ սիրտս ուրախացուր , և “ ըսէ՛ անձիս թէ՛ Բու փրկութիւնդ ես եմ ” : Սող . լի . 3 :

Յիշէ՛՝ ո՞վ Տէր Եստուած , յիշէ՛ ան ահաւոր օրը , երբոր քու սիրելի Արդիդ Յիսուսը քաշեց ան բաները՝ որոնց է՛ս արժանի էի : Յիշէ՛ ան տաղնապը , որուն մէջ իր հոգին քու առջևդ թափեց ու ըսաւ , “ Եստուած իմ՝ Եստուած իմ , ինչու զիս թողուցիր ” : Սող . իէ . 46 : Զէ՞ որ աս ամենը քաշեց՝ ո՞վ Տէր , որ խոնարհ զղացեալ մեղաւորները կարենան անոր միջոցովը մտնեալ քեզի , և բերկրութեամբ նայիլ քեզի՝ իրբև իրենց շօրը և իրենց Եստուծոյն : Եսանկ կը փափարիմ՝ քեզի գալու : Ա՞վ օրջնեալ Փրկիչ , չէ՞ որ դուն սահմանուած ես “ Արունի սգաւորներուն մօխիբի տեղ՝ փառք , սուգի տեղ՝ ու-

բախութեան իւղ , կտորած հոգիի տեղ՝ գովութեան պատմութեան տալու” : Ասոյ . կն . 3 : Ս՛՛՛՛ Տէր , արցունքներս սրբէ՛ , և դլուխս ուրախութեան իւղով օծէ՛ , “ ինծի փրկութեան հանդերձնե՛ր հաղցուր” : Ասոյ . կն . 10 :

“ Արանի՛ թէ կարող ըլլայի գտնել քեզ” : Հոբ . իգ . 3 : Ս՛՛՛՛ թէ գիտնայի՛ թէ ի՛նչ է ան որ քեզ ինծմէ հեռացուցեր է : “ Իմ ճամբաներս կը քննեմ ու կը փորձեմ” : Սոբ . գ . 40 : Արանի թէ “ փորձէիր զիս ու գիտնայիր իմ սիրտս , իս քննէիր ու գիտնայիր իմ մտածմունքներս” . և թէ որ “ շար ճամբու մէջ եմ” , ցուցընէիր , և “ զիս դէպ ՚ի յախտենական ճամբան առաջնորդէիր” . Սոբ . ճլթ . 23 , 24 . ան ճամբան՝ որուն մէջ կրնամ հանդիստ ու խաղաղութիւն գտնել իմ հոգւոյս , (Աբե՛՛ . զ . 16 ,) և Քրիստոսով քու ցուցուցած սերդ վայելէ :

Ս՛՛՛՛ Աստուած , “ որ հրաման ըրիր խաւարէն լոյս ծագել” , (Թ Աորն՛՛ . գ . 6 ,) միայն ըսէ՛ , և իսկոյն լոյսը հոգւոյս կը զարնէ : “ Իմ շրթունքներս բնց , ու բերանս պիտի պատմէ քու գովութիւնդ” , (Սոբ . ծն . 15 ,) և պիտի երգէ ուրախալից երգ մը , որ աստուածպաշտութեան բերկրութիւններն ու սփոփանքները պիտի ցուցընէ անոնց՝ որոնք հիմա իմ երեսէ ինկած ըլլալէս վճատած են :

Իսոյց սակայն՝ Տէր , ամենայնիւ քու կամօցդ կը յանձնեմ ինքզինքս : Թէ որ ասանկ պէտք է որ իմ հաւատքս բանեցընեմ զեռ օրերով՝ ամիսներով՝ և տարիներով խաւարի մէջ քալելով , որքան երկար որ թուին , որքան երկար որ ըլլան , յանձնառու եմ : Տակաւին քեզի պիտի երկիրպագանեմ՝ իբրև “ Իարայէլին փրկիչ Աստուծոյն” , թէև “ գուն քեզ ծածկող Աստուած մըն ես” : Ասոյ . ին . 15 : Տակաւին “ Տէրոջը անուանը պիտի ապաւինիմ , ու իմ Աստուծոյս կոթընիմ” , (Ասոյ . ծ . 10 ,) “ թէև զուն զիս սպաննես , կս քեզի պիտի յուսամ” , (Հոբ . ժգ . 15 ,) և “ առտուան սպասողներէն՝ առտուան սպասողներէն աւելի իմ անձս քեզի կը սպասէ” : Սոբ . ճլ . 6 : Վուցէ “ երեկոյեան ժամանակը լոյս ըլլայ” : Տոբ . ժգ . 7 : Վիտեմ որ երբեմն քու գթութիւնդ ցուցու-

ցած ես՝ քու մեռնելու վրայ եղող ճառաներուդ, և անոնց բնական զորութեանցը յոյժ տեղատուութեանը մէջ՝ ստուածային փառաց կատարեալ մակընթացութիւն մը տուած ես անոնց . և այնպէս « անոնց առջևը խաւարը լոյս » ըրած ես : Երայ . խբ . 16 : Այնպէս թող հաճոյ ըլլայ քեզի « մահուան շուքի ձորը » քու ներկայութեանդ լուսովը լուսաւորել՝ երբոր ես անկէ անցնիմ , և « քու ցուպդ ու դաւազանդ երկնցընէ » իս մխիթարելու համար , (Սող . խգ . 4 ,) որ դողդրղալներս դադարին , և խաւարը դուխարանութեան երգերով շնչէ : Բայց եթէ քու բարձրագոյն կամքդ ըլլայ՝ որ թշուառութիւնն ու խաւարը մնան իմ բազուկիս շնչերակին մինչև վերջին զարնելը , և մինչև իմ վերջին շունչս , ո՛հ՝ թող դադարի ան վերջին ճիգովը , և զիս տար ան լուսոյն՝ որ արդարներուն համար ցանուած է , և ան ուրախութեանը՝ որ « սրտով ուղիղներուն » համար պահուած է , (Սող . դէ . 11 ,) և յաւիտենական մեծ վայելչութեան և ուրախութեան ան պայծառ սահմաններուն , ուր քու բոլոր ժողովուրդդ կատարելապէս պիտի օծուին քու շողուովը , և « ալ քու երեսդ անոնցմէ պիտի շծածկես » : Եղեկ . լթ . 29 :

Ես է՝ Տէր , քու փրկութիւնդ , որուն կը սպասեմ , (Շնչ . խթ . 18 ,) և քանի որ իմ հոգւոյս բաղձանքները անոր ետեւն քաշուած կը գգամ , բնաւ պիտի չյուսահատիմ զանիկայ բնդունելուս վրայ : Շարունակէ և անճեցուր ան բաղձանքներս , և վերջապէս յաղեցուր ու չափազանց լեցուր անոնց ամէնը « քու շնորհացդ մեծութիւնովը Յիսուս Բրիտանով » . Ամէն :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ե

Ս'ի՞ծ և թանր նեղութեան քան՝ հզնող քրիստոնէական :

1 . Որովհետև « մարդը թշուառութեան համար կը ծնանի , ինչպէս որ կրակի կայծերը վեր կը թռչին » , (ՅԹ . Ե . 7 ,) և Ադամ ալ բոլոր իր սեռին վրայ ձգեց թշուառութեան ցաւալի ժառանգութիւնը՝ անոնց մահուան ճամբուն մէջ , վասն որոյ ստուգիւ պատշաճ և հարկաւոր է որ ամէնքս ալ ակնկալենք՝ թէ փորձութեանց և նեղութեանց պիտի հանդիպինք . և դուն՝ ո՞վ ընթերցող , ո՞վ որ ես , ջանք ընելու ևս զրահդ հազնիլ և պատրաստ ըլլալ դէմ դնելու ան փորձութեանց , որ քու բաժինիդ պիտի իյնայ՝ իբրև մարդ և իբրև քրիստոնեայ : Պատրաստ եղիր նեղութիւններդ ընդունելու և անոնց դիմանալու՝ մարդոց և քրիստոնէի մը վայլածին պէս : Աս նկատմամբ , երբոր ուրիշները բեռի տակ կը տեսնես , մտածէ թէ որքան կարելի է որ՝ դուն ալ ան նոյն դժուարութիւններուն կամ ուրիշ անոնց նմաններուն տակն իյնաս : Ինքզինքդ անոնց տեղը դիր : Խորհէ՛ թէ ինչպէս կրնայիր դիմանալ ան բեռին՝ որուն տակը անոնք կը կենան , և իսկոյն ջանք ըրէ զանոնք մխիթարել և քու սիրտդ զօրացնել , կամ յաւէտ ազօթք ըրէ որ Աստուած զօրացնէ : Այդ դիտելով թէ՛ որքան ենթակայ է մահկանացու կեանքը այսպիսի արտմութեանց , անկէ ունեցած ակնկալութիւններդ չափաւորէ . խորհուրդներդ անկէ վեր ելլեն , և քու երջանկութեան գաղափարներդ միայն ան աշխարհին համար ձևացուր , ուր կարելի չէ որ անոնք պարսպը ելլեն . միանգամայն օրհնէ՛ զԱստուած՝ որ քեզի մինչև հիմա յաջողութիւն տուաւ , և անոր յատուկ նախախնամութեանը տուր այդքան երկար ատեն առանց վիրաւորուելու մնալ , քանի որ անձրևի պէս բազմաթիւ նետեր չորս դիէդ կը տեղան , և բազմաթիւ անձինք անոնց միջոցովը կ'իյնան աջ կողմէդ և ձախ կողմէդ :

2 . Արքայի վերջնապէս քու կարգդ կու գայ , ինչպէս որ անշուշտ պիտի գայ , նեղութիւնը քեզ բռնած առաջին ժամէն իրօք Աստուծոյ ձեռքը նշմարէ անոր մէջ , և աս նշմարանքը մի կորսնցընէր բնական պատճառ մը տեսնելովդ , որմէ կրնայ ըլլալ որ յառաջ եկած ըլլայ : (Թող քու առաջին փոյթդ ըլլայ « Աստուծոյ հօր ձեռքին տակը խոնարհիլ , որ քեզ ժամանակին բարձրացընէ » : *Կրթ . Ե . 6* : Խոստովանէ թէ « բոլոր քեզի պատահած բաներուն մէջ անիկայ արդար է » , (*Նէեմ . Թ . 33* ,) և թէ բոլոր աս բաներուն մէջ « քեզ չպատժեր քու մեղքերուդ չափ » : *Աղբ . Թ . 13* : Պատրաստ եղիք անոր ձեռացը համբերութեամբ տանելու , իր կամքին շնորհակալ զելով անոր անունը փառաւորելու , և անոր տղջելութեանը շնորհապարզ և դիտաւորութեանը համաձայն դըտնուելու , և միանգամայն հանդարտութեամբ ան տղջելութեանը ելքին սպասելու , ամէն ինչ որ ըլլայ ան :

3 . Արդ՝ որպէս զի « համբերութիւնը կատարեալ գործ ունենայ » , (*Յակ . Գ . 4* ,) շատ անգամ՝ և խորունկ մտածէ քու անարժանութեանդ ու մեղապարտութեանդ վրայ : Վննէ թէ որքան անգամ ամէն մէկ ողորմութիւն ոտքի տակ առիր , և ամէն կրած պատժոցդ արժանի եղար : Այլ քննէ՛ նաև թէ՛ որքան ատեն համբերեց քեզի Աստուծոյ երկայնմտութիւնը , և ինչ սրանչելի կերպով տակաւին 'ի գործ կը դրուի ան դէպ 'ի քեզ . և յիրաւի ոչ միայն իր երկայնմտութիւնը՝ այլ իր առատարարչութիւնն ալ : 'Նեղութեանդ տակը՝ (վասն զի հիմա իրօք այսպէս սեպելով կը խօսիմ՝ քեզի ,) չորս դի՛դ նայէ , և քու վրադ մնացած ողորմութիւնները քննէ՛ , և երախտագիտութեամբ ճանչցիր զանոնք : Արտմտա՛ թէ կրնար ըլլալ որ անոնք ալ վերցուէին . ինչ , թէ որ Աստուած իր ձեռքը քեզի դէմ երկնցընէր , և ողբատուութեանդ վրայ ցաւ՝ կամ ցաւիդ վրայ աղքատութիւն՝ կամ աս երկուքին վրայ բարեկամաց կորուստ՝ կամ հիմա վրանին ողբացած բարեկամներուդ մահուանը վրայ ողջ մնացող բարեկամացող մահը աւելցընէր , վէրքդ աւելի ևս դառն պիտի չըլլար : Արկրպագութիւն մատտ անոր բարութեանը՝ որ ասանկ չէ եղեր . և զգոյշ եղեր՝ չըլլայ

որ անշնորհակալութիւնդ բարկացրնէ զանիկայ՝ տրամու-
թիւններդ աւելցնելու : Պատժուելու կարտուութիւն
ունենալուդ վրայ ալ մտնուա , որքան օգտակար կրնայ ըլ-
լալ անիկայ քու հոգւոյդ , և ինչ զթալից նպատակներ
կրնայ ունենալ մեր երկնաւոր Հայրը՝ իր որդւոցը խրկած
բոլոր նեղութիւններուն մէջ :

4 . Սա ալ պիտի յաւելում՝ թէ աս բոլոր խորհրդա-
ծութիւններուն հետեւութենէն կրնաս քաջ անկալել՝ որ
ոչ միայն ան նեղութիւններուն նազանդելու ես՝ իբրև ա-
նանկ բաներ՝ որ չես կրնար արգիլել , այլև քաղցրու-
թեամբ հաւանելու ես անոնց , և օգուտ հանելու ես անոնց-
մէ . ոչ միայն արդարացրնելու ես զՄատուած անոնք
խրկելուն համար , այլ փառաւորելու ալ ես . փառաւո-
րելու ես անիկայ սրտովդ և շրթունքներովդ ալ : Այսպիսի
ժամանակ մը անյարմար մի՛ համարիր դո՛ւք անութիւննե-
րը , ոչ ալ յարմար սեպէ միայն ան զքվարանութիւնը՝
որն որ իր ծագումը մնացած շնորհքներէն կ'առնէ . այլ
զիտցիր որ քու պարտք է՝ ոչ միայն շնորհակալու ըլլալ
նեղութիւններուդ ասենք՝ այլ շնորհակալ ըլլալ անոնց
համար ալ :

5 . Մտուած ինքը բաւ թէ՛ « Ամէն բանի մէջ դո-
հութիւն տուէք » , (ԿժԿ . Ե . 18 ,) և իր ծառանե-
րուն սորվեցուց ըսել թէ՛ « Կաւ նեղութիւններու մէջ
կը պարծինք » : Հոով . Ե . 3 . Այլ բոլորովին ստոյգ
է որ նեղութիւնները ճշմարիտ հաւատացելոց աստուա-
ծային ողորմութեան նշան են . վասն զի՝ « Տէրը իր
սիրածը կը խրատէ , և կը ծեծէ ամէն որդին՝ որ ինքը
կ'ընդունի » յատուկ և որոշիչ զգուանօք : ԱճԳ . ԺԲ .
6 : Վու ներկայ նեղութիւններուդ՝ իբրև սիրոյ պատիւ-
ներու պէս նայէ . և ապա թող քու սիրտդ ըսէ՝ թէ սերը
դո՛ւք անութիւն չը պահանջեր : Խորհէ ինքնիբրենդ թէ՛
« Մասնկով է որ Մատուած զիս իրեն Արդւոյն կերպարա-
նակից կ'ընէ . ասանկով է որ զիս իր կատարեալ փառքին
հասցրնելու կը կրթէ : Մասնկով իմ ապականութիւն-
ներս կը սպաննէ . ասանկով իմ շնորհքներս կը զօրացրնէ .
ասանկով իմաստութեամբ ճամբայ բռներ է զիս իրեն մ-
տնցրնելու , և իր երկնաւոր թագաւորութեանը պատիւ-

ներուն արժանացընելու : Հարկը կը պահանջէ որ տրամիմ , (ԿՊԷՊ . Կ . 6 ,) և անիկայ անշուշտ ինծմէ անհամեմատ աղէկ գիտէ՝ թէ ինչ է ան հարկը . և գիտէ թէ ինչ մասնաւոր յարմարութիւն կայ աս նեղութեանը մէջ իմ ներկայ կարօտութիւնս լեցընելու . և ինծի ան մասնաւոր աղէկութիւնը ընելու , որ մարդասիրաբար պարգեւել կ'ուզէ ինծի անոր միջոցովք : Աս « նեղութիւնը համբերութիւն պիտի գործէ , և համբերութիւնը՝ փորձառութիւն , և փորձառութիւնը՝ աւելի աներկեան « յոյս » մը , այն՝ յոյս մը՝ որ « ամօթով չծրդեր » , քանի որ Աստուծոյ սէրը իմ սրտիս մէջ տարածուած է , (Հռոմ . Ե . 3-5 ,) և իմ նեղութեանս մէջէն կը ծագէ՝ ամպին մէջէն ծագող արեգակին նման , լոյս կ'արձակէ խաւարին վրայ , ու մեր լացին հետ արդիւնաւորութիւն մըն ալ կը խառնէ » :

6 . Արեմն թող քու եռանդուն հոգի ըլլայ , որ քանի որ այսպէս՝ նեղութեանդ վրայ՝ ինչ որ ըլլայ ան , կը նայիս՝ իբրև Աստուծոյ ձեռքէն եկած , անիկայ բանեցընես ան նպատակին՝ որուն համար որ քեզի խրկուած է : Այս որպէս զի կարենաս անանկի բանեցընել , թող քու առաջին գործը ըլլայ գիտնալ՝ թէ ինչ են աս նպատակները : Քու հոգւոյդ բոլոր մտադրութիւնը մէկտեղ ժողովէ « դաւաղանք և անոր հրամայողը լսելու » , (ՍՆԷ . Դ . 9 ,) և մեծ եռանդով աղօթք ընելու՝ որ անոր ձայնը հասկընաս : Աչքդ՝ խօսքերդ՝ և սիրտդ քննէ . և աղօթք ըրէ Աստուծոյ որ այնպէս առաջնորդէ քու քննութիւններդ , որ « քեզ զարնող Տէրոջը դառնաս » : Ասայ . թ . 13 : Աս բանին մէջ օգնութիւն առնելու համար աստուածապաշտ բարեկամաց օգնականութիւնը խնդրէ , և մասնաւորապէս քու եկեղեցւոյդ հոգևոր պաշտօնէին . ոչ միայն քեզի համար աղօթք ընելնին խնդրէ , այլ անոնց խրատն ալ՝ Ասխախնամութեան աս բանին մէջ ունեցած նպատակին վրայով . և քաջալերութիւն տուր անոնց ազատաբար քեզի զրուցելու ան ամէն բաները՝ որ աս նիւթիս վրայով իրենց միտքը կու գայ : Այլ երբոր ըլլայ որ աս առիթով քու բնութեանդ ու վարուցդ մէկ անկատարութեանը վրայ բան մը ըսեն քեզի , անոր վրայ իբրև բա-

Չօտեր եկեղեցիական որով ճշտապէս Ռիտան առ Ասորուա՞ծ իտ-
նարհ աղաղակը :

Ո՛վ դուն գերագոյն՝ և սակայն արդար ու ողորմած Աա-
ուաւարիչ Համայն տիեզերաց , որքան ալ նուստ և շնչին
ըլլայ քու լայնածաւալ տէրութեանդ աս փոքր սահմանը ,
դուն անտես չես ըներ անիկայ և անոր բնակիչները . այլ
կը նայիս անոր գործքերը կարի զիջանող և ողորմած խը-
նամօք : Դուն կը թագաւորես , և ես կը ցնծամ . ինչ-
պէս որ ճշմարտիւ ընդհանուր ցնծութեան առիթ է ան :
Սող՛ . զէ . 1 : Աը հաւատամ՝ քու տիեզերական նախա-
խնամութեանդ ու խնամքիդ . հաստատ կը հաւատամ՝ աս
աշխարհս բնակելուս ատենը ամէն ինծի վերաբերող պարա-
զաներուն մէջ քու խնաստուն՝ սուրբ՝ և բարեբար ձեռքդ
ըլլալը : Բոլոր բնական պատճառներէ անդին քեզի կը
նայիմ՝ որ աչքերդ քու բոլոր արարածներուդ վրայ է .
քեզի՝ որ լոյսը կը հաստատես և խաւարը կը ստեղծես .
որ խաղաղութիւնը կ'ընես ու շարիքը կը ստեղծես . Ա-
սայ . խն . 7 . քեզի՛ Տէ՛ր , որ քու կամքիդ ուղածին պէս
մէկը միւսին տեղը կրնաս փոխել , կրնաս պայծառ օրը կէս
զիշերուան՝ և կէս զիշերը ցորեկուան դարձնել :

Ո՛վ խնաստուն և ողորմած Աաուաւարիչ աշխարհի , շատ
անգամ ըսեր եմ թէ՛ « Բու կամքդ ըլլայ » . բայց հիմա՛
քու կամքդ ցաւալի է ինծի : Բայց միթէ աս պատճառաւ
չըսեմ՝ անիկայ՝ որ շատ անգամ ըսեր եմ . քաւ լիցի :
Յաւէտ կը մօտենամ՝ ինքզնիքս քու ոտքդ ձգելու , և բո-
լոր քու սուրբ կամացդ իմ կատարեալ և բացարձակ նա-
ղանդութիւնս ցուցնելու : Ո՛վ Տէ՛ր , դուն արդար ու
ճշմարիտ ես ամէն բանի մէջ . կը խոստովանիմ՝ քու մե-
ծափառ և ահաւոր ներկայութեանդ՝ որ Աս արժանի եմ
ասոր , և ասկէ թիւր անգամ աւելիին : Աղ . թ . 13 :
Աը խոստովանիմ՝ թէ՛ « Բու ողորմութիւններէդ է որ չը-
հատայ » , (Աղ . օ . 22 ,) և թէ՛ տակաւին մէկ միտիթա-
րութիւն մը՝ ամենասակաւ միտիթարութիւն մը կայ մնա-
ցած : Ո՛վ Տէ՛ր , շատ համարձակութեամբ կը խոստովա-
նիմ՝ թէ՛ կենացս մէկ օրուանը մեղքերը արժանի են աս
ամէն պատիժներուն , և թէ՛ կենացս ամէն մէկ օրը շատ

կամ քիչ մեղքով լեցուն է : Այսան որոյ զանի՛ ով ար-
դար Վատաւոր , և ես պիտի պաշտեմ՝ քեզ որ , փոխա-
նակ խարազանին՝ սուրին չհրամայեցիր արդարութեան բռ-
լոր ահաւոր դորձքը լինցընելու , և քու առջեւ իմ արիւնս
թափելու :

Ես այց միթէ իբրև իմ Վատաւորս միայն խօսիմ՝ քեզի :
Մ՛ի՛ Տէր , դուն ինձի մէկ քաղցր անուն մըն ալ սորմե-
ցուցիր . դուն կը համիս ինքզինքդ իմ Հայրս կոչել , և
պատիժը քու սէրէդ յառաջ եկած ձայնէ : Մ՛՛ կ'ող-
ջունեմ՝ կ'ողջունեմ ան նեղութիւնները՝ որ քու Հայրա-
կան սիրոյդ և զիս քու ընտանիքիդ մէջ ընդունելուդ
նշաններն են : Վուն դիտես իմ ինչ կրթութեան կարծա-
րըալս : Վուն կը տեսնես՝ ով Տէր , ան շեղձակուտեալ
յիմարութիւնը՝ որ քու թշուառ՝ ստամբակ՝ և անխոր-
հուրդ որդւոյդ սրտին մէջը կայ . և դիտես թէ ինչ դա-
ւազան և ինչ ծեծ պէտք են զանիկայ դուրս վնասելու
համար : Այսան որոյ « կը ֆաղանդիմ Հոգիներուն Հօ-
րը » , որ « իմ՝ օգուտիս համար իս խրատեց . պիտի ֆա-
ղանդիմ անոր և ապրիմ : Ա՛՛ր . ժ՛ք . 9 , 10 : Պիտի
տանիմ՝ քու հարուածներուդ , ոչ միայն դէմ կենալ
չիրնալուս համար , այլ քեզ սիրելուս ու քեզի վտա-
հելուս համար : Վաղցրութեամբ կը հանիմ և կը կրո-
թընիմ՝ քու կամքիդ , ու կը հպատակիմ անոր և կ'ըսեմ
թէ « Վարի է Տէրօջը խօսքը » , (Դ՛ թ՛առ . Ի . 19 ,) և
կը ցանկամ որ ոչ միայն շրթունքներս՝ այլ հոգիս ալ հա-
մաձայնի : Այ՛՛ Տէր , կը դովեմ՝ քեզ որ ինձի այնքան
նկատում ունեցար , որ ասանկ դեղեր մատուցիր մտացս
սիրտերուն , և այսպիսի բարերարութեամբ մեծ փոյթ
ունիս զիս փառաց համար կրթելու : Վէ՛մ չեմ կենար
նեղուելու՝ ու ոչ ալ՝ աս մասնաւոր կերպովը նեղուելու :
« Ան դաւաթը որ Հայրը ինձի տուաւ , պիտի չմե՛՛մ ա-
նիկայ » : Ա՛՛ր . ժ՛ք . 11 : Վու օգնութիւնովդ ու
ձեռնառութեամբդ պիտի իմեմ : Միայն թէ հաճէ՛ ով
Տէր , ինձի օգնելու , և երբեմն քաղցր հայեցումս մը
չնորհելու իմ նեղութիւններուս մէջ : Ա՛՛րաչաւեմ՝ քեզի
հաստատուն պահէ իմ հոգիս նեղութիւններուս հետ խառ-
նած մխիթարութիւններովդ , և ես պիտի պարծնեամ ան

Նեղութիւններովը : Շատերը ասոր փորձն առած են , որոնք նեղութեան օրերուն վրայ բերկրութեամբ մտածեր են , և խոստովաներ են թէ՛ իրենց մխիթարութիւնները ոչնչացուցած են զիրենց տրամութիւնները : Իսկ բոլոր աս բրած բաներէդ ետքը՝ « ողորմութիւններդ պիտի արգիլուի՞ն » : Եսայ . 44 . 15 : « Միթէ տկար է քու ձեռքդ » : Թուոց ժա . 23 : Ասմ թէ չե՞ս կրնար ան նոյն բաները ինծի ալ ընել :

Թե՛ որ սիրտս քիչ փափուկ՝ քիչ զգայուն է , աս ախար դուն կրնաս բժշկել , և կրնաս աս նեղութիւնը անիկայ բժշկելու միջոցն ընել : Թող ասանկ ըլլայ . և վերջապէս՝ քու սահմանած ժամանակդ . և քու ընտրած կերպովդ ազատութիւն գործէ ինծի , և « սքանչելի կերպով քու ողորմութիւններդ ցուցնուր , դուն որ քեզի յուսացողները աջ ձեռքովդ կ'ապատես » : Սաղ . 47 . 7 : Ասան զի քաջ գիտեմ թէ՛ աս նեղութեան գիշերը որքան մութ ալ որ թուի , եթէ դուն ըսես՝ « Լոյս ըլլայ » , լոյս պիտի ըլլայ : Բայց ես մէկ բանի մը համար պիտի չեմ ախանձեմ՝ քու իմաստութեանդ ու բարութեանդ սահմանած ժամանակէն առաջ : Եւելի կ'ուզեմ որ իմ նեղութիւններս հոգևոր օգուտ բերեն՝ քան թէ անոնք վերնան : Ո՛վ Եստուած , զիս ան երջանիկ անձանց կնորդը դասէ՛ որոնք երբոր խրատես , « քու օրէնքէդ անոնց կը սորվեցնես » : Սաղ . 97 . 12 : Ա՛ղաչեմ քեզի « յայտնէ ինծի՛ թէ ի՞նչ բանի համար հետս կը վիճիս » , (Էսթ . 2 ,) և մտքը՛ զիս աս կրակովը՝ որուն մէջէն անցնիլը յոյժ ցաւալի է ինծի : Չե՞ որ քու որդիներդ կը խրատես աս վախճանին համար , « որ քու սրբութեանդ հաղորդ ըլլան » : Եթ . 46 . 10 : Դուն գիտես՝ ո՛վ Եստուած , որ ասոր միայն կը բաղձայ իմ հոգիս : Անաջտամէն օրն ու վայրկեանը հաղորդ եմ քու առատ պարգևներուդ , հաղորդ եմ քու Եւտարանիդ , և կը յուսամ թէ չափով մըն ալ հաղորդ եմ անոր շնորհացը՝ որ իմ սրտիս վրայ կը ներդրածէ . ո՛հ՛ թող ևս առաւել ներգործէ , որ մեծապէս հաղորդ ըլլամ քու սրբութեանդ ալ , որ իմ մտաջտ տրամադրութիւնովը ևս առաւել մտազամ քեզի՛ ո՛վ Եստուած , կատարելութեան գերազոյն

օրինակը : Թող իմ հողիս հալի , թէև անիկայ հալոցին ամենասաստիկ կրակովն ալ ըլլայ , թէ որ ասով կարենամ յարմար ըլլալ Մեկտարանին մէկ կաղապարն ըլլալու , և քու պայծառ ու սիրելի տիպարդ առնելու :

Ո՛վ Տէր , իմ անձս քեզի կը փափարի . կենդանի Մատուծոյն համար կ'աղաղակէ : Սող՛ . ձե՛ . 2 : Քու ներկայութեանդ մէջ և քու սիրոյդ պահպանութեանը տակը կրնամ որ և իցէ բանի համբերել . և յօժար եմ համբերելու՝ թէ որ կրնամ ասանկով քու աչքերուդ աւելի հաճոյ երևնալ , և քու թաղաւորութեանդ աւելի յարմար ըլլալ : Իմ ներութեան օրերս վախճան մը պիտի ունենան , վերջապէս ան ժամը պիտի գայ , որ ատեն " բոլոր արցունքներս պիտի սրբես " : Յայտ . ին . 4 : " Թե որ ուշանայ , անոր պիտի սպասեմ " : Մթ . Է . 3 : Իմ յիմար սիրտս՝ բոլոր իր փորձութիւններուն մէջ յօժար է աս աշխարհս սիրելու , աս ունայն և ցաւալից աշխարհս . բայց՝ ո՛վ Մտտուած , դուն մեծ շնորհք ըրած կ'ըլլաս խորտակելով ան կապերը՝ որոնք դիս՝ ալ աւելի անոր կը կապեն : Թող իմ անձս իր մէջքը ամուր կապէ , և իր թիւերը բանայ ան օրջեալ ժամուն սպասելով , որ ատեն բոլոր իր տրտմութիւններն ու ներութիւնները պիտի ձգէ իսկոյն և թռչի , ազատութեան՝ խաղաղութեան՝ և ուրախութեան սահմաններուն մէջ անհուն բերկրութեամբ խոյանալու . Մմն :

ԳԼՈՒԽ Ի.Օ.

Վերհարանէին՝ իր շնորհաց մէջ ածիլը բնեւոր համար օգնու-
լինն :

1. Թէ որ աստուածային շնորհօք նորէն ծնած ես՝ չէ՛
թէ ապահանացու սերմէն , հապա անապահանացուէն ,
Մատուծոյ ան խօսքովը՝ որ կենդանի կը մնայ յաւիտեանս ,
(ԿՊԻԳ . ԿՍ . 23 ,) ոչ միայն աշխարհի ու եկեղեցւոյն
մէջ , այլ մասնաւոր հօգւոյ մէջ ալ՝ ուր որ կը սերմա-
նուի . ուրեմն « նորածին մանկանց պէս բանական ու ան-
խարդախ կաթին » պիտի « փափարխս , որ անով մեծ-
նաս » : ԿՊԻԳ . Խ . 2 : Այլ թէ որ քրիստոնէական
կրօնքին ամենէն յառաջադէմ մի՞ճակին մէջն ալ ըլլանք ,
զեռ սոսկ մանուկներ ենք՝ երկնային աշխարհին մէջ « կա-
տարեալ մարդ ըլլալու՝ Վրիստոսի լման հասակին չափը
ունենալու » հասած ատեննիս ըլլալիքնուս հետ բաղդա-
տուելով , (ԱԳԻԿ . Դ . 13 ,) բայց որովհետեւ մեր միտքը
քիչ շատ բարեպաշտութեան մէջ կրթուած է , մեծ անձ-
կութիւն ունենալու ենք որ ածինք ու զարգանանք : Այլ
դուն՝ իմ ընթերցողս , « թէ որ Տէրօջը քաղըր ըլլալուն
համը առիթ » , (ԿՊԻԳ . Խ . 3 ,) անտարակոյս պիտի
ղջաս աս անձկութիւնք : Այնն որոյ կը ջանամ քեզի օգ-
նելու սա խնդրոյն վրայով , թէ աստուածպաշտութիւնը
հօգւոյդ մէջ յառաջադիմութիւն ստացելը է : Իսկ հոս
քեզ պիտի զջուշացընեմ՝ որ շնորհաց մէջ ածելու մէկ
քանի սուս նշաններէ շտարուիս , և ապա պիտի ջանամ
քանի մը ուրիշ նշաններ յառաջ բերել , որոնց վրայ կըր-
նաս վստահել իբրև աւելի հաստատուն : Աս մասին պիտի
ըսեմ թէ շնորհաց մէջ ածիլը՝ մի միայն կամ գլխաւորա-
պէս գիտութեան՝ նախանձաւորութեան կամ մտքիդ ու-
րիշ որ և իցէ զրգումանք մէջ յառաջ երթալներաօջ չափե-
լու շնս , ոչ . ոչ ալ մի միայն աղօթից եռանդով . այլ՝
ամէն ատեն Մատուծոյ կամքին պէս գործելու որովմամբդ ,

ու անոր պատուէրներուն չազանդելու՝ անոր կարգադրու-
թեանը յանձնառու ըլլալու՝ և երկրիս վրայ անոր դատը
յառաջ տանելու հաստատուն տրամադրութեամբը :

2 . Սա ալ ընդունելու է որ կրօնքի մէջ գիտութիւնն
ու վերմեռանդութիւնը յիրաւի ցանկալի են : Երանց
մէկ աստիճանի գիտութիւն ունենալու՝ բարեպաշտութիւ-
նը չկրնար բանաւոր ըլլալ , և շատ պատշաճ է հաւատալ
թէ առանց վերմեռանդութեան ալ՝ չկրնար անկեղծ ըլլալ
ան արարածներուն մէջ , որոնց բնութիւնը մերինին պէս
կազմուած է : Բայց սակայն կրնայ շատ տեսական գիտու-
թիւն ու շատ ալ յափշտակեալ վերմեռանդութիւն կե-
նալ հոն՝ ուր բնաւ ճշմարիտ աստուածապաշտութիւն չկայ ,
և նաևս հոն՝ ուր կայ , թէպէտ և յառաջադիմութիւն ըս-
տացած չէ : Աստուածային յայտնութեան ազատացնե-
րուն՝ և Սուրբ Գրոց մէջ պարունակուած խօսքերուն վրայ
մեր բանական կարողութեանց դործադրութիւնը՝ կրնայ
ամենաչար մարդուն զլիտուն մէջ անգամ ուղղափառ աս-
տուածարանութեան վրայով կատարեալ գիտութիւն մը
դնել , որ ատեն որ անոր մէկ հասիկ վարդապետութիւ-
նը անգամ երբէք սրտին հասած չէ : Քրիստոսի շարժա-
բանացը՝ դատաստանին ահաւորութեանը՝ երանելեաց ու-
րախութեանը՝ և դատապարտելոց թշուառութեանը վրա-
յով՝ ճարտարախօս նկարագրութիւն մը կրնայ շարժել
մինչև անգամ՝ ան մարդուն սիրտը , որ հաստատապէս
չհաւատար անոնց . ինչպէս որ շատ անգամ կը տեսնենք
որ զօրաւոր կերպով կը շարժինք զեղեցկայարդար պատ-
մութիւններէ կամ ճառերէ , քանի որ նոյն ատենը ա-
ղէկ գիտնէր թէ կեղծեալ են : Բնական կազմութիւնը՝
կամ այնպիսի պատահական պատճառներ , որ ասոնցմե-
տմանք այնքան նուաստ են որ չթիշուիր հոս , կրնան մար-
դուս աչքերը լեցընել արտասուօք , որն որ կրնայ առատա-
պէս բղիխիլ դրեթէ առաջին անգամ ծաղած ինչ և իցէ
առիթով : Հակառակութեան դէմ՝ մարդուս ունե-
ցած ամբարտաւան անհամբերութիւնը՝ որ ուղղակի ընդ-
դէմ է քրիստոնէութեան հեղ ուղղոյն , կրնայ եռացընել
մարդու մը արիւնը , երբոր կը տեսնէ թէ մէկ ուրիշք կը
հերքէ և կը հակառակի իր ունեցած զաղափարներուն , և

մասնաւորապէս անոնց՝ որ յայտնի և զօրաւոր կերպով ընդունած է ինքը : Հնարաւոր է որ աս բնութիւնը աստիկ բարկութեան խօսքերով իր նախանձն ու բարկութիւնը դուրս թափել տայ Վատուծոյ առջևը՝ սխալ խորհրդով մը թէ՛ անիկայ իբրև Վատուած ճշմարտութեան՝ իր սիրելի վարդապետութեանց օրինակն է ք որոնց զեղեցիկ երևոյթովը թերևս խաբուած է ինքը : Այլ թէ որ աս տեսական ներբութիւնները կամ մտքին աս սիրելի յարձակումները ունեցող մէկը կրնայ ճշմարիտ աստուածապաշտութենէ զուրկ ըլլալ, ուրեմն ևս առաւել յայտնապէս կրնայ ունենալ մէկը աս նոյն բաները, քանի որ սիրաբիւզ զգացումն ունի հոգեւոր բաներու վրայ : Ար բաղձամ' իմ բարեկամս, քեզ աւելի բարձրագոյն դաղափարներու և ճշմարիտ քրիստոնէական նշաններու տանիլ, և անոնց որքան կարեւոր ըլլալը իմանալու համար՝ խրկել ուրիշ բարեպաշտական հեղինակներու, և ամենէն աւելի Վատուծոյ զբքին : Այսան որոյ կ'աղաչեմ՝ քեզի որ սիրադ՝ որպէս թէ Վատուծոյ առջևը՝ պատասխան տայ այս հետեւեալ ու ասոնց պէս հարցմանց :

3. Վատուածային սերը բովանդակապէս յառաջ դացած է հոգւոյդ մէջ : Վատուծոյ ներկայութիւնը ևս առաւել կը դգանս, և աս զգացումը առջինէն աւելի ուրախութիւն կու տայ քեզի : Արնանս մինչև անդամ՝ բնական զօրութիւններուդ տեղար ու ձնչեալ՝ նաև քու մէկ կերպով մը աղօթքի ատեն ջերմեռանդ ու մտքի յափշտակութեան յարմար շեղած ատենդ, տակաւին սրտի մէկ հաճոյ հանդիստ մը՝ մէկ խաղաղ հանգչում մը գտնել սա խորհրդածութիւնով՝ թէ Վատուած մտա է քեզի և հոգւոյդ ծածուկ խորհուրդները կը տեսնէ, քանի որ դուն դար վեր կ'աշխատիս և անձկանօք աչքդ անոր ևս դարձուցեր, թեպէտ և չկրնաս ըսել թէ՛ զգալի հաղորդակցութիւն մը կը մայելլես անկէ : Հաճելի բան մըն է քեզի սիրադ բանալ անոր՝ որ ինքը քննէ ու նկատէ . անոր առջևը ներկայացրնել զանիկայ՝ ազատ ամէն խաբերայ երևոյթներէ . և Վառիթին հետ ըսել, «Ղուն՝ ո՞վ Տէր, քու ծառայ կը ճանչնաս» : Խ թագ . է . 20 : Վատուծոյ ան սուրբ օրէնքին վրայ ունեցած յարգդ ու հաւանութիւնդ կ'աճի՞

միշտ, որն որ անոր բարոյական կատարելութեանցը օրինակն է: Վստե՛ք՝ «ամէն բանի վրայով պատուիրած անոր բոլոր հրամանները ուղիղ կը համարի՞ս»: Առջ. ճԺԺ. 128: Հնազանդութեան ոչ միայն հարկաւորութիւնը՝ այլ նաև բանաւորութիւնը՝ գեղեցկութիւնը՝ և հաճութիւնը կը ծաննանս. և շարունակ աճող ասելութիւն մը և արհամարհութիւն մը կը զգանս ան ամէն փորձութիւններուն վրայ, որոնք աստուածային շնորհացն ու բարեկամութեանը մէջ ունեցած բաժինդ զո՛հ ընելու կամ վտանգի մէջ ձգելու փորձ կը փորձեն: Անկ անկեղծ բազմանք մը կը զգանս Աստուծոյ հաճոյ ըլլալու, ոչ միայն անոր զորաւոր ըլլալուն, և թէ՛ բարի ու թէ՛ չար այնքան շատ բաներ բոլորովին իր հրամանին տակը ունենալուն համար, այլ անոր ամենասիրելի բնութիւնն ու յատկութիւնը յարգելուդ համար. և քու սիրտդ միշտ պատրաստ կը դռնե՞ս խոնարհ ֆաղանդութիւն մը ցուցնելու՝ անոր թէ՛ հրամայող և թէ՛ կարգադրող կամբին: Ար զգանս որ քու կամբդ հիմա աւելի պատրաստ ու տրամադրեալ է՝ ամէն պարագայի մէջ լուծը վերցնել և աստուածային որոշմանը ֆաղանդիլ, ի՛նչ որ անիկայ կը սահմանէ վերցնելու կամ համբերելու: Արնանս՝ «համբերութիւնովդ հոգիդ ստանալ»: Վո՛ւլ. ին. 19: Արնանս աւելի հանդարտ ու անխռով մնալ, երբոր Աստուած աս աշխարհին մէջ ունեցած ամենասիրելի վայելչութիւններուդ կը զարնէ. և քու ներկայ շահուցդ ու բնական կիրքերուդ և փափաքներուդ ուղղակի հակառակ կը գործէ: Թնէ որ կրնաս, շատ ստոյգ և աղնիւ նշան մըն է որ շնորհքը քու մէջդ կ'ամի զորաւոր վիճակի մը հասնելու:

4. Վննէ՛ նաև թէ՛ ի՞նչ զգացումներ կը գտնես սրբափղ մէջ դէպ'ի անոնց՝ որ քու բոլորափրկ են, և մարդկային սեռին մնացած մնային առ հասարակ: Միտող աննանս և անասնձ բարեսիրութեամբ գեղեալ կը դռնե՞ս: Բոլոր մարդիկ և մանաւանդ բոլոր քրիստոնէաները մէկ ընկերութեան մէջ միացնող՝ և զանոնք եղբայրներ և համաշխարհիկներ ընող ամենասիրելի կապերը առաջուրնէ աւելի կը զգանս: Հոգւոյդ մէջ գտնուած բոլոր թշնա-

մական կիրքերը կը մեռնին ու կ'ոչնչանան , և բարի ու ընկերասէր կիրքերը կ'աճին ու կը զօրանան : Եւ թէպէտ անձնասիրութիւնը ճշմարիտ քրիստոնէայ ըլլալէդ հետեւ չու մէջդ տիրող կիրքը չէ , բայց սակայն՝ որովհետեւ անոր մէկ քանի մնացորդները տակաւին շատ պատրաստ են ներսուանց գործելու , և մասնաւորապէս յանկարծական առիթներ ելած ատենը ինքզինքնին ցուցնելու , կը զգան թէ անոնց օրէ օր կը յաղթես : Բնիկ ան շատերէն մի միայն մէկը կը սեպե՞ս , որ անոնց բաղձութեանը շահուցն ու գործքերուն հետ բաղդատմամբ չու մասնաւոր շահերդ ու գործքերդ շատ կարեւոր չեն , և պէտք է որ ամէն հարկ եղած տեղը անշուշտ չու կիներդ զոհ ըլլան անոնցին :

Ծ . Խորհէ մասնաւանդ թէ ի՞նչ զգացում ունիս անոնց վրայ , որոնք մէկ շնորհուած սիրտ մը կրնայ համարիլ թէ արդար պատճառ ունի սիրածներուն ցանկէն դուրս հանելու , և որոնցմէ դուն մէկ ներքին հակամիտութիւն մը կը զգաս օտարանալու : Միտքդ ի՞նչ ներգործութիւն կը զգայ նկատմամբ անոնց , որ իրենց կրօնական դաղափարներուն ու արարողութիւններուն մէջ քեզմէ կը տարբերին : Չեմ ըսեր թէ քրիստոնէական դուժբ կը պահանջէ որ՝ ամէն սխալմունք անմեղ սեպես : Ախնայք՝ որ չըլլայ թէ բարեկամի մը ունեցած ախտը ինքիր կարծածէն աւելի մահատիթ ըլլայ , զանիկայ չսիրել չցուցնել . վասն զի երբեմն նոյն իսկ քաղցր բարեկամութիւնը կ'աճեցնէ սոյն վախը : Բայց մարդիկը ատելք՝ զանոնք սխալած համարելուս համար , և դատման կամ սովորութեան մէջ ունեցած ամէն տարբերութիւննին մահատիթ և դատապարտելի սխալմունք մը սեպելք՝ որ բոլոր քրիստոնէական միութիւնն ու սէրը կը կործանէ , մէկ նշան մըն է՝ որ ընդհանրապէս շատ աւելի դէշ է իր դատապարտած շարիքէն : Աը սիրե՞ս ան անձին վրայ զանուած Բրիտանի կերպարանքը՝ որ ինքզինքը ստիպեալ կը համարի իր խղճմանըովը քեզմէ տարբեր կերպով դաւանութիւն ընել և պաշտօն կատարել : Կանս կրնան սիրել և պատուել ան մարդոցը չով զանուած՝ ճշմարտապէս սիրելի ու աղէկ բանը , որոնց չով շատ բաներ ալ կը զանուին պակասաւոր . և որոնք ունին նաև կոյր նախան-

ներել անոր, և առ ալ մինչև անգամ խոնարհութիւն չտեսած կամ քեզմէ թողութիւն չինդրուած . և 'ի նշան ան թողութեան անկեղծութեանը՝ մտմտալ թէ ի՞նչ օգուտ կրնաս ընել ան անիրաւ մարդուն, անոր լաւագոյն բնաւորութիւն մը սորվեցընելու համար :

7 . Վննէ ինքզինքդ նաև կենաց ուրիշ շարիքներուն և արկածներուն վրայով, և մինչև անգամ անոր անստուգութիւններուն վրայով՝ թէ ի՞նչպէս կրնաս տանիլ անոնց : Աս մասին հողիդ գորութիւն կը ժողով[՞] իր վրան : Աենաց մէջ պատահելիքներուն վրայով ունեցած կանխագուշակ երկիւղներդ ու անհանդարտ ահերք առջինէն քի[՞]չ են : Առջինէն աւելի հաւանութեամբ և զուարթութեամբ կրնամս Աստուծոյ իմաստութեանն ու բարութեանը ապաւինիլ, որ քու գործքերդ ան քեզի համար կարգադրէ : Ինքզինքդ կարող կը գտնե[՞]ս խորհուրդներդ ևս առաւել մեկտեղ ժողովել՝ ներկայ պարագաներդ կշռելու համար, որ անոնցմէ դատես հիմակուան անմիջական պարտաւորութեանդ ինչ ըլլալը, թեպէտև չես գիտեր թէ անկէ ետքը Աստուած քեզ ինչ[՞] պիտի սահմանէ կամ կանչէ : Աւերբոր նեղութեան հարուածը կը զգաս, առաջուրնէ պզտիկ բան մը կը սեպե[՞]ս անիկայ : Արնամ սիրտդ աւելի դիւրին կերպով դարձընել երկնային և աստուածային բաներու, առանց մէկ եռանդուն անձկութեան մը՝ թէ աս կամ ան բեռը վերնայ, թէ որ միայն Աստուծոյ օրհնութիւնովը իրեն հետ ունեցած հաղորդութիւնդ ու փառաց հասնիլդ յառաջ տանի :

8 . Վննէ՛ նաև թէ՛ արդեօք հեղութեան մէջ յառաջ կ'երթան : Ասիկայ մէկ լռիկ՝ բոց յոյժ գերազանց շնորհք մըն է . և անոնք որ շատ երեւելի են ասոր մէջ, ամենասիրելի են Աստուծոյ, և անոր ներկայութիւնը փայլելու շատ յարմար : Աւրեմն միտքդ հպարտ և գոռոզ երևակայութիւններէ դատարկացեալ կը գտնե[՞]ս, ոչ այնքան հակամէտ իր կատարած ծառայութիւններուն նայելու, այլ դէպ 'ի անոնց՝ որ դեռ պիտի կատարէ, և դէպ 'ի ներս՝ սրտին մնացած անկատարութիւններուն : Աւելի ևս զգուշութեամբ կը գիտե[՞]ս քու հանապազօրեայ սխալմունքներդ ու ծռութիւններդ, և ինքզինքդ տրամազրեալ

կը զանե՞ս Տէրոջը առջևը ողբալու ան բաներուն վրայ, որոնք երբեմն ոչինչ բաներ կը թուէին քեզի, թէպէտե երբոր քննես զանոնք Վստուծոյ առջևը՝ կը զանես որ բուրբովին ակամայ կամ՝ յանցանքէ ազատ չէին : Արտիդ մէջ ամէնօրջնեալ Վստուծոյ անհուն մեծութեանն ու անոր բնական և բարոյական կատարելութիւններուն վրայով աւելի խորին տպաւորութիւն մը կը զգանս, անանկ որ՝ աս տպաւորութիւններուն հետեւութեամբը ինքզինքդ որպէս թէ ոչնչացած սեպես անոր առջևը, և « ոչինչէն պակաս և ունայնութիւն » ըլլաս : Եւայ . ի . 17 : Թե՛ որ աս ըլլայ բնաւորութիւնդ, Վստուած մասնաւոր ինքամբ պիտի նայի քու վրայդ, և իր շնորհացը երեւելի օրջնութիւններովը ևս առաւել այցելութիւն պիտի ընէ քեզի :

9 . Իսոյց քրիստոնէական հեզութեան ուրիշ մէկ մեծ ճիւղն ու արդիւնքը կայ, որն որ աններելի անհոգութիւն մը պիտի ըլլար՝ թէ որ զանց ընէի : Այսն որոյ հարցընեմ նաևս թէ՛ շատ անգամ կը նորոգե՞ս Վրիստոսի արդարութեանն ու արեանը դիմելը անկեղծ՝ հաստատուն՝ և որոշեալ խորհրդով, իբրև անկէ՛ ՚ի զատ ուրիշ կերպով Վստուծոյ առջևը երևնալու որքան անարժան ըլլալդ զցացած : Եւ սրտիդ մնացորդ ապականութիւնները քեզ անոր առջևը կը խոնարհեցընե՞ն, թէպէտ և կենացդ անկարգութիւնները մեծաւ մասամբ ուղղուած ըլլան : Եւելի եռանդեւն ևս Սուրբ Առդայն կենդանացուցիչ զօրութիւնները ընդունելու : Եւ քու տկարութեանդ վրայ այնպիսի զգացում մը ունի՞ս՝ որ կատարած բոլոր պարտաւորութիւններուդ մէջ անոր շնորհացը հաղորդութիւններուն ազաւինիլ տայ քեզի՝ « տկարութեանդ օգնութեան հասնելու » : Առդ . ը . 26 : Արնամս քու ամենէն աւելի հոգեւոր՝ բարի՛ և օգտակար օրեր անցընելէդ վերջնալ՝ Վստուծոյ առջևը ամթո՛ով ըլլալ անոնց պակասութիւններուն համար, քանի որ ուրիշները դուցէ՛ զբանջանան և զօրին քու վարքդ : Եւ որ ատեն որ բոլոր ուղիղ ըրած բաներուդ փառքը անոր կու տաս՝ որմէ ընդունած ևս զօրութիւնն ու շնորհքը, Վրիստոսի արեանը կու զանս որ ազատիս ան յանցանքե՛ն՝ որ մինչև անգամ՝ քու ամենալաւ ծառայութեանդ հետ կը խառնուի : Օր ըստ օրէ՛ կը

սորի^ն «Նախախնամութեան առատ շնորհքները՝ ոչ միայն շնորհակալութեամբ ընդունել որպէս թէ Մատուծմէ ետեւ, այլ ամենալուր ալ, ու սա զգացումով թէ բոլորովին անարժան եւ անոնք վայելելու : Իչ կ'արդարացընեն^ն «Նախախնամութիւնը քու նեղութիւններուդ ու ձախտողութիւններուդ մէջ, մինչև անգամ՝ քանի որ քու շորս կողմդ՝ յաջողութեան լեցուն ծաղիկովը կը ծաղկին շատերը, որոնց որ յանցանքները դո՛նէ քու կիններէդ աւելի յայտնի եւ մեծեղեան են :

10. Ար զգանս եւ թէ Մատուծոյ փառքին ու մարդկային սեռին երջանկութեանը համար նախանձաւորութեան եւ գործունէութեան մէջ յառաջ կ'երթաս : Աէրդ ինքզինքը հաստատուն եւ անկեղծ կը ցուցնէ^ն, իրմէն բարի գործոց շարունակ հեղեղ մը հոսելով : Արնաս ուրիշներուն արտմութիւնները քաղցր կարեկցութեամբ դիտել, եւ խորհուրդներ ու նշարքներ բանեցընել թէ՛ ինչ կըրնաս ընել զանոնք սփոփելու համար : Շատ անգամ ինքնիրենդ մարդասիրական գործքերու վրայ կը խորհի^ն, եւ պատրանս եւ մէկգի ձգել քու օգուտդ ու հաճոյքդ՝ որ կատարես զանոնք : Վշխարհիս մէջ Վրիստոսի գործին յառաջադիմութեանը, ու անոր Վեատարանին տարածմանը, եւ քու ընկերիդ երջանկութեանը համար՝ երեակայութիւնդ խորհուրդներ ու զազախորներ կը ծնանի^ն : Իչ աս բանին համար ոչ միայն ազօթք կ'ընես, այլ եւ կը գործեն^ն ալ. եւ այնպիսի կերպով մը կը գործեն^ն որ կը ցուցնէ թէ՛ ազօթքդ սրտանց է, եւ թէ պատրաստ եւ քու կրցածիդ չափ բան ալ ընել աս գործին համար, մինչև անգամ թէ եւ ուրիշները՝ որոնք թէ որ ուզին, կըրնան շատ դիւրութեամբ յոյժ աւելի բան ընել, բան մը չեն ըներ :

11. Իչ աս բեղմնաւոր նիւթին վրայով այլ եւ չերկընցընելու համար խօսքերնիս, խորհէ՛ սա ալ թէ զգացումներդ աս ու միւս աշխարհին նկատմամբ ի՞նչպէս են : Եւ ելի եւ խորութեամբ եւ գործնական կերպով համազում եւ «աս երեցած բաներուն»՝ ունայնութեանը վրայով՝ որ «ժամանակաւոր են» : Ը Առ^ն Է. Կ. 18 : Ենոնցմէ ունեցած ակնկալութիւններդ ու անոնց ունեցած յարումդ կը նուա-

զե՛ն : Յօժար ես աս աշխարհիս մէջ կենալու՝ որքան
 ատեն որ քու շայրդ ուղէ : և ասիկաց իրաւացի ու ազէկ
 է : բայց քու կապերէդ այնքան արձակուած ըլլալդ ալ կը
 դռնե՛ս , որ յօժար՝ և սրտանց յօժար ըլլաս զանիկաց
 ձգելու մէկ բոպէին մէջ . անանկ որ՝ եթէ Մատուած յար-
 մար սեպէ քեզ յանկարծակի կանչելու , թէև քու վայել-
 շութիւններուդ՝ զորքերուդ՝ ակնկալութիւններուդ՝ և
 յոյսերուդ մէջն ալ ըլլայ , դուն սրտանց հաւանիս ան
 կոչմանը՝ առանց բնելու թէ՛ «Տէր , քիչ մըն ալ կենամ ,
 աս կամ ան հաճելի վայելչութիւնը վայելեմ , աս կամ ան
 խորհուրդն ալ կամայրեմ » : Արնան մտնտալ սովորա-
 կան հանդարտութեամբ և սրտի հաւանութեամբ որ՝ եթէ
 աստուածային կամքը ասանկ ըլլայ , կրնայ ըլլալ որ երբոր
 անկողինիդ մէջ կը մտնես կը պառկիս , ալ մէյժըն ալ
 չարթնաս . կամ երբոր տանդ դռնէն դուրս կ'ելլես ,
 բնաւ մէյժըն ալ չգառնաս : Աւ տակաւին ընդհակա-
 րակն , կենացդ բեռները որքան մեծ ալ որ են , մէկ յօ-
 ժարութիւն մը կը տեսնե՛ս ներսիդ անոնք կրելու՝ երկ-
 նաւոր շօրդ կամքին շաղանդելով , թէև այլ ևս բազ-
 մամթիւ տարիներ տեսն , և թէև ան տարիներն ալ մինչև
 հիմա տեսածէդ շատ աւելի մեծ նեղութեան տարիներ ըլ-
 լան : Արնան հանդարտութեամբ և հաստատութեամբ
 ըսել , թէև բաղձացածիդ չափ քաղցր սիրոյ զեղմամբ ալ
 չըլլայ , թէ՛ Մահ քու ծառայ , քու որդիդ քու ձեռք է ,
 «ինձի քու աչքիդ հաճոյ երեցածին պէս ըրէ» : Ը (Թատէ .
 ԺԵ . 26 : Վու կամքդ իմ կամքիս տեղը դրեր եմ՝ վեր
 վերցուելու կամ վար դրուելու , դուրս տարուելու կամ
 ներս բերուելու , հոս կամ հոն՝ աս կամ ան պարագային
 մէջն ըլլալու , ճիշդ ինչպէս որ դուն կ'ուղես , և ինչպէս
 որ ամենալաւ կերպով կը յարմարի քու բնդարձակ խոր-
 հուրդիդ , որն որ անկարելի է որ ես՝ կամ երկինքին մէջի
 բոլոր հրեշտակները աւելի կատարելագործեն :

12 . Թե՛ որ բանը ազէկ կը հասկընամ , ասոնք բարե-
 պաշտութեան մէջ անսոք ըլլալու և հաստատուած ըլլալու
 յոյժ նիւթական ապացոյցներն մէկ քանիներն են : Վնտոէ՛
 զանոնք , որքէ՛ զՄատուած անոնց համար՝ որքան որ քու մէջդ
 կը դանես զանոնք , և ամէն որ անոնց մէջ յառաջ երթնալ

սորով՝ աստուածային շնորհքին աղղկցու թխններուն տակը , որուն սրտանց կը յանձնեմ՝ քեզ , և սրտանց կ'աղաչեմ՝ որ ամէն ատեն դուն ալ ինքզինքդ անոր յանձնես :

Վերխորոնէին Խոսեղոսն հող լեռնէր՝ շնորհաց Ռջ ածելու հու-
հար :

Ո՛վ ամէնօրնեալ Մղբիւր՝ բնական և հոգևոր կենաց , կը գոհանամ՝ քեզմէ՝ որ կենդանի եմ , և հոգևոր կենաց գործքերն ու բերկրութիւնները գիտեմ : Կ'օրնեմ՝ քեզ որ քու կենաստու շունչ իմ մէջս սիսեցիր , որ թէպէտ երբեմն « յանցանքներու ու մեղքերու մէջ մեռած էի » , (Եղե . Թ . 1 ,) բայց « կենդանի հողի » եղայ , (Շնոր . Թ . 7 ,) այն մտքով՝ որ միայն քու որդւոցդ համար կ'ըսուի : Բայց նաև իմ եռանդուն փափարս է որ ո՛չ միայն ապրիմ՝ այլ աճիմ , « աճիմ իմ Տէր ու Փրկիչ Հիսուս Վրիստոսիս շնորհքովը ու գիտութիւնովը » , (Թ ՊԽ . Գ . 18 ,) որ անոր ծանօթ ըլլալէս կախեալ է յայտնապէս շնորհաց մէջ յառաջադիմութիւն ունենալս : Ես նկատմամբ կ'աղաչեմ՝ քեզի խոնարհութեամբ՝ որ մտքիս ուղիղ գաղափարներ տաս աստուածապաշտութեան վրայ , որ շնորհաց վրայ սխալ գաղափարներով չդատեմ , ո՛չ ալ անոր մէջ բրած յառաջադիմութիւններս ան բաներով չափեմ՝ որներ լիկ բնութեան արդիւնքներն են , և նարաւոր է որ անոր ապականեալ արդիւնքներն ըլլան :

Շնորհէ՛ որ դէպ 'ի քեզ՝ իմ Մտուածս և Վրիստոսով իմ Հայրս , սիրոյ մէջ աճիմ , անցապաղ նազանդութիւն ցուցնեմ՝ քու սուրբ և խնաստուն կամքիդ , և իմ ընկերս շատ մեծ բարեսիրութիւնով սիրեմ : Հողոյ համբերութեան և քաջութեան մէջ , հեղութեան և նախանձաւորութեան մէջ , հոգևորութեան և մտքիս երկնաւոր արամադրութեանը մէջ աճում տուր ինձի , նաև մէկ փոյթ մը՝ « որ թէ՛ կենամ , և թէ՛ հեռանամ » , Տէրօջը հաճոյ ըլլամ » , (Թ Սորն . Ե . 9 ,) ու թէ՛ ապրիմ և թէ՛ մեռնիմ , քու փառքիդ համար ըլլայ : Կէկ խօսքով՝ որովհետև գիտես թէ՛ անօթի ու ծարաւ եմ արդարութեան , ըրէ՛ զիս ի՛նչ որ կ'ուզես որ ըլլամ : Վաչէ՛ իմ հոգւոյս վրայ քու շնորհածիր Հողոյդ բարի աղղկցու-

Թիւններովք ան բոլոր կերպարանաց զծագրութիւնք՝ որ քու աչքդ՝ ո՞վ երկնաւոր Հայր , կը բերկրի տեսնել , և որն որ կընաս իրրև բուն քու պատկերդ ընդունիլ :

Պիտեմ՝ ո՞վ Տէր , որ տակաւին շատ պակասութիւններ ունիմ . այո՛ , հոգիս յետին աստիճան կը խոռոյի խորհելով թէ՛ սրբան հետու եմ՝ արդէն կատարեալ ըլլալէն . բայց սա մէկ բանը (բառ մեծ օրինակին քու առաքելոյդ) կը ջանամ ընել . « ետևի եղածները մոռցած եմ , ու առջևի եղածներուն կը դիմեմ » : Փիլիպ . ք . 12 , 13 : ՄՏ թէ իմ հոգիս քու խօսքովք ու Հոգւովք կերակրէիր : Ենով նորոգուած ըլլալով , ինչպէս որ խոնարհութեամբ կը յուսամ և կ'ապահանիմ թէ եմ , « նորէն ծնած ըլլալով՝ չէ՛ թէ ապականացու սերմէն , հապա անապականացուէն քու կենդանի ու յախտենական խօսքովք » , (Խ ՊԷՊ . Խ . 23 ,) նորածին մանկանց պէս՝ բանական և անխարդախ կաթին կը փափարիմ , որ անով մեծնամ » : Խ ՊԷՊ . Ի . 2 : Այլ թող « իմ յառաջագիմութիւնս ամենուն յայտնի ըլլայ » , (Խ ՏԷՄ . ք . 15 ,) մինչև որ վերջապէս « հասնիմ կատարեալ մարդ ըլլալու , Քրիստոսի լման հասակին չափը ունենալու » , (ԱՊՓԵՍ . ք . 13 ,) և վարը սա աշխարհիս մէջը երևելի ծառաներուդ հաճութիւնը վայելելէս ետքը՝ վերը դրախտիդ մէջ հաստատուիմ : Ար խնդրեմ և ակնունիմ ասոր՝ « մեր Տէր ու Փրկիչ Հիսուսս Քրիստոսի շնորհքովք , որուն փառք հիմա ալ , ու մինչև յախտենական օրն ալ » . Եմէն . Ի ՊԷՊ . ք . 18 :

Գ Լ Ո Ւ Խ Ի Լ :

Հոգևոր վիճակի մէջ յառաջ գացած + բխարանէին յիշցընել
 Եւրո-ժոյ բողոքո-նի-նները , և աճէն արին զանիւոյ սի-
 բելու ու տեղ ուրախանալու յորդորել :

1 • Ար յուսամ թէ Հիմա ընթերցողը իր հոգևոր վի-
 ճակը քննելով՝ պիտի գտնէ թէ շնորհաց մէջ կ'աճի :
 Եւ թէ որ կը փափարիս որ աս աճումը միանգամայն յայտ-
 նի ըլլայ և յառաջ երթայ , հոգիդ թող ևս առաւել
 խանդակաթ սիրով սիրէ զՔրիստոսած և անով ուրախանայ՝
 որ պատշաճ է յառաջադէմ քրիստոնէին բնութեանը , և
 կը զօրացընէ ու կը բարձրացընէ անիկայ , և որն որ կ'ա-
 զաչեմ որ նկատես՝ ոչ միայն իբրև քու արտօնութիւնդ ,
 այլ իբրև պարտաւորութիւնդ ալ : Աէրը՝ ամենայն
 ճշմարիտ և ընդունելի Ֆազանդութեան ամենէն զերազանց
 և ազնիւ սկզբունքն է • և սիրոյ հետ , երբոր այսպիսի
 իմաստուն և երջանիկ կերպով ուղղուած և այսպէս ստու-
 ղութեամբ փոխադրուած ըլլայ , հարկաւ ՈՒՐՄԵՆՈՒ-
 ԹՎԻՎՆ՝ այն՝ իր շարժուն համեմատ ՈՒՐՄԵՆՈՒԹՎԻՎՆ
 պիտի կապուի : Իրաւամբ կը վշտանայ քրիստոնէութեան
 ոգին քաջ հասկըցող մարդը՝ երբոր տեսնէ թէ ընդհան-
 րապէս ինչ ցած կեանք մը կ'անցընէ անկեղծ քրիստոնէից
 ընդհանրութիւնը՝ ասոր նկատմամբ • ուրեմն « Տէրոջմով
 ուրախացէք՝ ով արդարներ , ու շնորհակալ եղիք յիշ-
 լով անոր սրբութիւնը , (Մող՝ • ղէ՝ • 12 ,) նաև ան ա-
 մէն ուրիշ կատարելութիւններն ու փառքերը , որոնք ՎՈՒ-
 ՏԷՐ ԵՍՏՈՒՄՆ՝Վ՝ անունին՝ ան վնասախոս՝ սքանչելի՝ և
 ուրախալից անունին մէջ կը պարունակուին : Վու սրբա-
 զան վայրկեաններդ լոկ խոստովանութիւնով և աղաչանքով
 մի՛ անցընէր , թէպէտ ասոնք ալ իրենց հանապազօրեայ
 բաժինը ունենալու են • այլ զովարանութեան երկնային և
 հրեշտակային զործքին ալ մաս մը՝ և երևելի մաս մը տուր :

Մյո՛ւ աշխատէ՛ միշտ պայպիսի զգացումներով լեցուն՝ ջերմ
և բոցալառ սիրտ մը ունենալ :

2 . Չե՞ որ միշտ բաւական ճառագայթ կ'արձակուի
մեր սրտին մէջ լուսոյ և սիրոյ մեծ շօքմէն՝ ան սէրը մեր
սրտին մէջ արծարծելու համար : Այնու՛ր՝ իմ քրիստո-
նեայ բարեկամս ու եղբայրս , եկու՛ր՝ և նկատէ՛ ինձի հետ
մեր երկնաւոր շօք բարութիւնը : Աւ երանի՛ թէ Խն-
քը պնայիսի զգացում մը տար ինձի անոր վրայ , որ պէտք
եղած կերպովը նկարագրէի , որ քանի որ կը խօսիմ , ա-
նիկայ բորբոքի իմ սրտիս մէջ , և ան բորբոքը քեզի հա-
ղորդուի : Աւ երանի՛ թէ աս իմ գրած տողերովս հոգիէ
հոգի անցնէր , և զանոնք կարգացող ամէն քրիստոնէի
սրտին մէջ անանկ զգացումներ զարթուցանէր , որ Մս-
տուծոյ որդւոցը և փառաց ժառանգորդներուն կը վայլեն ,
որոնք բոլոր յախտնականութիւնը ան սուրբ գործքե-
րով պիտի անցընեն , որոնց քեզ զրգուելու կը ջանամ
հիմա :

3 . Պատճառ լունի՞ս Դաւիթին խօսքերն առնելու և
ըսելու թէ՛ « Մըչափ պատուական են ինձի քու խոր-
հուրդներդ՝ ո՛վ Աստուած , նըչափ մեծ է անոնց թիւը .
թէ որ համբեմ անոնք , աւագէն շատ են » : Սող . ճլթ .
17 , 18 : Դուն դիտես ուրկէ սկսելու է համբել , վասն
զի Աստուծոյ քու վրադ եղած շնորհքները քու էութեանդ
հետ սկսան : Այսան որոյ երախտագէտ սրտիս յիշէ՛ թէ
ան աչքերը՝ որ « քու անկատար կազմուածքդ տեսան » ,
քեզի բարեկամական խնամք նայեցան « երբոր զաղտուկ
տեղը շինուեցար » , և անկէ հետէ քու վրադ հսկեցին , և
ան ձեռքը՝ որ « քու անդամներուդ բոլորը իր զբքին մէջը
գրեց էր , երբոր դեռ անոնցմէ մէկը չկար » , (Սող .
ճլթ . 15 , 16 ,) ոչ միայն ձեակերպեց զանոնք ՚ի սկըղ-
բան , այլ ան ժամանակէն հետէ քու բոլոր ոսկորներդ
պահեց , անանկ որ՝ անոնցմէ մէկը կտարած չէ , (Սող .
լԳ . 20 ,) և յիբաւի աս բանին է՝ որ պարտական ես քու
տպրիլը : Դարձիր ե՛տ և անցած ճամբուդ նայէ , ան օրէն
որ Աստուած քեզ արգանդէն հանեց , և ըսէ՛ թէ արդեօր
բոլոր ճանապարհը աստուածային բարութեան նշաններովն
ու յիշատակներովը ծածկուած չէ՞ : Յիշէ՛ ան տեղերը՝

ուր որ բնակեցար, և ան անձինքը՝ որոնց հետ յոյժ մտերմութեամբ ընկերութիւն բրիր, և միտքդ բեր ան ողորմութիւնները որ ընդունեցիր ան տեղուանքը, և ան անձինքներէն՝ իր բն զործիք աստուածային խնամոյն և բարութեան: Հիշէ՛ ան դժուարութիւններն ու վտանգները՝ որոնցմով պաշարուած էիր, և ուշադրութեամբ մտածէ՛ Մատուծոյ քեզ անոնցմէ պաշտպանելու կամ անոնց մէջէն անցընելու համար բրածներուն վրայ: Խորհէ՛ թէ որքան անգամ միայն մէկ քայլ մը մնաց մահուան ու քու մէջտեղդ, և երբեմն որչափ յանկարծակի Մատուած ձեռնամուխ եղած է քեզ անպահովութեան հանելու՝ մինչև անգամ դուն քու վտանգդ չտեսած: Խորհէ՛ հիւանդութեան ան սննեակներուն վրայ, որոնց մէջ փակեալ մնացած էիր, և ուրկէ՛ դուցէ երբեմն խորհեցար թէ ալ դուրս պիտի չելլես. սյլ Եղեկիային հետ կ'ընէիր թէ՛ «Եւ որբուս հանգիստ ժամանակին մէջ՝ զերեզմանին դռները պիտի երթամ». մնացած տարիներէս զրկուեցայ՝: Եսայ. ԼԻ. 10: Արնայ ըլլալ որ Մատուած ան ժամանակէն հետէ կենացդ վրայ շատ տարիներ աւելցուց. և դուն չես զիտեր թէ դեռ քանի՞ տարի պահուած են, և որքան օգտակարութիւն ու երջանկութիւն կայ անոնց ամէն մէկուն մէջ: Կայէ՛ քու բոլորտիքդ կողմերուն. որքան աղէկ բարեկամներ քեզ ամէն օր պատած են, և կ'աշխատին թէ ինչպէս քու միտքարութիւնդ հանգստութիւնդ աւելցնեն: Կախարհամտութեամբ եղած ան երեւի պարագաներուն վրայ մտածէ, որոնք առիթ եղան աս տեսակ մէկ քանի կապակցութիւններուդ, զորս քու հողիդ Մատուծոյ հետ միացընող կապերէն ետքը՝ ամենէն երջանիկ կապակցութիւններուդ կարգը կը դասես: Եւ մի՛ մոռնար թէ քանի քանի անգամ՝ երբոր ան սիրելի անձանց կենացը սպառնալիք եղաւ, ան անձինքներուն՝ որոնց կեանքը թերեւ քու կիներէդ աւելի սիրելի ըլլալ կը զգաս, Մատուած ետ դարձուց զանոնք զերեզմանին սահմաններուն քովէն, և այսպէս ան փափուկ պարագայէն ծագող նոր քաղցրութիւններ աւելցուց՝ քու անոնց հետ ետքը ունենալիք բոլոր հաղորդակցութիւններուդ վրայ: Կակ մի՛ մոռնար թէ ուրիշ բարեկամներուդ ալ ինչ բարեջորհ կերպով մը Ենքը

քաջալերութիւն տուած է իրենց վերջին վայրկեաններուն մէջ, և կարող բրած է զանոնք ետեւին աստուածապաշտութեան քաղցր հոտ մը ձգել, որ միշտ անոյշ կը բուրէ անոնց յիշատակներուն վրայ, և մխիթարած է քեզ՝ անոնց վերջին բաժանմանը տրամութեանց տակը նուազելու ատենդ, և վերջապէս՝ մինչև անգամ՝ անոնց մահուանը յիշատակութիւնը ուրախակից բրած է:

4. Բայց հիմա ժամանակ է որ խորհուրդներդ ան բազմութիւ հոգևոր ոգորմութիւններուն առաջնորդեմ, որոնք Վատուած քեզի ցուցուց: Այտ դարձիր և՛ «ան վէժին նայէ՛ ուսկից որ կտրուեցար, և ան դուբին փոսին, ուսկից որ փորուեցար»: Ասոյ . ծն . 1: Արտի մտք խորհէ՛ ան վիճակին վրայ՝ որուն մէջ սկիզբը դտաւ քեզ աստուածային շնորհք . որքան յանցանքի տակ՝ որքան ապականութեան տակ՝ ի՛նչ վտանդի մէջ՝ ի՛նչ կործանման մէջ: Մտնոն թէ վիճակդ ի՛նչ էր, և ո՛հ ևս աւելի խորին խորհրդածութեամբ մտնոն թէ ի՛նչ պիտի ըլլար: Վատուծոյ աչքը՝ որ յախտենականութիւնը կը թափանցէ, տեսաւ քու վիճակդ, որուն վրայ յետին աստիճան տղէտ ու անհող էիր, ներկայ ժամանակիս և զգայական հաճութեան ունայնութիւններովը զբաղեալ . տեսաւ քեզ յախտենականութեան սահմաններուն եզերքը՝ և զթաց . տեսաւ որ քիչ առննի մէջ այնպիսի անօղնական թշուառ արարած մը պիտի ըլլայիր, ինչպէս ան մեղաւորը՝ որ ճիշդ հիմա մեռած՝ և անհուն զարմացմամբ ու յախտենական ահով իր չյուսացած դատակնիքը դտած է . և դուն ալ անոր նման զարմացման ու յուսահատութեան մէջ շանթահար պիտի ըլլայիր: Վատուած տեսաւ ասիկայ, և զթաց քու վրայդ . և քեզի ոգորման գանուելով՝ իր յախտենական սիրոյ և շնորհաց խորհրդովը քեզի մէկ Ֆրկիչ մը պատարասեց, և քեզ իրեն ծախու առաւ իր Արդւոյն արեամբը . մէկ զին մը՝ որ եթէ կանկ առնես ու վրան մտնոաս և սրտի մտք խորհիս՝ թէ ի՛նչ էր ան, անշուշտ պիտի ազգէ քեզի այնպիսի աստիճանաւ մը՝ որ պիտի ի՛նչալ տայ քեզի Վատուծոյ առջևը զարմացմամբ և ամօթով՝ խորհելով թէ՛ երբէք այնպիսի զին մը ինձի համար տուած ըլլայ: Իր աս օրձեալ խորհուրդները կատարելու համար

խրկեց իր շնորհքը քու սրտիդ մէջ . անանկ որ՝ « թէև ատեն մը խաւար էիր , բայց հիմա լոյս եւ Տէրութիւն » : Եղև . Ե . 8 : Անիկայ ըբաւ ան երջանիկ փոփոխութիւնը՝ որ հիմա հողոյդ մէջ կը զգաս , և իր « Հողոյն Արքայ ձեռքով » որ քեզի տրուած է՝ (Հող . Ե . 5) սիրոյ ան սկզբունքը հաղորդեց , որ աս իր ողորմութիւններուն նայելուց կը բորբոքի , և հիմա առջինէն աւելի մեծ ետանդով կը վառի : Արնէ հիմա քեզ հաստատուն պահեց քու քրիստոնէական ընթացքիդ մէջ , և « Անկէ օգնութիւն հասնելով » է որ մինչև աս օրս կը շարունակես : Գործ . իղ . 22 : Աչ միայն օրջեց քեզ , այլ օրջեալ ըբաւ քեզ , (Ծանօ . Ժբ . 2 ,) և թէպէտ այնքան օգտակար եղած չես՝ որքան որ անոր քու մէջդ արծարծած սրտի սուրբ բարեսիրութիւնը կը փափարեցընէր քեզի որ ըլլաս , բայց տակաւին չափով մը բարիք ըբած ես ան կոչմանը մէջ՝ որուն մէջ որ քեզ հաստատեց է : Քու ջանքերուդ վրայ եղած անոր օրջութիւնով մարդկային սեռին մէջէն քու կողայրներէդ ոմանք օգնութիւն դատած են , նաև՝ դուցէ անհոյ մէկը առարկնութեան ու երջանկութեան դարձած է : Ամանք երկինքի ձամբուն մէջ զՎասուած կը փառարանեն քեզի համար . և ոմանք դուցէ արդէն հոն հասած ըլլալով՝ քու հասնելուդ կը ցանկան , որ շնորհակալ ըլլան քեզի աջնիւ և աւելի ազոյս կերպով ան օգուտներուն համար՝ որոնց մեծութիւնը հիմա ըստ բաւականին կը հասկընան , թէպէտ քանի որ հոս էին՝ բնաւ չէին կրնար անոր վրայ դաշափար մը ձեւացընել :

5 . Քրիստոնեայ , չորս կողմը եղած տեսակ տեսակ անութիւ օրջութիւններուն նայել՝ որոնցմով արդէն չըջագատուած ես . և հայեցուածքդ աւելի յառաջ տար քոզէն անդին՝ հաւատոյ տեսածին : Խորհէ ան հիմա անձամբով եղած ուրախութիւններուն վրայ , որոնցմով զերեզմանին մէջ պիտի ձգես քու ամէն մէկ բեռդ . ու անմահ հողիդ՝ թեթեալարար և ուրախալից՝ սուրբ և երջանիկ պիտի ելլէ Վասուծոյ՝ իր էութեանը՝ սրբութեանը՝ բերկրութեանը՝ և յուսոյ Ազբխրին , Հիսուսի՝ որուն միջոցովք ըստք աս օրջութիւնները եղած են քեզի , և որն որ մէկ ամիս մը

պիտի սահմանէ քեզի իրենին ձօս , յախտեանս անոր փառքը տեսնելու և վայելելու : Խորհէ՛ ան զմայլումն վրայ՝ որով յարութեան օրը Մտոր յաղթութեանը ետեւէն պիտի երթաս . և աս աղքատիկ՝ հող ու մտխիթ դառնալու և ապականելի մարմինդ իր պատկերին պէս ձեռացած պիտի հագնիս . և ապա խորհէ՛ թե՛ «Մտ յոյսերը միայն իմն չեն , այլ հազարաւորներուն և բիւրաւորներուն յոյսերն են : Բազմաթիւ անձինք՝ զորս երկրիս վրայ իմ՝ ամենասիրելի բարեկամներուս կարգը կը համրեմ , իմ հետս կ'ուրախանան աս զաղափարներովն ու տեսութիւններովը . և Մտուած երբեմն տեսնել կու տայ ինձի անոնց երեսին ինդութեանը , անոնց աչքերուն մէջ փայլող ու անոնց քաղցր երախտազխտութեան արցունքներուն մէջէն ծաղող անոյշ և խոնարհ յոյսը , և լսել ան սակաւ մասը անոնց ներքին ինդութեանն ու ուրախութեանը՝ որ լեզուով կրնայ բացատրուիլ : Մտ՛ , և շատ բազմաթիւ անձինք ալ որոնք երբեմն ասոնց հետ հաւասարապէս սիրելի էին ինձի , որոնք թէպէտ և զերեզմանը դրած եմ՝ և հողին վրայ լացած եմ՝ , բայց կենդանի են Մտուծոյ , կենդանի են անխմանալի ուրախութիւններու մէջ . և կենաց ջուրէն առատապէս կը խմեն , որն որ անոր աջ կողմէն մշտնջենաւոր հեղեղներով կը վազէ՛ » :

6 • Ո՛վ քրիստոնեայ , դուն տակաւին սերտիւ միացած ու կապուած ես անոնց : Մահը՝ այս կերպով կապուած բարեկամութիւնը չկրնար կտրել , և պէտք չէ որ քեզ անզոյց բնէ ՚սն բարեկամներուն երջանկութեանը վրայ , որոնց յիշատակը այդպիսի արդարացի կերպով կը պատուես : Մտնք կենդանի են Մտուծոյ իրքե իր ծառաները . անոնք « կը պաշտեն անիկայ , և անոր երեսը կը տեսնեն » , (Յոյր • իբ • 3 , 4 ,) և ան փառաւոր ժողովին միայն մէկ փոքր մասը կը կազմեն : Միխնատորները՝ հաւասարապէս արժանի քու համարմանդ ու սիրոյդ , ան օրէնալ սահմաններուն մէջ կը բնակին . և դուն չե՞ս ուրախանար անոնց ուրախութեանը համար : Եւ դուն չե՞ս երկիրպագաներ սրբութեան ու երջանկութեան ան յախտեանական Մղբիւրին՝ ուսկից անոնց ամեն մէկ փոսկը կ'ելլէ : Մտ՛ , աս ալ կ'ըսեմ՝ թե՛ քանի որ օրէնալ հրեշտակները

այսպէս բարերարաբար մեզի կը նային , քանի որ քեզի կը ծառայեն՝ ո՛վ քրիստոնեայ , և քեզ իրենց բազուկներուն մէջ կը կրեն փրկութեան ժառանգորդի մը պէս , (Ա՞բր . ւն . 14 ,) անոնց երջանկութեանը համար ալ շե՛ս ու բախանար : Ալ շե՛ս երկիրպագաներ ան Վատուծոյն՝ որ անոնց բարձրագոյն բնութեանը բոլոր գերազանց փառքը ինք կու տայ անոնց , և երկինք մը կու տայ անոնց՝ որն որ բարերաստութեամբ կը լեցընէ զանոնք մինչև անգամ ան ստեանը՝ երբոր կը հեռանան անկէ որ դան ու քեզի ծառայեն :

7 . Մանկ և սակէ անհունապէս աւելի է ան օրձեալ Վատուածը , և էր , և պիտի ըլլայ յաւիտեանս : Անոր արժողը շրջապատող օրձեալ հոգիներուն երանութիւնները՝ և քու երանութիւններդ՝ ո՛վ քրիստոնեայ , անմահ են : Մտերկնային լուսաւորները անշիջանելի բոցով պիտի փայլին , և դուն ալ պիտի ծագիս ու փայլիս անոնց մէջ , երբոր արեգակն ու աստղերը խաւարին : Տակաւին լուսոյ անփոփոխ Հսոյքը իր ճառագայթները անոնց վրայ պիտի արձակէ , և անոնց անկէ անդրադարձուած լուսաւորութիւնը՝ և անով ունեցած երջանկութիւննին յաւիտենական պիտի ըլլայ , և միշտ պիտի աճի : Գետինը խոնարհէ՛ ո՛վ որդի Վատուծոյ , ժառանգորդդ փառաց , դեպի՛նք խոնարհէ , և ան ամենը որ քու ներսիդիդ է՝ երախտագէտ սիրոյդ աս դործքին մէջ թող միանայ , և բոլոր շուքդ եղածները՝ և անսահման յախտենականութեան մէջի ապագայ բոլոր բաները միաբանին հոգիդ բարձրացընելու և խայտացընելու , որ կարելի եղածին չափ կարենաս երկինքին դործքն ու օրձութիւնը սկսիլ՝ անոր Վատուծոյն առջեւ իյնալով , և իր շնորհաձիր ազգեցութիւններուն սիրտդ բանալով , և զոգտրանութեան անխոնկը մատուցանելով , որն որ անոր ներկայութեանն ու սիրոյն աս ջերմ՝ ճառագայթները մեծ ներդործութիւն մը ունին յառաջ բերելու , և անոր վերին դրախտին քաղցր բուրմանը՝ նման անուշահոտութեամբ աղնուացընելու :

Երբ արագիւր հոգիներն նախախնամութիւնն և շնորհաց օրհնութիւններովք ցնծալն, ու ինդիւնք սիրոյ և գաղափարութիւնն զըրուօր և ուղղոս արարայարութիւններով Եստուծոյ ունիւն խոփելը :

Ո՛վ Եստուած, բաւական է քրտիս մէջ կրակ վառեցաւ : Սաղ . 117 . 3 : Բայց ո՛հ ի՞նչ խօսքերով բոցը զուրս տամ : Եսկէ 'ի զատ ի՞նչ կրնամ ըսել միայն թէ սիրտս կը զմայլի քու վրադ և կը պաշտէ քեզ ու կը սիրէ քեզ : Իմ փոքր անօթս՝ առնել կրցածին չափ լեցուն է և կ'ուզեմ բոլոր ան լիութիւնը քու առջևդ զուրս թափել, որ ընդունակ ըլլայ և ևս աւելի ընդունելու : « Գուն ևս իմ ասպարս, իմ փառքս, ու իմ գլուխս բարձրացընողը » : Սաղ . 4 . 3 : « Իմ սիրտս քու փրկութիւնովդ կը ցընծայ », (Սաղ . 44 . 5,) և երբոր ինքզինքս քու Սուրբ Հոգւոյդ ազգեցութիւններուն տակը կը դնեմ քեզի հետ հաղորդութիւն ընելու, իսկոյն հազարաւոր բերկրալից խորհուրդներ կը ծագին, ու բախութեան հազարաւոր աղբիւրներ կը բացուին, և հոգւոյս վրայ այնպիսի զովութեամբ և զուարթութեամբ կը հոսեն, որ իբրև թէ շատ օրերով՝ շարաթններով և ամիսներու երջանկութիւնը ամեն մէկ րոպէի մէջ կը խոնի :

Ս'օրջեմ քեզ՝ ո՛վ Եստուած, աս իմ հոգւոյս համար՝ որ սակզնեցիր քու ստիպուցիր ըսել՝ և կը յուսամ որ յոյժ երջանիկ վախճանի համար, թէ՛ « Օխ սակզող Եստուածը թւր է » : Յոբ . 16 . 10 : Ս'օրջեմ քեզ ան գիտութեանը համար՝ որով անիկայ զարգարեցիր : Ս'օրջեմ քեզ ան շնորհացը համար՝ որով կը յուսամ որ կրնամ (և ո՛չ առանց խոնարհ սրանչացման) ըսել թէ՛ անիկայ սրբեցիր քեզ : Թէպէտ՝ աւանդ, երկնային տունկը յոյժ ամուլ երկրի վրայ անկուած է, և իմ ուղած աստիճանաւս չճաղկիր :

Ս'օրջեմ քեզ նաև ան մարմնոյն համար՝ որ ինծի տուիր, և տակաւին կը պահպանես իր զօրութեանն ու ուժին մէջ, ընդունակ ո՛չ միայն քու իր զանազան ըզզայարանքներուն համար պատրաստած վայելչութիւններդ վայելելու՝ այլ՝ (որն որ ըստ ինքեան ասոնց ամենէն ալ

չատ աւելի ծանրագին կը սեպեմ ,) քու ծառայութեանդ համար սակաւ ինչ գործունէութիւնով մը գործելու ալ : Մ'օրջեմ՝ քեզ ան ազատութեանն ու հանգստութեանը համար՝ որով աս անդամներս կը շարժին , և կը նազանդին իմ հոգւոյս հրամաններուն՝ որ կը յուսամ թէ քու կիներդ առաջնորդուած է : Մ'օրջեմ՝ քեզ որ իմ « տանս պահապանները շնն դողար , ոչ ալ զօրաւոր մարդիկները կը ծռին » , և « պատահաններէն նայողները դեռ մթնցած շնն , ոչ ալ երդեցող աղջիկները նկուն եղած » : Մ'օրջեմ՝ քեզ՝ ով իմ կենացս Նստուածք , որ « արծաթէ թելը դեռ փրթած չէ , ոչ ալ ոսկիէ բաժակը կտորած » . Ճող . ժբ . 3 , 4 , 6 . վասն զի քու ձեռքդ է որ կը հաստատէ բոլոր իմ ջիղերս , և քու անհուն ճարտարութիւնդ է՝ որ կը պատրաստէ ան զօրութիւնները՝ որոնք այնպէս առատօրէն կը բղիփն . և երբոր պարպուին , նորէն շուտով և առատութեամբ կը լինան : Ար գովարանեմ՝ քու անունդ՝ ան արքայախայել առատ պարզեաներուն համար , որով առհասարակ մարդկային սեռին և մասնաւոր կերպով իմ հանապազօրեաց պարէնս կը հայթայթես . ան այլեւայլ սեղաններուն համար՝ որ իմ առջև կը պատրաստես , և ան խիտ լեցուն բաժակին համար՝ որ իմ ձեռքս կուտաս : Սող . իգ . 5 : Մ'օրջեմ՝ քեզ որ քու նախախնամութեանդ աս առատութիւնները՝ տկար ակործակը ծաղր ընելու շնն ծառայեր , և մեռելներուն առջևը դըրուած կերակուրի պէս շնն : Մ'օրջեմ՝ քեզ նաև՝ որ « պատաստ մինակ չեմ ուտեր » , (Ճող . լւ . 17 ,) այլ կը բաժնեմ անիկայ այնպիսի սիրելի բարեկամաց հետ , որոնք ընկերական կենաց վայելչութիւնը կենդանականին վրայ կ'աւելցընեն մէկտեղ ձաշ ըրած ատեններնիս : Ար գոհանամ՝ քեզմէ՝ ներսէն այդքան բազմաթիւ ազգականներու համար , դուրսէն այդքան բազմաթիւ բարեկամներու համար , որոնք կարող են ինձի ծառայելու շատ բաներու մէջ , և յօժար են բարեկամաբար ՚ի գործ դնել ան կարողութիւննին :

Վասն չեմ մոռնար խոստովանիլ քու շնորհքդ՝ որ զիս կարող կ'ընէ ուրիշներուն ծառայել , և ի՛նչ և իցէ պարագայի մէջ ինձի կը դիտցընէ թէ՛ որքան « աւելի երա-

նեղի է տալը՝ քան թէ առնելը՝ : Գործ . ի . 35 : Աը զոհանամ՝ քեզմէ իմ սրտիս համար՝ որ կարօտեալին տըրտմութիւնները կը գցայ , և մտքիս համար՝ որ իմ կանուխ հոգս ու զուարթութիւնս կ'ընէ իմ քիչ կարողութեանս համեմատ ջանաշար ըլլալ անոնք սիրովելու . վասն զի « ստիկոյ ալ քեզմէ կ'ելլէ՝ սիւ Տէր » , (Առայ . իբ . 29 ,) որ դուն ես՝ շուրջերնիս երջանկութիւն տարածելու , կամ ինչ և իցէ բանի մէջ թշուառութիւնը քիչցընելու ամենայն բարեւեր հակամտութեան՝ ամենայն խոհեմ խորհրդոյ և ամենայն յաջող ջանքի մեծ և եղբնակը :

Աւանշուշտ՝ սիւ Տէր , թէ որ պայէս կը խոստովանիմ նեղեալներուն հետ եղած համակրութեան հաճութիւնները , ևս առաւել քեզ օրջնելու եմ երանելեաց բոլորովն օրջնեալ եղողներուն հետ եղած համակրութեան հաճութիւններուն համար : Ա' երկիրպաղանեմ՝ քեզի ան վտակներուն համար՝ որ դրախաբ կը ջընն , և մշտադաւար ու հանապաղ աճող բերկրութեան մէջ կը պահեն անիկայ : Գոգարանութիւն կը մատուցանեմ՝ քեզի ան հանգստութեանը՝ ան ուրախութեանը՝ ան խնդութեանը համար՝ որ կու տաս անոնց , որոնք երբեմն սիրելի էին ինձի երկրիս վրայ , որոնց տըրտմութիւնները մեղմացընելը իմ զործս էր , և անոնց ուրախութիւնները՝ մանաւանդ քեզմով ունեցած ուրախութիւննին իմ զուարճութիւնս էր յտաջ տանիլ : Աը զովեմ՝ քեզ ան ամէն սուրբերուն ու քու վերին աթոռից բոլորտիքը շրջապատած ամէն հրեշտակներուն երջանկութեանը համար , և կը զովեմ՝ քեզ գերազանց հաճութեան բարբառով՝ իմ սրտիս մէջ հաստատած ըլլալուդ համար ան զիս մխիթարող յոյսը՝ թէ ևս քիչ առե՛նէն պայծառ ակտութեամբ և մշտնջենաւոր փորձառութեամբ պիտի դիմանամ անոնց երջանկութեանը ինչ ըլլալը , որն որ հիմա հաւատքին դիտակովը՝ որ համեմատաբար աղօտ է , միայն հետուանց կը նշմարեմ : Ա' ինչև անգամ հիմա ալ քու շորհացոյ միջոցովը ինքզինքիս քու վերամբարձ բազկաւոր դեպ 'ի ան երանութեան սահմանները յտաջ մը դուրս կ'իմանամ : Ա' ինչև անգամ հիմա ալ « քու սիրելութեանդ կը սպասեմ » , (Ծանօթ . խթ . 18 ,) մեկ կողմանէ ան ետանդուն փափայրովը՝ որ անոր վե՛մ մեծու-

Թիւնը՝ հաստացող հոգւոյն անպատճառ կ'առթէ, և միւս կողմանէ ան հանդարտ ֆազանդու թիւնովք քու կամացդ՝ որ քու խոստմունքիդ անխոփոխու թիւնը կը պատճառէ :

Եւ հիմա՛ ո՛վ իմ Մատուածս, ի՞նչ բնեմ՝ քեզի, բայց այս միայն թէ ես՝ լեզուով բացատրելու ամէն կարողութենէս վեր՝ քեզ կը սիրեմ : Աը սիրեմ՝ քեզ որ անանկ բարերար Եսկ մըն ես դուն քու արարածներուդ, որոնք քեզմէ կ'ընդունին ամէն բոլի իրենց զանազան կերպերովք զոյու թիւն՝ զխու թիւն ու երջանկութիւն, իմ անձուկ երեւակայութեանս հասողութենէն վեր՝ թէ՛ թուով և թէ՛ աստիճանաւ : Բայց ո՛հ՝ ալ աւելի շատ կը սգաշեմ ու կը սիրեմ՝ քեզ՝ ըստ ինքեան եղած էութեանդ համար, ան լիութի կատարելութեանը համար, որ արարչագործութիւնը չպակեցուց, և բնաւ չսպառիր քու արարածներուդ հաղորդած ամէն ներգործութիւններովք ալ . ան անսահման կատարելութեանը համար որով ինքզինքիդ մէջ կը դանես քու երջանկութիւնդ և քու բոլոր վախճանդ, և կ'ըլլաս ինքնին սիրելի, անսահմանաբար սիրելի և պաշտելի, մինչև անդամ թէ որ քեզմէ յառաջ եկած բոլոր գերազանցութիւններն ու երջանկութիւններն ալ մտցուին :

Ո՛վ դուն առաջին՝ ամենամեծ՝ և ամէն բանէ գերազանց, դու միայն մեծ, դու միայն գերազանց՝ գրաւէ իմ բոլոր սիրաս, և ստուգիւ դուն գրաւեցիր անխից : Արքոր քու Սուրբ Հոգւոյդ իմ սրտիս վրայ շնչելն ու սո սիրոյ եռանդներուն շարժելը սյսպէս կ'իմանամ, կենդանական կենացս ստուգութեանը վրայ ինչպէս որ աներկբայ եմ՝ քանի որ անոր ազգեցութիւնները ՚ի գործ կը դնեմ ու անոր զգացումները կ'ունենամ, անանկ ալ անոր վրայ չեմ կրնար երկբայութիւն ընել : Ստուգիւ թէ որ բնաւ երբէք անօթութեան ախորժակը ի՞նչ ըլլալը գիտցած եմ, իմ հոգիս հիմա « անօթի է արգարութեան », (Մատթ. և . 6,) և շատ կը ցանկաց քու օրջնեալ բնութեանդ ու սուրբ կամացդ շատ աւելի համանայնելու : Թե՛ որ երբէք իմ քիմքս ծարուսութեան ի՞նչ ըլլալը զգացած է, հիմա « հոգիս ծարաւի է Մատուծոյ՝ կենդանի Մատուծոյն », և

(Սող . խն . 2 ,) ու սիրտս կը վախաքիւանոր շնորհացը աւելի յաճախ հազարդակցութիւն ընելու : (Թէ որ երբէք աս մարմինս՝ աշխատութիւնով կամ ճամբորդութիւնով յողնած ատենը զխոցած է թէ՛ ինչ է անկողինի հանգրստութիւն ուղելը ու հոն հանգչելով ուրախանալը , իմ հողիս քաղցր հաճութեամբ մը քու շնորհածիք գրկացդ վրայ կը հանգչի՝ ո՛վ իմ երկնաւոր Հայրս , ու կը դառնայ իր հանգստարանը իր Մատուցոյն գրկածութեանը՝ « որ ինձի բարիք ըրիր » : Սող . ճծիլ . 7 : Աւ թէ որ երբէք սիրելի բարեկամի մը երեսը հաճոյական կերպով ու զուարճութեամբ տեսայ , քու երեսդ տեսնելով ուրախանալու է ան՝ ո՛վ Տէր , ու քեզ Քրիստոսով իմ Հայրս կոչելու : Մասնկ ես դուն՝ ու ասանկ ալ պիտի ըլլաս հիմա ու յախտեանս : ՄԼ Ի՞նչ աւելի ընելիք ունիմ ինքզինքս քեզի յանձնելէն զատ՝ թէ՛ հիմա և թէ՛ յախտեան . քեզի ձգելով որ՝ « իմ ժառանգութիւնս ընտրես » , ու իմ գործքերս ինձի համար կարգադրես , (Սող . խն . 4 ,) քանի որ իմ գործքս քեզի ծառայել է , ու բոլոր իմ ուրախութիւնս քեզ գովարանել : « Իմ անձս քեզի հետեւելով կը յարի » , վասն զի « քու աջ ձեռքդ իս կը պահէ » : Սող . կի . 8 : Թող հիմա ալ զիս վեր տանի ու ես ալ դէպ 'ի քեզ պիտի դիմեմ՝ , մինչև որ բոլոր իմ վախաքններս կատարուի քեզ յախտեան վայելելովս . Ա՛մն

ԳԼՈՒԽ ԻԸ

Մարտի 1-ին ընդհանուր հարգանքներով հարգանքներով օգտու-
 իմար բաների փորձերի արտա- յարար :

1. 'Երախագրեալ գլխուն մէջ ստորագրած իս պէս են ու
 բլլալու են քու հոգւոյդ յաճախակի Մատուցոյ առջև ունե-
 ցած պարագանքները : Մասնկ' քու սերդ ու երախտա-
 գիտութիւնդ' աստուածային ներկայութեանը հասալանք-
 ներ ընկելով արտայայտուելու է , և մեծ Միջնորդին Հի-
 սուսի ձեռամբը' անոր առջև խունկի պէս գալու և ընդու-
 նելի հոս մը ունենալու է : Ըստ պէտք է որ յիշես , թէ
 միայն անիկայ չէ' քու սրտիդ մէջ Մատուցոյ վրայ եղած ան
 ետանդուն սէրն ունենալուդ արդիւնքը , որն որ ենթագ-
 րեցի թէ քու սրտիդ մէջ կայ : Թէ որ անիկայ անկեղծ
 է , չէ թէ միայն բանիւ պիտի բլլայ , բայց գործքով ալ
 ինքզինքը պիտի երևան հանէ , ու պիտի յառաջ բերի
 իրբն իր հարազատ պատուը' մէկ անկեղծ սէր մը քու ըն-
 կերներուդ և մէկ անխոնջ փափայ մը և աշխատութիւն մը
 շարունակ անոնց բարիք ընելու :

2. Պիտի ըսես որ' "Շնորհաց մեծ Հայրը ասանկ մար-
 դասիրական աչքով որ նայեցաւ իմ վրաս , չէ թէ միայն
 տասն հազար յանցանքներս ներեց , այլև ճոխացուց զիս
 այդան տեսակ բարիքներով : Մ'հ , ի՞նչ պիտի հա-
 տուցանեմ իրեն' բոլոր անոնց համար : Սորվեցուցէ՛ք
 ինձի' ո՞վ դուք յաւիտենական ճշմարտութեան պատգամ-
 ները : Սորվեցուցէ՛ք ինձի' երկնաւոր Հօրս ընտանեացը
 մէջի երեց եղբարքս : Սորվեցուցէ՛ք ինձի' ամենէն աւելի' ո՞վ
 դու Հոգի իմաստութեան և սիրոյ , թէ ի՞նչ կարող եմ'
 ընելու' մեծ ու յաւիտենական սիրոյ աղբիւրին իմ' սերս
 յայնանելու համար , ու իմ' հաւատարմութիւնս ազատու-
 ցանելու համար անոր' որ արդէն այնչափ բաներ բրաւ գա-
 նիկայ իրեն քաշելու , և այնչափ պիտի հաճի զանիկայ ըն-
 դունելովը և փարձատրելովը" :

3. Ասիկայ է ով քրիստոնեայ, ան հրամանը որ մենք սկիզբէն լսեցինք և միշտ ալ պիտի շարունակուի աննուազելի գորութեամբ. « թէ Մն որ զԱստուած կը սիրէ! », պէտք է որ « անիկայ իր եղբայրն ալ սիրէ », (Յով. 14. 21,) և պէտք է որ այն սէրը յայտնէ՝ « չէ թէ խօսքով ու լեզուով սիրելով, հասցա գործքով ու ճշմարտութիւնով » : Ինչով. 18 : Քու բնկերդ քու անձիդ պէս սիրելու ես . Աստուծոյ բոլոր ստեղծածները սիրելու, ու քու ազգեցուածեանդ հասածին չափ անոնք երջանիկ բնել ջանալու ես :

4. Ալ միթէ չե՞ս բար « Այո՛ » կը սիրեմ . աստուածային սիրոյն ոսկի շղթան մեզ ամենքս ալ շրջապատելը, ու մեզ մէկ մարմին մը կազմելով և սրպէս թէ ամենուս մէջ մէկ հոգի մը սիւնելով՝ մէկգմէկու սերտ կապակցելը կը զգամ : (Սող ճշմարտ և գերազանց երջանկութիւնը, մշանջնաւոր ու միշտ աճող երջանկութիւնը Աստուծոյ բանական և Զազանդ արարածոց վրայ տիրէ բոլոր տիեզերաց մէջ՝ թէ՛ երկինքը և թէ՛ երկրի վրայ : Ալ ամէն սպասամբ արարած՝ որ ընդունակ է ազատուելու և առաջին վիճակը դառնալու, թող Զազանդի անոր : Այո՛ անփրկելիներուն ալ հարկաւոր պատիժը անհուն խնամութեամբ և սիրով սահմանուի՝ որպէս զի բոլոր տիեզերքին օգուտը յառաջ բերէ :

5. Ասոնք ուղիղ զգացումներ են . ու թէ որ ստուգիւսասոնք քու սրտիդ զգացումներն են՝ ով ընթերցող, և ոչ թէ ունայն խօսքերու դատարկ ձև մը, ասոնց պիտի հետեի աստուածային Վախախնամութեան աս մեծ խորհուրդին հպատակ ըլլալու խորին փափաք մը՝ վերջին աստիճանի քու կարողութիւններուդ հասածին չափ : Աստի աս ըզգացումները՝ բննել պիտի տան քեզի քու կենացդ ու էութեանդ սեպհական պարազաները, որ գտնես թէ ի՞նչ պատեհութիւններ և օգտակարութիւններ կրնան ընծայել հիմա անոնք, և ի՞նչպէս ան պատեհութիւններն ու կարողութիւնները կրնաս 'ի գործ դնել : Մտի՛ր ուրեմն ասանկ մէկ գննութեան մը, ոչ թէ՛ որ ինքզինքդ՝ հպարտացընես՝ աստուածային նախախնամութեան կամ՝ շորհացը քու վրադ գերազանց ըլլալուն համար, կամ՝ որ « թէ որ առիթ՝ շառածի պէս պարծենաս » . Ինչով. 7 .

այլ որպէս զի ան մեծ Տէրոջը հետ հաւատարմութեամբ վարուիս, որուն որ դուն անտեսնես, ու որմէն ունիս դուն ամէն տաղանդներդ, որոնք՝ քու ընկերներուդ յարարեցութեամբ քուկդ կրնան սեպուիլ: Այլ արդ « զանազան պարզեաներ ունենալով ան շնորհքին համեմատ՝ որ մեզի տրուած է », (Լուսն . ԺԲ . 6 ,) անկողմնասէր ձեռք կշիռը բռնենք, որ կարող ըլլանք որոշելու՝ ինչ որ Մտուած մեզմէ կը պահանջէ, որն որ ուրիշ բան մը չէ՝ եթէ ոչ կրցածնուս չափ ընդհանուրին աղէկութեանը համար բան դաննել՝ նարել և ՚ի գործ դնել: Բայց ո՛հ՝ որչափ քիչ անգամ աս պարտաւորութիւնը հաւատարմաբար կը կատարուի: Այլ որքան բոլորափքնիս եղողները և բուն իսկ մեր հողիները՝ աս հաւատարմութեան պակասութեանը համար վնասներ կը քաշեն:

6 . Մտուած քեզի հանձար ու դիտութիւն տուած է: Աչ թէ անոր համար տուաւ ատոնք՝ որ ինքզինքդ զուարճացընես կամ զարդարես, և բոց մը հանես՝ որ միայն մարդոց աչքերը քեզի քաշէ ու խտրեցընէ անոնցմով: Ընծայ քեզի տրուելու դիտումն ան էր որ՝ թէ՛ դուն քեզ և թէ՛ ուրիշները դէպ ՚ի լուսոյ Լօրը առաջնորդելուդ միջոցն ըլլան: Աւ քու պարտքդ պիտի ըլլայ ան հանձարին ու ընդունակութեանը որպիսութեանը նայելով՝ կամ մարդկային կեանքը բարելուցընելու ու զարդարելու ջանք ընել, կամ աւելի ուղղակի աստուածային իրաց գործածելով ան հանձարը՝ կրօնքին փաստը ջատագովել ու անոր ճշմարտութիւնները պաշտպանել և անոր գործադրութիւնը ընդունելի ընել, մէկդի դարձընել մարդիկը ան ճամբաներէն՝ որ Մտուածոյ անպատուութիւն ու իրենց անձին ալ մահարեւ է, ու վերջին ճիգդ թափել՝ որ կրցածիդ չափ ազգու և քաղցր զրուցուածքով զանոնք առաքինութեան և երջանկութեան ճամբուն առաջնորդես:

7 . Մտուած քեզի իշխանութիւն տուած թէ՛ մեծ և թէ՛ փոքր ընկերութեան մէջ . միտքդ բեր որ անիկայ քեզի տրուիլը Մտուածոյ փառաւորուելուն համար է . և քու կառավարութեանդ տակը դրուած թէ՛ ընտանեաց և թէ՛ հասարակութեան երջանիկ ըլլալուն համար է: Պէտք է որ զոչոչ ըլլաս ուրեմն՝ որ եթէ քեզի զաւազան կամ

Թուր յանձնուած է, չըլլայ որ « դատարկ տեղն ըլլայ » :
 2-ով . Ժ 4 : Դատարկ ես, կամ օրէնք հաստա-
 տելու մեծ և ահագին գործին մէջ բաժի՞ն ունիս : Յար-
 գէ՛ դերագոյն Օրէնագրին իշխանութիւնը՝ որ ժողովուր-
 դին մեծ ինասակայն է . դուն ոչ ձեռնտու եղիր և ոչ
 հաւանութիւն տուր՝ քու խղճմտանքովդ ներկայ պարա-
 դաներուն նայելով՝ Ենոր կամոցը համաձայն չհամա-
 բաժ բանիդ, որուն հաստատուելովը չես հաւատար ճշ-
 մարտի՛ որ դուն « անոր սպասաւորը » եղած պիտի ըլլաս
 « բարիի համար » : 2-ով . Ժ 4 : Օրինաց գոր-
 ծադրութիւնը յանձնուած է քեզի . կենդանացուր զա-
 նոնք ժիր և քաջասիրտ գործադրութեամբ՝ քու ունեցած
 մասնաւոր պաշտօնիդ նայելով : Իշխանութեան դատարկ
 անունը միայն մի պահեր, թող մի տար ինքզինքիդ որ՝
 դատաստանարանի ատեանը եղած ատենդ իրբև թէ քունի
 մէջ ինկած կենաս . եղած դարձուածքները նկատէ ու աշ-
 խոյժ և արթուն եղիր : Երդարն ու անմեղը պաշտպանէ,
 ու հակառակորդին զօրութիւնը կտոր կտոր ըրէ : Արե-
 ւան հանէ բոլոր անիրաւ սրտերը : Ենարգէ և նուաճէ
 ան անզգամը՝ որ իր նշանաւոր կարողութիւնները չարու-
 թեան պատրուակ ըլլալու կամ անիկայ պաշտպանելու հա-
 մար կը գործածէ, որն որ պարտաւոր էր ջանք ընել խոյ-
 տառակելու և աշխարհքէն դուրս վարելու գգուանօք :

8 . Միայն մասնաւոր ընտանիքի մը գլխիս եղած ես :
 Եստուծոյ համար կառավարէ զանիկայ . ան փոքրիկ թա-
 դաւորութեան գործքերը նոյն դիտումներովը ու նոյն
 սկզբունքներովը մատակարարէ, որոնք ես հիմա ան գօրաւոր-
 ներուն և մեծերուն կը խրատէի որ՝ ի գործ դնեն, թէ որ
 միայն անյուսալի մէկ դիպուածով մը անգամ մը ան իմ
 վերի գրածներս աշխերնուն պատահին : Վու զաւերներդ
 ու սպասաւորներդ քու բնական հպատակներդ են : Թող
 բարեկարգութիւնը հաստատուի անոնց մէջ, ու անոնք
 կանոնաւոր կառավարութեան տակ պահէ : Արթէ՛ անոնք
 աստուածպաշտութեան սկզբունքներու մէջ, որպէս զի
 դիտման թէ որչափ բանաւոր է ասանկ կառավարութիւն
 մը, ու վարժեցուր անոնց համեմատ գործելու : Յիրաւի
 դուն չես կրնար անոնց սիրտը դարձնել, բայց անոնց

փարմունքներուն վրայ շատ մեծ ազդեցութիւնդ կրնայ ըլլալ, ու կրնաս աս կերպով շատ որդայթներէ պահել, ու ընկերութեան աղէկ անդամներ ընելու համար շատ բան ընել, ու Վատուոյ շնորհքը ընդունելու ճամբուն մէջ գնել զանոնք: Ու վերջին աստիճան ջանք ընելէն մի դադարիր անոր օրջութիւններուն կարօտ ըլլալին հակըցընելու. աշխատէ՛ որ անոնք շատ սէր ու եռանդուն փափար մը ունենալու համոզես, անհամեմատ կերպով աւելն բանէն աւելի արժող բանի մը պէս:

9. Վատուած քեզ քու ընկերներուդ մէջ սիրելի ընել հաճեցան, որ աս բանը մարդկային կենաց մէջ միշտ մարդոցը աստիճանին կամ ստացուածքին համեմատ չըլլար: Վաւ խորհուրդներուդ ու շարքութեամբ մտիկ կ'ընէն, քու ընկերութիւնդ կը վնասուէն: Վատուած քեզ մարդոց աչքին առջին ընդունելի կ'ընէ. անանկ որ չէ թէ միայն քու խօսքերուդ աղէկ մեկնութիւն կու տան, այլ նաև դուն քեզմէ զխոցած յանցանքներուդ վրայ ալ աչք կը գոցեն, ու քու բոլոր դործքերդ ու կատարած բաներդ խիստ ներողամտաբար և քեզի յաջող եղած կերպովը կը մեկնեն: Պէտք է որ աս՝ ոչ միայն Վախախնամութեան շնորհքը համարիս, ու իրբև աղաղային մէջ քու պարտաւորութեանդ զանազան ճիւղերը զուարթութեամբ շարունակելու քաջալերութիւն մը ստնես, այլ նաև քու ներկայ վիճակիդ մէջ ուրիշ կերպով աւելի օգտակար ըլլալու քեզի մեծամեծ պատահութիւններ արուիլ մը համարիս: Ի՞նչ որ քու անունդ արժէք մը ունի, անիկայ կշիռին բարի կոչմը դիր: Չանօրըք քեզ առաջինութեան ու բարութեան քաջալերութիւն տալ: Վթասիրտաբար ձեռք տուր համեստ արժանաւորներուն, երբոր կ'երևայ թէ ձգուած կամ աչքէ ինկած են, թէև պատշաճ կերպով նկատուելու ատենը անանկ պայծառ կը փայլի անոնց արժանաւորութիւնը՝ որ քու կ'ինէդ աւելի գերազանց ըլլալը կը գիտնաս: Շմարտութեան փաստարանը եղիր, խաղաղութեան խորհրդատու, քաղցրաբարոյութեան օրինակ, ու կրցածդ ըրէ մարդոց սիրտերը մեկզմէկու հետ հաշտեցընելու, մասնաւորապէս աղէկ մարդոցը, ինչ որ ըլլայ իրենց կարծեաց տարբերութիւնները անանկ բանե-

բու վրայով՝ որոնց անշար է որ աղէկ մարդիկ հակառակին : Աւստի բարձր վիճակիդ մէջ , ու ընդհանուրին սերը վատարկած ըլլալուդ պարան նշանը ունենալուդ մէջն ալ քու վարուցդ զգուշաւորութիւնն ու հեզութիւնը թող ըրիկ կերպով յանդիմանել անանկներուն յանդիմութիւնն ու ամբարտաւանութիւնը՝ որ կարելի է թէ ուրիշ բանի մէջ ալ այնքան երեւի չեն . կամ անանկները՝ որ յիշատի թէ որ ըստ բաւականին տաղանդի տէր ալ ըլլան՝ պիտինախառուին և տաղանդին ըստ մեծի մասին պիտի կորուսի հասարակութեան մէջը , մինչև որ ան յանդիմութիւնն ու դոտորութիւնը նուաճի : Այլ ալ ցաւելով տակն ու վրայ ըլլաս սա ազնուամտութեան և արեւմուտոր ընթացքիդ մէջ՝ քեզի հանդիպելիք ատելութեան և շարախօսութեան փորձ յարձակմունքներովք : Տակաւին միտ դիր ընդհանուրին աղէկութեանը , ու հաստատապէս որոշէ՝ քու ճանքերովդ անիկայ յառաջ տանիլ , և Նախախնամութեանը ձգէ՝ որ պահպանել կամ փրկել քու պատիւդ նենգաւոր և սուտ ու ցած յաճակմունքներէն , որ շատ անգամ առանց քու աշխատելուդ իրենք իրենց սուտ ըլլալը կը ցուցնենն ու զանոնք շարողներուն վրայ մեծ ամօթ կը դիպնեն , կամ (թէ որ ասիկայ չզգան) քու մարդասիրութեանդ ուզածէն աւելի մեծ վատաստամտութիւն պիտի բերէ անոնց :

10 • 'Իարձեալ' Մտտուած քեզի հարստութիւն պարզեց : 'Բեզ անանկ պարագաներու մէջ գրած' որ քու և քու ընտանեացդ ապրուստին համար բացարձակապէս պէտք եղածէն աւելի ունիք : Միտքդ բեր մտտ առնենն տալիք հաշիւդ : Միտքդ բեր թէ մարդոց սա բաները՝ որչափ անգամ իրենց փրկութեան ճամբուն մէջ արգելք կ'ըլլան , և որչափ անգամ՝ մեր Փրկչին յայտնի քարոզածին պէս՝ անոնց երկնից թագաւորութիւնը մտնելը այնչափ դժուարին է , որչափ որ ուղտին սակղին ծակէն անցնելը դժուարին է : Մատթ . ԺԹ . 24 : Աւստի թող քու անմիջական՝ ջերմեռանդ՝ և ամէն աւուր աղօթքդ ըլլայ՝ որ հարստութիւնը մէկ որոգայթ ու ամօթ մը չբերէ քեզի , ըստ որում՝ զիրենք ստացողներուն խիստ շատ մասին սա բաները կը բերեն : Ինչ կալուածքներուդ և եկա-

մասններուդ մէկ մասը կամ մէկ յարմար չափը՝ կ'աղաչեմ որ յատկացընեն զթու.թեան վերարեքեալ գործածութեանց, աւելցընելու ալ պատրաստութիւն ընելով՝ քանի որ Մատուած քեզի յաջողութիւն տայ որ և իցէ արտաքոյ կարգի դիպուածով մը : Աս կերպով միշտ նեղքդ պատրաստ պիտի ունենաս զբանազլուխ մը՝ զթու.թեան համար գործածելու, ու հաւանական է որ աւելի պատրաստ պիտի ըլլաս ուրիշներուն հաղորդելու, երբոր քեզի յանձնուած ինչքին վրայ քուկդ չեղածի պէս, բայց իբրև անբաներուն գործածուելու համար արդէն տրուածի պէս նայիս, թէև մասնաւորապէս մէկ քանի մը համար որոշուած ալ չըլլայ : Իմ գործս չէ ըսել թէ ան տալիքդ՝ ստացուածքիդ համեմատութեամբ ինչչափ ըլլալ պէտք է : Ետնք որ մեծ եկամուտ ունին ու անպաւակ են, կարելի է որ մէկ երբորդ մասը կամ կէսը անդամ քիչ ըլլայ, և անոնք որ քիչ եկամուտ մը ունին ու ծախքերնին շատ է, թէպէտ և իրենց բացարձակապէս հարկաւոր եղածէն քիչ մը բան ալ աւելի ունին, կարելի է որ ունեցածնուն տասնէն մէկը տալն անդամ շատ ըլլայ : Բայց ազօթք բրէ որ Մատուած քու միտքդ առաջնորդէ, տարի մը փորձ բրէ ան պարմանով՝ որ քու խղճմտանքովդ կը խորհիս թէ Ետք խիտտ հաճոյական պիտի ըլլայ, ու թող քու աս բանին վրայով ըրած դիտողութիւններդ յաջորդ տարին ինչ համեմատութեամբ ընելիքդ որոշեն, միշտ յիշելով որ՝ նախ և առաջ արդարութիւն կը պահանջէ ինքը, և ողորմութիւն տալն ալ այնչափ միայն՝ որչափ որ ասոր համաձայն դայ : Բայց տակաւին ան նոյն ատենն ալ զգոյշ կեցիք՝ ան խարերայ ու մտացածին և շատ դիպուածոց մէջ խանդարիչ երևակայութենէն՝ թէ «քու ընտանեացդ արդարութիւն ընելու համար հարկ է որ՝ քու զուակներդ շատ հարուստ ձգես», որ աս երևակայութեան պատճառաւ՝ կարելի է թէ քանի քանի ատանկ ինայութիւն ընող ծնողաց սիրական զուակները կեանքերնուն զրկուեցան, որոնց համար ազբատին տրուելիք մասը դիպուած էր, և ապրող զուակներուն ալ աս բանէն յառաջ դալիք աստուածային տհաճութեամբը ինչ մահաբեր հետեութիւններ ելլելը միայն Մատուած գիտէ, և ևս սրտանց աղօթք կ'ընեմ որ

ոչ դուն և ոչ ալ քու կիներդ ասանկ բանի մը անձամբ փորձը առնելով սորվին :

11 • Այլ քու սիրող՝ ալ աւելի դիւրազգաց ըլլալու և քու գթութիւնդ ամենէն աղէկ նպատակ ունեցող բաներու ուղղուելուն համար՝ համառօտիւ պիտի յիշեմ զանազան բաներ , որ արժանաւոր են անոնց խորհրդածութեանը նիւթ ըլլալուն , որոնց Մտուած աս կերպով օգուտ ընելու կարողութիւն տուեր է : Դ՛մ հարեանցի յիշատակելիքներս քու վրադ տպաւորութիւն ունենալուն համար , եղած տեղէն բոլորովեքդ եղող դրացիներուդ նայէ : Խորհէ՛ թէ քանի՛ քանի համեստ և աշխատասէր՝ կարելի է որ բարեպաշտ մարդիկ ալ , կրնամ ըսել թէ դժուարաւ կը գտնեն աս կենացս մէջ ապրելու միջոց մը : Մտմտա՛ որ անոնց ի՛նչ հանդատութիւն եղած պիտի ըլլար , եթէ Մտուածոյ քեզի տուած առատ պարգևներէն առանց մէկ դժուարութեան մը իրենց տալու կարող եղածդ տայիր : Մտադրութիւն ըրէ նաև որ և իցէ արտաքոյ կարգի գթութեան պահանջմունքներուն և մասնաւորապէս հասարակաց վերաբերեալներուն • և քու օգնութիւնովդ ու ջանքովդ ուրիշներուն օրինակ և քաջալերութիւն եղիր , որ քու տուած օրինակդ ըստ ինքեան մտածելով՝ կարելի է որ նպատատամատոյց եղած ստակիզ գումարէն շատ աւելի կարեւոր է : Վարօտեալին համար պատրաստ եղիր օգուտ ընելու թէ՛ խօսքով և թէ՛ գործքով , ու ջանք ըրէ խայտառակել ան դժուծ ու ամօթալի ջատագովութիւնները՝ որ կծծիութիւնը շատ անգամ կը թեւադրէ մարդոց՝ որ թէպէտ և իրենց արուեստովն մէկ փայլունութիւն մըն ալ տան անոնց , բայց տակաւին շատ յայտնի են թէ բոլորովին ոչինչ են : ‘Այլէ՛՝ որչափ ազգատ տղաք փողոցներուն մէջ թափառական մերկ ու տգէտ կը պտրտին , ու ամէն տեսակ մնչութեան և թշուառութեան ճամբուն մէջ յառաջ կ’երթան , և մտմտա՛ թէ ի՛նչ կըրնայ ըլլալ դոնէ անոնց մէկ քանիններուն մերկութիւնը ծածկուելու ու աստուածապաշտութեան սկզբունքները սորվեցընելու կողմանէ : Թէ՛ որ քաղաքի մը մէջի յաջողութիւն վայելող ամէն ընտանիք , որոնք այսպիսի դէպքերու օգնելու բաւականութիւն ունին , ամէն մէկը իրենց մօ-

տերը դռնուած մէկ խեղճ՝ ընտանիքի մը վրայ զթուփեան աչք մը նետեն ու զանիկայ իրենց պաշտպանութեան տակը առնեն , ուտելիքին՝ հազնելիքին՝ և տղարը կարգացնելուն օգնութիւն ընելով , նեղութեան մէջ սփոփելով , սխալանքներէ պաշտպանելով , ու որոնց կառավարութեանը որ ներքեն է՝ անոնց խրատ տալով՝ երբոր պարագաները պահանջն , ինչ մեծ տարբերութիւն պիտի տեսնուէր շուտ մը ան ժողովուրդին ընաւորութեանն ու վիճակին մէջը : Վննէ՛ թէ՛ ո՞վ կայ հիւանդ , որպէս զի թէ որ հասարակաց հիւանդանոց չգտնուի մտերը՝ որուն կարենաս յանձնել , (ուր որ քու տուած ստակը շատ աւելի օգտակար կրնայ ըլլալ ,) կրնաս անոնց առողջանալուն համար բան մը ընել իրենց տանը մէջ բժիշկ բերելով , ղեղ տալով՝ նմանապէս պատշաճ կերակուր տալով , ու իրենց պէտք եղած ծառայութիւնը ընելուն հոգ տանելով : Կտածէ նաև ճարգոց հոգևոր հարկաւորութիւնները՝ որոնց համար հոգ տանելու ատենդ՝ քեզի մասնաւորապէս կ'առաջարկեմ որ շատ ծանրակշիռ և աղնի զթուփիւն մը ունենաս , հանձարեղ և բարեպաշտ երիտասարդներուն օգնելով , ինչ որ իրենց քարոզիչ ըլլալու համար ուսմանքներ սորվելուն և կրթութիւն առնելուն ծախքեր ընելու հարկաւոր ըլլայ : Եւ մի նախանձիր Եստուծոյ քեզի տուածին մէկ մասը անոնց տալու , որոնք՝ Վրիստոսի Եւստարանը քեզի մատակարարելու համար ամէն աշխարհային բաները մէկդի ձգելով , անշուշտ իրաւունք ունին որ դուն անոնք նայիս , քանի որ ան ծանր ծառայութիւնները քեզի կը մատուցանեն , ու թէ՛ քեզի համար , և թէ՛ մեր ամենուս Տէրոջը համար իրենց կեանքը նուիրած են : Այսն զի մշակը արժանի է իր վարձքին կ'ըսէ օրհնեալ Փրկիչը , և քու ստիպողական պարտք է որ Եւստարանին քարոզութեանը համար հոգ տանիս , և մէկը չկրնար անբասիր ելլել թէ որ աս բանին օգնութիւն չընէ : Եւ մինչդեռ պիտիս առատութեամբ « կը լլուխ Եստուծոյ տանը՝ անոր սուրբ տաճարին բարութենէն » , (Սաղ . կն . 4 ,) կարեկցութիւն ունեցիր անսպաս երկրի մէջ բնակողներուն վրայ : Ենթիւ միլիոնաւորներ կը կորսուին՝ Վրիստոսի և անոր փրկութեանը վրայով բոլորո-

վնն տղէտ մնացած . և մեր Ֆրէկչին իր աշակերտացը տուած վերջին պատուէրն աս է՝ որ նոյնը քեզի ալ է , թէ՛ «Գա-
ցէք բոլոր աշխարհ , ու Վեետարանը քարոզեցէք բոլոր
ստեղծուածներուն» , (Մարէ . ԺԳ . 15 ,) և ամէն մար-
դու պարտքն է որ հոգ տանի աս պատուէրին կատարմանը :
Խորհէ՛ սպա տգիտութեան՝ ու կործանման ճամբուն մէջ
մնացած ան բազմութեանը վրայ , և Հիսուսի անհուն
սիրոյն վրայ ալ , կամ թէ աշխարհը փրկելու համար որ-
չափ բան ըրած ըլլալուն վրայ , և ուրախ եղիք ձեռքէդ ե-
կածին չափ օգնելու՝ . Հեթանոս երկրի հեռաւոր ազգերուն
մէջ ան փառաւոր Վեետարանը խրկելու համար , որն որ
այսքան երկար ատեն է անձանօթ մնացած է շատերուն ,
քանի որ անիկայ գիտնալն ու ՚ի սրտէ բնդունիլը յախ-
տենահան կեանք է : [Ստուուած հիմա կ'օրջէ իր որդւոցը
ջանքերը հեռաւոր երկրներու մէջ սքանչելի կերպով մը .
Սանտուիչ , և Ովկիանոսին ուրիշ կղզիները , Հնդկաս-
տան և շատ ուրիշ տեղուանք՝ Ստուուած բիւրաւոր մար-
դիկներ տգիտութեան՝ սնապաշտութեան՝ և կոպապաշտու-
թեան իսաւարէն՝ Վեետարանին սքանչելի լուսոյն և Հի-
սուսի՝ Միակ Ֆրէկչին գիտութեանը բերաւ : Ստուուա-
ծաշունչը հիմա գրեթէ է երկու հարիւր եօթանասուն լեզուի
թարգմանուած պատրաստ է , անանկ որ՝ մեր սեռին վեց
հարիւր միլիոնը կրնայ կարգալ զանիկայ , և պէտք է ջանք
ընես անիկայ անոնց խրկելու , և աշխարհիս փրկութեանը
մեծ գործին մէջ մասնակից ըլլալու . ժամ զի Վրիստոսի
եկեղեցւոյն և անոր ամէն մէկ անդամին մեծ պարտաւորու-
թիւնը՝ Վեետարանը քարոզելն է , ինչպէս էր քրիստո-
նէութեան նախնի դարերուն մէջ :] Ստոնք են ան մէկ
քանի գթութեան երևելի գործքերը՝ որ կ'ուզէի ցուցնել
անոնց , զորոնք Վախախնամութիւնը իր մասնաւոր առատ
պարգևներովը ճշխացուց . ու ոսկիին ասանկ բաներու գոր-
ծածուելու ընդունակ ըլլալը անոր յարգ մը կու տայ , որ
ուրիշ կերպով չկրնար ունենալ : Իսոյց թէ որ աս տեսակ
բաներու շն կրնար ոսկի շնորհել , քու արծաթդ հան-
զանակէ , զանկ մը կամ լումայ մը զուարթութեամբ զան-
ձանակը ձգէ՝ թէ որ աւելի սուղ ընծաներ տալու կարո-
ղութիւն չունիս . որովհետեւ Ստուուած կ'ընդունի անի-

կայ, երբոր ճշմարտապէս անատ ու զթած սրտով տրուի : Սորի . ժբ . 42, 43 : Իւ աս զանազան նպատակներուն համար պէտք է որ ճշգիւ անարեւոյց կանոնին հետեւի՝ որ կ'ըսէ, «Մէն մէկշարթի օրերը ձեզմէ ամէն մէկը իր քովը թող դիզէ ինչ որ կը յաջողի» , (Կ Սորի . ժգ . 2) և միշտ Վրիտանի համար տալու բան մը պատրաստ ունենալուդ պիտի ուրախ ըլլաս :

12 . Իւ որպէս զի այսքան ողորմութեան ստիպողական պահանջներունն՝ մէկ աւելի պատրաստ ըլլաս , զգուշութեամբ խորհէ քու ապրելու կերպիդ վրայ : Չեմ ըսեր որ՝ քու եկամուտդ շահուած շատ մը աղքատներէն մէկուն պէս ըլլալդ կը պահանջէ Մատուած : Ընկերութեան հիմնական կազմուած վիճակին նայելով՝ հասարակաց օգուտը ոչ միայն կը ներէ , այլ և կը պահանջէ ալ որ մարդոցմէն ոմանք աշխարհային ճոխութիւնները և զուարճութիւնները վայելին . որովհետեւ շատ մը աղքատ ընտանիքներ ան բաները պատրաստելովն՝ աւելի պատուաւոր ու հանգիստ կերպով ապրուստնին կը ձարեն , ինքզինքնուն մեծապէս օգուտ ընելով ու հասարակաց ալ ապահովութիւն ըլլալով , քան թէ՛ թէ որ իրենց աշխատութեանը կամ առ ու ծախ ըրած բաներուն զինք ողորմութեան պէս տրուած ըլլար . ոչ ալ կրնամ երեւակայել թէ Մատուոց երախտագէտ եղած կ'ըլլայ մէկը՝ թէ որ անոր տուած պարգևները մերժէ իբր թէ որոգայթի ու անէծքի տեղ տրուած ըլլային ու չէ թէ օգուտ ընելու : Մտիկայ մարդկային ազգին շնորհաձիր Հօրը բարերար դիտաւորութիւնները պարապ հանել է , և թէ որ վերջին ծայրը հասնի աս դաղափարը՝ ընութեան բոլոր դրութեանը զէմ տեսակ մը դաւաճանութիւն եղած կ'ըլլայ : Ատխախտմանութեան առատ շնորհքները թող գործածուին . բայց մենք ալ ուշադրութեամբ անոր նայինք՝ որ չափաւոր ու խոհեմ կերպով մը ըլլայ , չըլլայ թէ յիմարութիւնովն « յաջողութեան տեղը վարձ ըլլան » մեզի անոնք : Սորի . կթ . 22 : Խղճմտանքը թող քու անկիդ նկատմամբ ըսէ՛ իմ սիրելի ընթերցողս , թէ քու ունեցած աղէկ բաներուդ քանի՛ մասը քեզի՛ ու որքանը քու եղբարցդ համար երկնաւոր Հայրդ տուած է . ու չըլլայ որ՝ եղբայր չունե-

ցողի մը պէս կեանք անցընես, որպէս թէ ինքզինքիդ հաճոյքը կատարելու համար ինչ նարքներ որ կարող ես գտնելու պերճութեան և զեղխութեան մէջ, անոնք եղած ըլլան աս աշխարհքը խրկուելուդ միակ վախճանը: Ար վախնամ որ մեր ատեններուն մարդիկը աս կերպով կը սխալին, և չէ թէ խստամբերութիւնով ու անձնուրացութիւնով: Վննէ՛ ուրեմն քու ծախքերդ, ու քու եկամուտիդ հետ բազգատէ: Ան բանը՝ որ չէ թէ միայն ներքին՝ այլ և դաժնի ալ կ'ըլլայ քեզմէ վեր վիճակի մէջ եղող անձի մը, քեզի ամօթալի շտայլութիւն մը կրնայ համարուիլ: Այս ոչ՝ միայն պարտքի տակ չէյնալովդ և քու ընտանեացդ համար բան մը դիզել կրնալովդ ստուգիւ ապահով կրնաս ըլլալ թէ չափը չես անցնիր: Թմէ որ դուն անբաւական ըլլաս տղջատաց բան մը ընելու և կամ քու ունեցած վիճակիդ համեմատ ընելու՝ քու ան ազնուական ու շքեղ կեանք անցընելուդ պատճառովը, Կատուած պիտի չհանի աս տեսակ վարմունքիդ, և դուն՝ ըստ որում պատասխան տաս պիտի իրեն, պէտք է որ աւելորդ ծախքերդ չափաւորես: Այ թէ և աստուածային ներողութիւնը անտարակոյս պիտի ըլլայ՝ Վրիստոսի վրայ հաւատքի անկեղծ սկզբունք մը, և Կատուծոյ ու մարդոց անխարդախ սէր ունեցողներուն վրայ, թէ և ինչ աստիճան բարերարութիւն և օգտակարութիւն որ վրնան ընել՝ անոր չհամին, սակայն և այնպէս ասիկայ ստորդ դիտնաս որ՝ ամէն մէկուն իր գործքին համեմատ հատուցեմունք ընողը շատ ճշգիւ պիտի նայի անոնց ըրած աղէկութեան աստիճանին՝ վերջին հատուցումը եղած ատենը. անանկ որ՝ ամէն զանցատութիւն ըրած պատեհութիւններն իր ետեւն մէկ անդարմանելի կորուստ մը կը բերէ, որն որ յախտնականութեան մէջ մեր հետք պիտի երթայ: Այ աս ալ աւելցընեմ որ՝ թոյլտուութիւն ըրած ամէն մէկ զանցատութիւններուն և դէպքերը՝ մտքերն իս ալ աւելի անզգայ կ'ընէ ու կը տկարացընէ, և անիկայ հետեւապէս աւելի քիչ հակամիտութիւն կ'ունենայ կորսնցուցածը ձեռք բերելու կամ մինչև ան ատենը ունեցածը ամուր բռնելու:

13. Մի՛ գանդատիր որ ասիկայ քու վրադ ծանր բան մը դնել է: Այ միայն քու հաճոյքներդ աւելի ազնուա-

գոյն ճամբու մէջ զնեյու ետեւէ եմ , և յիրաւի շարժաւորութիւնը՝ որ ասանկ առատաձեռնութեան աղբիւրն է , քու պատուոյդ փնասակար չըլլալէն զաս՝ ընդհակառակն բարի ու խելացի մարդոց մէջ ալ աւելի կ'աւելորնէ անիկայ : Իսկ անոնց համարմունքէն ծագելու պատճառէն աւելի ազնիւք ունիս դուն քու առջևդ՝ ասոնք ընելու : Այլ քեզի Մատուոյ զուակի մը և Վրիստոսի անդամի պէս կը խօսիմ , ուստի և ամենէն սերտ միութեամբ մը՝ անոր հաւատացող յետին ատիճան աղքատին ալ կցորդ եղողի մը պէս : Վեզի հետ կը խօսիմ իբրև յախտեանական վառաց ժառանգորդի մը , որ՝ եթէ այնպէս է , ուրեմն պէտք է ան ակնկալութիւն բրած ժառանգութեանդ համեմատ մեծ ու փոք գգայմունքներ ունենաս :

14 • Այսն որոյ քննէ ինքնիրենդ՝ թէ ինչ բարի բան կայ ընելիք , և դուն ինչ կրնաս ընել կրնամ անձամբդ և կամ ուրիշներուն վրայ ունեցած ազդեցութեամբդ . և 'ի գործ դիր անիկայ հաստատուն որոշմամբ , որպէս թէ Տէրոջը անուամբն ու անոր առջևը : Այլ որովհետև « իմաստութիւնը Տէրը կու տայ , և գիտութիւնը ու հանձարը անոր բերէն է » , (Մատ. 10 • 6 •) վասն որոյ զնա անոր ամթոսին սորբ ինկիր , և հին ան առաջնորդութիւնն ու ան շնորհքը խնդրէ՝ որ հարկաւոր է քու ներկայ պարագաներուդ , և կրնայ սրբութեան ու օգտակարութեան պատուներ յառաջ բերել 'ի մեծ փառս նորին և 'ի պատիւ քու քրիստոնէական դաւանութեանդ :

Մարտաշարալարութեան մէջ Հասարակարանը քրիստոնէան իր ցանկոյ որ տառաւել օգտակար ըլլայ :

Ո՛վ առատաշնորհ Հայր և զերազոյն Տէր թէ բնական և թէ հոգևոր ամենայն բարութեանց : Ա՛րջնեմ քեզ ան ամէն աաղանդներուն համար՝ որոնցմով հարստացուցեր ես ինծի պէս անարժան մէկ արարած մը , ինչպէս որ ասանկ ըլլալս ալ կը խոստովանիմ : Հոգիս ամենախորին շիութութեան մէջ կը մտնէ քու առջևդ , երբոր կը խորհիմ թէ որքան քիչ բաներու մէջ մինչև հիմա մշակեցի զանոնք : Մանչ , բնութեան ինծի պարզեամբ պարզենեցողք , կենաց մէջ ունեցած կարողութիւններովս , ժամա-

որ ամենէն աղէկ բան պիտի տեսնէ : Այս թէ որ քու բարեշնորհ կամֆոյ է , աւելցոր ցանուած սերմը . ք Սորնը . թ . 10 . յաջողութիւն տուր ինծի իմ աշխարհային գործքերուս մէջ , որ աւելոք ունենամ կարօտ եղողներուն տալու . և այսպէս զիս յառնջ տար մինչև յաւիտենական առատութեան և յաւիտենական բարեսիրութեան սահմանը : Ան միանամ ան շատերուն հետ՝ որոնց սիրելի բարերարն եղած եմ երկրիս վրայ , և թէ որ քու օրջեալ կամֆոյ է՝ ան շատերուն հետ , զորս նաև ան երանելի բնակարանը տանող ճամբուն մէջ գնելու միջոցն եղած եմ : Ան զիս իրենց փառաց բնակութիւններուն մէջ ընդունին : Այս հոս ու յաւիտենականութեան մէջ՝ Տէր , ընդունէ՛ ամենուն գովարանութիւնը Հիսուսի Վրիտասի միջոցովը՝ որուն ոտքերուն առջին կ'երկիրպագանեմ , և որուն ոտքերուն տակը՝ տուր որ ամենօգտակար ընթացքէ մը ետքը՝ մեռնիմ , այնպիսի խոնարհութեամբ՝ իբր թէ ան նոյն ատենը կը սկսիմ անոր վրայ ունեցած հաւատոյ առաջին գործքս՝ ի գործ գնել , և իբր թէ բնու մէկ պատահութիւն մը ունեցած չեմ՝ կենացս ծառայութիւններովը նազանդութեան և երախտազիտութեան հարկ մը վճարելով , իմ հաւատքիս անկեղծութիւնը ցուցնելու :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ֆ

Վերխաբունէին հաշտան և դատարանի արտաբնականութիւնը
 ուրախանալը :

1. Երբ որ Պատմոս կղզւոյն մէջ Տէրոջը՝ Յովհաննու սիրելի աշակերտին ըրած տեսիլքները կը լիննային, դիտելի է թէ ան որ ըրաւ անոր ան յայտնութիւնը՝ այսինքն Յիսուս, ան հաւատարիմ և ճշմարիտ Սկան, աս կենդանի և երևելի խօսքերովը վերջացուց զանիկայ. «Մաքաներուն վկայութիւն տուողը կ'ըսէ. Մ, յո՛ շուտով կու գամ ևս» . և Յովհաննէս ամենամեծ պատրաստականութեամբ և հաճութեամբ ըսաւ. — «Մ, մէն. եկուք՝ Տէր Յիսուս» : Յայտ. իբ. 20 : Եկուք՝ ինչպէս որ դուն ըսիր, ստուգիւ և շուտով : Եւ յիշէ՛ որ ըրիստոնեայ, ով որ ևս, որ հիմա աս խօսքերը կը կարդաս, թէ քու երկնային Տէրոջնոյն խօսքերով քեզի կը խօսի. — «Մ, յո՛ շուտով կու գամ ևս» : Մ, յո՛ շատ շուտով պիտի դայ մահուամբ, բանալին դարձնելու՝ զերեզմանին դուռը բանալու՝ որ հոն մտնես, և քեզ անոր մէջէն՝ հիմա քեզի անծանօթ եղած անտեսանելի աշխարհին տահմանները տանելու : Եւ և շատ ատեն պիտի շտեկ՝ որ «դրանը քովը կայնող Պատուորը» (Յով. Ե. 9) պիտի երևնայ նաև ընդհանուր դատարանին համար. և թէպէտ՝ դուցէ ոչ միայն տարիներ՝ այլ դարեր կենան ան ժամանակին ու աս բույէին մէջտեղը, բայց տակաւին ժամանակի միայն մէկ փոքր կէտ մըն է անիկայ Մնոր՝ որ անցեալ և ապանի յախտնականութեան բոլոր անչափելի դարերը մէկէն կը տեսնէ : «Մնոր քովը մէկ օրը հազար տարուան պէս է, ու հազար տարին մէկ օրուան պէս» : Բ. Պ. յ. 8 : Ուրեմն աս երկու մտք ալ շուտով պիտի դայ : Եւ կը յուսամ թէ մէկ զուարթ Մ, մէնով մը կրնաս ըսել թէ՛ աս լուրը ահաւոր կամ անհաճոյ չէ քու տկանջներուդ. այլ յաւէտ թէ իր գալուստը՝ իր ստոյգ և արագ գալուստը, քու ու-

բախտից յուսոյդ՝ և քու տենչալից ակնկալութեանդ առարկան է :

2 . Աստա՛հ եմ թէ իրաւացի է որ ասանկ ըլլայ . և սակայն թերեւս բնութիւնը կեանքը սիրելով՝ և երկարածանօթ բնակարանէ մը զատուիլ և իրեն բոլորովին օտար վիճակի մը մէջ մտնել շուղելով , մեռնելու խորհուրդնեբէն խրանու . կամ սպառող և հալող աշխարհին սոսկալի հանդէսէն զարնուելով՝ դատաստանին օրուանը վրայ վախու զգացումով ալ նայի : Այս անոր համար՝ իմ սիրելի եղբայրս Տէրոջմով , (վասն զի կրնամ հիմա քեզ ասանկ սեպել ,) կ'ուզեմ՝ քեզի հետ քննութեան մտնել քիչ մը աս նիւթին վրայ , և կ'աղաչեմ՝ քեզի՝ որ աս երեւելի նիւթին աւելի ուշադրութեամբ նայիս , որն որ կը յուսամ թէ՛ կամաց կամաց քիչ անհաճոյ պիտի գայ քեզի , քանի որ աւելի ընտանեբար մտածես անոր վրայով : Այ՛ն՝ կը յուսամ թէ՛ անկէ ետ ետ երթալու տեղը , յաւետ յառաջ գէպ 'ի անոր պիտի ցաթկես ուրախութեամբ և բերկրութեամբ . :

3 . Խորհէ՛՛ սիլ քրիստոնեայ , երբօր Վրիստոս կու գայ մահուամբ քեզ կանչելու , կու գայ — քեզ քու ներկայ արտմութիւններէդ ազատելու — մնացորդ ապականութեան դէմ ունեցած ճիգերէդ քեզ խալցուելու — և քեզ ընդունելու՝ որ կատարեալ սրբութեան և ուրախութեան մէջ իր հետը բնակիս . աս “ մարմինէն պիտի հեռանաս , ու Տէրոջը քովը կենաս ” : Թ Արճճ . Ե . 8 :

4 . Յիրաւի քեզ աս աշխարհէս պիտի կանչէ , բայց ս'հ՛նչ է աս աշխարհը՝ որ սիրես անիկայ , և այսբան անձկանօթ փարիս անոր : Արքան նուստ են բոլոր ան վայելութիւնները՝ որ յատուկ են անոր , որքան անթիւն են անոր նեղութիւնները՝ անոր օրոգայթները՝ և անոր քուերը : Այնչէն հիմա ըրած ճամբորդութիւնդ քննէ . թէպէտ և պարտական են խոստովանիլ թէ՛ “ բարեբարութիւնը ու ողորմութիւնը քու հետդ եկան կենացդ բոլոր օրերուն մէջը ” , (Առլ՛ . ից՛ . 6 ,) բայց նոյն իսկ աս ողորմութիւնը քու ճամբուդ մէջ փուշեր անկած , և քեզի իմաստուն ու հարկաւոր՝ բայց սակայն ցաւալի ակնարկութիւններ ըրած չէ՞ , թէ “ Ասիկայ հանդատութեան տեղ

չէ՛" : Մի + . ք . 10 : Վննէ՛ քու խամբած ուրախու-
 թիւններուդ և ոչնչացած յոյսերուդ յիշատակները , թէ
 որ անոնց քու նեղեալ սրտիդ մէջ թողուցած ողբալի յի-
 շողութենէն 'ի զատ , զեռ կան ու կը կենան ինչ և իցէ
 յիշատակներ : 'Այլէ՛ ան գերեզմաններուն վրայ , որ
 քու ամենասիրելի և ամենաքաղցր բարեկամներէդ քանի-
 ները կլնէցին՝ թերևս անոնց ճիշդ ծաղկահասակ տակնը ,
 և քու անոնց հետ ունեցած հաղորդութեանդ ամենատես
 մտերմութեան ժամանակը , և մտածէ՛ որ եթէ քանի մը
 տարի ալ ապրիս , մահը իր յաղթանակները պիտի նո-
 րոզէ քու կորուստներովդ , և պիտի յափշտակէ զեռ կեն-
 դանի մնացողներուն ամենապատուականները : Ինչպէս
 որ մեռեալներուն՝ անանկ ալ կենդանիներուն նայէ . տես
 մարդկային բնութեան վիճակը՝ զՄտուած ուրացած բլլա-
 լուն բազմաթիւ ցաւալի նշաններուն տակ , և ըսէ՛ թէ
 արդեօր մէկ իմաստուն ու բարի մարդ մը պիտի ուզէ՞ միշտ
 հոս մնալ : Ինծի կը թուի որ՝ թէև ես ապահով բլլայի ,
 անանկ որ իմ շուրջս թռչող նետերը ինծի չհասնէին ,
 տակաւին չէի կրնար չողբալ անոնցմով վերաւորուածները
 տեսնելով , և շարունակ անոնցմէ իյնողներուն աղաղակ-
 ները լսելով : Մարդկային սեռին հիւանդութիւններն
 ու արկածները այնքան շատ են , և (որն որ ամենէն ցա-
 ւալին է) անոնց մտացը խօթութիւնները այնքան զանա-
 ղան և այնքան սպառնալից են՝ որ աշխարհս հիւանդանոց
 կը թուի . և վտակասիրտ եղող մարդու մը հոգին շուտով
 կը կոտրի , քանի որ անոր մէջէն կ'անցնի և սու տխուր
 տեսարանը կը զննէ . մանաւանդ երբոր կը տեսնէ թէ
 որքան քիչ բան կրնայ ընել անոնց անողջութեանը հա-
 մար որոնք կը մեղքընայ : Վրիստոնեայն ես , և քու սրբ-
 օրիդ շնորհները՝ երբոր կը տեսնես թէ մարդկային բնու-
 թիւնը մոլութեան ու խայտառակութեան մէջ ինչպէս
 ընկղմած է : Արբոր կը տեսնես՝ թէ ի՞նչ գարմանալի
 ծուլութեամբ ոմանք ինքզինքնին յայտնապէս թշուառ կ'ը-
 նեն , և ինչպէս Վրիստոսի անունը անպատիւ կ'ընեն ան
 շատերը՝ որոնք ինքզինքնին անոր ժողովուրդը կ'անուա-
 նեն : Արբոր կը տեսնես անոնց ապօրինաւոր գործերն
 ու աղտոզի սովորութիւնները՝ որոնք ամբարշտութեամբ

կ'ապրին , և միանգամայն կը տեսնես զոնէ տկարութիւններն ու անկանոնութիւնները անոնց՝ որոնց վրայ որ աղէկ յոյսեր ունինք : Եւ շե՞ս ուզեր փախչիլ այսպիսի աշխարհէ մը . ուր արդար և կարեկից հոգին նեղութիւն պիտի քաշէ օր ըստ օրէ մեղաց և թշուառութեան այսքան բազմաթիւ տեսարաններ տեսնելով : Ը՛վար . Ը . 8 :

5 . Եւ քննութիւնը աւելի ինքզինքնուս մտնեցնելով , միթէ շե՞ս զգար ներսիդիդ մէկ բան մը՝ որ կ'ուզես ձգել , և որն որ դրախտը անգամ կը դառնացնէ . բան մը՝ որ եթէ շարունակ մնալու ըլլայ , պիտի նեղէ և թշուառացնէ քեզ մինչև անգամ երանելեաց ընկերութեանը մէջ : Մնացորդ ներքսարանակ մեղք մը շե՞ս զգար , մեր բնութեանը Մտուծմէ սկզբնական ապստամբութեան տրամալից հետեւութիւնը : Ե՛մէն օր շե՞ս ճգնիր մէկ մնացորդ ապականութեան մը դէմ , կամ դո՞նէ ողբար ունեցած շորհքներուդ տկարութեանը համար : Շատ անգամ զորութիւններդ թողլ և նուաղեալ շե՞ս դաններ , երբոր կը փափարես որ Մտուծոյ ծառայես մեծ եռանդով : Շատ անգամ սիրող՝ անոր ցուցուցած սիրոյն առատ պարզեանքուն վրայ բուրբոյն անզգայ և ձեռքերդ անոր ծառայութեանը մէջ տկար շե՞ս դաններ , մինչև անգամ երբոր « կամեցողութիւն կայ քովդ » : Առով . Է . 18 : Սեանքդ իր ամենալու օրերուն և ժամերուն մէջ նուառու անօգուտ բան մը շե՞րենար , բաղդատելով անոր հետ որ կը զգաս թէ ըլլալու էր , և անոր հետ՝ որ կ'ուզես թէ ըլլար : Շատ անգամ մտաց թեկերը շե՞ս տարածեր ու ըսեր , « Երանի՛ թէ աղանիի նման թեկեր ունենայի , որ թռչէի ու հանգիստ ըլլայի » : Սաղ . ԾԵ . 6 :

6 . Արեմն պէտք չէ՞ որ ուրախանաս սա խորհրդով՝ թէ Յիսուս կու գայ քեզ աս նեղութիւններէն ազատելու : Թե՛ կու գայ քու ուզածներդ կատարելու և սրտիդ մեծ փափարները լեցնելու , ան փափարները՝ որ ինքը ներշնչած է քու ներսիդիդ : Ար կու գայ՝ մէկ սրբութեան և ուրախութեան աշխարհ մը բանալու առջիդ , աշխոյժ փնտ՝ և անձանձիր ծառայութեան աշխարհ մը :

7 . Մի՛ վարիստոնեայ , որբան անգամ մէկ տենչալից աչք մը ձգած ես ան երջանիկ եղբրքներուն վրայ , և ուզած

Ես ծովէն անցնիլ ան մերկայոյդ՝ տհաճելի և վտանգաւոր ծովէն, որ քեզ անոնցմէ կ'անջատէ : Արբոր քու Տէրդ կը զիջանի քեզի այցելութիւն մը ընել Երկրիս վրայ իր հոգևոր կարգադրութիւններուն միջոցովը, ինչպէս կ'օրջնես ան ժամանակն ու տեղը, և զանիկայ՝ միճակիդ շատ դժուարութիւններուն մէջտեղը, « Արկիմքին դուռը » կ'անուանես : Ծանոթ . իբ . 17 : Այլ թէ որ այսչափ ուրախալից բան մըն է քեզի նա դուռը տեսնելդ . միթէ առաւել ուրախալից պիտի չըլլայ անկէ մտնելդ : Թե որ Հիսուսի մէկ ժամուան այցելութիւնը ընդունիլը այսչափ ուրախալից բան է . ալ անհունապէս առաւել պիտի չըլլայ աւոր հետ յախտեանս բնակիլը : Աղէկ կրնաս ըսել՝ « Տէր, երբոր քեզի հետ բնակիմ, սրբութեան մէջ պիտի բնակիմ, ինչու որ դուն ինքնդ սրբութիւն ևս . սիրոյ մէջ, ինչու որ դուն ինքնդ սէր ևս . ուրախութեան մէջ, ինչու որ դուն ուրախութեան աղբիւրն ևս . ինչպէս որ դուն օրը մէջը, ու օրն ալ քու մէջդ է » : Հովհ . Ժէ . 21 : Այն օրոյ ողջունէ՛ անոր դալուստը՝ երբոր դայ՝ քեզի քու խօսքիդ համեմատ ընելու, և կատարելու իր անխօսքը, որուն վրայ հոգիդ այնքան անզամ երկնային խաղաղութեամբ և բերկրութեամբ համզած էր . « Այլ հայր՝ անոնք որ դուն ինծի տուիր, կ'ուզեմ որ ուր որ ևս եմ, անոնք ալ իմ հետս ըլլան . որպէս զի տեսնեն իմ փառքս՝ որն որ ինծի տուիր » : Հովհ . Ժէ . 24 :

8 . Աս նկատմամբ անչուշտ կրնաս ըսել թէ՛ « Վրիտտոս որքան շուտով գայ, այնքան աղէկ է » : Ի՞նչ կ'ըլլայ թէ որ մնացած օրերդ մէջտեղէն կտրուին : Ի՞նչ կ'ըլլայ թէ որ շատ ակնկալած ուրախութիւններ՝ կենացդ մէջ համը չառած, և շատ խորհուրդներ չկատարած թողու : Բաւական չէ՞ որ ինչ որ մահկանացու կեանքէ մը կ'ստնուի՝ փառաւոր յախտեանսութեան վրայ պիտի աւելլուի, և թէ ան օրերն ու տարիները երկինքի մէջ Աստուծոյ ծառայութեանն ու ներկայութեանը մէջ պիտի անցընես, որ եթէ անանկ չըլլար՝ երկրիս անկատար վայելքներուն ու աշխատութիւններուն մէջ պիտի անցընէիր :

9 . Բայց քու տեսութիւններդ՝ ոչ միայն մահուանէ

անդին՝ այլ մահուան և դատաստանին օրուանը մէջտեղի միջոցէն ալ անդին կը հասնին : Այսան զի դատաստանի համար իր վերջին դաշտեանը վրայով մեր Տէրը կ'ըսէ թէ՛ «Մնչցւշտ շուտով պիտի գամ» , մեր վերը բացատրած մտօրը • և մեզի ասանկ շուտով պիտի թուի՝ թէ որ աս միջոցը օրջեալ յախտենականութեան հետ բազմատեւք , որ անոր ետեւն պիտի գայ • և հաւանականաբար նոյնպէս պիտի թուի՝ թէ որ անիկայ ան դարերուն ալ հետ բազմապատեւք , որոնք արդէն անցան գացին՝ արեգակը երկրին օրերն ու տարիները չափել սկսելէն հետէ : Առ հիմա ան ուրախալից տաղին մասնակից ըլլալով պիտի շերտնա դուն ալ , «Մեն • եկուք՝ Տէր Հիսուս Քրիստոս» :

10 • Ղ'մարտիս է՝ ով քրիստոնեայ , թէ սոսկալի օր մըն է • մէկ օր մը՝ որուն մէջ բնութիւնը անանկ մէկ խառնակութեան մը մէջ պիտի իյնայ՝ որ դեռ գիտցուած չէ : Ոչ երկրաշարժ՝ ոչ հրաբուխի ժայթքումը՝ ոչ վեղող ու լափող բոցերով քաղաքաց աւերումը , ոչ ալ գետերուն կամ ծովերուն ջուրը կոխելով՝ զաւառաց կործանումը կրնայ մէկ ճմարտի նշանակ մը տալ ան օրուանը , երբոր «Երկինքը սաստիկ շառաչուով պիտի անցնի , ու տարերքները բռնկկած պիտի լուծուին , երկիրս ալ՝ ու ինչ գործքեր որ անոր մէջը կը գտնուին , պիտի այրուին» , (Ի Պիտ • ք • 10-12 ,) երբոր համայն բնութիւնը հիացմամբ պիտի փախչի տիեզերական Վատաւորին երեսն , (Հոյտ • ի • 11 ,) և անկէ ալ մեծ ազաղակ մը պիտի ըլլայ , որ Ազխատոսի մէջ եղաւ , երբ «տուն մը չկար՝ որ անոր մէջ մեռեալ չըլար» : Եւէց ժք • 30 : Սարմինդ պիտի դողայ տեսածին պէս , բայց հողիդ պիտի «ուրախանայ քու Փրկիչ Մտուծովդ» : Ղու • ան • 47 : Ղ'մարտի կրնաս ըսել թէ՛ «Մն երեւի օրը թող զայ , մինչև անգամ իր ամէն արհաւիրքներովը» : Այն՝ առարելցն ըսած քրիստոնեաներուն նման , (Ի Պիտ • ք • 11 , 12 ,) կրնաս սպասել ու արտորալ ան ահաւոր պայծառութեանը և ընդհանուր դատաստանին օրուանը : Այսան զի քու Տէրդ ան ատենը պիտի գայ , ան գործքերուն արդարութիւնը ցուցնելու՝ որ շատ բաներու մէջ այնքան մութ էին , և մութ ըլլալուն պատճառաւ կը

Հայհոյուէին : Անիկաց պիտի զայ իր մեծ վայելչութիւնը
ցուցնելու , « Հրեշտակապետին ձայնովը ու Մատուծոյ
վողովը երկինքէն իջնելով » , (Կ՝ ԹԻՊ . Ի . 15 ,) երկ-
րային աթոռէ կամ մինչև անգամ երկնային իշխաններուն
աթոռէն անհունապէս մեր աթոռի մը վրայ նստելով ,
« իր ու շօրը փառքովը » հաղուած , (Ա՝ Կ՝ . Թ . 26 ,)
լուսաւոր արբանեակներու անթիւ բազմութիւնով մը
չըմապատած , « իր սուրբերուն մէջը փառաւորուած , և
բոլոր հաւատացեալներուն մէջը հիանալի եղած » : Ի՞նչ ԹԻՊ .
Կ՝ 10 : Իր թշնամիներն ալ յառաջ պիտի բերուին իր
յաղթութիւնը փառաւորելու : Օ՞՞ր պիտի տեսնուի հոն
հողին մէջը թապալտրված , և անոր ու անոր բոլոր ծառա-
ներուն ոտքին տակը կոխկոտուած . անոնք որ միանգամ
դատապարտեցին Անիկայ՝ պիտի դողան անոր առջևը . և
անոնք՝ որ անոր առջևը ծունկ չըրեցին ամբարիշտ ծաղրա-
բանութեամբ , մեղքին յուսահատութեամբ « Լոններուն
ու ապառաժներուն պիտի ըսնն . Ա՛րանիս ինկէք ու մեղ-
ծած կեցէք անոր երեսէն՝ որ աթոռին վրայ կը նստի , ու
Պատնուկին բարկութենէն » , (Հ՝ Կ՝ . Գ . 16 ,) որն
որ երբեմն առին տարին յոյժ անդութ սպանութեամբ
սպաննելու :

11 . Մ՛ի քրիստոնեաց , յու հաւատարիմ սիրտդ չը-
խայտար սա խորհրդածութենէն : Եւ դուն պատրաստ
չե՞ս՝ մինչև անգամ սա տողերը կարդալու ստենդ՝ ան յաղ-
թութեան զննութիւնը սկսիլ , որուն ան ստենը պիտի
մտանակից ըլլաս : Անիկայ իրաւամբ կ'ակնկալէ որ՝ իր ա-
պագայ յաղթութեանը վրայ շատ խորհրդածութիւն ընես
ու ջերմեռանդ փափաք մը ունենաս . բայց միանգամայն կը
ներէ որ՝ ան օրջնեալ օրուանը ուրստութեանն ու փառքին
մէջ յու ունեցած անձնական բաժինդ ալ յիշես . և մինչև
անգամ հիմա ալ իր առջևն է՝ ինչ որ յու փրկութեանդ
համար իր զօրութիւնն ու սէրը ան ստենը պիտի կատարէ :
Եւ ի՞նչ պիտի չկատարէ արդեօք : Անիկայ պիտի զայ
գերեզմանին փակամբը խորտակելու , և յու ննջող մար-
մինդ նորէն կենդանացնելու : Յիրաւի մարմինդ հողին
մէջ պիտի դրուի , ու հոն պիտի մնայ՝ ի վկայութիւն Մա-
տուծոյ մեղքի դէմ ունեցած տհաճութեանը , առաջին

մեղքին դէմ՝ որ զործուեցաւ, որուն ցաւալի հետեւ թիւններէն իր որդւոցը ստե՛նասիրելիներն անդամ ազատ չեն : Բայց ան ատենը ականջ մը պիտի ունենաս Մատուծոյ Որդւոյն ձայնը ընելու, և մէկ աչք մը՝ անոր երեւման պայծառութիւնը տեսնելու . և պիտի « փայլիս արեւի պէս » , որ պայծառ երկինքին երեսը կ'ելլէ : « իր առադաստէն ելած փեսայի պէս » : Մատ. . ԺԳ . 43 : Սող. . ԺԺ . 5 : Առդիշ նոր պիտի հազուի աս մեծ հանդէսը փառաւորելու, և պիտի հազուի ոչ թէ մասհամայնութեան շտափներովը, այլ փառաց պատմութեաններովը . վասն զի « Վրիստոս պիտի նորոգէ քու խոնարհ մարմինդ՝ իր փառաւոր մարմինին կերպարանակից ըլլալու » : Փիլիպ. . Գ . 21 : Այլ երբոր այսպէս արքայական կերպով հազուած ըլլաս, քեզի և բոլոր իր ժողովուրդին հրապարակական պատիւներ պիտի տայ համահասարեալ աշխարհին առջևը : Թե՛րեւ հիմա քեզ վատահամբաւութեամբ կը բեռնաւորեն, նախատական անուաներ կը կանչեն, և վրադ յանցանքներ կը ձգեն, կամ այնպիսի զաղտփար ունեցող կը սեպեն՝ որոնցմէ հողիդ կը զարչի, բայց ան ատենը՝ անիկայ « քու արդարութիւնդ լըցսի պէս դուրս պիտի հանէ » , (Սող. . ԼԷ . 6 ,) « և քու փրկութիւնդ բոցափառ ջահի պէս » : Առայ . կի . 1 : Թե՛պէտեւ մարդիկ քեզ անպատիւ սեպեցին, բայց Մատուած քեզ պիտի ընդունի . և թէպէտ « իրբեւ աշխարհի աղտողութիւնը՝ ամենուն անարգը եղար » , (ան Սորմի . Գ . 13 ,) բայց անիկայ պիտի ցուցնէ թէ՛ քեզ « իրենը կը սեպէ, ան օրը որ իր սեպհական դանձը ժողվէ » : Մող. . Գ . 17 : Արբոր « կրկանքի պէս պիտի մերժէ երկրի բոլոր սմբարիչները » , (Սող. . ՃԺԺ . 119 ,) դուն արդար պիտի ըստիս ան ժողովին մէջ . և յիբաւի թէպէտ կոտրեցիր աստուածային օրէնքը՝ և արդար դատաստանաւ պիտի դատապարտուէիր, բայց տակաւին ան մեծ վերջին արդարութիւնովը հազուած ըլլալով, « ան արդարութիւնովը՝ որ Մատուծմէ է հաւատարով » , (Փիլիպ. . Գ . 9 ,) բուն իսկ արդարութիւնը քեզ պիտի ազատէ, և շնորհաց հետ պիտի միանայ, ու « արդարութեան պըտակը քեզի հատուցանէ » : ԲՏԺ . Գ . 8 : Վրիստոս

քեզ պիտի դաւանի մարդոց ու հրեշտակներուն առջևը , (Ղուկ . ԺԷ . 8 ,) քեզ բարի ու հաւատարիմ ծառայ պիտի անուանէ , ու պիտի կանչէ քեզ՝ քու Տէրոջդ ուրախութեանը մէջ մտնելու , (Մատթ . իՆ . 21 ,) քու վերայովդ իբրև իր եղբայրը պիտի խօսի կաթողին կերպով , և քեզի եղած բարեբարութիւնները իրեն եղածի պէս պիտի ընդունի : Մատթ . իՆ . 40 : Եւստ' ով քրիստոնեայ , դուն՝ որ գուցէ մեր ժողովներուն մէջ ամենէն վար տեղուանքը կը նստէիր , որ քեզի հետ կրնայ ըլլալ որ երկրիս հարուստներէն և մեծերէն մէկը չէր խոնարհեր խօսելու , ան առնել դուն Քրիստոսի առեանին մէջ իրեն աթոռակից ըլլալու , և չար մարդոց ու ասպտամբ հրեշտակներուն դէմ տալիք վճռոյն մէջ միանալու պիտի կանչուի :

12 . Եւստ ասիկայ յաղթութեան և փառաց միայն մէկ օր մը չէ : Բայց երբոր Կատաւորը ատեանէն կ'ելլէ և իր շօրը ապարանքը կը մտնէ , բոլոր երանեալներն ալ անոր հետ պիտի մտնեն , և դուն ալ անոնց մէջ , դուն ալ Փրկչիդ հետ մէկտեղ պիտի ելլես " իր շօրը քովը ու քու շօրդ քովը , և անոր Կատուծոյն քովը ու քու Կատուծոյդ քովը " : Յովհ . ի . 17 : Պիտի երթաս նոր Երուսաղեմին մէջ երևնաս ընդունած նոր լուսափայլ կերպարանքովդ , որ անտարակոյս միտրդ ալ նմանապէս պիտի զարգանայ . և մշտնջենաւոր բնակութիւն պիտի ունենաս ան ուրախութեան լուսութեանը մէջ , որով պիտի լեցուիս ու կշտանաս Կատուծոյ երեսին առջին , (Մատթ . ԺԿ . 11 ,) երջանկութեան ան լուսանը մէջ , որուն սուրբերը դատաստանէն առաջ կը բաղձային և կը սպասէին : Արաւով այրած աշխարհին աւերակներէն պիտի երթաս նոր երկինքն ու նոր երկիրը , ուր արդարութիւն կը բնակի : Ի Պիտ . Գ . 13 : Կատուծոյ ընտրեալներուն բոլոր թիւը պիտի լրանայ , և ամէն մէկուն երջանկութիւնը կատարեալ պիտի ըլլայ : Բոլոր ընկերութիւնը պիտի ներկայանայ Կատուծոյ առջևը , իբրև " հարսը՝ գառին կրնիկը " , (Յայտ . ին . 9 ,) որ անիկայ իր երկնային փեսային աչքերը անպատմելի բերկրութեամբ պիտի զննեն , և ինքը պիտի խոստովանի թէ՛ " Արատ մը կամ

խորը մութիւն կամ ուրիշ ասոնց պէս բան մը չունի" , (Եփե . Ե . 27 ,) անոր բնութիւնն ու վիճակը ճիշդ այնպէս ըլլալով՝ որ ինքը ան ասունը խորհած էր որ ըլլայ , երբոր նախ ինքզինքը տուաւ անոր համար և "անիկայ ծախու առաւ Մատուծոյ իր արիւնտիքը" : Յայտ . Ե . 6 : " Եւ ասանկ յախտեան Տէրոջը հետ պիտի ըլլաս" , (Կովտ . Կ . 16 ,) և անմահ զարեքը պիտի անցնին , և տակաւին քեզ անտոխոխ պիտի դռնեն . երջանկութիւնդ միշտ նոյն , և անոր համար ունեցած աստորեակդ նոյն , կամ յաւեւ յարածամ՝ աճող՝ քանի որ հոգիդ և ևս առաւել մերձենայ Մտր՝ որ երջանկութեան աղբիւրն ու անհունութեան և կատարելութեան կեդրոնն է :

13 . Իսկ հիմա շորդիդ նայէ երկրիս վրայ , և զատե՛ թէ որ կրնաս , անանկ յոյսեր ու վայելութիւններ՝ որոնց պատճառաւ ուղես ըսել թէ՛ Տէր , ու շայտուր զալուստդ , կամ տարակուսիս քու անոր անձկալոց ցուցնելու և աղաղակելու . " Եկուր Տէր Յիսուս Քրիստոս , շուտով եկուր" :

Եւ ամենալուսնի-ննի-բով սիրտը Բորբոս-ած + բիտարանէին Երու-ծո-նի-ննը իմ աղբիւրը :

Ո՞վ ամենորջեակ Տէր , հոգիս աս յոյսերովը կը վառի և բողոք վեզի կ'ելլէ : Դատ . ԺԿ . 20 : Դուն վկայութիւն տուիր թէ՛ շուտով կու գաս , և ևս ալ ուրախալից հաւանութեամբ կ'ըսեմ , " Մէն . եկուր Տէր Յիսուս" : Յայտ . ԻԲ . 20 : Եկուր , վասն զի կը տենչամ որ աս անարդ կեանքէս ելլեմ . անոր բեռներէն՝ ցաւերէն՝ և որոգայթներէն ազատիմ : Եկուր , վասն զի կը ցանկամ ելլել ու քու ներկայութեանդ առջևը ըլլալ , և քու վերին ապարանքդ տեսնել՝ ուր որ դուն կը նըստիս :

Ո՞վ ամենորջեակ Յիսուս , մահը իր կերպարանքը փոխած կը տեսնեմ՝ երբոր աս նկատմամբ կը նայիմ անոր : Երհաւիրքներուն թագաւոր կոչուածը՝ այլ ևս այնպէս չերեւար ինձի՝ փառաց և շնորհաց թագաւորին այնքան մտ ըլլալուն համար : Մեծ բերկրութեամբ կը ըսեմ քու ոտքիդ ձայնը՝ որ կամաց կամաց կը մտննայ : Մէկդի

քաչէ քողը՝ երբոր կ'ուզես : Բայց իմ բանտիս փական-
քը , որ իմ անձուկ հողիս դուրս ցաթկէ քեզի , և ինք-
զինքը քու ոտքդ ձգէ . ան Հիսուսին ոտքը՝ « որ ևս չտե-
սած սիրեցի , անիկայ Հիմա չեմ տեսներ , բայց հաւատա-
ցի , և ուրախ եմ անպատմելի ու փառաւորեալ խնդու-
թիւնով » : ԿՊԵ . Կ . 8 : Վու՛ն՝ ո՛վ Տէր , « կենաց
ճամբան ինձի պիտի ցուցնես » . քու ձեռքդ զիս քու ե-
րանութեան բնակարանդ պիտի առաջնորդէ , որ « լեցուն
ուրախութիւն և միշտ հաճութիւններ կան » : Սող .
ԺՊ . 11 : Վու՛ն ինձի մէկ բնակարան մը պիտի սահմա-
նես քու հաւատարիմ ծառաներուդ հետ , որոնց քանի որ
մարմինները հողին մէջ կը քնանան՝ հողին երնին հիմա
քեզի հետ կը բնակին : Մտնցմէ շատերը իմ ընկերներս
էին քու գործքիդ աշխատութեանը մէջ , և քու թագա-
ւորութեանդ համբերութեանն ու նեղութեանը մէջ իմ
սիրելի ընկերակիցներս ու եղբայրներս : Յայ . Կ .
9 : Ո՛վ օրձեալ Վրկիչ , ցուցու՛ր ինձի թէ՛ որքան
փառաւոր և որքան երջանիկ ըրած ես անոնք : Հուցու՛ր
ինձի՝ թէ լուազոյն կենաց ինչ նոր կերպարանք ասնեւո-
տարիք անոնք՝ որ մեռեալ կը կոչենք . և ինչ աղնուա-
զոյն և ընդարձակազոյն ծառայութեանց մէջ դրիք անոնք ,
որպէս զի քեզ Հիմա կրցածէս աւելի լուազոյն գովարա-
նեմ՝ քու անոնց ըրած բարութեանդ համար : Աւ ո՛հ՝
տու՛ր ինձի բաժանորդ ըլլալ անոնց օրձութիւններուն ու
ծառայութիւններուն մէջ իրենց հետ , և երախտագիտա-
կան սիրոյ երդ մը բարձրացընել անոր նման՝ որ անոնք քու
առջեդ կ'երգեն :

Սակայն՝ ո՛վ իմ օրձեալ Վրկիչ , մինչև անգամ հոն
իմ հողիս աւելի աղնուազոյն և աւելի փառաւոր յոյսի մը
պիտի անձկայ , և ան Հիմա դեռ անձանթ վսեմութենէն ու
երանութենէն նոր շարժառիթներ պիտի հանեմ՝ քու վեր-
ջին երևմանդ օրուանը սպասելու և ցանկալու : Հոն՝ հոս
ունեցածէս աւելի եռանդուն փափարով պիտի փափարիմ
քու գործքերուդ արդարութիւնը , և քու յաղթութեանդ
յայտնուիլը տեսնելու . քու ծառաներուդ հողը վերստին
կենդանացած , և մահուան՝ քու և անոնց վերջին թշնամոյն
խափանիլը տեսնելու : ԿՊԵ . ԺԵ . 26 , 54 : Պիտի

ցանկամ' ան զերազոյն պատուոյն՝ որ ինձի պիտի տաս , և ան կատարեալ երանութեանը՝ որուն պիտի տանիս քու ժողովուրդիդ բոլոր բազմութիւնը : « Ահուր՝ Տէր Հիսուս Արիստոս , շուտով եկուր » ը' դրախտին երգերուն հետ պիտի խառնուի , և պիտի նշուի բոլոր քու սուրբերուդ միլիոններուն բերնէն , որոնք քու շնորհքդ հոն հաստատեց :

Միանգամայն՝ ով իմ աստուածային Տէրս , ընդունէ՛ ան պատիւը որ մէկ երախտագէտ սիրտ մը քեզի կը մատուցանէ հիմա , ան փառաւոր յոյսերուն զգացումովը՝ որով ներշնչեցիր անիկայ : 'Խուն ես ան՝ որ աս խնդութիւնը անոր մէջ դրիր , և իմ հոգիս աս փառաւորեալ փափաքանացը բարձրացուցիր . որ եթէ ասանկ չլլար՝ ժամանակաւոր և զգացական ամենամուստ շնչին բաներով երկրաբարչ պիտի ըլլայի հիմա , և ահով ան օրուանը վրայ պիտի նայէի , որն որ հիմա իմ ամենեռանդ փափաքանացս առարկան է :

Ո՛հ՝ իմ հետեւ եղիր ստէն առնն , այո՛ , մինչև աս մահականացու կենացս վերջը : Այս շնորհէ՛ որ քանի որ քու փրկութեանդ կը սպասեմ , քու պատուիրանքներդ կատարեմ : Շնորհէ՛ որ « իմ մէջքս դօտեորած ըլլայ , ո՛ճրագս փռած » , (Առ. 1 . Ժբ . 35 ,) և իմ ախանջներս քու դարտեանդ օրնեալ նշանին արթուն սպասն . որ իմ ջերմեանդ հոգիս հաճութեամբ ցամփէ քեզ դիմաւորելու , և մահուամբ զօրանայ փառաց ան տեսիլքները վայելելու՝ որոնց յափշտակութեամբը մահականացու տկար բնութիւնս հիմա օգեսպառ պիտի ըլլար :

ԳԼՈՒԽ Լ

Վերջնորոնեին իր հաճուման թամանալի վարժանսովը զ]սպասած
 փաստաւորելը :

1 . Այսպէս՝ իմ սիրելի՛ ընթերցողս , ջանացի քեզ զանազան պարագաներու մէջէ՛ տանիլ , և անոնք ալ՝ ոչ թէ մտացածին կամ երևակայական , այլ այնպիսիներ՝ որ ճշմարտիւ մարդկային և քրիստոնէական կենաց մէջ կը պատահին : Այս կրնամ ճշմարտութեամբ և զուարթութեամբ ըսել թէ՛ քեզի ցուցուցի ան ճամբան՝ ուրկէ՛ ևս քաբեցի , և որուն մէջ տակաւին իմ փափարս է յառաջ երթալ : Աս համարձակեցայ իմ յախտնական երջանկութիւններս ան հիմանը վրայ դնել , որուն վրայ քեզ առաջնորդեցի բուկիններդ դնել : Ինչ որ քեզի ներկայացուցի իբրև կենացդ ամենէն մեծ գործը , ևս ալ կը փափաքիմ իմ կենացս մեծ գործն ընել . և ան մեծ փայելլութիւնները՝ որոնց կ'ակնկալեմ կամ կը ցանկամ երկրիս վրայ ունեցած սրանդիտութեանս մնացած օրերուն մէջ , այնպիսիներ են՝ որ քեզի պատուիրեցի փնտռել և ջանացի աշուտութիւն ընել որ անոնց հասնիս : Այնպիսի սէրը առ Աստուած , այնպիսի հաստատուն աշխուժութիւնը իր գործին մէջ , զերեզմանէն անդին եղած բաներուն վրայ այնպիսի զուարճալի հայեցողութիւնները (վրայ է ինձի Աստուած՝ որ) երանութիւն մը կը թուին ինձի անբաղդատելի կերպով որ և իցէ ուրիշ բանէ մը աւելի , որ կրնայ ինքզինքը մարդուս սիրոյն և հետամտութեանը արժանի ընծայել . և բիւրաւոր աշխարհի տեղ չեմ տար իմ ասոնց մէջ ունեցած բաժինս , կամ մինչև անդամ աս կեանքիս մէջ անցընելիք օրերուս միջոցը ասոնց տուած զուարճութիւնները :

2 . Խոնարհութեամբ կը յուսամ թէ՛ աստուածային օրջութեամբը աս ճշմարտ բաներուն քննութեանը մէջ

անցուցած ժամերդ, օգտակար պիտի ըլլան, և թէ ասանք կարդալովդ՝ կրամ կենաց և խաղաղութեան ճամբուն մէջ մտնելու, և կամ անոր մէջ քու քայլդ արագացընելու համոզուեցար: Յոյժ սրտանց պիտի ուրախանամ թէ որ քեզի աւելի օգտակար ըլլամ, և ան ալ մինչև վերջը: Այժմ միայն մէկ տեղարան մը կը մնայ, մէկ տեսարան մը՝ որմէ անշուշտ պիտի անցնիս, որ իր մէջը մէկ բան մը ունի այնքան ստակալի, որ չեմ կրնար անոր վրայով քեզի սակաւ ինչ օգնելու ջնանալ. բան է կ'ուզեմ՝ մահուան շուքին մութ ձորը: Արտի մտօք կը փափաքիմ որ՝ զաւանու- թեանդ պատուոյն՝ հողադոյճ մխիթարութեանը՝ և քու կենդանի մնացող բարեկամներուդ ուրախութեանն ու շնորհութեանը համար՝ ոչ միայն սպաշուութեամբ այլև պատուով մեռնիս. և անոր համար կ'ուզեմ քեզի քանի մը վերջին խրատներ ալ տալ: Յիրաւի գիտեմ որ՝ Ատախանանութիւնը կրնայ մահուանդ պարագաները այնպիսի կերպով մը կարգադրել, որ պատեհութիւն չունենաս հիմա քեզի տալիք խրատներուս պէս գործել: Արնայ ըլլալ որ՝ զուրահն կամ ներսէն մէկ անակնկալ դէպք մը քեզ երկինք տանի քու իմանալէդ առաջ, և ինքզինքդ այնպիսի յանկարծական կերպով հոն դանես՝ որ յաւտ տեղափոխութիւն մը թուի քան թէ մահ: Ամ կարելի է թէ՛ հիւանդութեան բռնութիւնը այնպէս ազգէ իմացականութեանդ, որ բոլորովին անզգայ ըլլաս ան պարագաներուն վրայով՝ որոնց մէջ որ ես, և այսպէս մահդ (թէ պէտե ուրիշները կը տեսնեն որ յայննայպէս և ստուգիւ կը մտնենայ) կրնայ ըլլալ որ այնպիսի յանկարծական թուի քեզի, որ իբր թէ կատարեալ առողջութեան մէջ մեռած ըլլայիր:

3. Բայց վերջապէս՝ կրնայ հաւանական ըլլալ որ աս աշխարհէս յախտնականութեան մէջ մընեկու ասանդ քիչ մը ժամանակ ալ ունենաս ու խելքդ վրայ ըլլայ. և որովհետե կրնայ ըլլալ որ քու մահուան ժամանակի վարձուքդ զանազան նկատմամբ շատ ազգեցութիւն ընէ, վասն որոյ ներսւմ շնորհէ ինձի որ՝ քանի մը պարզ խրատներ տամ քեզի անոր վրայով, որ ՚ի գործ դնես, թէ որ Աստուած պատեհութիւն տայ քեզի և միտքդ ձգէ զանոնք:

Այսպատշաճ բան մը չըլլար քսաննիմներորդ զլուխը նորէն աչքէ անցընել, Երբոր մէկ վտանգաւոր հիւանդութեան մը նշանները կը տեսնես: Այլ ևս աւելջը կը յուսամ որ՝ ըսածս օգտակար պիտի ըլլայ քեզի՝ աս պատճառաւ որ ինծի կը թուի թէ՛ ինքզինքս հարկադրեալ կը գտնեմ քեզի ան մասնաւոր քաղցրութեամբը մէկ բան մը խօսելու, որն որ կը զգանք մեր ներսիդին՝ մեռնող բարեկամի մը վրայով, որուն սրտերնիս ամէն խօսքերով կը բանանք, որովհետեւ չենք յուսար թէ՛ այլ ևս պիտի խօսինք անոր:

4. Արեմն նախ և առաջ կը խրատեմ քեզ որ կարելի եղածին չափ շուտով ջանք ընես՝ քու աշխարհային գործքերու վրայով ունեցած բոլոր հոգերդ մէկդի ձգել, ժամանակին զանոնք կարգին դնելով կրցածիդ չափ պատշաճ և քրիստոնէական կերպով: Ա՛ռ զեմ թէ ան տեսակ բան մը չկենար՝ որ միտքդ շիտթէր, Երբոր կարողութիւն չու նիս անոր դիմանալու, կամ նեղութիւն տար և կամ կոխ ձգէր ետեդ մնացողներուն մէջ: Ա՛ն բանը ըրէ՛ որ Աստուծոյ առջևը պատշաճ կը դատես, և որն որ ճշմարտապէս կը հաւատաս թէ՛ շատ հաճոյ պիտի ըլլայ անոր: Արցածիդ չափ խոհեմ և ազգու կերպով ըրէ՛. և ապա աշխարհս այնպիսի տեղ մը սեպէ՛ որ գործքդ կատարելապէս ըմպուցած ևս անոր հետ, և անոր գործքերն ալ արդէն մեռած մէկու մը՝ ինչպէս որ են, անկէ աւելի բան մը չերևնան քեզի. միայն թէ՛ կրնաս մէկ բարութիւն մը ընել անոր բնակչացը, քանի որ դեռ անոնց մէջն ևս, և կրնաս կենացդ վերջին գործքերուն՝ կամ խօսքերուն մէջ գտնուած մէկ պարագայով մը օրհնութիւն մը ձգել ետիդ անոնց՝ որ բարեկամներդ ու ճանապարհորդակիցներդ էին, քանի որ կ'ընթանայիր քու ճամբորդութեանդ մէջ՝ որն որ հիմն կը լինցընես:

5. Արպէս զի կարենաս առաւել պատեհութիւն ունենալ և առաւել ևս պատրաստ գտնուիլ ասոր, վիճակիդ վրայով մէկ խորին քննութիւն մը ըրէ, և ջանք ըրէ Աստուծոյ ահաւոր ներկայութեանը երևալուդ համար հոգիդ կարելի եղածին չափ յարմար վիճակի մը մէջ դնել: Այսին զի յիրատի ահաւոր բան մըն է անոր անմիջական ներկայութիւնը մտնել, անոր առջևը կայնիլ, ո՛չ թէ իր

չնորհաց աթոռին առջևը՝ իբրև պաղատող մը, այլ անոր առեանին մէջը իբրև առանձին հոգի, որուն փորձի ժամանակն անցած է, և որուն յախտնական միձակը անմիջապէս պիտի որոշուի: Աննացդ թերութիւններուն համար Աստուծոյ առջև խնարհութիւնդ նորոգէ, թէև մեծաւ մասամբ անոր ծառայութեանը նուիրած ես ան: Շնորհաց ուխտին մէջ խոստացեալ Աստուծոյ ողորմութիւններուն և Վրիստոսի արեանը նորէն դիմէ, իբրև անմիջոցը՝ որով ան ողորմութիւնները կու դան: Ենթդինքդ բոլորովին աստուածային տնօրէնութեանը յանձնէ, իբրև յօժար Աստուծոյ ծառայելու՝ թէ՛ սա աշխարհիս մէջ և թէ՛ միւսին, ինչպէս որ անիկայ յարմար սեպէ: Այլ մեկ կողմանէ քու մեղանշականութիւնդ՝ ու միւս կողմանէ աստուածային իմաստութիւնն ու բարութիւնը զիանալով, հողոյդ բոլոր քաջութիւնը մեկտեղ ժողովէ՝ կրցած իդչափ դիմանալու, որքան որ անոր ձեռքը ծանրանայ քու վրայ, և ընդունելու անոր վերջին հարուածը՝ հոգիներուն մեծ և բարի շօքը կատարեալ ջազանդութիւն ցուցնող մէկու մը պէս:

6. Ինչ որ քաշես, ջանք բոլ ինքզինքդ համբերութեան օրինակ մը ցուցնել: Աս քաղցր առաքինութիւնը «կատարեալ գործ թող ունենայ» . ՀՅակ . ան . 4 . և որովհետև այլ ևս քիչ բան ունի ընելիք, վասն որոյ թող քու ընթացքդ ազնուութեամբ լինցնէ: Թող զանգատող խօսք մը չելի՛ բերնէդ, և ասոր համար ալ ամէն դժկամակող խորհուրդի դէմ դիր: Այլ երբոր կը զգաս թէ՛ աս տեսակ բան մը կը ծագի ներսիդից, մեռնող վրկչիդ վրայ նայէ հաւատքով, և սրտիդ հարցուր թէ՛ «իմ վրան պատկած անկողինէս աւելի ցաւեցուցիչ չէ՞ր անոր խաչը: Անոր իր արխնախանձ թշնամիներուն մէջ կենալը՝ անհունապէս աւելի սոսկալի չէ՞ր իմինէս, որ այդքան բազմութիւ սիրելի բարեկամաց քաղցրութեանն ու ինձամքին մէջն եմ: Իմ մեղքերուս ծանր բեռը՝ սա նեղութիւններուն բեռին զիս ձեռելէն շատ աւելի տարապիւն կերպով չձնչեց զանիկայ: Այլ սակայն անիկայ ան ամենուն համբերեց «մերթուելու տարուող ոչխարի պէս» : Առայ . ծգ . 7 : Թող անոր շարժարանացը յիշատակու-

Թիւնը միջոց մը ըլլայ քուկիններդ քաղցրացընելու, այն՝
 Թող քեզ ուրախացընէ՛ անիկայ՝ երբ որ կանչուիս քիչ մը
 ատեն խաչը վերցընել, Թագը հագնելէդ առաջ: Իո-
 լորովին ուրախութիւն սեպէ ան՝ որ պատահութիւն ունիս
 մէքին ալ Մատուած պատուելու ան քու համբերութիւ-
 նովդ, որ հիմա իր վերջին գործը կը գործէ, և քանի մը
 օրէն կամ գուցէ քանի մը ժամէն՝ կատարեալ և յախտե-
 նական երանութեամբ պիտի դադարի: Այս ես կը յու-
 սամ Թէ՛ սա հայեցողութիւններն ընելով՝ ոչ միայն ամէն
 կրիք եղած դանգատները պիտի վերցընես, այլ բերանդ
 ալ Մատուծոյ գոյարանութիւններովը պիտի լեցուի. և
 բոլորտիքդ եղողներուն ոչ միայն անոր արդարութեանը
 այլ անոր բարութեանը վրայ ալ պիտի խօսիս: Անանկ
 որ՝ կարող պիտի ըլլաս ներքին ուրախութիւններդ այն-
 պիտի կերպով յայտնել, որ կենդանի և շինութիւն տուող
 մեկնութիւն մը ըլլան առաքելոյն սա խօսքերուն. «Ան-
 ղութիւնը համբերութիւն կը գործէ, և համբերութիւ-
 նը՝ փորձառութիւն, ու փորձառութիւնը՝ յոյս. և յոյսը
 ամօթով չձգեր. ինչու որ Մատուծոյ սէրը մեր սրտերուն
 մէջը տարածուած է Հոգւոյն Սրբոյ ձեռքովը, որ մեզի
 տրուեցաւ»: Հոգւոյն. Ե. 3-5:

7. Իսկ արդ՝ ի՞նչ սիրելի բարեկամն, հիմա է մտնա-
 ւորապէս քեզմէ անկալութիւն եղած ժամանակը, որ
 կրնային պատուաւոր վկայութիւն տաա: Քովդ եղողնե-
 րուն կըրցածիդ շափ զրուցէ՛, (վասն զի բնաւ կարող պի-
 տի չըլլաս լիովին բացատրել անոնց,) Թէ ի՞նչ մխիթա-
 րութիւն և զօրութիւն դատար անոր մէջ: Ըսէ՛ անոնց՝
 Թէ ի՞նչպէս կենացդ ամենէն վտայուցիչ պարագաները
 Թեթեցուց անիկայ. ըսէ՛՝ Թէ ի՞նչպէս հիմա անիկայ քեզ
 աներկիւղ կ'ընէ մահուան մտեցած ատենը տեսնելու:
 Այսպիսի ատեն մը խօսքերդ մտնաւոր ազգեցութիւն մը
 պիտի ունենան. տեսակ մը ճարտարախօսութիւն պիտի
 դայ վրայ ան տկարութիւններուն մէջ, որոնց հետ որ կը
 մարտիս՝ քանի որ խօսիս. և ուշադրութեամբ՝ կարեկ-
 ցութեամբ՝ ու վտահոյսութեամբ մտիկ պիտի ընեն քեզի:
 Այս ուստի երբ որ մեկնելու ժամանակդ կը մտնոնայ, հա-
 մարձակ ազատութեամբ ուրախութիւնդ յայտնէ՛ Թէ որ

ան ժամանակը Մատուծով սուրբ ուրախութիւն ու բերկրութիւն մը զգաս, (ինչպէս կը յուսամ թէ պիտի ըզգաս) : Ասե ներքին խաղաղութիւնդ ու մտայ հանդարտութիւնդ յայտնէ՝ թէ որ խաղաղ ու հանդարտ ըլլաս ան ժամանակը • ու բիշները զխտողութիւն պիտի ընեն ասոր՝ ու քաջալերութիւն պիտի առնեն ան քայլերուն ետեւէն երթալու՝ որ պայպիսի երջանիկ վախճանի մը կը հասցընեն : Ըսէ՛ անոնց աս աշխարհիս ունայնութեանը վրայ ինչ որ կը զգաս, որ անոնք սորվին պզտիկ բանի մը պէս նայիլ անոր : Ըսէ՛ անոնց Վեհաարանին տուած հաստատուն անունդներուն վրայ ինչ որ կը զգաս, որ սորվին աւելի մեծացին համարիլ զայն • վասն զի անկարելի է որ չգիտնան թէ իրենք ալ մահուան անկողինի մը վրայ պիտի պառկին, և թէ ան աստնը բոլոր ան զօրութեանը պիտի կարօտին, որ Վեհաարանը կրնայ տալ իրենց :

8 • Աւ բու խօսքիդ տպաւորութիւնը աւելի զօրաւոր ազդեցութիւն ունենալու համար, ազգու պատուէր մը տուր քոյզ եղողներուն՝ որ իրենց կեանքը Մատուծոյ ծառայութեանը մէջ անցընեն, և ինքզինքնին ճշմարիտ կըրօնքի սկզբունքներովը կառավարեն : Ար յիշես թէ՛ Յեսու և Գառիթ և ուրիշ բարի մարդիկ ասանկ ըրին, երբոր խնայան թէ իրենց մեռնելու օրը կը մտնեայ : Աւ չես գիտեր թէ՛ մեռնող բարեկամի մը կամ (ինչպէս որ կըրնայ ըլլալ) մեռնող ծնողքի մը խրատները ինչպէս կ'ազդեն անոնց՝ որոնք անփոյթ եղած են ան բաներուն վրայոյ՜, որ դուն և ուրիշները առաջուց խօսած էք անոնց : Գոնէ ջանք ըրէ՛ ու անանկ մեռիր աշխատելով զՄատուած վառաւորելու, հողինք փրկելու, և վեհանձն մարդասիրութեամբ բարութեան ու երջանկութեան սերմերը այնպիսի աշխարհի մը մէջ սերմանելու, ուր որ այլ ևս հունձք չունիս քաղելու : Թերես առատ հունձք պիտի տան անոնք, երբոր քու մարմինդ ձորին հողերը կը ծածկեն • բայց թէ որ չտան, Մատուած պիտի հաւնի անոր, և քու բաժնուելու հողիդ առնել տանելու համար անկողինիդ քովը սպասող հրեշտակները՝ հաճութեան նշաններով պիտի նային մեկօ՛ւնելու, և խոստովանին թէ՛ մա է քրիստոնէին Ընթիլք ու հազկանացութիւնը՝ ի բարին անցընելը :

9. Եւ քեզի նման մահկանացու ընկերներուդ քու բրած աս վերջին խօսքերուդ մէջ, ո՞վ որ բլլան անոնք որ Նախանամութիւնը քու քովդ բերէ, անպատճառ ըսես անոնց՝ թէ աս վերջին ժամուն մէջ որչափ կատարեալ և ինչպէս զուարթ կերպով յոյսերդ ու վատահուստութիւններդ հաստատուած են, ոչ թէ քու արժանաւորութեանդ ու նազանդութեանդ վրայ, այլ ան բաներուն՝ որ քու մեծ Փրկիչդ բրաւ ու քաշեց մեղաւորներուն համար: Թող տեսնեն որ՝ խաչին ռաբին տակը կը մեռնիս. ասկէ 'ի զատ ուրիշ մէկ բան մը այնքան մխիթարութիւն չկրնար տալ քեզի, և ասկէ 'ի զատ ուրիշ բան մը այնքան շինութիւն տուող չկրնար բլլալ անոնց: Ասան որոյ թող Յիսուսի անունը քու բերանդ բլլայ՝ քանի որ կրնաս խօսիլ, և երբոր այլ ևս չես կրնար խօսիլ՝ սրտիդ մէջ թող բլլայ. և ջանք բռէ որ հողւոյդ վերջին գործքը՝ քանի որ մարմնոյդ մէջն է ան, Վրիստոսի վրայ խոնարհ հաւատք ունենալու գործք մը բլլայ: Եստուծոյ եկուր անով. վարագուրէն ներս եղողին մտիր, իբր թէ անոր արիւնը քու վրադ նոր սրսկուած ունենալով: Սուկայի բան մըն է այսպիսի մեղաւորի մը, (ինչպէս որ դուն ասանկ բլլալդ գիտես, իմ քրիստոնեայ բարեկամս, որչափ առաքինութիւններ ալ որ ունենաս, որոնք կարելի է աշխարհ քու վրադ տեսած ու զմայլած է,) կայնիլ ան անհունապէս մաքուր ու սուրբ Լակին առջևը՝ որ բոլոր ճամբաներդ ու բոլոր սիրտդ տեսած է, և կատարելապէս գիտէ ան ամէն թերութիւնները՝ որ քու պարտաւորութիւններդ ամենալաւ կերպով կատարելու ատենդ անգամ անոնց հետ խառնուած էին. բայց մտի՛ր ան ճամբուն մէջ, և ապահով ու հաճելի պիտի գտնես անիկայ:

10. Դարձեալ՝ որպէս զի մեռնելու ժամանակներդ մը խիթարութիւն գտնես ինքզինքիդ, և քանի որ աս մութ ու ցաւալից ճամբուն մէջ կը ճանապարհորդես՝ քու տկար քայլերդ զօրացընես, Եստուծոյ խօսքը գաւազանի պէս ձեռքդ առ: Թող գրբերն ու մահկանացու բարեկամները հիմա իրենց վերջին պաշտօնը կատարեն: Թէ որ կրնաս՝ Եստուծոյ խօսքին զօրութիւնը իր սրտին վրայ ներգործութիւն ունեցած մէկ փորձառու քրիստոնեայ մը կան-

չէ , և անիկայ թող Սուրբ Պիրքն առնէ , ու ան պատուական խոստմունքներէն մէկ քանին կարգայ քեզի՝ որոնք իր հոգւոյն կերակուրն ու ուրախութիւնն եղած են : Ես ձեռք զբարկած բարի պաշտօնս կարելի եղածին շափ յառաջ տանելու նկատմամբ է որ՝ հոս քանի մը այնպիսի զմայլելի խօսքեր պիտի ժողվեմ , որոնցմէ ամէն մէկը «Հազարաւոր ոսկիէ ու արծաթէ՛» անհունապէս «աւելի աղէկ են» : Սող . ճԺԹ . 72 : Եւ իմ ինչ աստիճան անոնք յարգելու քեզի աղէկ մը հասկրցընելու համար սա ըսեմ թէ՛ կը փափարիմ որ (եթէ Կատուած պատեհութիւն տայ) մահուան անկողինիս վրայ պատկած ատենս զանոնք կարգան ինծի կտոր կտոր , որ անոնց վրայ կանկ առնելու և մշտմտալու ժամանակ ունենամ , և ան բերկրալից ճաշակը նորոգեմ , որն որ՝ օրջնեալ ըլլայ Կատուած , շատ անգամ անոնց մէջ դտած եմ : Իցե՛ թէ քու և իմ հոգիս սրբազան լուծիւն մը պահէին ան ատենը , (կենդանական ընտելեան ազմուկն ինչ որ ըլլայ ,) քանի որ Կատուծոյ ձայնը խօսի մեզի ան խօսքերով՝ որոնցմով խօսեցաւ իր հին ատենի ծառաներուն , կամ որոնցմով սորվեցուց անոնց՝ թէ ինչպէս իրեն խօսելու են իրենց վերջին ժամերուն մէջ :

11 . Աւրիչ քաջաբերութեան մը կը կարօտի՞ մէկը , երբոր անիկայ կ'ըսէ թէ՛ «Մի վախնար , քանզի ես քեզի հետ եմ . մի՛ զարհուրիր , վասն զի ես քու Կատուածդ եմ . քեզ պիտի զօրացընեմ և քեզի օգնութիւն պիտի ընեմ , ու իմ արդարութեանս աջովք քեզ պիտի բընեմ» : Եսայ . խս . 10 : Եւ «Կատուած մարդ չէ՛ որ սուտ խօսի , ոչ ալ մարդու որդի՛ որ զջնայ . ինքը ըսաւ , ու պիտի չընէ՞ . կամ՝ ինքը խօսեցաւ , ու տեղը պիտի չբերէ՞» : Թմտոց իգ . 19 : «Տէրը իմ ըյսամ ու իմ փրկութիւնս է , ես ճշակից պիտի վախնամ . Տէրը իմ կեանքիս ապաւենն է , ես ճշակից պիտի դողամ» : Սող . իէ . 1 : «Ես Կատուածը մեր Կատուածն է յախտեանս յաւիտենից . անիկայ պիտի առաջնորդէ մեզ մինչև 'ի մահ» : Սող . խք . 14 : Ասան որոյ «Թէև մահուան շուրի ձորին մէջն ալ պտըտիմ , չարէն պիտի չվախնամ . վասն զի դուն իմ հետս ես . քու ցուպդ ու դաւաղանդ՝ անոնք իս պիտի մոտիթարեն» : Սող . իգ . 4 : «Ո՛ւ Տէր՝

քու փրկութեանդ սպասեցի": ՆՊՁԳ . խթ . 18 : "Բու զթութիւնդ քեզ ճանչցողներուն շարունակէ", ու քու արդարութիւնդ սրտով ուղիղներուն : Ինչու որ կենաց արդիւրը քու քովդ է . քու լուսովդ լոյս պիտի տեսնենք": Սող . ԼԳ . 9 , 10 : "Անաց ճամբան ինձի պիտի ցուցնես . երեսիդ առջին լեցուն ուրախութիւն կայ . քու աջ կողմդ միշտ հաճութիւններ կան": Սող . ԺԳ . 11 : "Իսկ ես արդարութեամբ պիտի տեսնեմ քու երեսդ . երբ որ արթըննամ" քու դէմքէդ պիտի կշտանամ": Սող . ԺԷ . 15 : "Ինչու որ դիտեմ թէ որու եմ հաւատացեր , և համոզուած եմ" որ իմ իրեն աւանդած բանս կրնայ պահել մինչև ան օրը": ԽՏԻ . ւ . 12 : "Մտք համար սիրտս ուրախ եղաւ , ու փառքս բերկրեցաւ . ու մտքմինս ալ յուսով պիտի հանգստանայ": Սող . ԺԿ . 9 : "Ի՞նչ որ կը հաւատանք թէ Յիսուսը մեռաւ ու յարութիւն առաւ , անանկ ալ Մտուած ննջեցեալները Յիսուսով պիտի բերէ անոր հետ": ւ թԻ . Գ . 13 : "Իմ ոչխարներուս յախտնական կեանք կու տամ", ըսաւ Յիսուս՝ բարի չորսուր , "ու յախտեան պիտի չկորսուին . և մէկը իմ ձեռքէս պիտի չյափշտակէ զանոնք": Յով . Ժ . 28 : "Իմ չորս կամքը աս է , որ ան ամենը որ կը տեսնէ Որդին՝ և կը հաւատայ անոր , յախտնական կեանք ունենայ . ես ալ անոր յարութիւն առնել տամ վերջին օրը": Յով . Կ . 40 : "Սիրտերնիդ չխոռոխէ՛ . Մտուածոյ հաւատացէք , ինձի ալ հաւատացէք : Իմ չորս տունը շատ բնակարաններ կան . ասպա թէ ոչ՝ ես ձեզի պիտի ըսէի . չիմն կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ : Եւ թէ որ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ , նորէն կու գամ և ձեզ քովս կ'առնեմ . որպէս զի ուր որ ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք": Յով . ԺԳ . 1-3 : "Գնա եղբայրներուս , և ըսէ՛ անոնց . Ես կ'երևիմ իմ չորս քովը ու ձեր չօրը քովը , և իմ Մտուածոյս քովը ու ձեր Մտուածոյն քովը": Յով . Ի . 17 : "Ով չայր՝ անոնք որ դուն ինձի տուիր , կ'ուզեմ որ ուր որ ես եմ , անոնք ալ իմ հետս ըլլան . որպէս զի տեսնեն իմ փառքս՝ որն որ ինձի տուիր . որ ան սէրը՝ որով դուն զիս սիրեցիր , անոնց մէջը ըլլայ , ու ես ալ անոնց մէջ": Յով . ԺԷ .

24, 26 : « Ես բաներուն վկայութիւն տուողը կ'ըսե՛ .
 Եւթ' շուտով կու գամ՝ ես : Եմէն . եկու՛ր՝ Տէ՛ր Յի-
 սուս » : Յայտ . իբ՛ . 20 : « Ո՞ւր է ո՞վ մահ՛ , քու խայ-
 թոցդ , ո՞ւր է ո՞վ գերեզման՛ քու յաղթութիւնդ : Գո-
 հութիւն Եստուծոյ , որ մեզի յաղթութիւն կու տայ մեր
 Տէ՛ր Յիսուս Քրիստոսի նեոքովը » : Կարճ . Ժ . 55 , 57 :

12 . Եսայէս՝ ան Եստուածը՝ որ իր զաւակներուն անձը
 իրենց բոլոր տառապանքներուն մէջը դիտէ , (Սող . Ը՛ .
 7 ,) քաջալերէ՛ և հաստատէ՛ քեզ ու իս՛ բնութեան ան
 վերջին տաղնապններուն մէջ : Անգ անոնց երջանիկ
 թուոյն վրայ աւելլընէ , որոնք մահուան մէջ յաղթողներէ
 ալ աւելի եղած են : Եւ տայ մեզի իր Հոգւոյն ան
 սնունդները՝ որ կը կարողացընեն մեզ մեր բաժնուող հո-
 գին այնպիսի զգացումներով իր առջևը թափել , որոնք
 պիտի գրեմ՝ հիմա , թէպէտ ան ժամանակը կարող պիտի
 չըլլանք այլ ևս խօսելու , կամ հասկընալու՝ թէ որ ուրիշ-
 ները մեզի կարգալու ըլլան : Գոնէ հիմա ամենայն պատ-
 շա՛ զգացումներով կարգանք զանոնք , և աղօթք մըն ալ
 բրած ըլլանք ան ահաւոր ժամուն համար : Ո՛հ թէ աս՛
 և անոր համար բրած բոլոր աղօթքներնիս ան ատենը « Ես-
 տուծոյ առջևը յիշուին » : Գործ . Ժ . 4 , 31 :

Ստեփանն Տօք իղող + բխարոնէն վեճալին յարմար հարձու-
 իմ աղջիկ + Տը :

Ո՞վ դուն գերագոյն Աստուծոյն երեւելի և աներևոյթ
 աշխարհաց . դու Իշխան կենաց և մահուան , երկնի և
 երկրի , օրձնակ ըլլաց քու անունդ՝ որ շատ անգամ քեզ
 վնտուած եմ : Եւ հիմա միանգամ՝ ևս իմ հոգիս՝ իմ
 բաժնուող հոգիս քու առջևդ կը թափեմ : Խոնարհեցու՛ր
 քու ականջդ՝ ո՞վ Եստուած , և թող իմ աղաղակս ըն-
 դունելի ըլլայ քեզի :

Են ժամը եկած հասած է՝ որ զիս պիտի բաժնես աս
 աշխարհէս , որուն այսքան ատեն ընտանեբար ծանօթա-
 ցած եմ , և ուրիշ աշխարհ մը տանիս՝ որ տակալին ան-
 ծանօթ է ինծի : Վաղաչեմ՝ քեզի կարողացու՛ր զիս՝ աս
 փոփոխութիւնը Երբահամու զաւակի մը վայլածին պէս ը-

նելու, որ անիկայ երբոր քեզմէ կանչուեցաւ ժառանգութիւն մը ընդունելու, նազանդեցաւ և ելաւ դնայ, թէպէտ մասնաւոր կերպով չէր գիտեր թէ ուր կ'երթայ. Եբր. Ժա. 8. Աստուծոյ որդիի մը վայլածին պէս, որ գիտէ թէ՛ ինքնիշխան շնորհօք "իր ձայրը հաճեցաւ որ թաղաւորութիւնը իրեն տայ" : Ա. Կ. Ժ. 32 :

Ար խոստովանիմ՝ ով Աստուած, ան վճռոյն արդարութիւնը՝ որով պիտի մեռնիմ, և քու իմաստութիւնդ ու բարութիւնդ՝ որոնցմով ճանապարհորդել սահմանեցիր ինծի աս խաւար ձորին մէջէն՝ որ հիմա իմ առջև է : Օգնէ՛ ինծի՝ որ անիկայ քեզ պատուելու և իմ դաւանութիւնս զարդարելու առիթ մը ընեմ. և ես պիտի օրհնեմ ան ցաւերը՝ որոնցմով դուն կը փառաւորուիս, ու բնութեանս աս մահկանացու և մեղսալից մասը կը քակուի :

Ով շնորհատու ձայր, չեմ ուզեր աս քու երկիրդ և աս կաւեղէն տունը ձգել, որուն մէջ՝ անոր վրայ եղած բոլոր ժամանակս բնակեցայ, չեմ ուզեր անիկայ ձգել առանց քեզի երախտագէտ խոստովանութիւններս ընելու բոլոր ան առատ բարութեանը համար՝ որ հոս իմ առջևէս անցուցիր. Եբր. Ժ. 19. իմ վերջին շունչովս վրայութիւն կու տամ քու հաւատարիմ խնամքիդ, որ "բարութիւն մը պակաս չեղաւ" ինծի : Սաղ. Ժ. 10 : Ար զոհանամ քեզմէ՝ ով Աստուած, որ աս յանցաւոր՝ և անօգուտ կեանքս այսքան ատեն պահեցիր, և տակաւին քու առատութեանդ բազմատեսակ բարիքներովը լեցուած է : Շնորհակալ եմ քեզմէ՝ որ իմ անվսխման գոյութեանս աս սկզբնաւորութիւնը այնքան հաճելի ըրիր : Ար զոհանամ քեզի իմ ցորեկներուս ու գիշերներուս, իմ ամիսներուս ու տարիներուս մէջ եղած ողորմութեանցը համար, որոնք հիմա իրենց վախճանին կը հասնին. կը զոհանամ քեզմէ իմ մանկութեանս ու իմ կատարեալ հասակիս մէջ եղած ողորմութիւններուն համար, ան ամէն հաճելի բարեկամներուն համար՝ թէ՛ կենդանի ու թէ՛ մեռեալ, որոնք ինծի տուիր աս իմ պանդխտութեանս տանը մէջ. ան ամէն օգնութիւններուն համար՝ որոնք ուրիշներէն ընդունեցի, և ան ամէն պատեհութիւններուն համար՝ որոնք ինծի տուիր իմ մարդկային սեռի եղբայրներուս մար-

միններուն ու հոգիներուն օգնական ըլլալու : «Յիրաւի բարեբարութիւնը ու ողորմութիւնը իմ հետս եկան կենացս բոլոր օրերուն մէջը» , (Սաղմ . ից . 6 ,) և պատճառ ունիմ՝ ան այլեայլ և հաճելի բարիքներով պատրաստ սեղանեզ երախտազէտ հիւրի մը պէս ելլելու : Եւ պատճառ չունիմ՝ արտնջելու կամ նեղանալու անոնք ձգելու և համար . վասն զի՝ ո՛վ Մատուած , միթէ քու առատութիւններդ հատան : Վիտեմ՝ որ չհատան : Վուրարութեանդ ու հաւատարմութեանդ անիրաւութիւն չեմ ըներ երևակայելով թէ , ես աս երկրէն բաժնուելովս՝ երջանկութեանէ ալ բաժնուած կ'ըլլամ : Վտարանութիւն կը մատուցանեմ քու ողորմութեանդ՝ որ ինձի ստրկեցուցիր Յիսուսի քու Արդւոյդ միջոցով՝ աւելի վե՛մ դաղափարներ ունենալ : Ա'օր'նեմ քեզ բնութեանս ամէն զօրութիւններով՝ որ լսեցի անոր անունը և անոր մահը , և շատ կը ցանկամ աւելի եռանդուն կերպով երախտազէտ երկրպագութիւն մատուցանել , քան որչափ որ հիմա աս անկատար միճակիս մէջ կարող եմ , երբ որ քեզ կը դռմեմ քու շնորհացդ առատութիւններուն համար՝ որ անով յայտնուած է . անոր ստրկեցուցածներուն ու անոր օրինակին , անոր արեանն ու անոր արդարութեանը համար և ան ամենօր'նեալ Հոգւոյդ համար՝ որ ինձի տուիր , իմ մեղսալից սիրտս քեզի դարձնելու , և զիս քու ուխտիդ կապելովք կապելու , ան ուխտին՝ «որ ամէն բանի մէջ պատրաստ ու հաստատ է» , (Իմառ . ից . 5 ,) և որն որ աս մահը՝ որ թէպէտ հիմա հոգիս մարմինէս պիտի դատէ , բայց բնաւ կարող պիտի չըլլայ քակել :

Ա'օր'նեմ քեզ՝ ո՛վ Մատուած , որ շնորոգուած և անդեղջ միճակի մը մէջ չեմ մեռնիր , այլ դուն մեծ շնորհքով զիս արթնեցուցիր ու համոզեցիր , իմ սիրտս նորոգեցիր ու սրբեցիր , և քու Սուրբ Հոգւոյդ մէկ անկեղծ հաւատք մը՝ ճշմարիտ զղջում մը՝ և աստուածային կենաց սկզբնաւորութիւն մը հաստատեցիր անոր մէջ : Շնորհակալ եմ քեզմէ՝ Մեկտարանին սահմանադրութիւններուն ու հաւատարիմ պաշտօնեաներուն համար . շնորհակալ եմ իմ Տէրունական օրերուն և Տէրոջը սեղանին հաղորդ եղած ժամանակներուն և անոնց տուած պիտիանքներուն համար :

Արդոհանամ՝ քեզմէ Վանանու պտուղներուն համար՝ որոնք անապատին մէջ ինծի խրկուեցան, և հիմա ալ Յորդանանու եզերքը ինծի կը խրկուին: Արդոհանամ՝ քեզմէ քու օրհնեալ գրքիդ համար, և անոր ան ամենատառ և պատուական խոստմունքներուն համար, որոնք հիմա կենդանարար դեղի մը պէս սիրաս կը տաքցընեն աս ցուրտ ժամուս մէջ. ան խոստմունքները՝ որ մահուան ատեն հաստատութիւն՝ և անկէ անդին փառք՝ և մարմնոյս յախտնական կենաց յարութիւնը կը խոստանան: Ո՛վ իմ՝ Եստուածս, հաստատ կը հաւատամ անոնց ամենուն՝ որ մեծ ու սքանչելի են, և Յիսուս Վրիստոսի միջոցով անոնց կատարմանը կը սպասեմ. որուն մէջը ամէնն ալ Եյո և Եմէն են: Ը Աորնը. ւ. 20: «Յիշէ՛ քու ծառայիդ եղած խօսքը՝ որուն ինծի յուսալ տուիր»: Սող. ԾԺԺ. 49: Ախտ ըրի քեզի հետ՝ չէ՛ թէ աշխարհային վայելչութիւններու վերաբերեալ՝ որոնք քու սէրդ սորվեցուց ինծի բազդատարար ատել, այլ յախտնական կենաց՝ իբրև քու ձրի շնորհաց պարգևդ՝ Յիսուս Վրիստոս իմ Տէրոջս ձեռօքը, (Սող. Է. 23,) և հիմա ներէ՛ ինծի՝ անոր անուամբը իմ աս խոնարհ պահանջմունքներս ընել: Շ շնորհէ՛ ինծի աս բաժնուող հոգիս քու ձեռք յանձնել, ինչու որ դուն իս փրկեցիր՝ ո՛վ Եհովայ Եստուած ճշմարտութեան: Սող. Ըւ. 5: «Ես քու կդ եմ, փրկէ՛ զիս», ու երջանիկ ըրէ: Սող. ԾԺԺ. 94:


Ըացց յիրաւի կրնամ՝ համարձակիլ ըսել թէ՛ ես քու կդ եմ: Ո՛վ Եստուած, հիմա երկու աշխարհաց սահմանադիտոյն վրայ եմ կեցեր, հիմա քու ներկայութեանդ ու յախտնականութեան նկատմամբ կը տեսնեմ բաները. որքան անարժան կը թուիմ՝ որ քու փառաց մէջ եղող հրեշտակներուդ ու սուրբերուդ հետը բնակելու առնուիմ: Եւսդ, պատճառ ունիմ՝ ետ դառնալու և խորին խոնարհութեամբ ան շնչին՝ անօգուտ՝ և մեղալից կեանքին վրայ նայելու, որուն մէջ ամէն օր արժանի էի դժոխքին մէջ ձգուելու: Ըացց սա մէկ միտիթարիչ խորհրդածութիւնն ունիմ թէ՛ Վրիստոսի խաչին դիմեցի. և հիմա նորէն անոր կը դիմեմ: Ես իմնիս պէս անկատար արդարութիւնով

մը Մատուծոյ առջևը երևնալու վրայ խորհիլը՝ մահէն բխր անգամ աւելի դէշ է : Աչ՝ Տէր , ես քեզի մեղաւորի մը պէս կու գամ . բայց այնպիսի մեղաւորի մը պէս՝ որ թողութեան և կենաց համար քու որդւոյդ հաւատացած է . քու առջևդ կ'իյնամ իբրև յանցաւոր և ապականեալ թշուառ մը . բայց դուն Մեծիկայ քու ժողովուրդիդ « Իմաստութիւն՝ արդարութիւն՝ սրբութիւն և փրկութիւն՝ բրիբ : ւս Կորնթ . ւս . 30 : Տուր որ ես ալ Յիսուսի հետեւողներուն հետ իմ բաժինս ունենամ : Ինձի անանկ բրէ , ինչպէս որ անոր բարեկամներուն ու եղբայրներուն կ'ընես : Այսան զի դուն գիտես թէ՛ իմ հոգիս անիկայ սիրեց ու անոր ապաւինեցաւ , և որտանց ինքզինքը անոր Մեծարանին ապահովութեանը յանձնեց : Եւ ես « գիտեմ թէ որո՛ւ եմ հաւատացեր : ք Տէ՛ . ւս . 12 : Գժուխային առիւծը կրնայ իս ահաբեկ ընել սոսկալի ճամբուն վրայ . բայց կ'ուրնախանամ որ ես բարի Հոգիին ձեռքն եմ , (Յովհ . Գ . 11 , 28 ,) և բան չեմ սեպեր բոլոր հոգևոր թշնամիներս՝ զուարթութեամբ անոր հաւատարիմ ինամբին ապաւինելով : Մէջերս ու սիրտս անոր կը վերցընեմ՝ որ « մեռաւ՝ ու կենդանի է յախտեանս յախտենից . և մահուան ու դժոխքին բանալիները ունի՛ » : Յայտ . ւս . 18 : Ո՛վ ամէնօրջնեալ Յիսուս , քու ձեռքովդ կը մեռնիմ , և վախ չունիմ որ Փրկչի մը ձեռքէն մեռա մը կու գայ : Չեմ վախնար ան մահէն՝ որ իմ ամենասիրելի Տէրոջս ձեռքը սահմանուած է ինձի , որ ինքն ալ մեռաւ ապահով և երանելի ընելու անիկայ : Աու գամ՝ Տէր , կու գամ՝ ո՛չ միայն յօժար՝ այլև ուրախալից հաւանութեամբ : Ար գոհանամ քեզմէ որ դուն իս կը յիշես՝ ինձի աղէկութիւն ընելու համար . որ իմ շղթաներս կը կտորես , և զես « Մատուծոյ Որդւոյն փառաւոր ազատութեանը՝ կը կանչես : Հոով . ք . 21 : Ընորհակալ եմ քեզմէ՝ որ չես ուզեր որ այլ ևս քու գրկէդ հեռու մնամ . այլ՝ այսքան ժամանակ հեռուն մնալէս ետքը , զիս հայրենիքս կը կանչես՝ որ յախտեանս հոն ըլլամ :

Իմ տկար բնութիւնս կը նուազի ան փառքը տեսնելով՝ որ հիմա իմ վրաս կը ծաղէ . բայց դուն գիտես՝ ո՛վ շնոր-

Հասու Բասուած , թէ ինչպէս իմ հողւոյս վրայ աստի-
 ճանաւ ծագել տալու է անիկայ , և քու զօրութիւնդ կա-
 տարեալ ընելու իմ տկարութեանս մէջ : Թ Կորնթ . ԺԷ .
 9 : Միանգամ ևս վերջին անգամ աս թշուառ աշխարհիս
 վրայ կը նայիմ՝ որն որ Հիմա պիտի ձգեմ , և իմ վերջին
 հողեվարութեան աղօթքս կը մատուցանեմ անոր՝ և անոր
 մէջի քու եկեղեցւոյդ յաջողութեանը համար : Ենիկայ
 սիրեցի՛ ո՛վ Տէր , իբրև անոր մէկ կենդանի անդամը . և
 մինչև վերջը կը սիրեմ : Այսն որոյ խոնարհութեամբ
 կ'աղաչեմ քեզի՛ որ անիկայ պաշտպանես , և մայրես , և
 ևս առաւել միաւորես : Եռաւել ևս խրկէ՛ քու ամէնօրհ-
 նեալ Հոգիդ անոր վրայ , իմաստութեան՝ սրբութեան՝
 ու սիրոյ Հոգիդ . մինչև որ յարմար տեսնին՝ « ամալու-
 թիւնը Տէրոջը գրախտին պէս ըլլայ » , (Եսայ . ԺԵ . 3 ,)
 « և ամէն մարմին Բասուծոյ փրկութիւնը տեսնէ » : Դ Կորնթ .
 Գ . 6 :

Բայց զիս՝ ո՛վ իմ երկնաւոր Հայրս , յախտնական
 սիրոյ թեւերուն վրայ ան խաղաղալից՝ սուրբ՝ և ուրախալից
 բնակարանը տար , որ քու ողորմութիւնդ պատրաստած է
 ինձի համար , և իմ Փրկչիս արիւնը ծախու առած է :
 Տնոր զիս անդրանիկներուն ժողովին , Հրեշտակներուն բիւ-
 բաւոր ժողովքին , ու արդարոց հոգիներուն՝ որ կատարուեր
 են : Եբր . ԺԷ . 22 , 23 : Եւ աս մարմինը ինչ որ
 քաշէ , թող իմ անվրդով հոգիս ան փառքին վրայ ուրա-
 խութեամբ հաստատուի՝ որուն ելլելու վրայ է : Թող
 հաւատքը իր վերջին պաշտօնը կատարէ՛ պատուաւոր կեր-
 պով մը : Տնոր որ երկրիս վրայ իմ ունեցած մնացորդ
 քանի մը վայրկեաններս քու փառքիդ համար անցընեմ , և
 այնպէս՝ սիրալիր սրտիւ և դողգոջուն լեզուաւ զովարանե-
 լով ելլեմ ան աշխարհը՝ ուր սերն ու զովարանութիւնը
 կատարեալ պիտի ըլլայ : Ենիկայ թող իմ վերջին՝ Երգս
 ըլլայ երկրիս վրայ , որ երկինքին մէջ ալ երգելու կ'եր-
 թամ . « Օրհնութիւն՝ և պատիւ՝ և փառք՝ և զօրութիւն
 ըլլայ Ենոր՝ որ աթոռին վրայ կը նստի , և Գառնուկին՝
 յախտնանս յախտնից » . Եմէն :



70

U - 76